



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

6497

W. J. Sullivan

has III

891.99  
Q-81

Pompey  
1905

2011


891.99

Ա-ՅԼ

ԵՐԿԻՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԹՅԱՆ

*Արամյան*

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ



Վ Ե Պ

ԲԱՐՉՐ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՆՐՈՒԹՅՈՒՆ

Թաւրիզ

ԹԵՐԻՄԻՆ ԵՐԿՐԵՏԻՊ ՀԵՅՈՑ ԵՏՊՈՎԵՏԱԿԱՆԻ  
ՅԻՇԱՏԱԿ ԿԱՂԱՍՏԵՆԻԿ ԵԳԻՐՈՐԵԹ ՄԵՐԶԱՐԵՂՅԱՆԻ

1905


1818

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 19 Октября 1890 года

---


7567-57 q

2003



## ԵՐԿՈՒ ԽՅՍՔ

„Ս.Լ.Մ.Ս.ՍԻ“ այնքան պահանջը, անչափ ընթերցողներ գրաւելը, այնպէս շուտ ապաւելը, մանաւանդ յափեսակութեամբ կարդացելը ապացոյց է, որ սա հայ-հասարակութեան սրտին խիստ մօտի վեպ է եւ նա սեղանի անհրաժեշտ գիրքը: Այդ բանը ինձ խրախուսեց „Ս.Լ.Մ.Ս.ՍԻ“ երկրորդ տպագրութիւնը յոյս ընծայելու, լիովին վստահ, որ սա էլ առաջինի բաղդին պիտի սոժանանա:



24 Մարտի 1905 թ.

Թաւրիզ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԹԵՄԱԿԱՆ (ԹԱԻՐԻ-

ՋՈՒՄ) ՏՊԱՐԱՆՈՒՄ ԾԱԽԻՈՒՄ Է

1. Լ. Տօրսօյի Մարդիկ ինչի՞ս են հարբում  
[Ժարգ. Ե. Ծ. Վ. Մուրադեանի 1 դր.
2. » » Կարմա-Բուրգալական պատմածք  
[Ժարգ. Ե. Ծ. Վ. Մուրադեանի 10 շհ.
3. Օտար փրունջեր Ա. Հիւսք. Չիլլերից  
[Ժարգ. Մ. Վ. Մաքսուդեանի 1 դր.
4. Օտար փրունջեր Բ. Հիւսք. Հաֆլուցից  
[Ժարգ. Պարսկերէնից Մ. Վ. Մաքսուդեանի գին 1 դ.
5. Կ. Կառնցլիի Կոյունիական Քաղաքականութ.  
[Ժարգ. Ռ. Խանազատեանի 2 դր.
6. Ռ. Խանազատ Իդիալիզմ թե՛ Մասնակալը  
Աւսումնասիրութիւն 10 շհ.
7. Ասրայասականի Հայոց Հիմնական և Հայաս-  
տանեայց եկեղեցու ծիսական կանոնա-  
գրութիւն 2 դր.
8. Դիմ սկներ Երզնիստի գրոյցներ Ա. Տ—Տ.  
1904 թ. գինն է—3 դր. կամ 50 կպ.
9. Անուշաներ Օ. Շրէյնի [Ժարգ. Ռ. Մ. և Տ. Տ.  
1904 թ. գինն է—15 շահի. կամ 15 կպ.

Դրժել TAURIS A L' IMPRIMERIE DU  
DIOCÈSE ARMÉNIEN

Ա Ղ Մ Ա Ս Տ

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Հ Ա Լ Ա Ծ Ի Ա Ծ Ը

Ա

Ա.Ի.ՍՏՐԻԱԿԱՆ ՊՈՍԱՏԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ.

1875 թւականի մայիսի վեցին, Աւստրիական «Առջ»  
Ընկերութեան շոգեմաւր, «Բոհեմիա» անունով, պիտի  
մեկնէր Կ. Պօլսից դէպի Վառնա: Յետինք էր և նա-  
ւապետը առաջին սուրիչը տուել էր: Ղալաթիայի Աւս-  
տրիական պոստատան մակոյկը նաւամատուցին մօտե-  
ցրած՝ երկու թիափարներ կազմ ու պատրաստ՝  
սպասում էին գործակալի գալուն: Արդէն կաշա-  
մաններում զետեղած ծրարները բարձել էին՝ նաւա-  
կում, միայն փողի կապուցները մնացել էին, որ գոր-

ճակայլը, տեսչի ներկայութեամբ, դասաւորում էր մի ուրիշ կաշիէ քսակում: Գլխաւոր նաւաստին լուսամուտից ասաց.

— Պարոն գործակալ, շտապեցէ՛ք, ուշացանք, ծովն ալեկոծ է, այսօր դժւար պիտի հասնինք նաւ:

— Այս բոպէիս, այս բոպէիս, ասելով՝ գործակալը շարունակում էր իւր գործը արագութեամբ: Զետեղեց, ամրացրեց և կնքեց քսակի բերանը, երբ երկրորդ անգամ սուլեց նաւի սուլիչը.

— Պարոն Սողիկեան, շտապեցէ՛ք, շտապեցէ՛ք, այսօր շատ ետացրիք գործը: Այդքան էլ ճաշի ուշանան, միթէ չէիք յիշում, որ այսօր պոստը պիտի ճանապարհ գցէք:

Սողիկեանը գործը վերջացրեց, կասսը փակեց, կապոցը թեւը զարկելով՝ շտապով դուրս եկաւ, բանալիները գրասեղանի վերայ թողնելով: Տեսուչը գործերը վերջացնելով՝ հեռացաւ իւր սենեակը, իսկ հաշակալը տոմարներում արձանագրում էր պոստի ծրարների թիւը, գումարը, քաշը և քանակութիւնը: Տխուր նստած իւր գործին, առանց աչքերը մատեաններից և թղթերից հեռացնելու, ուշագրութեամբ քննում, հաշուում և գրում էր: Թերթերը շուռ տալիս, նոր թղթեր վեր առնելիս մի սրտառուչ անի էր քաշում սրտի խորքերից և տհաճութեամբ քթից մի տեսակ վշշոց էր բարձրացնում, ձիու խուլ խրխնջոցի նման: Դառն աշխատելուց նա այսպէս չէր յոգնում, երբէք, նրա սրտում մի ծանր վէրք կար. մի սոսկալի ոխ ունէր, որ նրան դադար չէր տալիս: Նա, եթէ չը գրէր, աւելի պիտի վշտանար և պարապութեան մէջ պիտի

նորոգէին նրա ցաւերը: Տարաբախտաբար, գրելու քիչ բան ունէր և շուտով վերջացրեց: Կռնակը թիկնաթռոն կրթնելով, թեւերը դէպի ետ բարձրացնելով ուժով ձգւեց, կճրտացնելով ոսկորների խաղերը, որով և յոգնած մարմինը կազդուրւեց: Այդ բոպէին դուռը բացւելով՝ ներս մտաւ դռնապանը ասելով.

— Պարոն Պօլ, դեռ շատ էք մնալու, ես մի գնամ՝ վերադառնամ, տեսչի տանը գործ ունիմ:

— Յիմար, դու տեսչի ծառան չես, դու գրասենեակի դռնապանն ես, ուրիշ գործ անելու պարտաւոր չես, սպասիր մինչև դուրս գալս:

— Պարոն Պօլ, այդ ես գիտեմ, իմ գործերս ինձ յայտնի են, միայն դուք այս ասացէք՝ շատ էք մնալու, թէ ոչ:

— Այդ քո գործը չէ անասուն, հազար անգամ ասել եմ քեզ, որ ինձ «Պարոն Պօլ» ասելու իրաւունք չ'ունիս, կանչիր «միւսիւ Աւգեր»:

— Ներողութիւն, միւսիւ Աւգեր, իրաւունք տւէք, գնամ և շուտ կը վերադառնամ:

Այս միջոցին նկատեց Աւգերը, որ Սողիկեանը կասսի բանալիները մոռացել էր գրասեղանի վերայ: Անմիջապէս մի չար խորհուրդ անցաւ մտքից և վրէժը լուծելու առիթը չուզեց փախցնել: Բոպէական արագութեամբ իւր յատակազիծը կազմեց Պօլ Աւգերը և ասաց արհամարհական ձևով դռնապանին.

— Կորիւր, աներևոյթացիր աչքիս առաջից, երեսոյ չը տեսնեմ: Աշխատիր մի ժամից աւել չսպասեցնես, ապա թէ ոչ՝ կաշիդ կը քերթեմ:

Դռնապանը հեռացաւ:

Աւագերը վեր ելաւ տեղից, սկսեց առաջանալ դէպի գրասեղանի բանալիները: Ոտքերը դանդաղ էին շարժուում և ծնկները դողում: Կանգնեց գրասեղանի մօտ և թեւերը չէին շարժուում՝ վեր առնելու բանալիները: Մուլթ ամպերը կարծես պատեցին երկինքը, արևի լոյսը էլ չէր մտնում գրասենեակի խոշոր լուսամուտներից և խաւարեցան Պօլի տեսանելիքները: Բայց ատելութիւնը, ոխը և նամանաւանդ նախանձը նրանից վայրկենական արագութեամբ հեռացրեց այդ քստմենելի սարսափը. բանալիները առանց օգնականներու ամփոփեց բռի մէջ և մօտեցաւ կասսին: Առաջին բանալին անց կացրեց փականքի մէջ և դարձրեց. «ծը՛նգ» ձայնը սրտի խորքերում նիզակի տւած վէրքի նման խրկեցաւ: Ատելութեան վահանը պաշտպանեց սիրտը: Երկրորդ բանալու «գնգոցի» խոցը աւելի մեղմ էր, վրէժը իւր սպեղանիով լաւացրեց այդ խոցը: Նախանձը չը թողեց զգալու մնացեալ «տնգտնգոցները», Բաց արեց դուռը և մի կաշի քսակ վեր տուա՛ւ հազար ութ հարիւր լիբա գումարի և դողդոջալով կրկին փակեց:

Պօլը կորցրեց խելքը և չէր իմանում որ կողմից դուրս գնար: Ահագին ծանր ծրարը թաշկինակում փաթաթեց և թևի տակ գնում էր բակի մէջ այս ու այն կողմը: Գլխակը դրեց գլխին, դուրս եկաւ, պոստատունը բաց թողնելով և արագութեամբ վազում էր Ղալաթիայի նեղ փողոցներով: Սաստիկ կարմրել, քրտնել էր, այնպէս որ շոգին բարձրանում էր գլխիցը. թևի տակի ծրարի ծանրութիւնն էլ նրան սաստիկ նեղացնում էր, քիչ էր մնում, որ գլորվի: Անցուղարձը

սաստիկ էր և փողոցում ամեն տեսակ մարդիկ խռնւած էին: Մեծ փողոցի բերանում երկու խտալացի և մի լոյն քսակահատ նկատեցին Աւագերի շփոթութիւնը և նշանացի իրար հետ խորհրդակցեցին: Պօլը կորցրել էր ուշքը և շուրջը չէր տեսնում, ի՞նչ էր կատարում: Յոյն քսակահատը արագութեամբ անցաւ Պօլի մօտից և արմուկով հարւած տւեց Աւագերի թևին, այնպէս որ սա, ցաւին չը դիմանալով, բաց թողեց թևի տակի ծրարը: Իտալացիներից մինը սկսեց նախատել լոյնին, օգնել ձեւացնելով Պօլին, մըւսը ծրարը աներևոյթացրեց: Աւագերը ապշած մնաց, երկիւղից ու սարսափից ձայն չըկարողացաւ հանել, յուսահատ շտապեց ետ՝ դէպի գրասենեակ: Աննկարագրելի կերպով տագնապում էր Պօլը, բարկութիւնից ու կատաղութիւնից անգագար բուռնցքով գրասեղանին խփում, ճակատին զարկում, ծնկները ծեծում, մագերը քաշքշում և մատները տրորում էր: Զեռքը ազդրին զարկելիս բանալիներին շարժիկոցի ձայնը լսեց և բանալիները գրպանից հանելով՝ լուսամուտից գցեց ծովի անդունդը:

Այս գործողութիւնը մի քիչ հանգստացրեց նրան և կեանքը վտանգից ազատելու հնարքներ սկսեց խորհել: Նախ գլխարկը գրասեղանից վերցրեց և անց կացրեց կախոցի վերայ, մօտեցաւ հայելին, ուղղեց շորերը, սրբեց ճակատի քրտինքը, ոլորեց բեխերը, մատներով սարքեց մագերն ու մորուքը, եկաւ հանդարտ նստեց տեղը, կրկին նախկին զբաղմունքի դիրքը բռնելով: Աստական հաշիւների և ցուցակների ցանցերը առաջը դրած, սկսեց տոմարից զանազան թուեր ընդօրինակել այդ ցանցերում: Այդ բոլորն անում էր մեքենայակա-

նութեամբ, մտքով ուրիշ առարկաների վրա մտածելով, բոլոր թւանշանները սխալ արտագրեց: Երբեմն երբեմն տրորում էր մատները և տեղից բարձրանալով քննում դէմքը. ինքն էլ զգում էր, որ այլագուն-ւել էր:

Յանկարծ բազի մէջ լսեց ոտքի ձայն, որը աստիճանաբար բարձրանալով մօտեցաւ սենյակի դռանը: Աւգերի սիրտը տրոփում էր և երևակայում, որ ահա ներս էր մտնելու Սողիկեանը, մօտենալով նըրան, կոկորդից բռնելու և խեղդելու: Այս սաստիկ տագնապի ժամանակ ներս մտաւ իւր ուսուցիչը՝ Կիւրեղ վարդապետը, ժպիտն երեսին ասելով.

— Ի՞նչպէս ես, սանս, լսւ ես, ինչի՞ այս ժամին այստեղ ես մնացել:

— Ոչինչ, պատասխանեց Աւգերը, գործեր ունիմ. աշխատում եմ վերջացնելու:

— Աշխատիր, սիրելիս, աշխատիր, աշխատութիւնը անվարձ չի մնալ:

— Ի՞նչպէս չէ, ի՞նչպէս չէ, երեք տարի է աշխատում եմ ամեն ջանքովս և անկեղծութիւնովս, երեք ամիս չըկայ Արամի այստեղ մտնելը և ահա երէկ, մեր տեսչի գաղտնի թղթակցութեան համաձայն, ստանում ենք Վեննայից թուղթ, որը հաստատում է Սողիկեանին գործակալի պաշտօնում: Երեք ամբողջ տարիներ ինձ խաբեց մեր պարոն տեսուչը խոստումներով, քնեցրեց, անասունի նման աշխատացրեց ու իմ իրաւութիւնս Արամին աչն երէկա երեխային:

— Այդ ինչ բան է պատահել, այդպէս գործ ինչի՞ պիտի պատահէր. ձեր տեսուչը իմ ծանօթ բա-

րեկամներիցս մէկն է և ես նրան բարի և քրիստոնեայ անձն եմ ճանաչում, նա այդպիսի գործ արած չըպիտի լինի:

— Ի՞նչպէս թէ չէ, քանի որ թուղթը ես էլ կարդացի: Բացի այս՝ մի քանի անգամ անուղղակի կերպով Արամը ինձ յայտնել էր և գոռոզութիւնից երևում էր, որ անպատճառ մի բան կար... և վերջացաւ: Ես էլ այստեղ ծառայելու չեմ, վարդապետ, ինձ համար մի ուրիշ տեղ գտէք:

— Տեղ գտնելը հեշտ է, բայց ես չեմ իմանում, թէ ինչ պատճառով տեսուչը այս գործը բռնեց:

— Շատ պարզ է, տեսչի աղջկայ սիրտը կպել է Արամին և նա կնոջ ու աղջկայ թախանձանքից ստիպւած, զրկեց ինձ իմ արդար իրաւունքից: Թող Աստուած իւր արդար դատաստանով դատէ: Երեք տարի է, ինձ հասկացնում էր, որ իւր աղջիկը ինձ տալու մտադրութիւն ունէր, բայց ես դարձայ այն կոյրը, որին ասում են.— կոյր, դու այստեղ կաց, առողջ գրտանք, լսւ, չըգտասք՝ կոյրը խո պատրաստ է:— Ես դարձել էի նրանց քոսոտ, տղան ինձ խաղացնում էին: Երևի այդ էլ իմ բախտիցն էր:

— Մի վշտանայ, Պօլ, մի գայրանայ, ես ամեն բան հասկացայ: Ես երեք օրից քեզ այստեղից կը հանեմ և մի լաւ տեղ կը տեղաւորեմ, անհոգ կաց:

— Ել ձեռքիցս ինչ կը գայ, քանի որ Վեննայից է հրամանը և ո՞վ կարող է դիմադրել տեսչին:

— Զարմանում եմ, Պօլ, զարմանում այդ մարդու վերայ. դա կրօնասէր և ջերմեռանդ մարդ է,

այդպիսի գործ ինչի՞ պիտի բռնէր: Նստ գարմանք...

— Ինքը մեղաւոր չէ, այն աղջիկը, մանաւանդ այն կինը դրան խելքից գցեցին: Առաւօտ-իրիկուն Կոստանցան ծովափում Արամի հետ շրջում են և լեզուին տալիս: Հապա այն քաւթնուր, կարծես կուբացել է և չի տեսնում:

— Զայնդ փորդ քաշէ և համբերիր, Պօլ, ես գիշերս կը գնամ քեզ համար տեղ որոնելու, թող նըրանք ինչ ուզում են, անեն: Քիչ լուելուց չետոյ շարունակեց.— Մօնսենեօր Գրասսը քեզ տեսաւ, երէկ ինձ ասաց, որ քեզ ուզում էր բան ասել:

— Ո՛չ, չեմ տեսել:

— Գրա պատճառով էլ եկայ, գնա՛ մօտը և տես՝ ինչ ունի ասելու:

— Լաւ, իրիկունս կը գնամ:

— Ինչի՞ ես սպասում:

— Անպիտան դռնապանը չը կայ, բանալիներն էլ մօտն է, որ դրսի դուռը փակեմ գնամ: Նարահատեալ բանտարկւած եմ:

— Զգուշացիր, երկու օր էլ սպասէ: Յտեւութիւն:

— Գնաք բարով: Ժամը քանիս է՝ մի տեսէք, ես մոռացել եմ լարել իմ ժամացույցը:

— Վեց և կէս:

— Երկու ժամ ու կէս է, սպասում եմ, տեսնենք երբ պիտի վերադառնայ մեր դռնապանը:

Վարդապետը փողոցում պատահեց Արամին, որ վազելով զիմեց դէպի պոստի գրասենեակը: Արամը սովորականից շատ արագ էր շարժւում: Ներս մտաւ

գրասենեակը և սկսեց որոնել բանալիները: Սեղանի, պահարանների կողքին, գզրոցների մէջ, կասսի վերան ու տակը, լուսամուտներում, թղթերի և տոմարների տակը, մէջը, բայց ի գուր— ո՞րտեղից պիտի գտնէր: Անդադար երկայն թւերը արագութեամբ թափ էր տալիս, ամբողջ մարմնով ոլորւում էր, կռանում, թեքւում, երկարանում, պառկում և ամեն ծակ ու ծուկ ման գալիս: Յուսահատ դարձաւ դէպի Պօլը և ասաց.

— Միւսիւ Աւգեր, խօ բանալիները այստեղ չըտեսնա՞ք:

— Ի՞նչ բանալի, ինչ էք ասում: Բանալիներն այդտեղ ինչ գործ ունին:

— Ես կարծում էի, որ այստեղ մոռացած կըլինէի... բայց լաւ, խնդրեմ կատակներ մի անէք, թէ վերցրել էք՝ տւէք:

— Ես այդպիսի չիմար կատակներ չեմ սիրում, խնդրեմ չը վիրաւորէք: Գիտէք, որ ինձ դուր չեն գալ այդպիսի խօսակցութիւնները:

— Բայց բանալիները չը կան, կամ պիտի այստեղ մոռացած լինիմ և կամ զրպանումս: Գրպաններս նայելով մաշեցի, չըկայ ու չը կայ: Ո՞ւր գնաց, ես այստեղից նաւ գնացի նաւակով և նոյն նաւակով վերադարձայ:

— Ես չըգիտեմ, նաւակի մէջ պտուեցի՞ք:

— Նաւակն էլ տակն ու վրայ արի, բայց չըգտանք:

— Զըգիտեմ:

Այս միջոցին ներս մտաւ դռնապանը և դռան

առաջը կանգնեց, ուզեց հասկացնել թէ ժամանակ է փակելու գրասենակը:

- Թովմաս, ո՞րտեղ էիր.
- Տեսչի տանը քիչ գործ ունէի:
- Թովմաս, բանալիները խօ՞ չըտեսնօ՞ր:
- Ի՞նչ բանալիներ:
- Կասսի բանալիները, այս կասսի:

— Ի՞նչ առաջ այդտեղ գրասեղանի վերայ էին, ես որ տուն գնալու խնդրեցի պարոն Պ...ըմ, միւսիւ Աւգերից՝ այդտեղ դուած էր:

Աւգերը կարմրեց, գլուխը կոխեց տոմարի մէջ թւերը քննելու: Արամը աչքերը յառեց Թովմասի վերայ, այնտեղից էլ Աւգերի վերայ և արձանացաւ կանգնած տեղը: Մի սարսափ տիրեց և չէր կարողանում ոչ ձայն հանել և ոչ շարժւել: Մի դառն ըոպէ անցնելուց յետոյ աչքերի և ականջների վերայ՝ կասկածողի նման նորից հարցրեց:

- Թովմաս, ո՞րտեղ տեսար բանալիները:
- Այստեղ, ասաց Թովմասը մօտենալով և ցուցամատը դրեց գրասեղանի վերայ:

— Այստեղ, կրկնեց Արամը, և դառնալով Պօլի կողմը՝ հարցրեց.

- Միւսիւ Աւգեր, Թովմասն ասում է, որ այստեղ տեսել է բանալիները, մի՞թէ դուք չը տեսաք:

— Ես մի անգամ ձեզ ասացի, որ չեմ տեսել, խնդրեմ այդպիսի հարցերով չը խանգարէք ինձ, ես սխալում եմ: Ձէք տեսնում, որ ամսի հաշւի ցանկովն եմ զբաղւած:

- Ո՞ւր գնացին ուրեմն այստեղից բանալիները,

ասաց բարկութեամբ Արամը, քիչ է մնում, որ խելքս թռցնեմ: Մի՞թէ այստեղ օտար մարդ մտաւ:

Ոչ ոք պատասխան չը տուեց: Մի սարսափելի սարսուռ մտաւ Արամի անձի մէջ և դողացնում էր ջերմախտով բռնւածի նման: Աչքերը արիւնով լցւեցին, գէմքը կարմրեց և սիրտը ուռած ասաց.

— Միւսիւ Աւգեր, չէք լսում, այստեղ մի օտար մարդ մտաւ:

— Ոչ ոք, պարոն, քո դուրս գնալուց յետոյ, մարդ չըմտաւ:

— Թովմաս, Թովմաս, գնա՛, կանչիր այստեղ պտեսչին, ասա՛, որ շտապի՛ կարևոր և անյետաձգելի գործ կայ:

Անտակտ քայլերով Արամը սկսեց ման գալ սենեակի երկայնութիւնով, անդադար շարժելով թւերն ու ձեռքերը և ճոճացնելով գլուխը: Երբեմն երբեմն կանգնում էր և ըոպէական մտածմունքից յետոյ, կրկին շարունակում: Մի սառն քրտինք ճակատի վերայ շարել էր իւր գնդիկ գնդիկ կաթիլները. ամեն բան աղօտ էին երևում և ականջում հնչում էր մի տխուր ղժղժոց: Ծառան ուշացաւ: Արամի դադարումը կտրւել էր. երբեմն դուռը բաց էր անում և նայում Թովմասի ճանապարհի վերայ, երբեմն պտռում էր սենեակում և գզրոցներում բանալիները, երբեմն էլ կասկածոտ աչքերով դիտում էր Պօլին:

— Անպատճառ դրա գործն է, պահած կըլինի, ասում էր Արամը ինքն իրան, դրանով ուզում է ինձ վնասել և անհոգութիւնս պատժել: Կեղտոտ, կեղտոտ հոգի, երեսի գծագրութեան մէջ երևում է սրտի ցա-

ծուծիւնը: Կարծես դրա հոգեառը լինիմ, դէմը կան-  
գնած հոգին պահանջելիս: Աշխարհը շատ լայն է,  
Պճլ, ցած հոգի, երկուսիս նման շատ միլլիոնների տեղ  
կալ, ինչի՞ ես նախանձում ինձ վերայ:

— Պարոն Արամ, ասաց ներս մտնելով Թովմասը.  
պարոն տեսուչը տանը չէ, գնացել է Պէրա: Տեղն էլ  
չեն իմանում, որ գնամ կանչեմ:

— Լաւ, մի գնա, ես գնալու եմ:

Արամը գուրս գնաց: Արևը մայր էր մտել և  
խաւարը պատում էր հորիզօնը:

Բ

ՕՐԻՈՐԴ ԿՈՍՏԱՆՅԱ

Յնորւածի նման մի ժամ թափառեց Ղալաթի  
լի նեղ փողոցներում Արամը, գնաց մինչև «Թոփ-  
խանէ» և ետ դարձաւ: Մտազբաղ երբեմն գնում էր  
ծովի ափը, շրջում նաւամատուցի վերայ, աչքը գցում ծո-  
վի ալիքներին, երբեմն էլ խանութների դռների առաջ  
կանգնում և դիտում ատաղձագործների շինած կուպիտ  
դասգողները, գոյնգոյն սգեղ ծաղիկներով ներկած  
սնդուկները: Նա ոչինչ չէր լսում, նրա խելքը, միտ-  
քը կասսի բանալիների վերայ էր:

— Բանալիներս . . . բանալիներս . . . այդքան  
էլ շուտ կորցնելու էի բանալիներս, գո՛ղ, աւագնիկ, պա-  
հեցիր բանալիներս չարագործութեան համար . . . ինձ

վնասելու, տեղս ձեռք բերելու համար: Ինձ թշւառա-  
ցնելու . . . և քու բաղդաւորւելուդ համար արիւր այդ  
չարութիւնը, անիրաւ, անխիղճ, անզո՛ւթ ընկեր: Մի-  
թէ կարելի է ապրել մի նախանձոտ ընկերի մօտ, որի  
աչքը ամեն բոպէ տնկւած է բարիքներիդ վերայ: Չար  
աչքը ամեն պակասութիւն նկատում է, չար սիրտը նա-  
խանձից տրաքւում է ամեն բոպէ. այդ արժանաւո-  
րութիւնները ունեցողը ամեն տեսակ ցածութիւններ  
անելու ընդունակ է: Պճլ, Պճլ . . . կտրտւելու ես:  
Պէտք է հարկաւոր է գնալ Կոստանցայի մօտ, գուցէ  
նա աւելի լաւ խորհուրդ տայ, ես գիշերս դգում եմ  
դարձել:

Արագ քայլերով դիմեց տեսչի տունը և պատըշ-  
գամբի վերայ գտաւ Կոստանցային, որը մի գիրք ձեռ-  
քին կարգում էր:

— Արամ, ինչի՞ ուշացար այս իրիկուն, ո՞րտեղ  
էիր մինչև հիմա:

— Պօլի նման ընկեր ունեցողը ո՞րտեղ կը լինի,  
կամ գրասենեակում և կամ ծովափում, դառնապէս իւր  
վիճակի վերայ մտածելու:

— Ի՞նչ ունիս, Արամ, ի՞նչ է պատահել էլի  
քեզ:

— Ոչինչ . . . էլ ի՞նչ պիտի լինի . . . բանալիներս  
չը կան և կասկածում եմ, որ չը լինի թէ փորձանք  
պատահած լինի կասսի հետ:

— Ի՞նչ ես խօսում, ինչէր ես մտածում:

— Ի՞նչ պիտի խօսեմ, քանի որ ուղեղս բժժում է,  
և ոչինչ չեմ կարողանում դատել: Այսօր պօստը տա-  
նելիս շտապեցի և բանալիներս մոռացայ գրասեղանի

վրա, մինչև վերագառնալս, ո՞վ է իմանում, ի՞նչեր չը գործեց նախանձորդս: Այժմ էլ ուրանում է, որ ինքը չէ տեսել: Թովմասը իրան ներկայութեամբ տասըն անգամ կրկնեց, որ բանալիները այնտեղ էին, իսկ նա բոլորովին լռում է: Էլ սրանից յետոյ ինչի՞ ապրեմ, քանի որ, ո՞վ է իմանում, գուցէ առաւօտ կասսը բանալիս, մի փորձանք պատահած լինի, ես ընկնիմ քըննութեան տակ և գող անւանւիմ...:

— Արամ, Արամ, այդ ինչեր ես խօսում, ինչպէս կարող ես գուշակել, որ մի այդպիսի ոճրագործութիւն կատարւած լինի: Ի՞նչն է ստիպում քեզ այդ միտքը չղանալու, գուցէ ճանապարհին նաւակ մտած ժամանանակդ, կամ նաւի սանդուխներից բարձրանալիս գրպանիցդ վայր գցած լինիս. այդ ի՞նչ յուսահատ վիճակի մէջ ես:

— Կասկածներ ծնեցան մտքումս և քանի գընում, աստիճան աստիճան զօրանում են կասկածներս: Այն նենգաւորը իւր նախանձից մոլորւած, ընդունակ է ամեն չարութիւններ գործելու: Եթէ մի այդպիսի բան պատահած լինի, աւելի լաւ է մեռնել, քան թէ առաւօտ տեղի ունենալիք մի սոսկալի անախորժ տեսարանի ներկայ գտնւել: Ի՞նչ երեսով տեսնեմ այն ժամանակ հօրդ զէմքը, որը սևանալու է իմ պատճառով:

— Արամ, մի յուսահատւիր, կասկածներդ մոռացիր, ինչպէս կարելի է երևակայելով յուսահատւիլ:

— Հասկանում ես գրութիւնս, գուցէ առաւօտ որևիցէ կերպով բաց անելիս, մի այդպէս փորձանք

պատահած լինի, այն ժամանակ ես ինչ անեմ, ո՞ւր գնամ, էլ հնար չեմ ունենալ գլուխս ազատելու, այն ժամանակ ուղղակի կը բռնեն ինձ, կ'ուղարկեն...օ՛ֆ...

— Արամ, Արամ, ինչեր ես խօսում, սիրտս կըտոր կտոր արիր: Արամ, մի՛թէ կարող ես երևակայել մի այդպիսի անբաղտութիւն:

— Կարելի է, Կոստանցա՛, այդ հրէշից սպասելու է: Մտածմունքներից մազերս ցցւում են, սիրտս այն պէս բաբախում է, որ երակներս տրաքւում են:

— Հանդարտւիր, Արամ, ես այս գիշեր կըխօսեմ հայրիկիս հետ և ամեն բան կարգի կը մտնի:

— Հայրիկիդ, մի՛թէ կարծում ես, որ ես դիմանամ մի այդպիսի դառն ըոպէի ականատես լինելիս, որտեղ հայրդ յուսահատութիւնից կամ երեսիս թքէ, կամ իւր գլխին փորձանք բերէ:

— Ի՞նչ պատճառով այդպիսի բաներ ես մտածում, Արամ, չէ՞ որ հայրիկս բարի է և քո բարեսրտութեանդ վերայ կասկած չ'ունի:

— Ես այդ գիտեմ, բայց այդպիսի ըոպէում նա պարտաւոր է անմիջապէս ինձ ձերբակալել, այն ժամանակ աւելի կը դառնանայ բոլորիս վիճակը:

— Արամ, այնպէս ես խօսում, որ կարծես հաստատ գիտես, թէ մի այդպիսի փորձանք պատահած լինի:

— Կարծում եմ, օրի՛որդ, և տարաբաղդաբար իմ կասկածներս միշտ իրականութեան են փոխվել:

— Ուրեմն ինչ միջոց ես մտածում, ինչ միջոցով կարելի է գործը կարգի բերել:

— Ոչինչ. — ընկնել այս պատշգամբից և վերջ

տալ... Այս տանջանքով ապրելը սոսկալի է...

— Ես էլ հետդ, այնպէս չէ:

— Դո՛ւ, պատճառն ինչ է, դու ինչո՞վ ես մեղաւոր... որ...

— Նրանով, որ քեզ սիրում եմ, առանց քեզ չեմ ցանկանում ապրել և քո պատիւը իմս է:

— Ես, օրինորդ, մեղաւոր եմ, օրէնքի առաջ պատասխանատու ես եմ: Դատաստանը ինձ է խայտառակելու, իսկ քեզ համար ինչ կայ:

— Դու մեղաւոր չես, Արամ, ես հասկանում եմ, շտապելու պատճառով բանալիները մոռանալը ոճրագործութիւն չէ, ոճրագործութիւնը կասսից փողը հանելն է և դու ես գիտեմ, որ երբէք այդ աստիճան չէիր ստորանալ: Քանի որ մոռացկանութեան համար պիտի քեզ պատժեն, ուրեմն ես էլ, մի այդպիսի դէպքում քեզ հետ ընկեր եմ, բայց լիմարութիւնները թողնենք և իրականութեան մասին խօսենք: Ինչպէս իմանանք, թէ կասսից բան է պակաս:

— Ձը գիտեմ, եթէ դարբին բերենք և կոտրել տանք, գործը աւելի պիտի ծանրանայ. առանց կոտրելու, այստեղի վարպետները ութն օրումն էլ դժւար թէ բանան:

— Կոտրել տանք:

— Առանց հօրդ կոտրել, նշանակում է թի առան գնալ:

— Ո՞վ էլ կարող է համաձայնել գիշերս մեր ներկայութիւնով այդ բանը կատարել: Դրանք գլուխ գալու բաներ չեն, իմ ասածիցս կարճ և վճռականը չը կայ: Ոգեկան վշտերը և դառնութիւնները տեսնելուց լաւ է

ընկնել և վերջանալ...

— Արամ, ինչ էլ որ պատահի, դու ապրելու ես ինձ համար, իմացա՛ր

— Դժւար է, Կոստանցա՛, խոստանալ երբէք չեմ կարող:

— Լաի՛ր և խոստացի՛ր, ես հնարք գտայ բանալու և քննելու:

— Ցնորք է, երանգ է այդ խօսքերը, իմացա՛ր:

— Քո գործդ չէ, այս րոպէիս քո ներկայութեամբ կը գնանք և կը բանանք: Ես յուսով եմ, որ պիտի ոչնչանան կարծիքներդ և ես յաղթանակով պիտի ետ դառնամ, միշտ քո կասկածոտութիւնը ծաղրելով:

— Երանի՛ թէ յոյսդ իրականանար: Բայց ինչպէս կարելի է բանալ կասսը:

— Կը տեսնես:

— Ուրեմն բանալիները տանն են. չը լինի, թէ հայրդ վերցրած լինի և քեզ տւած, որ ինձ նեղացնես: Դու էլ երկու ժամ ինձ տանջելուց յետոյ հազիւ գլխացիլ վրաս:

— Ո՛չ, ո՛չ, էլի կարծիքներ, նորից կասկածներ, բայց այս կարծիքդ բոլորովին սխալ է. ես յոյս ունիմ, որ միւս կարծիքիդ սխալն էլ շուտով պիտի տեսնես: —

— Բայց ասա՛ ինձ, խնդրում եմ, ինչպէս ես բաց անելու. մի տանջիր, մի չարչարիր ինձ, երևում է, որ էլ չը պիտի կարողանամ դիմադրել այս նեղութիւններին: Ասա՛, ասա՛, Կոստանցա՛, ինչ միջոցով ես բանալու կասսը, մի՛ զուր տեղը յոյս տալ, եթէ ապաւ

Խ 5-79.52

հով չես մտադրութիւնդ գլուխ բերելու:

— Այս ըոպէիս, այս ըոպէիս, սպասիր գամ և երթանք:

Կոստանցան հեռացաւ: Երիտասարդը երկու անգամ մօտեցաւ ճաղերին իրան վար գցելու նպատակով, բայց յոյսի նշույններն արգելեցին, և նա զսպեց իւր բուռն կրքերը: Բայց որքան երկարացաւ այդ մի ըօպէն, դրա վայրկեանները ժամի ըոպէներից աւելի էին թւում Արամին: Մօտեցաւ լուսամուտին, ներս նայեց, կանգնեց, անշշուռնջ լսեց, բայց դեռ չը վերադարձաւ Կոստանցան: Քիչ յետոյ քայլերի ձայնը ուրախացրեց նրան և Կոստանցան վազելով եկաւ, ձեռքին մի փոքրիկ կաշիէ կնքած տոպրակով:

— Գնանք, Արամ, շտապիր, ժամանակը սուղ է:

— Գնանք, ասաց Արամը: Եւ թեւն առնելով Կոստանցային՝ իջան սանդուխից՝ դողալով և այլալիւծ դէմքով:

Լուռթեամբ շարունակեցին իրանց ճանապարհը, ոչ ոք չէր կարողանում մտաւոր զբաղմունքից ազատել և խօսելով խանգարել միւսի մտածմունքները: Անցան մի կարճ փողոցով և մտան պոստի բակը:

— Սպասիր, ասաց Կոստանցան, ես մտնեմ ներս և տեսնեմ ո՞վ կայ: Երկուսով ներս մտնելը վտանգաւոր է:

Մթում կանգնեց Արամը, ներս մտաւ Կոստանցան, չորս կողմը աչքի անցրեց և անմիջապէս դուրս գալով ասաց.

— Արամ, ներս արի: — Գունապանը, որ միանգամայն գիշերապահի պաշտօն էր կատարում, բազմոցի

վրա իւր թեթեւ անկողինը տարածել և գրասեղանի մօտ նստած թուղթ էր մրոտում, գրել-կարդալ սովորելու համար: Կոստանցային տեսնելուն պէս՝ ոտք էր ելեր և զարմացած նայում այս տարօրինակ այցելութեան վրա: Արամը ներս մտաւ:

— Թովմաս, հսկիր դրանը, մարդ ներս մի թոյլ տար, ասաց Կոստանցան:

Արամը արձանացել էր, ոչ կարողանում էր խօսել և ոչ շարժւել: Մի երկաթի սաղի բարակ թել տըւեց Կոստանցան Արամին ասելով.

— Այս երկու ծայրերից բռնիր և տաքացրու լամպի վերայ:

Արամը մեքենայաբար հնազանդւեց: Կոստանցան քսակի կնքած կողմը ցոյց տալով՝ ասաց.

— Զգուշութեամբ այդ կարմրած թելը անցկացրու այս կնիքների տակով:

Արամը կատարեց Կոստանցայի հրամանը. կնիքները առանց այլալելու թերթիկի նման բաժանւեցին, որոնց նա զգուշութեամբ դարսեց գրասեղանի վրա: Բսակի կապերի կնքամոմերը պոկեց, քակեց և բաց անելով հանեց բանալիները միջից: Ճիշտ կորած բանալիների նման էին. բայց նրանք, ձեռքի մէջ բանեցնելով, մասամբ մաշւած էին սրանցից և փայլուն:

— Բայց, ասաց Կոստանցան, կասը և տեսնենք:

— Ա.ս.ս., խնդրում եմ, Կոստանցա՛, այս ինչ բանալիներ են:

— Փորձանքների ժամանակ օգտւելու համար երկրորդական բանալիներ են, որ տանը հօրս արկղում կնքւած պահուում են: Բայց, բացատրութիւնների ժա-

մանակ չէ: Ձգոյշ, կամաց խօսիր, մեզ կարող են լսել: Իրար ետեւից բանալիները անց կացրեց փականքներում և շուռ տալով բաց արեց արկղը: Թովմասը ապշած մտիկ էր տալիս սրանց շարժմունքներին: Արամը կասսի դուռը ետ տալով կանգնեց առաջը և սկսեց մի մի մտիկ տալ ծրարներին: Ամեն մի գզրոց քաշում, նայում էր և ամեն կողմ աչք դարձնում: Կոստանցան ուշադրութեամբ դիտում էր Արամի արարքները:

— Տեսար, որ կասկածներդ փարատեցան, Արամ, դուր տեղը տանջեցիր քեզ, ինձ էլ հետդ:

Այդ միջոցին ոսկի ծրարներն էր համրում Արամը. երկու անգամ քննեց ամեն մէկի հասցէն և դումարը: Յանկարծ գոյնը կապտեց, աչքերը մթնեցին, դողացող մարմնով և ծնկների ուժը սպառած ետ ընկաւ, կանչելով.

— Ղազարեանի Լիօնից ստացած ծրարը չըկալ: Ասաց ուշքը գնաց, թուլացաւ ընկաւ և նւաղեց:

— Թովմաս, սառուց բեր, վազէ, դեռ այդտեղ ես, մի քիչ սառուց գնէ և հասցրու, ասաց Կոստանցան և չոքելով Արամի գլուխը դրեց ծնկան վրա, տրորում էր անգաղար նւաղածի ճակատը ու քունքերը: —

— Ներեցէք, օրիորդ, ասաց Թովմասը. նախ վերցնենք, դնենք այս բազմոցի վերայ և դուք զգուշուլթեան համար փակեցէք կասսի դուռը, որ մի նոր փորձանքի չը հանդիպենք, ես այս ընդհանր կը բերեմ:

Յուսահատ հետեւեց Թովմասի խորհրդին և երկուսով գրկեցին Արամին, գրին Թովմասի աղբատ անկողնի վերայ: Թովմասը դեռ սպասում էր:

— Վազիր, Թովմաս, ժամանակը կորցնելու միջոց չէ:

— Օրիորդ, կասսը, կասսը մատով ցոյց տուեց բաց փեղկերը: Հաւատարիմ պահապանը ամեն ընդհանրում չէր մոռանում իւր պարտականութիւնները: Օրիորդը լսեց, կողպեց կասսի դուռը և բանալիները դրեց իւր քսակի մէջ: Թովմասը երկու ընդհանրեց սառուցը, որի բիւրեղիկները քսելով Արամի ճակատին և կուրծքին՝ սթափեցրին:

— Կորայ, կորայ, ասաց կրկին ուշաթափելով: Անճարացած Կոստանցան երբեմն լաց էր լինում և երբեմն չոքած բազմոցի կողքին աղօթում էր, աչքերը երկինք դարձնելով: Թովմասը անգաղար շփում էր գլուխը և կուրծքը սառուցի հատիկներով և աշխատում էր ուշաբերելու: Ուշքի եկաւ Արամը, բարձրացաւ, նստեց՝ աչքերը չորս կողմը շրջելով:

— Կոստանցան, Կոստանցան, մնաս բարով, ներիր ինձ, որ քեզ այդքան նեղւելու պատճառ եղայ, մոռացիր ինձ, մոռացիր ամեն բան, ես այժմ օրէնքի առաջ գող և աւազակ եմ, գուցէ վաղը կամ գիշերս իսկոյն ինձ բռնեն և ես բանտարկւեմ աւազակների մէջ: Հեռացիր ինձանից, այլ ևս ես արժանի չեմ քո զթուլթեանը:

— Լռիր, Արամ, ինչք ես վշտացնում ինձ, միթէ դու մեղաւոր ես, միթէ չըգիտեմ, թէ ինչպէս են կարգադրել այս խաղը: Միթէ Պօլը, այն օձի ձուռնորը չէ այս խաղի հերոսը, միթէ ես չեմ պատճառը այս չարագործութեան:

— Կարտակ բաներ մի խօսիր, օրիորդ, ես այս

ըօպէիս գող եմ համարուում և դու հեռացիր ինձանից...

— Արամ, ես քեզ արգելում եմ և չեմ ցանկանում, որ խոցես սիրտս. օրէնքը կարող է սխալել և քեզ պատժել, բայց ես խղճիս առաջ պարտաւոր կըմնամ, եթէ տեսնեմ իմ պատճառով քո անիրաւի կըրածդ տանջանքները և լռեմ: Դու մեղաւոր չես, մոռացկանութեան համար մարդու չեն խայտառակել:

— Մի կեղեքիր սիրտս, Կոստանցա՛, հեռացիր իմ մօտից, որ չը դառնացնեմ սիրտդ: Օրէնքի առաջ մոռացկանութիւնը հաստատելը դժւար է. դատաւորները ազնիւ խօսքի փաստերը լսելու և հաւատալու իրաւունք չ'ունին: Լաւն այն է, որ մարդ բոլորովին չը ներկայանայ նրանց առաջ: որոնք արհամարհական աչքով պիտի տեսնեն ձեերս, լսեն խօսքերս ու դատապարտեն: Կոստանցա՛, Կոստանցա՛, դրանց ձեռքից ազատելու միակ միջոցը մահն է:

— Արամ, դու չը պիտի մեռնես, իմացա՛ր, դու պիտի ապրես, այդ մասին էլ մի խօսիր, մի մտածիր:

— Տաժանակրի սոսկալի կեանքով ապրեմ, միթէ հրամայում ես և ցանկանում ես, որ ես տանեմ այն դաւը լուծը, որին կրելու դատապարտւած են ոճլագործները:

— Ո՛չ, քանիոր դու չես գգում մեղք սըրտումդ, պիտի ազատես և արդարանաս:

— Օրէնքը փաստեր է պահանջում, Կոստանցա՛:

— Թովմասը վկայ է գործին:

— Նրա վկայութիւնը իրեն կրակի մէջ կը գցի և նրա ընտանիքի առաջ յաւիտեան պարտաւոր կըմնանք: Նամանաւանդ, որ այդ վկայութիւնը չի օգ-

նիլ: Չար չը կայ, օրիորդ, հնարք չը կայ: Կոստանցա՛, մահը կը փրկէ բոլորին:

— Արամ, իմ վճիռը չը պիտի համարձակիս փոխելու. անարդար օրէնքի ձեռքից փախիլ և թագ կաց, գուցէ մի օր փոխւի այս կարգերը և լոյս աշխարհ դուրս գան աւելի պարզ և արդար օրէնքներ:

Գ

Խ Ն Ա Մ Ա Կ Ա Լ

Արամը երգմունքով խոստացաւ Կոստանցային՝ հեռանալ անձնասպանութեան մտքերից և աշխատել ուրիշ միջոցներով ազատել գլուխը վտանգից: Կոստանցան վստահացաւ Արամի խօսքերին, թոյլ տւեց հեռանալու և խորհելու բռնելիք ընթացքի մասին: Արամը խոստացաւ ծրագիրը յայտնել Կոստանցային, որին տուն վերադարձրեց և շեմքից ետ դարձաւ դէպի « Թէփէ - Բաշի » թաղը: Ծուռ ու մուռ փողոցներից անցնելով, հասաւ մի երեք յարկանի տան դռան առաջ, վեց ոտք սանդուղներից բարձրանալով քաշեց զանգակը: Դուռը բացւեց:

— Բժիշկը տանն է, հարցրեց դռնասպանից:

Վերջինս լաւ ճանաչելով Արամին, կարիք չ'ունէր ներսից հրաման խնդրելու:

— Տանն է, ասաց, մտէք, բարձրացէք, տանն՝

նարանու մ կը գտնէք նրան:

Մրամը տան տղայի պէս վազեց սանդուխներից գէսի իւր խնամակալի խուցը: Առանձնարանի դռան առաջ կանգնեց և մատով զարկեց երկու անգամ դըռանը:

— Մտէք, ասաց ներսից բժիշկը: — Մրամը դուռը բաց արաւ և շեմի վրա կանգնեց: Բժիշկը իւր գրասեղանի առաջ նստած կարգում էր Պարիզից ստացած լրագրները: Մրամը ետ պիտի դառնար, ամօթից երեսը չէր բռնում առաջ գնալու, երբ բժիշկը իւր ակնոցներով աչքերը շրջեց՝ եկողին տեսնելու և վերից վար չափելուց յետոյ, ասաց.

— Ինչի՞ ես կանգնել, ինչի՞ ներս չես մտնում, Սրամ:

Առանց պատասխան տալու Սրամը մտաւ, և դէմքի այլայլութիւնը ցոյց չըտալու համար, գնաց մթնումը նստեց աթոռի վերայ:

— Սրամ, ռրտեղ ես, այս երեք օր է չ'երևացիր: Ինչի՞ ես ուշացել, եթէ գալու մտադրութիւն ունէիր, ինչի՞ չչտապեցիր: Մինչև հիմա ռրտեղ էիր անց կացնում: Երևի Կոստանցայից չես կարողանում բաժանւել:

Սրամը լուռ մտածում էր: Բժիշկը պատասխան չստանալու վերայ զարմացած, ընթերցանութիւնը դադարեցրեց և աթոռը շուռ տալով՝ ասաց.

— Սրամ, ինչ ունիս, ինչի՞ չես խօսում:

— Ոչինչ, պատասխանեց Սրամը, և սրտի խորքից մի «օՓ» քաշեց:

— Ինչի՞ մթնումն ես նստել, մօտ արի տես-

նեմ: — Սրամը ակամայ բժշկի մօտի աթոռի վրա նստեց: Խնամակալը սանի այլայլած դէմքը դիտելով. զգաց, որ մի տարօրինակ դէպքի պատահած էր Սրամը:

— Սրամ, տղաս, այդ ինչ ունիս, ինչի՞ է գոչնդ թուել, ինչ ես մտածում:

— Կորնայ, պարոն բժիշկ, կորնայ և չարաչար ընկայ ծուղակը:

Այստեղ մանրամասն պատմեց եղելութիւնը: Բժիշկը ուշադրութեամբ լսում էր և մասնաւոր հարցերով ընդհատում պատմութիւնը հանգամանքներին լաւ ծանօթանալու համար: Պատմութիւնը լսելուց լետոյ, ասաց բժիշկը.

— Այսօր Կիւրեղ վարդապետն եկաւ գրասենեակը:

— Ո՛չ, սոսաջ Սրամը, և մի քիչ լռելուց լետոյ. — ես նրան գրասենեակի նեղ փողոցում պատահեցի իրիկան դէմ, պոստից վերադառնալիս:

— Բարևեցիր նրան:

— Վաղուց խզած ենք յարաբերութիւններս:

— Թեև տակ բան կա:

— Ո՞վ է ուշք դարձրել նրա վրա. դուք հարցրիք՝ այժմ լիշեցի, որ ես պոստատուն վազելիս նրան պատահեցի և հաւանական է, որ գրասենեակից էր դուրս գալիս: Այնպէս լայն վերարկու ունին, որ թևերի տակ մարդ կարող են պարտկել, ո՛ւր մնաց ծըրար:

— Պօլը այլայլած էր, առացիր:

— Սաստիկ կարմրած:

— Հասկանում եմ, հասկանում, բայց քեզ օրէնքից ազատելու լոյս չըկայ: Անիծւած բանալիները ողորմութեան դռները փակել են քո առաջ և քեզ դատապարտելու են: Թէ Կիւրեղ վարդապետը Հռոմի փականքերով մօրդ տանջում էր, նրա աշակերտը, իւր վարպետի հայեացքով, կասսի բանալիներով քեզ այս կեանքում աշխատում է դժոխք ուղարկելու: Հանգամանքները դժւար են, լաւ խորհելու է: Համբերութիւնը և հաստատամտութիւնը միայն կարող է քեզ փրկել: Դու իբրև մարդ և իմ աշակերտս՝ կոււելու ես հերոսաբար այս պատերազմում, պաշտպան հանդիսանալով այն թշուառներին, որոնք անգիտակցաբար զոհ են դառնում խաւարային մեքենայութիւններին: Յաւում եմ վիճակիդ վրա, բայց ուրախ եմ դէպքից: Ուրիշ հանգամանքներում դու չըպիտի կարողանալիր ասպարէզ մտնել և գուցէ ես չըհամաձայնէի քեզ իրաւունք տալ դուրս գալ այն ճակատամարտը, որտեղ դափնի պսակների հետ կայ արիւնայի վախճան նենգաւոր ձեռքերից: Ամեն դէպքում քեզ մահը սպառնում է, սիրելիս, աշխարհը իւր կոյր աչքերով չը պիտի կարողանայ խաւարի միջից տեսնել անարատութիւնդ ու անմեղութիւնդ. չարագործների շարքում իբրև աւազակ քեզ ընդունելու են և ոճրագործները իրանց արարմունքի յաջող վախճանով խրախուսւած, ո՞վ է իմանում, թէ դեռ ի՞նչ անմեղներ տանջելու չեն իրանց սրագայթներում: Դժւար է կուել այդ անվերջանալի պատերազմում, այդ պատճառով հեռանում են, խոչս են տալիս մարդիկ այս կարճ ժամանակեայ աշխարհում այդ աղէտալի կեանքից: Գնա՛, որդիս, քեզ արդարու-

թիւնը կանչում է, քարոզելու լրտեսների այս մեքենայութիւնների դէմ, որոնց ձեռքում խեղճ են օրէնքներն ու իրաւունքները: Անգութ Եւրոպան դարերով տանջւելուց լետոյ, վերջապէս զգաց և սկսեց հալածել իւր ծոցից, այս անհարազատ ծնունդը. բայց օտար երկրում իւր շահերի համար պաշտպանում, օգնում է իւր արտաքսածներին, որոնք իբր տարածում են իւր քաղաքականութիւնը, հարստահարելով թշուառ ժողովուրդը: Թէև շատ հայեր կան, որոնք գիտեն այս մեքենայութիւնները, բայց չեն կարող զգալ քեզ նման նենգագործների ոգին, որոնց զոհն ես մատաղ հասկում: Գնա՛, ազգը և մարդկութիւնը քեզ կանչում է, պարտականութիւնդ կատարիր մարդասիրաբար: Մարդկութիւնը զոհ է պահանջում և այդ թող լինի կեանքդ. որն այսօր մեռաւ հալածողներից ձեռքով:

— ՄՓ, ասաց սրտի խորքից Արամը:

— Բոլորովին մի գժգոհիլ վիճակիցդ, դա փառք ու պարծանք համարիր: Պոստատան գրասենեակի կեղտոտ ծրարն ու կապոցը մոռացիր, ընկիր քաղաքից քաղաք և քարոզութեամբ զգուշացրու հայրենակիցներիդ այս չարագործների թակարդներից, և եթէ մի օր կեանքումդ երկու եղբօր ազատես սրանց կարթից, մխիթարւիր, որ մի հայ ընտանիք ազատել ես աշխարհում թունաւոր իժերի ատամներիցը: Երանի թէ շատերը գլորւէին այդ քո աննախանձելի կարծածդ դրութեան մէջ, մերկ ու փափուկ կեանքից ճարահատեալ ձեռք քաշելով, ընկնէին հայրենի աշխարհի գիւղերն ու քաղաքները, որ պատուէին ռամկի առաջ սրանց գիմակներն ու ծածկոցները: Այս օրւայ դառնութիւնները տես-

նելուց լետոյ, աւելի ջերմ սիրով պիտի պաշտպանես աչն դատը, որը սկսել ես փոքրիկ շրջաններում քարոզել և մամուլի սեցրած թղթերի փոխարէն, բուն լեզուով և ձայնով խօսիր ամբոխի հետ, իւր հասկացած լեզուով ու բարբառովը, նրա յարկի տակ, որը աւելի զգալի է իւր սրտին: Մի վախիւր, մի փոր հաց ճանապարհորդի համար՝ մեր հիւրընկալ հայրենի աշխարհի ամեն յարկի տակ գտնուում է: Ես գիտեմ, որ մեծ ուրախութիւն զգալու ես գաղափարներիդ տարածումը տեսնելով և չափազանց հրճւելու այդ նոր կեանքից, որը պիտի շրջապատւի անկեղծ բարեկամներով, սարգասիրտ համակրողներով և բերկրառիթ ժպիտն երեսին խրախուսող ընկերակիցներով:

Արամը արմուկով գրասեղանին կոթնած, գլուխն էլ բռունցքին յենած, աչքերը գետին յառած, ծնկները դողացնելով, կուրծքը սաստիկ բաբախելով լլսում էր խնամակալի այս խրատները, երբեմն երբեմն դառն հոգոց հանելով: Նրա սրտում մի ուրիշ կրակ էլ կար. նա բորբոքւում էր այդ հրով և այդ վիշտը դառնացնում էր նրա կեանքը: Պատրաստ էր զոհւել հայրենակիցների համար, բայց մի ուրիշ զոհ էլ տեսնում էր իւր աչքի տուջև, որ զոհւելու էր: Ոտ մի անմեղ հրեշտակ էր. մի միամիտ աղաւնի, որ տիրել էր հինգ - վեց ամիսից աւելի Արամի սրտին. — Կոստանցան մի ընդարձակ տեղ էր բռնում Սողիկեանի սլրտում:

Արամը ցաւում էր աչն գէպքի վրա, որ առիթ էր տւել իրան ծանօթանալու Կոստանցայի հետ: Ուրախ էր նորա պատճառով զոհւելու համար, բայց

չէր ցանկանում, որ սիրուհին իւր պատճառովը զոհւէր: Պօլը, որ տարիներով այլուել էր Կոստանցայի սիրով, Կոստանցան գէպի նա ունեցած ատելութիւնով՝ երկու կեանք թշուառացնելու պատճառ էր դարձել: Եւ այս բոլոր չարութիւնները կատարւել էին մի ուրիշ խորամանկ մեքենայականութեան թելադրութեամբ, որի գործիքներից մէկն էլ Աւգեր Պօլն էր: Կուածադիկը Կոստանցան էր, Կոստանցան տըւել էր ոսկի խնձորը Արամին:

Կիւրեղ վարդապետը կատաղել էր, որ իւր սիրասուն սանը անարժան էր համարւել այդ խնձորին: Հաստատ ոսկի - խնձոր էր նրա հաշուով Կոստանցան: Հօրն ու մօր մի հատ ժառանգը լինելով, մայրական վեց - եօթ հարիւր ոսկի եկամուտ բերող կայքերը անցնելու էին Կոստանցային և հայրական պոստատան տեսչի վեց հարիւր ոսկիանոց պաշտօնը՝ նրա ապագայ փեսային: Այս բոլորը, Կիւրեղ վարդապետը հինգ - վեց տարւայ ընթացքում խորհել, փնտռել, գըտել և դասաւորել էր, Պօլը երեք ամբողջ տարիներ զիշեր - ցերեկ ժրաջան աշխատութիւն զոհել էր, դրանց հասնելու տենջով, Արամը չորս հինգ ամսում տակն ու վրայ էր արել և պաշտօնով էլ մի աստիճան բարձրացել Պօլից:

Կոստանցան չէր կարող նախատեսել, որ իւր անձնական դատողութիւնով, ապագայ վիճակի վերայ ունեցած իշխանութիւնը իւր ազատ կամքով որոշելու համար, պիտի պատահէր աչնպիսի չարանեղ անձնաւորութիւնների, որոնք պիտի բռնաբարէին նորա արդար իրաւունքները, իրանց անձնական եսականու-

թեան համար: Արամը Կոստանցայի միայն սիրտն էր քննել, հաւանել և խօսք տւել: Եւ սկզբնապատճառը այդ սիրոյ եղել էր Կոստանցան, որը տեսնելով պատանու առողջ գատողութիւնը, ազատ մտքերը և սեպհական որոշ կարծիքներն ու գաղափարները, զանազան ձևերով հասկացրել էր, որ ինքը մի այգայիսի ինքնուրոյն անձնաւորութեան ձեռք կարկառելու փափագ ունէր, և չէր էլ սխալւել: Արամը Կոստանցայի ոգեկան բարձր ձգտումները, հաստատ բնաւորութիւնը, ազնիւ և անկեղծ սիրտը, մօլութեան և խաւարի գէմ ունեցած ատելութիւնը, առողջ ու գեղեցիկ կազմաւածքը և մանաւանդ իւր վրա ունեցած ջերմ սէրը նկատելով, առաջարկել էր առանձնապէս, որ հաճի ընդունելու իւր սիրտը, փոխադարձաբար տալով նրան իւր ձեռքը: Կոստանցան ընդունել էր և առանց ետաձգելու յայտնել էր ծնողներին, որոնք իրանց օրհնութիւնով պսակել էին այդ բաղձանքները:

Այս բանը թէև գաղտնիք էր ընտանիքի մէջ, բայց աշխարհի աչքը տեսնում էր. «օտարի բերան—ջւալի բերան», խօսում էր. յայտնի բան է, նախանձորդները տրաքւում էին, բայց ո՞վ կարող էր բաց օգուտ, ազատ անտառում, ծառերի ճիւղերի վրա թառած զօւն-զօւնացող աղաւնիների սէրը խանգարել, հանգիստը վրդովել: Արամը իւր աղաւնեակի հետ սիրել, սիրւել, կապել էր. մտածում էր միայն նորա համար ապրել, նորան սիրել, նորա հետ խորհել և նորա հետ շնչել: Բայց ահա անգութ օրսորդը, որ լաւ գիտէ իւր որսի ունն ու բուռնը, չի թողնում դադարելու աղաւնեակներին և Արամը պարտաւորեալ հեռանալու

էր իւր սիրած բնից: Անողոք դէպքը պահանջում էր: Բայց ինչպէս անօգնական թողնէր ու հեռանար այն ազնիւ սրտից, որին օրիորդը դադարում տալու չէր. և ո՞վ կարող էր երեւակայել այն սև օրերը, սրտնք գալու էին Կոստանցայի գլխին: Արամը ուզում էր գնալ հեռու աշխարհ, ազատւել այդ խայտառակութիւնից և աշխատել ազատելու իւր եղբայրներին այդ անգութ լրտեսների նենգաւոր ուռկաններից, բայց սիրտը, Կոստանցայի սէրը կաշկանդում էր նորան: Բեժիշկը նրա հետ խօսելիս, նա լաւ էր ըմբռնում բեժիշկի ասածները, բայց սիրտը կտոր կտոր էր լինում, մղկտում էր, երբ երեւակայում էր, որ էլ տեսնելու չէր իւր պաշտելի էակին, իւր գաղափարակից ընկերուհուն: Բեժիշկը խօսքը աւարտելուց յետոյ, ուզեց խօսել հետը, թէ ինչպէս հեռանար իւր սիրուհուց. բայց երիտասարդական ամօթն և խնամակալից ունեցած ակնածութիւնը լռեցրին նրան և, կասկածի տեղիք չը տալու համար, ասաց.

— Մայրս, մայրս, մօրիցս ես ինչպէս բաժանւեմ և այս քաղաքում թողնեմ անտէր, անտիրական:

— Այո՛ մայրդ, քեզ պէտք է մօրդ մասին խորհել, որ լաց է լինում իւրաքանչիւր օր կրօնափոխ, ազգուրաց լրտեսորդիների վրա. գնա՛ հայրենիք. այնտեղ է մայրդ, գրկի՛ր նորան ու մխիթարի՛ր: Գնա՛ հազարաւոր լացող մայրերի արտասուքները սրբելու, գնա՛ և մի թոյլ տար, որ չարագործները խլեն անմեղ զաւակները իրանց մօր գրկից, մի թոյլ տար, որ մատնեն շատերին քեզ նման թափառելու, դառնապէս իրանց վիճակը ողբալով: Անհոգ կաց, Կատարինէն

մի կտոր հաց կը գտնէ այս յարկում, անտրտունջ անց կացնելով իւր վերջին օրերը:

Արամի սիրտը սաստիկ բաբախում էր, շնչառութիւնը արգելում և աչքերը դառնադի արտասուքի կաթիլներով լցւելով, առատ հոսեցին աչքերից:

— Արամ, Արամ, քսան և մէկ տարիդ անց կացրիր, ես կարծում էի, որ մարդ դարձար վաղուց, բայց ինչպէս տեսնում եմ, դեռ երեխայ ես և տղայական յատկանիշները բոլորովին չեն հեռացել քո վրայից: Թափիր, թափիր առատութեամբ այդ արտասուքները և այս թող վերջին անգամը լինի: Զէյթունի որդուն արտասուքը պատիւ չի բերիլ, մտածիր, որ առիւծի կորիւն ես: Սիրտ առ, քաջացիր և արիացիր: Կեզ փրկութիւն չըկայ ոչ մի երկում, մխիթարութիւնդ պիտի գտնես միայն գաղափարներիդ տարածման մէջ, այնտեղ է կեանքդ և այնտեղ պատրաստած ապագայ բաղտդ: Այդ արարքովդ պիտի ցոյց տաս, որ հօրդ արժանաւոր որդին ես, որը թշուառի արտասուքները սրբելու համար զոհեց իւր կեանքը և զերեզմանի մէջ նրա ոսկորները պիտի ցնծացնես: Զօրացիր, մեծ կուռի մէջ ես մտնելու և յաղթանակը ամեն դէպքում քեզ է պատկանում:

Արամը հազիւ զսպեց իրան. նա Կոստանցայից հեռանալու մասին միայն ցաւում էր, միայն նա էր տանջում նրան, և միայն նորա պատճառով որ երկիրն էլ գնար, աչքը դէպի Կ. Պօլիս՝ Բօսֆօրի ափի կողմը պիտի մնար, պտուելու իւր սիրականին և կարօտն առնելու փափագէր: Արամի համար ամեն ասպարէզ միևնույն էր և աւելի սիրելի՝ գաղափարին ուղ-

ղակի ծառայելը: Զուր տեղ նա լսում էր իւր արտասուքների համար այն նախատինքները, որոնք աւելի նրա անձնականութիւնը վիրաւորում էին: Ուզում էր վիճել իւր տասն և երեք տարւան խնամակալի հետ, բայց վերջինս գիտենալով իւր սանի անձնատիրութիւնը և նկատելով նրա վրդոված դէմքը՝ մեղմացրեց և քաջալերեց: Արամը մտքից անցածը սրտում թաղելու շատ վարժ չը լինելով, սասց բժշկին.

— Բժիշկ, ես յոյս ունիմ, որ դուք փորձած էք սիրտս և գիտէք բնաւորութիւնս: Ես լամ նրա համար, որ թող եմ և անկարող տանելու աշխարհի ձախող դէպքերը, նրա համար, որ երեխայի նման քաջասիրութիւն չ'ունիմ գիմագրելու գլխիս եկած փորձանքներին և անկարող եմ պաշտպանել այն գաղափարները, որի համար այսօր հայրածու եմ և պիտի հայրածուիմ: Մի սխալէք, երբէք ես չեմ զիջանիլ, և ոչ մի դէպքում այդ ճիշդութիւններին չը պիտի խոնարհիմ: Թող նրանք իրանց դադտնի մեքենայութիւնները գործադրեն, խաւարում գործեն, ես յայտնի պիտի նրանց դէմ ունեցածս ատելութիւնները քարոզեմ և նրանց մերկացնեմ իրանց դառի մորթերից: Այս մտքերը չեն ինձ ճնշողը, այլ մի թող արարած, մի անարատ գառն. մի անմեղ հրեշտակ է, որին թուպնելու եմ հեռանալով:

— Ոչինչ, ոչինչ, ես սրբախ եմ, ես արդէն չեի ցանկանում, որ դու այն գերմանացու, թէ աւստրիացու աղջկայ հետ ամուսնանայիր: Ես վեզ սասցի, ինձ չը լսեցիր. զիտես, որ այս բոլորը դու նորա պատճառով ես քաշելու: Քաշիր, որ համոզուի իմ փորձառու  
Ա Ա Ր Ա Ս Տ

Թեան վրա: Հազար անգամ ասացի, թէ հայրը գերմանացի է, մայրը հայ, դրանցից ծնւածից լաւ բան յուսալ չէ կարելի: Գնա՛, մի արդար կաթնակեր հայ աղքատ աղջիկ ջոկէ, պսակւիր: Եթէ կամենաս, ասացի քեզ, մի լաւը գտիր, ես միջնորդեմ, չորս - հինգ տարի ուզածդ ուղղութեամբ դաստիարակիր և կարգւիր: Բայց պէտք է դուրս գալ ձեր նահապետական շրջանից, անխտիր ջոկել միայն (ինչպէս ասում էք) «լաւ հոգի և լաւ բնաւորութիւն» ունեցողին: Այժմ աւելի լաւ հաշուեցիր իմ մտքերիս հետ, ուրախ եմ, որ ճիգւհտները վերջապէս մի մեծ վերք տւին սրտիդ, էլ գնա՛ և աշխատիր: Իրական փորձից մեծ դաս չը կայ և այդ դասը տաս - քսան անգամ աւելի կատարեցին գլխիդ:

— Բժիշկ, բժիշկ, կեղեքում էք սիրտս: Դրանց ճանաչելու համար ապացոյցներ շատ տեսանք մեր աչքերով, բայց ինչ մեղաւոր է այն աղջիկը, որը իւր սիրտը անկեղծ տւած է ինձ և որը այժմ ինձ համար տանջւելու է: Չէ որ նա էլ ինձանից աւելի ատում է դրանց և ճիգւհտ անունից սոսկում է:

— Աւելի լաւ, թո՛ղ նա էլ այստեղ մայրաքաղաքում, բացարձակ ամեն տեղ ողբա վիճակդ և տարբողէ այն ոճրագործութիւնները, որոնք կատարեցին ձեր գլխին:

Դ

Մ Օ Ն Ս Ե Ն Ե Օ Ր Գ Ր Ա Ս Ս

Այս անցքի հետևեալ օրը, սռաւօտ ժամը իննին, Պօլ Աւգերը իւր տեղը նստած կատարում էր գործը: Նա սաստիկ տխուր էր միշտ: Գունապան Թովմասը չէր հեռանում գրասենեակից: Տեսուչը ներս մըտաւ և հարցրեց, թէ ո՞րտեղ է Սողիկեանը:

— Չըգիտեմ, պատասխանեց Աւգերը, այսօր չէ եկել մինչև հիմա:

Մի երկու ծրարները սպասում էին գործակալին: Այս բանը գայրացրեց պարոն տեսչին, որը հրամայեց Թովմասին, գնալ և անմիջապէս կանչել:

— Տանը չըկար, պարոն, ասաց Թովմասը:

— Գուցէ մեր տունն է, ասաց տեսուչը, գնա՛, գտիր, որտեղ որ է, կանչիր:

Թովմասը հեռացաւ: Տեսուչը գայրացած ներս, դուրս ման եկաւ և սրտի նեղութիւնից ստիպւած ինքը նստեց նամակներ և ծրարներ ընդունելու: Գործը սաստկացաւ և փողի ծրարներ պահանջողներ եկան: Հազար ութ հարիւր ոսկի փողի ծրարը պահանջողն էլ սպասում էր: Թովմասը երկու անգամ եկել և առանց պատասխան տալու կրկին գնացել էր փնտռելու Արա-

մին: Ժամը տասն և մէկն էր, դեռ չեկաւ Արամը: Տեսուչը կատաղութիւնից ոտքերը գետին էր խփում և զայրանում էր Պօլի վրա, որը ձայն չէր կարողանում բարձրացնել:

— Պարոն տեսուչ, չըկայ, չըգտայ Արամին, ասաց ներս մտնելով Թովմասը:

— Տանը հարցրի՞ր, ինչ ասացին:

— Նրանք ասացին, որ իրիկունն էլ տուն չէ եկել:

— Իրանց տանը:

— Մայրն ասաց, որ գիշերը քնելու էլ չէ գընացել տուն:

Վերատեսչի մտքում ծնւեց մի կասկած, սկսեց գանազան հարցեր ուղղել, թէ հաշւապահ Աւգերին և թէ Թովմասին:

— Իրիկունը նաւից վերադարձա՞ւ:

— Այո՛, ասաց Թովմասը:

— Այստեղ շատ մնաց:

— Բաւական մնաց, ասաց դռնապանը:

— Այստեղ ո՞վ կար նրա գալուց յետոյ:

— Ես էլ այստեղ էի, ասաց գողալով Աւգերը:

— Ի՞նչ էր շինում:

— Բանալիներն էր պտռում, ասում էր, որ իբր

կորցրել է:

— Գտա՞ւ:

— Ո՛չ, բայց գուցէ վերջը գտաւ:

— Ո՛չ, չըգտաւ, պարոն տեսուչ, ասաց Թով-

մասը:

— Մինչև հիմա ինչի՞ չէիք ասում:

Լուեցին: Տեսուչը մի քիչ ման գալուց յետոյ, նստեց և մի թուղթ գրեց, աւստրիական կօնսիւլին հրաւիրեց գրասենեակը, մի ուրիշ թղթով էլ Ղալաթայի ոստիկանապետին, որոնք շտապեցին գալ պոստտուն: ձիշո կէսօրի ժամանակ ինքն էլ բերեց տանից մեզ յայտնի քսակով բանալիները և ներկայացրեց հրաւիրւածներին:

Կօնսիւլը սկսեց գրել մի ակտ, որտեղ օրաջին անգամ յիշատակեց, թէ երկրորդ բանալիների պարկը գտան օրինաւոր կնիքներով: Յետոյ բացին պարկը, հանեցին բանալիները և բաց արին կասսը, Բոլոր ծրարները և գումարները ճշտութեամբ զննելով՝ արձանագրութիւն կազմեցին և հազար ութ հարիւր ոսկի ծրարի անհետանալը մի առանձին յօդւածով յիշեցին:

Անմիջապէս ոստիկանապետը կանչել տւեց բնիչին, որը անյապաղ սկսեց գործի քննութիւնը, ձերբակալեց Պօլ Աւգերին և Թովմաս աղբօրը: Բոլոր Կ. Պօլսի ոստիկաններին յայտարարութիւններ, շրջաբերականներ ուղարկեցին, որ ուշագրութիւն գալ ձենն, պառեն Արամ Սողիկեանին: Բայց Կ Պօլիս բնակութեան ծով է, անտառ է, որտեղ կարելի է գտնել մի մարդ, մի անձնաւորութիւն, քանի որ անտառի սմեն մի ծակում, ամեն մի ծառի ճեղքերում անթիւ և անհամար ապաստանածներ կան, ո՞վ ում է ճանաչում և ո՞վ գանազանում բարին չարից:

Սարսուռը մտաւ Պօլ Աւգերի անձի մէջ և վախիցը ստիպւած աճապարեց երկու տող նամակով իմացնելու գործի զրութիւնը Կիւրեղ վարդապետին: Վերջինս, իւր սանի այս աղէտոլի վիճակի գժբագն լուրը

ստանալու պէս, վազեց դէպի Մօնսենեօր Գրասսը, ա- սելով:

— Մեր սիրելի զաւակը՝ Պօլ Աւգերը բռնուել է մի զրպարտութեան համար, որ արել է չարագործ Արամ Սողիկեանը: Այդ ոճրագործը աւազակութեամբ վերջ է տւել իւր բոլոր գործունէութեան և դրա պատճառով մեր թշուառ Պօլն էլ ընկել է կասկածանքի տակ ու բռնուել: Զեզ է դիմում՝ իմ միջոցով, գերապայծառ հայր, Պօլը, խնդրում է հաւատարիմ գործակատարդ և ամենահնազանդ որդիդ, որ բարեհաճէք անմիջապէս օգնել նրան իւր դառն վիճակում և շտապէք ձեր բո- լոր միջոցները գործ դնելով, ազատել բանտի ապակա- նութիւնից: Յիշեցնելով ձեզ նրա արած անթիւ ծա- ույութիւնները, խնդրում եմ, որ անմիջապէս աշխա- տէք և այսօր իսկ բաց թողնել տաք, ապա թէ ոչ, սաստիկ թոյլ է բնութիւնով, կարող է վախից մի փոր- ձանք բերել իւր գլխին:

— Այդ ինչ յիմար գործ է պատահել:

Կիւրեղ վարդապետը նկարագրեց անցքը իւր հայեացքներով:

— Բայց մեր Պօլին ինչ կայ այդ դէպքում, ին- չի՞ Պօլին պիտի կալանաւորէին:

— Լոկ կասկածների համար:

— Լա՛ւ, հասկանում եմ: Կանչիր այստեղ քար- տուղարին: Քարտուղարը մտնում է:

— Վերապառուելի Կիւրեղ վարդապետի հետ կը գնաս Պէրայի միւթասարիֆի մօտ, ինձանից կը- խնդրես, որ հրամայէ քննիչին և անմիջապէս արձակել տայ Պօլ Աւգերին: Կիւրեղ վարդապետ, ինչ որ ցան-

կանում ես, յայտնիր իմ կողմից միւթասարիֆին և խնդրիր նրանից, բայց զգուշացիր, որ պ. Գէօթէնգին՝ պոստատան տեսչին վնաս չըպատճառես քո սխալովդ: Ես իմ բարեկամս է և մեր բոլորի սիրելին:

— Գերապայծառ հայր, գիտէք, որ ես նրան շատ եմ յարգում:

— Այդ քո գործն է, միայն նրան վնաս չը- հասնի: Պօլին անմիջապէս հետդ այստեղ կըբերես, ես ձեզ կըսպասեմ:

— Շատ բարի, գերապայծառ հայր:

Միւթասարիֆը քննիչից տեղեկութիւններ ստա- նալուց յետոյ, Մօնսենեօր Գրասսի երաշխաւորութեամբ, Պօլին արձակեց: Աւգերը Կիւրեղ վարդապետի հետ ե- կան մտան Մօնսենեօրի մօտ: Իրիկայ ճրագները վառե- լու ժամանակ էր:

— Այդ ո՛ւմ ծրարն է կորել:

— Հասունեանից էր՝ այստեղ, հոգևոր վարչու- թեան վրա ուղարկւած:

— Այդ ինչ գումար է, չ'իմացա՞ր, Պօլ:

— Զըգիտեմ, միայն ծրարներ էլ կար Լիօնից և Վեննայից:

— Որտեղից էր՝ չընայեցիր:

— Ինչպէս չէ, Լիօնի կաթոլիկ տարած. ընկե- րութիւնից, Վեննայիներ՝ Աւստր. Սրտաքին Գործերի նախարարութիւնից:

— Հասունից թղթեր:

— Այս շաբաթ բոլորովին չըկային:

— Պարիզից նամակներ:

— Երկու նամակ Պարիզի Բարեգործական Ընկե-

բութիւննից, որոնք ուզարկել էին հայ - կաթողիկոսներին աղքատ եկեղեցիներին համար ասար սկիհ, վէմ քար մարմարինոնից (կաթ. սկիհի տակ դրած վէմ քարը մարմարինոնից է՝ մի ֆուտ լայնութեամբ, ֆուտ ու կէս երկայնութեամբ և մի դիւլմ հաստութեամբ), շուրջաններ և վահաններ:

— Լաւ բաներ էին, Աւգեր, տեսնոր:

— Ո՛չ, հասարակ, արծաթ և թանկագին նիւթ չըկար բոլորովին:

— Հաշտեցանք Արամի հետ, միջոց չըգտանք ձեռատետրը ձեռք բերելու:

— Ոչ, էլ բոլորովին դադարեցին մեր յարաբերութիւնները, այն օրուայ սեւազրութիւնը, որ ձեզ բերի, կորցնելուց յետոյ՝ աստիկ զգուշանում է: Չըկարողացայ համոզել, որ դռնապանը գրասեղանը մաքրելիս, կարող էր գցել մի կողմ և անհետացնել այն թուղթը: Երեկ կարծում էի, որ թուրամբաջիի նման (Վ. Պօլսում շօթի-կիլիսո համարած մարդիկ, որ վազում են իւրանց սեպհական ջրհանով հրդեհների առաջն առնելու) կըգայ վրաս ինձ խեղտրտելու, բայց բարեբաղտաբար զոտեց իւր բարկութիւնը: Նա էլ պատրաստած էի, եթէ վրա գար՝ բէվօլվերս գրպանիցս հանելու էի:

— Նրան խո՞ տարու չէիր, նկատեց Մօնսենտօրի քարտուղարը, որը լաւ ծանօթ էր Պօլի վախկառութեան հետ:

— Վերջապէս ազատեցանք այդ աներես անմտի ձեռքից, ասաց Պօլը, թո՛ղ սրանից յետոյ թիւաբանի (տաժանակիր աշխատողների բանտ) դատապարտածներին քարոզէ, թէ ճիզլիաները հարըս-

տահարող, բթացնող և ներքնագործ արիւնարբու տըզուկներ են:

— Այդպիսի չար լեզուները չեն կարող արատ գցել մի այնպիսի հաստատութեան անդամների վրա, որոնց մարդկութեան արած բարերարութիւնները ակնյանդիման երևում են աշխարհի շուրջ: Նախախնամութիւնը զօրաւոր ձեռքով պաշտպանում է իւր սիրելի ծառաներին և պատժում այդպիսի չարալեզու արարածներին: Այս հրաշք է, հրաշք, տեսնում էք, ինչպէս մոլորեց և ցնորեց Սողիկեանը իւր չար ճանապարհի, շուայ ծախսերի համար և գողացու իրան յանձնած քսակը, որի պատճառով մինչև իւր մահը պիտի տանջւի յաւիտենականութեան մէջ:

— Տեսնես փողն ինչ արաւ, ասաց քարտուղարը:

— Ի՞նչ արած պիտի լինի, ասաց Վիւրեզ վարդապետը, նրանց չարախօս լրագրների խմբագիրները մեծ կարօտութեան մէջ էին, նրանց գաղտնի ընկերութեան սնդուկին հասցրած կը լինի: Նամանաւանդ որ այդ փողը գալիս էր մեր քարոզիչներին՝ ցրելու սուրբ և հումէական կրօնի տարածման համար, նրանք վերէժխնդրած ուզում են այդ գումարով մեր դէմ հայհօյել: Գուք ինչ ուզում էք արէք, լիմարներ, բայց Տէրը ճիզլիաների հետ է «մինչև ի կատարած աշխարհի»:

— Եւ չը պիտի թո՛ղ տայ, որ չար սատանաները «փշրեն իրան սիրելի ս. Լօյալօյի աշակերտներին», ասաց Մօնսենտօրը:

— Գերապայծառ հայր, խնդրեմ կարգադրու-

թիւն անէք, ձեր խոստման համաձայն, մի ուրիշ տեղ ինձ համար, ես էլ չեմ կարող մտնել պոստատան գրասենեակը, որտեղ այսօրևայ դժբաղդ դէպքը պատահեց ինձ հետ. սրանից յետոյ մի ուրիշ տեղ կարող եմ գերի դառնալ, իսկ այդ յարկի տակ՝ տէր էլ չեմ ուզում լինել:

— Այդ մասին կը խորհենք, ասաց Մօնսենեօր Գրասը, նշան արաւ և քարտուղարն ու Կիւրեղ վարդապետը հեռացան:

— Պօլ, պատմիր իսկութեամբ, թէ ինչպէս պատահեց այդ դէպքը և խոստովանիր ճշմարտութիւնը:

— Ինչպէս որ ասացի, գերապայծառ հայր, ես բոլորովին տեղեակ չեմ և զարմացել եմ, թէ ինչպէս անհետացաւ այդ գումարը, որ ես չը նկատեցի: Երէկ պոստը տանելիս սաստիկ շփոթեալ էր, կարծում եմ, որ այդ ժամանակ կարողացաւ այնպէս դուրս առնել միւս ծրարների հետ, որ ոչ ոք չը նկատեց:

— Գիտես, Պօլ, ես քեզ հաւատում եմ, բայց գոչնդ և շփոթութիւնդ ցոյց են տալիս, որ դու ստում ես, զգուշացիր և ճշմարտութիւնը խոստովանիր: Կասկածներս շատացան: Այսօր դու բոլորովին փոխել ես:

— Գերապայծառ հայր, միթէ մի օր իմ ձեզ տւած տեղեկութիւնների մէջ նկատել էք սխալ կամ ստութիւն: Ուսումնարանի գրասեղանի վրա, ձեր տեսչութեան օրերից մինչև այսօր հազար անգամ փորձել էք և կրկին ուզում էք փորձել: Միթէ չը գիտէք, թէ որքան վատ ազդեցութիւն ունեցաւ վրաս այս օրևայ ոստիկանութեան և իստինտագլիի (*քանիչ*) ինձ

դէմ բռնած չիմար ընթացքը. աչքիս առաջից չէ հեհեռանում այն պատկերը, երբ ես Ղալաթայի մեծ փողոցի բազմութեան, ծանօթներիս միջից հրացանակիր զաթիաներով (*մարիկաւն*) տարւում էի ոստիկանատուն: Հապա բանտի մուտք տեսքը, կեղտոտութիւնները. երեք-չորս ժամը՝ երեք-չորս ամսի տպաւորութիւն թողեց ինձ վրա և դուք այդ տպաւորութեան տակ ինձ հետ խօսում էք:

— Բայց այդ ահագին ծրարը հեշտութեամբ դուրս չէր կարող գալ, այդ բանը ինձ կասկածեցնում է:

— Ես էլ զարմանում եմ, բայց դռնապան Թովմասի հետ շատ լաւ էր Արամը և գուցէ գիշերը պատահած լինի մի այդպիսի դէպք:

— Թովմաս աղբարը միթէ լաւ էր Արամի հետ:

— Իրար հետ շատ լաւ էին և այսօր բանտում մի ինչ որ բան էր խօսում ինքն իրան, թէ «գիշերն ինչի՞ ես նրանց»... Որքան աշխատեցի, մի որոշ բան չը կարողացայ հասկանալ:

— Ես քեզ հաւատում եմ, իմ հարցերս միայն համոզւելու համար էր. Թովմասի խօսքերը կասկածներս փարատեցին, կը հասկանամ վերջը, թէ գործը ինչումն է: Ես քեզ համար Կիւրեղ վարդապետին նամակ տւի, ուղարկեցի բանկ Օտտօմանի գիրեկտօրի մօտ, որ հաշւապահի տեղ տան. բայց զգուշացիր, չը լինի թէ այդպիսի անախորժ դէպք էլ այդտեղ պատահի:

— Միթէ ես չը գիտեմ ճանաչել շրջապատողներիս հոգին:

— Լաւ ուշադրութիւն կը դարձնես Չամիչ Գրիգոր Էֆէնդիի վրա, նրա խօսակցութիւնները, տեսակցութիւնները մանրամասն կը գրես միշտ յիշատակարանումդ:

— Նրան վաղուց ճանաչում եմ, անթիւների (Հակ-ՀարտուԱնու) գլխաւոր գոռուաչիւներիցն էր:

— Միշտ նրա արարմունքները զգուշութեամբ քննիր և արձանագրիր:

— Շատ բարի:

— Սարեան ժանը այնտեղ գանձապահ է, ճանաչում ես:

— Այո, գիտեմ:

— Նրա հետ աշխատիր աւելի մտերմանալ, երբեմն երբեմն հրաւիրիր տուն և ուրիշ հասարակային զարճութեան տեղեր: Փողգ մի խնայիր, հարբեցրու և սիրտը գրաւիր: Աշխատիր լսել իւր գաղտնիքները, նամանաւանդ Գոչեանց օրիորդի հետ: Գաղտնապահ մտերիմ ձևացիր և ամեն մի ընկերիդ մօտ բարձրացրու նրա յարգանքն ու պատիւը: Մէկ խօսքով՝ այնպէս ձևացրու, որ դու համարես նրա առաջին ընկերը:

— Հասկանում եմ:

— Եւ երբեմն երբեմն ինձ մօտ գիշերները տեսութեան արի, լուսամուտում կարմիր լապտերս վառելիս:

— Շատ բարի:

— Բանկում փող ներս բերողների և տանողների վրա ուշադրութիւն դարձնես և նշանաւոր գործերը հաղորդելու չը մոռանաս:

— Միշտ պատրաստ եմ ձեզ ծառայելու:

— Առաւօտը ուղղակի գնա դիրեկտորի մօտ, ես կարծում եմ, որ ժամանակ է, քեզ համար աթուբացւած պիտի լինի:

— Կըզնամ անպատճառ:

— Այս այցետոմսը վեր առ և դիր թղթապանակդ, որ խօսք սկսելիս դժւարութիւնների չըպատահես:

Պօլը վեր առաւ այցետոմսը և չոքելով համբուրեց Մօնսենեօրի աջն ու դուրս գնաց: Գաւթում նըրան սպասում էր Կիւրեղ վարդապետը, որի հետ գնացին տուն:

— Մօնսենեօրը քեզ չափազանց շատ է սիրում, Պօլ, աշխատիր, աշխատիր միշտ աչք մտնելու, ասաց ճանապարհին Կիւրեղ վարդապետը:

— Ես եղել եմ և պիտի մնամ միշտ նրա ամենահաւատարիմ աշակերտը և ոչ ոք կարող չէ բաժանել մեր սրտերը:

— Նիգլիտների ուսումնարանը տես սրբան մեծ նշանակութիւն ունեցաւ քո կեանքում, Պօլ, եթէ իմ խորհրդիս հակառակ մտնէիր Ադրի-Քէօի (Քաղքեղօսի) Փրերների (Եղբայրներ) ուսումնարանը, այսօր Մօնսենեօրի նման մի պաշտպան չէիր ունենալ, որ ամեն ըպէ պատրաստ է քեզ համար գտնելու ամենաբարձր պաշտօնով տեղեր:

— Այո, ես խոստովանում եմ այդ բոլորը, բայց ես էլ նրա ամենասիրելի աշակերտն եմ և նրա գործերը կարգի բերելուն նւազ չեմ օգնում:

Ե

ԶԵՅԹՈՒՆՅԻ ՈՍԿԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Բժիշկ Փափագեանը, ոստիկանութեան քննութեան երրորդ օրը, առաւօտեան մտաւ Պէրալի թաղական խորհուրդը, Ս. Երրորդութեան եկեղեցու և խնդրեց, որ մի վկայական տան իւր ծառայ՝ գէլթունցի Ոսկանին հայրենիք վերադառնալու համար: Թաղական խորհուրդը բժիշկ Էֆէնդիի խօսքը անմիջապէս կատարելու փափագն ունեցաւ և վկայականը յանձնելով, ազգային եկեղեցու սնդուկի համար մէկ քառորդ ճերմակ մէջիգիէ ստացաւ, որը սովորաբար մոռացաւ մուտքի տոմարում արձանագրելու: Այդ վկայականը թղթակալը դնելով՝ գնաց Սիրքէջի իսկէլէն, որտեղից շոգենաւով դիմեց դէպի Ս. Փրկչի հիւանդանոցը: Այս պարտականութիւնը Փափագեան բժիշկը շաբաթը երկու անգամ ազգասիրաբար առանց վարձքի կատարում էր, այցելելով թշուա հիւանդներին՝ իւր հմտութեամբ ցաւերը դարմանելու: Այդ օրը ուրիշ ստիպողական գործ ունենալով, մի ժամից աւել չըմնաց հիւանդանոցում, դուրս եկաւ և, առանց շոգեկառքի գնացքին սպասելու, ս՛իւրիւրիւրից (ձիու ետևից վագոդ) ձի վարձեց և ուղղեցաւ դէպի Ղում Ղափուի

պատրիարքարանը: Ս. Երրորդութեան եկեղեցու թաղականներից ստացած վկայագիրը վաւերացնել տւեց պատրիարքարանի կնիքով և մեկնեցաւ դէպի Կ. Պոլսի ոստիկանատունը:

Մի ընդարձակ սրահում ոստիկանապետի երկրորդական օգնականները և քարտուղարները խօսակցութեամբ էին զբաղւած: Բժիշկ Փափագեանի մուտքը առ ժամանակ ընդհատեց նրանց խօսակցութիւնը, որոնք յարգանքով ընդունեցին բժշկին:

— Ներեցէք, ասաց բժիշկը խոնարհ և հանդարտ դարձածներով, որտեղից են տրւում ճանապարհորդների անցագրերը, մեր ծառային տուն եմ ճանապարհ գցելու, նրա հաւատարմութիւնից սաստիկ գոհ լինելուս պատճառով՝ պարտաւորեալ այս ծառայութիւնը կատարում եմ նրա համար:

— Այս բոլորիս, ասելով քարտուղարներից մինը նստեց գրասեղանի մօտ և սկսեց գրել ուղած անցագիրը: Բժիշկը պատրիարքարանի վկայագիրը յանձնեց քարտուղարին:

— Է՛յ, յետոյ ինչպէս եղաւ, ասաց խօսողներից մինը պատմողին, ընդհատւած խօսակցութիւնը շարունակելով:

— Մեր լրտեսը, պառկած տեղից, զանազան արբեցողի ձևեր է անում, ձեռքերը պատին է զարկում, մըթմըթում է, ֆշում է, հայհոյում է, այնպէս որ նրանք բոլորովին կարծում են, թէ պարկոզը սաստիկ արբած է և ուշադրութիւն չեն դարձնում:

— Ղոչաղ Ռոստոմ, ես գիտեմ, որ խաբւած չեմ: Այդ մարդն, որ ինձանից պաշտօն խնդրեց, ես

նրա ձևերից հասկացայ, որ դարտակ գլուխ չէ և այս երկրորդ գործն է, ուր նա ցոյց է տալիս իւր հմտութիւնները:

— Ռոստոմը լսում է նրանց խօսակցութիւնները, բայց դժբաղդաբար երբեմն երբեմն խօսում են իրան անհասկանալի յունարէն աղաւաղած բարբառով: Բայց հասկանում է, որ դրանք մի բան ունին բաժանելու: Շարունակում է իւր սուտ ձևերը: Չարագործները մի մի բաժակ գինի խմելուց յետոյ, իրանց սենեակի դուռը փակում են և Ռոստոմը պարտաւորեալ տախտակամածի ճեղքերից զգուշութեամբ դիտում և լսում է նրանց:

— «Շուտ արն, շնուտ, ասում են երկու աւագակները, բէր բաժանենք»: Երրորդը քանդում է իւր մէջքից մի սպիտակ երկար տոպրակ և դնում սեղանի վրա: — «Այս ինչի ես քանդել, ասում են աւագակները, քեզ ո՞վ ասաց բանաս կապոցը»: Նրանցից մինը վեր է առնում քսակն ասելով, — «Ծակաչք շնուտ, ինչի ես կիսել այս կապոցը, խօս չես ուզում, որ քեզ խեղդենք»: Միւսը չի թողնում, որ վէճ սկսեն: Գումարը բաժակով բաժանում են և ամեն մէկին երկու հարիւր յիսուն ռսկի է հասնում: «Անիրաւ, անխիղճ, ասում են, երեք մասից մէկն էլ չես թողել, էլ քեզ հետ դադարեցնում ենք ընկերութիւնը»: — «Շատ հարկաւոր է, պատասխանում է երրորդը, զո՞հ էլ չէք, որ ինչպէս ստացայ, այնպէս էլ ետ դարձրի: Եւ այնքան կասկածոտ էք, որ կարծում էք, թէ ես կիսած կ'լինիմ գումարը: Բայց ինձ տեղն է, ինչի՞ չը պարտկէի բոլորովին, որ դուք այս պահին փորեղդ տրորէիք. ես ըն-

կերաբար բերել բաժանում եմ ու դուք նազ էլ էք անում: Չէք ուզում, ետ տէք, ինձ հարկաւոր է: Գրնացէք, ձեր հէրն էլ անիծած, ես էլ չեմ ցանկանում ձեզ նման դժգոհ ընկերներ ունենալ»: — «Քո հէրդ անիծւի, շան սրգի», պատասխանում է միւսը, և կըռուփով տալիս է փողի կապոցը ներկայացնողի գլխին: Աղմուկ է բարձրանում և մեր Ռոստոմը բարձր հընչեցնում է իւր սուլիչը: Ոստիկանները թափուում են և ձերբակալում:

— Ի՞նչ փող էր, չիմացեցաւ, հարցրեց անցագիր տւող քարտուղարը:

— Յայտնի չէ, այս օրերս փող կորած չէ, Աւստրիացւոց պոստի փողն է կարծւում, բայց նրա գումարը մեծ էր:

Բժիշկը ուշադրութեամբ լսում է պատմութիւնը:

— Ո՞րտեղ են այժմ չարագործները, հարցրեց մի ուրիշը:

— Ղալաթասարայի բանտում:

— Իրանք ի՞նչ են ասում:

— Ասում են, որ այդ փողերը իրանք ստացել են երեք օր առաջ ծախած ցորենի համար Գեաղիւկների կանտորից և նրանց անունները արձանագրւած են նոյն կանտորում: Ուրանում են իրանց գինետան խօսակցութիւնը և ասում են, որ վիճել են միայն մանր հաշիւների համար:

— Եթէ Գեաղիւկների կանտորում արձանագրւած են, գործը կարող է և ուրիշ կերպարանք ստանալ: Բայց, ասացէք խնդրեմ, պոստի գործակալը գըտ-  
Ա Լ Մ Ա Ս Տ

նւեց, հարցրեց անցագիրը գրող քարտուղարը:

— Ո՛չ, չը կայ. ո՞վ է իմանում, այժմ նա ո՞ր նաւով Եւրոպա կամ Ամերիկա է փախչում:

— Հետեւելու է. մենք կանոնաւոր պոլիս երբ պիտի ունենանք: Ո՞վ է ուշագրութիւն դարձնում կանոնաւոր կերպով մուտք ու ելքին:

— Այս ասելով քարտուղարը խնդրեց օգնականներէն մէկին, որ իւր կնքով վաւերացնէ անցագիրը: Վերջինս անմիջապէս կատարեց և անցագիրը յանձնեցին բժշկին: Անցագրի ծախսի և աշխատութեան համար բժիշկը մի արծաթ մէջիդէ՞րբեց գրասեղանի վրա և գետին խոնարհեցնելով ձեռքը՝ թէմէ՛նաններով հրաժեշտ տւեց ոստիկաններին: Փողոց դուրս գալով, հազիւ կարողացաւ բժիշկը ազատ շնչել և մի կողք վարձելով, շտապեց տուն ճաշելու:

Բժշկի տանը թէև չէր համարձակուիլ ոստիկանութիւնը իւր խուզարկութիւնները կատարելու, բայց աւելի ապահովութեան համար Փափագեանը Արամին ուղարկել էլ Բէշիթթաշ թաղը՝ իւր քրոջ տունը, որ տեղ ամբողջ այդ երեք օրը բանտարկւած էր վերնալարկում՝ կղմինտրի ծածկոյթի տակ գտնւած փոկրիկ սենեակում: Առաւօտից մինչև իրիկուն կարգում էր Լօյօլայի աշակերտների Եւրոպայի միապետների կեանքի դէմ գործած յանցանքների մասին զանազան պատմութիւններ ֆրանսիական և անգլիական լեզուներով գրւած և ուսումնասիրում այն մեքենայութիւնները, որոնք լարւել էին ճիզլիտների նախապատրաստւած հնարքներով ու միջոցներով:

Այդ բոլորը համեմատում էր ներկայ Կ. Պոլսի ճիզլիտ-

ների քաջագործութիւնների հետ և տեսնում, որ նրանք, միշտ հաւատարիմ իրանց սկզբունքներին, ամեն գործից առաջ միամիտ սրտերի հոգեկան ջղերը ամփոփել են իրանց ափում և սանձի նման այս ու այն կողմը քաշքշելով, վարել այդ անձնաւորութիւններին ճիզլիտականութեան նպատակների տարածման ուղղութիւնով: Նրանց ամենից մեծ ուժը եղել են միշտկանայք, որոնց միջոցով տնական ամենագաղտնի անցքերի քօղերը բարձրացրել են և թափանցելով սրտի և հոգւ ներքին խորշերը՝ քննել են մարդու պաշտելի ձգտումներն ու նպատակները: Ակամայ լիշում էր այն բոլոր դէպքերը, որ իւր թշուա մօրը՝ Կատարինէին անդադար տանջել էին և ուղարկել իւր մօտ զանազան տեղիութիւններ ստանալու՝ իրանց հաղորդելու համար: Ո՛րքան անգամ նա միամտաբար սխալւել էր և այդ սխալներից որքան վնասների պատահել:

Սկզբում Արամը քիչ էր մնացել, որ մօր թախանձանքներին զիջանելով՝ մտնէր ճիզլիտների վանքը և սրբեղական ու կրօնաւորական սև շորերի տակ դառնար գործիք և գործակից ընկերականութեան արիւնը ծծող նենգաւոր չարագործներին: Բայց բարեբաղտաբար հօր ընկերակից բժիշկը արդելք էր եղել նրա այս մտադրութեանը և ճիզլիտների կոլէժից հանելով, գցել Նուբար—Շահնազարեան ուսումնարանը, որտեղ իւր կուրացած աչքերը բացւելով, տեսել էր այս կեղծաւորների դիմակների տակն ունեցած իսկական պատկերները:

Արամը թէև շատ կարգացել, շատ բան լսել և շատ բան իմացել էր նրանց գործունէութիւններից, բայց

Կատարինէի կուրաբար նրանց շաւիղով շարժւելը, իւր գլխին խաղացած խաղերը կենդանի և զգալի ապացոյցներով ներշնչել էին Արամի սրտում անհաշտատելութիւն զէպի ճիզւիտները, որոնց դէմ սկսել էր յայտնի կերպով քարոզութիւններ իւր ամեն քայլափոխում: Արամը երգւել էր, աշխատել մինչև իւր վերջին շունչը, թափելով բոլոր ճիգն ու զօրութիւնը և երակում գտնւած մինչև յետին կաթիլ արիւնի սպառելը՝ սլատե լազմել այդ հարստահարողների հետ և, ճիզւիտութեան զարգարուն վարագոյլը սատուելով, ցոյց տալ իւր եղբայրներին այդ արիւնարբուների խսկական նպատակները, որոնք անխնայ ստրկացնում էին ձեռքեր անցած թշուառ մարդկանց:

Ամբողջ տարիներով խորհել էր այս առարկայի վրա և սոյն վերջին օրերն էլ ճիզւիտների արարմունքները քննադատելով միմնացրել էր: Մահճակալի վրա պառկած, լամպը կողքին սեղանի վրա և միսթարիչ գերքը բացած մօտը դրած, կարգացածների վրա էր մտածում: Կուռը բախեցին և առանց սպասախանի ներս մտաւ բժիշկը: Առաջնորդողը ետ կռնկի հեռացաւ: Արամը տեղից վեր կացաւ վայրկենական արագութեամբ և զիմաւորեց խնամակալին:

— Բարի իրիկուն, Արամ, ինչպէս ես, լաւ ես:

— Ոչինչ, լաւ, քան թէ երէկ:

— Յուսով եմ, առաւօտը քեզ աւելի լաւ կը զգաս և բոլորովին կը փոխուիս: Ահա անցագիրդ և նաւի տոմսը, էգուց ճաշին Տրապիզոն գնացող ֆրանսիական նաւով կուղևորուիս և այս Բաբէլօնից կազատուիս: Գնա՛, որդիս, գնա՛, այստեղ միայն ապականութեան

տեղ է և աշխատիր, որ մեր հայրենակիցներին էլ համոզես, որ չենթարկւին այս ապականութեան:

— Առաւօտ և ո՛ւմ հետ մեկնելու եմ:

— Ես կըգամ և կըտանիմ: Միայն թէ դու պատրասուիր, կապոցներդ կապիր, ինչ որ կարիք ունիս, ասա՛, որ բերեմ և պատրաստեմ: — Այդ շորերը դիր կապոցիդ մէջ, ես մի քիչ հին և կեղտոտւած խոհարարի շորեր կըբերեմ, ճանապարհին նաւի մէջ խոհարար ձեռացիր, մինչև Տրապիզոն, այնտեղից էլ հարցնող չի լինիլ քեզ, թէ ո՞վ ես և ուր ես գնալու: Այս իրիկուն կը պատրաստեմ նամակներ և այդ գրքերը կըհասցնես ամեն հասածդ քաղաքը ծանօթներիս և բարեկամներիս, որոնք հակաւոր բոլոր պէտքերդ կը հոգան և չեն թոյլ տալ քեզ նեղւելու:

Արամը արձանի նման մտազբաղ, աչքերը յառած լուսամուտի կամ դռան վրա՝ լուռ լուռ էր:

— Ճանապարհի ծրագիրը չը կազմենք, Արամ:

— Այստեղ կազմածը կարելի է իրականի հետ չը յարմարի և հանգամանքները ստիպեն փոխելու:

— Այդ այդպէս է, բայց անհրաժեշտ է Խարբերգի և Տիգրանակերտի կողմերը գնալ, որտեղի ժողովուրդը, ինչպէս լուռ ենք, հակաւ է կրօնափոխութեան և ճիզւիտները մեծ գործեր են կատարում այդ կողմերը:

— Բիթլիզից և Մշու գաշտից էլ վատ լուրեր են գալիս:

— Ես այդ երկիրներում չեմ եղել, ինչպէս և դու, բայց ինչպէս լսել եմ, Մշու, Տուրուբերանի կողմերի ժողովուրդը աւելի հաստատ են իրենց սպասական սովորութիւնների վրա, քան թէ Պորրդ-Հալքի և

Աղձնիքի ժողովուրդը: Մշեցին կող է, յամառ է:

— Կրանք դատարկ խօսքեր են, ամեն կողմից և ամեն ծայրից թղթակցութիւններ և տեղեկութիւններ կան, հարկաւոր է երկիր ելթալ և ապա դատել:

— Բայց խօսքս լսիր և Տրապիզոնից ուղղակի մի գնալ Արզրուժ, առաջ Երզնկայ, Քղի, Բալու, Խարբերդ, Ակն, Արարկիր և Ամիդ մասն արի, յետոյ մտիր Վան, Մուշ և ապա Արզրուժ:

— Պէտք չէ խորհել և այժմից վճիռներ տալ, գնա՛, որտեղ որ Հայ կայ և քարոզէ, որտեղ որ պէտք կայ: Եթէ մենք ունենայինք այնպիսի տեղեկագիրներ, որոնք մանրամասն ցոյց տալին մեզ ճանապարհներն ու անցքերը, քաղաքներն ու գիւղերը և ժողովրդագրութիւններ ամեն մի գաւառի և նահանգի մասին՝ այժմից հարկաւոր կը լինէր ծրագիր, բայց քանի որ չունիք և չենք էլ իմանում որ կողմը ճանապարհ և ընկեր պիտի գտնեմ առաջ գնալու, այժմից կաշկանդւել չեմ ուզում: Ես մասամբ համաձայնեմ ձեր կարծիքին, նախ Խարբերդի կողմերը գնալու. բայց ո՞վ է իմանում, գուցէ չը յաջողւեց:

— Այդ քս գիտենալու բանն է, բայց ուր որ լինիս, ինչ գործ որ բռնես և ինչ որ պատահի, ամեն շաբաթ պիտի ինձ գրով հաղորդես, որ ես միամտիմ:

— Ինչ հեշտ է Թիւրքիայում թղթակցութիւնը, պոստ յորտեղից է ամեն քաղաքում, որ ես նամակ ուղարկեմ:

— Ինչ որ ուզում ես, արա՛, միայն հասցրու, որ ես կարիքներդ անպակաս հոգսմ և կարևոր գէպքերում օգնեմ: — Ես քեզ նամակ չեմ ուղարկիլ, քս նա-

մակներդ իմ թղթակից բարեկամներիս վրա կ'ուղարկեմ, որոնք քեզ կըհասցնեն: Այսօրւանից դու կոչուում ես Ոսկան Նազարեան Զէյթունցի: Նամակներդ էլ այդ անունով կըստանաս:

— Բարի:

— Կ. Պօլսում որտեղ լինելդ և ինչ գործով պարապածդ միայն ես պիտի գիտնամ: Մօրիցդ էլ կասկածում եմ, գուցէ խղճահարւի, խոստովանի Կիւրեղ վարդապետին տեղդ և կրկին վտանգի մէջ գցի քեզ:

— Շատ բարի, բայց Կոստանցան չըպիտի գիտենայ...

— Կոստանցան քեզ շուտով կըմոռանայ, դու այժմից նորան մոռացիր:

— Ներողութիւն, Կոստանցայի սիրտը չէք ճանաչում, նա մինչև մահ ինձ մոռանալու չէ:

— Աչքից որ հեռանաս, սրտիցն էլ կ'անհետանաս, միթէ այդ չըգիտես:

— Աովորական մահկանացուների համար է սասճ այդ առակը, իսկ Կոստանցայի նման մի օրիորդ գերեզմանի գոան էլ չի ուրանալ իւր խօսնայրին:

— Այդ գաղափարական սիրոյ տիպարը Կ. Պօլսում մի պտուի:

— Այս հարցը թողնենք, բժիշկ, դուք չէք ձանձրնալու ձեր կարծիքը պաշտպանելուց, իսկ ես այլ կերպ եմ համոզւած. ժամանակը կարգարացնէ: Բայց, խնդրում եմ ձեզ, այնքան բարի լինիք, որ երբեմն երբեմն զրաճս նամակները յանձնէք Կոստանցային և պատասխանները ինձ հասցնէք: Ես ձեզ խօսք եմ տալիս,

որ ոչ ոք և ոչ իսկ Կոստանցան իմ տեղս իմանալու չէ, բայց Կոստանցայից իմ կեանքս ու մահս թագցնելու անկարող եմ:

— Ոչինչ, այդ նեղութիւնը յանձն կառնեմ, միայն այն պայմանով, որ Կոստանցան ինձ հետ յարաբերութիւն չունենայ, իմ ուղարկած մարդից ստանայ քո նամակը և առանց կասկածի նրան յանձնէ պատասխանը: Իմ միջոցով նամակ ստանալը, քեզ պատասխանելը չը պիտի գիտենայ:

— Համաձայն եմ:

— Ուրիշ թէ բան ունիս, լաւ մտածիր, առաւօտը վաղ տոմսակով գրիր ինձ և պատրաստ կ'աց ճաշից յետոյ նաև գնալու: Գիշեր բարի:

— Զեզ լոյս բարի:

Արամը կրկին մենակ մնաց: Նա վշտացած էր և իւր սէրը անարգւած: Կոստանցայի վրա բժիշկը չունէր այն գաղափարը, ինչ գաղափար որ կազմուած էր երեղասարգ Արամի գլխումը: Խնամակալը իւր սանի աչքով չէր նայում նրա տիրուհու վրա և այդ բանը ցաւ էր պատճառում սիրահարին: Անզուսպ սիրով տոգորւած ու կուրացած, Արամը ցանկանում էր, որ ամենքը իւր կազմած շրջանակում տեսնեն իւր սիրուհուն: Բժիշկի հակակրօնութիւնը չափազանց էր. Կոստանցան հաստատ կերպով սիրում էր Արամին և երեխայական կամ երեւակայական աշխարհի ծնունդ չէր այդ զգացմունք:

Արամը կարծում էր, որ բժշկի անիրաւացի նկատողութիւնները հասած կը լինէին Կոստանցայի սրտին: Նորան տեսնելու, մխիթարելու, յուսադրելու և հրա-

ժեշտ տալու համար, գլուխը վտանգի դնելով՝ դուրս եկաւ տանից, առանց վրան-գլուխը փոխելու, ուղղեցաւ պոստի տեսչի տան կողմը:



Հ Ր Ա Ժ Ե Շ Տ

Կէս գիշեր էր: Լուսինը լրման երեսով բարձրացել էր մութ-կապուտ երկնքի գմբեթաձև զագաթնակողմը և արծաթափայլ լոյսը սփռել դէպի աշխարհ: Օդը պարզ էր, ամպի նշույլ չը կար. զեփիւռը մեղմ, շքեղ կոց չունէր. ծովի երեսը հայելիի նման հանդարտ էր և մեղմ, ալիքները առանց խշշոցի ափին էին տալիս. լուսնի լոյսը պսպղացնում էր ջրի երեսը. նաւերը, առագաստանաւերը և նաւակները խարիսխների վրա լեւեւ՝ մեղմ ճոճւում էին. փողոցների անց ու դարձը և բազմաթիւ կառքերի դղրդոցը զադարել էր. մարդիկ անուշ քնով հանգիստ էին վայելում և աղմկալի քաղաքը խաղաղութեան մէջ էր:

Աւստրիական պոստատան տեսչի տանը ամենքը քնած էին, միայն ծովի կողմը նայող շանիշիրի (փոքրիկ ծածկւած պատշգամբ) վարագոյրի մի պոչը բարձրացրած էր և բաց լուսամուտից մի կանացի գլուխ էր երևում, որը երբեմն երկինքն էր դիտում, երբեմն ծովը

և ամեն անգամ քայլերի ձայն լսելիս՝ գլուխը վար կախում ու չորս կողմը մտիկ տալիս: Նորի՛ աչքերից վազած արտասուքի կաթիլները թափուում էին ծովափի ապառաժ սալալատակի քարերի վրա, սրտի խորքերից դուրս թուած հառաչանքները դէպի երկինք՝ Ամենագէտին բողոքի էին բարձրանում և մեղմ ու քաղցր ձայնով երգած ողբերը քամու թևերով դէպի արևմուտք թռչում էին, սրտի թախիժը թափելու չարանենգների թև ու թիկունքների գլխին:

Կոստանցան իւր չար բաղան էր լալիս: Երեք ամբողջ օր և երրորդ գիշերն էր, որ չէր տեսել իւր Արամին: Որքան աննխանձեյի էր Արամի գրուժիւնը, այնքան վշտալի՝ Կոստանցայի սիրտը: Նորա մտքի տեսարաններում կանգնած էր միայն Արամը և մթնտած աչքերին միշտ երևում էին Սպիկեանի դէմքն ու շարժւածքը: Խորհում էր, մտածում էր միայն իւր սիրահարի վրա և երևակայութիւնը զբաղւած էր միայն իւր պաշտելու ներկայ և ապագայ քաշելիք նեղութիւններով: Այս դառն մտածութիւնները ժամերով նորան նւաղեցնում էին, թմբած գրութիւնով, անշարժ նստած կամ կանգնած տեղը մնում էր, մինչև ուշքի գալը: Աչքի առաջ մարդիկ մժեղներից մանրացել էին և դէպի նրանց ատելութիւն ու արհամարանք էր զգում: Կարծում էր, որ բոլոր մարդիկ նախանձորդ և չարամիտ են:

Կոստանցան իրան գանազան հարցեր էր տալիս և խորասուզուում անվերջ մտածմունքների մէջ: — Արդե՞օք փախաւ և հօրս ահիցը չը կարողացաւ մեր շեմքի տակով անցնիլ, մի մնաս բարով ասելու, թէ արդէն բռնեցին և այժմ կալանաւորների մօտ տանջւում է ինձ

համար: Զը լինի՞ թէ թագնւած տուներ շրջապատեցին և նա յուսահատ՝ չյանձնելու համար, լուսամուտից կամ բարձր պատից դեցեց իրան վար՝ փախչելու յոյսով և փշրւեց ընկած տեղը. կամ թէ նաւում ճանաչեցին նըրան և ուզեցին ձերբակալել, ամօթից թուու կատաղի ծովի ալիքների մէջ, խորասուզւեց անյատակ ծովի խորքերը և կերակուր դարձաւ եօնուզներին (Սև ծովում խոշոր ձրկներ):

Աչքերը ալիքների, կամ հորիզոնի հեռաւոր կէտերի վրա անմխիթար լառած, միայն լաց էր լինում և տխրաձայն մեղեգիներով ողբում էր իւր դառն վիճակ: Վշտերը երգերի միջոցով արտայայտելով ծփացող ծովի ալիքներին, զովացնում էր մոտամբ իւր այրւած ու տապալկւած սիրտը: Եւ այդ տխրալի օրերի ամեն մի ժամը, կարծես, ամիսներ դարձան, տարիներ կազմեցին ու անհետացան, թուշմեցնելով Կոստանցայի այտերնու ճակատը և հանգցնելով աչքերի շողշողուն փայլը: Եւ այդ նւազած աչքերը անքուն ու անհանգիստ ամեն րոպէ դէս ու դէն պտուում էին Արամի հետքը:

Յանկարձ գիշերւայ տարաժամ ժամին Կոստանցայի ծանրացած՝ ականջները լսեցին ծովափում ոտքերի ձայն: Կոստանցան գլուխը լուսամուտից դուրս մեկնեց և տեսաւ մօտեցողի գաղտագողի քայլերը, որոնց շատ վարժ լինելով՝ ճանաչեց և ուրախութիւնիցը ուշաբերւեց: Բուռն սէրը երկար չը դիմացաւ այդ անկենդանութեան, Կոստանցան բոլոր ուժով սանձեց իւր ջղերը և դողդոջուն քայլերով իջաւ պարտէզ, որտեղ իրանց սովրական անկիւնում սպասում էր Արամը: Հագիւ ընկաւ Կոստանցան Արամի գիրկը ուժասպառ՝

կրկին նւաղեց և այս անգամ հեշտութիւնով չը սթափ-  
ւեց: Արամն էլ նոյնպէս անզգայացել էր: Սառը զե-  
փիւռը մեղմութեամբ նրանց բորբոքումները հովացրել  
էր և ծովի խոնաւ օդը զովացրել, երբ նրանք ուշ-  
քի եկան:

Իրար թեւերի մէջ, իրար աչքի առաջ այս իրա-  
կանութիւնը նրանց երազ էր թւում: Անցան, սլացան  
վայրկենական արագութեամբ քաղցր ժամերը, հասաւ  
սիրաբանութիւնների և տխուր արկածների նկարագրու-  
թիւնների վերջ տալու ընդմէջ, եկաւ մօտեցաւ բաժան-  
ման կէտը:

— Կոստանցան, ասաց Արամը, Կոստանցան, իմ առա-  
ջին և միակ սէրս, մնաս բարով, մինչև գերեզմանիս  
դուռը այս սիրտը բաբախելու է միայն քո սիրովդ: Էլ  
սպասելու ժամանակ չըմնաց, այս ընդմէջ աքաղաղները  
կրսկսեն խօսել և անհանգստացնել մեզ: Մնաս բարով:

— Արամ, Արամ, այլ ևս ապրելու չեմ, քո ան-  
ջատումից լետոյ մեռնելու է սիրտս մինչև տխուր  
դագաղում հանգստանալս: Գնա՛, և ամեն իրիկուն լուս-  
նի և աստղերի միջնորդութեամբ լիշիւր ինձ և նա-  
լիւր ինձ վերայ: Չըմտանաս գրելու, գրիւր, անընդհատ  
այդ բանը միայն ինձ պիտի միտիմարէ և կեանքիս եր-  
ջանիկ օրերի լիշատակը դրանց մէջ արձանագրած պի-  
տի տեսնեմ միշտ: Գնա՛, ես հանգիստ սրտով և համ-  
բերութեամբ տանելու եմ առանձնութեանս վշտե-  
տերը, սրի գլխաւոր պատճառը ես եմ և ինձ  
համար դու թափառելու ես հայրենիքիդ շուրջը՝ կա-  
րօտս քաշելով և կարօտովդ ինձ անմիտիմար թողնելով:  
Գնա՛, քարոզիւր այն գաղափարներդ ու մտքերդ, որոնց

համար երկուսս էլ զոհ ենք: Ես սիրով տանելու եմ  
խաչս, անդադար օրհնելով քո ծնունդը:

— Մնաս բարով, արիացիւր և քաջալերիւր, գու-  
ցէ աշխարհի դրութիւնը այս վիճակին չմնալով, մենք  
էլ հալածողներիցս ազատուած՝ կրկին իրար դրկում գտ-  
նենք մեր միտիմարութիւնը: Յոյս ունեցիւր և երբէք  
մի ընկճելիւր: Կոստանցան, մնաս բարով...

Համբուրւեցին և յորդ արտասուները խեղդե-  
ցին նրանց ձայնը, ոչ խօսել էին կարողանում, ոչ էլ  
բաժանել: Սրտերը իրար հաղորդում էին լեզուի պա-  
կասորդը: Գուցէ էլ շատ մնային, սէրը յագենալ չունի,  
բայց աքաղաղների խօսելը նրանց ստիպեց բաժան-  
ւելու: Հրաժեշտի համբուրներով գրոշմւեցին և բա-  
ժանւեցին:

Կէս օրն անցել էր: Իժիշկը, ծառայի ձեռքը  
տուած ճանապարհորդական կապոցները, եկաւ մտաւ  
Ղալաթիայի մաքսատունը: Մաքսաւորները մի հարե-  
անցի ակնարկով քննեցին ճանապարհորդի պայուսակ-  
ները և ճանապարհ գցեցին բժիշկի ծառային դէպի  
շոգենաւ: Ծովի վրա մի ուրիշ նաւակ մօտեցաւ բժիշկի  
նաւակին և Ոսկանը իւր տեղը փոխեց ծառայի հետ: Մեր  
ճանապարհորդը մըտաւ նաւ բժշկի հետ և փոքրիկ կա-  
պոցները զգուշութեամբ տեղաւորելուց լետոյ, իրար մօտ  
նստեցին վերջին ժամը միասին անց կացնելու:  
Հայրախնամ խնամակալը դառն կերպով վշտանում  
էր այս բաժանմունքից, բայց սանին քաջալերելու համար

ծիծաղն երեսին՝ խօսում, զւարճացնում, ամրապնդում էր Ոսկանի սիրտը:

— Ոսկան, ասում էր բժիշկը, մատով ասիական փեղերի կողմը ցույց տալով, այնտեղ նոր նոր անկեղծ բարեկամներ պիտի գտնես, որոնք իրանց անարատ սիրովը պիտի մոռացնել տան քո հին բարեկամները և քեզ չը պիտի թողնեն լիշերու Կ. Պոլսի կեղծաւոր դէմքերը: Հայրենի երկրի հողը, ջուրը, օդը մոռացնել պիտի տան քեզ Բօսֆօրի տպականած մթնոլորտը: Գնա՛, նահապետական ժողովրդի վշտալի սրտերին միխթարիչ եղիւր և այն սրտերում կըգտնես անբիծ ոգիներ, որոնք տրոփելու են յաւիտեան քեզ համար, անսպառ համակրական սիրով և բարի զգացմունքներով: Այնտեղ դու պիտի ցանես բարու թեան, առաքինութեան, բարոյականութեան և ընկերասիրութեան սերմերը և չը պիտի թողնես աճելու նենգաւոր ճիգւիտների ցանած որոմը: Որտեղ որ գնաս, որ կողմն որ ժուռգաս՝ քեզ պիտի դիմեն անմեղ արարածներ և սրտաբուլիս քարոզութիւններով պիտի ամրապնդւին իրանց հայրենի աւանդութիւնների և գանձերի հետ, որոնք ցանկանում են կորզել ժողովրդի սրտից չարագործները: Գնա՛, ազատ խօսի՛ր ամեն կողմ և այդ խօսքերիդ արդիւնքներից զգաստացած սուրբ սրտերը՝ մէկ երկու դար աւանդաբար պիտի խօսեն իրանց սերունդներին քո թողած քաղցր լիշատակները:

Ոսկանը անմռունչ լսում էր խնամակալին:

— Բայց զգուշացիր, Ոսկան, անխոյաններդ զօրեղ են, միայն մարտնչիւր, ճիգւիտների մեքենայութիւնների դէմ և կեանքդ մի հաւատալ ամեն արարածի:

Ոսկին թմրած ժողովուրդի աչքում ամենակարողի դերն է կատարում և այդ մետաղով կարող են մեծամեծ վտանգներ սպառնալ քեզ: Ուր որ գնաս, որ կողմն որ լինիս, աշխատիր կարիքներդ անձամբ կատարելու: Մի վստահիր ո՛չ աղաներին, ո՛չ էլ չարչի-առուտուրականներին. մեր քաղաքացի այդ տգրուկները իրանց մի քանի ոսկիներովը կպել են դարաքաշ խեղճ հողագործի կրճքին և քամելու չափ ծծում թշւառի արիւնը: Հեռու կանց գրանցից, որքան որ կարող ես և յարգիր այն ազնիւ արհեստաւորներին, որոնք ժրաջանութեամբ ձեռք են բերում իրանց օրապահիկը:

Նաւի սուլիչը հնչեց երկրորդ անգամ և այդ աղէտալի ձայնը դառն լիշատակներով խռովեց Ոսկանի սիրտը:

— Գնաս բարով, որդի՛ս, Աստուած յաջողէ քեզ հասնել բաղձալի նսրատակներիդ և մենք իմանանք, որ չորանում են հայրենի հողում ճիգւիտների ցանած չար սերմերը ու հրճւինք:

Համբույրները փոխանակւեցան և խնամակալը բաժանւելով իջաւ, մտաւ իրան սպասող նաւակը:

Նաւի խարխիսը քաշեցին, ծխանից մթնեցուցիչ ծուխ բարձրացաւ, շոգին ցրւեց օդի մէջ, մեքենաները շարժեցին շոգենաւի կողքի անիւնները և ծովի վրայի այդ ահագին շարժական տունը սկսեց գէպի հիւսիս շարժւել: Նաւի գլխի կողմը՝ քթի վրա կլոր դարսւած հաստ չւանների մէջ Ոսկանը նստած՝ դիտում էր Բօսֆօրի ափունքը և այս առաջին անգամն էր, որ իւր

աչքին այդքան տխրալի տեսարաններով ներկայացաւ Բիւզանդիոնի շրջակայքը: Նախ նրա աչքը տների միջից պտուեց և գտաւ այն շանիշիրը, որտեղից Կոստանցայի աչքը դիտում էր իրան և կարողացաւ տեսնել բաց լուսամուտում այն գլուխը, որ դիտակը ձեռքում անգազար աչքին մօտեցնելով՝ իրան նստած նաւին էր հետևում: Մատների ծայրերով մի վերջին համբոյր ևս սղարկեց Կոստանցայի սրտին, որ չուշացաւ իւր կարմիր աղլուխը թափ տալով՝ յայտնել զգացմունքը: Չը դիմացաւ Ոսկանի սիրտը, աչքերից մի քանի խոշոր կաթիլներ թափւեցան ծովի դառնալի ջրի մէջ:

Առաջ, առաջ էր գնում նաւը և ամեն քալափոխում ներկայացնում այն ծովեզրները, այն այգեստանները, այն բլուրներն ու բարձրահարթութիւնները, անտառներն ու գերեզմաննոցները, որտեղ յաճախ ժամերով խօսակցել էր իւր սրտակից սիրուհու հետ, խօսք տւել, խօսք առել, սիրաբանել և կայտուել: Տեսնում էր այն վայրերն, որտեղ երևակայել, մակարերել, ծրագրել էին այն երանաւէտ վայելքը, սէրը, որ չափով որ նախագուշակել կարողացել էին իրանց սրտերը: Այդ բոլորը ներկայանալով իւր աչքերին, միայն սրտի խորքերից դառն ու անվերջ հառաչանքներ էին խլում:

Բարեբախտաբար նաւումն էլ քիչ ճանապարհորդ կար, որոնք էլ զբաղւած էին բնութեան և արհեստի իրանց վրա արած տպաւորութիւններով, ոչ ոք ուշք չէր դարձնում իրականի վրա և նաւը իրիկնադէմին, Սև ծովի ալիքների հետ կոււելով, ճեղքում էր ջրերը և գնում դէպի արևելք՝ առանց անառջ:

Է

Վ Ա Ր Ժ Ա Պ Ե Տ

Ոսկանը չորս ամբողջ տարի Երզնկայում, Խարբերդում, Սրաբկերում, Ակնում և Ալաշկերտում ուսուցչութեամբ պարտապէս: Ամեն տեղ մեծ յարգանք և ազնիւ բարեկամներ ունեցաւ, ամեն տեղից մեկնելիս էլ՝ բոլոր շրջապատողների աչքերը ետևից արտասուքով թողեց: Եռանդով կաշոււ էր ուսումնարանին, աշակերտների սրտում ցանում ուսման սէրը, ինքնաշխատութիւնը մարմնացնում նրանց մէջ և գիտութիւնների ճանապարհների վրա կանգնեցնելով՝ հեռանում էր դէպի իւր ձգտումները: Ամեն տեղ՝ եկեղեցիներում, ուսումնարանի կամ առաջնորդարանի դահլիճում ազատ խօսում էր ճիգլիտների թսկարդների դէմ, նրանց նպատակները ցոյց տալիս և նրանց վերջին դարերի և տարիների ընթացքները պատմում ժողովրդին:

« — Թէ ուսումնասէր մարդիկ են, հապա ինչի իրանց հայրենիքից հալածւում են և իրանց հայրենի քաղաքների ու աւանների դռներից արտաքսում: Թէ ճամարտութեան քարոզողներ են, ինչի ուրեմն դրանց վարդապետութիւնների դէմ զինուում են լուսաւոր աշխարհի գիտնականները և իրանց պարզայայտ փաստերով

գրեաճներում՝ պախարակում են այդ Լօյօլայական սկզբ-  
բունքները: Մի՞թէ գրանց դէ՛մ պետական և քաղաքա-  
կան օրէնքները կուրութեամբ են սահմանուած լուսա-  
ւոր երկրներում և յանիրաւի գրկում են գրանց ըն-  
կերականութեան իրաւունքներից: Նպրաւրներ, քոյրեր և  
յարգելի ծնողներ, մի կուրանաք գրանց արտաքին փայ-  
լով, գրանք իրանց գեղեցիկ թակարդների մէջ լցրած  
կուտերով գրաւում են ձեր աչքերը, սրտւմ ձեր սիր-  
տը: Սպանիան, Պորտուգալիան, Ֆրանսիան, Աւստրիան  
և Իտալիան՝ իրանց գաւանակից կաթօլիկ պետութիւն-  
ները՝ գրանց ձեռքերից քաշած տառապանքներից հա-  
զիւ կարողացան ազատել իրանց: Մնացեալ Եւրոպան  
վազուց գրանց առաջ փակել է իւր դռները, թէ՛ Գոլ-  
տագոզի, առևտրականի կամ արհեստուորի ծագեալ շա-  
րերով անպակաս են և՛ նրանց սահմաններում: Ինքը  
կաթօլիկութիւնը խեղճացել է այդ ընկերութեան առաջ  
և գրա ազդեցութեան տակն ընկնել: Քանի՛ քանի՛  
պատեր լուծեցին գրանց միաբանութիւնը, բայց գլուխ  
չելան: Այդ քարոզութիւնները թո՛ղ գնան լաբբարոս  
ազգերի մէջ կատարեն, կամ մօլի մահմեդականներին  
քրիստոնէութեան դարձնեն: Բայց նրանք գիտեն, որ  
այդ անկարող են, մեզ նման անօգնական ժողովրդի  
մէջ են մտնում արիւն ծծելու: Ուզի՞լ է, բայց են ա-  
նում ուսումնարաններ, շինում հրաշալի եկեղեցիներ,  
նւագում դաշնամուրով և մուզիկայի խմբերով, սո-  
փորեցնում արհեստներ և մասամբ գիտութիւններ, բայց  
այդ չէ՛ նշանակում, որ նրանք մեր բարւոքման խնդրով  
են զբաղւում: Նրանք մեծ փողատէր, մեծ գրամատէ-  
րեր են, շահի են գնում իրանց գրամագլուխները և

այն էլ լիտուն և ութսուն տոկոսով: Հինգ-տաս տարի  
սպասում են և երբեմն երբեմն վնասում էլ են, բայց  
այդ ոչինչ, բաւական է, որ տասը քաղաքից մինը գցեն  
իրանց թակարդը՝ վերջացաւ.— հինգ կամ տասը տա-  
րում ժողովրդի և երկրի ծոցիցը իրանց արած բոլոր  
ծախսերի տասնապատիկը հանելու ձևերը լաւ ուսում-  
նասիրած են: Այսօր ձեր առաջ հանդիսանում են բա-  
րերարներ, բարեգործներ, ուսուցիչներ, արգարներ և  
իրանց անթիւ օգնութիւններով շլացնում ձեր աչքերը,  
մինչև ձեր սրտերի անձնատուր լինելը: Բաւական է, որ  
նրանք ձեր ջղերը քննեն և թոյլ երակները ձեռք գցեն:  
Այն ժամանակ էլ դուք ո՛չ կամք, ո՛չ կայք և ո՛չ էլ  
ազատ դատողութիւն պիտի ունենաք: Ձեր դուր աշ-  
խատութիւնների արդիւնքը նրանց բուռը պիտի հոսէ:

« — Օրինակի համար, ասում էր Ոսկանը, ձեզ մի  
անցք պատմեմ, որ պատահել է Կ. Պոլսում մեր մի հա-  
րեանի տանը: Գուցէ չըհաւատաք, բայց ձեզանից ով  
որ Կ. Պոլիս գնացել է՝ կարելի է իմացած լինի, Բէյ-  
օլլի՛ Սխլագեաննայ տանը անցած հետեւեալ անցքը,  
կամ եթէ գնալու է՝ հարցնի ու իմանալ: Այսպէս խիստ  
շատ օրինակներ կան, ես այս մէկը պատմեմ:— Սխլագ-  
եանը հայկաթօլիկ էր, մի կրօնասէր բարի մարդ, մի-  
այն իւր պործը գիտէր, ժամն ու աղօթքը: Լաւ էլ կա-  
րողութեան տէր էր, մինչև երեսուն հազար լիրայի  
միւլք ու դոլլար ռնէր: Սրա կինը, Աղաւնի խանու-  
մը, նոյնպէս բարի էր, բայց Անդիների (Հակոբ-Հաստուանու)  
կուկից լետոյ խոտոտվանահօրը փոխեց, գնաց մի ճիզւի-  
տի ձեռքն ընկաւ: Այդ ճիզւիտը, որ լետոյ փախաւ Կ.  
Պոլսից և այժմ գտնւում է Բէրլինում, սկսեց կնոջը

տակն ու վրան՝ ամեն զաղտնիքը քննել և արքայութեան դռների կողպէքները կապելու վախով՝ լիմարացնում էր կնկան: Այնքան արաւ, որ կնիկը սկսեց զանազան միջոցներով մարդուն ստիպել, որ Անդիներին բարև չըտայ և զնա, խոստովանի իւր ճիգւիտ խոստովանահօրը: Գիտէք, որ կնիկ մարդը, ինչպէս որ ուզենայ, շուռ կըտայ մարդին: Մարգար աղան էլ իւր ասածի մարդկանցից չէր, կակուղ բնութեան տէր, կնկայ խօսքով զնաց: Երկու տարի ճիգւիտը դրանց սրտերը ամեն ամիս. ամեն տաղաւար օրերի մամուլում դրած՝ սղմրտում, տրորում ու ճգմում էր, այնպէս եղաւ, որ խեղճ մարդիկը ամեն բանով յանձնւեցան ճիգւիտին: Գրանք մի տղայ ունէին, որքան ստիպեցին, որ վանք մանի և աշակերտէ ճիգւիտներին, տղան խելահաս էր, — տասնութը-քսան տարւան կար, գէմ դրեց և փախս տւեց ծնողների ստիպմունքից: Տանը ինչոր էլ անցնում էր՝ տղան լաւ քննում էր: Մի օր մի հայ աղջիկ երկու խօսք է ասում Եդուարդին (տղայի անունն էր), սա էլ ետեւից գնում է: Աղջիկը Եդուարդի սիրտը բռնում է, ինչպէս պէտք է, հետը սիլի-բիլի է անում: Եդուարդը կապում է աղջկայ հետ և գիշեր ցերեկ միասին անց կացնում: Այս բանը ամեն օր ճիգւիտը հօրն ու մօր երեսովն է տալիս և խայտառակում է, որ մի անառակ որդի են մեծացրել: Ծնողքն էլ ամեն օր ժամուց ու պատարագուց են տալիս ճիգւիտներին, որ Աստուած կամ դարձ տայ իրանց որդուն կամ քարից բարձ: Աղջիկը չէ թողնում, որ Եդուարդը իրան մօտենայ, միայն իրանց օրերը խօսակցութեամբ և սիրով են անց կացնում: Եդուարդը առաջարկում է աղջկայ հետ պսակ-

ւել, աղջիկը ետ է ձգում գործը մի ժամանակ: Մէկ օր ասում է, որ եթէ կրօնը փոխէ և լուսաւորչականութիւն ընդունէ, կը պսակւի հետը: Եդուարդը համաձայնում է և գործը մի քանի օրում վերջացնում են, պսակում, բաղտերին հասնում:

«Ճիգւիտը սկսում է խրատներ և քարոզներ կարգալ Ախլագեանների գլխին, որ իրանց ժառանգը դժոխքի, սատանայի որդի է դարձել և արժանի է միայն գեհէնի հրոյն: Բացի այս՝ յանցաւոր է գտնում և ծնողներին, որ պիտի տանջւին քաւարանի անշէջ կրակներում, մինչև իրանց որդու սերնդեան սպառումն ու ջնջումը, կամ բոլորովին կրօնափոխութիւնը կաթոլիկութեան դաւանութիւն: Այս դժբաղտ վիճակից ազատւելու մի միջոց է ցոյց տալիս. — յանձնել բոլոր կարողութիւնը ճիգւիտ սրբազան ընկերութեան, որոնք ժամերով և անթիւ պատարագներով, միանգամայն և՛ պապի ներողութեան կոնգակով կարողանան փրկել նրանց հոգին այդ քաւարանի տանջանքներից: Ախլագեանները համաձայնում են այդ բանին և, ասում են, սրտի ցաւից, թէ ի՞նչ միջին որոգայթից, ընկնում, իրար ետեւից մի ամսում մեռնում են: Ճիգւիտը ներկայացնում է կտակը կառավարութեան և ցանկանում է յափշտակել բոլոր կարողութիւնը: Եդուարդը դիմում է խնդրագրով Սագրազամին, որը հրամայում է արգարութեան նախարարին մի առանձին բարձր ժողովում քննել գործը: Բանից դուրս է գալիս, որ ճիգւիտը պատրաստած է եղել հայ աղջկան, որպէս զի սորա ձեռքով կորցնէ Եդուարդին. աղջիկն աւելի վարպետ գտնւելով ճիգւիտից, իւր աշխատութեան վարձատրութեան համար ստորա-

դրուածիւն է աւնում և փաստագիրը գրականը զնելուց լետոյ, Եղուարդին խելքի է բերում, հետը պատկուում և ստացած ստորագրութիւններն ու նամակները դատաստանի առաջ ներկայացնելով՝ ջրում կտակը, պարզելով ճիգւիտի չար խորհուրդներն ու մեքենայութիւնները: Բայց ափսոս, օրէնքով այդ դործից լետոյ հարկաւոր էր ճիգւիտին հրապարակով կախ տալ, աշխարքին ցոյց տալու համար, սակայն խորամանկ ճիգւիտները անթիւ կաշառքով գործը ծածկեցին և նենգաւորին Բէյրութի իրանց վանքում բանտարկեցին: Եղուարդ էֆէնդին այսօր Կ. Պոլիսի մէջ յայտնի է ամեն հալի և ամենքը նրա պատմութիւնը լաւ գիտեն:»

Այսպիսի խրատներով և իրական կեանքից անցած օրինակներով ամեն տեղ ճիգւիտների գիմակները բաց էր անում և խեղճ ժողովուրդը, որ նրանց արտաքին ձևերից շլացել էր, սկսում էր խորշել և ատել այդ քարոզիչներին: Ոսկանի ա.ս խօսքերը հօսանմ էին և ճիգւիտ-քարոզիչների ականջներին, որոնք տեղ տեղ սրա պատճառով փախցնում էին որսերը, կամ որսւածները մի բան փախցնելով կրկին իրանց պապերի ճանապարհին էին դառնում: Ամեն կողմից Կ. Պոլիս այս անսպասելի քարոզիչի մասին գանգատներ էին գրում մեծաւորներին, որոնք իրանց բարեկամ կաշառւած թիւրք պաշտօնականների ձեռքով հալածում էին քաղաքից գիւղ, գիւղից աւան և ուրիշ քաղաք մեր Զէյթունցի Ոսկան վարժապետին:

Բարեբախտաբար Բօսնիա և Հէրցէկի սպստամութիւնները, Սերբերի և Ղարաղաղիների պատերազմները, Բուլղարների Բալկաններում ապաստանելը զբա-

ղեցնում էին վարչութեան անգամներին դաւաճներից փող և զօրք ժողովելու, այդ սյառճասով չէին կարողանում ուշք դարձնել Ոսկանի վրա: Ոսկանն էլ սգտա, անկախ քարոզում էր համարձակ և ճիգւիտներին հանդիպելիս փախչում էր այդ նենգաւորներից, որ գիշերային խաւարի շարութիւնների գոհ չըզնայ: Այսպէս շրջեց իւր հայրենի աշխարհի կենտրոնական նահանգներն ու գաւառները, շատ մարդ տեսաւ, շատ անցքի կենդանի վկայ եղաւ, շատ տեղեր էլ դառն արտասուքով ողբաց՝ իւր հայրենակիցների քաշած տառապանքները նկատելով:

Բոլոր իւր տպաւորութիւնների մասին իւրաքանչիւր ամիս գրեց խնամակալին և նրանից էլ քաջալերական խրախուսիչ փոխադարձ լուրեր ստացաւ: Գալուց ամիս չանցած՝ Կոստանցային գրեց իւր առաջին նամակը, պատասխանը ստացաւ բժշկի նամակի հետ մի ամսից լետոյ: Եւ այսպէս շարունակեցին թըղթակցութիւնները մինչև 1877 թւականի ապրիլ ամիսը: Այդ ժամանակից դադարեցաւ թղթակցութիւնը մինչև 1878 թ. օգոստոս ամիսը, երբ ուսները Արգուրումը դատարկեցին, յանձնեցին կրկին թիւրքերին:

Պատերազմը սկսելու ժամանակ, Ոսկանը գլտնում էր Ալաշկերտ, որտեղից զնաց Բայազետ՝ սմբակոսութեան հանգիստտես լինելու, գեներալ Տէր. Ղուկասովին մօտից տեսնելու: Վերջը եկաւ Բասէն, գիմաւորեց Լօրիս - Մելիքովին և Շէլիովնիկովին, որոնց զօրքի համար ցորեն և ձիերի համար զարի առնելուն շատ օգնեց. բանակի հետ զնաց Արգուրում և այնտեղ էլ մնաց ուսների քաղաքը դատարկելուց լետոյ:

Մեծ տպաւորութիւն թողին Ոսկանի վրայ վերջին պատերազմի զանազան տեսարանները: Նրա աչքի առջև էր միշտ այն պատկերը, որտեղ թուրք ստիկանական աստիճանաւորները ծեծելով և քաշելով գիւղերի միջից քաշում, տանում էին պահեստի զինւորներին կամ նոր կանչաձայններին, ինչպէս դրունցից շատերը զինւորուում, փախչում էին անտառները և մասնական խմբեր կազմելով, թալանում քրիստոնեայ գիւղացիներին: Աչքի առաջ գալիս էին այն բաշիբոզուկներն, որոնք խառնիճաղանձ խմբեր էին և սլաքալաճ էին միայն թշուառ երկրագործներին կողոպտելով, այն վայրենի քուրդ-շէյխերի գումարած ձիււորները, որոնք յայտնաբար յարձակուում էին անօգնական հայ մշակի տան վրա և կողոպտելով ինչքերը, գերում և բռնաբարում էին երկու սեռի մատաղահասներին, այն արիւննուշտ չէրքէզները, որոնք կտրատում էին սրի տակ ամեն հասակի մարդիկ: Տեսնում էր, թէ ինչպէս զինւորական բարձր աստիճանները իրանց ծոցն ու դրպանները լցնում էին զանձարանի հարստութիւններով և որքան անգուլթ էին վարում կանոնաւոր զօրքի հետ, որը կօշիկների տեղ տրեխ էր ուզում և այն էլ չէր ստանում, բոբիկ ման էր գալիս: Զօրքի մեծագոյն մասը ոչ շոր ունէր հագին և ոչ ուտելիք շատ տեղ ալիւր էին տայիս խեղճերին, որ իրանք հունցեն, թխեն և ուտեն:

Տեսաւ Ոսկանը, թէ ինչպիսի կարգ ու կանոն էր թագաւորում ուսաց բանակում, թէ ինչպէս զօրաց պէտքերը դրամով էին ձեռք բերում հասարակութիւններից, որոնք *խաթար* համար հոգիներն էլ

ծախելու պատրաստ էին, թէ ինչպէս ամեն մի զինւորական և զինւոր կանխիկ վճարելով՝ միայն ձեռք էր բերում իւր կարիքները: Փողովուրդը (քրիստոնեայ և մահմեդական) մարդավայել ընդունելութիւն էր տալիս յաղթականներին, որոնցից նախապէս ստանում էր քաղաքավարի և կարգին ընդունելութիւն: Այդ բոլոր երևոյթները Ոսկանի մտքում ներկայացնում էին թիւրքերի դարեւոր բարբարոսութիւնները և վայրենութիւնները, որոնց ծառայողները միայն թշուառ հպատակներին կողոպտելով էին անց կացրել իրանց օրերը, առանց բոլորովին ուշք դարձնելու քաղաքակրթութեան, լուսաւորութեան, գիտութեան, արւեստի և յառաջադիմութեան վրա և նրանց քրիստոնեա ժողովրդի հետ անգուլթ վարմունքների համար սկսել էր այս պատերազմը և փառաւոր դաս տւել կրօնամուլ Սօֆթաներին՝ խալամի անգուսպ ուսանողներին:

Այս պատերազմը մեծ փոփոխութիւն առաջացրեց մուսուլման մահմեդական ժողովրդի մէջ, նրանցից շատերը իսպառ հեռացան Արզուրումից: Թուրք զօրքերը, որ անցեալ դարից սկսած միշտ յաղթւել էին ռուս կօզակների առաջ, թողին ու փախան ամեն մի ճակատամարտից: Փախչողների թիւը մնացողներից նըլազ չէր և այդ կօզակների անունն անգամ սարսափ էր ազդում ամեն մի թուրքի վրա խաղաղութիւնից յետոյ: Առաջւան կատաղի կծան թուրքերը չէին մնացել, Արզուրումի հալերը 1879 թւին աւելի յանդուգն ու կրքոտ էին, քան այն դարեւոր բարբարոսները: Մի խօսքով մահմեդականութեան քիթը խոնարհել էր քը-

ընտանեութեան տուօջ:

Այս ներգործութիւնը ստիպեց Ոսկանին մնալ մէկ երկու տարի Արգուրում, ուսումնասիրել այդ գուլան ու նահանգը և քարոզել Շամսայնի, Լիօնի և Հռոմի Աստուածաբանական Փակուլտետներից վերագարձած ճիզւիտ վարդապետների դէմ: Պէտք է այստեղ ասել, պատերազմի ժամանակ մի սպանիացի ատամնաբույժ էր եկել Արգուրում, որի հետ մտերմացաւ Ոսկանը և արհեստը սովորեց: Այս արհեստով աւելի լաւ գիրք բռնեց քաղաքում, ամեն տուն՝ հայ, թիւրք կանչում էին նրան ատամները բուժելու: Ատամնաբուժութեան շնորհիւ ծանօթացաւ բոլոր զինւորական և քաղաքական ծառայողների հետ, մտերմացաւ քաղաքացւոց հետ:

Այդ տարին աշնանը հետևեալ նամակը գրեց Կոստանցային, որը ճշտութեամբ արտագրում ենք:

« 1878 թ. 3 - ին հոկտեմբերի: »

« Ամենասիրելի Կոստանցա, հոգւոյս հատոր.

« Գուցէ շատ մտատանջութիւն ունեցար իմ տարի ու կէսուայ լսութեանս վրա, հաղար ու մի բան խորհեցար, կարծեցիր, թէ անգութ յաշիրոսկոսկաներին, վայրենի քրդերին, կամ արիւնաբու չէրքէզներին զոհ գնացի և անյայտացայ աշխարհի երեսից: Ոչ, ոչ, փառք կամեցողին, դեռ սղջ և առողջ եմ, անց կացրի ամեն շրջաններից կեանքս, շատ բան տեսայ, շատ բան սովորեցի և այժմ էլ պարապում եմ մի արհեստով, որը միջոց է տալիս ընկերականութեան ա-

մեն շրջան մտնելու, ամեն տեղ կանչելու:

« Պիտի ասես, ուրեմն, թէ ես անգութ եմ և զլացայ երկու տողով հաղորդել քեզ վիճակս այս տանն և ութ ամսուայ շրջանում: Սխալում ես, ես այն եմ, ինչ որ մօտդ էի, այսպէս էլ մնալու եմ՝ մինչև վերջը: Հոգեակս, ճանապարհորդ չըկար, ես էլ գտնուում էի պատերազմականների մէջ: Կանոնաւոր պոստ չըկար, եղածն էլ վտանգաւոր էր ինձ համար, ինչպէս ուղակէի: Դեռ քանիոր ուսուները Օսմանցուի հողումն էին, ես դադարանում չունէի, անդադար մի բարեկամ գնդապետի իշխանութեան տակ վազում էի գիւղից գիւղ տընտեսելու զօրքի պէտքերը: Քիչ էլ ուսերէն սովորեցի, գրում, կարգում եմ առանց հասկանալու և թեթև խօսակցութիւններ՝ կոշտ ու անտաշ գուրս եմ տալիս:

« Մեր վերջը ինչ է լինելու՝ չը գիտեմ, Կոստանցա, որքանոր աշխատում եմ այդ մասին լռել, չեմ կարողանում կրքերս գսպել: Ոչ կարող եմ գալ քեզ մօտ, ոչ էլ քեզ մօտս բերել. երկու դէպքն էլ վտանգաւոր է: Անցեալ տարուայ վերջին նամակովդ գրած էիր, թէ ինձ պտուում են և երբեմն երբեմն հօրիցդ էլ խորհուրդ հարցնում: Հարևանցի կերսով իմացիր և տեղեկացրու: Դիշեր-ցերեկ աչքիս առաջն ես, գրիչս չի շարժուում, որ սրտիցս անցածները նկարագրեմ. քեզ բացատրելու կարիք չեմ զգում, քաջ գիտենալով, որ իւրաքանչիւր ըուպէ սրտիցս անցածները կրկնուում են և քեզանում:

« Համբուրում եմ քեզ, Կոստանցա և սեղմում եմ կրծքիս: Նամակիդ սպասող քս անմխիթար՝

Ա.ՐԱՄԴ

«25 հոկտեմբերի 1878 թւականի, Գ. Պոլիս.

«Անձուռանալի սէրս, Ա. րամ ջան.

«Թափառածդ ժամանակ միթէ չէիր լիշում, որ միտքս էլ շրջում էր քեզ հետ, միթէ մտքովդ չէր անցնում, որ աստղերի միջնորդութեամբ աչքերս էլ քեզ հետ էին: Ամեն ժամ, թէ ցերեկ, թէ գիշեր սիրտդ, — չես պատմում, — ինչպէս տրոփել է, երևակայութեանդ ինչէր են պատկերացել և ինչ ցնորական երազներով անցրել ես ժամանակդ — չես նկարագրում: Կարծո՞ւմ ես, ես այնքան քաջութիւն չունենամ կարգալու և լսելու ցաւալի օրերիդ տխուր անցքերը և կամ խնայո՞ւմ ես ինձ, չես ցանկանում, որ մաշկած ու հալած սիրտս մասնակցի այդ վշտերիդ՝ բոլորովին չընկճելու համար: Բայց, Արամ, միթէ չես մտածում, որ ես աւելի բորբոքում եմ և աւելի հիւճում, երբ տեսնում եմ, որ չես ցանկանում արգար բաժանել այն լուծը, որ երկուսս էլ հաւասար տանելու պարտաւոր ենք և որի մեր վզին ընկնելու գլխաւոր պատճառը աւելի ես եմ, քան թէ դու:

«Արամ, ես չեմ կարող քեզ չըներել, բայց անկեղծութեան մէջ բռնածդ այս ընթացքը և միւտ դառնութիւնների առաջ անձամբ կանգնելդ՝ ինձ ստիպում են այս արգար տրտունջներս գրելու. զգուշացիր, որ ինձ էլ չը վրդովես այդ քաջայերող և սրտապնդող կարծածդ միջոցով: Ես ցանկանում եմ միշտ տեղեակ լինել վշտերիդ մանրամասնութեանը:

«Գիտես, թէ ես ինչ տառապանքներ կրեցի այդ երկար ժամանակի լուսթեանդ պատճառով, ինչ չար մտքեր չանցան իմ գլխով: Մայրս էլ բոլորովին յօյսը կտրել էր, ասում էր, որ իբր դու վայրենի հրոսակների ձեռքն ընկած լինիս: Բայց բնագոյումս երբէք չէ սխալել և միշտ զգացմունքներս ինձ հաւատացնում էին, որ դու թափառում ես երկրից երկիր միշտ սըրտիցդ դառն հառաչներ վիժելով:

«Արամ ջան, քեզ ամեն քայլափոխիս աչքիս առաջ ունիմ, ամեն օր շրջում եմ այն կողմերը, որտեղ թողել ես ինձ համար քաղցր լիշատակները: Գու միայն ես իմ մտածմունքների առարկան և ես ամեն գիշեր երազում եմ միայն քո մասին: Համբերում եմ, այն բոլոր խոցերը ու բախացնում են սիրտս, զգալով որ այդ հալածանքները մեր սիրոյ համար է: Ինձ դեռ տանջում են Մօնսենօր Գրասսի արբանեակները, ամեն օր նոր նոր փեսացուներ ներկայացնելով հօրս և խնամախօսներ ուղարկելով մօրս մօտ: Վռնդելով մենք դադրեցանք, աներեսութիւնը ձեռքից չեն թողնում: Այս էլ մի բորբոքւած կրակ է:

«Շտապիր մանրամասն գրելու սրտիդ բոլոր վըշտերը միայն քեզ և սիրոյդ զօհած Կոստանցային, որոնք պիտի մխաթարեն և քաջալերեն՝

ԿՈՍՏԱՆՅԱՅԻՂ

Ը

« ԿԱՐԻՆԻ ԲԱՐՁՐ - ՀԱՅՈՑ

ԹԱՏԵՐԱՍԵՐՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ » :

Ռուսների Արզուրումի վերջին մուտքը ինչ նորութիւնների և ինչ փոփոխութիւնների առիթ չեղաւ: Կեանքի, ապրուստի, հագուստի և կապուստի վրա ինչ ազդեցութիւն չունեցաւ: Նիստն ու կացը, կերն ու խումը, վարքն ու բարքը բոլորն էլ ստացան իրենց նորագոյն ձևականութիւնները: Մեծ ընտանիքների հայ տիկիներն ու օրիորդները, որ առաջ տներում և իրենց *հերամների* տակ միայն կարողանում էին հագնել փարիզուհիների ձևերով, Ռուսների փառաւոր մուտքից յետոյ, համակերպւեցան յայթոզների հետ և վար առին մահմեդականութեան *հերամները*: Հայ մարդիկ, որ առաջ զգուշութեամբ, թաքուն թաքուն մտնում էին մէլխանաները մի մի բաժակ թթի կամ Բիթլիզի չամչի արաղ խմելու, սկսեցին ազատ գնալ կազինոները ու նոր բացւած *տիւարտիրաները*՝ խմելու իրենց չը տեսած ու չը լսած *եյն* ու *քօրդէյը*, *կօնետակն* ու վերմոտը, *արքեկանն* ու *խեքեպը*, *կասիսն* ու *մուդերը*: Ռուսաց զինուորականների թափած անթիւ գումարները մտնելով առստուրականների դատարկ քսակները, քուն-

ու դադարումները կտրում էին, որոնք առատ շուպլելու զբօսովայր էին սրոնում՝ իրենց կարճ ժամանակի ազատութիւնը անկախ վայելելու: Կարինի ամեն կողմից երգերի, սերախութիւնների և նուագարանների ձայներ էին լսուում: Աղքատ, հարուստ — ողջ քաղաքը սերախութեան մէջ էր:

Մի քանի բարեսիրտ երիտասարդի սրտում այդ սերախ ժամերում թատրոն ստեղծելու միտքն յղացաւ և Կարինի ինտելիգէնցիան չը ցանկացաւ ետ մընալ մեծ քաղաքների օրինակներից: Քսան կամ քսանը հինգ վառվառն երիտասարդներ բարիին և առաքինիին պաշտպան կանգնելու, յիմարութիւններն ու մուլութիւնները պարսուելու, բարոյականութեան վսեմութիւնը բարձրացնելու և անբարոյականութեան ազդութիւնները ծաղրելու և արհամարհելու նպատակով, կազմեցին թատերասէրների խումը: աւելի արդարը խօսելու համար, պէտք է ասենք, որ աւելի ընդօրինակող եղան, քան թէ իրականական գործող:

Երիտասարդները իրենք իրենց համար կանոնադրութիւն կազմեցին և իրենք էլ հաստատեցին, գործադիր ժողով ընտրեցին և սկսեցին գործը: Քաղաքի գանազան թաղերը երկար բարակ ման գալուց յետոյ, վերջապէս հաւանեց գործադիր ժողովը տիրացու Ղազարի խանին, վարձեց և սկսեց փոփոխութիւններն ու վերանորոգութիւնները: Մի ամսում ամենայն արագութեամբ պատրաստեցին բեմը, օթեակները, յատակը, աթոռները, նստարանները, ջահերն ու լամպերը, կանթեղներն ու մոմակալները: Ներկւածքի կարիք չը կար Եւրոպայից ստացւած՝ գոյն - գոյն, գեղեցիկ չիմերով և

սպիտակ պատառներով ծեփեցին թատրոնի միջին մասի սիւները, պատերը, առաստաղը և աթոռները. բաց տախտակ կամ փայտ և ոչ մի տեղից չէր երևում թատրոնում:

Բեմը բաւական յաջողութեամբ զարդարեցին, սպիտակ և սև գոյնի նկարներով վարագոյրը ծածկում էր բեմը հանդիսականների աչքից, որտեղ նկատու՞մ էր մեր առաջին նահապետը, խրոխտ դէմքով յաղթական դիրքով՝ Բէլի դին հերոսաբար գետին փռելուց յետոյ: Հեռուն երևում էր Նեբրովդայ ձիւնագագաթ սարը իւր ողակաւոր լեռներով: Այս պատկերը ներս մտնողի վրա լաւ տպաւորութիւն էր թողնում: Մի քանի ուրիշ վարագոյրներ էլ կային ներսը կախած, Արտաշէս աշխարհակալի սիւնազարդ հովանոցը, Տիգրան մեծի դահլիճը՝ ծիրանագոյն պատերով, ոսկեզօծ նկարներով և քանդակներով, Անյուշ բերդի բանտը և ուրիշները, որոնց վրա աշխատող ձեռքի արդիւնքի և խորհող մտքերի արտադրութիւնները փայլում էին: Սրանք մի ուրիշ թշուառ անձնաւորութեան գործերն էին, որ օտար աշխարհից հայրենիքի սիրով վառւած եկել ու ապաստանել էր Կարինում: Թէև չի կարելի ասել, որ գեղեցիկ կահաւորւած էր այդ թատրոնը, բայց նոյնպէս աններելի է ասել, թէ տգեղ էր:

Փորձադիր մասնաժողովը մի կողմից թատրոնի կահաւորութեամբ զբաղւած ժամանակը, թատերասէրները միւս կողմը ժողովներ էին անում, նիւթեր և պիէսներ ջնկում, դերեր բաժանելով՝ փորձեր կատարում: Կ. Պոլսից և Եւրոպական քաղաքներից վերադարձած շատ երիտասարդներ մասնակցեցին խաղերին: Բեմը մի

մեծ պակասութիւն ունէր, որի պատճառով թէև շատ ջանքեր գործ դրւեցան, բայց չը յաջողեցան. դերասանուհի չըկար և Կարինի հայ տիկիւններից ու օրիորդներից ոչ ոք յաձն չառաւ այդ պակասը լրացնելու: Տաք սրտով գործին կայտղ երիտասարդները չվհատեցան. Տօնական անունով գօշ ու լղար երիդասարդ, որ բարակ ու մանր կազմւացք ունէր և կանացի ձայն, ուրախութեամբ հագաւ կնոջ շոր և բարձրացաւ բեմ՝ հասարակութիւնից անվերջ ծափահարութիւններ և կեցցէներ ընդունելու. սրան հետեւեցին մի քանի ուրիշ փոքրահասակ պատանիներ: Ամեն շաբաթ մէկ-երկու անգամ տրւում էին ներկայացումներ և հասարակութիւնը բաց տեղ չըդտնելով՝ շատերը դուրսը ոտքի վրա էին մնում:

Թատրոնը լցւում էին մեծ մասամբ Ռուսների զինւորական ժեներալները և գլխաւոր հրամանատարները: Այս վայրը ուրախութիւն էր պատճառում պատերազմականներին, որոնք շերմ սրտով թատերասէրների ձեռքերը սեղմելով, յայտնում էին իրանց շնորհակալութիւնները և չէին զլանում թատերական արկղին իրանց առատ նւէրները: Իուրեանի «Լանկ-Թէմուր» ողբերկութիւնը այնքան մեծ տպաւորութիւն էր թողել, որ իրար ետեւից հինգ վեց անգամ կնկնեցին: Քիչ ժամանակի մէջ եղած մեծ ծախսերը ծածկելուց յետոյ՝ թատերասէրների խումբը անգագար աւելացնում էր իւր կահ կարասիները, շորերն ու հագուստները. վարագոյրներն ու կուլիսները և երբեմն օգնում աղքատ ընտանիքներին, ուսումնարանին, եկեղեցիի զարգարանքներին և ուրիշ բարեգործութիւններ էր կատարում:

Այսքան Ռուսաց պատերազմականների և յայտնի անձնաւորութիւնների թատրոն յաճախելը գրաւեց և տեղացիների սիրտը: Հայ, թուրք, սկսեցին ազատ միշտ գնալ թատրոն, մինչև անգամ իրանց ընտանիքներով: Թատրոնը դարձաւ սովորական տուն հասարակութեան համար: Թատրոնի մէջ խառն երևում էին ամեն դաւանանքի անձնաւորութիւններ և ժողովրդի համակրութեամբ վստահացած՝ թատրոնը պահեց իւր գոյութիւնը Ռուսների Կարինը թողնելուց յետոյ: Ներկայացումները շարունակուում էին միշտ, բայց աւելի ուշ - ուշ: Գործադիր ժողովը եռանդով առաջ էր տանում իւր վզին գցած այս գործը, ժողովուրդն էլ իւր սուղ դրութեան մէջ չէր խնայում զուրուշները գոհելու բաւականութեան համար:

Հայոց թատրոնը առաջնորդ դարձաւ թուրքերին և մի յայտնի թուրք պաշտօնական՝ Միհրատ անունով, գրեց մի պիէս վերջին պատերազմի կեանքից: Պիէսը բովանդակում էր Ռուսների Ազիզիէ մարտիցի վրա արած յարձակումը, թուրքերի պաշտպանութիւնը քրիստոնեաների օգնութեամբ և Միրալայ Աքիֆ Բէյի քաջալերութիւններն ու հրամանատարութիւնը:

Հայկական թատերախումբը արգելքների չըպատահելու համար, ընդունեց այդ պիէսը և երկու անգամ ներկայացրեց: Առաջին անգամ Միրալայ Աքիֆ-Բէյի դերը շատ գեղեցիկ կատարեց Ռսկան Նազարեանը, որը նոյնպէս թատերասէրների խմբի անգամ, գործադիր մասնաժողովի նախագահ և բեմի կառավարիչ էր: Բայց հիւանդութեան պատճառով երկրորդ անգամ չը կարողացաւ մասնակցել, այնպէս որ փոխա-

րինողը՝ կոպիտ թուրք բառբառովը՝ մեռցրեց խրախոյն տւող ճառի մտքերն և Միհրատը տեսնելով իւր անհամ գրւացքի վատ տպւորութիւնը, սաստիկ զայրացաւ Ռսկանի թատերախմբի դէմ և ռիսը պահեց սըր տումը:

Բարեհոգի անձնաւորութիւններ էլ գտնւեցան, որոնք աշատօն ձեռ բերելու յոյսով՝ զանազան գոյներով ներկեցին ընկերութեան գործունէութիւնները, նպատակները և աւելի բորբոքեցին Միհրատի սիրտը: Թէև վերջը միքանի անգամ նորից ներկայացրին «Ազիզիէ Մարտից» պիէսը և Ռսկանը ամեն ջանք գործ գրեց շլացնելու Միհրատի և թուրքերի աչքերն, որոնք խոստովանում էին Ռսկանի ձիրքն ու շնորհքը, բայց վատ տպւորութեան թողած չար հետքերը չանհետացան Միհրատի սրտից և օրից օր աճեցաւ նրա սըրտում դէպի Ռսկանն ունեցած հակակրութիւնը:

Այդ հանգամանքից յետոյ, հարուստ դասակարգի երիգասարգներից սմանք գազարեցին, պաղեցան սկսեցին կամաց կամաց հեռանալ ասպարէզից, մի մի պատճառ բռնելով, ընդհանուր ժողովի մէջ քիչ էին երևում նրանց դէմքերը: Ետերն էլ առւտրական գործերով հեռացան քաղաքից և թատրոնից, ժողովուրդն էլ, որ պէտքէ ասած միշտ հետևում է հարուստ և մտամբ ինտելիգենտ դասակարգին, կամաց կամաց սառեցաւ թատրոնից. թատրոնի օթեակներն ու բազմոցները դատարկ էին մնում:

Գործադիր մասնաժողովը վճռեց ամեն, բան ամեն գործ առաջ տանել հաստատամտութեամբ, շարունակել և անընդհատ ներկայացումները, մինչև իւր շըր-

ջանի վերջը և նոր ընտրութիւնները: Այդ ժամանակ գործադիր մասնաժողովի անդամ էին՝ Ոսկան Նազարեան՝ առամնաբույժ, Գրիգոր Յարութիւնեանց՝ բէազագ, Միսակ Մախաթջեան՝ էթտար, Սիսակ Սարաֆեան՝ գերձակ և Նշան Կարապետեան՝ վաճառական: Վերջինս կատարում էր և գանձապահի պաշտօնը: Գործավարն՝ որը երբեմն թուրքերէն լեզուով և երբմն հայերէն ներկայացումներով պաշտպանում էին գոյութիւնը:

Այդ ժամանակները վալիի կարգադրութիւնով իրաւունք տրւեցաւ Միհրատ՝ էֆէնդիին հսկելու թատրոնի և ներկայացումների վրա, Թատերասերները պարտաւորւած գիմելու էին, ամեն մի ներկայացումի համար իրաւունք խնդրելու Միհրատից, որը ամենաչնչին պատճառներով իրաւունք չէր տալիս, չարչարում էր թատերասէրներին: Եստ անգամ գործը հասնում էր և վալիին, որը դժկամակած հազիւ գիջանում էր առաջնորդի կամ Իզարէի մէջլիսի անդամների խնդիրներին ու թոյլ տալիս ներկայացումները:

Ամբին քաջալերութիւն տւեց և առաջ տարելու գազափարները աւելի ամրապնդեց երիգասարգների սրտում Մարկոս Աղաբէգեանի ճառը, որ կարգաց ընկերութեան ուսումնարանի դահլիճում: Այդ տեղ Կարնեցի երիգասարգները խրախուսւած Աղաբէգեանի խօսքերով՝ շարունակեցին իրանց գործը ուրախութեամբ և արիստոկրատ համարւած դասը այցելութիւններով կըրկին զարկ, կենդանութիւն տւեց ներկայացումներին: Աւելորդ չէ ասել, թէ Աղաբէգեանի ճառի բովանդակութիւնն էր հայ թատրոնի դարիս մէջ ստեղծւիլը, Կ.Պոլիս, Չմիւռնիս և Թիֆլիս արած յառաջադիմու-

թիւնները, նրա մարդկութեան ու ընկերականութեան վրա ունեցած օգուտները: Աղաբէգեանը առանց շեղւելու իր սկզբունքներից, յորգորում էր վեր առնել Եւրոպական բոլոր արւեստները, սովորութիւնները և գիտութիւնները, զտել, մաքրել, պարզել և հայացնելով օգտւել: Նա համոզում էր գրել տեղական կեանքի պատկերներից, մոլութիւններից զանազան պիէսներ և ուղղել ժողովուրդի սխալ քայլերը:

Այդ միջոցին Կարին էր գտնւում Մարկոս Աղաբէգեանը մի այնպիսի պաշտօնով, որ ժողովուրդի աչքն, ահանջը նրա վրա էր, նրա խօսքերը ամեն տեղ արձագանք գտան: Պատերազմից յետոյ թուրք կառավարութիւնը ժողովրդի զանազան գանգատներին, վէճերին վերջ տալու համար, մի քանի վիլայէթներում կոմիսարներ (քննիչ) ուղարկեց. Եոսսուֆ փաշան և Սարգիս էֆէնդին քննիչներ էին, որոնց քարտուղարն էր Մարկոս Աղաբէգեանը: Թէ ինչ արդիւնք ունեցաւ քննիչների գործունէութիւնը, այդ մեր նպատակից դուրս է, բայց վալիներն էլ իրանց գիտեցածները շարունակում էին ստորագրեալներով:

Գործադիր ժողովը ներկայացումներին հրաւրեց և քննիչների խումբը, որոնք մեծ համակրութեամբ հեռացան թատրոնից և աւելի քաջալերեցին թատերասէրների խումբը, Միհրատը, որ յոյս ունէր քննիչներից մի բարձր պաշտօն կորգել վիլայէթում, կամ Կ. Պոլսում, ամենայն սիրով ազատ թողնում էր շարունակելու թատերական գործերը և ազատամտական ձևերով աշխատում էր գրաւել Մարկոս Աղաբէգեանի սիրտը: Ոսկանը, որ շերմ սիրով աշխատում էր թատրոնի

Համար և պտրում էր զանազան սիլեսներ ճիզւիտների գէմ արած քարոզներին օժանդակող, բայց հանգամանքները դեռ խափանում էին նրա այդ մտքերը:

Պորճաղիւր ժողովի անդամները յաճախ ժողովում էին թատրոնի մի սենեակում, կարգալու և որոշելու պիէսները: Այս ընթերցանութիւնների ժամանակ կանացի դեր կատարող Տօնօն յաճախ ժողովում ներկայ էր գտնւում: Ներկայ էին լինում նոյնպէս երբեմն երբեմն ուրիշ յաջողակ խաղացող թատերասէրներ: Այդ ժողովները աւարտելուց յետոյ, ժողովականները մնում էին իրար հետ խօսակցելու, ասելու, ծիծաղելու, մի խօսքով ժամանակ անց կացնելու: Փորձերի և ժողովների իրիկուները թեթեւ ծախսեր լինում էր թատրոնի բիւզժէտից. *Թառոյ* միս, կամ չանախ, մի մի բաժակ արազ, մի մի բութէլ խարբերդի գիւի, պտուղներ, քաղցրեղէններ և այլն: Տասնըհինգ կամ քսան մարդու բաւականութիւն տալու համար ութ տաս դուրուշ հերիք էր:

Երբեմն էլ ընկերները հաւաքւում էին ատամնաբույժ Ոսկանի սենեակը, որտեղ ուրախ ժամեր էին անց կացնում: Նազարեանը նրանց պատմում էր զանազան անեկդոտներ, առակներ և անցքեր, ծիծաղում և ծիծաղից բոլորին թուլացնում էր: Երբեմն երբեմն Ոսկանը սուր նկատողութիւններով մերկացնում և ներկայացնում էր ճիզւիտների պատկերները, որոնց շատ ախորժակով լսում էր Տօնօն, որ կրօնքով կաթուղի էր: Տօնօյին հաստատ կաթուղի չէր կարելի ասել, նա շատ կէտերում ճիզւիտների վարդապետութեան հակառակ համոզմունք ունէր և պնդում էլ էր իւր

կարծիքների վրա, բայց կաթուղիութիւնից դուրս գալու էլ երբէք չէր համաձայնի: Մի մարդ էր, որին ոչ մի կողմը իւր համակրանքը չէր տալիս, ոչ ոք էլ չէր ցանկանում նրա համոզմունքը բռնաբարել, բացի ճիզւիտներից, և ամեն կողմից աշխատում էին շահել սիրտը, որովհետեւ սիրւելու բնաւորութիւն ունէր:

Այս տանը ընկերներին սարսափելի ահի և սուկումի մէջ էր գցում Ոսկանի կաթսան, որի մէջ եփում էր մինչև 150° տաքութեամբ գուտապերչայի ատամնակալները: Կաթսան շինւած էր մատից էլ հաստ երկաթից և օդախիտ փակւում էր կափարիչով: Կաթսայում գաճի կաղպարներում կարգին դնում էր գութապերչայի կտորներն ու շինւած ատամնները. վրան լցնում չափով ջուր, կափարիչը դնում և վառում էր ալքոհօլի կանթեղը:

— Տղերք, ասում էր Ոսկանը, զգոյշ կացէք երբ տեսնէք, որ ջերմաչափը 150 աստիճանն անցնի, իմաց տւէք, որ կրակը նւագեցնեմ, ապա թէ ոչ կաթսան կը տրաքւի, մաս մաս կը թռչի և կտորտանքը կարող է մարդ սպանել:



Ա. Լ. Մ. Ա. Ս. Տ

Ոսկանը բնակւում էր մի փոքրիկ տնակի վերնաշարկում, երկու համեստ սենեակներում, որոնցից մինը իւր ննջարանն ու գործարանն էր, երկրորդը ըն-

դունարան: Սենեակները բաւական գեղեցիկ կահաւոր-  
 ւած էին բազմոցներով, վարագոյրներով, յատակի վրա  
 փռւած կապերտներով, որոնք պատկանում էին տան  
 տիրուհիին: Իրանց վրա աւելացրել էր Ոսկանը իւր  
 գրասեղանը, սեղանը, դէտաղգահնը (գործ անելու հաս-  
 տատուն սեղանը), չորս հինգ հատ աթոռներ և մահ-  
 ճակալը իւր պարագաներով: Բնակարանի մուտքը ներ-  
 քին յարկիցն էր, փոքրիկ անյարմար սանդուխով  
 իջնում էր բակ և դուրս գալիս փողոց: Ներքնայարկը  
 շատ ընդարձակ չէր, բակի մի կողմը գտնուում էր  
 տունը, սէքուն թնգրատունը, քիւլարը և միւս կողմը—  
 ախոռն ու մարաքը:

Ներքնատանը բնակուում էր մի մատաղահաս  
 համեստ այրի կին, Ալմաստ անունով, իւր մէկ ու ճար  
 երեք տարեկան աղջկանը հետ, որին Գոհար էր կան-  
 չում: Ալմաստը թէ տանը տէրն էր և թէ պահպանո-  
 ղը: Նա քաղաքի մօտ բնակւող մի հարուստ գիւղա-  
 ցու աղջիկ էր, որի փոքր սրգին՝ Մուշեղը քաղաքում  
 ուսանում էր, քրոջը ընկեր և տանն տղամարդն  
 էր: Ալմաստը բացի իւր նստած տանից, ուրիշ կարո-  
 ղութիւն չունէր և այդ միայն մնացել էր իւր ա-  
 մուսնի: մահից յետոյ: Կեսրանց տւած զարդարանքնե-  
 րից մարդու շուայութիւնից վեց Մահմուդիէ ազատել  
 էր և դրանով երեք կով գնել, որոնց կաթից ամառը  
 մածուն էր շինում ծախում, հարում, կարագն առնում,  
 թան էլ որը ծախում, որը բանացում էր: Ալմաստի  
 ապրուստի գլխաւոր միջոցները այդ կովերն էին, որոնց  
 թռիքից պատրաստում էր ձմռան վառելիք աթառը:

Կարինում ամեն մարդ իւր կարողութեան հա-

մեմատ ունի իւր սեփական տունը. վարձով տուն տա-  
 լը շատ քիչ է պատահում և եղած վարձուրն էլ բըռ-  
 նում է ամբողջ տունը: Տունը մաս մաս քրէհով տա-  
 լու սովորութիւնն էլ պատերազմի տարին սկսեց: Այդ  
 ժամանակները թանկութիւնը և նեղութիւնը ստիպեցին  
 Ալմաստին, որ համաձայնի սիրելի սենեակներից ցած  
 գալու սէքուն և նրանց քրէհով տալով՝ վարձովն  
 ապրի: Որքան որ զինւորականներ կամ օտարականներ  
 տունը, ուզեցին նա չը համաձայնեցաւ թողնել նրանց  
 իւր յարկի տակ, ընտանիքով մարդիկ չէր ուզում, իսկ  
 ընտանիքների համար նեղ էր բնակարանը:

Ոսկանն էլ եկաւ, հաւանեց այդ սենեակներին,  
 որոնց տէրը տեսնում էր, որ իրեն անհանդիստ անելու  
 չէր, աւելի ինքն էր տանը տիրութիւն անելու, քան  
 թէ տիկինը նրա ընթացքը հսկելու կամ լրտեսելու:  
 Ալմաստը չը կարողացաւ մերժել Ոսկանի առաջարկու-  
 թիւնը, որի մարդասիրական բարերարութիւնները տե-  
 սել էր: Ռուսների Արզուրում մտնելու օրից այդ տանն  
 ապրում էր Ոսկանը:

Ալմաստը այրի և միանգամայն թշւառ էր: Նա  
 ամուսնացել էր հակառակ իւր ցանկութեան՝ հօրը  
 ստիպմունքով, մի քաղաքացի երիտասարդի հետ, որը  
 ամուսնութեան երկու տարիները շուայլ կեանք անց  
 կացնելուց յետոյ, մի գիշեր փողոցներում սպանւել էր:  
 Բացի հայրենական տանից և նրա աղքատ կահաւորու-  
 թիւնից այդ մարդը ոչինչ ժառանգութիւն չէր թողել  
 իւր աղջկան: Դեռ կնոջ ոսկիներն ու զարդարանքները  
 տարել ծախել, մէլխանաջինների բուռն էր լցրել: Նա կը-  
 նոջը հայհոյեանքից և ծեծից չէր թողել աչք բաց ա-

նել: Թշուառ Ալմաստը տասն ու հինգ տարեկան հարս  
գալով մինչև վերջը լացով էր անց կացրել իր սև  
օրերը:

Ամուսինի մահից լետու, հայրը անճարացած  
գիւղից եկել էր աղջիկն ու թողնել տանելու, բայց խեղճ  
կինը մերժել էր հօրը խնդիրքը: Ալմաստը չէր ցանկա-  
ցել գնալ հօրը տունը, հարսների թիթու երեսը չը  
տեսնելու համար: Նա աւելի լաւ էր համարում մնալ  
իւր տանը չոր հացով, քան թէ հօրանց տանը քիթ  
ու պնչով և միննաթով: — Ես չեմ կարող գալ, ասել  
էր հօրը, ում թողնեմ այս տունն ու տեղը, որ մնա-  
ցել է պաշտպանութեան տակ: Այս էլ մի տուն է,  
մի օջախ է, որի սիւնը այսօր ես եմ: Ի՞նչպէս կարող  
եմ թողնել, որ մի օր ծուխը կտրւի: Թէ բաղդ ունե-  
նայի, գլխիս տէրը վրաս կը լինէր և ես օգնութիւննե-  
րի անկարօտ, բայց ի՞նչ արած, կարելի է, ճակատա-  
գիրս է: Գնա՛, հայրիկ, Աստուծ քեզ հետ, ես այս օ-  
ջախի գերին եմ, քանի որ երակումս արիւնս չէ սա-  
ռել, պիտի դատեմ, այրեմ և պահեմ աղջիկս: Ինչպէս  
աշխարհքի որբ և այրիները, այնպէս էլ ես: Այս տու-  
նը ինձ հարս տւիր, այստեղ էլ կը մեռնիմ:

Բարեգուլ ճայրը չէր ցանկացել, աղջիկը ետ տանել  
տուն և ներան հարսների նախատինքների արժանացնել,  
ինքն էլ անսիրտ էր հրաւիրում և ուզածին պէս էլ  
գտաւ աղջիկը: Հօր տանից դուրս գալուց լետու, աղ-  
ջիկը միայն կեսրանց տան անդամն ու թագուհին է,  
այնտեղ է իւր մխիթարութիւնը և այն տանը պիտի  
հանգի իւր կեանքը: Բայց Թորոս շղթարը ջիգրոտ  
մարդ էր, որդիներից և հարսներից թագուն աղջկայ

ամէն տարւայ աշնան բնազունը հասցնում էր, մէկ  
երկու ջուլ խտակ ալիւր, մսացու երկու ոչխար, մէկ  
երկու լիտր պանիր, իւղ, կորկոտ, բլղուր, ոսպ, ձէթ,  
իրենց կալից ու կուտից եկածներից: Պառաւ Մար-  
ջանը թէեւ երբեմն երբեմն քաղաք գալիս էր աղջկա-  
նը՝ Ալմաստին մխիթալու, բայց տանը, թողնելի կա-  
րօտին չը դիմանալով՝ շտապում էր կրկին գիւղ:

Ալմաստը ապրում էր սովորական այրիների նը-  
ման, տուն ունէր, գիւղիցը ձեռքի տակով քիչ թէ  
շատ օգնութիւն ստանում էր և իւր ձեռքի աշխատու-  
թիւնով: Գրացիներն ու քաղաքի առաջնորդներն այն-  
քան բարի էին, աղքատ բնտանիքի մանր մուկը հար-  
կերը իրենց մէջ հաւաքում և յանձնում էին կառա-  
վարութեան: Բայց պատերազմի թանկութիւնը նե-  
ղացնում էր Ալմաստին ապրուստի կողմից: Խեղճ կինը  
գիշեր ցերեկ *մալուռաւու* արխալուղ ու չիթ իջլիւք կա-  
րելուց աչք չէր բաց անում :

Ոսկանն էլ այնքան միջոց չունէր, որ նրան  
օգնէր, ամսական տան վարձը՝ մի ոսկին հազիւ էր  
կարողանում վճարել: Թատրոնի բարեգործական կասսից  
մի քանի ուրիշ թշուառներին մաս հանելիս, մտածում  
էր Ոսկանը օգնել և տան տիկնոջը՝ Ալմաստին: Մի օր  
չորս ոսկի գումար ժողովի հաւանութեամբ վեր առաւ  
մօտը և տուն գնալով Ալմաստին ուղարկեց այդ փո-  
ղերը նրա եղբօր ձեռքով: Ալմաստը զարմացած ետ  
ուղարկեց գումարը, ասելով որ ինքը կարօտութիւն  
չունի: Ոսկանը ապշեց նորա ինքնասիրութեան վրա,  
որի մասին այդքան գաղափար չունէր, բայց որովհե-  
տե ինքը տեսնում էր նորա սաստիկ նեղութիւնները,

նամանաւանդ այդ օրերն էլ թշուառի աչքերը ցաւում էին շատ կար կարելուց, կանչեց իւր մօտ և խնդրեց, որ ընդունի թատերական խմբի կողմից այդ փոքրիկ օգնութիւնը, քանիոր ինքն էլ սաստիկ պէտք ունէր և դեռ մի տասն և հինգ օր աշխատելու անկարող: Այժմաստը չը համաձայնեց ընդունելու:

— Որ այդպէս է, ասաց Ոսկանը, դու մի քանի անգամ ինձ ասում էիր, թէ — եթէ կարի մեքենայ ունենաս, շատ կը դիւրանայ գործդ, կը հանգչիս ու քիչ աշխատելով շատ գործ գլուխ կը բերես: Այս գումարով ես մի մեքենայ կառնեմ քեզ համար, որը կը լինի յիշատակ թատրոնից և միջոց կը տայ հեշտութեամբ աշխատելու:

Սրան էլ պատասխան չը տւեց Այժմաստը և Ոսկանը երեք սիկի էլ աւելացնելով նոյն օրը գնեց և տուն ուղարկեց մի կարի մեքենայ: Մեքենան բանեցնելու, կարելու, սրբելու, մաքրելու կերպերը չը գիտէր Այժմաստը, Ոսկանը մեքենայի հետ եղած Ֆրանսերէն հրահանգը կարդալով բացատրեց, սովբեցրեց բոլոր պարագաները, այնպէս որ Այժմաստը այն ժամանակի Կարինի ամենից վարժ կարի մեքենայի բանեցնողը դարձաւ: Այս միջոցով աւելի շատ կար ընդունեց Այժմաստը և կարում էր մեծ մագաղիներէ համար սպիտակեղէններ և նորաձև շորեր: Ռուսներէ Սրգուրում եղած ժամանակը հիանալի գործ ունեցաւ Այժմաստը՝ սորվեցաւ ամեն ձևի կար կարելու, ձևելու, հանգիստ ապրելու ու նեղութեան օրերի համար էլ ետ գցելու փող ունեցաւ:

Մեքենայի պահասութիւնները հասկանալու, իւ-

ղելու, քանդելու, փոխելու համար ստիպւած էր սկզբում լաճախ դիմելու Ոսկանին, այնպէս որ աստիճան առ աստիճան մտերմացաւ Ոսկանի հետ և երկար ամիսներ նրա վարքն ու բարքը տեսնելուց յետոյ՝ անվախ, ազատ ընդունում էր կամ գնում էր նրա սենեակը: Զւեր անելու և գանազան ձևի շրջագգեստներ կարել սովորելու փափագով տապկուում էր Այժմաստը, այդ պահասն էլ լրացնելու աշխատեց Ոսկանը և վարժեցրեց: Զանազան չափեր անելու, ընդօրինակելու համար հարկաւոր էր ճանաչել թւեր, Այժմաստը իւր աշխատասիրութեամբ ու Ոսկանի առաջնորդութեամբ սովորեց թւերը և թւաբանական չորս գըլխաւոր գործողութիւնները: Այստեղ տեսաւ Ոսկանը նորա ընդունակութիւնները, որ մի քսան տարեկան կին երեք օրում ճանաչեց, գրեց և դասաւորեց բոլոր թւերն և մի շաբաթում թւաբանական գործողութիւնները: Սրանից խրախուսւած սկսեց դաս տալ Այժմաստին, որը թէև դժւարութիւններով, բայց սկսեց գրել, կարդալ և հասկանալ մայրենի բարբառով: Այժմաստին աւելի հեաաքրքրելու համար, ասում էր.

— Մարդ որ կարդալ գիտենայ և ամեն տեսակ գիրք կարգայ, գրքերի հետ խօսելով՝ ամեն դարդը կըմոռանայ: Կարդացածդ մինչև չըհասկանաս, կարդալու համը չես առնիլ և երբ համն առնես, կարդալուց չես բաժանելի:

Այժմաստը միայն օգուտ էր քաղել Ոսկանի խորհուրդներից և նրանց բարիքները վայելել, այդ պատճառով նորա համար նւիրական էին Ոսկանի խօսքերը: Նա հետեւեց և մանր մունր ձեռքն անցած ամեն մի

գիրք կապելով, կահաղելով կարգում էր ազատ ժամերում: Եղաւ ժամանակ, որ զգաց դրանց քաղցրութիւնը և շատ օրեր անընդհատ կաբգում էր իրան մխիթարող և զբաղեցնող գրքեր:

Առաջին երկու-երեք ամիսները Ալմաստն ու Ոսկանը հազիւ իրար երես տեսնում էին, յետոյ կարիք եղած ժամանակները շաբաթը մի կամ երկու անգամ, այն էլ գործի վրա խօսելով, վերջը գրեթէ ամէն օր, վերջապէս օրական մէկ-երկու ժամ խօսակցում էին իրար հետ և անտանելի էր մի օր իրար չըտեսնելը: Լոկ բարեկամական էին նրանց տեսակցութիւնները, ազնիւ և անարատ, միայն իրար մխիթարելու, սովորեցնելու և ժամանակ անց կացնելու համար:

Նւիրական էր նրանց համար իրար պատիւը և ամեն միջոց գործ էին դնում տեղիք չըտալու որեւիցէ աւելորդաբանութիւնների և անտեղի բամբասանքների: Բայց չար սրտերը և գէշ աչքերը չէին տանում այրիի համետ, հանգիստ վիճակը, նրանք պատճառ դարձան բամբասանքների: Ապականւած հոգիները իրանց հայեացքով էին նայում այս թշուռների վրա. բարեբախտաբար ազնիւ անձնաւորութիւններն էլ երբեմն երբեմն պատահելով ստիպում էին լռելու լրբերին և համբերելու անբիծներին: Համբերութեան գոհարն էլ հաւասար չէ բաժանւած ընկերութեան մէջ, շատ ունեցողը գիմանում է, չունեցողը ու նւազ ունեցողները գրորուում են: Ալմաստի հաստատամտութիւնը համբերութիւնով ամրապնդւած էր և նա միայն երեք զարգ ունէր— հաստատակամութիւն, համբերողութիւն և Գոհար: Առաջին երկուսը սգու ժառան-

գութիւն էին և իւր թանգագին օժիտը, վերջինն էլ սիրոյ պտուղն ու առարկան:

Գոհարը մոռացնել էր տալիս Ալմաստին բոլոր ցաւերը, Գոհարը նորա սփոփանքը, մխիթարանքն էր և Գոհարը նորա անըջական երազների յոյսն ու ապաւէնը: Որքան որ բորբոքւած լինէր, որքան որ վշտացած ու տխրած լինէր, Գոհարի երեսից և աչքերից առած մի համբոյժով թեթեւանում ու անհետանում էին նորա դառնութիւնները: Գոհարի սէրը հեռացնում էր ամուսնի տխուր յիշատակները և աղջկայ սիրոյ համար՝ ներում էր բոլորովին հօր աննխանձելի անցեալը: Գոհարի վրա ունեցած գութով տոգսւրւած՝ օրհնում ու աղօթում էր այն անձնաւորութեան հոգու համար, որը իւր չար վարքովը և մոլի բարքովը պատճառ էր դառել ընտանիքի թշուառութեանը: Չէր նկատում չարաչար աշխատութիւններով ունեցած յոգնածութիւն, աչքի առաջ ունենալով Գոհարիկին ու նորա կարիքները: Յաճախ գրկում, կրծքին սեղմում, թաթիկներն համբուրում, թևերով թռցնում, խօսում, խօսեցնում ու հրճում էր: Գոհարիկի դեռ թլւատ լեզուից ու շքրթուռներին արտասանւած քաղցրահնչուն «մայրիկ» բառը Ալմաստին նոր կեանք, նոր հոգի էր տալիս և նորա սրտիցը հեռացնում թախիծն ու կսկիծը: Ալմաստը աշխատում էր միշտ մաքուր և գեղեցիկ կերպով հագցնել նրբափայլ աղջկանը, որի գեղեցկութեան փայլըն ամենի ուշքն էր գրաւում: Սև սև մազերը, խոշոր աչքերը, երկայն թերթեւունքները, նուրբ ու խիտ ունքերը, փոքրիկ շրթունքները, սպիտակ մորթը և վարդագոյն այտերը խոստանում էին: որ նա

լինելու է ժամանակին Արզուրումի ամենագեղանիներից գերազանցը:

Գեղեցիկ էր հէնց ինքը՝ Ալմաստն էլ, սիրուն, սստղով, այնքան տարւայ սոսկալի նեղութիւնները կօկիծները տանելուց յետոյ՝ դեռ պահպանել էր թարմութիւնը, քնքուշութիւնն ու երեսի փայլը: Խոշոր ու հրացայտ սև աչքերը, թաւ թաւ ունքերը և լայն ճակատը փայլում էին անմեղութեան դրոշմով. արևից այրւած ցորենագոյն դէմքի մորթը, վառվառն այտերի ցոլացմունքը դեռ չէին թառամել և շրթուներին կարմիր գոյնը դեռ մըրցում էր շատ օրիորդների հետ: Բարձր հասակը, վայելուչ կազմւածքը, լայն կուրծքը և թիկունքը, բարակ մէջքը, գեղեցիկ քայլերը նորա կին կամ մայր եղած լինելը կասկածեցնում էին:

Սգի շորեր, սգի կահաւորութիւնն չունէր Ալմաստը: Սովորաբար մեռելի թաղման հետ, թաղում են և սուգի հանդերձները, այրին և ազգականները ոչ թէ զգեստներով էին սուգ մտնում, այլ սրտով: Մեռելը թաղելուց յետոյ, Ալմաստը երկու ամիս իւր շեմքից դուրս չէր եկել, վեց ամիս բազմիս չէր գնացել, երկու տարի հրաւէրքի և խնջոյքի չէր մասնակցել, ոչ թէ ձևի այլ սրտի զգացմունքների պատճառով: Թէև չէր հագնում պսակի կամ հարսանիքի զանազան գոյն-զգոյն կրակախոտով կարւած ջիւղազգեստ). չէր բանեցնում ոսկի յաւյտալներ, բողմաղ ու օղեր, բայց ճակատից չէր էլ բացել ոսկի շերիտն (մի կարգ ոսկի խիտ կարւած) ու ջուռշուտը (մարգարտով շերջապատւած ոսկի զարդերի շարքը, սրտնք ոսկի շէրիտի վրա են միացրած լինում): Գլխին կապում էր մութ

մանիշակագոյն եազմայ և հագնում թուռի կապոյտ չուխայ (մահաւազ) ջիւտա, որ այրիների սիրելի գոյնն էր: Եագանակագոյն սնդուս կրծկալը ծածկում էր նորա կուրծքը և ալ չուխայ գոգնացը պատում ազդրերը, որի վրա համեստութեան և տնտեսութեան համար կապում էր կապոյտ չիթ փարթուկը:

Թէև շատերի սիրտը գրգռում և շատերի էլ հոգին գրաւում էր Ալմաստը, բայց նա այնպէս համեստ և առաքինի կին էր, որ շատերը միայն նորա բարոյականութիւնը գովելով՝ բաւականանում էին: Լինում էին և չար մարդիկ, սրտնք ցանկանում էին իրանց թակարդը գցել կամ ճնշել այրիին, բայց զուր կորչում էին նորանց աշխատութիւնները: Ոսկանն այրիի տունը վաճելուց յետո, շատերը ձեռք վերցրին, հեռացան և Ոսկանի բարեկամների շնորհիւ, շատերն էլ վախից թողին, ետ կեցան իրանց չար մտադրութիւններից: Անբարտ և անբիծ մնաց Ալմաստը իւր ամուսնի մահից յետո, սրտի խորքերում թաղւած բարոյականութեան, առաքինութեան, բարեսրտութեան և ամօթիաճութեան շնորհիւ:

ժ

Ս է Ր

Ալմաստը իր հանգուցեալ ամուսնից օր ու արև չշտեմեցելով, միանգամայն սէրն էլ չէր բժբռնել և վայելել: Նա դիւրո մասին մի կատարեալ գաղափար  
Ա Լ Մ Ա Ս Տ

չունէր: Տասն և երեք կամ տասն ու չորս տարեկան հասակում նշանել էր, տարի ու կէս - ինչ նշանած մընացել և կարգել էր: Նշանելիս չէր իմանում, ինչ բան էր սէրը, նշանելը սովորութիւն լինելով և իրան հասակակիցներին նշանած տեսնելով, ինքն էլ ուրախացել էր, որ հասել էր այդ փառքին: Իր նշանածն ուզում էր տեսնել, սաստիկ փափագում էր, որովհետև գիտես թէ սրտիցը մի բան պակաս էր նրան չըտեսնելով, նամանաւանդ իր ընկերակիցներից և շատերից լսել էր, որ նշանւածները աշխատում են տեսնել իրանց նշանածները, այս պատճառով աւելի գրգռում էր անպատճառ տեսնելու: Հայրը, որ միանգամայն դարբնութեամբ էր պարտպում և ամէն օր Կտրնից քաղաք գնում իր խանութը երկաթ ձեծելու, քաղաքացիների վատ սովորութիւնները սովորելու փութաջան էր եղել և ազատ թողել, որ փեսան գնա ու գա նշանածին տեսնելու: Այդ պատճառով նշանածին յաճախ տեսնելով, սկիւմա զգլանք էր զգում: Եղածն եղել էր, նորա ճակատագիրն էր, հայրը վճռել, տւել, պրծել էր, պէտք էր խոնարհւել:

Նշանած ժամանակ յաճախ առանձին գտնւել էր նշանածի հետ, որը չէր գաղարել Ալմաստին համբուրելուց և գգւելուց, բայց սա նրա բերանից եկած սարսափելի հոտից միշտ նեղւել էր: Ինչ կարող էր անել, իր մարդն էր, գլխի տէրն էր դառնալու, ամէն մարդ ունէր իր պակասութիւնը, կինը ինչ իրաւունքով կարող էր համարձակել նրանից խնդրել, որ եթէ կարելի էր, հեռանար այդ մոլութիւնից: Բերանը կը պատուէր, կարող էր սսել — սիրելիս, խնդրում եմ,

քիչ խմիր, վնասուում ես, քեզ նեղութիւն է տալիս, — կինը ով է, որ համարձակի խրատելու իր մարդին: Հապա որքան էր տանջում խեղճ աղջիկը, երբ տեսնում էր, որ հարևան հարսներն ու աղջիկները ծիծաղում էին իր նշանածի հարբեցողական չիմար ձևերի և մոլութիւնների վրա: Գետինը մտնէր՝ էլ լաւ էր. բայց ինչ օգուտ. հայրը մի օր քէչֆի մէջ, չորս մարդու վկայութեամբ, մի յաժմակ լալտոն համար ծախել էր իրան, ինքն էլ պիտի գնար այդ մարդուն, հարկից և ամօթից ստիպւած: Այս պատճառով սրտի սիրո զգացմունքներն, որ զգացել էլ խեղճ Ալմաստը, իր ամուսնի անարգ բարոքովը մի դառն վիշտ էլ մեծանում էր իւր սրտում և օրից օր աճելով՝ խեղճում սիրո զգացմունքները:

Ամուսնանալուց յետո, Ալմաստը եղել էր միայն իր ամուսնի գազանական կրքերին գերւած մի կին: Այս հարբեցողը իր բոլոր վաստակը օղիի վրա վչացնելով, տաք գլխով տուն էր գալիս և կատաղութեամբ պահանջում կնոջից, որ իրան յանձնէ իր զարդարանքները: Ընդգիմութիւնների, հակառակութիւնների ժամանակ, գցում էր անմեղ կնոջը ոտքերի տակ, չարաչար հարւածներով կապուտակեցնում միսն և փշրում ոսկորները, արիւնլաւ անում ու հեռանում: Այս բարբարոսութիւններով մեռցնում էր կնոջ սրտում զգանմունքները և ատելութիւնը բորբոքում: Յաճախ քաղցած ու սոված էր պահում Ալմաստին և ոլոր մոլոր գլորւելով տուն մտնելուց յետո՝ գոռում ու գօչում կնոջ վրա, որ իրան ուտելիք տա: Թշուառ կինը որքան անգամ կարմրելով ու կապուտակելով մտել էր

դրացիների տները, փոխ էր առել, մուրացել ու ճարել նրա անկուշտ փորը լցնելու համար: Այս դառն աղէտները չէին թողել, որ նա զգա սէրն ու սրա քաղցրութիւններն և ակամա ծնեցրել Ալմաստի սրտում ատելութիւն դէպի մարդիկ:

Ամուսնի մահից յետո, թէև էլի անօթի էր, բայց ծեծ չէր ուտում, դրացիներից և հարևաններից չէր ամուշում, ինքն աշխատում, ունեցածովը բաւականանում էր: Սիրտը դադարել, ոսկրները հանգստացել, ականջները խաղաղել, ինքն ու իր դստրիկը, երգել, օրօրել, լացել, մեծացրել էր: Մէկ հոգս ունէր — օրական հացը, և այս հոգսը Կարինի պէս մի մեծ քաղաքում շատ մեծ հոգս չէր: Մի տուն եթէ գնար լւացք անէր, մի շաբաթական հացն ու պանիրը կբերէր, ինքն ու իւր երեխան ինչի հոգ անէր: Օրական եթէ երկու կտոր կար կարէր, այնքան բան կտային, որ երկու երեք օր բաւական էր: Հարուստ թէ չէր ապրել, խո *դիւնջ* կ'ապրէր:

Զբաղւելու էլ առարկայ ունէր, աղջկան կերակրում էր հարազատ կաթովը, բալուլում, պարկեցնում, օրօրում, քնացնում, վեր կացնում, մաքրում, լողացնում, ման ածում, գուրգուրացնում էր: Սիրելու էլ նիւթն աղջիկն էր, սրտի այդ մասն էլ բռնած էր, բայց աղջիկը մեծանալուց և կեանքի դրութիւնները փոխւելուց յետո, նոր նոր զգացմունքներ զարթեց նորա սրտում: Յաճախ իր խելքը և սուրբ բռնում էր մի այլ զգացմունքով, որը ինքը թէև լաւ ըմբռնում էր, բայց իրան զսպելն էլ գիտէր, գիտակցութիւնը և մարդերի մասին ունեցած վատ համարումը վանում

էին մտքից այդ զգացմունքները: Ալմաստը ամենայն քաջութեամբ կուռում էր իր բնագոման հետ, յաղթողը միշտ իր կամքն էր: Այս առողջ դատողութիւններով և հաստատուն կամքով զինուորած պահեց իր անմեղութիւնը ամէն վտանգի դէմ. իր սովորական ձևերով ընդունեց տանը Ոսկանին էլ, սառը վարւեց, ինչպէս ուրիշների հետ, զգուշ և հեռի կեցաւ ամէն տեսակ վտանգներից. ծանրութեամբ շարժւեց ամէն դէպքում: Համեստ ընթացքով արժանացաւ Ոսկանի յարգանքին, որը ընդունում էր նորան իբրև հայ անմեղութեան կենդանի տիպար: Բարոյականութիւնը բոլոր մանրամասութիւններով ամփոփւած էր տեսնում Ալմաստի մէջ:

Բայց աւելի ս.գգում էր Ալմաստին Ոսկանի մարդավայել ընթացքը, սովորական մարդերի բռնակալութիւններն և մոլութիւնները չէր նկատում նրա մէջ: Սկզբում այդ հանգամանքը վերագրում էր զանազան պատճառների, ասում էր, — գուցէ սաստիկ գոռոզ է և չէ ցոյց տալիս իր մոլութիւնները, կամ թէ ստէպ տեսնելու միջոց չունի, լաւ չէ քննում: Բայց իր մէջ միշտ այն եզրակացութեան էր հասնում, որ լաւ բնաւորութեան, բարի վարքի տէր մարդ էր Ոսկանը:

Երբ կարեմեքենայի պատճառով և նրանից յետո յաճախ տեսակցեցին իրար հետ, Ոսկանը խօսելիս միշտ գետին աշելով էր պատասխանում: Երկուսն էլ չէին համարձակուում իրար երես աշել: Երբեմն երբեմն գաղտագողի նկատում էր Ալմաստը, որ միշտ ուրիշ նիւթի վրա էին յառած Ոսկանի աչերը և խօսելիս այնքան էր քաշուում, որ միտքը կատարեալ չէր կարո-

դանում պարզել: Յաճախ միևնոյն բանը կատարում էր Ոսկանը և տեսնում, որ Ալմաստի աչքերը չէ ն համարձակում բարձր նայելու:

Անցաւ ժամանակ, երբ այնքան մտերմացան, որ մոռացան այդ հին ձևերը, ազատ խօսում էին իրար աչքին նայելով, բայց երբէք չչեղեցոն երկուսն էլ իրանց զգացմունքներից և աւելի չարդանքով վարեցին իրար հետ: Ալմաստը մի անկեղծ բարեկամ ունէր իր տանը, որին համարում էր իւր խնամակալը կամ պահապանը: Ոսկանը մի բարեկամուհի ունէր, որը օտար երկրում սփոփում էր իր սիրտը, կերակուրը պատրաստում, լուացքն անում և շորերը մաքրում, կարկատում:

Ալմաստը օրից օր նոր բան էր սովորում, նոր դադափարներով ու մտքերով զարգանում՝ Ոսկանի դատարակութեան տակ: Առաջաւ ձևականութիւնները դադարել էին, պարզ և ընկերաբար էին վարում, Ալմաստը էլ «Ոսկան էֆէնդի» չէր ասում, լոկ— «Ոսկանով» բաւականանում և Ոսկանը — «Ալմաստ»: Որքան որ կարելի էր, պարզւել էին և ամէն պարտականութիւն կատարում էին ընկերաբար և փոխադարձաբար:

— Անդէտ, ասում էր Ոսկանը, հազար անգամ ասացի քեզ, թէ ձեռ վերցրու այդ մոլութիւններից, ինչ հարկաւոր է այդ փոքրիկ երեխային այդքան զարդարուն հագցնել, չէ որ նորա հոգին կտփփի այդ զարդարանքներին, մեծանալուց յետոյ, խելքը, միտքը միայն զարդարանքի հետ կկապէ: — Կամ թէ, ասում էր.

— Մի թող տայ երեխին, որ կեղտոտ է իրան, զգուշացրու և այժմեանից աշխատիր մաքրութիւն սո-

վորեցնելու: Մէկ-երկու օր ստիպես, այնպէս էլ կը վարժւի:

Ալմաստը սիրով այս նկատողութիւնները ընդունուց էր և ամենայն ճշտութեամբ հետևում, միշտ էլ մտածութեան նիւթ շինում այդ խորհուրդները:

— Ոչ, ասում էր Ոսկանը, միսն ու կանաչին ես եմ գնելու, դու հացն ունիս, պատրաստելու աշխատութիւնն էլ դու ես կատարում, այնպէս պէտք է արած, որ արդար երկուսիս աշխատութեամբ ապրենք: Ես թէև ազբատ եմ, բայց ապրուստ ունիմ, դու էլ առանց աշխատելու չես ձեռք բերում ապրուստդ: Մեր ծախքերը միացրինք հեշտութեան և աժանութեան համար, ոչ թէ քո աշխատութիւնից ես օգտւելու, կամ ունեցածիցս օգտւելուդ համար: Առաւօտ ասացիր, գընանք եկեղեցի, ես քեզ լսեցի, կամքդ կատարւեց, իրիկունս էլ թատրոն կերթանք, այս էլ իմ կամքս է: Մէկ քո խօսքդ, մէկ էլ իմս:

Իրիկունը պատրաստւեցին և գնացին թատրոն: Գուրեանի «Սև Հողերի» ներկայացման մէջ Ոսկանը կատարում էր սիրահարի դերը: Այնքան բնական ձևերով ու շարժումներով կատարեց, այնպէս ճկում, դէմքի գծերը փոփոխում, ալլալում, ոգևորում ու թուլանում էր այդ պատկերում, որ բոլոր հանդիսականները համարեա լացին: Բայց հաստատ լացեց Ալմաստը, արտասուքի կաթիլները գլորւեցին, սիրտն ուռեցաւ, դառն հառաչեց: Տեսաւ, թէ ինչ քաղցր ընկերներ ունի սէրը, ինչպէս անուշ է անկեղծ իրար պաշտելը, որքան անխիղճ ու անգութ են սէրը խանգարողները և խափանողները: Շատ մտքեր ծնեցին այդ

տեսարաններին, շատ յուզեցին ու գրգռեցին այդ մըտքերը նորա երևակայութիւնը:

Ոսկանն ամէն քայլափոխում նոր նոր պատկերներ էր ներկայացնում Ալմաստի աչքի առաջ, որի տիպարները արտատպուում էին մատաղահաս կնոջ սրտի վրա անջնջելի կերպով: Այդ պատկերները քնքոյշ արարածի բարի բնաւորութիւնը ուղղում և աւելի կատարելութեան էին ձգտեցնում: Իրականից նա ընտրում էր արժանաւորներին և գնահատում նրանց վսեմութիւնը յաջողագէտ: Այսպէսով գորգացաւ Ալմաստի մէջ համեմատականութիւնը և նա իմացաւ այն տարբերութիւնը, որ կար իր տգէտ ու կոպիտ մարդի և Ոսկանի հասունացած գլխի մէջ: Տեսնում էր մէկի մոլութիւնները, միւսի առաքինութիւնները, մէկի ծուլութիւնը, միւսի ջանասիրութիւնը, մէկի բռնակալութիւնը, միւսի հաւասարասիրութիւնը, մէկի բարբարոսութիւնները, միւսի բարեսրտութիւնները և այս անվերջ տարբերութիւնները օրերով ակամայ դատողութիւնների պաշար էր դարձնում:

Նա կարգացածներն էլ նիւթ էր շինում և նմանեցնում կեանքի հետ, իր անցեալը բաղդատում էր ուրիշների հետ: Այս սոտրկանները օրիցօր բողբոջում ու տարածւում էին նորա ջղերում, առողջ դատողութեան առաջ հետզհետէ աւելի բարձրանում և աւելի վսեմանում էր Ոսկանը: Ալմաստը լաւ ճանաչեց նորա հոգու կատարելութիւնները, նորա սրտի ազնուութիւնը և նորա մարդավայել բնաւորութիւնը: Այն համակրութիւնն, որ ունէր, աստիճանաբար աճեցաւ, վերածւեցաւ յարգանքի և յարգանքը առաջ գնայով սիրո

և անկեղծ սիրո փոխեցաւ: Ալմաստը սիրում էր Ոսկանի բարձր արժանաւորութիւնները:

Այն մեծարանքը, որ տալիս էր քնուշ արարածը Ոսկանին, չափն անցաւ, մինչև անգամ ինքը Ոսկանն էլ իրաւամբ նկատեց և սաստեց Ալմաստին, որ չափազանցութիւնների չըհասցնի: Բաւական է, որ նրանք իրար լաւ ճանաչում են, իրանց անկեղծութիւնովը և պարզասրտութիւնովը գոհացնում իրար:

Այդ օրերում մի թեթեւ հիւանդութիւն ունեցաւ Ոսկանը, սաստիկ տաքութիւն ունէր և չէր քրտնում: Ալմաստը մի մեծ կանքով եռացած ջուր բերեց և դրեց նրա ստքերի տակ՝ անկողնում: Այդ առաջին անգամն էր, որ Ալմաստը մտնում էր Ոսկանի սենեակը՝ նրա պառկած ժամանակ: Ոսկանը սաստիկ նեղած լինելով՝ օգնութեան պէտք ունէր: Ալմաստն էլ օգնելու եռանդ ունէր և առիթը պատահել էր: Վերմակն որ վերցրեց, փափրիկ մերկ ոտքերն որ տեսաւ, սրտի միջով մի ցնցում, ասես եկաւ, սլացաւ: Զգուշութեամբ ոտքերը վերցրեց, դրեց կոնքի տախտակի վրա: Բայց ոտքերը ձեռքն առած ժամին ինչպէս էր սիրտը տրոփում, աննկարագրելի է: Սրունքները մերկացրեց, ետ քշեց, վերմակով ծածկեց ոտքերն ու կոնքը: Անկողնի չորս բոլորը ման էր գալիս Ալմաստը, գուրս գնում, վերագտնում և սաստիկ մտատանջութեան մէջ էր: Հիւանդ էր Ոսկանը, հեռուապէս և նա հանգիստ չուներ: Ալմաստն այնքան ոգեկան տազնապներ քաշեց, որ ճակատից հոսում էին քրտինքի կաթիլները այնպէս սաստիկ՝ որ նորա Ոսկանի ոտքի տակ դրած եռացած ջուրը չբրտնեցրեց վերջինիս:

Թեթև քրտինքից այնքան հանգստութիւն ունեցաւ Ոսկանը, որ ասաց Ալմաստին, թէ հեռացնէ կոնքի ջուրը: Ալմաստը զգուշութեամբ կատարեց ասածը: Ոսկանը հանդարտելով ընկաւ, քնեցաւ և կատարեալ քրտինք թափելով՝ բոլորովին առողջացաւ: Ալմաստը անընդհատ մտնում, ելնում էր Ոսկանի ննջարանը: Երեկոյեան լուսամուտից արեգակի ճառագայթները ընկել էին Ոսկանի անկողնի վրա: Ոսկանը սաստիկ տաքութիւնից բացել էր վերմակը և բամբականման սպիտակ, մերկ ու մազոտ կուրծքը երևում էր: Ալմաստը մօտեցաւ և զգուշութեամբ ծածկեց, բայց այդ կուրծքը և նրա տակ բաբախող սիրտը մի ուրիշ տպաւորութիւն թողին Ալմաստի գանկում: Նա զգուշութեամբ դուրս ելաւ, գնաց, բազմոցի վրա ընկաւ և սկսեց լռելեայն դառնապէս լալ: Լալիս էր, բայց չըզիտէր թէ ինչի: Արդեօք այդ բոպէին ինչքեր չանցան նորա մըտքովը:

— Նրա կուրծքը լերկ էր բուռիս միջի պէս, սրա կուրծքը մազոտ. յայտնի բան է, նա անխիղճ ու անզուժ էր, սա բարեխիղճ և բարեզուժ: Հազար անգամ այս բաները լսել եմ մօրիցս ու մամիցս:

Պատկառանքն ու համեստութիւնը իջեցրին Ալմաստի սիրտը, լաց ու սրբեց աչքերը, իջաւ տուն, աչեց կերակուրները և պատրաստութիւն տեսաւ իրիկ-լայ ընթրիքի: Բայց այնպէս լցել էր նորա սիրտը, որ ամէն քայլա շօխին արտասուքի անթիւ կաթիլները գլորւում էին նորա աչքերից, հակառակ նորա կամքին ու դատողութիւններին: Ալմաստի սիրտը մինչև քսան տարեկան հասակը չունեցածն ու չզգացածը՝ ունեցաւ,

նա այլ կերպարանք էր առել, նա փափկել էր, քնքուշացել էր և նրբացել: Սիրտն ուղոււմ էր սիրել և սիրում էր այն էակը, որի արժանաւորութիւնները, յարգում էր Ալմաստը:

Խեղճ ալին սաստիկ սիրահարւել էր Ոսկանի վրա: Այս սէրը առողջ դատողութիւնների, ազնիւ մտքերի, նրբին ընտրութիւնների, երկար փորձերի արտադրութիւն էր: Ալմաստը լաւ էր ընտրել: Բայց սըխալոււմ էր: Ոսկանի սիրտը նւիրւած էր Կոստանցային, այդ բանը նորան յայտնի չէր: Ամօթխած կինը ինչպէս սիրտ անէր մի այսպիսի հարց առաջարկելու Ոսկանին, որը իւր սրտից անցածները ամբողջապէս առանց ծածկելու յայտնել էր Ալմաստին. իսկ այդ մասին լռել: Ալմաստն ինչպէս երևակայէր, թէ նա զաղտնիք ունէր, անբացայայտելի գաղտնիք:

ԺԱ

Ե Ր Ե Ի Ա Վ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Կէս գիշեր էր: Ալմաստը Գոհարի հետ հանգիստ քնած տեսնում էր հետեւեալ երազը:

Իբր թէ ինքը պսակւել էր Ոսկանի հետ, մուրազին հասնելուց յետո խաղաղ ապրում էին իրանց տանը: Գոհարը հայրիկ կանչելով՝ զանազան խաղերով

զւարճացնում էր, զբաղեցնում Ոսկանին: Այդ միջոցին դրսից գալիս են հարեաններ ու նշաններով ներքև կանչում Ալմաստին: Սա էլ սաստիկ վրդովւած իջնում է տուն և տեսնում է, որ տան մի սիւնը փշրւել, թափւել է, թէև տունը փլւած չէ: Յուսահատ մօտենում է, որ սիւնը կանգնեցնէ, հնար չէ գտնում, ուրիշ կանգեր է բարձրացնում, սր տեղը դնէ, դրանք էլ սրը կարճ են գալիս, սրն երկայն, որը բարակ, որն էլ հաստ: Այս յուսահատ բոպէին, երբ նա կարծում է, թէ տունը կարող է իջնել, սրտատրոփ աշխատում է վտանգի առաջն առնելու, նեղութիւնից արիւն քրտինքում կտրել է, չզգիտէ, ինչ անէ, նորան բարձր ձայնով կանչում է մանկիկը.

— Մայրիկ մայրիկ, մայրիկ:

Այս ձայնից զարթնեց Ալմաստը և պատասխան տւեց.

— Ի՞նչ ես ուզում, Քոհար ջան:

— Մի պուտ ջուր տուր:

Ալմաստը մօտեցրեց *մոշուրան* (ջուր խմելու աման) Քոհարի շրթունքներին և զովացրեց նրա պապակը: Քոհարը առանց խօսելու միւս կողքին դարձաւ և շարունակեց իր տնվրդով քունը: Ալմաստն էլ պառկեց, բայց քունը գլխից կտրւեց, էլ չդադարեց: Հարիւր անգամ մի կողից միւսի վրա դարձաւ, բարձը ուղղեց, վերմակը շոկ'ց, Քոհարիկից հեռացաւ, վրան ծածկեց, բացեց, հնարք չը գրաւ հանգստանալու: Լուսերը նեղութիւն տւին: Ելաւ, մտքը վառեց, նայեցաւ և կրկին պառկեց: Քունը կտրւելու ուրիշ պատճառ չունէր, մտածութիւնը միայն Ոսկանի վրա էր՝ նա ա-

սում էր ինքնիրեն խորապէս յուզւած.

— Այս ինչ երազ էր: Իմ երազներս բոլորն էլ կատարւում են: Աստուած իմ, չը լինի թէ մի վտանգ, մի փորձանք, պատահի: Սիւնը, մեր տան սիւնը ճեղկոր ճեղկոր փշրւի ու թափւի, այդ ինչ չար նշան է: Երևի թեթև է անցնելու, (յուս էր տալիս ինքն իրան,) տանը վնաս չէր տւել, մի բուռ հող չէր թափւել. մի կտոր քար չէր ընկել պատից: Ձէ, մեծ վնաս տւած չէ, բայց մի չար խորհուրդ մեր չորս կողմը ման է գալիս: Երևի բամբասանքներ, կտրտւելու լեզուներ, պատուելու շքրթունքներ և սրտեր մեզ վրա տեղում են: Աշխարհի աչքը, ծակ աչքերը տեղնուտեղը մարդու ուտում են: Ո՛հ, լաւ նշան չէր, լաւ տեսիլք չէր, վերջերս բարին կատարւի: Բայց ոչ, սիւնը ես վերցրի, էն ահագին սիւնը, որքան նեղացայ, մինչև հինգ տասը սիւնի մէջից մէկը ջոկեցի ու կանգնեցրեցի, մէկը փշրւածի տեղը յարմարացրի: Ձէ, նեղութիւնները գուցէ երկարի, բայց վերջը գլուխ գամ ու յաղթեմ:

Այսպէս երևակայական մենախօսութիւնը բաւական շարունակելուց յետո, բարձրացաւ, կրկին վառեց մոմը, տէրտէրանց «Նփեմերդին» իջուց և օրացոյցի մէջ օրը, լուսինի օրը նայելուց յետո, սկսեց կրկին ինքնախօսութիւնը:

— Այսօր քսաներեքն է լուսնի, օրը բարի է, երազը երեսներորդ օրը կատարւի: Ուրեմն մինչև այդ օրը ժամանակ շատ ունինք, կարելի է առաջն առնել զգուշանալու է, Ոսկանին էլ զգուշացնելու է: Բայց ոչինչ, թէև յիմար բաներ են, պղտորում են մարդու սիրտը: Նա էլ այսպէս բաների չի հաւատում, երազի,

Եփեմեօսը ի վրա ծիծաղում է, բան ասեմ, վրաս պիտի խնդա և օրերով խօսի ու ծիծաղի: Բայց, թո՛ղ որքան ուզում է, ծաղրէ, պէտք է անպատճառ զգուշացրած, ո՞վ է իմանում, ինչի՛ր. կարող են պատահել. մարդ որ զգուշանայ, ինչ վնաս, կունենայ: Ես այնպէս կանեմ, որ նա անպատճառ մինչև այն օրը զգուշանայ: Ինչե՛ր եմ խօսում. Աստուծ իմ, կարծես անպատճառ մեր վրա փորձանքը գալու է. ո՛հ, ո՛հ, դիմանալու համար սիրտ ու քաջութիւն պէտք է, միշտ պատրաստ գտնելը որքան դժուար բան է: Կանցնի, ոչինչ. գուցէ ոչինչ էլ չը պատահեցաւ, իմ սիրտս ցաւեր շատ տեսած լինելով, այնպիսի դէպքերում գողում է, վախը պատում է: Արիութիւն պէտք է, արիութիւն, Ալմաստ: Ծրագը մարեց և կրկին մտաւ ահողին: Շատ թաւալեցաւ, ոլորեցաւ, բայց քնելու հնարք չունեցաւ: Միշտ մտածում էր, անդադար նորա աչքի առաջ գալիս էին վատ տեսարաններ և անախորժ պատկերներ, մտածութիւնների պատճառ դառնում: Աքաղաղը մէկ երկու անգամ խօսելուց յետո, մի նեղութիւնով քըրտինք թափւեց Ալմաստի վրա, թմրեցաւ յոգնածութիւնից և քնեցաւ: Այդ քունը տեւեց մինչև Արեգակի հորիզոնից մի պոչի պլլիսի չափ բարձրանալը:

Երբ Ալմաստը իւր անկողնում մտատանջում էր երազի և Ոսկանի սիրո ազդեցութեան տակ, տամնաբուժը իր մահճակալի վրա գարթուն, խորհում

էր անցեալի և անյայտ ապագայի մասի: Այդ մտածութիւնները անյատակ էին, չէր կարողանում որոշ եզրակացութիւնների հասնել: Նրա ուշքը միտքը Կոստանցայի հետ էր, ցերեկը Կոստանցայի վրա էր մտածում, գիշերը նորա համար երազում: Այդ օրերը նամակի էր սպասում, բայց ամեն օր պոստից և ճամբորդի մօտից դադարի էր դուրս գալիս: Ինչի՛ չի դրում, պատճառն ինչ է, չլինի՛ վշտացած է, չլինի՛ առիթ տւած լինիմ ցաւելու: Գուցէ խեղճը յուսահատեցաւ, գուցէ ճարը հատաւ և ընկաւ, ընկճեցաւ հօրը կամ թշնամիների ճնշումների տակ: Մոռացաւ ինձ, մոռացաւ խոստումը և ուրացաւ ու դաւաճանեց մեր սէրը: Եւ ի՛նչ պարտաւոր է, ամբողջ չորս տարի անցներուց յետոյ, կրկին սպասելու: Գուցէ ինքը սպասէր, ինքը ճնշէր իրան, մեռցնէր իր ցանկութիւններն ու կրքերը, բայց չթողին, չեն թողնում իրան շրջապատողները: Բայց ո՛չ, Կոստանցան չի դաւաճանիլ, նա հաստատամիտ է, նա իր տւած խօսքի տերն է, նա ամեն բան կգոհէ իր խօսքի համար. նա սիրել է ինձ և այս սիրո համար կմեռնի, Կոստանցայի սիրտը ինձ յայտնի է, ես կասկածներ չեմ կարող ունենալ, չըպիտի էլ ունենամ: Կոստանցան ինձ չի էլ ներիլ, որ վատ մտքերով տոչորւեմ: Ես, ես միշտ թուլանում եմ, նեղութիւնների չեմ դիմանում, անմիտ կարծիքներ եմ տանում: Կոստանցան, այն հրեշտակային տիպարը: այն անբիծ ոգին միթէ կարելի է երևակայել, որ մի որևէ դէպքում ուրանայ իր սէրը: Սարերը իրանց տեղից կարող են շարժւել, իսկ Կոստանցան— ո՛չ: Միթէ նա չըգիտէ, որ ես էլ նորա համար միևնույնն եմ զգում,

ինչ որ նա զգում է, միթէ հաւասար չենք տանջում. միթէ մինչև մահ մենք խօսք չը տւինք իրօր սիրելու: Եւ այս տանջանքների առիթը սրբան սր ես եմ, նա էլ այնքան չէ: Միթէ չգիտէ, որ նախանձորդ թշնամիս ինձ պատժեց, նորան էլ հետս պատժելու նպատակով, ես պատժւեցի Կոստանցիայի սէրն ընդունելուս պատճառով, Կոստանցան էլ նախանձորդիս ձեռք մերժելու համար ինձ հետ դատապարտեց: Կոստանցան, Կոստանցան, մի վերջին անգամ կարողանայի տեսնել քեզ, ընդունել կրկին անգամ ջերմ համբոյրներդ, գոհ սրտով աչքս կը խփւէր յաւիտենականութեան ճանապարհի վրա: Քուցէ և դո՛ւ, Կոստանցան, զարթուն ես անկողնիդ մէջ և տանջում Ս. րամիդ համար: Այս զգացմունքներով տապալուում էր և այրուում Ոսկանը, առանց հանգստանալ կարողանալու և ոչնչով չէր կարողանում մխիթարւել: Կոստանցան էր կանչում, Կոստանցան գոչում, խոր սրտից հառաջանքի ձայնով և նա էր միայն նրա կեանքի յոյսն և ապաւէնը: Չէր կարող երևակայել անգամ, որ Կոստանցան կարողանար մի օր մի անէծք թափել բերանից կամ տրտնջալ՝ չար բազալի դէմ, որ նորան գցել էր տաժանելի վիճակում:

— Բայց, ասում էր նա ինքն իրան, հարկաւոր է վերջ տալ, հարկաւոր է մխիթարել և մխիթարել: Քանի մի տանջեմ ու տանջւեմ և անգթարար մատաղ ու քնքուշ սիրտը սլորեմ, տրտեմ ու մաշեմ: Բա՛ւ է, բաւական է, մի միջոց, մի ճանապարհ գտնելու է, այս անել ուղուց դուրս գալու և կարգին դրութեան մէջ մտնելու: Եթէ իմ և նորա ձեռքը լինէր, շատ հեշտ էր, այս ամսում գործը գլուխ կը գար և մենք

իրար քրկախառնւած մեր բազաւորութեան կհասնէինք: Բայց ինչ օգուտ, ես Կ. Պոլիս չեմ կարող գընալ, նորան էլ Կ. Պոլսից ծնողները թոյլ չեն տալ հեռանալու: Եւ ո՞վ է իմանում, թէ այն աւստրիացին գիշեր-ցերեկ ինչպէս խուզարկել է տալիս հետքս՝ իւր հազաց ութ հարիւր ոսկիի պատճառով: Անգուժը ոչնչով չէ համոզւում, որ ես այդ ցածութիւնը արել չեմ և չէի կարող անել: Կոստանցան գրում է, որ ամէնամիս գնում է սոստիկանատուն, ստիպում, որ հետևեն և գաւառներում ինձ պտուել տան: Անխիղճ մարդ, միթէ ազջիկդ այդքան արժէք չունի, միթէ ոսկիներդ այնքան բարձր են քեզ համար: Յիմար, յիմար, որպէս զի պաշտօնը ձեռքից չխլեն, համաձայնել է վճարել կորուստը իր քսակից, կարծես ուրիշ գործով չկարողանար պարապել, կամ թէ այդ գործից եղ ու մեղը է ծորում. Բայց ես շատ զարմանում եմ, նա այդ գումարը իւր գրպանից չէր հանիլ տալ, եթէ տար էլ, ցաւից կը մեռնէր անմիջապէս. մի ուրիշ գաղտնիք կա, մի ուրիշ բան կա, որ Կոստանցային մութն է և չի կարողանում հասկանալ: Ես, ես պէտք է լինէի Կ. Պոլիս, որ թնջուկը մաքրէի: Որքան ուրախ կլինէի, եթէ կարողանայի մանրամասն քննել ու տեղեկանալ այդ գաղտնիքը:

Անպատճառ մի սարսափելի թակարդ է պատրաստւած և մի մեծ գաւառանութիւն է գործւելու: Խեղճ Կոստանցան, գուցէ քո գլխիդ են ման գալիս, գուցէ քեզ են ուզում գլորել անգունդը և միամիտ ծնողներդ ոչինչ չեն նկատում:

— Ինչ էլ որ պատահի, պէտք է վերջ տալ այս  
Ա Լ Ր Ա Ս Տ

դրութեան, մի անցագրի պատրաստութիւն տեսնելով, կամ Թաւրիզ գնալու է, կամ Թիֆլիս և այնտեղ մի գործ գտնելով, գրելու է Կոստանցային, որ փախչի ծնողների մօտից, շուր տայ երեսը հարստութիւնից և կայքերից, գա այտեղ, միասին օր աշխատենք, օր ուտենք ուրախ և հանգիստ, իրար մօտ և իրար շնչի տակ: Սմեն միջոց գործ գնելու է, որ այս երկու օրու աշխարհում մի քիչ հանգստութեամբ և ուրախութեամբ անցկացնենք վերջին օրերս: Փարթամութիւնը, ճոխութիւնը, շռայլութիւնը անհաշտ թշնամիներ շատ ունին, ձեռ քաշել տալու է Կոստանցային ժառանգական այդ ցնորամտութիւններից և օրական աշխատութիւնով ապրելու քաղցրութիւնը նորան պարգելու է: Կոստանցան պիտի ինձ լսէ, յուսով եմ, որ յաջողութեամբ էլ կատարւի և այն ժամանակ վերջ կը տանք այս բոլոր տանջանքներին:

Այսպիսի յոյսերով ապրում էր Ոսկանը և այս երեւակայական մտքերը ժամերով զբաղեցնում էին նրան: Այս գառն մտածութիւնների մէջ շատ օրեր ու գիշերներ անց կացրել էր, այնպէս որ հոգեկան տանջանքների վարժւել և երկաթի նման դիմանում էր ցաւերի: Ապագան և յոյսը նրան քաջալերում, քարոզութիւններն ու ճիգերի տանքի ձախորդութիւնները նրան խրախուսում և սնկեղծ ընկերներն ու բարեկամները մխիթարում էին: Ոսկանը վշտանում, զայրանում էր, բայց չէր վհատում ու ընկճւում:

Հետևեալ օրը հիւանդութեան պատճառով տանից դուրս չեկաւ Ոսկանը: Կողինքում պարկած չէր, բայց դուրս գալու էլ ճար չունէր: Այդ օրն ամբողջ

ընթերցանութեամբ անց կացրեց և զանազան պիէսներ կարդալուց յետո, գտաւ մի պիէս ճիգերտների չարագործութիւնների վերաբերեալ: Պիէսը շատ հաւանեց, որոշեց անպատճառ առաջարկել ժողովին և աշխատել գլուխ բերել այդ ներկայացումը: Անմիջապէս հրաւիրագիր գրեց և պատւիրեց Ալմաստին, որ եթէ թատրոնի ծառայ Մարուքը տուն գայ, ուղարկէ իւր մօտ:

Մարուքը եկաւ և մտնելով Ոսկանի գրասենեակը, ասաց.

— Ոսկան էֆէնդի, ինչ հրաման ունիք:

— Մարուք, այս հրաւերը տար և միջի բոլոր անձիքներին ստորագրել տուր, բեր: Ասա նրանց, որ քիչ քէֆ չունիմ, այդ պատճառով նեղութիւն քաշեն երեկոյեան ինձ մօտ ժողովելու: Սմէնին գտիր և յայտնիր, մինչև զանգերը վերջացրու և ետ բեր թուղթը:

Երեկոյեան մութը կոխեց, արևը մայր մտաւ սարերի ետևը, օդը զովացաւ, նախիրը եկաւ, մտաւ տուն, ամէն մարդ խանութն ու կրպակը կողպելով՝ վազեց դէպի բնակարան, կնոջն ու որդիների հետ կերակուրն ուտելու և հանգստանալու: Միւէզինը քաղցըր ձայնով կանչեց Մահմէդի հաւատացեալներին իրիկւան աղօթքն անելու, աղմուկը դադարեցաւ, անց ու դարձը կտրւեցաւ, շողացին կապոյտ կամարի վրա անթիւ աստղերը, արծաթափայլ, լուսնի քառորդը փռուեց լոյսն աշխարհի շուրջը, և փոքրիկ ամպերը չըկարողացան խանգարել նրա պայծառ դէմքը:

Ոսկանը տան փոքրիկ լուսամուտում նստած

մէկ երկնքի սքանչելիքները՝ վրա էր նայում, մէկ էլ քաղաքի անթիւ իրար կցւած բացձր ու ցածր շինութիւնների վրա և այդ տեսարանը նրան զբաղեցնելով ժամանակաւորապէս դադրում էին մտածմունքները:

Եկան վերջապէս հրաւիրւածները, սկսեցին հանաքներն ու զւարճախօսութիւնները, թռան, թռչկոտեցան, կերած կերակուրները մարսեցին, մի մի ֆինջան դայֆայով հանգստացան և հանդարտ նստեցին լսելու Ոսկանի առաջարկութիւնը:

Ոսկանը մի փքորիկ չառաջաբանով իմացրեց ժողովականներին իւր ընտրած նիւթը, բացատրեց սրա կարեւորութիւնը և սկսեց կարգալ: Սմէնը ուշադրութեամբ լսում և տեղ տեղ ընթերցանութիւնը ընդհատում էին, պարզելու համար չհասկացւած կտորները: Մի ժամից աւելի տեւեց այդ զբաղմունքը և ամէնը ոգևորւած համաձայնեցին անմիջապէս սկսելու փորձը: Խօսակցութիւնների ժամանակ լռել էր Տօնոն և համբերութեամբ սպասում էր, որ դադարեն բոլոր կարծիքները:

— Պարոն Տօնական, ասաց Ոսկանը, կարծիքդ չիմացանք, ինչի՞ այսօր լուռ էք, խօսեցէք:

— Կխօսեմ, բայց տեսնում եմ, որ գուր պիտի անցնին կարծիքներս, գուցէ բանի տեղ էլ չգնէք:

— Սաս, ասա, ձայներ տեղացին ամեն կողմից:

— Պարոններ, ասաց Տօնոն, Տարտիւֆի ժամանակը դեռ չէ եկել, մենք չշտապենք, գուցէ այդ բանը վնաս պատճառէ մեր խմբին: Մեծ հակառակորդներ կունենանք, որոնք ասպագայում կարող են խիստ

վնասներ պատճառել: Եթէ դուք ճիզւիտների ներքնագործութիւնները լաւ ճանաչէիք, գուցէ ինքերդ յետաձգէիք այդ գործը: Փորձը ինձ շատ բան է սովորեցրել, լսեցէք ինձ և մի գրգռէք նրանց: Այդ գլըրգուրթիւնը աւելի ատելութիւն կարող է սերմանել երկու կրօնքի ժողովրդի մէջ, որից խոյս տալու է: Ռամիկը այդ ներկայացման հոգին ըմբռնելու դեռ անընդունակ է, արտաքին ձևերը ու պատկերները նրա զգացմունքները վրդովելով՝ պիտի աւելի խորշեցնէ նրան մեր գործից: Այս վնասներն աչքի առաջ ունենալով՝ ես խորհուրդ եմ տալիս առ այժմ հեռանալ այդ նպատակից:

Ծիծաղելով ընդունւեցաւ այս խօսքերը ժողովականներից. որոնք ամէն կողմից կանչում էին.

— Մեռաւ խաւարում գործողների թագաւորութիւնը, ճիզւիտներն ընկան, գլորւեցան և ժողովուրդը տեսնում է, որ նրանք ոչ թէ ճշմարտութեան քարոզներ են, այլ նենգաւոր հարստահարողներ: Ժամանակ է մերկացնելու նրանց քօղերը և պարզելու հասարակութեան առաջ նրանց չարանենգ գործերը: Եթէ որ լռենք, նրանք էլի պիտի աշխատեն ներս մտել խեղճ ժողովրդի մէջ, կեղեքել նրանց և նրստել մեր գլխին: Բաւ է, բաւական է, որքան լռեցինք, ճշմարտութիւնը որքան որ պարզւի ժողովրդի առաջ, այնքան էլ օգնած կը լինինք խեղճ ժողովրդին, որը կաշխատի պրծնել, ազատւել այդ կաշի քերթողների ձեռքից: Մարդու պարտականութիւնն է թշնամու առաջ բացարձակ կանգնել և ոչ միտնում նենգութեամբ գործել: Նրանց թակարդները — մեր էլ պարզ

լեզուն, տեսնենք, ո՞վ արդարութեամբ պաշտպան է կանգնելու լուսաւորութեան, յառաջագիմութեան, ազգին ու ժողովրդին և եթէ մենք զոհւնք, այդ պարտութիւնն էլ յաղթութիւն ենք համարելու:

Խեղդւեցաւ Տօնոյ կարծիքը, մեծամասնութիւնը որոշեց, և Տօնոն, թէև իր ուղղութեանը հակառակ, համաձայնեց մեծամասնութեան ձայնին և վճռեց նրանց հետ գործել մինչև վերջը: Ընկերականներն ճշմարտութեան պաշտպան կանգնելու խօսք տւին իրար և ուխտեցին միասին ապրել կամ մեռնել:

Կէս գիշեր էր: Ընկերները ուրախութեամբ իրար ձեռք սեղմեցին և բաժանւեցան, բարի գործ կատարելու վառ երևակայութեամբ, գնացին ամէն մէկը իրանց տները խաղաղացուցիչ քնով կազդուրւելու:

Միտաք Մախաթջեանը, թատրոնի գործադիր անդամը զգուշութեամբ տուն մտած ժամանակը, հայրը կատաղութեամբ վրա եկաւ և մի քանի կռուփներ մէջքին և կողքին իջեցնելով ասաց. — Ծո՛, շան որդի, հազար անգամ քեզ չեմ ըսել, որ այդ քօջ բաներէն յուզ գաս ու բանիդ, գործիդ, խանութիդ, առուտուրիդ ետևէն քալես:

Միտաքը քսան և երկու տարեկան երիտասարդ էր, խելքը գլուխը, բանը գիտցող, գործից հասկացող, ինքնաշխատութիւնով մտաւոր կերպով առաջ գնացած, ընթերցանութիւնով ծանօթացած շատ բաների հետ և եօթը կամ ութը տարւայ մէջ հօր կարողութիւնը կրկնապատկած էր, բայց էլի ստրկական գրութիւնից չէր կարող ազատուել, նոյն հօրը տանը:

ԺԲ

Պ Է Ր Ժ Ի Ի Դ Ա

Սովորականից շատ շքեղ կերպով խաղացին Տարտիւֆը: Թատրոնը այդ իրիկուն ամենափառաւոր կերպով զարդարւած էր, բոլոր տոմսակները ծախւած և հանդիսականները չկարծւած ոգևորութեամբ մեկնեցան տուն: Մեծ ազդեցութիւն ունեցաւ այդ ներկայացումը քաղաքացիների վրա, մինչև անգամ մահմեդականները ոգևորւած խօսում էին այդ մասին: Ամէն կողմ, ամեն տեղ տներում, խանութներում, զայֆաներում և բաղնիսներում ճիզլիտներն էին խօսակցութեան նիւթը:

— Վո՛ւյ, ձուներ գլխիս, ասում էր մի կին բաղնիսի պորտաքարին նստած, իւր խօսակցին, տեսնես այդ անիծւած Ֆրանգոտանից եկած սև գլուխներին, այդ ինչ լրփութիւններ կէսն են եղել. ֆողեմ ես անոնց գլուխը:

— Հա՛, հա՛, հա՛. աս ի՞նչ բաներ իմացանք:

Բերանից բերան խօսքերը փոփոխուած, պատմութիւնները մեծանում, զարդարւում և ամէն տեղ մեկնութիւններով, յաւելւածներով ձգձգւում էին: Սօսակցութեան համբաւը մինչև «Իգարէի մէջլիսը» հասաւ (նա-

հանգստան գլխաւոր ժողով), որտեղ որոշւեցաւ խիստ քննութեան տակ ձգել ապագայ ներկայացումների պիէսները և լուրջ նկատողութիւն անել թատրոնի վերահսկող Միհրատ Էֆէնդիին: Բայց սրանով գործը չը վերջացաւ: Անցքի մասին տեղեկութիւններ ուղարկւեցան Կ. Պոլիս՝ կենդրոնական վարչութիւններին և հրահանգներ պահանջւեցան:

Արդէն չորս հինգ տարի կար, որ զանազան ճիգերի միտնումներն Կ. Պոլիս իրանց վարչութեանը հաղորդում էին ունեցած ձախորդ գործերի մասին. մի քանի տեղերում կրօնափոխութեան պատրաստած ժողովրդի յետ նահանջելը և իրանց մասին ման եկած վատ-վատ տարաձայնութիւններն ու լուրերը: Ամէն կողմից մատնանիշ էին արել վարժապետների վրա, գլխաւորապէս մի Զէյթ ունցի Ասկան անունով անձնաւորութեան վրա: Կ. Պոլսում այս մասին ընդարձակ թղթակցութիւններ էին թափւում գաւառական գործակալներից: Այդ ժամանակները Կ. Պոլսում ճիգերի գլխաւոր գործակալն էր Պէր ժիւզան, որի իշխանութեան տակ գտնւում էին Մօնսիէօր Գրասսը և և բոլոր ճիգերի միաբանները: Պէր ժիւզան, ընդարձակ իրաւունքներով նոր էր նշանակւել, որի ունեցած առանձնաշնորհումներն ու գերիշխանութիւնը ամէն տեսակ ազատ ու անկախ գործերու նպաստում էին: Պէր ժիւզան Կ. Պոլիս մտնելուց երկու օր յետո կազմեց եօթը հոգիներից մի մասնաժողով, որոնցից երեքը հայկական գործերով էին զբաղւելու, մինը ասորիների և քաղղէացիների, մինը յոյների և ալբանացիների, մինը բուլղարների և վերջինը սլաւոնականների:

Այս մասնաժողովի պարտականութիւնն էր, քննել վերոյիշեալ ազգերի լեզուներով հրատարակած բոլոր գրքերն ու պարբերական թերթերը, մանրամասն զեկուցումներ պատրաստել ճիգերի մասին հրատարակածների աւթիւ, հսկել մամուլի վրա, ուսումնասիրել օրաթերթերի ուղղութիւնները և դրանց մէջ գործող աշխատակիցների ընթացքը: Մասնաժողովին տրւեցաւ առանձին հաշւապահ և գանձապահ, որը լրացնում էր անգամների պահանջը և մի անգամ չորս, հինգ ստորագրեալներով գիշեր ցերեկ կարգում էին զանազան գրւածներ:

Հայկական լրագրների քննութիւնը յանձնւած էր Կիւրեղ վարդապետին: Պօլի խնամակալը մեծ գործի մէջ էր, ամէն առաւօտ կապոցները թևի ասկ՝ ժամից գնում էր ընթերցարան, մինչև կէս գիշեր կարգում: Քնելու ժամանակ մի նոր կապոց թերթեր կըրկին թևի տակ առած՝ գնում էր տուն: Ամէն օր որոշեալ ժամերում անգամները մտնում էին Պէր ժիւզայի մօտ և յանձնում իրանց օրական գրաւոր զեկուցումները: Քննւեցին թէ Թիւրքիայում և թէ դրսի երկրներում հրատարակւած բոլոր հրատարակութիւնները:

Մի օր իւր սովորական ժամին մտաւ Կիւրեղ վարդապետը Պէր ժիւզայի մօտ: Գործակալ ճիգերի պետը ճակատի մագերը քերելով և քաշելով՝ կարգում էր նամակները: Նա ակնոցների քովերից մտնողին նկատեց և առանց ուշադրութիւն դարձնելու, շարունակեց իւր ընթերցանութիւնը: Կիւրեղ վարդապետը ոտքի վրա կանգնած, աչքերը պետի կողմը դարձրած՝ նայում էր ամենայն ակնածութեամբ:

Քիչ յետո ճիգերի պետը գլուխը բարձրացնելով,

գննեց ոտքից գլուխ գործավարին և ասաց:

— Խնդրեմ, նստեցէք, այս ըուպէիս, անմիջապէս կվերջացնեմ այս նամակն էլ:

Կիւրեղ վարդապետը նստեց և մի հին լրագիր բաց անելով սկսեց կարդալ: Պէր ժիւզան շարունակ նամակները կարդում էր, որոնք հարիւրից աւել էին, առաջն ունեցած ցանցի վրա թւանշաններն և զանազան անյայտ նշաններ էր դնում: Տեղ տեղ կարմիր թանաքով խազեր էր քաշում և ծանօթութիւններ գրում: Նամակները ետ քշելով, դարձաւ Կիւրեղ վարդապետի կողմն ու ասաց.

— Բերէք տեսնենք, ինչ ունէք այսօր:

— Այս « Մանգումէներում » և « Մասիսներում » հրատարակած յօդւածները նոյնպէս Արամ Սողիկեանին են, որսնք հրատարակած են 1873 թւականին:

— Այդ անձնաւորութեան մասին նոր լուր:

— Ոչինչ չունինք, ոստիկանութիւնը պտրում է:

— Գա այժմ քանի տարեկան կը լինի:

— Մօտ քսան և հինգ:

— Սև աչքերով ու մազերով ասացիք:

— Այո, արձևեռունդ:

— Բարձրահասակ:

— Այո, բայց ոչ գէր:

Այս նամակների լեզուն և ոճը համեմատեցէք ձեր բերածների հետ:

Ասաց Պէր ժիւզան և նամակները առաջ քաշելով՝ շարունակեց իւր ընթերցանութիւնը: Կիւրեղ վարդապետը ձեռագիր թղթերը կարդում և լրագրներում եղածների հետ համեմատում էր: Նիշտ միևնոյն անձի

լեզուն է նմանում, ասաց ինքն իրեն Կիւրեղ վարդապետը մրմնջելով:

— Ինչպէս, հարցրեց Պէր ժիւզան:

— Համանման բառերով և ոճերով է գրւած:

— Հաստատ:

— Այո, ապացոյցներ շատ կան:

— Ուրեմն համեմատեցէք այս գրերն ու ստորաորութիւնները:

Կիւրեղ վարդապետը կարգաց չորս հինգ նամակ, որոնցից մի մասը 1875 թւականից առաջ էր գրւած և ստորագրւած Արամ Սողիկեան, միւսը 1875 թւականից յետոյ միայն Ո. Կազարեանց:

— Սրանք էլ միևնոյն անձնաւորութեան ձեռագրերին են նմանում, տարբեր ուղղութիւնով գրւած և գրերի ձևերը ալյալած, բայց ձեռքի ուղղութիւնը պահւած է, գուցէ նրա աշակերտի գրերին նմանի: Նա ժամանակով մի Հաջինցի տղայի դաս էր տալիս, լու չեմ յիշում անունը, բայց շատ հաւանական է, որ նրա...

— Բաւական է: Ասացէք, խնդրեմ, աշխատեցաք ձեռք գցելու « Մասիսի » 1871 թւականի №№-երը: Ձեր ծերուկը շատ դանդաղ է շարժուում, մի առոյգ մարդ գտէք: Ոչինչ, մի քիչ աւել վճարիր, վագեցուր, յոգնեցուր, աշխատեցուր և բոլոր համարները, որտեղ որ կան, ձեռք անցուր:

— Վախենում եմ, որ կասկածեն և չկարողանանք հաւաքել բոլոր թւերը: Առաջի օրը « Հայրենիքի » խմբագրատանը գտնւած վախճան օրինակներն էլ գնեց և բերեց, այնպէս որ խմբագիրը վերջը ճարա-

հատեալ ուրիշ տեղից էր ձեռք գցել այդ թւերը իւր գրադարանի համար:

— Բայց «Մեղուի» համարները խոստացաւ և չը բերեց:

— Նա ինչ մեղք ունի, նրան էլ խաբոււմ են խմբագիրները:

— Աշխատիր, աշխատելու է, որ «Մեղուի» համարները աշխարհի երեսին չմնան: Նրանք ամենավնասակար յօդւածներ են բովանդակոււմ:

— Օրական երկու. երեք օրինակ բերոււմ են, մի հինգ վեց ամսից գրադարանների համարներն էլ կգողանան և մեզ կբերեն: Բոլորովին մի նեղանաք, համարը տասը ֆրանկ, դա գանձ է, ո՛չ մրտաժ թուղթ, մի շտապէք, կը բերեն:

— X-ի խմբագրի մօտ ուղարկածդ մարդն ինչ գործ բռնեց:

— Հեշտութեամբ չի գլորոււմ, շատ բարձրից է բռնեցրել, բայց յոյս կայ, որ ամսական հինգ ոսկով գլուխ գայ:

— Ոչինչ, մինչև եօթը կամ ութը ոսկի էլ խոստացէք:

— Շատ բարի:

Այս միջոցին մի հասակաւոր ծառայ ներս մտաւ և ասաց.

— Արգարութեան նախարարութեան խորհրդական Մարտիրոս էֆէնդին եկաւ, մտաւ դահլիճը և ձեզ սպասոււմ է:

Պէր փուզան աճապարեց հիւրը պատելու: Կիւրեղ վարդապետը կապոյը թեւի տակ՝ հեռացաւ: ձիգ-

ւիտը խոնարհ քայլելով մօտեցաւ խորհրդականին և ձեռք տալով՝ ասաց.

— Ներեցէք ուշանալուս, ներսը մէկ-երկու հիւր ունէի. որոնց ճանապարհ գցելով էի զբաղւած:

— Ոչինչ, ոչինչ, վերապատելի հայր, ամէնիս հետ կարող են պարահել այգալիսի դէպքեր:

— Ասացէք, խնդրեմ էֆէնդի, ինչպէս է ձեր առողջութիւնը, որտեղից որտեղ, կրկին պատահեցի՞ք միմեանց: Կարծես մոլորակներ ենք, տասը տարին մլանգամ իրար պատահոււմ ենք:

— Այո, ճիշտ նկատողութիւն է, սրանից տասը, թէ իննը տարի առաջ Հռոմոււմ դեսպանատան թարգմանի պաշտօն էի վարոււմ, երբ դուք Պարիզից գալով ինձ այցելեցիք: Այժմ ես լսելով ձեր գալուստը, շտապեցի ձեզ ներկայանալով անկեղծ յարգանքս յայտնել:

— Շնորհակալ եմ, էֆէնդի, շատ շնորհակալ եմ, Ձեր բարեսրտութիւնը ինձ քաջ յայտնի է և ես միշտ պարտաւոր եմ մնացել ձեզ մօտ:

— Խնդրեմ, խնդրեմ, մի անպատէք ինձ: Մի-թէ ընկերական պարտականութիւններ չունինք: Ես դեռ շատ պարտք ունիւմ ձեզ:

— Այդ ազնիւ զգացմունք է, որ ամէն մարդ չունի, էֆէնդի:

— Ամեն մարդ էլ մարդասիրաբար չի օգնոււմ և բարձրացնոււմ ընկածին. դուք վերապատելի հայր, դուք միայն կարող էք այգալիսի վեհ գործեր կատարել: Այսօր ես իմ գիրքովս ձեզ եմ պարտական, որի մասին կասկած չունիւմ:

— Խնդրեմ, խնդրեմ, էֆէնդի, թողէք այս խօ-

սակցութիւնները, որոնք վերաւորական են: Անդրեմ, պարզ եղէք և մոռացէք անցեալը: Մենք արել ենք, դուք էլ զգացել և փոխադարձաբար բարի գործերով վերադարձրել էք: Վերջացնենք դրանք, ուրախութեամբ շարունակենք մեր ներկա, ապագա օրերը և աշխատենք իրար անկեղծաբար օգնել զէպքը պատահած ժամերում:

— Առանց կարծիքի, միշտ և հանապազ:

— Տանը ինչպէս են, տիկնոջ առողջութիւնը լաւ է:—

Շնորհակալ եմ, շատ լաւ է:

Օրիորդներն ինչպէս են, նշանեցի՞ք թէ դեռ չեն հասել:

— Ոչ, մեծը դեռ տասն և եօթը տարեկան է, շտապելու ինչ ունինք:

— Հասել է, հասել է, կամայ-կամայ պատրաստութիւն տեսնելու է: Այն օրը տոմսակ էի ուղարկել ձեզ մի երիտասարդի հետ, որը մեր կօլէժում աւարտել և յետո իրաւաբանական կուրսն անցել է Մէքթէբի Սուլթանիում: Արդեօք կարողացանք նրան մի տեղ գտնել:

— Մէկ երկու տեղ քաղաքակեցի գաւառներում, մերժեց, ուզում է անպատճառ Վանում կամ Բիթլիզում պաշտօն, ուր դեռ բաց տեղ չունինք: Ասացի, որ սպասէ և երբեմն երբեմն այցելէ մեր գրասենեակը, մինչև տեղ բացելի: Անհոգ եղէք, մի գործ կտանք շուտով:

— Արգուրում բաց տեղ չունիք:

— Արգուրումում մի հայ կալ, որի մասին

վաղին լաւ տեղեկութիւն չի տալիս, փոխելու ենք: Կարելի է այդ տեղը խոստանալ:

— Ես եթէ նրան տեսնեմ, կստիպեմ, որ անպատճառ համաձայնի Արգուրում. անտեղ կարող է առաջ գնալ:

— Վատ չէ, լաւ պաշտօններ ունինք այնտեղ, եթէ լառաջադիմութիւն ցոյց տայ, մեծ գործերի գլուխ կարող է անցնել:

Այս միջոցին սուրճ բերին փոքրիկ Ֆինջաններով: Լաուլթեամբ բարեկամները խմեցին և ուրախ ու զոհ սրտով, մեծ մեծ յոյսերով և ակնկալութիւններով բաժանուեցին: Խորհրդականը մեկնեցաւ:

Ծառան ներս մտաւ և ներկայացուց պոստից ընդունւած ծրարները: Սաստիկ զայրացաւ Պէր-Փիւզան և հրամայեց, որ ամիջապէս տանի աշխատութեան սենեակը:

— Ուրիշ անգամ զգուշացիր այդ ծրարները այս կամ այնտեղ ինձ լանձնելուց, ուղղակի ստանալուդ պէս, տար դիր գրասենեակիս վրա և հսկիր մինչև դարձս:

Պէր Փիւզան շտապեց բաց անելու ծրարները: Արգուրումից եկած ծրարի վրա գրւած էր « ամենակարևար »: Ամէնից առաջ այդ ծրարը կարդաց: Անդադար աչքերը լայնացնում ու նեղացնում էր, ճակատը կնճռոտում էր և երեսի վրա տհաճութեան նշաններ էին երևում: Զայրութից պեխերի ծայրերը ուլորում, ատամների տակն առնելով խաճնում և կտրատում էր: — Գերմանիայում, Անգլիայում և Ֆրանսիայում անգամ արգելաձեռները, ասում էր մըտ-

քում ճիգլիտը, այս անպիտանները Թիւրքիայում, Արգուրումի նման մի տեղում ներկայացնում են, գրգռում են ժողովրդին մեր դէմ: Ուրեմն ծաղրում են մեր զօրութիւնը: Բայց ինչի անհոգ նըստած է Արգուրում մեր Միւսիւ Անտւանը, չէ աշխատում սրանց առաջը կանխաւ առնելու և միայն նամակով մեզ ցաւ է յայտնում: Ո՛չ, ո՛չ, այդ հին մարգիկը անպէտք են, նոր նոր ուժեր հասցնելու է: Ռուսները Արգուրում վերանորոգեցին, մտաւոր փոփոխութիւններ էլ մտան այնտեղ: Բայց նրանց սկզբունքները թագաւորելու են այնտեղի ժողովրդի սրտում, պէտք է մեռցնել: պէտք է մեր դէմ քարոզած ատելութիւնները արմատից հանել ժողովրդի սրտից, պէտք չէ թուլանալ և տեղիք տալ այդ մտքերի տարածման: Բայց ինձ կատակեցնում է նախորդիս մեռելութիւնը, որ բոլոր գործերը թույլ թողել է, ուժ տաս տարիների ընթացքում գրեթէ անիշխանութիւնը տիրել է մեր գործերին, իրան արդարացնելու համար երկու խօսք, միայն երկու խօսք ունի բերանում, — Վախեցայ, որ չը լինի թէ Հասունեանից յետո, մեր քարոզիչ միաբանների դէմ էլ մի հրովարտակ գուրու գար Սուլթանից, երկրից խապառ արտաքսելու»: Այս խօսքերով արդարանում է, ինձ էլ հաւատացնել է ուզում, որ կարող էր պատահել մի այդպիսի բան: Երևի մեր ընկերութեան կասսը դատարկւել էր և չէր կարող պորտաբոյծ փաշաների փորը մի քիչ օսկի լցնել: Կարծում է, թէ ես էլ հաւատում եմ, ուրիշների նման, թէ Թիւրքիայի պաշտօնականները

փոխւել են: Արգուրումի մի բուռը երիտասարդ դերասաններն աւելի վտանգաւոր են մեզ համար. քան թէ Օսմանեան բոլոր պաշտօնեաները: Չորս հինգ երիտասարդ ծաղրածուների առաջը եթէ չառնւի, մեր դէմ քարոզած ատելութիւնը ժողովուրդի սրտից հանելու համար տարիների և հարիւր հազարների կարօտ կլինի: Պէտք է ամենախիստ միջոցներ ձեռք առնել և գործը անմիջապէս իւր բեղմնի մէջ խնդրել:

Այս խօսքերը մրմնջելով նստեց աստուի վըրա, շարունակեց միւս ծրարների ընթերցանութիւնը: Մի քիչ կարգալուց յետո, բարձրացաւ և սկսեց նամակը ձեռքին ման գալ սենեակի երկայնութեամբ:

— Այն, երևակայածս շատ ճիշտ է, այդպէս լինելու էր: Երգչկայում, ուսումնարանի դահլիճում տւել են մի ներկայացում, որի զաւէշտը կրկին մեր դէմ, մենք դարձել ենք ամէն տեղ ծաղրածութեան առարկա: Տեսէք, տեսէք որքան յանդգնութիւն, առաջին ներկայացումի զաւէշտը բաց է անում մեր դէմ յայտնի պատերազմ: Միթէ սուրանք թույլ տալ կարելի է: Ո՛չ, ո՛չ, մեծ ծախսեր և հազարներ թափելով՝ սրանց գործերը խափանելու է. ապա թէ ոչ, մի մեծ ագարակ կկորցնենք:

Բաց արեց և մի ուրիշ ծրար, կարգաց և ձեռքից վար գցեց ասելով.

— Մամուլը ձեր դէմ շատ բաներ գրելու իրաւունք ունի, դուք դատարանի առաջ չէք կարող պաշտ-  
 Ա Լ Մ Ա Ս Տ

պանել առ այժմ: Բոլորիան անցաւ մեր իշխանութեան տակից, հիօսիսի բքաբեր քամիները սառեցրին նրա սիրտը մեզանից, այժմ ձեզ մնում է հերոսաբար նահատակել և սրբանալու արժանանալ: Ձեր մարտիրոսութեան դարն է, աշխատեցէք և զբաւեցէք ժողովրդեան համարումը, ձեր ճակատից վազած քրտինքները, ձեր թափած կարմիր արիւնը պիտի բողբոջեն և ապագայում տան իրանց պտուղները: Ձոհեցէք ձեր կեանքը մեր սուրբ ուխտի համար, որը ձեզ կեանք է տւել և աշխատեցէք մեր յաջորդներին աւելի լաւ ապագայ թողնելու, սուրբ նպատակին ծառայելով: Որքան որ կարելի է, խոնարհեցէք ու հպատակեցէք և զրանով կվաստակէք հասարակութեան սէրը: Մխիթարեցէք ձեզ հալածող ժողովուրդին, օգնեցէք նրանց նիւթական միջոցներով և ոգևորեցէք մարտիրոսական օրինակներով: Եուտով կվերջանան այդ դաժան բռնակալութիւնները: Նստեց զբասեղանի մօտ և գրեց քսանից աւել նամակներ, որոնք նոյն օրն իսկ յանձնեցին պոստին: Նոյն իրիկունը ընդարձակ նամակներ գրեց Հոռոմ, ճիզւիտների ընդհանրական գեներալին և խնդրեց, որ բաց թողնեն մեծ գումար թուրքիայի զանազան քաղաքներում, աւաններում ու սուլթանարաններ բանալու: Մեզ Եւրոպայից գուրս են հանում, թուրքիայից լաւ ապաստարան որտեղ ենք գտնելու, մրմնջեց ճիզւիտը: Այդ ժամանակից թուրքիայի զանազան քաղաքներում ճիզւիտները սկսեցին ուսումնարաններ հիմնարկել և զրանց մասին թղթակցութիւնները սկսեցին հայ մամուլի մէջ:

ԺԳ

Ռ Ո Ի Մ Բ Ը Տ Ր Ա Ք Ի Ե Յ

Գիշեր էր, արեւը մայր մտնելուց երկու ժամ յետո՛ւարդէն Կարինի փողոցներում տիրել էր գերեզմանային լուսթիւն: Անցը ու գարձը, կեանքն ու շարժումը, ձայներն ու զողանջիւնները դադարել էին: Երկինքը ամպամած էր և խաւարը պատել ամէն կողմը: Տների լուսամուտներից գուրս ցուլացած աղօտ շողքերը փողոցում մարդու գնացքը ուղղում էին և խաւարի մէջ մի մարդ գաւազանի օգնութեամբ հանդարտ քայլերով առաջ էր գնում: Մթնումը չէր կարելի որոշել, թէ ո՞վ էր, կարճ հասակը, մանր կազմուածքը, փոքրիկ քայլերը կարծեցնում էին, թէ կնիկ մարդ էր, բայց բաց գլխից և ծածկած Փէսից երևում էր, որ կնիկ մարդ չէր: Ակնոցները լուսամուտից տարածուած լոյսի տակ շողաց և սպիտակախառն միրուքի մեղմ հովի տակ ծածանելիը նկատեց: Երկար շորերը կասկասեցնում էին, թէ հոգևորական էր, բայց ինչի՞ գլուխը Փէս ունէր ծածկած զիշերով և ինչ գործ ունէր ուշ ժամանակ թուրքի թաղում, ջամիլի շուրջը: Ձլնի լծէ մօլլա

է, ահամա հարց է զարթնում հետևողի մտքում, բայց *սարտոյս* չունենալը այդ կասկածը փարատում է:

Անձանօթը շրջում է շամիի բակում և երբեմն-երբեմն աղօթարանի դռան դէմ կանգնած մութը տեղից կռանում, նայում է նամազ անողներին: Անհամբեր դնում է առաջ, ետ գալիս, մրմնջում, մրթմրթում. բայց դեռ չոքած են մարգարէի հետևողները և ակնածութեամբ շարունակում իրանց ջերմեռանդ աղօթքները: Իւրաքանչիւր վայրկեան, իւրաքանչիւր բոպէ անցնելիս անձանօթի սիրտը տրոփում է, կեղեքում, բայց ունի պէտքն է, դեռ սպասելու է, հաւատացեալը ծէսից մազի չափ չէ շեղում. նախ Աստուծուն և ապա թագաւորին ու աշխարհին: Աղօթքի ժամում կտրտես Սիւնին, երես չի շուռ տալ: Այդ բոպէում նա նւիրած է Արարչին. ո՛չ խօսել. ո՛չ խընդալ, ո՛չ ետ դառնալ, ո՛չ սխալել և ո՛չ ուրիշ բան խորհել կարող է աղօթելիս: Ահա եկաւ ժամանակը վերջացնելու, չոքած տեղից գլուխը շուռ տալով նայում է աջ ու ձախ, բարի և չար հրեշտակներին և խնդրում է Արարչին. որ իրան հեռու պահէ վատ կնոջ գրպարտութիւններից: Սկսեցին շամիից հետզհետէ դուրս գալ աղօթողները և ցրել իրանց տները հանգստանալու: Անձանօթի սպասած անձն էլ դուրս եկաւ և նրա հետ ման էր գալիս գութում ու փողոցում:

— Էմրահ էֆէնդի, ասաց անձանօթը, գնանք, ուշացանք:

— Գնանք, ասաց Էմրահը, այժմ էլ պարտք չունիմ: Բայց հայր Կոմիտաս, մենք ինչպէս պիտի

անենք, որ կարողանանք բան իմանալ:

— Կտեսնես, համբերութիւն ունեցիր:

Մթնումը զգուշութեամբ առաջ գնացին և դանդաղ ու անձայն քայլերով հասան մինչև հայկական փողոց՝ քրիստոնեաների թաղը:

— Տես, ասաց հայր Կոմիտասը, լաւ նայիր, թէ ինչպէս լուսաւորած են սենեակները, կարծես հարսանիք ունենան:

— Երևի քէֆի հետ են, ասաց Էմրահը:

— Ինչպէս չէ. ինչպէս չէ, ամէն իրիկուն այդ է դրանց գործը:

— Վաղճւց է, որ այս տեսարանները տեղի ունին այդ տան մէջ:

— Ռուսները մտնելուց յետոյ՝ միշտ, ամէն իրիկուն:

— Շատուոր են:

— Ինչպէս չէ, քսան-երեսուն հոգի:

— Եւ մեր *դուքիաները* ոչինչ չգիտեն:

— Տան մէջ ինչ են իմանում, ո՛վ ինչ գործ է անում:

Աւելի զգուշութեամբ առաջ գնացին և լուսաւորած տան դէմ մի ուրիշ տուն մտան: Հանդարտութեամբ սանդուխներից բարձրացան և մի մութ սենեակի լուսամուտների առաջ նստեցին: Լուսաւորած սենեակը թէև դիրքով մի քիչ բարձր էր, Էմրահի և հայր Կոմիտասի զրաւած դիրքից, բայց նրա լուսամուտները լատակին հաւասար լինելով՝ սենեակում կատարածները բոլորը երևում էին: Սենեակը Ոսկանին էր և այնտեղ երևում էր միայն հինգ մարդ, Կարինի

«Քարձր Հայոց թատերասէրները» գործադիր ժողովի անդամները և Տօնականը:

— Այս քչւոր են, ասաց Էմրահը:

— Իե՞ն չեն ժողովւած, կգան: Լսեցէք, ձայները շատ պարզ գալիս են:

Եօթը կամ ութը քալլ հեռաւորութեամբ փողոցի լանդիպակաց լուսամուտներից երևում էին տներում անցած դէպքերը, կարելի է ազատ լսել և տեսնել: Առաջ լուսամուտները փայտից խիտ ճաղեր ունէին, բայց պատերազմից յետո աչգ նամէհրամական ցանցերը վար առնւեցան: Ոսկանի նշարանում *դեզգեւանի* վրա վառւած էր ալքոհոյի կանթեղը՝ ատամնաբուժի պղնձի տակ: Աչգ կանթեղի բոցը և երկու ուրիշ նաթթի լամպերի սաստիկ լոյսը մութ սենեակից նայողների աչքերը խտտացնում էին: Ընկերները խորհում էին, թէ ինչ միջոցներով շարունակեն ներկայացումները: Խօսքի գլխաւոր նիւթը Միհրատի մասին էր, որ արգելում էր ամէն տեսակ պիէս, միայն թուրքերէն Կ. Պոլսում տպւած մեղկ և ցփական կոմէդիաներ ներկայացնելու իրաւունք էր տալիս, սրտեղ միայն լիբրտուած սիրահարութեան օրինակներ կալին: Դրանք էլ սաստիկ անհամ և թատերասէրների բարոյացուցիչ ձեռնարկներին հակառակ լինելով, չէին ցանկանում երբէք վատ օրինակներով ժողովրդին առաջնորդել դէպի անբարոյականութիւն:

— Քանի որ, պարոններ, ասում էր Տօնօն, իրաւունքը այս տիմարի ձեռքն է, մենք յոյս չունենանք, որ կկարողանանք լաւ նիւթեր ներկայացնել: Իմ կարծիքով թուրացները առաջիմ ներկայացումները.

արան քննիչները միասին Վան են տանելու, գուցէ այնտեղից էլ Կ. Պոլիս. այն ժամանակ նոր մարդ ունենալով՝ կկարողանանք նրա թույլ կողմերը գտնել և համոզել, որ աջակցի մեզ թատրոնի գործին: Գիտէք, որ սաստիկ զրգուած է մեր դէմ վալին, նրան ծուռ ու մուռ շատ պատմութիւններ են 'արել: Միհրատին առանձնապէս հրամայւած էլ է, որ ամէն քալին արգելքներ դնէ մեր առաջ: Առհասարակութիւնը չթողնենք, որ վատ հետևանքների չհանդիպենք:

— Խոհեմութեան դէմ ո՞վ ինչ է գործում, ասաց Նշան Կարապետեանը, բայց մեռելութիւն էլ հարկաւոր չէ: Ում ինչն ենք գողացել, ինչ լանցանքի համար վախենանք, պարզապէս սկսել ենք մի սուրբ գործ, ժողովրդեան վարքն ու բարքը ուղղող, մոլութիւններն ու տգիտութիւններն անհետացող և լուսաւորութիւն սփռող: Միթէ մեղաւոր են այն քաղաքներն ու քաղաքացիները, որոնք տարեկան հազարներ են նւիրում թատրոնի գործին, իրանց ժողովրդեան բարօրութեան համար: Ես կարծում եմ, որ չունինք մի պետական օրէնք, որը արգելք դնէր այս գործին: Ինչի՞ ընկճւինք փաշայի կամ նրա պաշտօնակալների կամայականութիւնների առաջ: Միթէ այս ներկայացումները Կ. Պոլսում, Զմիւռնիայում և ուրիշ քաղաքներում չեն արւում, միթէ կառավարութեան աչքից հեռու են տպւել այս պիէսները և սփռւել պետութեան ամէն կողմը:

— Աչգ շատ ուղիղ է, պ. Նշան, ասաց Տօնականը, բայց միթէ չգիտես, որ մեր վալիներն ու պաշտօնեաները օրէնքի ընթացքով չեն շարժւում և ո՞վ է

իմանում նրանցից իւր պարտականութիւնը:

—Թող սովորին, բաւական է, ինչ օրինազանցութիւններ որ արին. մենք օրէնքների և ոչ մի կէտից չչեղւինք, նրանք պարտաւոր են ոչ թէ չչեղւելու, այլ իսկութեամբ գործադրելու: Օրինազանցների դէմ բողոքելը սրբազան պարտականութիւն է: Ես այդ սկզբունքով պնդում եմ, որ տգէտ և անընդունակ իշխանաւորներին ցոյց տանք իրանց սխալները, որպէսզի զգուշանան ծուռ շաւիղներով ման գալուց:

—Պարոն Նշան, պարոն Կարապետեան, այնպէս էք խօսում, իբր թէ օտարական էք, նոր էք մըտել այս երկիրը, չէք ուսումնասիրել սրա կարգերը: Եթէ օրէնքները իսկութեամբ գործադրւէին, միթէ աշխարհում մեզանից բաղաւոր վիճակի ժողովուրդ, ու տէրութիւն կլինէր: Ձէ որ դրա համար էր աշխարհի իրարանցումը, դրա համար էր վերջին աղէտալի պատերազմը, դրա համար էր այնքան կորուստներ: Եթէ օրէնքները գործադրւէին, էլ ինչ նեղութիւն կունենայինք և ինչի՞ դրացի ազգերը պարտաւորւած կլինէին զէնքը ձեռին պաշտպանել իրանց որդիների արիւնով մեր ոտնատակ տրւած իրաւունքները:

—Այո, եթէ մենք կարողանայինք մեր իրաւունքները պաշտպանել տգէտ ու անբարեխիղճ վարչականների դէմ, մենք նրանց պարտաւորեցրած լինէինք օրէնքն ու կարգը սովորելու և այնպէս շարժւելու, այսօր մենք օրինաւոր վիճակ կունենայինք և այս գործում էլ արգելքների չէինք հանդիպիլ: Կարգը, օրէնքը հարկաւոր է սովորեցնել: Ուրիշ երկրներում կառավարիչները սովորեցնում են ժողովրդին օրէնքները, Թուր-

քիայում ժողովուրդն է հասկացնելու կառավարիչներին իրանց պարտականութիւնները:

—Չգիտեմ, ինչ ասեմ, պարոն Նշան, միթէ չգիտես, որ այս կրօնական մի պետութիւն է, եթէ վերցւի կրօնական կարգը, ամիջապէս կքայքայւի պետութիւնը: Մոլի մահմեդականը աւանդութեան սրտից պոկ չէ դալիս և նրա ուրոշած գծերում է ճանաչում Խալիֆի գերիշխանութիւնը: Սուլթանը, որ Մարգարէի Աթոսակալն է համարում, եթէ դիմադրէ այդ կրօնական օրէնքներին, Մահմեդականութիւնը կբողոքէ և չի ճանաչել նրա իշխանութիւնը, նա պարտաւորւած պաշտպանելու է Շէրիաթը: Իրանք պաշտպանելով իւր հրատարակած հրովարտականքի և օրէնքների առաջին եզմումը ինքն է կատարում: Հետևապէս ինչ արժէք կարող են ունենալ այդ փքուն օրինադրքերը պաշտօնեաների ձեռքում, երբ կամայականութիւնն է կառաւարում մեր երկիրը, ոչ թէ կարգերը: Սրանք յայտնի լինելուց յետո, էլ ինչ էք պնդում հրատարակւած օրէնքների վրա:

—Ձեր տասմները շատ իրաւացի էին մինչև վերջին պատերազմը, բայց այժմ անցան, այժմ ամէն տեղ գործադրուում են կէտ առ կէտ հրատարակւած օրէնքները և մենք լաւ վարչութիւն ունենալու համար, պիտի աշխատենք միշտ օրէնքները իրականացնելու և մոլեռանդ մահմեդականներին վարժեցնել կանոնին հպատակելու: Բաւական է որքան այդ լիմարները իրանց կամայականութիւններով դիմադրեցին արդար կարգերին, էլ ժամանակն հասաւ նրանց խորտակելու, օրէնքին հպատակելու և հպատակեցնելու ենք ամե-

նայն սրբութեամբ, ուժերիս պատածի չափ:

— Չեմ կարող ուրանալ ձեր այդ խօսքերի ճշմարտութիւնը, բայց պիտի գա ժամանակ, որ ինքներըդ պիտի համոզուիք, թէ որքանոր աշխատին գործադրել, չեն հասնելու ըզձալի ցանութեանը: Իսկ ինչ վերաբերում է մեր թատրոնին, դա մի այնպիսի հարց է, որի մասին որքանոր բողոք բարձրացնենք, պիտի մնայ՝ «ձայն բառառոյ յանապատի»...

— Չենք թողնիլ, որ մնա:

— Կթողնեն և զուր տեղը կանցնեն ձեր չարանքները:

— Պարոններ, մէջ մտաւ Ոսկանը, սա մի այնպիսի հարց է, որ զուտ հասարակական է, այստեղ բոլոր ժողովուրդը, ողջ Կարնեցիք ունին իրանց գոհերը, այս իրաւունքը օտնատակ տալու, ես չեմ կարծում, որ յանդգնի Միհրատը կամ ուրիշը՝ Աշխատենք, խո՛րուստ չենք ունենալ:

Ոսկանի խօսակցութիւնները ամենայն ուշագրութեամբ լսում էին ընկերակեցները, նամանաւանդ Էմրահը և հայր Կոմիտասը: Էմրահը ձեռքի թղթի վրա գրում էր զանազան նկատողութիւններ այդ խօսակցութիւններից:

— Պարոններ, ես անցեալ ժողովում ձեզանից խնդրեցի, որ ետաձգէք այն ներկայացումը, որի համար այնքան աղմուկ բարձրացաւ, ինձ չլսեցիք: Ժողովի մեծամասնութեան ձայնը սուրբ է մեզ համար, կարող էք և այս առաջարկս չընդունել, բայց փորձը իրականութիւնը պարզ աչերնիդ առաջն է, թողէք առ աչժմ այդ մտքերը, թուլացնենք այժմ գործը և ամա-

կան մի մի ներկայացում տալով՝ պաշտպանենք մեր գոյութիւնը, մինչև տեսնենք ինչ նոր կարգադրութիւն կլինի: Գրգուռութիւնը վտանգաւոր է և ուրիշ բաներ կարող է առաջ բերել:

— Ընդհակառակը լռելով՝ մենք պիտի կորցնենք մեր իրաւունքները, Միհրատը պիտի կարծէ, որ մեզ էլ յաղթեց:

— Թո՛ղ մի քիչ յաղթւած լինինք, մեր գործին չվնասելու համար:

— Ո՛չ, ասաց Ոսկանը, այնպէս բան խորհեցէք, որ ոչ թատրոնի ներկայացումները խանգարեն, ոչ էլ վնասենք թատրոնի գոյութեանը: Ընտրենք այնպիսի նիւթեր, որ մենք էլ օգտուենք, ժողովուրդն էլ օգտուի, կառավարութիւնն էլ չարգիլէ մեզ:

— Այդպիսի բան չէ կարող լինել, ասաց Մախթիշեանը, թոյլ տրւած, ներկայացումները վնասակար են մեր ժողովրդին:

— Հայր Կոմիտաս, ասաց Էմրահը, սրանց խօսակցութիւնների մէջ ոչինչ չկա, ամէնը խօսում են արդար և իրաւացի: Քո այսօրւա վաշային պատմածներից ոչինչ չեն խօսում:

— Սպասիր, սպասիր, դեռ ժամանակը չէ.

— Գոնէ, մինչև հիմա շատ բարկութեամբ խօսեցին և ոչ մի կէտում ես չեմ նկատում վատ բան:

— Դեռ կա, վերջը կիմանաք:

— Տեսնենք, ասաց գլուխ շարժելով Էմրահը:

Երիտասարդները բորբոքւած խօսում էին չէին դադարում:

— Պարոններ, ասաց Ոսկանը, ես առաւօտը կը-

գնամ առաջնորդի մօտ, նա ինձ լսում է, նա իմ խօսքերս չարգում է, բոլորը կբացատրեմ և միասին կըգնանք Վալիի մօտ: Այնտեղ կխնդրենք, որ Միհրատին հեռացնէ և նրա տեղը մի ուրիշը նշանակէ, որ աշխատի թատրոնների առթիւ հրատարակած հրահանգը կէտ առ կէտ գործադրելու:

— Համաձայն ենք, համաձայն ենք, — գոռացին բոլորը աղմկելով ոտքի ելնելով:

Բըռը — մի մեծ թնդիւն բարձրացրեց ատամնաբոյժի կաթսան, պայթեցաւ և կտորները թռան այս ու այն կողմը: Խարխուլ տունը ժաժք ելաւ և «Վնյ, վնյ» աղաղակներ լսեցան մութ սենեակից:

Հայր Կամիտասը վերաւորել էր ձախ ուսից, կաթսայի արնոտ կտորը ընկել էր նրա կողքին: Էմրահը վախից թողեց փախաւ: Ամէն կողմից ժողովւորքը եկաւ խռնեց այրի Ալմաստի տան դռան առաջ:

Բարեբաղտաբար գործադիր ժողովի անդամներից ոչ ոքի վնաս չգրիպաւ և վախից դողալով ցրեցին:

— Առաւօտ չմոռանաս, Նշան, ասաց Ոսկանը, պիտի գնանք Վալիի մօտ:

ԺԳ

Խ Ո Ի Զ Ա Ր Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Ռուսերի ձայնը թէև մէկ երկու թաղում հազիւ լսեցաւ, բայց նույն գիշերը ողջ Կարինում խօսքը տարածւեցաւ: Ամէն մարդ մի կերպ էր բացատրաւ, ամէն կնիկ մի եղանակով պատմում:

— Տեսնիս, ան Ոսկան է, ինչ է, Ուռուսի մեջէն թռփ է բերել տւել և մտածել է քաղաքի վրա գիր/նշույլ շող տալ, ասում էր մի ծերուկ զլուխը ուր բեւով իւր հարեանին:

— Իմացել ես, ինչ է, ասում էր մի մօլլա, այս անհաւատները մեզի դէմ ոտք ելնել են ուզում: Սրանց կտրտելու է:

Այսպիսի խօսակցութիւններ շարունակուում էին մինչև լոյս գանազան թաղերում և տներում:

Առաւօտ շատ վաղ ստիկանները շրջապատեցին վեց ժողովականների տները, ոչ մարդ ներս էին թողնում և ոչ դուրս: Ոստիկանապետը իւր օգնականով, քննիչը, Վալիի քարտուղարը, երկու պատուաւոր քաղաքացիներով մտան Ոսկանի սենեակը: Ալմաստը սրանց տունը մտնելը տեսնելուն պէս թուլացաւ, գրնաց սէքիւն, ընկաւ կողինքի վրա, լացից ու վախից

մարեցաւ: Պահապանները դռներին լաւ հսկում էին: Երկու սենեակը մանրամասն քննելուց յետո, բոլոր թղթերը, նամակները և գրքերը ժողովեցին, վեր առան, արձանագրեցին ու տարան-գնացին: Երկու ոստիկան Ոսկանին առաջնորդեցին դէպի սէրայը, Ալմաստի տունն էլ խուզարկեցին, բայց բացի մի գրքից ոչինչ չգտան:

Այստեղից կարգով գնացին չորս մնացեալ անդամների տները խուզարկեցին և նրանց էլ տարան սէրայ: Բոլոր թղթերը, հաշւեցուցակները, նամակները, մուրհակները, *բոլոր* տարին դատարան: Աստուծոյ ունեցողների խանութներն էլ խուզարկեցին: Տօնօյին էլ բռնած բերին: Բոլոր յանցաւորներին ջոկ ջոկ բանտում նստեցրին, մինչև Վալիի պաշտօնատեղին գալը: Թէ ինչ գրութեան մէջ էին երէկւայ բարձր խօսողների սրտերը, աւելորդ է նկարագրել, ամէնը սաստիկ վերաւորւած էին և բողոքում էին այդ արարմունքի դէմ համարձակաբար:

Չուշացաւ Վալին, եկաւ, ժողովականների առաջ սկսեց քննութիւնը: Չոկ ջոկ քննեցան բոլոր կալանաւորները և ամէնին աթոռ տւին քովի սենեակում նստելու և սպասելու: Պղնձի պատմութիւնը բոլորի ծիծաղը շարժեց և ցաւեցին խեղճ հայր Կոմիտասի վրա, որ զոհ էր գնացել իւր լրտեսութեան: Էմրահը արդարութեամբ խօսեցաւ ամէն բան և նոյն ժամում արձակեցին բոլոր կալանաւորւածներին: Էմրահը Վալիի հաւատարիմ պաշտօնեաներից մինն էր, առանձին յան-

ձնարարութիւններ էր կատարում միշտ և նրան չը հաւատարու իրաւունք չունէին: Ներողութիւն խնդրելով արձակեցին անմիջապէս կալանաւորներին, հակառակ տէր Կոմիտասի պաշտպանների ցանկութեան:

Բայց մեծ յուզմունք և շփոթութիւն կար շուկայում, ամէն տեղ, ամէն տուն, ամէն խանութ ու խան այդ մասին էին խօսում: Գործադիր ժողովի անդամների ծնողներն ու հարազատները էլ անէծք չըմնաց, որ չթափէին թատրոնի և նրա մոգոնողի գլխին: Մի լաց, մի որոտում, մի շիւան էին գցել, որ մղկըտացքում էին աշխարհը: Բարեբախտաբար շուտ վերադարձան երիտասարդները և կտրեցին իրանց ծնողների լացն ու կոծը:

Թէ և արձակեցին և դադարեցաւ ամէն բան, բայց գործադիր ժողովի անդամները դադար չունեցան: Սրանց տանից տարած թղթերն ու գրքերը ամէն օր քննում ու առանձին առանձին կանչելով բացատրութիւն էին պահանջում: Մի օր Նշան Կարապետեանից հաշիւ պահանջեցին ընդհանուր մուտք ու ելքի մասին, որոնց առթիւ մաս-մաս թղթեր տարել էին Կարապետեանի տանից: Կարապետեանը յայտնեց, որ ընդամէնը 1878 թւականի սկզբից ունեցել են միայն իննսունը երկու ներկայացում, որից մօտաւորապէս հինգ հարիւր ոսկի մուտք ու ելք են ունեցել: Ներկայացրեց բոլոր ծախսերի տոմարները, մուտքերը վաւերաբացրած ընդհանուր ժողովներից և գործադիր ժողովի անդամներից:

— Հինգ հարիւր լիւր, ասացին բոլորը զարմանքով:

— Ինչի՞ չէք ասում հինգ հազար լիրա, նկատեց մի բարեհոգի մարդ: Ամէն ներկայացումից եթէ յիսուական ոսկի գար, հինգ հազարի ինչի՞ չալտի հասնէր:

Գումարները շփոթեցին շատ սրտեր և խուզարկութիւնները աւելի սաստկացան: Բայց շատ թղթեր հաստատեցին, որ իւրաքանչիւր ներկայացումի մուտքը տասը ոսկիից աւելի չէ եղել, շատ ներկայացումներ էլ երեք և չորս ոսկի են մուտք ունեցել: Բայց և այնպէս կասկածները բոլորովին չփարատեցան: Մի քանի նամակներ էլ գտան Կարապետեանի թղթերից, որոնք ծածկագրով էին գրւած, բոլորովին տարբեր նշաններով: Իրանք սիրահարական նամակներ էին, մի յայտնի օրիորդից գրւած Նշանին, որի անունը և նամակների բովանդակութիւնը յայտնելու անկարող էր սիրահարը: Ամբողջ օրերով զբաղւած էին գրանց բանալին գտնելու, մի բան հասկանալու, բայց հնարքը չգտան. Կարապետեան ասում էր.

— Չգիտեմ, իմս չէ, դա մեր տանից չէ կարելի, որ հանած լինէք:

Այդ բանը աւելի սաստկացրեց կասկածները:

Ոսկանի տանից տարել էին միայն գրքեր, տըպւած թղթեր հայերէն ու ֆրանսերէն լեզուներով: Բոլոր գրքերն ու թատերգութիւնները գրւած էին ճիզգիտների նենգաւոր արարմունքների պատմութիւնները: Մի օր ասաց Վալիի խորհրդականը.

— Այդ մարդը երևի ուրիշ գիրք չի կարգում, հիւլանդութիւն ունի միշտ ճիզգիտների մասին մտածելու:

— Իրանք թշնամական գրւածներ են, նկատեց հայկաթուղի տնդամներից մէկը, ձիզգիտները ամենասուրբ մարդիկ են:

— Հասած այս ֆրանսիացիները լիմար են, որ գրում են այս գրքերը:

— Նրանք ուրիշ նպատակով են գրել:

Բայց այդ գրւածքները չէին նեղացնում Ոսկանին, նա ուրիշ ցաւ ունէր, նրա տանից քառասուն-չիսուն ֆոտոգրաֆիական և վիճագրական պատկերներ էին տարել: Այս պատկերները երկար բարակ քննեցին ժողովականները. նրանցից միայն չորս-հինգին ճանաչեցին, որոնք կարնեցի երիտասարդներ էին: Մի օր կանչեցին ժողովի մէջ և սկսեցին այդ պատկերը մէկ-մէկ ցոյց տալ Ոսկանին և հարցնել, թէ ովքեր են:

— Դա, ասաց, Միքայել Նալբանդեանցի պատկերը ձեռքն առնելով, որի շուրջը գրւած էր «Ազատն Աստուած» երգը, — մի հայ բանաստեղծ է, որ այդ երգը երգել է:

Այս խօսքերից շատ բան չհասկացան քննիչները:

— Իսկ այս ով է, հարցրին մի ուրիշ պատկեր ներկայացնելով:

— Այդ էլ մեր Խաչատուր Գնունին է, որ ռուսների Արզուրում եկած ժամանակ ոստիկան էր, չիսովնիկի շորերն հագին նկարւել է և իւր հեղինակած ոտանավորն էլ շուրջը տպել է տել:

Գնունիին ճանաչում էին շատերը, ծիծաղելով վերջ տւին պատկերների քննութեանն էլ, բայց պատկեր-

ները դուրս չտուին, մնաց քննիչի արխիւում:  
 Կարապետի ջանին կրակ էին դառել ծածկազիր նամակները, այրում ու մրկում էր, եթէ բանային խեղճ աղջկայ գաղտնիքը, ինչ էր լինելու նորա գրութիւնը: Ոսկանի սիրուհուն՝ Կոստանցայի պատկերը, եթէ յայտնուէր, սրտի գործը կարող էր պարզել և խայտառակութիւն դուրս գալ:

Այս գործերի պատահած օրը Միւսիւ Սիմօնը երկու ծրարով նամակ յանձնեց պոստին տայսլըրած, անգորրագիրք փողկալի մէջ դնելով՝ հեռացաւ: Այս բանը նկատեց Ոսկանը, իմացաւ, թէ ո՞րտեղ էին ուղարկում նամակները: Ծրարները հասան տասն օրից իրանց հասցէին և Պէր - Ժիւզան կարգադրութիւններն արաւ: Գո՛ղ, սիրտը դո՛ղ: Ոսկանը վախից զողում էր, գիտէր, որ բարեգուշակ նամակներ չէին ուղարկւածները:

Բարեբաղդաբար Թիւրքիայի պոստերը համընթաց են, ութն օրւայ ճանապարհը տասուհինգ օրում հազիւ են գնում, գործակալներն էլ դանդաղաշարժ, մի ժամում գրւելիք թղթի համար, մի շաբաթ դեռ սպասում են խորհելով, թէ որ բարի ժամին սկսեն: Մի ամիս դեռ պատասխան պիտի չգար:

Օրերը մթնում ու լուսանում էին, երբեմն արևն էր բռնում հորիզօնը, երբեմն էլ լուսինը. բայց ընդհանրապէս խաւար էր պատել ողջ աշխարհին Ոսկանի համար: Նա տխուր էր, լուռ և մոլորած: Բըժժածի նման էր ման գալիս նոյնպէս Նշանը և փողոցներում բարեկամներին պատահելիս նրանց չբարեկուհամար անպատուում ու նախատուում էր: Անզգայացել

էին Տօնականը, Յարութիւնեանը, Մախաթիջեանը և Սարաֆեանը. ցնորածի շարժումներ ունէին և մեծ յանցաւորների նման ամաչում էին մարդու երես դուրս գալուց:

Նահապետական երկրում, ամենզ և բարեսիրտ երկրասարգների համար, որոնք պատիւ վաստակելու և բազաի հասնելու փափագներով տօչորում էին, աննկարագրելի ստորութիւն էր բանտի շեմքից ներս գլորւիլը: Մեռան նրանք հասարակութեան աչքում և մատաղահաս օրիորդների սրտում. ճշմարտութեան հետամտելու ոչ ոք չէր հետևիլ:

ԺԵ

Յ Ն Յ Ո Ւ Մ Ն

Կարինի շրջակայքը, Ս. Լուսաւորիչ կոչւած վանքի մօտ, մի բլուրից հանում էին կարմրագոյն քարեր, դաբրիտաները զարդարելու համար: Շատ հին էր երևում այդ հանքը և երկար գարեբում վարպետների ձեռքերը անդադար կտրել էին այդ տեղից անհիւնաքարեր ու տարել, զարդարել մեծ աների ճակատները: Կոպիտ ձեռքերը կռանով ու ծէրիով մի քիչ ուղղում ու բանեցնում էին պատերում: Բայց շատ հին շինութիւնների մէջ մաքուր, սրբատաշ անկիւնա-

քարեր կային, որոնք թէև հնացել էին, դարձեալ գետին չէին մնացել, ամէն մի նոր բնակարան կառուցանող վերցրել էր այդ քարերը, գետեղել իւր շէնքի մի անկիւնում: Լաւ նիւթ էր, եթէ Նւրսպական հրամուտ արհեստաւորների ձեռքն անցնէր, այդ քարերից հրաշքներ կստեղծէին և դրանցից շինւած քանդակները, զարդարանքներն ու արձանները « Լեզու կելլէին »:

Այդ քարահանքի երեսից էին բանում բոլոր բանւորները և ոչ ոք չէր լսել, որ նրա լատակը երբ և իցէ ծակած լինին քարհանները քար կտրելու համար: Հաջի Միրզա Մէհմէդ Ալի անունով մի պարսիկ, որ լաւ քարհան էր, ուզեցաւ ծակել սարը, միջից կամ տակից քարեր հանելու, որոնք աւելի գունաւոր և փափուկ էին կարծւում և այդ քարերից շինել մի քանդակաւոր շիրիմ մի նշանաւոր ուխտադնացի համար, որ Իսպահանից Մէկիէ ճանապարհորդելիս Արգուրում հանգել էր: Շատ աշխատեցաւ և բաւականին ծախսերի տակ ընկնելուց լետոյ, կտրեց ուզած չափովը մի քար: Երբ քարը այրից հանում էին, զորդիւնից ապուռաժը ցնցւեցաւ, իջաւ և եօթը բանւորներով տակը մնաց վարպետը:

Հաջի Միրզա Մէհմէդ Ալիի որդին, Մէշէդի Ղուլին, որ այդ ժամանակ վիժած ապուռաժի մօտ նստած էր, մի օտքը վիրաւորեց այդ քարերից զարկւելով: Ամբողջ երեք ամիս Ղուլին տանից չկարողացաւ դուրս գալ մինչև վերքի առողջանալը: Երկտասարդը մի սենեակ ունէր խուլ և սակաւ անցուղարձ անող փողոցներից մէկի վրա, որտեղ օրերով անտիրա-

կան ընկած էր: Առողջանալուց լետոյ նախ երկու, ապա մի փայտով ման էր գալիս, ժամանակ անցկացնում, տուն էր վերադառնում: Այդ անգործ օրերը շատ տխրութեամբ էր մթնեցնում Ալի-Ղուլին և մենակութիւնից սաստիկ նեղւում էր:

Մի օր Ղուլիի սենեակի դրան առաջից անցաւ մի աղբատ և համեստ աղջիկ. տասն չորս կամ տասն հինգ տարեկան, գեղանի և աննման: Աղջիկը որբ էր, հայր չունէր, բայց զթառատ, թշառ մի մայր ունէր, որ տարիներով լաց էր եղել իւր անողոք բազալի վրա: Բազմատանջ մայրը առաւօտից մինչև իրիկուն դռնից դուռ լացք էր անում կամ խմոր հունցում, որպէս զի կարողանար մի կտոր հաց հասցնել որբին: Նա քիչ ժամանակ չէր, որ տանջւում էր այդ տառապանքներով և հետզհետէ աւելի դառնանում էր վիճակը: Բայց սիրասուն աղջկայ համար դիմանում էր ամէն նեղութեան: Անընդհատ մտածում էր, օր առաջ կապել նորան մի ժրաջան մարդու հետ և մուրազին հոսցնել, որպէսզի հանգիստ սրտով աչքը խփէ լաւիտեանական ճանապարհը բռնելիս:

Անմեղ էր որբը, անբիծ և անխոց: Միայն իւր մօրն էն ճանաչում, նորա անչափ սէրն ու գգւանքը վայելում և նորա անվերջ վշտերին հոգւով մասնակցում: Վօրը անարատ կաթովն էր սնել, նորա ժրաջան օրինակով կրթւել, նորա համբերութեանը վարժւել: Սիրում էր մօրը իւր բոլոր սրտովը, նորա համար կեանքը տալու պատրաստ էր, մօրից ջուկ աշխարհի երեսին մի հարազատ բարեկամ և անկեղծ վշտակից կամ ուրախակից չունէր: Նմանում էր այն անթառամ

Ճաղկին, որ լերնի ժայռի մի բուռը հողի մէջ աճել էր, արմատի կակուղ, պարարտացուցիչ հողից զատ ապա-  
ռաժներ էր երևակայում շուրջի բոլոր տարածութիւն-  
ները: Կարծր սրտերով շրջապատուած էր կոյսը աշխար-  
հի երեսին. հանդիստը և խաղաղութիւնը գտել էր մի-  
այն այն ուտիկի վրա, որ աճել էր իւր մօր քաղցր սըր-  
տից:

Շուշան էր անունը. նման այն սպիտակ ու  
քնքշիկ ճաղկին, որ աճում է հովիտների և ձորերի  
լատակում: Սպիտակ էր մօրթով Շուշանը՝ շուշանի նը-  
ման, այսերը վարվումն՝ վարդ ճաղկի նման, խոշոր ու  
ցուլուն աչքերը՝ սև սաթի նման, կամար ու խիտ ունքերը՝  
թաւիշի նման, նուրբ ու ողորկ քիթը՝ նկարուած պատ-  
կերի նման, փափրիկ ու փոքրիկ շրթունքները՝ նռան  
հատիկների նման, ստիտակ ատամները՝ մարգարտի նը-  
ման, լայն ու թափանցիկ ճակատը՝ հայելու նման, սև  
մազերը՝ երկար, խիտ փայլուն մետաքսի նման, երկար  
վիզը՝ չղկած փղոսկրի նման, բարձր բոյը՝ չինարի նը-  
ման, լայն կուրծքը՝ խորանի նման, ուռած, ցցւած  
ստինքները՝ հասած դեղձի նման, դիւրաշարժ բազուկ-  
ները՝ եղջերւի տոտիկների նման, փոքրիկ կակուղի ձեռ-  
քերը՝ կոկոն ճաղկի նման և համեստ քայլերը՝ թա-  
ղուհու նման: Որքան որ աղքատ և խեղճ շորերի մէջն  
էր պատած Շուշանն, այնքան հարուստ և զեղեցիկ  
զարգարուած էր բնութիւնից: Հասկա ազնիւ սիրտը, վեհ  
հոգին, ժրաջանութիւնը, ափսոս որ արտաքին փայլով  
բարձր շէնքերը կուրացնում էին շատերի աչքերը, ո-  
րոնք խոնարհւելու անընդունակ դառնալով, չէին նկա-  
տում խրճիթում թագնուած այս անգին գանձը: Գանձ,

որի բուրումը անվերջանալի հարստութիւններով ճոխաց-  
նում է սիրահարի սիրտը: Ոչ ոք ողջ քաղաքում չէր  
նկատում այդ գոհարը, միայն Սիսակ Սարաֆեանը պատ-  
րաստում էր տիրելու այդ գանձին:

Սիսակը շատ հեռու չէր ապրում հացթուխ Գա-  
րանենց տանից և անական դրկցութիւն կատարում  
էին Շուշանենք Սարաֆենց հետ: Շատ անգամ Սիսակի  
մայրը, Շուշանի մօր Գարանի հետ իրանց պատի քովի  
քարէ նստարանի վրա նստած թէչիկով թել էին մա-  
նում խօսակցելով: Շուշանը փոքր ժամանակ շատ էր  
գնացել Սարաֆենց տունը, բայց այդ վերջին տարին  
ոտը կտրել էր: Երբեմն երբեմն եթէ կարիք լինէր  
մօրը կանչելու, զգուշութեամբ իրանց դուռը բաց ա-  
նում և այնքան էր սպասում, մինչև մօրը երեսը  
շուռ տալը իրանց դռան կողմը: Այդ ժամանակ նշաննե-  
րով հասկացնում էր ամէն բան: Այդպէս էլ պատու-  
հեց մի օր:

— Գնամ, տեսնեմ էլի ինչ ունի ասելու Շու-  
շանս, ասաց Գարանը Էրան արևային, կանչւեցայ:

— Աղջի ո՛ւր. ինչի՞ շտապեցար, խօսում էինք:

— Կեսուրս կանչեց. չը տեսնո՞ւ:

— Աղջի, Շուշան, արի տեսնեմ, արի քովս, ինչ  
շուռ շուռ կանչում ես մօրդ, չես կարող ինքդ գալ և  
ասելիքդ լայտնել:

Շուշանը համեստութեամբ մի քիչ ներս քաշ-  
ւեց և պատասխան չուեց:

— Շուշան, Շուշան, ախար, աղջիկ, քեզ, ո՞ր  
կանչում եմ, իմացի՞ր:

Շուշանը կարմրեց և դուրս գալով փողոց, հա-

մեստ քաղերով մօտեցաւ և Էրան արլալի ձեռքը պագեց: Սա էլ քաշեց ճակատն ու աչքերը պաշեց, ասելով:

— Գետինը մտնես, աղջի, ինչ ես տուն մըտնում ու ճգնում, դուրս ինչի չես գալիս: Բէմուրսիգ, տես, տես ինչ լցւել ու խոշորցել է:

Շուշանը կարմրեցաւ և ողջ մարմնով ցնցեցաւ: Գարանի ետեից գողալով վագեց, զնաց տուն և սրտի սաստիկ բաբախելուց քիչ էր մնում շունչը կրտրել:

— Երնէկ էն տան, որ քեզ հարօ են տանելու, ջանիկս, ասաց ետեից Էրան արլան և աչքերը Գարանենց դռան յառած՝ պաղեցաւ մնաց:

Էրանի մտքիցը անցնում էր շատ բան և ավստում էր, որ վաղուց չէր մտածել դորա վրա:

— Ա՛խ, ասում էր, կոյր էի, կոյր: Գռանս առաջ, քթիս տակը, հասել է վարդն ու մանիշակը, ես մտքով թաղից թաղ ընկել աղջիկ եմ վնտրում: Էս ինչքան անմտութիւն է: Բայց մեղքը իմս չէ, տղաս մի միչ մեծ մեծ մարդոց հետ նստում, կանգնում է, ուսում ունի, անուն ունի, ինչ գիտենամ, որ էգքան հոգւով խոնարհի ու լացք անող, հաց եփող Գարանի աղջկանն առնի: Ո՞ւմ աղջկայ անունն որ տալիս էի, վրաս գուռում էր, թէ նա իւր լայնը չէ, վախիցս մոլորւել էի, ինչպէս ես Շուշանին առաջարկէի: Ստեղծողիդ դուրբանն, վախենում էի, թէ մի *անարուո* հարսի պատահեմ, գառնութիւնով անց կացնեմ վերջին օրերս էլ: Բայց Աստուած ինձ խնայեց: Սիսակիս շտապեցնեմ նշան տանենք, Ս. Խաչին տուն բերենք, ա-

գաուենք: Մօրս քաղցր աչքը վրաս է, որ բաղդը...

Սիսակը վաղուց հաւնել էր Շուշանին, բայց միայն ինքը իւր մէջ և այդ մտքով տանջւել էր երեք տարի: Իւր ծանօթների խօսակցութիւնից ու բանասանքներից հեռու մնալու համար, իւր մէջն ուղեցել էր ծածկել այս գիտաւորութիւնը, որ չը լինի թէ մի անտեղութիւն կամ արգելք էլ պատահի: Ազգատութիւնը նա մի պակասութիւն չէր համարում, բայց տեսել էր Շուշանի փոքրութիւնը, յաճախ մօրը հետ սրանրա տունը հացի ու լացքի գնալը, կասկածում էր, որ գրանք զուրէ վատ ազդեցութիւն գործած լինին նորա հոգու վրա. այս պատճառով երկարացրել էր իւր մտածութիւնների ժամանակամիջոցը: Շուշանն էլ գեռ փոքր էր այն ժամանակ: Բայց որքան մեծացաւ Շուշանը, այնքան գեղեցկացաւ, այնքան զւարթացաւ և այնքան աւել գրաւեց Սիսակի սիրտը: Սիսակի աչքերում համեստութեան ամենակատարեալ տիպարն էր երևում Շուշանը: Սիսակը մոռացաւ ամէն հանգամանք և սիրեց կուրաբար: Սարաֆեանը չսխալեցաւ:

Ամենաշերմ սիրով սիրում էր Սիսակը իւր ընտրածին և մի օր լոյս ցերեկով զգուշութեամբ մտաւ Գարանենց տունը և յայտնեց մօրն ու աղջկանը այդ բանը: Մայրը կասկածեցաւ, բայց լետո աղջկա տւած բացատրութիւններիցն համոզւեցաւ ու խօսք տւեց ասելով:

— Սիսակ ջան, դու հայր չունիս, Շուշանն էլ չունի: Ինչպէս ինձ ես առաջ հարցնում և խնդրում աղջկանս ձեռքը, ես աղաչում եմ, որ գնաս, ամէնից առաջ մօրդ խնդրես, նա քու խօսքդ կլսի: Շուշանը

քեզ մատաղ, ես էլ քու մօրը, դնա՛, օրհնութիւնն ա՛ռ,  
ապրա արի՛, տա՛ր:

Այդ իրիկունը տանը յայտնել էր Սիսակը իւր  
կամքը մօրը և խորհուրդ էին արել Վարդավառին նը-  
շան դնել: Հետեւեալ օրն էր, որ Էբան տբլան հեռ-  
ւից խօսք բացեց Գարանին այդ մասին և սլագեց Շու-  
շանի ճակատը: Սիսակը վայելում էր ամէն օր Շուշա-  
նի սէրը, ժամերով խօսում, խօսակցում և ջերմ համ-  
բոլրներով բաժանուում էին, հետեւեալ օրը ևս տեսնե-  
լու խոստումով: Ութ տասն օր չէր անցել այս ու-  
րախ տեսակցութիւններից, երբ Շուշանը անցաւ կաղ  
պարսկի դռան առաջից:

Ղուլին սարան տեսնելիս մի չար խորհուրդ  
անցաւ մտքից, որը անմիջապէս գործագրեց: Վրայի ա-  
բէն գցեց Շուշանի գլխին և փաթաթելով ներս քա-  
շեց բռնութեամբ աղջկան: Տարաբաղբաբար անց ու  
դարձ անող չկար և այդ փողոցի վրա ոչ ոք լուսա-  
մուտ չունէր, որ նկատէր չարագործութիւնը: Չորս  
հինգ տուն չկար չարագործի և Սարաֆեանցի տան  
մէջ:

Գարանը զարմացաւ Շուշանի ուշանալու վրա:  
Նա այդքան ոչ մի տեղ չէ մնացել, ասաց ինքն իրան,  
ահա զանգերը տւին, այս ինչի՛ չեկաւ: Սխար հիմի ո՛ր  
որ է, Սիսակն էլ կգայ: Տեսնես էլի ի՛նչ ձութ ու  
փիս եղաւ Մարգարիտն ու այսքան սլահեց: Շուշանը  
զնացել էր իրանց մի ուրիշ հարեանի տուն, ընկերու-  
հու մօտ, որը նույնպէս նշանւելու վրա էր, Սիսակի մի  
ուրիշ ընկերոջ հետ, ապագա հարսնացուներն էլ ըն-  
կերակից էին իրար հետ:

Բայց նախիրը գալուց յետո էլի չերևեցաւ  
Շուշանը

Գարանը գլխին չորս ծալ գցեց էհրամբ,  
գնաց կանչելու Շուշանին: Մարջանենց տանը — չկայ,  
սլատասխանեցին, Աղաւնոնց տանը — չէ գնացել, Մար-  
թան, — այսօր չէ տեսել: — Աստած իմ, ո՛ւր պիտի  
գնացած լինի, ասաց և ծնկներին զարկեց Գարանը:  
Կրկին գնաց Մարջանի մօտ սրտատրոփ և հարցրեց  
Մարջանից, որ երբ է դուրս եկել:

— Գարան արլա, էս օր եկաւ ու յետ կռնկի  
դարձաւ, ասաց Մարջանը:

— Աման, Աստու սիրու, աղջիկս, աղջիկս, ա-  
սաց և շէմի վրա ընկաւ.

Մութը կոխել էլ և Սիսակը տան դուռը կող-  
պած գտնելով, նա էլ ետ էր եկել դրկեցների տանը  
փնտռելու սիրեկանին ու մօրը: Սիսակը մարած և այ-  
լայլած տեսաւ զոքանչին, էլ առանց այլևայլի վեր ա-  
ռաւ, շալկեց ու տարաւ տուն: Դրացիները մինչև ջը-  
րով ու քացախով ուշքի բերին Գարանին, Սիսակը քա-  
ռասուն դուռ հարց ու փորձ արաւ և ամէն տեղ քըն-  
նեց ու զննեց: Չգտաւ Շուշանին, չկար ու չկար:

Սիսակի դագարումը կորաւ, չէր իմանում, թէ  
ինչ էր անում:

Առանց քաշուելու, առանց վախի, առանց սլատ-  
շաճաւոր ձևերի մտնում էր ամէն տուն, փնտռում,  
քրքրում, ծակ ու ճեղ անում և դուրս էր գալիս: Ուզում  
էր լալ, լացը չէր գալիս, արտասուքը չէր հոսում:  
Սաստիկ տաքութիւնից այրում էր. քրտինքը հոսում  
էր ճակատից, ֆասը սևեցել էր և շապիկն ու շորերը

թրջւել էին: Ել բողոքովին յուսահատ, աչքերը արիւնով լցւած, ոչ ոքի չէր ճանաչում, ոչ մի ձայն չէր լսում, ընկել էր մօտակալ մահամեղականների տները և հակառակ նամէհրէմական կարգերի՝ մտնում էր ամէն սենեակ Շուշանին գտնելու յոյսով: Շատերը ցաւում էին թշւառի վրա, ներում յանցանքն, շատերը վախից՝ ձայն չէին կարողանում հանել, շատերը խելառած համարելով՝ զգուշանում էին վրդովելուց, շատերն էլ անզլծաբար հայհայում, ծեծում և դուրս անում: Բայց Սիսակը առիւծ էր դարձել և ամէն տեղ իւր կամքը կատարում, փնտռում, քննում, վրան յարձակողներին էլ դիմագրում ու այնպէս էլ դուրս դալի:

Ոսկանը իմացաւ Սիսակի դրութիւնը, գնաց Նըշան Կարապետեանին և Գրիգոր Յարութիւնեանին հետն առաւ, եկաւ ընկերոջն օգնութեան: Սիսակը չըլտեց ընկերներին և մինչև առաւօտ նրանց էլ սպիտից իւր հետ ման գալու կորցրած հրէշտակին, կեանքի ապաւէն Շուշանին: Ոստիկանութիւնը ամէն միջոց գործ զրեց, խուզարկեց տղերանց հետ ամէն տեսակ կասկածելի տներ: Բայց ո՛ւմ մտքից կարող էր անցնել, որ Շուշանը Սիսակենց տանից քիչ հեռու անել փողոցում պարսկի սենեակումն էր գտնուում կալանաւորւած, առևանգւած, բռնաբարւած, լլկւած, կապկալւած և խեղդւած: Պարսիկը փողոցներում անց ու դարձը տեսել, աղմուկն ու փոթորիկը լսել էր, գլուխը ազատելու համար խեղճ Շուշանին խեղդել, տան դուռը փակելով, երկու փայտերի օգնութեամբ գնացել և «Գէօլին գլուխը, Աջամների խանը սլահւել էր: Հետևեալ առաւօտ ոստիկանութիւնը Սիսակենց դրացիների բոլոր

տները քննելիս, բացեց պարսկի սենեակը, Շուշանի դին դուռ խտրում փաթաթւած և անկիւնում պառկեցրած:

ԺԶ

Բ Ո Ր Յ Ո Ք Ո Ւ Մ Ն

Նոյն գիշերը ողջ Կարինը մեծ ցաւի մէջ էր, նոյն գիշերը շատ աչքեր չխփւեցան, շատ սրտեր չհահագեցին և շատ մտքեր չզագարեցին: Վալիից սկըսած մինչև փողոցի մշակը, «աւարա» մարդը այդ բանի վրա էին մտածում. ծեր ու տղա, սղջիկ թէ կնիկ ու պառաւ, վշտակցում էին Գարանին: Ոչ ոք չէր կարողանում մի որոշ եզրակացութեան գալ այս մասին: Կն ժամանակը չէր և էն տեղը չէր, որ քառասուն հայի գլուխը, մի հաւի գլխից պակաս արժէր: Քրիստոնեաներին՝ բռնակալութիւնից ազատող պատերազմը նոր էր դադարել, Կարինը մի անյայտ անկիւն չէր Օսմանեան պետութեան մէջ. չորս հինգ կոնսուլներ նստած էին, դատում թուրքերի խոստացած և չկատարւած բարենորոգումները: Կարնեցիք արդէն երես առած անվախ ու ազատ գրում էին Կ. Պոլիս և Եւրոպա զանազան լրագրներին, խմբագրներին և զվանադէտներին իրանց ցաւերը: Լաւ բան չէր կարելի երևակայել և խուլ դղրդիւններ ու վատ հոտեր էին հասնում Վալիի ականջին ու քթին:

Առաւօտ զայնօր, մէջխանայ, խան ու խանութ, գործատուն և արհեստատուն, զօրանոցում և սարայում, ամէն կողմ այս մասին էին խօսում: Մի քանի հեռագիրներ ուղարկեցան Եւրոպա, մի քանի ծրարներ յանձնեցան սլոստին և մի քանի ծրարներ էլ գաղտնի գետեղեցան Եւրոպայի կոնսուլներին կանցելարների պատեաններում: Ամէն կողմ խումբ խումբ զետեղած՝ այս քանի մասին էին խօսում. ամէն ժողովքում զանազան կարծիքներ յայտնում և վճիռներ արձակում: Թիւրքերը զող կատարեցին նման աչքի ծայրով դիտում էին հայերին ու հեռանում և ոտիկանութիւնը ազատ չէր կարողանում խօսել և ոչ մի ամենաստորին արհեստաւորի հետ:

Յանկարծ ձայն բարձրացաւ, թէ կաղ Աջամն է տարել Նուշանին, լլկել ու խեղդել: Մէկ էլ տեսնես փակեցան բոլոր հայերի խանութները և ամէն մարդ մի փայտ, մի դաւազան, մի դամա, մի դանակ ձեռքը վազեց «Գէօլի-գլուխը»: Բոլոր պարսիկները քաշեցան իրանց խանը, դուռը փակելու չհասան, ահա ներս խուժեց ամբօխը կատաղաբար չարագործը սահանջելով: Պարսիկները դաշոյնով, ռէւոլւերով և սրով, հայերը խեղճ թորթումցիներին սալով բերած ցախերից մի մի հատ ձերքերն առած՝ յարձակեցան խանի վրան: Բասն, երեսուն հօգի երկու կողմից վիրաւորեցին, չորս հինգ մարդ մեռան, բայց աղմուկը աւելի բորբոքեց: Զայնը հասաւ քաղաքի ամէն ծայրը և ահա մի քանի վերստ հեռաւորութիւնից ամէն հայ մի փայտ ձեռքը վազեց դէպի խռովութեան տեղը: — «Տւին, զարկին, ջարդեցին, մեռաւ, ընկաւ» — էին զօռում, բայց մարդ չէր իմա-

նում, թէ ո՞վ տուց, ո՞վ կերաւ, ո՞ւմ են զարկում և ինչի: Կատաղութիւնն ու աղմուկը այնքան սաստկացաւ, որ մի բաց դուռ, մի բաց խանութ չմնաց քաղաքում: Զարմանալի էր թուրքերի գրութիւնը. դողում էին, սարսափում էին:

Պարսիկները յաջողեցան իրանց խանի դուռը փակելու, բայց Հայերը կարողացան կտորել, բանալ թէև իրանց վրա աժան չնստաւ, հինգ տասը մարդ վիրաւորեց և մի զոչաղ աղայ ընկաւ կիսաշունչ: Անը տակն ու վրա արին, բայց չարագործը չգտան, պարսիկները դողում էին և կարծում էին, որ աւարի կրդնայ իրանց կարողութիւնը, բայց հայերի աչքում նշանակութիւն չունէր նրանց կայքը, ոճրագործն էին որանում, որպէս զի հասարակական դատաստանով կարրտէին: Փողոցներում պարսիկ չէր երևում և երևան եկողի ողջ տեղն ականջն էր մնում: Ամբօխը կատաղել էր և պատրաստ էր ամէն բան անելու: Տեսնելու արժանի էր խեղճ ոտիկանութեան գրութիւն, այդ ժամում թշուառները շարժւել չէին կարողանում: Խնդրում էին, աղաչում էին, ով էր լսում: Բարեբաղդաբար Վալին կանխօրէն զօրքերի հրամանատարին թուղթ էր ուղարկել միշտ պատրաստ մնալու և առաջի հրամանին շարժւելու: Առովութիւնից կէս ժամ չանցած, զօրքերը երևեցին փողոցներում. բայց զօրքին անց ու դարձի տեղ չկար: Բռնութիւն և ոյժ գործադրեցան, բայց հնարք չեղաւ, որմէկին զլուխ ելնէին: Բացի այս փողոցում հասարակութիւնը խուռն կանգնած էր, հայ, թուրք իրար հետ էին և ամէն ազգ հայհայում էր. ով պատճառ էր եղել այս փոթորկին:

Զօրականները իրանց կանոնների համաձայն կարգը պահպանելու պարտաւոր էին, այդ պատճառով անճարացած կապեցին ճանապարհներն և անց ու դարձը, հաղորդակցութիւնը դադարեցրին: Դժւար էր հասարակութեան համար կանգնել մի փոքրցում և համբերել, որի միւս կողմը եղբայրը կամ որդին մեռնում էր կամ վիրաւորւում: Որը խնդիրքով, որը խորամանկութիւնով և որն էլ ուժով անցնում էին զօրքերի այդ պարտւից: Շիփթութիւնը քանի դնում սաստկանում էր և շատերը իրանց նպատակին հասնելու համար հօգից շինւած հարթ երթիկներից էին դնում: Զօրքերը աշխատեցին և այս հաղորդակցութիւնը դադարեցնել:

Այդ միջոցին Նշանը և նրա վանեցի ընկեր Սոսրովը մի քանի փոքրցներ անցնելով դուրս եկան քաղաքից և եկեղեցու գերեզմանատան պարսպից ներս անցնելով ուզում էին մտնել եկեղեցու հայաթը: Մեծ հայաթը մտնելու համար մի նեղ փողոց անցնելու էին: Երկու զօրք այս անցքը պահպանում էին: Որքան խընդրեցին, հնարք չգտան համոզելու: Վանցին քաշեց մէկի ձեռքից, հրացանը խլեց և երբ երկրորդը պատրաստուում էր արձակելու հրացանը Սոսրովի վրա, Նշանը գաշոյնը կոխեց փորը, այնպէս որ բոլորական արագութեամբ գլորւեց խեղճ զինւորը: Սոսրովը չուզեց ետ մնալ և խլած հրացանի ծալրի սւինը կոխեց միւսի կուրծքը և զցեց նրան էլ ոտքերի տակ: Հենց այդ տեղից անցնում էր մի փոքրիկ առակ, և գերեզմանատան միջից անցնելով գնում բոստանները, երկուսի զիական էլ առուն գլորեցին և հրացանները գերեզմանաքարերի միջոցներում պահեցին, մտան եկեղեցու գա-

ւթի՞քը և բարձրացան առաջնորդարանի վերին յարկը: Առաջնորդարանի լուսամուտներից երևում էին փողոցներն ու հրապարակները: Նշանն ու Սոսրովը լուսամուտից դողդողալով նայում էին եռացող ամբօխի վրա և բարկութիւններիցը կատաղում էին: Զօրքը արգիլել էր բոլոր անցքերը, առաջ գնալու և կամ ետ գալու միջոց չէր տալիս խուժանին: Բարեբախտաբար առաջնորդը Սէրայում էր և Առաջնորդարանում միայն մի կամ երկու տէրտէրներ կային: Նշանի սիրտը չհամբերեց, լուսամուտը նրան բաւականութիւն չէր տալիս, բարձրացաւ Առաջնորդարանի երթիկը և սկսեց դիտել «Գէօլի-գլխի» հրապարակի անցքերը: Անհամար մարդիկը գննում և նրանց մէջ պտրում էր սիրելիներին: Ահա աչքի աւաջ եկան Սիսակն ու Քրիզօրը զամաները ձեռները տասնից աւելի պարսիկների գէմ: Երկու կողմերն էլ վիրաւորւած էին և բոլորի շորերը արիւնով ներկւած: Պարսիկները բոլորն էլ սուր խէնջար ունէին, բայց Սիսակին ու Քրիզօրին օգնող հայերի ձեռքերում միայն հաստ ու երկար փայտեր էին երևում: Տեսան թէ ինչպէս մի մահակի հարւածով կօշկակարի մէկը գետին տապալեց մի մքրգավաճառ պարսիկի, թէ ինչպէս Սիսակը զաման կոխեց մի ուրիշի ազգը: Քրիզօրը կտրեց մի երրորդի թևը, մի պարսիկ վիրաւորեց մի հայ բէագագի՝ կռնակից, մի ուրիշը մի էթթարի՝ վզիցը: Բայց մեծ բաւականութիւն զգաց Նշանը տեսնելով ընկերին՝ ատաղճագործ Վահանին, որը երկու ձեռքով բռնեց մի չաչի պարսիկի ձեռի խանչարը և թէև կտրուեցաւ և արիւնլա եղաւ ձեռքերը, բայց պարսկից խլեց և այդ գաշոյնով Ա Լ Մ Ա Ս Տ

նրան կրծքից խփեց ու գլորեց: Նշանի, համբերութիւնը հատաւ, ուզեց անպատճառ գնալ և հասնել ընկերներին՝ Սիսակի և Գրիգորի օգնութեան:

Սուրովը թողել փախել էր, վախիցը երկու երեք օր պահուելուց յետո՝ մի եւրոպացի կոնսիւլի հետ գնաց Վան ազատ շուկայ առնելու: Նշանը նրան լաւ էր ճանաչում և չգարմացաւ ո՛չ այն բոպէական քաջութեան և ո՛չ էլ երեխայական վախի ու փախուստի վրա: Հանեց գրպանից «շմիղի» վեց կրակահանի ուէտուէրը փորձեց, փէշի տակ դնելով՝ ուզեց դուրս գալ: Սանդուխների վերևի գլխին էր Նշանը կանգնած, բորբոքւած խօսում մի քանի ուրիշ երիտասարդների հետ: Յանկարծ ներքևից փողոցի դուռը բացւեցաւ, Կարինի եռապետ արաբներն ու Վալին երեցան: Հէնց որ բարձրանալու էին սանդուխից, խելառ Կարապետը մօտեցաւ և երկու խօսք փսփսաց Նշանի ականջին: Նրանը առանց այլևայլի արձակեց ուէտուէրից մի գընդակ դէպի առաստաղը՝ կանչելով.

—Մի պղծէք այս սուրբ յարկը:

Պայթումի ձայնից լեղապատառ ետ դարձան եռապետները: Վալին մի ժամ շարունակ դողում էր ամբողջ մարմնով: Կարինի հայոց բարեսիրտ էֆէնդիներից մինը վազեց ներս, որ ջուր և աթոռ տանէ դուրս գլխաւոր նահանգապետին և նրա վախեցած խորհրդականներին: Եռապետների ուտելիք ծեծը տղերքը տւին երիտասարդ էֆէնդիին, որը հազիւ կարողացաւ գլուխն ազատել ու դուրս փախչել: Մագազիններից մինը բացին և երեք չորս աթոռ հանելով դրին առաջնորդարանի դրսի դռանը, փողոցում, որտեղ նստեցին Վալին

և եռապետները լսելու ժողովրդի գանգատը:

Ժողովուրդը գոռում գոչումով պահանջում էր անմիջապէս արդար դատաստան և ուզում էր անպատճառ տեսնել չարագործը, թէ լիրձի բռնւած էր թէ կարողացել էր փախչել: Վալին իմացրեց, որ օճրագործը կալանաւորւած էր և շուտով դատաստանը պիտի վրձուէր: Բայց լոկ խօսքերը և հայ էֆէնդիների վկայութիւնները ու հաստատութիւնները չէին համոզում թերահաւատ ամբօխին: Ամէն կողմից գոռում գոչում էին. — Կտրտել էդ աջամին, փշուր փշուր անել: Անմիջապէս և իր ձեռքով ուզում էր ամբօխը պատժել չարագործին:

Եթէ մի թրքահայատակ անձնաւորութիւն լինէր մեղաւորը, կամ քրիստոնեա, գուցէ Վալին ուրիշ չարութիւնների առաջն առնելու համար՝ զիջանէր ժողովրդեան պահանջին և հեռագրով Սուլթանից օճրագործի կախելու հրամանը անմիջապէս բերել տար, բայց Շահի հպատակին հեշտ չէր առանց օրինական քննութեան պատժի ենթարկել, մանաւանդ որ «շահ -բէնդէ-րը» պաշտպանում էր իր հպատակին: Ամբօխը ցրելու ոչ մի միջոց չէր գտնում Սուլթանի փոխանորդը և հրացանի գնդակ շող տալու էլ ո՛չ կամք ունէր, ո՛չ էլ իրաւունք ու հրաման: Յանկացաւ երկու փաղաքշական խօսքով գրաւել խուժանին և ցրել:

—Որդիներս, ասաց նա—միթէ չէք հաւատում, չէք վստահանում թէ չարագործը արդէն մեր ձեռքումն է: Ես ձեզ խօսք եմ տալիս, առաւօտ Իդարէի ժողովականների ներկայութեամբ անձամբ քննել տալ գործը և երկու օրից լանձնել քրէհական ատեանին, որտեղից

անմիջապէս արդար պատիժը կստանա մեղաւորը: Գուք անհոգ կացէք, քաշւեցէք, գնացէք ձեր գործին, կառավարութիւնը ինքն է չարագործի դատախազը և օրինաւոր պատիժը ստանալու է ձեր սիրտը բորբոքող ոճրագործը: Հեռացէք, հանդարտւեցէք և բացէք ձեր արհեստանոցները, շարունակեցէք ձեր գործերը ու երկու օրից արիք ինձ մօտ՝ Սէրայը արդար վճիռն իմանալու:

—Սըսմը, չարագործն ենք ուզում տեսնել, գոռացին ամեն կողմից:

—Ասացի բանտումն է, ինչի՞ չէք լսում խօսքերըս. ասաց Վալին, ձեռքի փոքրիկ բարալիկ գաւազանը շարժելով ժողովրդեան կողմը: Մի տասն և չորս տարեկան պատանի, որ սովոր չէր լսել մատը կամ փայտը թափ տւողի խօսքերը, արագութեամբ բռնեց ու քաշեց Վալիի ձեռքից ձեռնափայտը: Վալին կատաղեց բայց ինչ անէր. միայն անգէն ժողովականներն էին նրան շրջապատած:

—Սրան բռնեցէք. այս չարաճճին բռնեցէք, գոռաց զայրացած, բայց ամբոխը անյայտացրեց պատանուն էլ, ձեռնափայտն էլ:

Սրանից յետո Վալին լաւ հասկացաւ աննախանձելի կացութիւնը, հրամայեց անմիջապէս ճանապարհ բաց անել, և հեռացաւ:

Մեկնելուց առաջ կանչեց մօտը եռապետ արաբներին և պատւիրեց, որ աշխատեն ժողովրդեան համոզել, խաղաղութեամբ տները դարձնել: Եռապետները կանչեցին ժողովրդին սիրելի անձնաւորութիւններից քսան-եռեսուն հոգի, խնդրեցին, յղաչեցին

աղերսեցին, որ զնան ու համոզեն ժողովուրդին, միամտեցնեն ու անկարգութիւններին վերջ տան: Այդ միջոցն էլ չօգնեց:

Վերջապէս ճարահատեալ ժողովրդի հաւատարմութիւնը վայելող չորս-հինգ մարդ ընտրւեց, գնացին բանտ, տեսան կաղ աջամին, եկան վստահեցրին ու ամբոխը ցրեցին:

Ժողովուրդը իրիկնադէմին, զանկերի ժամանակ քաշւեցաւ մի մի բրդուճ բան ուտելով, ընկաւ իր անկողինը, մի քիչ էլ մտածեց ու թմրեց: Քնեց ու մոռացաւ ամէն ցաւ... Առաւօտ ուղիղ իւր դործին, տան օրական հացի ետևը վագեց կեանքի ու կայքի պաշտպանութեան գործը թողնելով նախախնամութեան կարգաւորութեան. լուց և համբերութեամբ տարաւ էլի շատ ցաւ:

Ամէն բան կարծւեցաւ, թէ անցաւ, բայց ոչինչ չոչնչացաւ: Ժողովուրդը, թէև տառապում էր օր գիշեր օրապահիկի հոգսերով, բայց սրտից երբէք չէր հեռացնում նույնպէս անապահով վիճակի վտանգաւոր կացութիւնը: Ոչ կինն իրանն էր համարում, ո՛չ տղան ո՛չ աղջիկը, ո՛չ կայքը և ո՛չ կարողութիւնը:

Վալին էլ հանգստութիւն չունէր, նա էլ մտածում էր, որ ամէն օր և ամէն մի ժամ կարող էր կրկնւել մի այդպիսի վտանգաւոր անցք, որից կարող էին ծնւել, առաջ գալ ուրիշ աւելի սարսափելի և արիւնալի խռովութիւններ:

ԺԵ

Ե Ռ Ա Պ Ե Տ Ն Ե Ր Բ

Արգուրումի Վիլայէթը և Կարին քաղաքը այդ ժամանակները երեք մարդու բռի մէջ էր, որ կողմն ուզում էին, այն կողմը շուռ էին տալիս, ինչ ուզենում էին գլուխ էին բերում:

Երեքն էլ արաբ էին, կոչւում էր «Արաբ-օղլի» և զանազանելու համար ասում էին՝ Հայերի Արաբ օղլին կամ Յարուսթիւն էֆէնդին, Ֆրանգների Արաբ-օղլին կամ Միւսիւ Անտւանը և թուրքերի Արաբ-օղլին կամ Էօմէր էֆէնդին: Այս մարդիկն էին թագաւորում Վիլայէթում և Սուլթանի ներկայացուցիչ՝ Վալին սըրանց ձեռքի խաղալիքն էր: Ովքեր էին սրանք, ինչ մարդիկ, հարկաւոր է իմանալ: Յայտնի է, որ Կարապետ եպիսկոպոսը Պասկէիչի հետ ոտք հանեցին Կարինի բնիկ ժողովուրդը, որը գաղթեց Կովկաս և բնակեցաւ մեծ մասամբ Ալէքսանդրօպօլ, Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս, Լոռի և ուրիշ կոմեր: Բայց Կարինը մի այնպիսի կէտ չէր, որ դատարկ մնար, գաղթականների տեղը լցեց հինգ-տաս տարում: Արաբկերցի, Ակնցի, Բիթլիսցի, Մշեցի, Վանցի, Երզնկացի, Խարբերդցի, Բայբուրդցի, Խոտորջուրցի և այլնցի վաճառական և ար-

հետաւոր եկան լցեցին Կարինում. դեռ Կովկաս գաղթածներից ոմանք վերադարձան հայրենիք: Կարինը ստացաւ հին դիրքը, բայց մի տարբերութեամբ, որ առաջ հայերը չորս անգամ շատ էին թուրքերից, իսկ լետո թուրքերը հայերից կրկին անգամ շատացան:

Չէ կարելի չգուշակել այս զանազան տեղացի ժողովրդի իրար դէմ ունեցած հակակրօթիւնն ու անհամաձայնութիւնը, սրից օգտուում էին նրանք, որոնք չէին պատկանում և ոչ մի կուսակցութեանը, տեղացիութեան: Բնիկները միշտ ասում էին. — Էն օրը մնացինք, որ դուրս Մշեցիք մեզ իշխեն, միւֆլիւզ Բիթլիսցիք մեզ ղեկավարեն և համալ Վանեցիք մեր շալակն ելնեն: Մեծ կռիւ կար նախաթուրութեան համար սրանց բոլորի մէջ:

Այն մարդիկ, որոնք մնում էին առանձնացած՝ շողոքորթութեամբ, երկերեսութեամբ ու խորամանկութեամբ գրաւում էին կուսակցութիւններն և առաջ անցնում: Այսպիսի հանգամանքներից օգտուեցին երեք արաբներն էլ և տիրացան ժողովրդի ձեռքով նահանգին: Յարութիւն էֆէնդի Վարդանեանը մի արաբ մօրից և անլայտ հօրից Երուսաղէմում աշխարհք եկած անձնաւորութիւն էր, որի մայրը եօթը կամ ութը տարեկան հասակում տարել էր և գցել էր երեխահին Ս. Յակոբի վանքը, սրտեղից մանուկը տասն և չորս տարեկան հասակում թողել, փախել էր վարդապետների ձեռքից և գնացել մտել էր բողոքականների ուսումնարանը: Այդ տեղից էլ մի անդլիացի վաճառականի խնամքով գնացել Սկովտիա, Գլազգօ քաղաքը սւսանելու, որտեղից էլ փախել էր մի մեծ լանցանքի հա-

մար Նիւ-Յօրկ և չորս-հինգ տարի թափառել Միս-  
ցեալ Նահանգներում: Այդ կեանքից սաստիկ զզւելով  
և այդ երկրում փող վաստակելու յայսր կտրւելով՝ կըր-  
կին վերադարձել էր Երուսաղէմ: Այդ տեղից մի յայտ-  
նի հայ եպիսկոպոսից վեր էր առել յանձնարարա-  
կան կոնդակ և թափառել Թիւրքիայի զանազան քա-  
ղաքները ժողովարարութիւնով: Վերջապէս Բէհրուզովի  
կուրի ժամանակները եկել տեղաւորւել էր Կարին ու  
պարսպել շաքարի և եւրոպական թոււնդ խմիչքների  
առուտուրով:

Մեր կողմերում վաճառականութիւնը մի տե-  
սակ «չորչիւթիւն» է և աւելի լաւ ասած՝ «սուճար»  
է, կարող է կամ բնաւ առաջ չգնալ և մինչև անգամ  
կորցնել և կամ մէկին տասը վաստակել մի երկու, ե-  
րեք տարում: Արաբ-օղլի Յարութիւնը ճարպիկ, հաս-  
կացող և փորձեալ մարդ էր, նա երկու տարում (պէտք  
է չմոռանալ, որ պատերազմի ժամանակն էր) իւր ե-  
րեսուն կամ քառասուն ոսկու ոգորմութեամբ հաւա-  
քած դրամագլուխը հասցրեց հինգ հարիւր ոսկու:  
Պատերազմից յետո բաւականին դիրք ունեցող մի անձն  
եղաւ Կարինում: Վաճառականութիւնն էլ չէր տալիս  
այն օգուտները Յարութիւնին, ինչպէս որ էր պա-  
տերազմի շրջաններում. ուստի վճռեց թողնել այդ  
գործը: Խանութի գեւորիւկը ու ապրանքը ծախելով,  
սկսեց դրամագլուխը սրան նրան տոկոսով տալ: Փողը  
փոխ տալով բարեկամների, ծանօթների թիւն աւելցուց  
և սրանց շնորհիւ ու կուսակցութիւնների վէճերից  
օգտւելով, կարողացաւ վարչական ընտրութիւններին  
մասնակցել և ընտրելիներէ ցանկն անցնել: Մէկ երկու

տարի աշխատեցաւ այդ շրջանը ընկնելու համար:  
Բանն այն էր, որ անգործ մարդ էր հարկաւոր, որպէս-  
զի առաւօտից մինչև կէսօր, իրիկուն գնար, նստէր  
գիւանատները: Գործ էլ չուներ Յարութիւն էֆէնդին,  
նրանից յարմարը ո՞վ կարող էր լինել: Խելօք կարնեցի-  
ները իրար առաջանալը աչքերը չվերցնելով, իրանց ձեռ-  
քով Արաբ-օղլի Յարութիւն էֆէնդին տարին Վալիին  
ներկայացրին Իգարէի մէջլիսի անդամ, կամ գայլը դառ-  
ներին պահապան: Շատ ուշ իմացան կարնեցիք իրանց  
սխալը, բայց Յարութիւն էֆէնդին չորս-հինգ տարի  
ոտքին տեղ անելուց լետո, կոնակն ամրացուց և էլ  
սովորական քամիները նրան չկարողացան շարժել. ըն-  
տրողների գլխին ամէն տեսակ խաղ խաղաց: Յարու-  
թիւն էֆէնդին լաւ էր տիրապետում հայերէն, արաբ-  
երէն, թիւրքերէն, անգլիերէն, լեզուները և ազատ  
այս ազգիների հետ խօսելիս կարող էր պարծել օրտասա-  
նութիւննով և առագանութիւնով

Միւսիւ Անտուանը Յարութիւնի նման մի թա-  
փառական բաղտախնդիր էր, բայց յայտնի չէր թէ ին-  
չի՞ միւսիւ էր կոչուում: Ո՞ւմ որդին լինելը, ո՞րտեղ  
աշխարհք գալը, ինչ անձինքների ձեռքի տակ մեծա-  
նալը՝ զաղտնիք էր մթութեան մէջ, բայց ամէնին  
յայտնի ասում էր, որ ինքը ուսմունքը ստացել է Բէլ-  
րութի ճիզլիտների ուսումնարանում: Ճիզլիտների . .  
Խորհուրդաւոր մարդ էր Անտուանը և նրան թափան-  
ցել անկարելի էր: 1860 թւականներին Կ. Պոլսից եկել  
էր Կարին կառավարութեան դուռը մի փոքրիկ պաշ-  
տօնով և հետզհետէ բարձրացել: Նա բաւական չէր  
դունից ստացած թոշակով, առևտուր էլ էր անում: Բա-

զարուժմ մի գրասենեակ ունէր և Եւրոպայից զանազան ապրանք էր բերել տալիս Կարնեցի վաճառականների համար, Կարնից զանազան հում նիւթեր էր ուղակում արեւմտեան գործարանները: Ոսկին ծովի նման էր գրասենեակում, առևտուրը անչափ: Կա երբեմն երբեմն դնում էր կաթոլիկների եկեղեցին, որտեղից կարելի է գուշակել, թէ ինքը Հռոմէական էր, բայց ապրում էր մի Լուսաւորչական հայ կնոջ հետ և աւելի շատ գործ ունէր հայերի մէջ: Կաթոլիկ հայերն էլ սրան էին ընտրել Յարութիւն էֆէնդիին ընկեր, որը լեզւի ճարտարութեամբ, ժրջանութեամբ ետ չէր մնալ ընկերակցից: Միւսիւ Անտանը լաւ գիտէր արաբերէն, թուրքերէն, ֆրանսերէն, անգլիերէն, գերմաներէն, լուսարէն և մի քիչ էլ հայերէն:

Էօմէր էֆէնդին նոյնպիսի ծագում ունէր և էտթարութիւնով էր առաջ եկել: Սկզբում 1857 թւականին ծանօթութիւն էր կազմել մի արաբացի պաշտօնէի հետ, որ Վալիի ժամանակաւոր քարտուղարն էր և նրանից լետո գալոյններին ցանցն էր գցել: Միջնորդութիւններով էր սկսել գործը և մինչև վերջը միջնորդի դեր կատարելով էր պարապել: Էօմէր էֆէնդին միայն լաւ թիւրքերէն և արաբերէն գիտէր, բայց իւր որդուն և աղջկանը ֆրանսերէն սովորեցրել էր, դաշնամուրի վարժուհի էր վարձել, որը տանն էր պարապում:

Երեքն հաւասար ընկերներ էին, միևնոյն մոլութեան տէր և միևնոյն նպատակին հետևող, գլխաւոր գործերն էր երկիրը և ժողովուրդը թալանել: Վիլայէթում եղած ամէն գործ, ամէն աճուրդ, ամէն վճիռ սրանց ձեռքի տակից էր անցնելու և ամէն կա-

պալում իրանց որոշ մասն ունէին: Վայ կապալառուին, եթէ օրին ու ժամանակին սրանց մասը չհասնէր, էլ չէր կարելի նկարագրել, թէ ինչ խաղեր չէին խաղալ խեղճի գլխին: Պէտք է իմանալ, որ Տաճկաստանում կապալները երաշխաւորութեամբ են տրուում և երաշխաւորների անձնաւորութիւնների, պարտաւորութիւնների, կարողութիւնների մասին պատասխանատու են նրան ընդունող ժողովի անդամները: Առանց անդամներից սկզբնական թուլտուութիւն ստանալու՝ ինչ երաշխաւոր կարելի էր ներկայացնել ժողովին: Վիլայէթի ամէն մի մուտքից քիչ թէ շատ սրանց մասը դուրս գալու էր:

Բայց ամէնից գլխաւոր բանը այն էր, որ Վիլայէթի ժողովներումն էին ընտրում Ղազանների Ղայմալամները, Միւղիբները, և Ղօլ-Միւղիբները (օգնականները): Ուղղակի եռապետների գրասենեակում նրանց մի հաւատարմատարի մօտ նշանակուում էր աճուրդ և ամէն մի բէգ, մի զրագետ էֆէնդի, զողի նման մտնում, աւելացնում էր պաշտօնի կապալագինը, նայելով զազայի կամ նահիէի եկամուտի աղբիւրների արժանաւորութեանը: Պէտք է աչքի առաջ ուենալ, որ Վալիի Մէքթուրջին (քարտուղարը) էլ նշանաւոր մասն ունէր այս դէպքերում: Խեղճ պաշտօնագուրկները իրանց տարւա և ամիսների ընթացքներում բուռ-բուռ, կամ գզալ-գզալ հաւաքածները փէշերով տանում լցնում էին միջնորդի գոգը, առանց իմանալու թէ քանի ամսից կամ օրից հեռանալու էին իրանց վիճակի իւղալի տեղերից: Կիկերոնի սպունգը ակամա մարդ լիշում է սրանց արարքը տեսնելիս, թէ ինչպէս ծծում,

այնպէս էլ քամոււմ էին: Տասնըհինգ, քսան տարի վարեցին այդ եռապեռնները և ամէն վաղի, օգնականը և քարտուղարը Կ. Պոլսի բարձր ատեաններին շնորհակալական թղթերով իմացրին այս մեծ մարդիկների անխոնջ ժրջանութիւնը և զարդարեցին պատւանշաններով արաբների կուրծքերն ու վզերը, հազցրին ոսկեթելով բանլած ոերտուկներ, վարտիկներ և կախեցին պսպղուն գօտիների կշտից փոքրիկ սրբեր:

Եօմար էֆէնդին այդ ժամանակամիջոցում լաւ կարողութիւն դրստեց, տոկոսով փող, տոկոսաբեր թղթեր, կալք, կայանք, մարգ, ագարակ, բաղ. գիւղ, ջրաղացք, տներ, խանութներ, խաներ ամէն կողմից աչքի էին ընկնում: Մի յիսուն հազար լիբայի հարստութիւն երևում էր: Յարութիւն էֆէնդին կանխիկ փող սնէր, ծանրութիւն չէր սիրում: Իմ գանձս, ասում էր, գլխիս տակն եմ դնելու, որ քունս տանէ, քարն ու փայտը, հողն ու ջուրը ինչ եմ անելու, *Աւաղղ* ոսկի, դեղին պսպղուն: Թէև լիմարի նման բարձի տակը չէր պահում ոսկիների ծրարները, բայց մուրհակների մոմշոր կապոցը միշտ կապած ունէր կողքին: Բոլոր հարստութիւնս, ասում էր կատակով, հետս եմ ման ածում, բայց գրպանումս ծախսի փող չունիմ: Հասկացողը հասկանում էր նրա միտքը: Կարինի ամենալայտնի վաճառականներին էր ցրած Յարութիւն էֆէնդին իր երեսուն հազար լիբայի կարողութիւնը տասներկու տոկոսով: Ամէն վեց ամիսը մի անգամ նորոգում էր մուրհակները և ստացած տոկոսները անգլիական մի բանկ ուղարկում:

Ինչպէս հողի, կալքի ծանրութիւնը դուր չէր

գալիս Յարութիւնին, այնպէս էլ ընտանիքի ծանրութիւնը անդուրական էր: Արաբ-օղլին ամուսնացած չէր, թէև լիսուսին մօտենում էր տարիքը և ամուսնանալու էլ միտք չունէր: Կապոյտ կամարի տակ չոր գլուխն էր, ոչ մի ազգական և արիւնակից չունէր. ո՛ւմ համար էր զանձում, անձը զրկում և դողալով պահպանում այդ կարողութիւնը, սատանան էլ չէր իմանում:

Միւսիւ Անտուանը որ ամենից յաջողակն էր ընկերների մէջ փող ձեռք բերելու կողմից, սիշտ լաց էր լինում, թէ ինքը ոչինչ չունի: Թէև ապրում էր բոլորից ճոխ և շուալլ բայց ձեռքն անցած փողի տասներորդովն էլ կարելի էր անել աւելի շուայլութիւն, քան ծախսածը: Կարծում էին, որ կունենար էլի լաւ կարողութիւն, բայց ինքը երգւում և հաւատացնում էր, որ բացի ապրուստից ոչինչ չունէր: Շատ հետամտեցան, որ իմանան, թէ ո՛ւր էին գնում դրա եկամուտները, բայց հնարք չեղաւ:— Եւրոպա է ուղարկում, ասում էին շատերը, որ ժամանակին երթա ու փարթամ ապրի: Նա ձեռքն անցածից միայն անխնա ծախելու և ապրելու իրաւունք ունէր, գանձելու համար ուրիշներն էին մտածում:

Շուշանի մասին եղած խռովութեան իրիկունը Միւսիւ Անտուանը առանձնապէս դիմեց Վալիի տունը, որի գռան առաջ պատահեց քարտուղար Հազըղ էֆէնդիին: Երկու համազգիներ դունչ դնչի՝ շրջապատողներին անհասկանալի արաբական խօսակցութիւններով ներս մտան տուն և բարձրացան սանդուխներից: Վալին կատարում էր արեմուտքի *Աւաղղ*, ուստի ազատ

ժամանակ ունեցան սրահում շարունակելու իրանց խօսակցութիւնը: Ճրագները վառեցին և ներս կանչեցին եկւորներին, որոնք առանց գանապան քաղաքավարական ձևերի մտան Վալիի առանձնասենեակը և բազմեցան թիկնաթոռների մէջ: Վալին էլ չուշացաւ գալու իւր տեղը բռնելու, բայց խօսակցութիւնը չսկսեցին, սպասում էին օգնականին:

Ամբողջ կէս ժամ սպասեցին վերջինիս գալուն և առանց արտունջի խորհրդաւոր ժողովն սկսեց իւր օրակարգը:



ԺԸ

Ժ Ո Ղ Ո Վ Ի Կ Ա Ր Ծ Ի Ք Ը

Քարտուղարը կարգաց ոստիկանապետի ներկայացրած տեղեկագիրը և մի ուրիշ թղթի վրա նշնեց գանազան իրան յայտնի տառեր և խազեր: Տեղեկագիրը օրւա անցքի մասին էր և ոստիկանական պաշտօնակալը, որքանոր կարող էր, աչքովն ընկել էր, նկարագրել էր անցքերը և մանրամասնութիւնները: Գործին տւել էր իսկական թեթեւ կերպարանքը, այսինքն յանկարծակի բորբոքումից, զայրոյթից առաջացած խառնաշփոթութիւն: Ընթերցանութիւնից յետո, Վալին դար-

ձաւ ընթերցողի կողմը և հարցրեց մեղմութամբ.

— Մէքթուբջի էֆէնդի, ձեր կարծիքն ինչպէս է:

— Ես չեմ կարող համակարծիք լինել ոստիկանապետի հայեացքի հետ: Շատ պատճառներ կան, որ ինձ ստիպում են կասկածելու և փաստեր ունիմ, որոնք հաստատում են ենթադրութիւններս: Ժողովիդ յայտնելու շատ նիւթ ունիմ հաւաքած, որոնք պիտի համոզեն ձեզ, ուրիշ հայեացք ձգելու այս գործի վրա:

— Հետեւապէս չէք համաձայնում, ձեր ասելիքը յետո կյայտնէք, ասաց Վալին և կտրեց քարտուղարի խօսքը: Յետս դառնալով Միւսիւ Անտաանի կողմը, ասաց. — Դուք ինչ էք կարծում:

— Այսօրւա խռովութիւնները, գոռում գոջումները, նամանաւանդ թափւած արիւնը ինձ այնքան են յուզել, որ ահամա չեմ կարողանում ոստիկանապետի հայեացքի հետ հաշտել: Պարոն քարտուղարի հետ համակարծիք եմ, ես էլ ունիմ փաստերս, որոնք ներկայացնելու եմ ժողովիդ:

— Դուք պարոն օգնական, ինչ էք մտածում:

— Ես կարծում եմ, որ ոստիկանապետը շատ հմուտ է գործին և այսօրւա զէպքերը իրանց բնական և իրական պատկերներով նկարագրել է: Շատ հաւանական է, որ այսօրւա բոլոր շփոթութիւնը առաջացել է լոկ յանկարծական բարկութիւնից: Ամէն մարդ իւր ընտանիքը թողնում է տանը գնում է գործին: Մեղաւոր չեն հայերը, եթէ այդպիսի զէպքերից սաստիկ զրգրուում ու ապագա անդորրութեան համար խիստ պատիժ են պահանջում մեղաւորի համար: Նամանաւանդ լաւ

ըմբռնելու է, որ այդ բոլորը բուսական բարկութիւնից և կատաղութիւնից է առաջացած: Կրքի յանկարծական բորբոքման արտադրութիւնն է և խոհականութեան նշույն անգամ չի երևում:

— Հետևապէս, դուք գործին տալիս էք ոստիկանապետի հայեացքը:

— Այո, փաշա էֆէնդի, միայն ես կարծիքս եմ յայտնում, գուցէ, ինչպէս ասացին էֆէնդիները, ունին այնպիսի փառքեր, որոնք ապացուցանում են հակառակը, խնդրում եմ, թող բացատրեն, այն ժամանակ կարելի է ես էլ համաձայնեմ նրանց հետ:

— Կբացատրեն, ամիջապէս խօսք կտամ նրանց, որ յայտնեն իրանց կասկածների առիթները: Բայց նախ ես ուզում եմ երկու խօսք ասել: Էֆէնդիներ, մեր վրա մեծ պարտականութիւն կա դրւած, մենք աշխարհի երեսին մեր խղճին և լաւետեանականութեան մէջ Արարչին պատասխանատու ենք և պիտի լինինք: Նախախնամութիւնը ժողովուրդի կառավարութիւնը յանձնել է Սուլթանին, որից պահանջելու է հաշիւ իր գործնէութեան: Սուլթանը իր տւած օրէնքներով և բարի ցանկութիւններով արդարանալու է միշտ վերին դատաւորի աչքում, ամէն մեղք բարդւելու է մեզ, ժողովրդեան ու Վեհապետի մէջ միջնորդ դարձած անձնաւորութիւններին վրա: Մեզ հաւատացել է խալիֆը, այս իրաւունքը դէպի չարը գործ չգնենք, մեզ է ապաւինել ժողովուրդը, ոտքի տակ չտանք ամբար: Թէ վերին տիրոջ, թէ Սգոստափառ տիրոջ, թէ երկրին ու հայրենիքին և թէ ժողովուրդի համար շատ թանգ արժէ ամէն մի հպատակի անձնաւորութեան

կեանքը, բայց հայրենիքի, նամանաւանդ միլիոնաւոր ժողովուրդի անդորրութեան համար չնչին է խռովաբարներ կեանքը և ընդհանրութեան համար չպէտք է խնայել մասնաւոր վտանգաւոր կեանքերին: Անմեղը պատժւելուց մեծ յանցանք չկա, բայց մեղաւորին ու խռովարարին անպատիժ թողնելը շատ աւելի մեծ ոճիր է:

Այս պատճառով (ես կարծում եմ, որ ինձ հետ համաձայն էք այս կէտերում), խնդրում եմ, լաւ ուշադրութիւն դարձնէք և ամէն տեսակ կրքերն ու անձնականութիւնները մոռանալով, քննէք գործը ճշտութիւնով, այնպէս որ ապագայում չմնանք պատասխանատու ո՛չ ժողովրդի առաջ, ո՛չ գահի և ո՛չ լաւիտեանականութեան: Չմոռանանք, որ մեզանից կախում ունի ամէն բան և մեզանից են հաշիւ պահանջելու ամէն ազգ: Գործը այն վիճակում է, որ շատ մուլթն է, ըսկզբից չենք կարող որոշ կարծիք յայտնել, խնդրեմ պատմեցէք ձեր ենթադրութիւնները, Մէքթուլըն էֆէնդի, կարելի է շատ գաղտնիքներ պարզւի:

— Մեծարգո ժողովականներիդ յայտնում եմ, նախ որ լաւ աչքի առաջ բերէք այսօրւա խռովութիւնը իր բոլոր տեսարաններով: Ողջ քաղաքի, մէկ ծայրից միւսը, որքան խանութ որ կար, կողպւած էր, այն էլ համարեա միւսնոյն քառորդ ժամի ընթացում: Պէտք է աչքի առաջ բերել քաղաքի դերքը, որի մէկ կողմից միւսը ման գալու համար ժամեր է հարկաւոր, միաժամանակ փակուում են ամէն տեսակ խանութներ: Բայց աւելի զարմանալին այնտեղ է, որ խանութը կողպող հայր վազում էր խռովութեան կենտրոնատեղին և ա-

մէն մէկի ձեռքին ու գրպանում գտնուում էր զէնք: Շատերը ունէին ուէւոլէր, ոմանք դաշոյն, գտնակ ուրազ, մկրատ, կացին, մուրճ, երկաթի ձող և այլն: Բայց մեծագոյն մասը թուերի տակ ունէին տօսախից մահակներ, որոնք չափազանց դիմացկան են և հարւածները մահացու: Սրանք այնպիսի պարագաներ են, որ ես ակամա ստիպւած եմ հաւատալու, որ այդ մարդիկը վաղուց մտածած և պատրաստուած էին այս շփոթութիւնը բարձրացնելու: Պատահաւորապէս ասացի, շեշտում եմ այդ խօսքս և բացատրում հետեւեալ կերպով: Այնպիսի աղբիւրներից տեղակացած եմ, որոնց վրա դուք էլ չէք կասկածիլ, որ կան մարդիկ Կարինում, որոնք ամէն օր, ամէն իրիկուն արհեստաւորների խանութները ու տները դնում և ժամերով խորհրդակցում են: Յաճախ արհեստաւորներն ու խանութւորները իրանց բանւորների յուսովը թողնում են գործատները և գրնում կամ դերեզմաննոցում, կամ բանջարանոցներում և կամ քաղաքից դուրս մի առանձին վայրում «ԱՐԳՈՒՐՎԱ» կամ «ՐՈՒՐԱ» են խաղում: Պէտք է իմանալ, որ այդ խաղերին մասնակցում են Կ. Պոլսից եկած անյաշտ մարդիկ, հարուստ վաճառականների երիտասարդ որդիք, վարժապետներ, վերջապէս կասկածելի անձնաւորութիւններ: Մեր բոլոր գաղտնի գործակալների ջանքերն ապարդիւն մնացին, նրանց չկարողացան թափանցել: Խաղ են խաղում, ինչ կարող ես ասել, բայց թէ ինչ խաղ, այդ մարդու սրտում կասկած է ձգում: Մարմնամարզութիւնը առողջութեան օգտակար է, բայց ո՞վ է արգելում նրանց միւսնոյն բանը կատարելու քաղաքի մէջ: Մի տարւա ընթացքում Լօնդոնի մի նշանա-

ւոր առեւտրականի տանից գնել է երեք հազար ուէւոլէր և Տրապիզոնի-Կարինի վրայից Պարսկաստան տեղափոխել, բայց սէր մնացին դրանք, յայտնի չէ: Այստեղի մէկ երկու առեւտրական տուն մի լաւ ուէւոլէր ծախում է հայի վրա երեք քառորդ լիրայով, մի և նոյն բանը մահմեդականներին չորս լիրայից պակաս չեն տալիս և ոչ մի տեղ: Հէնց այս բոլոր հանգամանքները հաստատում են, թէ կան մարդիկ, որոնք պատրաստել էին այս խռովութիւնը: Անցեալները թատերասերների ժողովում կատարւած եղելութիւնները Էմրահ աղան ջրեց ու ծածկեց, ես կասկածեցի, բայց չկարողացա պնդել, ապացոյցներ չունենալուս պատճառով: Իսկ այսօր ես ասում եմ, որ Էմրահը լիտուն լիրա փող էր ստացել այնպէս խօսելու համար: Տէր Կոմիտասը մեռնելու բողբէին շատ բաներ է յայտնել մի անձաւորութեան, որոնց մասին տեղեակ է և Անտուան էֆէնդին: Մեր քաղաքում մի տեսակ բոր են գցել այդ թատերասերները մոլութիւնների, եղծումների առաջն առնելու նպատակով տրւած թատերական ներկայացումներով ապականում և վրդովում են ժողովրդի անարատ և խողաղ սրտերը: Հէնց այդ խմբի անդամներն են, որ շրջում են ժողովրդի ամէն խաւերում, նրանց պէս խօսում, ծիծաղում, նստում, կանգնում շարժում, կատակներ անում, խմում և ամենամտերիմ ընկերների և աստիճանակիցների նման ժամանակ անց կացնում: Խելքի դէմ բաների ենք հանդիպում, երբ տեսնում ենք աչքներիս առաջ մի հարուստի որդի, կրթւած և բողբական շորերի և ձեւերի վարժ, յանկարծ թողնում է Փրանսիայի ֆաբրիկաների թանկագին կերպասները

և տեղական շալից ժակետ, ժիլետ և վարտիկ կարել տալով հագնուում է. քաթանից նուրբ ու օսլայած շապիկ տեղ, Արաբկերի սպիտակ սևախառն մանուսա շապիկ է հագնում և ուրիշ սրա նման բաներ, այնպէս որ յարմարելի հասարակ արհեստաւորի հետ: Վերջինս էլ աշխատում է իր շալի շորերի ձևերը նմանեցնել պալտօի կամ սերտուկի: Արտաքին ձևեր են, բայց իրար հաւասարելու միտումներ և նպատակներ են երևում: Եւ ինչ էք կարծում, պարսիկներին ամենամեծ կոտարած հասցնողը, այնքան մարդ վիրաւորողը, յարձակւողներին առաջնորդողը, խրախուսողը նոյնպէս մի անձնաւորութիւն է, որ թատերասէրների խմբի ամենաջերմ գործողներից է՝ դերձակ Սիսակ Սաֆարեանը: Գրիգոր Յարութիւնեանը թէև գործի ջերմ ժամանակն է մտել, բայց ամբոխը միշտ հետևել է Սիսակի կարգադրութեանը: Արանցով ես հասնում եմ այն եզրակացութեանը, որ այս խռովութեան պատրաստողները եղել են թատերասէրները: Վերջացնում եմ խօսքս լեշեցնելով ժողովականներին այն նամակներն ու տրպազրեալ երգմնաթղթերն, որոնք գտնւեցին զանազան երիտասարդների տներում, որոնց իմաստները մնացին մեզ անյայտ: Ահա զաղտնիքներն իրանք իրանց աշխարհ եկան, տեսաք այսօր Կարինի բէմի վրա:

Վալիի օգնականը ձայն խնդրեց և խօսելու իրաւունք ստացաւ:

— Մէքթուբը ի էֆէնդին իր արած հայեացքներով ուղում է ապացուցել, որ այսօրւա անցքերը մըտածաւած և պատրաստաւած էին վաղ ժամանակով և առաջ է բերում այնպիսի օրինակներ, որոնք մասամբ

կասկածեցնում են մարդու, ստիպում են համոզւելու, որ ճիշտ են նրա ենթադրութիւնները: Այդ հարցերը ես ինձ տւի մի քանի անգամ՝ խռովութեան կենտրոնում կանգնած ժամանակ և նրա տեսած ու լսածները վաղ օրով ես քննել և ուրիշ համոզմունքի եմ եկել: Ահա պատասխաններս: Մէքթուբը էֆէնդին ասում է, որ միաժամանակ փակւեցին բոլոր խանութները: Ես ասում եմ, դա թէև դեռ հարց է, բայց լաւ աչքի առաջ բերէք, որ երեկ իրիկուն ամէն տեղ խօսում էին կորած աղջկա մասին և այսօր առաւօտ միայն ժողովրդի բերանում այդ խօսքերն էր ման գալիս, իսկ աղջկա դին գտնւելուց լետո, երբ մօտաւորները իրանց հարազատի կորստեան ցաւից չիմարացած վրէժխնդրութեան հոգւով յարձակւեցին պարսիկների խանի վրա, ոճրագործին բռնելու կամ պատժելու, նորանց աղմուկն ու ձայնը անմիջապէս տարածւեց ողջ քաղաքում: Ամէն փողոցի մի ծայրից մինչև միւս ծայրը ձայնը ազատ գնում է և ժողովուրդը արդէն սրտատրոփ սպասում էր գործի վախճանին: Այդ պատճառով ոչ թէ մի քառորդ ժամում, այլ գարմանալի չէ, որ միւսնոյն բանը կատարւէր հինգ րոպէում: Բայց այս գործի վաղ ժամանակում պատրաստաւած չլինելը ես հաստատում եմ Մէքթուբը էֆէնդինի խօսքերով: Եթէ ժամանակին այդ երիտասարդները կամ արհեստաւորները պատրաստութիւն տեսած լինէին, նրանց համար դժւար չէր լինի մի մի ուէլօլ ձեռք բերել, մի մի հրացան պահել իրենց շորերի տակ և այսօրւա ամբոխի կատաղած ժամանակը նրանք ոչ թէ բոլոր պարսիկներին և թուրքերին կկոտորէին, այլ մեր զինւորական ոյժն անգամ

չէր դիմանալ խուժանի սրտմտութեան դէմ: Ամէն մի արհեստաւոր, երեսակայեցէք, ունէր միջոց ձեռք բերելու այնքան արժան գէնքեր, ինչպէս պատմում է Էֆէնդին, ինչի գէնքերով չէին եկել իրանց պատրաստած նպատակին հասնելու: Կամ եթէ ուղեւորն հայերը, միթէ չունին միջոց զինւորելու իրանց ժողովուրդը: Թատերասէրները, սրոնք, ինչպէս կարծում է Էֆէնդին, եթէ խռովութեան պատճառներ էին, ինչի չզինեցին օր առաջ, միթէ ընկերութիւնը կամ այն հարուստ վաճառականների որդիքը միջոց չգտան այդ բանը կատարելու: Սխալում է Մէքթուրըլի Էֆէնդին, հէնց փայտով ու դանակով, կացնով ու մուրճով ժողովուած ամբոխը ցոյց է տալիս, թէ ինքը բոպէական բարկութեան միջոցին ձեռքն անցածը առել և վազել է չարագործը ջախջախելու: Միթէ չիմացաք խեղճ Թորթոմցիների գանգատը, սրոնց ցախի սալերի փայտերը անգէն հայերը միջոց չունենալով ձեռքերն առած հասել էին աջամների բնակութիւնների դռները: Սխալի կատաղութեամբ յարձակելու վրա ամէնս էլ զարմացանք. չարաճճին առիւծի նման յարձակում էր թըշնամու վրա, բայց միթէ պատճառը չիմացաք: Զարմանալի է, որ ձեր լրատուները չեն մտնում այդպիսի մանրամասնութիւնների մէջ: Այսօրւա զսհը, Շուշանը, նրա նշանածն էր, իսկ ամէն սիրահար երիտասարդ այդպիսի բոպէներում ինչպէս դիմադրում է հակառակորդներին, պարզելու կարիք չկա: Գրիգորն էլ մտերիմ ընկերի պոչից չէր կարողանում սրկ գալ: Էմրահի մասին ասածներից բան չհասկացա, խնդրեմ պարզէք, թէ որտեղից և ինչի համար է ստացել այդ լիսուն

ոսկին, եթէ իրաւացի է, ես կիսնդրեմ ժողովից, որ քննւի և նրան սաստիկ պատիժ որոշւի: Տէր Կոմիտասի մասին խնդրում եմ չխօսէք, այդ հոգևորականը կասկածելի էր իմ աչքում, իրաւունքով մեր նախարարութիւնը 1872 թւականներին հալածում էր դրանց. դրանք ուրիշի նպատակներին աւելի շատ են ծառայում, քան թէ մեր: Ես կարծում եմ, որ ուրախալի երևոյթ է մեր երկրի համար, երբ խելացի երիտասարդները օրինակ են դառնում տնտեսութեան: Մենք փոխանակ մեր արհեստանոցները զօրացնելու, շուայում ենք մեր գանձը և լցնում եւրոպացիների քսակը: Տա Աստուած, որ ընդհանրանան մեր ժողովրդի մէջ այդ սովորութիւնները և տեղական գործւածները բանացնեն ամէն տեղ: Իսկ այն ժողովների և լաւ յարաբերութիւնների մասին ոչինչ չեմ կարող ասել, քանի որ որոշ բան յայտնի չէ մեզ. թղթերն էլ լաւ քննելու է, ես ամէն միջոց գործ եմ դնում կարգալ տալու, տեսնենք: Բայց և այնպէս, ես չեմ կարողանում համոզել Մէքթուրըլի Էֆէնդիի այն կարծիքի հետ, թէ այսօրւա խռովութիւնը նախապատրաստւած լինէր: Զարմանալի է, թէ ինչպէս կարելի է ժողովուրդի մի չարագործ պարսկի դէմ ունեցած այս բորբոքումից եզրակացնել, իբր թէ ժողովուրդը չար միտումներ ունեցած լինի դէպի Իսլամականութիւնը կամ կառավարութիւնը: Մի այսպիսի չնչին և լիմար գործին այնքան մեծ նշանակութիւն տալը՝ աւելի քան ծիծաղելի է:

— Օգնական Էֆէնդի, չեմ կարող ես ձեր կարծիքի հետ համաձայնել, խնդրեմ աչքի առաջ բերէք վերջին քսան տարւա ընթացքում մեր պետութեան

ամէն կողմը պատահած խռովութիւններն, ապստամբութիւններն ու արիւնհեղութիւնները: Բոլորը, բոլորը կատարել է այսպիսի չնչին սկզբնապատճառներով:

— Ապստամբութիւն, այդ ուրիշ բան է, հայերը այդ աստիճանին չեն հասնիլ, մի երեւկայէք, ես երաշխաւոր եմ գլխովս, որ հայերը երբէք չեն կարող այսպիսի բան անգամ երեւկայել:

— Գուք, օգնական էֆէնդի, որ սի, ասէք, էլ ձեզ համոզելու հնարք չի լինիլ, բայց և այնպէս ես պնդում եմ ենթադրութեանս վրա:

— Ես չեմ բռնանում: Զեր կարծիքն է. ազատ կարող էք յայտնել, ինչ որ ցանկանում էք:

— Միւսիւ Անտաւան, մէջ մտաւ Վալին, խնդրում եմ ձեր կարծիքն և հաւաքած տեղեկութիւնները հաղորդէք:

— Լինում են դէպքեր, որտեղ մարդ իրան հարցեր է տալիս, բայց նրանց դրական պատասխանը ինքը իր մէջ չի կարողանում վճռել: Ես ինձ գտնում եմ յաճախ այդ վիճակում, մոլորում եմ շատ անգամ և ժամերով զբաղում այդ մտքերով: Այս հարցը ինձ համար նկարագրածս տեսակիցն է: Այսպիսի դէպքում ես աւելի հետևում եմ բնագրիս, և երբէք չեմ էլ սխալւում: Այդ խակ երիտասարդները ինձ սկզբից դուր չեն եկել և միշտ տեսնում էի, որ դրանք չար գործերի և խորհուրդների մէջ էին: Յաճախ լսում էի դրանց խօսած ճառերի բովանդակութիւնները, կարգում գրած ոտանաւորներն, ուսումնասիրում տրւած ներկայացումները և դրանց բովանդակութեան մէջ տեսնում էի մտքեր, նպատակներ, որոնք պղտորում ու զրգուում

էին ժողովուրդի հանգստութիւնը և դրանք աւելի սաստկացնում էին իմ հակակրօթիւնս դէպի այդ դատարկախօսները:

Ժողովուրդը դրանց խօսքը շինում է իրան մտածութեան նիւթ, նրա մտքումը և դատողութեան մէջ մեծ տեղ են բռնում այդ խորհուրդները, որից օր աճում և արմատները տարածում են վերջինիս սրտի և երակների խորքերում: Դա այնպիսի մոլութիւն է, որ երբ դրա սերմն ընկնում է մի տեղ, էլ չի կարելի նրա ծիլերը կտրտելով արմատը չորացնել, որքան խոր կտրես ճղները, այնքան արագ և զօրաւոր դուրս կգան նոր ոստերը: Միակ միջոց ժողովրդին ազատելու, դրա սերմնացանների ոտքերը կտրատելն է: Ես համոզւած եմ, որ Ոսկանը այս կողմերը գալուց յետո, մեր քաղաքի մէջ տարածւեցին այնպիսի անձնաւորութիւններ, որոնք ամէն տեղ Ոսկանի ծրագրով տարածում են նրա դադափարները: Այս օրւա ամբօխի լրբութեան և անհնազանդութեան առիթը միայն Ոսկանի խմբի քարոզութիւնների արդիւնքն է: Գուցէ ես կարողանամ երբևիցէ համաձայնել այն մասին, թէ այսօրւա խռովութիւնը յանկարծական է պատահել, բայց երբէք չպիտի զիջանիմ համոզւելու, որ այն դիմադրութիւններն, որոնք այսօր տեղի ունեցան Վալի փաշային և մեր ժողովականներին, պատահական բաներ էին: Մտածեցէք, թէ ոչխարի նման ժողովուրդը, այսօր կոպտաբար ինչպէս դիմադրեց մեր ամէն տեսակ առաջարկութիւններին: Միթէ յուսալու բան էր: Մեր ամենասրբազան պարտականութիւնն է պաշտպանել երկիրը, ժողովուրդը և վարչութիւնը այդպիսի նենգաւոր գործիչների դէմ:

Տէր-Կոմիտասին ես մի սրբակրօն մարդ էի ընդունած և նրա խօսքերը չհաւատալու տեղիք չունէի, բայց կրօնական մարդ էր, գուցէ և մոլորւած լինէր իր հայեացքներով, բայց ուրիշ տեղերից ես լսել եմ, որ այդ երիտասարդները պատրաստութիւններ տեսնում են, զանազան թղթակցութիւններ ունին հեռաւոր աշխարհների հետ: Պոստի կառավարիչն ասում է, որ Ոսկանը Կ. Պօլսից, Վիէննայից, Լօնդօնից, Նիւ-Եօր-կից ամէն շաբաթ նամակներ է ստանում: Միշտ թղթեր է ճամբում հեռաւոր աշխարհներ: Ռուսաց կօնսուլի չափարը նրա նամակները տանում է Սարի-Ղամիշ և Ռուսների պոստերի միջոցով հասցնում աշխարհի շուրջը: Մի համեստ մարդ խոստացել է, որ չափարին կարողանա համոզել և մի անգամ նրա նամակները մեզ յանձնել: Եթէ յանձնառու լինէք մի քսան սօկի վճարելու, այս առաջիկա երկուշաբթի օրւա նամակները կարելի է բռնել տալ: Այն ժամանակ կասկածներից էլ կազատւիք: Եւ կարծում եմ, որ այդ Ոսկանը այստեղի երիտասարդների պարագլուխն է և եթէ դրան իր մէկ երկու ընկերներովը բռնել տալու լինինք, ազատած կլինինք ժողովուրդը ապագա ամէն շարիքներից:

— Ժողովուրդը մենք միշտ պաշտպանելու ենք, բայց առանց հիմնաւոր պատճառների էլ ոչ ոքի անկախութեանը դիպչելու իրաւունք չունինք, ասաց օգնականը: Մեր օրէնքները հիմնւած են մարդկային արդար իրաւունքների վրա. անհատական ազատութիւնը խեղդելով, հակառակ վարւած կլինինք մեր պետական կազմակերպութեան հիմունքին: Գտնուում

ենք Կարինում, որտեղ կան ձեռնահաս անձնաւորութիւններ, որոնք մեր օրէնքների ամէն մի կէտը այնպէս ուսումնասիրած են, որ մեզ կարող են դաս տալ: Կճգմեն մեզ բարձր իշխանութեան ձեռքով: Բայց դրանց հետ զործ չունինք, մենք իբրև ներկայացուցիչ օրէնքների, օրինազանց լինելու չենք: Եթէ կան կէտեր որտեղ երևում է նրանց մեղաւորութիւնը, ցոյց տւէք ապա թէ ոչ, կարծիքով և ենթադրութիւններով անմեղը պատժի տակ գցել և տանջել— մարդկութեան դէմ բան է, մեր սահմանադրութեան հակառակ է:

Այս միջոցին ներս մտաւ ծառան և արծաթ սկաւառակով ներկայացրեց Վալիին մի ծրար: Վալին ձեռքն առաւ և կարգաց վրայի «ամենահարկաւոր» և «գաղտնի» բառերը: Լուութիւնը տիրել էր և ամէնը ուշադրութեամբ նայում էին փաթեթի վրա: Վալին ակնոցներն անցրեց և սկսեց կարգալ թուղթը: Ընթերցանութիւնը կիսատ թողեց, սկսեց ճակատը տրորել: Անհանգստութեան նշաններ երևեցան և զայրացած շարունակեց ընթերցանութիւնը: Աւարտելու պէս, ծալեց և մի քանի անգամ բռի մէջ ոլորելուց յետո՛ երկնցուց օգնականին:

Սա էլ կարգաց և վերագործրեց Վալիին:

— Էֆէնդիներ, ասաց Վալին ծանրութեամբ, զործը ծանր կերպարանք է ստանում: Կորած երկու զինւորի դիակները գտել են զերեզմանոցի մօտ «Մուրտար-Ղրուժ»: Զինւորական դատարանը զաղտնի քննութիւն է նշանակել և մեր ձեռնտուութիւնն է խնդրւում:

— Ուրեմն զործը կարող է շատ մեծանալ: Այ-

սօր գօրք կանչելու չէր, սխալ քալլ էր այդ, ասաց օգնականը:

— Առանց գօրքի ինչպէս պիտի ժողովուրդը գսպէիք:

— Իրանք իրանց կզիջանէին և կհեռանային: Զօրքերը եթէ չբռնէին փողոցները և յարաբերութիւնների հեշտութիւն լինէր, ժողովուրդը կկարողանար առանց արգելքների գնալ խռովութեան կեդրոնատեղին և աչքով տեսնէր եղելութիւնը, աւելի հեշտութեամբ կցրւէին: Իրմագրութիւնը նրանց աւելի յամառեցրեց:

— Ոչ, նրանք այն դրութեան մէջ էին, որ այդպիսի դէպքերում կարող էր մեծ այրուհասեղութիւն պատահել: Բայց գործը գրանում չէ, եղածն անցել է, զինուորականութիւնը պիտի ծանրացնէ գործը և Կ. Պոլսում մեծ մտատանջութիւնների պատճառ դառնա, ասաց Վալին:

— Գուցէ վտանգաւոր վերջ ունենա, ասաց Միւսիւ Անտուանը:

— Իժար է դրանց ձեռքից դուրս առնել գործը, զինուորականութեան պատիւը վերականգնելու համար հարկաւոր է, որ իրանք խստութեամբ քննեն դատը և յանցաւորին չարաչար պատժեն, ասաց քարտուղար էֆէնդին:

— Չէ կարելի Կ. Պոլսից «Իրագէ» բերել տալ, որ չմիջամտին գործին զօրականները, ասաց օգնականը:

— Նախարարութիւնը չի համաձայնիլ:

— Մեծ նշանակութիւն պիտի տան գործին:

— Մենք այնպիսի ձև կարող ենք տալ, որ իրերի դրութիւնը փոփոխուի և գործը քնի:

— Քնեցնելու գործ չէ, վտանգաւոր է և գէշ հոտ է գալիս, ասաց քարտուղարը:

— Իրանց ժամանակը չէ, ասաց Վալին, մեզանից երեք գաղտնապահ և պատուաւոր քաղաքացի են պահանջում. շուտով ներկայացնելու է, որ այս գիշերուա նախաքննութեան հանգիստտես լինին: Իրա վրա մտածեցեք, ո՞ւմ ուղարկենք:

— Մեր երեք էֆէնդիների պարտականութիւնն է, միայն նրանց կարելի է վստահել, ասաց քարտուղարը: Առանձին հրամանագրով կանչեցին Յարութիւն, Եօմէր էֆէնդիներին, միասին գնացին պատերազմական դատարան: Վալիի օգնականն էլ շտապեց այնտեղ իւր աթոռը բռնելու:

ԺԹ

Ձ Ե Ր Բ Ա Կ Ա Լ Ո Ի Թ Ի Ի Ն

Իրիկւան դէմ ամէն մարդ մի դառն սխ քաշելով «Գէօլի—գլխից» տուն էր դառնում: Այդ տեղի բոլոր խանութները փակած էին և աջամները դեռ սիրտ չէին անում բաց աներու իրանց խան ու չայխանաները: Այն ծնողները, որոնց որդիքը այդտեղ այդ օրը արիւն էին թափել, գողում էին ողջ մարմնով և կամայ աչքերը խփում կամ շուռ էին տալիս ուրիշ կողմ, չլիշելու դառն արկածները: Մեծ հրապարակի

ամէն կողմը երևում էին արիւնի հետքերը և սալա-  
յատակի ամէն քարի վրա՝ արիւնի կաթիլները դեռ չէ-  
ին չորացել: Խոր լուսթիւնով, մոլորած քայլերով  
տուն վերադարձող ժողովրդին տներումն էլ տխուր և  
լալագին դէմքեր էին ցոյց տալիս: Ախշան ընդհանրա-  
կան էր: Չարմանալի բան էր այդ դէպքը Կարինի հա-  
մար: Միթէ այդպիսի չափշտակութիւն առաջին անգամն  
էր պատահել, միթէ առևանդութիւն և մարդա-  
սպանութիւն էլ չէր եղել Բարձ-Հայոց մայրաքաղա-  
քում: Միթէ չկային այնպիսի մարդիկ, որոնք այդպիսի  
հարիւրաւոր անցքերի ականատես և վարժած լինէին:  
Շատ կային, բայց այս սովորականից դուրս պատահ-  
մունք էր, իսկ օրւա խռովութիւնը աննման դէպք:  
Այդպիսի շփոթութիւն և խառնակութիւն յաճախ պա-  
տահել և ժողովուրդը խուճել էր առաջնորդարանի կամ  
Սարայի դուռը, բայց բորբոքւած և արիւն չէր թափած:  
Տաճիկների վարչութիւնը թուրքերին սոսկացնելու հա-  
մար քաղաքը զօրքով և թնդանօթներով լցրել և սպառ-  
նացել էր, բայց հայերի անկարգութիւնների համար զին-  
ւորական ոյժի միջամտութեան առաջին անգամն էր կա-  
րիք լինում: Յիմար անցք էր, բայց մեծ վրդսրմունք  
թէ ժողովրդի և թէ վարչութեան համար:

Խումբ խումբ երիտասարդներ, ընկերներ փա-  
ճառականներ, արհեստաւորներ, օտարականներ մտնում  
էին Սառաֆենց տունը, Սիսակի վիճակը տեսնելու,  
մխիթարելու և քաջարելելու: Այցելուները այդտեղ  
մանրամասութիւնների հետ ծանօթանալուց լետոյ,  
գնում, մտնում էին Գրիգորենց տունը: Բարեբաղդա-  
բար հմուտ պառուսները զանազան խոտերով և սարդի

ոտայններով շինել էին մի այնպիսի շաղաղ, որ անմի-  
ջապէս կտրել էր վիրաւորների վէրքերից հոսած ա-  
րիւնը:

Ոսկանը երկար ժամանակ երկու ընկերների և  
ուրիշ վիրաւորների տները թափառելուց, բոլորին  
քուն գնելուց և հանգստացնելուց լետոյ, ոչոր մոլոր  
քայլերով մօտեցել էր իւր տանը, մի քիչ կազդուրե-  
լու: Լուսնեակի գիշեր էր և երկինքը պարզ: Ոսկանի  
սենեակների լուսամուտներից լոյս չէր երեւում, բաց  
էին նրանք և մի գոյգ տխրալի աչքեր մթնումը նստած  
սպասում էին Նազարեանի ճանապարհին: Գիշերային  
ժամերում Կարինը նմանում է մի ընդարձակ գե-  
րեզմաննոցի, որի ոչ մի կողմից կեանքի, շարժումի,  
աղմուկի, ուրախութեան նշույն անգամ չի երևում: Խա-  
ղաղ և անդորր քնով քնած են Կարնեցիք և միայն եր-  
կնակամարի լուսինը երբեմն երբեմն լուսաւորում է  
նրանց փողոցներն ու տները: Շատ քիչ լուսամուտ-  
ներից երբեմն երբեմն երևում է աղօտ լոյս: Այդ  
մուսլ լուսթիւնն ու մեռեալ հանդարտութիւնը խան-  
դարեց Ոսկանի քայլերը և ձեռքում բռնած փոքրիկ  
կանթեղը իւր պսպղուն լոյսը սփռում էր թոյլ կեր-  
պով լուսնի լուսով լուսաւորւած փողոցում:

Այժմաստը շատ հեռւից գգաց, որ գալողը Ոս-  
կանն էր, բայց ապահովութեան համար դեռ սպասում  
էր, որ մօտենա, տեսնէ, լսէ նրա ձայնը և ապա բաց  
անէ դուռը: Այդ ժամում Կարինում դուռը բաց անե-  
լուց վտանգաւոր գործ չկա: Այժմաստի սիրտը չէր համ-  
բերում, կամքը կտրուում էր ցանկութեան առաջ և  
դատողութիւնը ընկճում էր սրտի բարբախման դէմ:

Ողջ օրը Ոսկանին չէր տեսել, այդ մեծ պատահարներում, ով էր իմանում գլխին ի՞նչ փորձանք եկած կարող էր լինել: Քանի, քանի՜ անգամ ուղեցել էր հարցեր անելու դրացիներին և ծանօթներին: Մարուքը թէև իրիկան դէմ միամտեցրել էր Ալմաստի սիրտը, բայց վերջինս չէր հանդարտուում, ուզում էր իսկապէս տեսնել իւր համակրածին, սիրածին: Մօտեցաւ դռանը, էն էր ուզում էր Ոսկանը ախով բաղխել, ներսից հարցրեց այրին, — Այդ ո՞վ է:

— Բայց, Ալմաստ, բայց դուռը, գնամ մի քիչ ոսկոր ներս հանգստութիւն տամ:

Գուռը ճռալով բացւեց, Ոսկանը ներս մտաւ: Բակը ճարպէ մոմով լուսաւորւած էր: Ոսկանը սանդուխներից կամաց կամաց բարձրանում էր. Ալմաստի ոտքերը դողալով նրան հետևեցին: Ողջ մարմնով դողում էր խեղճ կինը, բայց սրտատրոփ հետևում էր սիրելուն:

— Ախար այսպէս օր այսքան ուշանալ մի՞թէ, կարելի է, Ոսկան, չէիր մտածում, որ ողջ օրը սիրտս աղբիւրի նման քցել է և չէի կարողանում հանդարտւել: Քանի՜ քանի՜ արիւնլալ մարդիկ անցրին մեր սև փողոցից, այնչափ վրդովւեցայ և հազար ու մի կասկածներ անցան սրտիցս: Այսպէս օրն էլ մարդ այսքան ուշ տուն գալ:

— Ի՞նչ արած, Ալմաստ, ես շատ հեռու էի, միջոց չգտա տղոց օգնութեան հասնելու: Վիրաւորածները դարմանելու էր, բժիշկ տարի, սիրտ տւի, մխիթարեցի ծնողներին, հանգստացրի բարեկամներին, քնեցրի, ապա միջոց գտա և ահա եկա, որ ես էլ հանգստանամ:

— Տնաջէն, գայիր տուն, երեւիք աչքիս, կրկին գնայիր դորձիդ, ո՞վ քեզ պիտի արգիլէր: Ոսկան, շատ ամուր սիրտ ունիս, բոլորովին չես մտածում, որ քեզ համար էլ անհանգիստ լինողներ կան: Ընկերներիցդ ամէն մէկը ունի իւր ազգն ու բարեկամը, նրանք մխիթարութեան շատ միջոցներ ունին, դու այս օտար երկրում ո՞ւմ ունիս, որ քեզ քաջալերէ, մխիթարէ:

— Ալմաստ, այն բարեկամներն, որ կան ընկերներիս շուրջը, նրանք ձեռք բարեկամներ են: Սրտանց ընկերներ ու եղբայրներ հազիւ է գտնուում, այդ պատճառով ես պարտք եմ զգում հարազատ ընկերական ծառայութիւններս տալու նրանց, որոնք կարիք ունին: Ես կատարում եմ լոկ իմ ընկերական պարտականութիւնս, ակնկալութիւն, երբէք չունիմ. սիրտս ուրախանում է, երբ զգում եմ, որ կատարել եմ ազնիւ և մարդավայել գործ: Բաւական է, որ ես պարտաւոր չմնամ խղճիս դէմ:

— Ոսկան, ես գիտեմ, ծանօթ եմ բարի սրտիդ բայց բանն այնտեղ է, որ զգացումներիդ համապատասխանող մտերիմ չունես:

— Ալմաստ, ես ասացի, որ փոխադարձի ակնկալութիւն չունիմ. արիտուրը մի տեսակ առուտուր է, առաքինութիւնը, մարդասիրութիւնը երբէք այդ աստիճան ստորացնելու չէ: Քաղցրութիւն զգալու նպատակով եղած բարեգործութեան համը-հոտը կկորչի, եթէ մէջը շահ կամ օգուտ նկատուի:

— Ի՞նչ ասեմ, Ոսկան, դու սովորական մարդ չես, երևակայածդ իրականացնելու համար ամէն բոլոր կեանքդ զոհելու պատրաստ ես, առանց մտածելու, որ նա

մօտիկներէդ համար շատ թանկագին է:

— Ալմաստ, Ալմաստ, կեանքս վաղուց զոհուած է, արիւնիս ամենավերջին կաթիլը պարտաւոր եմ ուրախութեամբ վոթելու թշուառի և նեղածի համար: Իսկական կեանքս ես վերջացրել եմ. այս երկրորդ կեանքս է, որ պատկանում է տառապեալներին: Աղաչում եմ. Ալմաստ, մի ստիպի երկար խօսելու, մի կեղեքի վշտալի սիրտս, գուցէ դառնութեանս ընկերուս բերանիցս թուցնեմ այնպիսի խօսքեր, որոնք իրաւունք չունին խոստովանելու:

— Ոսկան, որքան անթափանց է սիրտդ, միթէ կարելի է կարգալ խորհրդաւոր անցեալդ մելամաղձոտ դէմքիդ: Երկու տարի է ինձ շատ բան սորվեցրիր, շատ գաղտնիքների դռներն բացեցին աչքիս առաջ: Քեզ հետ, կամ առանձին հետաքրքրուած եմ ամէն բանով և ամէն գործի վերահասու եմ լինում, բայց երբ ցանկանում եմ քեզ վրա խորհել, կարծես գիւթեաձ լինիմ, ուղեզս չի գործում, չեմ կարողանում ես ինձ հաշիւ տալ քո մասին: Չկարծես, որ ես ցանկացած լինիմ անցեալդ և վշտերդ քննել, ոչ երբէք, դա ինձ համար անձեռնմխելի սրբութիւն է, բայց ներկայումս զգացածդ աննկարագրելի տազնապները, ես կարծում եմ, վշտալի անցեալիդ անբուժելի հետքերն են: Եթէ ցաւ ունիս, բաժանիր, երկուսով տանենք: Երկուսս էս մտաղ հասակում հալածել ու տանջել ենք, եթէ վշտերս փոխանակենք, իրար օգնած և մեղմացրած կլինինք դառնութիւններս: Վշտալի մարդիկ միայն ցաւերը իրար պատմելով և հաղորդելով անգամ թեթեւացնում են իրանց ծանրաբեռնեալ վշտալի սրտերը:

— Ալմաստ, դու մի անգին աղամանդ ես, բայց

ի՛նչ արած, որ անբուժելի և վերալի սրտի պատահեցիր: Քեզանից ոչինչ չէ կարելի պահել, քեզ ամէն բան խոստովանելը միութարութիւն է և մարդ հովանում է քեզ մօտ վշտերը նկարագրելիս: Գու խոցոտ սրտիս վէրքերի սպեղանին ես, բայց սիրտս, սիրտս...: Ծշմարիտ մտերիմ բարեկամութիւնս և անկեղծ սրտով դէպի քեզ ունեցած համակրութիւնս մինչև կեանքիս վերջին շունչը մոռանալու չեմ: Քեզ ամէն բան կասեմ, ամէն ցաւերս կ'այտնեմ, բայց ներիր ինձ այս իրիկուն, այսօր ես սաստիկ յոգնած եմ և հոգիս խռոված է, մի ուրիշ անգամ, մօտիկ օրերս, բոլոր անցեալ վշտերս քեզ կ'այտնեմ և դու էլ, թէև հետաքրքրութիւնդ կ'զհասցնես, բայց կ'մասնակցիս մորմոքների՝ հետաքրքրութեանդ պատժին:

— Հանգստացրիր, Ոսկան, գիտեմ, այսօր դու թէ հոգեկան և թէ մարմնական շատ յոգնածութիւն քաշեցիր: Ես թէև « Գէօլի-գլուխը » չեի, բայց սրտով և հոգեով տեսա, թէ ինչպէս տանջեցին Սիսակն ու Գրիգորը, տեսա, թէ ինչպէս գթասիրտ ծնողներն ու եղբայրները վերջապէս լացն ու մորմոքն թողած, կրճքով և թւերով սկսեցին պաշտպանել իրանց թշուառ ընտանիքների՝ աղջիկների և հարսների պատիւը: Այո՛, հինգ վեց հարիւր տարի է, որ մեր ծնողները միայն անմխեթար ողբերով էին անց կացրել այսպիսի դէպքերում իրանց տաժանելի վիճակը, բայց զգում եմ, որ սրանից յետո՛՛ ո՛չ կրկնւելու են չարագէպերն և ո՛չ էլ լիկ կոծերով վերջանալու են աղէտները: Մեր տղամարդիկ պիտի պաշտպանեն վերջապէս իրանց յոյսովն ապրած թոյլ արարածներին: Ո՛ր վ կարող էր յուսալ մի այսպիսի դէպք, ո՛ւմ մտքից կանցնէր այս սրտաշարժ տեսարանները, բայց

շատ ուրախալի է մեզ՝ կնիկներիս համար տեսնել, որ վերջապէս մեր էլ պատիւը պաշտպանողներ, մեր գլխին էլ օրինաւոր և զօրաւոր տէրեր ունինք: Ե՛լ հեշտութեամբ մեր դռներին չեն կարող մօտենալ բարբարոս այլագոյնիները. սրանից լետո մահը, վրէժխնդրութիւնն է սպառնալու այդպիսիներին:

— Ալմաստ, մի՞թէ մարդիկ մինչև այսօր չէին գգուում այդ ամէնը, ինչ որ այսօր պատահեց, մի՞թէ նրանք չէին բորբոքում այդպիսի բոպէներում, մի՞թէ նրանք անգուժ էին և չէին կարեկցում ձեր թշուառ վիճակի վրա, մի՞թէ չէին պատրաստ գոհելու իրանց կեանքը ձեզ համար: Մի՞թէ ձեր ամէն մի մազը նրանց համար իրանց կեանքից թանկ չէր: Սխալ ես, Ալմաստ, շատ սխալ, նրանք ամէն բան կանէին, բայց բռնակալութիւնը նրանց շշմեցրել էր, չունէին առաջնորդներ, որ նրանց այդպիսի բոպէներում կառավարէին: Մեր վարդապետները միայն սովորեցրել են ժողովուրդին լաց լինել՝ ծեծ ուտել և համբերութեամբ ամէն հալածանք տանել հոգու փրկութեան համար: Այդ պատճառով հայրերն լնկճեւել, սչնչացրել ու մեռցրել ին իրանց սրտերում կրքերն ու բորբոքումները և տարել են յուրեքամբ իրանց դէմ գործւած բոլոր գաղանական չարագործութիւնները: Խեղճ մարդիկ, սովքեր ձեզ ցոյց տւին ձեր ուղիղ և ճշմարիտ ճանապարհը, որ դուք էլ նրանց չհետևեցիք և արժանի եղաք դարերով «ստբուկ և լալկան» անւան: Մեղք չունին մեր նախորդները, անօրէն իսլամի լուծը և կոյր առաջնորդները նրանց արժանացրել են այդ ստրկութեան. ցաւալի է նրանց անցեալը, բայց ոչ պարտաւելի: Ալմաստ, Ալմաստ, լաւ իմացիր,

որ ո՛չ մի տղամարդու սրտում նւազ չէ գտնուում այն քաջ հոգին, որով կարողանայ պաշտպանել իւր թուլակազմ սիրելիների պատիւը, բայց դարերը իրանց պատահարներով միշտ փոխել են իրերի գրութիւնը և մեր պապերը անճարացած ստրկանալու են վիճակած եղել: Այն դարերն անցան, նրանք իրանց գոյութիւնը լաւ թէ գէշ պահպանեցին, մեզ աւանդեցին կեանք և վիճակ աւելի բաղաւոր՝ քան թէ իրանցը, մենք էլ այն ընթացքը բռնենք, որ ներկա դարումս չկորչինք, ոտնակոխ չլինինք և միայն մեր ազգի անունը մի պատմական մեռած տառ չմնա: Բաւական է, որ կեանքի պատերազմում մեր գոյութիւնը պաշտպանենք, այդ էլ մեծ յաղթութիւն է և ապա աշխատենք բարւոքել մեր վիճակը: Ահա, մենք էլ սրանից լետո չենք թողնելու, որ արատաւորի մեր ընտանեկան յարկը բարբարոս, մոլի լեռնականների ձեռքերով, էլ չեն յանդգնիլ կորզելու մեր տներից մեր սիրելի ազգիկներին ու քույրերին: Ազա ժամանակ, որ կապահովւի և մեր նիւթակաւը և կամտականութիւններն էլ չեն կարող խլել մեզանից մեր արիւն քրտինքով ձեռք բերած հարստութիւնը: Եւ մօտակա ապագայում երևում է աւելի փայլուն վիճակ մեզ համար:

— Ասկան, համոզուում եմ խօսքերիդ, բայց ներքի, որ ասեմ, եթէ մեր նախորդները ունենալին կամք, չէին թողնիլ, որ հարէմները զարգարէին հայ ազգիկները, կամ թէ ազգիկը փախցնող բէզի ոտքերը չէին համբուրել, այլ ուղղակի սրով-թրով նրա եօթը սլորտից վրէժ կլուծէին: Այն ժամանակ մենք գուցէ էլ աւելի լաւ վիճակի հասած լինէինք:

— Ալմաստ, դու դեռ լաւ կարգա այն իմ գրածը, որ քեզ տւի, այնտեղ պիտի գտնես սրանից վաթսուն և եօթանասուն տարի առաջ մեր պապերի դրութիւնը, պիտի համոզուիս, որ նրանք բացի պաշտպանողական դերք բռնելուց՝ ուրիշ բան չէին կարող անել:

— Գիտեմ, գիտեմ բայց յրանից քսան-երեսուն տարի առաջ ինչի՞ լուում էին անգութների դէմ:

— Նրա համար որ դեռ ժամանակը չէր, նոր սերունդ էր աշխարհք գալու, հները պիտի ասպարէզը նորերին թողնէին:

— Բաւական է քեզ ձանձրացնեմ, յոգնած ես և քնի կարօտ, հանգստացիր, բայց մի մոռանալ, որ էգուց իրիկուն ինձ վշտերիդ հաղորդակցելու ես:

— Այո՛, էկուց իրիկուն քեզ շատ բան եմ պատմելու, շատ նոր բան ես իմանալու և շատ ձանձրանալու ես իմ պատմութիւններից: Գիտես, որ եթէ սկսեմ, էլ վերջը չեմ կարող հասնել:

— Ուրախութեանս չափը չկա: Ոսկան, քեզ լսելուց աւելի քաղցրութիւն չեմ գգում կեանքումս: Երանի՛ թէ միշտ միջոց ունենայիր առականերովդ կրթւելու հոգիս և լուսաւորելու միտքս: Ի՞նչ էի երկու տարի առաջ և ի՞նչ եմ այսօր: Այն ժամանակ մարդիկ զգանք էին պատճառում ինձ, իսկ այսօր.....

— Լաւ հոգին յաւ բան ըմբռնելու ընդունակ է և բարի սերմերը պարարտ հողի մէջ ցանկելով՝ տալիս է մեծ արգիւնք:

— Սերմնացանը պիտի ընտրէ սերմը, հողը պատրաստ է ընդունելու և պտղաբերելու: Գիշեր բարի, Ոսկան, քաղցր քուն եմ ցանկանում:

-- Լոյս բարի, քեզ էլ հանգիստ քուն:

Ալմաստն իջաւ սանդուխներից և տուն մտնելով բարձրացաւ սեաքուն, սկսեց հանել: Երկու երեք անգամ համբուրեց աղջիկը և կրծքին սեղմելով պտակեցաւ: Թէև շատ ուշ էր, շատ չարչրեած և տանջւած էր, բայց քունը չտարաւ: Ալմաստի սիրտը տակ ու վրա էր, նա մտածում էր, թէ ի՞նչ է լսելու հետեւալ իրիկունը Ոսկանից: Արդեօք Ոսկանն էլ գգում էր այն, ինչով որ ինքը վաղուց այլուում ու տապակում էր: Արդեօք պիտի վերջապէս դուրս գային այն երկու խօսքերը Ոսկանի շրթունքներից, որոնց սպասում էր Ալմաստը: Իւր զգացումները պիտի համապատասխանէին, թէ յուսակտուր պիտի դառնար:

— Ո՛չ, ասում էր նա ինքն իրան: Ոսկանը այնքան բարի և այնքան զգայուն սիրտ ունի, որ չէ կարող դիմադրել իր առաջ բացած սրտիս դէմ: Նա սիրում է ինձ և պիտի յաւիտեան սիրէ: «Մինչև կեանքիս վերջին շունչը դէպի քեզ ունեցած անկեղծ համակրութիւնս մոռանալու չեմ»: Ի՞նչ չէր կարող ուղղակի ասել՝ սէրս: Այո՛, այդ համակրութիւնը ժամանակի ընթացքում պիտի դառնա..... դարձաւ անկեղծ սէր: Մի՛թէ ես էլ նոյնը չգգացի: Մեքենայով կարել սորվեցնելիս ես սկսեցի համակրել նրան և այդ համակրութիւնը օրէ օր շատացաւ, շատացաւ և փոխեցաւ սիրո: «Խոցոտ սրտիս սպեղանին ես», ասաց, այո՛ և մի՛թէ այդ բարեբաղդ վիճակին հասնելու եմ, մի՛թէ արժանի եմ այդ կոչմանը: Ոսկան, մի՛թէ դու ինձ պիտի այդքան բարձրացնես, և ի՞նչ արժանաւորութեանս համար: Ո՛չ, դու գիտութիւնով, հանճարով, տոկունութիւնով, գոր-

ճունէնութիւնով և զարգացումով ինձանից անհամեմատ բարձր ես, ի՞նչ իրաւունքով պիտի կարողանամ քեզ հետ հաւասար լծակից դառնալ: Չէ, դու ազատ մարդ ես, բայց ես, վեց տարի է կին եմ, անիրաւութիւն է իմ կողմից քեզ կապել վիճակիս հետ: Ո՛չ, գնահ, ազատ ապրիր, ցանկացածիդ և երեւակայածիդ արժանացիր, ես գոհ կլինեմ, եթէ միայն անկեղծ և մտերիմ բարեկամ մնաս ինձ հետ, մինչև վերջին շունչս: Պիտի սիրեմ քեզ միշտ, լիշատակդ օրհնեմ, ընտրածիդ պաշտեմ և աշխարհի երեսին վայելածդ օրն ու արևը, կեանքն ու ուրախութիւնը իմս պիտի հաշուեմ: Ես շատ ու շատ բաւական եմ իմ վիճակից, դու անդնդից ինձ լոյս աշխարհ բարձրացրիր, լիմարի նման ուզում եմ, որ շալակիդ բեռ դառնամ և երկինք՝ աստղերի դասը բարձրանամ: Ո՛չ, Ոսկան, ո՛չ, սիրելիս, ես բարեկամ պիտի մնամ, ուրախութիւնդ տեսնելով պիտի հրճւիմ և փայլդ ինձ փառք համարեմ: Բայց... Տէր իմ... պիտի այնքան ուժ ունենամ, որ համբերեմ, զրսպեմ կրքերս... այս ի՞նչ սոսկալի կրակով է բռնկւած սիրտս... Ո՛հ, առանց նրան կեանքս կորած է, եթէ նրան մի ուրիշի գրկում տեսնեմ... Ի՞նչ պիտի լինի դրութիւնս: Արքան որ այս միտքը հակառակ է կամքիս, դատողութիւններիս ., միթէ՞ պիտի կարողանամ դիմանալ կրքերիս... Չարաչար տանջւելու և հալումաշ կողինքն է ինձ սպասելու այդպիսի դէպքում... Բայց ո՛չ, Ոսկանն այնքան բարի է, այնքան վեհանձն է, որ իւր բարձունքներից պիտի իջնի, խոնարհի և ինձ էլ բարձրացնէ իւր աստիճանի վրա: Միթէ՞ կասկածելի են նրա բարեբարութիւնները, միթէ՞ նա ինձ աղմից այս վիճա-

կին չը բարձրացրեց: Ո՛չ նա պիտի չկորցնէ իւր տնկած ծառը: Նա պիտի սիրէ...

Այս դառան մտածութիւնների ժամերում, յանկարծ ոտնաձայներ լսեցան երթից և դրսի դուռը ամուր-ամուր բաղխեցին երկու անգամ: Ո՛չ ոք ձայն չհանեց, լռութիւնը արձագանք տւեց այդ բախումին: Բայց Ալմաստը սկսեց դողդողալ կողնքի մէջ և սիրտը այնպէս տրոփում էր, որ քիչ էր մնում կրծքի կափարիչը ետ բացւէր: Անշարժ, անկողինի մէջ կուչ եկած, շունչը բռնած զնգզնգում էր աննկատելի կերպով և սպասում գործի վախճանին: Գրսի դուռը երկրորդ անգամ աւելի ամուր բաղխեցին: Երթիքը խօսակցութիւնները շատացան և ձայնը աւելի մօտեցաւ: Խօսակցութիւնները լսեց, թուրքերէն էին խօսում, — Գո՛ղ կա՛, սկսեց աղաղակել — Հաւա՛ր, հաւա՛ր — և շորերն հագնել:

— Գուռը բաց, ասացին երթից, գող չկա, բան ունենք ասելու:

Ալմաստը կանչում էր, — Հաւար, հաւար, ճրագը վառեց: Բարեբաղդաբար փոքրիկը անշարժ քնած էր: Ալմաստը ճրագը ձեռքը ժուր եկաւ տանը չորս կողմը և մօտեցաւ բակի դռանը: Գուռը բաղխում էին: Մոլորեցաւ այրին, ճրագը ձեռքին ման էր գալիս տան մէջ և չէր համարձակում ո՛չ ճաւուր և ո՛չ դուրս գալու: Երթից մի փոքր ծածկից, ասացին թուրքերէն:

— Գոյրիկ, քոյրիկ, դուռը բաց, մի վախենալ գող չկա, բան ունինք ասելու:

— Այս ժամանակ ի՞նչ բան ասելու էք եկել, պա-

տասխանեց Ալմաստը թուրքերէն լեզուով, առաւօտը լոյս աչքով կարող էք գալ:

— Ո՛չ, այնպիսի հարկաւոր գործ է, որ գիշերս ասելու ենք: Փաշայի կողմից ենք եկել....

— Ասացէք այդ տեղից, գիշերը ես դուռը չեմ կարող բանալ: Նամանաւանդ գիտէք, որ ես տանը էրիկ մարդ չունիմ, ի՞նչ գործ ունէք դուք այս ժամին այրի կնոջ մօտ:

— Տղերք, ասաց, սխալ խո՛ չենք, ասում է, որ էրիկ մարդ չկա այս տանը:

— Ո՛չ, սխալ չենք, ինքը այրի է, բայց այն մարդը վերեւի յարկում է մնում: Նա այստեղ օտարական է և վարձով է ապրում:

Ալմաստը դողում էր, ծնկները ծալուով էին, չէր կարողանում կանգնել, օտարականի մասին լսած խօսակցութիւնից քիչ մնաց, որ գլորւէր և նւազէր, բայց բոլոր ուժը հաւաքեց, ուզեց իմանալ գործի հանգամանքները և օգնել Ոսկանին: Ոսկանը յօգնած մարմնին հէնց էն էր հանգիստ էր տւել և քունը տիրապետել էր նրան, երբ երբորդ բաղխիւնի ձայնից զարթնեց: Մինչև անկողնի մէջ շուռ գալը՝ կրկնեցին բաղխիւնը, որ մեռելային զանգի տխուր ազդեցութիւնը թողեց Ոսկանի սրտում: Ոտքի ելաւ, մօտեցաւ լուսամուտին և տեսաւ ոտիկանների խմբին: Զգաց իւր գրութիւնը, բայց հնարք չունէր փախչելու. խոհեմութիւնը ստիպում էր անձնատուր լինել. նամանաւանդ մի այնպիսի պտճառ չունէր, վախենալու:

— Այդ ո՞վ է, հարցրեց լուսամուտից:

— Բացէք, Ոսկան էֆէնդի, մենք ենք, ձեզ

հաղորդելու գործ ունինք: Շտապեցէք, բացէք....

— Այս րոպէիս, սպասեցէք, շորերս հագնեմ:

Շտապով մուտ տեղը բացեց սնդուկը և մի քանի կտոր թուղթ հանալով տարաւ դուրս և ատամնաբուժի կրակարանը գցելով այրեց և այդ կրակի բոցից վառեց ճրագը: Շորերն հագաւ, իջաւ բակը, դուռը բացեց: Զինւորական քննիչը, որ տասնըհինգ օգնականներով և երեսունից աւելի զորքերով շրջապատել էր տունը, անմիջապէս ձերբակալեց Ոսկանին և սրա ներկայութեամբ երկրորդ անգամ խուզարկեց սենեակը, բոլոր իրեղէններով միասին նրան էլ տարին զինւորական դիւան (Իւլանի Հարբ):

Միւսնոյն բանը պատահեց նոյն գիշերը վիրաւորւած Սիսակ Սարաֆեանի Գրիգոր Յարութիւնեանի, Միսաք Մախաթջեանի, Տօնականի հետ: Մթումը ամէնը ուղարկւեցան Կարինի միջնաբերդը և ջոկ-ջոկ խցիկներում գաղտնի ու պինդ պահւեցան: Նշան Կարապետեանը իւր մի թուրք պաշտօնական բարեկամի կնոջ շնորհիւր և սղորմութեամբը, վաղ օրով իրերի դրութիւնը լսած լինելով, նոյն իրիկունը փախել էր Հասան-Ղալա, որտեղից հետեւեալ օրն անցաւ Ղարաուրդան և Ղարսում մի կեղծ պարսկական անցաթուղթ ձեռք բերելով, թռաւ Հիւսիսային Ամերիկա, Միացեալ Նահանգները ազատւեցաւ թուրքերի խոնաւ բանտերի դառն տանջանքներից:

Ի .

Բ Ա Ն Տ

Այն իրիկուներ ոչինչ քննութիւն չեղաւ, շատ ուշ էր, ուղակի կարծեցեալ լանցաւորներին իրանց նոր բնակարանները տեղաւորեցին: Կարին գնացողը տեսած կլինի նրա Միջնաբերդը, բայց գուցէ հետաքրքրուած չլինի մէջը մտնելու: Հարկաւոր է տեսնել այդ վայրը, դա Բարձր Հայոց մայրաքաղաքի Ակրէապօլիսն է, Ալդրուսմի Բաստիլն է: Քաղաքի կետրոնում է գտնուում, մի բլրակի վրա շրջապատուած է պարիսպով, որի վրա անցեալ դարերը թողել են իրանց հետքերը: Տխուր են այդ որմերը, սև և մուլլ. իսկ տեղ-տեղ երևացող նեղ և կարճ երկաթի վանդակներով պատուհանները սոսկացնում են մարդու: Աէրայի դռնից մի հայ երիտասարդ պոլիցիական պաշտօնեայ թևերը արագ շարժելով գնում էր դէպի միջնաբերդը (Կօմիսարների շնորհիւ մի քանի օր հայ պաշտօնեաներ էլ ունեցաւ Կարինի պոլիցիան): Միջնաբերդի դուռը պաշտօնեայի առաջ բաց էր, որը աներկիւղ առաջ գնաց, անգաղար զինւորներից և զօրականներից բարևելով և բարևելով: Պաշտօնեայի նոր կազմած ժանդարմի գունդը վարժուում էր զինորական շարժումներով: Կժւար էր մահմեդական զինւորներին և ծառայողներին՝ հային հնազանգել և պատ-

ւել, բայց, զինւորական կարգապահութեան համաձայն, գունդը իսկոյն հրացաններով բարևի կանգնած ընդունեց իւր հրամանատարին: Վերջինս քննեց իւր զնդի հագուստը, կապուստը, մաքրութիւնը և զանազան զինւորական խաղեր և շարժումներ անել տալով, թողեց հեռացաւ, գնաց բերդի խորը գէպի ժանդարմի բնակարանները: Այդ կողմերը ման գալիս, նա լսեց իւր ետևից եղած հետևեալ նկատողութիւնը:

— Չարմանալի են մեր փաշաների գործերը, իբր թէ մի միւսիւլման չկար աշխարհի երեսին, բերին այս «գեաւուր» տղային հրամանատար նշանակեցին:

Ի՞նչ անէր պաշտօնակալը ինքը մենակ այնքան բազմութեան մէջ, որ մէկին գլուխ ելնէր. անճարացած լուեց, բայց այսպիսի խօսքեր դեռ շատ լսելու էր, սա մի փոքրիկ յառաջաբան էր: Գնդի բնակարանները լաւ աչքից անցնելուց և կարևոր նկատողութիւնները անելուց լետո, մօտեցաւ խոհանոցին և այնտեղից դէպի մթերանոցը ուղղւեցաւ: Մթերանոցի վերակացուն դեռ չէր եկած, նրա օգնականի հետ քիչ ժուր եկան: Հայ պաշտօնակալը բաժանւեց և մօտեցաւ մի պատի տակ . . . . նպատակով: Նկուղին կից ներքնատան բանտի լուսամուտից մի խեղդուած ձայն լսեց պաշտօնականը, որ իւր անունն էր կանչում:

— Արամ, Արամ, Արամ:

Աչքերը խօնարհեց և տեսաւ, որ բանտից իրան կանչողը իւր բարեկամ Ոսկանն էր:

— Ի՞նչ ունիս, ի՞նչ ես ասելու, ասաց Արամը:

— Արամ. խնդում եմ, Ալմաստին տեսնէք և ասէք, որ իբր « սևը սպիտակից չէ ջոկում »:

— Չեմ հասկանում, ասաց Արամը:

— Նա կհասկանա, ասաց և ետ քաշւեցաւ:

Արամը նոյնպէս հասկացաւ և ընկերին օգնելու նպատակով, թողեց գործը և վազեց քաղաք՝ Ալմաստին գտնելու:

Ոսկանը Միջնաբերդի խորքում, ներքնայարկում արգելւած էր, այդ պիտի լինէր նրա բնակարանը: Մի ութհարկեր կամ հազար տարւան շինութիւն էր այդ ներքնատունը, որի կամարակապ առաստաղի և որմի քարերի միջոցները տեղ տեղ դատարկւել էին, տեղ տեղ ճեղքւել դարերի ընթացքում յաճախ պատահած երկրաշարժներից, բայց ժամանակին վարպետը այնպէս էր շարել քարերը և լցրել շաղաղը, որ դեռ շատ դարերի դիմադրելու են այդ պատերն ու կամարները: Դրանք թշնամի երկրից բերւած գերիների և երկիրը ասպատակող վայրենիների համար էին շինւած ժամանակով, իսկ այժմ երկրի հարազատ որդիներին էին ծառայում: Միջնաբերդը որ մի ժամանակ քաղաքը պաշտպանում էր արտաքին թշնամիներից, այժմ ներքին թշնամիներին էր պահպանում իւր մէջ, Օսմանեան Բաստիլլն էր Հայաստանի սրտում: Ութ կամ տասը ոտք երկայնութիւն ունէր Ոսկանի խցիկը և չորս կամ հինգ ոտք լայնութիւն, հողից՝ յատակ, խոտից՝ անկողին և քարից՝ բարձ: Լոյսը նկուղի վրա գետեղած ծակիցը էր ստանում, որտեղ մի մարդու ոտք հազիւ տեղաւորւէր: Պատերը խոնաւ, քարերի վրա դարերի ընթացքի աղտոն ու փոշին նստած, առաստաղը ցած և օդը ապականւած ու ծանրացած: Օրական կէս օխանոց (1 1/2 ֆունտ) հաց ունէր բաժին և մի քարղան ջուր: Ահա Միջնաբերդի կալանաւորի բնա-

կարանը և կեանքը: Ոսկանի միւս չորս ընկերներն էլ այս վիճակումն էին:

Աքլորին խօսելուն մօտ բերին այս որջը Ոսկանին, որը որջ մարմնով սոսկաց, այնպէս որ կարծես գլխիցը մի քույտ եռացրած ջուր լցնէին: Աչքերը մթնեց, արիւնը դադարեց շարժւելուց, սիրտը բաբախելուց, նւաղած ընկաւ խոտերի մէջ և մնաց երեք ժամ թմրած: Աւելի մեռելութեան էր նմանում այդ հանգստութիւնը, քան թէ քնի: Քննիչը, որ բնակում էր միջնաբերդում, առաւօտ վաղ ամէնից առաջ կանչեց իւր մօտ Ոսկանին: Մութ և խոնաւ անցքերից չորս պահապաններով շրջապատւած անցաւ Ոսկանը մտաւ քննիչի գրասենեակը: Ետ քաղաքավարի վարեց հետը պաշտօնականը և մի աթոռ առաջարկելով՝ նստեցրեց դէմը: Հրացանակիրները սենեակի դռան մօտ աթոռի ետևն էին կանգնած:

— Ոսկան է՞քէնդի, ասաց քննիչը ծանրութեամբ, մէկ երկու հարց ունիմ ձեզ անելիք, յուսով եմ որ կատարեալ և ճշմարիտ պատասխան կտաք:

— Պատրաստ եմ և ապահով եղեք, որ ստելու կարիք չունիմ:

— Ասացէք, խնդրեմ, ուրիշ տեղ կայք, կարողութիւն, ինչք, թուղթ, գիրք ունէք, թէ միայն ձեր սենեակում գտնւածներն են:

— Աշխարհիս երեսին ոչ մի բարեկամ, ազգական չունենալով, ունեցածս կամ միշտ մօտս եմ պահում, կամ հետս վերցնել չկարողացածս՝ սրան-նրան բաշխում: Իմ բոլոր ունեցածս սենեակներումս է և վրաս, ուրիշ տեղ բան չունիմ:

— Լաւ մտածիր, գուցէ քաղաքում ընկերներիդ մօտ, ծանօթներիդ քով թողած կամ մոռացած լինիս թղթեր, նամակներ, պատկերներ, գրւացքներ, ոտանաւորներ, թատերգութիւններ, վերջապէս ինչ որ ձեզ է պատկանում կամ ձեր ձեռքով գրւած է, մի տեղ թողած կամ տւած չունի՞ք:

— Աչինչ չունեմ, թղթերի: մեծագոյն մասը գտնուում է քաղաքական քննիչի մօտ, որտեղից կարող էք ամէն բան վեր առնել: Աւրիշ տեղ բան չունիմ:

— Թէև ես ձեզ հաւատում եմ, բայց պարտաւոր եմ ստորագրութիւն առնել այդ պատասխանիդ մասին:

— Պատրաստ եմ:

— Թուրքերէն գրել գիտէ՞ք:

— Այո՛,

— Գրեցէք այս հարցի պատասխանը:

— Ոսկանը գրեց, բայց յանկարծ միտքն ընկաւ, որ իւր գրած մի վէպը գտնուում էր Ալմաստի մօտ, ներքի տանը, որը կարող էր գտնուել և հակասել իւր ստորագրութեանը, նամանաւանդ, որ գրքի բովանդակութիւնը կարող էր և խեղճ կնոջը գցել պատասխանատուութեան տակ: Պատասխանը գրելուց յետո, ասաց.

— Անցեալ իրիկուն, անձրևի ժամանակ սենեակս կաթեց, ես պարտաւորւեցի ներքի տունը, տանս տիկնոջ մօտ անցնելու մէկ երկու ժամ: Այդ ժամանակ կարգում էի իմ մի գրւածքը, որ տեղ ամփոփւած է դարուս սկզբների կարինի կեանքից մի պատկեր: Այդ գրւածքը կարծեմ այնտեղ թալաքը դրի և մոռացա: Խնդրում եմ, լաւ նայեցէք նախ իմ թղթերիս մէջ, տեսէք կա-

«Աղայիկ Աղայի կամ Անատուլու Սարաֆի» վէպը, եթէ չկա, ուղակի կարող էք մարդ ուղարկել և բերել տալ:

— Լաւ, այդ էլ աւելացրէք ձեր պատասխանի մէջ, գրեցէք, ինչպէս կամենում էք:

— Ոսկանը կատարեց:

— Աւրիշ ոչ մի բան չունէ՞ք:

— Աչինչ, ոչինչ չեմ լիչում:

— Գուցէ մոռացած լինէ՞ք:

— Բան միտս չէ գալի:

— Լաւ, կարող էք գնալ և սպասել առաջժամ, իրիկունը կկանչեք ձեզ ժողով: Բայց ասացէք խնդրեմ, տան տիկինդ կարող է կարգալ այդ գիրքը. եթէ որեւէ տոմսակ ուղարկելով պահանջենք, կօտանանք:

— Ոսկանի մտքից վաղ ժամանակ անցել էր այդ հարցի նպատակը և առանց վարանելու, ասաց.

— Ոչ, նա չգիտէ, բայց եթէ պատմեն, թէ այն ձեռագիր տետրակն էք ուզում, նա կհասկանա և կտա:

— Աւրեմն անգրագէտ է:

— Այո՛, գիր չգիտէ:

Այս հարցերն էլ արձանագրեցին: Ոսկանը սուկում էր, եթէ անմիջապէս տուն գնային, գանազան հնարներով կարող էին ուրիշ պատասխան առնել, բայց բարեբաղդաբար, Ոսկանը խցիկը գառնալուն պէս՝ տեսաւ Աբամին, որը այդ չարիքի առաջն առաւ անմիջապէս:

— Մեծ բարեբաղդութիւն էր, որ անցեալ գիշեր այդ օտարական պարօնի հետ ծանօթացա, ծանօթից և բարեկամից ես միշտ կեանքումս օգտուել եմ: Եթէ այն իրիկունը մի երկու ժամ խօսակցութիւնով

չգրաւէի այդ բարեսիրտ պատանիի սիրտը, գուցէ շատ ցաւալի վերջ ունենար ապագաս և թշուառ Ալմաստն էլ տանջւէր ինձ հետ:

Բանտում այսպիսի և սրա ներհակ մաածութիւններով անց կացրեց օրը Ոսկանը և թէ որքան երկարեցան այդ տաժանելի ժամերը, միայն քաշողը կարող է գուշակել: Բարեբաղդաբար համբերող սիրտ ունէր կալանաւորը և համբերատարութեամբ տանում էր այդ դառնութիւնները: Երբեմն երբեմն երբ յուսահատութիւնը տիրապետում էր, չար մտքերը իրանից հեռացնելու համար բարձր ձայնով երգում էր և երգի ձայնի դալլալիկների հետ իւր տրտունջներովը վշտերը ցրում ճնշւած սրտիցը: Միտքը երգերի նիւթի, գաղափարի և եղանակի ազդեցութեան տակ բանտից հեռանում էր երեւակայական աշխարհ և քիչ ժամանակ մոռանում էր ներկա աննախանձելի վիճակը:

Օրւա մեծագոյն մասը անց կացրեց խտտերի վրա պառկած, և գլուխը շատ չցաւեցնելու համար, պալտօն ծալել և դրել էր գլխի տակ: Բայց այդ միօրինակութիւնը նրան սաստիկ վրդովում էր, նա անդադար բարձրանում, մօտենում էր լուսամուտին, դուրս նայում, անց ու դարձող զինւորներով հետաքրքրւում և սրանց խօսակցութիւնները բառ-բառ լսում, կրկնում և նրանց վրա մտածում էր: Ձանգերի ձայնը, որ հասաւ ականջին՝ պառկած տեղից թռաւ Ոսկանը և շուրջը խաւարը մի լաւ քննելուց յետո, մօտեցաւ լուսամուտին, աչքից անց կացրեց դօրանոցներն ու գօրքերին և տիրաձայն երգեց Մեծ սրահի սգալի երեկոների համար Ներսէսի գրած մեղեդին:

« Նայելա՛ց սիրտի, Հայրդ գթած, . . . . . ի յստարի շրջող դիւանց » . . . .

Սիսակը հեռւից՝ իւր որջից լսեց այս քաղցր օրհներգութիւնը, իւր գոհունակութիւնը յայտնելու համար, միւս տունը երգելով՝ պատասխանեց Ոսկանին.

« Ելեա՛նք յոյս առեղծել . . . . . »

Ոսկանը մի ժամանակ ուրախացաւ, երբ լսեց իւր ձայնի արձագանքը, բայց անգութ պահապանները ստիպեցին երկուսին էլ լռելու և չօրհնաբանելու Արարչին. որը երես էր շուռ աւել թշուառներից: Երգի ձայնը կիսատ մնաց կալանաւորների բերանում և շարունակութիւնը մրմունջներով բարձրացաւ Ամենակարողի տօնանը: Անմիջապէս այդ օրհներգութեան ձայնը հասաւ բոլոր ընկերների տկանջին և ուրախ էին, որ բանտումն էլ միտսին էին կատարում իրանց դերը՝ աշխարհի բեմի վրա, մարդկութեան աչքի առաջ: Մեծ հսկողութիւն կար բանտարկւածների վրա, երգած բոլոր երգերը, խօսած ամէն նախադասութիւնները, բերանից թռած տրտունջներն ու բողոքները արձանագրւում և ուղարկւում էին զինւորական քննիչին, որը մանրամասն քննութեան նիւթ էր շինում: Նոյն իրիկունը քննիչ հասարակաց դատախազի հետ այցելեց բանտարկւաներին: Միւսմի ամէնի վիճակն իմացաւ դատախազը և արձանագրեց իւր մատեանում:

— Միւղղէլի էֆէնդի (դատախազ), սոսց Ոսկանը, սենեակս նկուղի մօտ է. պարտաւորւած գաղի և աղբի հոտ ծծեցի ողջ օրը, եթէ երկար պահելու էք ինձ այս բանտում, խնդրում եմ որջս փոխէք:

— Շատ բարի, ասաց դատախազը, լուսամուտը քննելուց լետտ և անմիջապէս փոխել տւեց Ոսկանին մի ուրիշ խցիկ, որի լուսամուտը նաչուժ էր միջնաբերդի պարիսպի միջից ողջ քաղաքի վրա, և «Օվան» (Կարինի մեծ դաշտը) ամէն ըրպէ՛ս Ոսկանի աչքի առաջըն էր:

— Աւրիշ բան չունէք ասելու, Ոսկան էֆէնդի, ասաց դատախազը:

— Խնդրում եմ, շտապեցնէք գործիս քննութիւնը և իմացնէք ինձ քննիչի մեղադրական ճառի բովանդակութիւնը, որպէս զի ես էլ իմանամ յանցանքս և կատարեալ սրտով ապաշխարեմ:

— Շուտով, Ոսկան էֆէնդի, շուտով կպարզւի ամէն բան և յոյս ունիմ, որ արդարութիւն կգտնէք մեր գործի մէջ:

— Արդարութիւն...



**ԻԱ**

**Ա Ռ Ա Ջ Ի Ն Ք Ի Շ Ե Ր**

Կամաց-կամաց Օվաի հեռու ծայրը արևը մայր մտաւ և հորիզոնը կարմիր, մանիշակի, նարնջի և կա-

պոյտ գոյնի փոքրիկ ամպիկներով զարդարւեցաւ: Երեք չորս տեղով արևի ճառագայթները ծածկել էին ամպերը և ոսկեփալ գծերից կազմւած ձողաձև ճառագայթները կենտրոնից տարածւել էին երկնքի բարձունքի կողմը ուղղահայաց և թէք դիրքով: Քուլա-քուլա ամպերը ծածանւում էին այդ շողշոջացող լուսի մէջ և իրանց ծանրընթաց շարժումներով անդադար փոխում էին տեսարանները: Միշտ ուրախ, միշտ զւարթ պատկերներ է տալիս վերջալույսը Կարինին, անհետացող արևի հետքն անգամ, ծիրանեզոյն բեհեզի նման, քօղերով և վարագոյրներով ծածկում է Օվաի ընդարձակ հորիզօնը: Յաճախ այդ երևոյթները ժամերով տևում են և հորիզօնի այդ պատկերները պէս-պէս մեկնում և աւանդապահ ժողովուրդի յաջորդներին:

Մի ժամ աւել էր անցել արևը մայր մտնելուց, իսկ կարմիր ու մանիշակի ամպերը հորիզօնից չէին հեռանում և կարծես տարածւում էին հետզհետէ դէպի բարձունքը: Միջնաբերդի պարսպի փոքրիկ լուսամուտից դիտում էր Ոսկանը այս տեսարանը, հետևում բուր ծալքերին, խողերին և գոյներին, աչքի մէկը հիւսիս-արևմուտ էր տանում, մէկը հարաւ-արևմուտ: Քանի քանի անգամ այդ գեծը չափել, չափչփել, մտքի մէջ դասաւորել, գետեղել, իւր դարմանալի արագ փոփոխութիւններով, իրար աննման նոր-նոր երևոյթներով հինը, անցեալը անհետացել էր և նորը ներկայացրել նրա աչքերին, այն պա՛մանով, որ շուտով դրան էլ սւրիշներն էին յաջորդել: Այնքան բազմազան, այնքան բազմաձև, այնքան բազմազոյն, և շուտ շուտ էին անցնում այդ տեսարանները Ոսկանի տեսանելիքի

առաջից, որ երբէք խնդրեամք չէին տպուում նրա չի-  
շելիքների անջինջ մատեանում: Այդ բոլորը ժամերով  
նրա միտքը զբաղեցնում էր և հոգին բնութեան այդ  
քաղցրութիւններում խորասուզած՝ առժամանակ մոռա-  
մում էր վշտերը և սոսկալի կացութիւնը:

Կասոյտ երկինքը ծածկւած պսպղուն անթիւ  
աստղերով, ասուպները կարծես կատուել և անդադար  
այս ու այն կողմից թօթափում էին տիեզերքի ան-  
դունդը: Լուսինը լամպուել էր և չէր ուզում մարդ-  
կանց աչքին երևել, սպասում էր, որ անիրեսները քուն  
մտնեն, որպէսզի իւր վշտալի սիրտը նորէնոր մորմո-  
քումով չջղատէ և աւանց վշտակիրների սգալի դէմ-  
քերը տեսնելու՝ կատարէ իւր շրջանը: Բանտի խորքե-  
քերում, մի՞նումը ամբողջ օրը անց կացրած աչքերը՝  
առանց լուսնի լոյսի էլ տեսնում էին բանտի պարսպից  
հարիւր ու հարիւր լիսուն քայլ հեռու անց ու դարձ  
անող այն անձնաւորութիւններին, որոնք ոլոր-մոլոր  
լուսահատ որոնում էին իրանց սիրելիներին: Նրանք  
ման էին գալիս անճրկած և լաց լինելու անգամ ան-  
կարող: Գրանց միջից շատ ծանօթներ տեսաւ Ոսկանը,  
որոնք ինչքան էլ իրանց աչքերը շուռ տւած որոնում  
էին պարսպի ծակերը, բայց բան նկատելու անկարող  
էին: Լուսամուտը նեղ էր, դուրս գալ չէր կարելի, պա-  
տը բարձր էր, թուչելն անկարելի և պահասանները դը-  
ռանն ու պարսպի տակ կանգնած էին, խօսելը, ձայն  
բարձրացնելն արգելւած էր կալանաւորներին:

Պարսպից ոչ շատ հեռու մի աղքատիկ տան տա-  
նիքի վրա նստած էին երկու միջահասակ մարդիկ,  
ծխացնելով իրանց մուշտիկներով Մուշի ծխախոտից

շինւած սիկարները՝ զրից էին անում իրանց անգու-  
վիճակի վրա: Քամին խշխշուն էր և նրանց ձայնը հաս-  
ցնում դէպի բանտարկեալների լուսամուտները: Ոսկանը  
բոլոր ուշքով սրել էր ականջները լսելու դրանց խօ-  
սակցութիւնները, բայց միջոցը հեռու էր և բան հաս-  
կանալը դժուար:

— Մարգար աղբար, ասում էր Թորոսը, ձեռքով  
հորիզօնը ցոյց տալով, այս իրիկուն երկինքը քանի գը-  
նաց կարմրեց, այս ինչ կրակ ու բոցով ծածկուել է աշ-  
խարհքը: Լաւ նշան չէ, արիւնի հոտ է գալիս: Ինչ որ  
է, վերջերս բարի լինի, լաւ բան լուսալ չէ կարելի:

— Հա՛, Թորոս աղբար, միտքդ է, այն տարին էլ  
այսպէս մէկ երկու գիշեր կարմրեց, չանցաւ մի երկու  
շաբաթ, կռիւն սկսեց: Թոփի գիւլիւլի, թւանքի ղուր-  
ղուշունի տակ այնքան արիւն թափուելէն ետեւ. այն-  
քան հազար մարդիկ էլ հարնքով մեռան:

— Ինչ որ է, Մարգար աղբար, աղօթենք, «Եկես-  
ցէ» անենք, Աստու բարկութիւնը ելնէ մեր վրայէն:  
Փաժին տարին միտքդ է, (1860 թ.) մէկ ամիս այսպէս  
կրակ ու բոցով երկինքը ամէն իրիկուն բռնուելէն ետեւ,  
շիտակ մէկ ամիս էլ ժաժքը քշեց, օրական տաս քը-  
սան տուն փլաւ, ոլոր ոլոր մնացինք: Ան ինչ օրեր էր,  
ան ինչ տնաւերութիւններ էր:

— Թորոս աղբար, գիտես թէ այս իրիկաւ բոցե-  
րը շատ շատ է, չի նմանիր ան տեսածներուն, մէկ  
լաւ նայէ, տես ինչ ալաֆ առել ու կվառւի աշխարհ-  
քը: Շատ գէշ ցոյց կտա, վախենալու է:

— Է՛հ, Մարգար աղբար, անցածն անցել է, մոռ-  
ցուել է, աս էլ անոնց պէս բան է, բայց դեռ աչքերիս

առաջն է, մեզ կոսկացնէ, կողողացնէ:

Այսպիսի մեկնութիւններ էին տալիս բնութեան հրաշալիքներին, չարատանջ ժողովուրդը միայն վըշտեր և ցաւեր էր գուշակում ամէն քալլափոխում: Սըրանց ծանր ձևերն ու շարժումները, թեւերն անդադար կարմրած հորիզոնի կողմը դարձնելը, լիշեցրեց Ոսկանին այն բոլոր առասպելները, որոնք խիստ շատ անգամ նա լսել էր ալեորներից և սնապաշտներից: Ակամա միւսնոյն զգացմունքը անցաւ նրա ջղերի միջից և մի քիչ ժամանակ նա էլ նրանց հաւասարեցաւ: Տանջանքների կաթսայում տապալկող մարդը անզգայաբար չարագուշակ է դառնում: Սրիւն էր տեսնում Ոսկանը կարմրած, գոյնգոյն գեղաճաճանչ հորիզոնում և արիւնի հոտ էր զգում: Վատողութիւնը և գիտակցութիւնը եթէ վրա չհասնէին, տեսարանը նրան յուսահատեցնելու էր:

Այդ տատանւած գրութեան ժամում լուսինը համբերութիւնը կտրւած, հորիզոնից գլուխը բարձրացրեց և վշտացեալների ցաւերը չնորոգելու համար, բոլոր ուժով թաղեց սրտում իւր դարդերը, կեղծաւորի ծիծաղ երեսով բարի իրիկուն մաղթեց քաղաքին, իր արծաթափայլ, կապուտի գարնող սպիտակ ճառագայթները քցեց միջնաբերդի որմերի վրա և նրա ծակօտիներից ներս: Լուսնի շողշողանքը բոլորովին փոխեցին հորիզոնի գոյնը, ազատեցին մտատանջութիւնից հալածւածներին ու հարստահարւածներին և բոպէական զւարթութիւնը մոռացնել տւեց միաժամանակ մուլլխաւարի թախծալի երեւակայութիւնները:

Լուսնի ծիծաղն ու քրքիջը զուր անցան Ոսկա-

նի համար, նրանք նոր նոր ցաւեր բերին վերջինիս և դառն լիշատակներ նորոգւեցան թափառականի սրտում: Ոսկանը նայեց լուսնին, նայեց նրա դէմքի խաղերի վրա փլփլացող, մարող ճակատի վրա, տեսաւ, որ իւր նման՝ նա էլ տխուր էր. նկատեց, որ մտղձոտ էր նրա էլ սիրտը: Որոնեց սկաւառակում իւր Կոստանցայի դէմքը, բայց անօգուտ, լուսինը դարձել էր անթափանցիկ և չէր անդադարձնում իւր միջի նկարները: Աշտացեալը իւր միթարութիւնը որոնում է ընկերակիցների մէջ, խօսում է, աչքի առաջ ինչ որ երևում է և շատ անգամ շարունակում է իւր ողբալի նկարագրութիւնները, եթէ դէմինը լսելու անընդունակ էլ լինի: Ցաւերը սրտից դուրս տալու միակ միջոցը նա այդ է համարում և դրանից յետո նա թեթեւացած է զգում ինքն իրան:

— Լուսին, երանի՛, հազար երանի՛ քեզ, որ ազատ ես երկնականարի վրա, շրջում ես անընդհատ, կատարում ընթացքդ, ուղածդ երկիրը գնում և ցանկալի դէմքեր տեսնում ես: Կնան, գնան, շտապիր, հասիր արևմուտք, քեզ սպասում են, մի մնալ այս աշխարհում, որը միայն դառնութիւններ է ներշնչում: Վազիր, մօտեցիր Բոսֆորին, զովացիր նրա ջրերում և երևացիր Կոստանցայի աչքում, ասան, ասան, որ դառնապէս լինի վիճակը: Ասան, նորան որ էլ լոյս աշխարհում չէ ապրում նորա Արամը, դժօխքի անդունդից և դեւերի ճանկերից էլ ազատելու լոյս չունի: Ասան որ հանէ իւր բեհէզը, ծիրանեգոյն ու ծիածանագարդ շորերը, հագնի սուզի սև ցնցոտիներ ու գնան, քաշւի տխուր անապատ, սև մենաստան, ողբալու իւր սիրեկանի անդառ-

նալի կորուստը: Աստ, որ էլ յոյսը կտրի, էլ ամուսին ունենալու մտքերը ցրւի, Արամը արգէն գտնուում է խոր գերեզմանում, որի կափարիչը միայն Գաբրիէլական փողը կարող է բարձրացնել: Թո՛ղ սգա վիճակը, ողբա սև բաղդը, արիւնախառն աղի արտասուենքով թո՛ղ թը- ջէ իւր կուրծքը, որպէսզի հրճւի, ուրախանա, տեղն երթա թշնամու սիրտը: Աստ, Կիւրեղ վարդապետի և նրա սան Պօլին ապսպրէ, որ հինա դնեն ձեռնե- րին, ծարիր քաշեն աչքերին, վարդի իւղով օծեն մա գերն ու վզերը և փառահեղ շորերով զարդարած սո- նեն իրանց քաջագործութեան տարեդարձը: Նիշտ հինգ տարին լրացաւ, հարկաւոր է յօբելեան կատարել. չը- մոռանան սրբազան պարտականութիւնները կատարե- լու: Բաւական չէր, որ հալածւեցի նրանցից Կ. Պօլ- սում, հալածուում եմ և այս երկրում, այսօրևա բան- տարկութիւնս Կիւրեղ վարդապետի շնորհիւն է: Աստ, Կոստանցային, որ կեանքս են ուզում այդ անիճաւած- ները և վճռած բան է, պիտի չթողնեն հանգիստ բնա- կան մահովս գերեզման իջնելու: Ապահով թո՛ղ լինեն, հանգիստ սրտով կմեռնեմ, բայց մինչև վերջին շունչս խօսելու եմ դարձեալ իրանց մեքենայութիւնների դէմ, գերեզման մտնելուց յետո էլ պիտի քարոզեն իմ լիշա- տակները նրանց մոլութիւնների ու մոլորութիւնների դէմ: Ես զգում եմ, որ շատ թոյլ եմ անթիւ ու զօրա-ւոր թշնամիներիս դէմ. բայց նրանք էլ լաւ գիտեն, որ իմ նետերս նրանց մահացու հարեած են տալիս ու տալու են և այդ պատճառով գիշեր ցերեկ ձին թամ- բել և ետևս են ընկել: Ես անելիքս արել եմ և յա- ջորդներս թողել հայրենիքի կրծքում, սրտում: Նրանք

վարդապետութիւնս տարածում են և տարածելու են ի- րանց աշակերտներով մեր աշխարհի վրա և ճիգւիտնե- րը սրանից յետո միշտ ազամանդի նման կարծր ապա- ուստների են ընդհարւելու այս երկրում և իրանց ճիգն ու ջանքը զուր անցնելու է: Թո՛ղ փչացնեն սրանից յե- տո հարիւրներ և հազարներ, նրանց ուռկանը էլ մեր ձկներով լցւելու չէ: Կոստանցա, զոհ էր պէտք այդ չա- րագործների ընթացքը ընդհատելու համար, զոհն էլ մենք էինք լինելու: Մի ափսոսար կեանքդ և կեանքս, մենք կատարեցինք մեր պարտքը և եթէ այս դրու- թեան չհասնէր գործը, խղճերիս առաջ պարտաւոր էինք մնալու: Ուրախացիր և ուրախութեամբ փակիր աչքե- րդդ, ես էլ այդպէս եմ անելու, թո՛ղ մենք երկուսս լանք ու տրտմինք ապագայի երկու հազարի և երկու ան- գամ հազար հազարների տեղ:

Պատրաստւիր, Կոստանցա, պատրաստւիր, որ շու- տով այն աշխարհում գտնենք իրար, յաւիտեան չբա- ժանւելու և չարագործների նենգաւորութիւններին էլ չենթարկւելու համար: Բեզ այնտեղ շուտով սպասելու եմ... Բայց... անկարող եմ տանելու այս անջատումը, հեռու քեզանից, հեռու քո ներկայութիւնից վերջա- ցնել այս կեանքը... մի վերջին հրաժեշտ էլ չտալ... մի վերջին համբույր էլ չբազել վարդազոյն այտերիցդ... Կոստանցա, Կոստանցա, գոնէ վերջին անգամ գրկումդ կարողանայի հոգիս տալ, կամ մատներդ կարողանայիր մօտեցնել շրթունքներիս... Աչքս ետևս մեռնել չեմ կարող, Կոստանցա... Անգոլթ վճիռ, միթէ այսքան շուտ վերջանալու էին օրերս, միթէ չպիտի արժանա- նամ սրտիս սիրածի վերջին տեսութեանը: Ո՛չ, ո՛չ,

անդրքան անողոք չեն կարող դառնալ դատաւորները, նրանք չպիտի կուրանան... նրանք պիտի քննեն և իմաման իմ ամեղութիւնը... ներկայացրածս փաստերը պիտի համոզեն և ազատեն բոլոր ընկերներէս: Այն ժամանակ ազատ համարձակ պիտի հեռանամ հեռու երկիր, որտեղ կգա Կոստանցան էլ և այնտեղ, այնտեղ խաղաղութեամբ իրար հետ... կմթնեցնենք մեր օրերը: Կոստանցան, պիտի համբերեմ, պիտի ապրեմ քեզ համար... համբերիր դու էլ, սպասիր և շուտով կհասնենք մեր բաղձանքներին... այն ժամանակ կխայտաւակելին խաւարագործներ... Ախ, եթէ զգայիր այս ընկերներն վիճակիս դառնութիւնը...»

Նւ սաստիկ ցաւից ետ ընկաւ Ոսկանը զէպի խրցիկը, չոր խոտերի մէջ քնեց աւելի անուշ, քան իւր Կ. Պոլսի մահճակալում տարածւած վափուկ անկողնում: Քունի մէջ երազեց, զաւանցեց, գլորւեցաւ, ըստ պառնաց, յարձակեցաւ, վախեցաւ, բայց անքան յոգնած էր, որ հետևեալ օրը ոչինչ չէր լիշում: Քունը շարունակեց մինչև հետևեալ օրն՝ արևազային և զարթնեց սովորականից շատ վաղ շարգւած ու յոգնած ոսկրներով:

Միևնոյն բանը պատահեց Սիսակի, Գրիգորի, Միսաքի, և Տօնականի հետ. նրանք էլ տքացին, տրտնջացին, ողբերկեցին, յոգնեցին և թմրած ընկան քրնեցին, մարմինները հանգստացրին, հետևեալ օրւան տանջանքները շարունակելու համար: Հագեկան և մարմնական յոգնածութիւնը այնքան զօրեղ էր, որ քունը տիրապտեց և նիրհեցին մինչև լոյս, առանց զգալու կոշտ անկողնի և քարէ բարձի ազգած ցաւերը:

Բայց թէ ինչ վիճակում էին այս թշուառները, անկարելի է իրականապէս նկարագրել: Հաւն անգամ մինչև իւր ձագերը չի ամփոփում թևերի տակ, չի հանգստանում իրիկունները, հասր մարդը ինչպէս դիմանար այդ տանջանքներին: Սիսակի թշուառ այրի մայրը տասն և եօթը տարի այն մէկ օրդու յոյսովը նրստել էր տունը, երկու աղջիկներին իւր ձեռքի աշխատութիւնով էր մեծացրել, երկուսին էլ կարգել տեղաւորել էր, հասել էր այն ժամանակը, որ միակ օրդուն էլ կարգէ, թառը դնէ, վերջին օրերը ուրախութիւնով, հանգստութիւնով անցկացնէ և ծիծաղ երեսով ու խնդումով բաժանւի աշխարհից: Լաւ վերջին օրերի հանդիպեց... Այն բարի դաւակը, որ մօրը ուրախացնելու համար կեանքը չէր խնայել, այն որդին, որ մօրը քաշած դառնութիւնները մոռացնելու նպատակով՝ ամէն տեսակ բարութիւններով, խոհեմութիւններով ցնծացնում էր մօր սիրտը, որ իրան երջանիկ էր զգում այնքան տառապանքներ քաշելուց յետո, մոռացել էր իւր քաշած բոլոր դառնութիւնները. ինչ աղետալի վիճակի մէջն էր այդ մայրը՝ միայն կարելի է երևակայել: Այնքան բարեսիրտ էր Սիսակը, որ զբաւել էր ողջ քաղաքի ծնողքների սիրտը, ամէն տեղ զովում էին նրան, ամէն մարդ երանի՛ էր տալիս նրա մօրը: Աղքատի որդի էր, որբ, անտէր, անօգնական, մի գերձիկի կտոր, բայց իւր հանճարով և խելացիութիւնով տիրացել էր շատ հարուստների սրտերին. շատ վաճառականների համարումին: Նա արժանաւորութիւններովը հասել էր ամենաբարեբաղդ վիճակի և ուրախութեամբ ընդունում էին նրան ամէն ընկերական շրջաններում: Սիսակը

մի կենդանի օրինակ էր բոլոր այն պատանիներին, որոնք յառաջ, դէպ յառաջ էին ձգտում:

Այդպիսի մի որդու մայրը չողբար, չմորմոքար, չհալւէր ու չմաշէր, հապա էլ օր մայրերը: Կարինում շատ հայրեր ու մայրեր սգացին այդ իրիկուն Սիսակի համար: Սիսակը հասարակութեան որդին էր. բարի ժառանգը ընդհանուրին է: Թշուառ կինը մոլորւել մընացել էր. Սիսակ էր ասում, Սիսակ էր կանչում. Սիսակ երգում, Սիսակ հեկեկում: Ողջ օրը դառնապէս լալուց լետո, գիշերն էլ մինչև լոյս երկու աղջիկների գրկում ողբացել էր Սիսակի բաղբը, կոծել էր իւր կուրծքը և սաստիկ վշտից անզգայացել: Այդպիսի բուպէներում թոյլ արարածը լացով է գովացնում սիրտը և արտասուքով հովացնում կուրծքը: Երկու փեսաներ գունից դուռ աղաների ոտքերն էին ընկել, առաջնորդի փէշերն համբուրել, սարալի դռները մաշել, բայց ոչինչ չէին կարողացել իմանալ. բանտարկեալների տեղերն անգամ անչայտ էին Կարնեցիներին: Նւազ չէր և երկու քոյրերի վիճակը, որոնք ամէն ճիգ թափում էին վշտերը իրանց մօր աչքից ծածկելու և նորան հանգստացնելու, անգաղար խաբխբում էին, այս բուպէիս, մի ժամ վերջը, առաւօտը կգա Սիսակը, բայց գալոյ չեղաւ...

Գրիգորի պառաւ հայրը, զառամեալ մայրը միևնոյն օրումն էին և արիւնակիցները սրանց մխիթարելով անցկացնում իրանց ժամանակը: Ողբ ու շիւան էր ծնողների, արիւնակիցների և հարազատների գէնքը, «ո՛վ կարող էր լանդգնել բռունցքով տալ նիզակի ծայրին»: «Երկնքից գալածը՝ մարդիկ սիրով տանելու պար-

տաւոր և պատրաստ էին»: Ի՞նչ կարող էին, անել, ձեռներից ի՞նչ կգար:

Տօնականի տանը մնացած երկու որբ և անօգնական քոյրերը ձեռք ձեռքի, սիրտ սրտի տւած լաց էին լինում, ձայները փորերումը խեղդելով և աշխարհի երեսին՝ Կարինում մի մօտաւոր ազգական չունէին, որ իրանց դուռը բաց անէր և հարցնէր.— Աղջիկներ ապրում էք, թէ մեռաք: Թէև քսան տարի առաջ Տօնականի հայրն ու մայրը հեռու աշխարհից եկել էին Կարին. բայց արիւնական կապով չկապւելով Կարնեցիների հետ, լոկ ծանօթներ ունէին, իսկ աշխարհի զործերը ձախ գնալուց լետո, գրանք էլ երես էին շուռ տւել և Տօնականի ծնողների մահից լետո այդ երկրորդ տարին էր, որ իւր ճակատի քրտինքով, բայց ուրախ սրտով, իւր քոյրերին հովանաւօրութեան տակն առած՝ սփոփում էր: Հէգ աղջիկները կապուտ երկընքի տակ մի հարազատ եղբայր ունէին, բայց բաղբի անողոք վճիռը հեռացրել էր նրա հովանին էլ թշուառների վրայից, որ կիզիչ արևը այրէ, սևցնէ և մրտէ այդ թոյլ արարածներին: Անմխիթար լաց էին լինում անվերջ ողբերով և մի սփոփիչ լոյս չէր ծագում նրանց հանգած սրտում: Երանի՛ թէ մարդ ո՛չ ականատես լինէր այդ վշտացեալ արարածների մթացած օրերին, որ չվշտակցէր այդ տառապետւնների հետ, ո՛չ զգայուն սիրտ ունենար, որ չտանջէր տարիներով դրանց յիշատակներով, ո՛չ լիշողութիւն, որ ամէն օր նորէնոր չնորոգէին մտքում նրանց լիշատակները և ոչ էլ դրիչ, որ հաղորդելով աշխարհին, նրան էլ իւր տառապանքների բովին չմանակցեցնէր: Բայց սոսկալի ան-

ցեալը ստիպում է մարդուն չմոռանալ նրա լիշատակները, ապագայի նախատինքներին չարժանանալու համար, թողնել փոքրիկ լիշատակներով իրերի գրու-  
թիւնը:

Բայց աւելի զարմանալի էր արծաթապաշտ ազաների, գանձասէր վաճառականների և ոսկիին երկրպագող էֆէնդիների գրութիւնը: Մենք չենք ցանկանում ձանձրացնել մեր նիւթից դուրս անցքերի նկարագրութիւնով ընթերցողներին, ամփոփում ենք Միսաքի հօր բռնած զիրքը որդու մասին, որը կենդանի տիպարն էր բոլոր հարուստների: Նոյն գիշեր կրկին անգամ կոխեց Մախաթըեանցի տունն ստիկանութիւնը և մեծ աղմուկով տարան Միսաքին՝ միջնաբերդ՝ հարագատ բարեկամների հետ: Մեւքոն աղան իրան մեծ անպատուութիւն համարեց այս անցքը և վերջ տալու համար վճռեց, էլ իւր տուր չընդունել Միսաքին, մինչև որ երգումով և գրաւոր թղթով չխոստանա՝ հեռանալ բոլոր ընկերներից: Բայց որպէս զի Միսաքը բոլորովինը նկճւի հոգւով, այդ ընկերներից ձեռք քաշէ, նախ ինքը երգւեց, որ չաշխատի նրան բանտից ազատել տալու մէկ երկու ամիս և ապա գրա համար նոյն իրիկունը մօտեցաւ քննիչին և մի կողմը քաշելով խնդրեց, որ բարեհաճի երեք-չորս ամիս բանտ նստեցնելու, մինչև որ խելօքանա և հեռանա չար ընկերներից: Քննիչը շատ լաւ լսեց և կատարեց հօր այս խնդիրը...

Տանը Միսաքի մալրը, մատաղահաս կինը մանկիկը գրկում լաց էին լինում, աղաչում, խնդրում, աղերսում անգութ հօրը, որ միջնորդ զցէ և ազատէ

որդուն, բայց նա իւր երգումը չդրժեց: Խեղճ կինը լուսահատուած, էհրամը գլուենն առած՝ բնկաւ դռնից դուռ. ձազը կորցրած կատաղի վագրի նման, բայց ամէն կողմ արհամարհանքի և ծիծաղի պատահեց, ամէնն ասում էին. — Իսկուհի քոյր, գնա՛ տուն, համբերի՛ր. Աստուած ողորմած է, գնա՛, Մեւքոն աղաչին ասա՛, թո՛ղ նա գա: Խեղճ կինը ո՞ր մէկին բացատրէր անխիղճ մարդու սառնասրտութիւնը

— Թո՛ղ պատժեն, ասում էր կրքով Մեւքոն-աղան, տե՛ղն է, թո՛ղ կաշին հանեն: Նրան ո՞վ էր ասում, որ գնա լկրուած գեղգեկներ հետ մէյմուն մասխարա դառնա և նրանց նորոգելի բոլոր կարողութիւնս իւարջէ: Հազար անգամ ասի, — Տղա՛, թո՛ղ այդ դատարկ ընկերներից, գործիդ ետեւէն քալէ, — ո՞վ է լսողը: Մեծի խօսքը չլսողի վերջն այդպէս խաչատուակութիւն է, էլ նախ որդիս չէ: Հիմի տեսնեմ, թո՛ղ իրան այն ընկերները օգնութեան հասնեն, նեղ օրից ազատեն: Ար մեռնի՛, գնացող խնդրողը չեմ, որ «լսշն» էլ է տան թաղելու:

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՍԵՐՆ ԱՄԷՆ ԱՐԳԵԼԲՆԵՐԻ ՅԱԼԹՈՒՄ Է

ԻԲ.

### ԵՐԵՍԻ ԿԱՇԻՆ ՊԱՏԱՌԻԵՅ

**Ը**նթերցողը լիջուժ է, որ Ոսկանին ձերբակալած իրիկունը Ալմաստը շորերը հագած, գաւիթի դռան ետևը կանգնած՝ դողդողալով սպասում էր գործի վերջին: Բարեբաղտաբար խորհրդատու էֆէնդիները սխալւել էին, կամ աւելի լաւ ասած, բանի տեղ չէին դրել *Կուսի* գուհի տան աղջկան, զարբնի կնոջը, Ալմաստին, և զինւորական քննիչը էֆէնդիների թե-

լագրութեան համաձայն՝ Ոսկանի սեփականութիւնը ամփոփելով, ուշք անգամ չէր դարձրել տան տիկնոջ վրա և առանց վշտացեալ այրիին նեղութիւն, ձանձրութիւն պատճառելու, հեռացել էր: Սրանց գնալուց քիչ լետո, զգուշութեամբ Ալմաստը գուրփ եկել, փակել էր դռներն ու լուսամուտները, կրկին վերագառնալով իւր սէքիւն՝ առանց հանւելու ընկել էր անկողնի վրա ու մտածում:

Ինչէր չէին անցնում Ալմաստի մտքից: Բայց նա յոյս ունէր, որ մինչև առաւօտ կվերագառնար Ոսկանը, ինչպէս վերագարձել էր առաջին անգամ և այս յոյսովը լուսացրեց:

Լուսադէմին մի խոր թմրութիւն վրան կոխելով, գաղթած ու յոգնած, աչնպէս գլորւած տեղը քնել, մնացել էր մէկ երկու ժամ: Մանկիկի ձայնը զարթեցրեց Ալմաստին, որը ամէն բան անմիջապէս հաւաքելով՝ դուրս վազեց մի բան լսելու: Ինչ պիտի իմանար խուլ փողոցում, կնիկներից. միևնոյն բաները, ինչ որ զառանցում էին սա և նա: Ծանօթ և բանին տեղեակ մարդ չերևաց աչքին: Տուն վերագարձաւ, բայց սիրտը չէր հանգարտուում, որ մի գործ վեր աւներ ու շինէր: Մօտեցաւ կարեմեքենային, մի թել բան չկարած, մի ասեղ կտորեց: Բարկացած հեռացաւ, առաւ ճաղերը, որ գուլպան շարունակի, բայց մի ճաղ չգործած՝ երկու հատ բաց թողեց: Զգաց, որ գործն առաջ երթալու չէր, խելքը ուրիշ տեղ էր: Մտմտութեւ սաստկացաւ և նստած տեղը անշարժ մընաց: Մտներով, ձեռքերով, աչքով, ունքով, ուսերով և թևերով զանազան դրական, բացասական, զարմացա-

կան և յուսահատական նշաններ էր անում: Երբեմն աչքերն երկինք էր լառում, երբեմն՝ գետին, երբեմն դռան էր նայում, երբեմն էլ՝ լուսամուտին: Ամէն մի փոքր ձայն ականջին հասնելու պէս կանգնում, շունչը թոքերումը խեղդած՝ ականջ էր անում: Բայց զուր, գացող չկար, յոյսը հետզհետէ նւագում, հատնում էր և չարագուշակ մտամոլորութիւններով խորասուզւում:

Յանկարծ դուռը բացւեցաւ և բակը ման եկողի ստքի ձայները սթափեցրին Ալմաստին, մինչև ստք ելնելն ու սանդուխների գլուխը հասնելը, տան դուռն էլ բացւեցաւ և երիտասարդ պօլիցիական պաշտօնակալը ներս մտաւ իւր սրովն ու պսպղուն կօշիկներով: Մի սարսափ ընկաւ Ալմաստի սրտում քիչ մնաց, որ լեղապատառ գոռար և օգնութեան կանչէր դրացիներին. բայց Արամը երկու խօսքով նորան հանգստացրեց:

— Տիկին, ասաց Արամը, Ռոկանից երկու խօսք ունիմ ձեզ հաղորդելու:

— Արամ էֆէնդի, զուր էք, սաստիկ վախեցա: Միթէ այդքան շուտ արդէն հասաք այդ պաշտօնին և շորերդ էլ փոխեցիք:

— Ծառայութիւն է, տիկին, ինչ արած, պարտաւոր ենք անմիջապէս ամէն բան փոփոխել: Բայց երկար խօսելու ժամանակ չունիմ, պիտի գնամ պաշտօնատեղիս: Ոսկանը ասաց, որ « դու սեւը սպիտակից ջոկել չգիտես »:

— Արևիդ մատնդ, Արամ էֆէնդի, ասացէք խնդրում եմ, նա որտեղ է:

— Բանտումն է, դրա ժամանակը չէ, հասկացո՞ք

միտքը, ես հեռանամ, այստեղ թող մարդ ինձ չտեսնէ:

— Իմացա, բայց ասան խնդրեմ, երբ է գալու, ինչի այդքան ուշացրին, միթէ հարց ու փորձը չվերջացաւ:

— Ոչնչից տեղեկութիւն չունիմ և ոչ ոքի մի հաւատաք. ո՞վ ինչ ասէ, սուտ է, միայն իմ քեզ հաղորդածս ամենակարևորն է՝ քեզ և Ոսկանի համար, եթէ հասկացաք, մնաք բարով: Թէ բան ունիք հաղորդելու ասացէք, կարելի է յարմար առիթ ունենամ նրան իմացնելու:

Ալմաստի մտքից կասկածներ անցան և առանց վայրկենական վարանման ասաց.

— Ո՛չ, ոչինչ չունիմ. ասացէք, եթէ կարող էք, որ շտապի և տուն դառնա, ինձ հանգստացնելու:

— Ուրեմն, մնաք բարով, եթէ պէտք ունենաք, ես միշտ պատրաստ եմ, տէկին, ցտեսութիւն:

Արամը հեռացաւ շտապ և արագ քայլերով:

— « Սեւը սպիտակից ջոկել չգիտես »: Այո՛, քեզ գտնելուց առաջ ո՛չ գիր գիտէի, ո՛չ կարգալ. բայց այսօր... ամէն բան փոխեցիր: Չգիտեմ աշխարհի համար, բայց քեզ համար ամէն բանի պատրաստ եմ: Այո՛, էնօրը սովորեցի, այսօրևանից էլ մոռացա մինչև քեզ կրկին անգամ յարկիս գլուխը տեսնելու: Երևի մի փորձանք կա, երևի զրութիւնը վտանգաւոր է, վախի մի բան կայ, որ իմացնում է, թէ « սեւը սպիտակից մի ջոկել: » Բայց էն կլինի, ուրիշ ինչ բան կարող է լինել: Ը՛ն... չլինի թէ, այս շորերը փոխողը ուրիշ կամքով եկած լինի, չլինի թէ բերանիցս բան ուզում էր փախցնել, կամ ինձ սխալեցնել: Բայց ոչ, դէմքից երեւում էր, որ անկեղծ էր խօսում և այդ տարիքում

դժւար թէ մարդ գիջանի խարեբտ, դաւաճան դառնաբու: Բայց և այնպէս դգուշանալու է, ճշմարտութիւնից շեղելու է, ուղղութիւնը ամէն փորձանքներից մարդուն ազատում է, հետեիմ Ասկանի խրատներին և սուղութեամբ կտանենք յաղթանակը: Բայց այս գէպքում, այս գէպքում նա միշտ ասում էր — Լաւ է երբեմն բոլորովին չգիտենալ, ուրեմն խոտորութիւն է. բնդհանուր կանոնից զարտուղութիւն է:

Մի ժամ չէր անցած Արամի մեկնելուց, զինուորական քննիչը իւր արբանեակներով եկաւ և մտաւ Ալմաստի տունը. սէքուն խուզարկելու: Ամէնից առաջ գիմեց Յարութիւն էֆէնգիին, որ իմանա, թէ խանումը (Ալմաստը) թուրքերէն խօսում է, հասկանում է:

Արաբ ողին հարցրեց տիկնոջից և դբական պատասխան ստացաւ:

— Աւրեմն թուրքերէն հասկանում, խօսում է:

— Անհոգ կացէք. ինձանից էլ, ձեզանից էլ լաւ գիտէ, շան լեզու կա բերանումը:

— Խանում, ասաց քննիչը քաղաքավարի ձեռով, այստեղ Ասկանի ձեռագրներից սենիք:

Ալմաստը ոլորեց և նահապետական համեստութիւնն ու ամօթխածութիւնը չթողին, որ խօսի:

— Մի ամաչէք, խանում, շարունակեց քննիչը, մեր պաշտօնը և քահանայի պաշտօնը միևնոյնն է, խօսեցէք առանց քաշելու, խոստովանեցէք ամէն բան ճշմարտութեամբ: Զեր լուսութիւնը կարող է ձեզ կասկածանքի տակ ձգել: Ասացէք, ինչպիսիւն եմ ոչինչ չունիք Ասկանի գրածներէից:

— Նրա գրածքներն իմ ինչիս են պէտք, ինչ որ ունէր, իւր սենեակումն էր և տարաք:

— Այստեղ բան թողած չէ:

— Զգիտեմ, առաջի իրիկուն մի բան կարգում էր, այստեղ թողեց, թէ տարաւ:

— Նայեցէք, գուցէ մոռացած լինի:

— Այն թարաքի վրայի տետրակն է, մոռացել է:

— Բերէք — :

Ալմաստը բերեց և ներկայացրեց տետրակը:

— Այդ ինչ տետրակ է, չգիտէք:

— Զգիտեմ, նրանն է, ինչ է, ինչ է, ինչ է, ինչ է, ինչ է:

— Գուք կարդալ չըգիտէք:

— Զեր մայրը ձեզ վարպետի մօտ չէ ուղարկել:

— Կանցին ինչ, գիրն ու վարպետն ինչ: Աթար թխմելուց աչք շատ էինք բացել, որ կարդալ էլ սովորէինք: Կանի տէրտէրները կարդալ չգիտեն, կնիկ մարդիկ որտեղից գիտենան:

— Կանի գիւղիցն էք:

— Այո:

— Այս ձեզ համար չէր բերել, որ կարդաք:

— Յիսուս-քրիստոս, ինչէր էք խօսում.

— Աւրեմն ինքը կարդում էր դուք էլ լսում էիք:

— Գրաբառ էլ պիտի հասկանամ, որ կարողանամ լսել, ինչ էք շնորհքը որտեղից է:

— Կարգում. մեկնում էր:

— Իմ գլուխս հեշտութիւնով մեծ մեծ բաներ չ'ն մտնել: Իմ ինչ գործն է գիրն ու գիրքը. թող տէրտէրները և վարդապետները հասկանան, որ ժո-

դովրդին լաւ քարոզ տան: Գիրը խեղճի բանը չէ:

— Որ այդպէս էր, ինչի էր բերել այստեղ:

— Վերելը կաթիլք կար, մէկ երկու ժամ վար իջաւ մինչև անձրևի կտրելը, ձեռքն առած այդ տետրակն ինքն ու իւր գունչը կարգաց-կարգաց, վեր կացաւ գնաց:

Քննիչը լռեց և զարմացած նշանով նայեցաւ արբանեակների երեսին:

— Ուրիշ բան:

— Ոչինչ չունի այստեղ, ինչ պիտի լինի, հրամայեցէք, թո՛ղ ամէն բան քրքրեն և տեսէք:

— Լաւ գիտես, էլ բան չկա՛:

— Ոչինչ, ոչինչ: Թէ բան լինի, տան երեսին կլինի, ծածուկ, պահած կամ թագցրած ոչինչ չկա:

— Խնդրեմ այսպէս նստեցէք, թո՛ղ էֆէնդիների հետ գրագիրներն ու ծառաները մէկ մէկ ամէն բան մօտ բերեն ու քննեն: Մի ցաւիք, մի զայրանաք, օրէնքն է հրամայում: Ես հաւատում եմ ձեր խօսքերին: Համոզւեցա, որ զուտ ճշմարտութիւն էք խօսում, բայց չեմ կաւոյ մազի չափ շեղւել օրէնքից:

— Ոչինչ, ոչինչ, հրամայեցէք, որ երեսայիս գրկեմ, թո՛ղ չվախենա:

— Կարող էք, խանում, մի վախենաք, մի ամաչէք:

Ոստիկաններն ու գրագիրները հեռահետէ բոլոր սնդուկները, քթոցները, բոլորները և կծուճները մէկ մէկ մէջ բերին, քննեցին բոլորի ներկայութեամբ և կրկին տեղերը տարան: Բոլոր պղնձկալքը մէկ մէկ քննեցին, կարպետ, խալի, մինդար, խտր, չո՛ւլ ու

հին՝ ամէնը մի-մի վար բերին, թափ տւին և ետ գցեցին: Ծալքը քանդեցին և կողինքների ու տօն օրերի համար պահած բոլոր կարպետների ու խալիների ծալքերում ջուկ ջուկ աշեցին: Ծալքի տակը մի փոքրիկ սնդուկ կայացով թղթեր գտան: Բոլորի երեսին մի ուրախութեան ժպիտ եկաւ և ամէնը ուշադրութեամբ հետաքրքրեցան նոյն թղթերով: Քննիչը բացեց և գտաւ տան քօջանները (կալածագրերը) և Ալմաստի հանգուցեալ մարդի հայրենական անեղիքների մուրհակները:

— Պարոնք, ասաց զինւորական քննիչն, ես ոչինչ չգտա և հանգիստ սրտով կարող եմ հեռանալ:

— Գնանք, պատասխանեցին էֆէնդիները, սեւացած երեսով:

Առանց մի ծեղ վեր առնելու, հեռացան:

— Ներեցէք, ասաց Ալմաստը քննիչին, չէ կարելի չալտնել ինձ, ինչ էիք պտրում մի այլի, անօգնական և թոյլ արարածի տանը, որին երկու ժամ պատճառածներդ ստակումով քիչ մնաց նւազեցնէիք:

— Ներեցէք, խանում, մենք պարտաւսրեալ արինք այդ քննութիւնը և պտրածներիցս ուրախ ենք, որ ոչինչ չգտանք:

— Ուրեմն, էլ ինձ չէք վրդովելու:

— Ոչ, ո՛չ, միայն այս իրիկուն կամ վաղը . . . բայց տեսնենք:

— Ուրեմն այս իրիկուն վարձուորս պիտի վերադառնա տուն:

— Ոչ, այնպէս . . . չգիտեմ դեռ, միայն յոյս ունիմ, որ շուտով էլ կվերադառնա:

— Խնդրում եմ, էֆէնդի, շտապեցէք, տանս

մինակ եմ և շատ վախենում, շուտով վերադարձրէք Ոսկան էֆէնդիին: Աղաչում եմ, շտապեցէք:

— Տեսնենք, կաշխատեմ...

Հեռացան: Քննիչը շատ զարմացաւ, երբ լսեց իւր առաջը կանգնած գիւղական աղջկա՝ Ալմաստի խօսակցութիւններն և համարձակ պատասխանները: Ոսկանի և Ալմաստի բոլորովին համանման ցուցմունքը հաստատեց նրանց երկուսի էլ արդարութիւնը և էֆէնդիների զրպարտութիւնները, բայց պարտաւորեալ հետևելու էր վերջիններիս ցուցումներին:

Իրիկան գէմ մի զօրական, մի հայ պաշտօնական և մի զինուոր եկան Ալմաստի մօտ և առաջարկեցին, որ բարեհաճի գնալ զինուորական գիււան, մի քանի հարցերի պատասխանելու: Ընդիմացաւ այրին, բայց ճարը չգտաւ: Աղջկանը դրացիին լանձնեց և ականա էհրամովը փաթաթեց զնաց խնդրակների ետևից:

Մի բնդարձակ դահլիճ մտցրին Ալմաստին, որտեղ մի մաքուր բազկաթուռի վրա հրաւիրեցին նստելու: Դահլիճում դեռ մարդ չկար և ծառաները վառում էին լամպերը: Օդը տօթ էր, լուսամուտներն էլ փակ, այդ պատճառով մի տաք քրտինք եկաւ Ալմաստի վրա: Էհրամը կիսով չափ բացեց և թաշկինակովը սրբեց երեսի ու վրի քրտինքը, բայց քրտինքին վերջ չկար: — Ես ի՛նչ շոք է ասաց Ալմաստը, չէ՞ կարելի, որ լուսամուտները բանաք: — Այս բոպէիս, — պատասխանեցին և կատարեցին խնդիրքը: Մի գանգակ խփեց և բոլոր սարսաւորները հեռացան: Տասն երկու հոգի մտան ներս, շարեացին այրիի աջ և ձախ կողմը դըրլած բազմօցների վրա: Դրանք զինուորական, քաղաքական

և կրօնական ծառայողներ էին, որոնցից միայն երեք հռչակաւոր Արար - օղիներին ճանաչեց Ալմաստը: Եկաւ և նստեց այրիի դիմաց քննիչը, այն անձնաւորութիւնը, որ ցերեկը աչքան քաղցրութեամբ վարեց իւր պատասխանատու պաշտօնը:

— Ալմաստը ամօթից և երկիւղից կաս - կար ՚իր կրակ գարձաւ:

Քննիչը նկատեց թշուառ կնոջ տագնապը և նսրան ուշքի բերելու համար ինքը առժամանակ լուրթեամբ ուրիշ թղթերի ընթերցանութեամբ պարապեց: Ալմաստը աստիճան - աստիճան հանգստացաւ, սրբեց, չորցրեց քրտինքը և պատրաստեցաւ քննիչին պատասխանելու:

— Խանձում, ասաց հանդարտութեամբ քննիչը, այսօր ասացի, որ պիտի ճշմարտութիւնը խոստովանիս, ինչ որ քեզ հարցնեն: Կրկնում եմ միւլնոյն բանը և աւելացնում, որ եթէ սոտես, պիտի ընկնես պատասխանութեան տակ, թէ օրէնքի առաջ և թէ ահեղ դատաստանում Աստծու առաջ, ուստի զգուշացնում եմ քեզ, որ չլինի թէ ճշմարտութիւնը ծածկես:

— Ես ձեզ լայտնեցի այսօր, որ ուղղութիւնից մազի չափ անգամ խոտորելու չեմ և ձեր ամէն հարցերին գիտցածս պատասխանելու պատրաստ եմ:

— Ասացէք, խնդրում եմ, վաղձուց է, որ Ոսկանը ձեր տանն է ապրում:

— Մօտ տարի ու կէս է:

— Առաջ նրան ճանաչում էիք:

— Ոչ, ես նրան ճանաչեցի մեր տուն գալուց շատ ժամանակ անցնելուց յետո:

— Ի՞նչպէս պատահեց, որ իրար հետ մտերմա-  
ցաք սերտ բարեկամութեամբ կապուեցաք:

Ալմաստը մի մի նկարագրեց բոլորը ճշտութեամբ.  
որոնք բառաբառ արձանագրուեցին:

— Ասացէք, խնդրում եմ, ճանաչում էք Սիսա-  
կին, Սարաֆեանին:

— Այն երիտասարդը, որի նշանածը առևանգեց  
ու խեղդեց պարսկեր:

— Այո:

— Այո, ինչպէս չէ, նա միշտ գալիս էր Ոսկա-  
նի մօտ:

— Իսկ Միսաքին, Տօնականին, Գրիգորին և  
Նշանին:

— Այո, բոլորին ճանաչում եմ, դրանք յաճախ  
գալիս էին մեզ մօտ. նստում, խօսում ծիծաղում ու  
ծիծաղացնում էին:

— Վերջին անգամ երբ են եղել ձեր տունը:

— Կաթսան տրաքուելուց յետո, էլ չեն եկել:

— Ոչ ո՞ք:

— Ոչ ոք չէ եղել, բայց կարծեմ մի անգամ  
Ռուսաստանցի մի երիտասարդ եկաւ, մի գիշեր մնաց և  
շուտ էլ մեկնեցաւ:

— Այդ ո՞վ էր:

— Չգիտեմ, Մելիք-Վարազդեանց, էր թէ Մե-  
լիք-Վարազդեանց, մի այգալիսի բան ասաց, չեմ լի-  
շում:

— Ի՞նչ էր խօսում այդ երիտասարդը:

— Ես վեր գնացի, թէյ պատրաստեցի նրանց  
համար և միշտ գործի հետ լինելով շատ բան չիմացա,

— Ինչ որ իմացար, պատմիր լիշաճներդ.

— Նիգլիտների մասին էին խօսում, որ մէկ  
միլիոն, ինչ փող են վերցրել, որ Հայաստանում ու-  
սումնարաններ և վանքեր շինեն և բոլոր ժողովուրդը  
կաթոլիկացնելով, գերեն, ստրկացնեն և դարերով ի-  
րանց լծի տակ կաշիները քերթեն:

— Ուրիշ:

— Ուրիշ բան չեմ լսել, միշտ խօսում էին  
դրանց միաբանութեան և կարողութեան մասին: Ոս-  
կանը համրում էր, թէ ո՞ր բանկում, որքան միլիոն  
ունին, աշխարհի երեսին ինչ գոյնով են ման գալիս:

— Ի՞նչպէս թէ գոյնով:

— Նա ասում էր, որ դրանցից սարկաւազներ,  
վարդապետներ, եպիսկոպոսներ, կաթողիկոսներ, կար-  
դինալներ կան: Շատերը վաճառական են, փաստաբան,  
նօտար, տէրութիւնների ծառայող, վերջապէս ամէն  
աստիճանի ու գիրքի մարդիկ:

— Յետո՞:

— Յետոյ պատմում էր, որ դրանք մտնում են  
ժողովրդի մէջ ու ծծում խեղճի, անգէտի արիւնը և  
չորացնում իրանց ման եկած երկրների խոտն ու բոյսը:

— Ուրիշ ոչինչ:

— Նրանց խօսածները այս էր, ճիգլիտ էի լը-  
սում անդադար և պատմում էին նրանց անցեալ դա-  
րերի գործերը:

— Ուրիշ խօսակցութիւն:

— Ոսկանը մի Ֆրանսերէն գիրք կարգաց, որ-  
տեղ ճիգլիտների մասին բան էր գրած և շատ խօսե-  
ցին այդ գրքի մասին:

— Խանութ, ասաց քննիչը, մի ծածկէք, խօսեցէք, ինչ որ լսել էք, ինչ որ պատմում էին:

— Միթէ չէք հաւատում խօսքերս, ես նրանց խօսակցութիւնից այդ լսեցի և այդ էլ ձեզ պատմում եմ: Եթէ ուրիշ բան լսած լինէի, անհոգ կացէք, ես ծածկելու կամ ստելու սովորութիւն չունիմ, մօրս առաջին խրատն է՝ երբէք չստել:

— Մենք հաւատում ենք, խանում, միայն պատմեցէք բոլորը, ինչ որ լսել էք:

— Արդէն պատմեցի գիտեցածս:

— Ասացէք, խանում, ուրիշ մարդ չէ՞ եկել ձեր տունը, կաթսայի տրաքելուց լետո:

— Ոչ ոք, մարդու երես չեմ տեսել:

— Ոսկանը գուցէ գիշերով հիւրեր ընդունած լինի:

— Ամենևին ոչ. դրսի դուռը «ե ա թ ս ի է ա գ ա ն ի ց» լետո, ես եմ բաց ու խուփ անում, ուրիշ մարդ իրաւունք չունի բանալու:

— Ոչ ոք չէ՞ եկել, կարող էք այդ մասին ստորագրութիւն տալ:

— Հաստատում եմ խօսքերս, բայց ստորագրել չգիտեմ, որ կարողանամ գրաւոր ձեզ մօտ ապացոյց թողնել:

— Մենք կզրենք, դուք առաւօտ կամ ուրիշ օր գալիս՝ հետերգ փոխանորդ բերէք, որ ստորագրէ ձեր տեղը:

— Շատ բարի:

— Ասացէք, ամէն իրիկուն Ոսկանը տուն գալիս էր և ժամի քանիսի՞ն:

— Ո՞վ է իմանում, երբեմն վաղ էր գալիս, երբեմն ուշանում էր, բայց ճիշտն ասած, որ վերջին օրերս միշտ մութը կոխելուն պէս տուն էր մտնում:

— Տանը ինչով էր պարապում:

— Ի՞նչ ասեմ, նա կարդում էր, գրում էր, երգում էր, ատամներ էր շինում, երբեմն փայտ էր տաշում, գարդեր էր շինում տախտակներից, մէկ խօսքով ժամանակը պարապ չէր անց կացնում:

— Տանը դեղ, շիշ, ջրեր, այդպիսի բաներ չէ՞ր բերում:

— Ատամնացաւի դեղեր եփում էր, բերանի ցաւի հոտի դեղ պատրաստում էր:

— Ուրիշ դեղե՞ր, ուրիշ բանե՞ր:

— Ոչինչ չեմ տեսել:

— Թւանք, ըէւօրէր, վառօդ, գնդակ, փանփուշտ չէ՞ր ծախում:

— Ինքն ունի, որսի գէնքեր և նրանց պէտքերը ինքը պատրաստում է, բայց ծախելը չեմ տեսել: Մի քանի անգամ փչացած գէնքեր բերին, սարքեց:

— Բերողներին չէ՞ք ճանաչում:

— Ոսկանի մօտ գալողների թիւը կա՞ն, ո՞ր մէկին ճանաչէի:

— Խանութ, դուք ճշմարիտը խոստովանեցէք, ձեր տունը ձիւրեռով ինչ ապրանք է եկել մօտիկ ժամանակներումս, գիշերով:

— Սրանից մի տասն ու հինգ օր առաջ երկու սնդուկ գաջ ստացաւ Ոսկանը, ասում էր Պարզից է բերել տւել:

— Կարին գաջ չկա՞, որ Պարզից է բերել տալիս:

— Չէք Հաւատալ, գնացէք տեսէք, իւր սենեակումն է դրած: Ասում է, որ իրան կազապարները համար աշնտեղի գածն է հարկաւոր:

— Ուրի՞շ, ոչինչ:

— Կաթսան կոտրւելուց լետո, մի նորը բերել տւեց և հետը ուրիշ գործիքներ էլ կաշին:

— Դրանք բոլորը մենք գիտենք, ասացէք գէնք, ուէւօլւէր, հրացան և ուրիշ այդպիսի գործիքներ չեն եկել:

— Ոչինչ, ոչինչ չեմ տեսել, չէ եկել:

— Ոսկանը տանից հեռանում էր, օրերով բացակա լինում էր:

— Անցեալ տարի, երբ ուսները այստեղ էին, լաճախ գեղերն էր գնում, ցորեն մթերք առնելու, բայց նրանց մեկնելուց լետո, մի գիշեր բացակա չէ եղել:

— Լաւ մտածեցէք:

— Թատրոնի ներկայացումների գիշերներն ու շանում էր մինչև կես գիշեր և էլ ուշ, բայց միշտ տուն էր գալիս քնելու և հանգստանալու:

— Ռուսաստանից հիւրեր շատ գալի՞ս էին ձեր տունը:

— Ձեմ լիշում: Ռուսներն որ հեռացան, այն ժամանակները հիւր շատ էր լինում Ոսկանի մօտ, բայց դրանից լետո գիշերը մեր տունը գիշերով չորս հինգ հիւր չենք ունեցել:

— Դրանք ովքե՞ր են:

— Մէկ երկուսը Կ. Պօլսից էին, անունները միտս չի, բայց եթէ տեսնեմ, կձանաչեմ, մէկ երկուսն

էլ Վանեցի թէ Մշեցի էին, չգիտեմ: Մի իրիկուն էլ Ռուսաստանցի մի ճանապարհորդ մնաց:

— Ոչ, մէկի անուր չգիտես. լաւ մտածիր:

— Ո՛չ ոքի. ինչպէս լիշեմ, քանի որ դրանք եկել և անցել են:

— Ռուսաստանցու անունը Սրբաբով խո՞ չէր:

— Ձեմ լիշում:

— Մուրադով կամ Սելեկեանց:

— Ձեմ կարող միտքս բերել:

— Այս պատկերները քննեցէք, գուցէ սրանց մէջ գտնէք նրանց:

— Ինձ ինչի՞ էք էգ թղթերը տալիս, ես ասացի, որ կարդալ չգիտեմ:

— Ոչ, պատկերներն աշեցէք:

— Լաւ, բայց սրանից ես ոչինչ չեմ ջոկում:

Մարդ, աչք, ունք, բերան, քիթ, չեմ կարողանում ձեր միտքը հասկանալ:

— Միթէ չէք ճանաչում, տեսէք սրան:

— Այդ գիտեմ, տեսել եմ, Ոսկանի պատկերն է, ինքը տասն անգամ ինձ ցոյց է տւել:

— Իսկ այս:

— Այդ էլ Նշանինն է, նա էլ ցոյց է տւել ինձ.

— Ա՛յս:

— Ձեմ ճանաչում:

— Ա՛յս, լաւ աշեցէք, գուցէ տեսած լինէք:

— Չգիտեմ:

— Ձեր ասածները բոլոր գրեցին, առաւօտը մի մարդ կբերէք ձեզ հետ, որ ստորագրէ ձեր տեղը:

— Շատ բարի:

Եֆէնդիներ, քննութիւնը դադարեցնում եմ, ազատ էք, կարող էք հեռանալ:

— Ուրեմն այս իրիկուն ազատելու էք Ոսկանին:

— Մի շտապէք, խանում, նախ բոլոր ճշմարտութիւնները խոստովանեցէք, որ մենք կարողանանք ձեր ցուցումների հիման վրա ազատել Ոսկանին. եթէ այդպէս յամոռիք և թագցնէք ճշմարտութիւնները, դեռ ուշանալու է նրա գործի քննութիւնը:

— Եֆէնդի, ներեցեք, որ ես ձեզ ասեմ, թէ թագցրած ոչինչ չունիմ, ճշմարտութիւնը և արդարութիւնը կէտառկէտ խօսել եմ, գուր տեղը մի անպատէք ինձ և շտապեցէք բաց թողնելու: Բարեգուցի և ողորմած եղէք, արգար է Ոսկանը, նրա վրա արատ չկա:

— Այդ դեռ լետո կիմանանք:

— Ուրեմն դեռ շատ պահելու էք նրան բանտում:

— Ինչի՞ նրա համար այդքան ցաւում էք, խանում:

— Ինչպէս թէ ինչի: Ո՞վ պիտի պաշտպանէ մի այրի և անօգնական կնոջ և ի՞նչ արդիւնքով պիտի ապրեմ ես աղջկանս հետ:

— Ուրեմն շատ էք ցաւում նրա վրա, խանում:

— Ինչէր էք հարցնում, Եֆէնդի, մի՞թէ կարելի է տան տիրոջ ու պահապանի վշտերի վրա չցաւել:

— Նա ձեր ինչն է, խանում, ես չեմ հասկանում ձեր խօսքերը:

Այնպէս պապանձւեցաւ և շանթաւածի նման կարմրեց ու կապոյտկեցաւ, կանգնած տեղը քիչ մնաց

որ գլորւէր: Հանդիսականները շնչերը զսպած՝ լսում էին և ուշադրութեամբ զննում նորա բոլոր շարժումները: Թշառ կինը չկարողացաւ համբերել, թիկնաթուռի մէջ՝ տեղն ու տեղը թուլացաւ և ետ ընկաւ:

Ձինւորական բժիշկը, որ իւր արհեստին հմուտ մի յոյն էր, անմիջապէս օգնութեան հասաւ և հաստատեց, թէ Այմաստը իրաւացի թուլացած էր և նւաղած ջղալին բորբոքումից: Չանագան հոտեր և դեղեր բերին, ջուր սրսկեցին և սառույց դրին ճակատին ու սթափեցրին, բայց էլ մնալու և խօսելու կարողութիւն չէր մնացել այրու երսկներում, անմիջապէս բժշկի և հալ պաշտօնականի օգնութեամբ կառք դրին և տուն տարան:

Կէս գիշեր էր: Այմաստի եղբայրը և աղջիկը հարևանի տանը նիրհում էին, այրին նրանց անհանգիստ արաւ, զարթեցրեց և տուն բերեց: Երեխան գրկում եկաւ և կողնքի մէջ ամփոփւեցաւ. պատանեակն էլ ցերեկն այնքան էր վազվզել, որ այդ պահուն զարթուն մնալու անկարող էր: Խեղճ կինը մնաց մենակ, տխրութիւնը պատեց նորան: Կողնքում պառկած մըտաբերում էր իւր օրւա դրութիւնը, գիշերւա անցքը. զարմանում էր ինքը իրան վրա, իւր արածների վրա, իւր կատարած դերի վրա և իրեն հարց էր տալիս, մի՞թէ ինքն էր այդ բաներն անողը, մի՞թէ ինքն էր այն մեծ ժողովի առաջ խօսողն ու պատասխանողը: Այդ բոլոր մտածմունքներից և հարցերից լետո, ասաց.

— Երեսիս կաշին պատառւել է:

ԻԳ

Բ Ա Ն Տ Ի Դ Ո Ւ Ռ Ը

Ես այս ինչ լիմարութիւն եմ անում, խեղճ Ոսկան, երկու օր է, ինչով ես ապրում, ասաց զարթնելիս Ալմաստը: Աղջ գիշերը աչքիցս չհեռացաւ, մինչև լոյս բանտում և նեղութիւնների մէջ տեսա: Յայտնի բան է, քաղցած կլինի, նա երբ կարող է նրանց ցամաք հացը ուտել: Միտքս կուրացաւ, երկու օր է նրան դուրս բերելու մտքով եմ մտլոււած, առանց մտածելու, որ երկու օր է, խեղճն ինչով է կշտացնում փորը: Իրիկունը երազումս ձեռքովս կախնով թէյ լցրի, տախով է իմանում, որքան ես տանջւում: Ռուսները Կարին մտնելու օրից սովորեցար առաւօտ-իրիկուն թէյ խմելու, երկու օր է առանց թէյի ինչպէս ես անց կացնում: Ալմաստ, քո լոյսովդ ապրող մի օտար, պանդուխտ մարդուն այդպէս ես պահում, այդպէս ես պահպանում: Նա ամէն մի ցաւիդ գլուխը զոհելու պատրաստ էր, դու նրան սոված ես թողնում: Ներքի ինձ, Ոսկան, մեռնիմ ոտքերիդ, մոլորելի, շշկուելի, մնացել էի:

Այս ասելով, ոտք ելաւ, մի ձուածեղ եփեց տաք լոշերի մէջ փաթաթեց, սառ սերուցքը քաշեց ոլորեց,

պղնձի չաշնիկը լցրեց կաթով. չալ ու շաքար վեր առաւ, փաթաթեցաւ էհրամը, դիմեց Սարալի բանտը: Բանտում ամէն սենեակ, ամէն տեղ պտրեց և չբատաւ: Բարեբաղբարար Արամը պատահեց, որը իմացուց զաղտնի կերպով, թէ Ոսկանը դտնուում էր Միջնաբերդի զինւորական մեծ բանտում: Ալմաստը առաջը խառնած՝ դիմեց միջնաբերդ: Դրսի դռնից արդելեցին ներս մտնելու. բայց Ալմաստը չլուսահատեցաւ մի քիչ դէս ու դէն ման գալուց յետո, պատահեց մի բարեսիրտ հազարապետի և խնդրեց, որ իրան օգնէ ներս մտնելու և այն ուտելիքները իւր բանտարկեալ տիրոջըն հասցնելու: Հազարապետը հրամայեց դռնապանին, որ չարգելեն և ուղղակի առաջնորդեն կնոջը բանտապետի սենեակը:

Հրամանը կատարւեցաւ:

Բայց տարաբաղբար ծերունի բարեսիրտ բանտապետը բացակա էր և նրա օգնական դաժանադէմ Մէհմէդը խիստ վատ ընդունելութիւն արաւ Ալմաստին: Այդ Մէհմէդը մի Հունարացի զինւոր էր, որ թողել, փախել էր Աւստրիական ծառայութիւնից խոսովութեան ժամանակ, Կարինում մահմէդականութիւն ընդունելով ամուսնացել, մնացել և կատարում էր բերդի բանտապետի օգնականի պաշտօնը: Կշտից կախած բանտի խցիկների բանալիները վրա գոռողացած, մեծ հաճութեամբ բաց անում ու կողպում էր արդելարանների դռները:

— Խանում, ասաց ազգն ու կրօնը ուրացող Հունդարացին, այստեղ ամէն բան տրւում է բանտարկւածներին, զուր տեղն էք բերել այդ նիւթերը:

— Ոսկան էֆէնդին յորտեղ է, նրան եմ տալու սրանք, ասաց ուտելիքը ցուց տալով:

— Էֆէնդի, այդ ինչ էֆէնդի է, այստեղ չկան այդպիսի մարդիկ:

— Ինչ ասացին, որ այստեղ է ատամնաբույժ բրժիշկը:

— Ես չգտեմ, այդպէս անձնաւորութիւն չեմ ճանաչում: Բայց գուցէ մեր բանտապետը գիտէ, թողէք այստեղ, նա որ գայ, ես կ'այտնեմ նրան և կը յանձնենք պատկանելուն:

— Ո՛չ, ես ուզում եմ անձամբ յանձնել և տեսնել նրան:

— Ի՞նչ շատ բան ես ուզում, բայց այստեղ ամէնի ցանկութիւնը կատարել չէ կարելի: Այստեղ այդպէս մարդ չկա, եթէ լինի էլ, մենք իրաւունք չունինք քեզ նրա մօտ ուղարկելու. նախ պէտք է գնաս, տեսնես քննիչը և թուղթ բերես նրանից, որպէս զի կարողանանք թողնել քեզ նրա մօտ: Բայց գուր է, մի գնա քննիչի մօտ, այստեղ չկա քո ստրածդ՝ եթէ լինի էլ, իրաւուք չի տալ:

— Ես իրաւունք կտանամ, դուք անհոգ կացէք խնդրում եմ, եղէք բարեսիրտ, խղճացէք տառապելի վրա և թող տէք գոնէ երեսը տեսնելու:

— Խանձում, խանձում, ինչէր էք խօսում, այստեղ, ասում եմ, արգելած է. այդպէս բաներ խօսել չէ կացելի: Հեռացէք, գնացէք, նախ թուղթ բերէք և ապա մտէք այս սենեակը:

— Կգնամ, աղա՛, կգնամ, բայց աղաչում եմ, տրէ՛ք այս սերուցքն ու կաթը, շաքարն ու չալը ատամ-

նաբույժ բժշկին, նա սովորած է և առանց դրանց դժուար կլինի նրա համար ապրուստը: Ես շուտով կբերեմ իրաւունք, որպէսզի կարողանամ անձամբ նրա մօտ գնալ:

— Լա՛ւ, թողէք, եթէ այստեղ կա այդպէս մի էֆէնդի, մի ատամնաբույժ, ես կիմանամ և նրան կը հասցնեմ, բայց կարծեմ դուք սխալուած էք, այստեղ այդպէս մարդ չկա, ետ տարէք ձեր բերածները:

— Ո՛չ, ես գիտեմ, որ նա այդտեղ է, ինչ արդէն յայտնի է. դուք բարեհաճեցէք այս բաները նրան հասցնելու:

— Լա՛ւ, թող մնա, բանտապետը գա, ես նրան կ'այտնեմ, և նա ինչպէս պէտք է, կտնօրինէ:

Այժմաստը սաստիկ զայրացած և ալլալած դուրս եկաւ բանտապետի սենեակից և բարկութեամբ լցած դիմեց քննիչի սենեակը: Նկուղի մօտի սենեակում դրել էին Գրիգորին, որը նկատեց Այժմաստին և ասաց մըտքումը:

— Սա կնիկ մարդ, թույլ, վախկոտ և համեստ, համարձակուած է մտնելու բերդի բանտը, փնտրելու Ոսկանին, իւր ծանօթ բարեկամին, նրան բան բերելու, բայց մեր հայրերն ու եղբայրները, մայրերը ու քորերը, փեսաներն ու խնամիները լաց են լինում և թակում սրա նրա դուռը, առանց մտածելու, թէ մենք այստեղ ինչ դրութեան մէջ ենք:

Այս դառն մտքերից չետո, սրտի խորքերից մի անի արձակեց Գրիգորը, որը բարձր օդի մէջ տարածւեց առանց նպատակին հասնելու:

Քննիչի դուռը շուտով բացին Այժմաստի առաջ,

բայց դահլիճում երկար սպասել տւին նորան: Այլմաս-  
տը կիսով չափ էհրամի ծայրը բացած նստեց բազմոցի  
վրա և աչքերը լառած դռներին սպասում էր դրանց  
բացւելուն: Բաց անող չկար: Նա անընդհատ հառա-  
չում էր և դառն մտքերով խորատուզում մտածու-  
թիւնների անյատակ և անեզր սփկիանում: Վերջա-  
պէս դուռը բացւեց և քնիչը ուրախ ուրախ ներս  
մտաւ:

— Բարով էք եկել, խանում, ինձ բան ունէք  
ասելու:

— Այն, էֆէնդի, խնդրում եմ ինձ իրաւունք  
տաք զնալ և տեսնել Ոսկան էֆէնդիին բանտում:

— Վայ, վայ, վայ, խանում, ցաւում եմ ձեզ վը-  
րա, սրտանց ցաւում: դուք որքան տանջում էք այդ  
Ոսկան էֆէնդիի մասին, իսկ նա չարագործութիւնները  
կատարելիս չէր էլ մտածում, որ իւր լիմար քայլերով  
ձեզ այդքան վիշտ է պատճառելու: Ա՛յ, խանում, ոչ,  
իրաւունք չեմ կարող տալ, որ նրան տեսնէք և չէք  
տեսնիլ երբէք, եթէ ճշմարտութեամբ բոլոր ձեր տե-  
սած անցքերը չպատմէք:

— Էֆէնդի, ես ձեզ քանի՛ քանի՛ անգամ կրկնեցի,  
որ լոկ ճշմարտութիւն է իմ խօսածներս և ցուցում-  
ներս, բայց շատ վշտանում եմ, որ ինձ ստախօսի տեղ  
էք ընդունում:

— Գոնէ մանրամասն չէք նկարագրում:

— Գիտեցածս պատմելուց երբէք չեմ ետ կան-  
գնիլ: Բայց խնդրում եմ, բարեգութ եղէք և իրաւունք  
տւէք, որ զնամ տեսնեմ, երեք օր է խեղճին գցել էք,  
նով է իմանում սրտեղ. հարկաւոր է նրան ուտելիք և

խմելիք տանել, սպիտակեղէնները փոխել:

— Մենք բոլորը կկատարենք, դուք ապահով ե-  
ղէք: Այս շաբաթ չէք կարող տեսնել, դեռ քննու-  
թիւններ ունիմ, իսկ գալ շաբաթ ձեզ իմաց կտամ, եթէ  
կարելի լինի:

— Ի՞նչ էք ասում, էֆէնդի, գթացէք ողորմե-  
լուս վրա, քուես ու դադարումս կտրւելու է մինչև  
նրան տեսնելու:

— Նա ձեր մասին բոլորովին անտարբեր է և  
չէ էլ մտածում, որ ձեր քունը կտրել է, ցնո-  
րական նպատակների ետևից է գնում: Մուռացէք նը-  
րան, մուռացէք. նա չի կարող համապատասխանել ձեր  
ազնիւ զգացումներին:

— Ի՞նչ էք խօսում, էֆէնդի, երբէք նա չարա-  
միտ և ցնորական գործերի ետևից չէ գնացել, դրանք զը-  
պարտութիւններ են: Նա ազնիւ և բարի սիրտ ունի,  
կեանքում բարիք անելուց և առաքինի օրինակ լինելուց  
չօկ զբազմունք չէ ունեցել: Եթէ ճանաչէիք նրա սիր-  
տը, բոլորովին կփոխէիք ձեր կարծիքը և չար լեզու-  
ների ձեզ հաղորդած զբարտանքներին հաւատ չէիք  
ընծայել: Ես ուզում եմ, որ լաւ քննէք, ուրախ եմ,  
որ դուք էք քննում: Ես համոզւած եմ, որ ձեր սիրզ-  
բունքը միայն արդարութիւն գտնելն է և շուտով պի-  
տի համոզւելք, որ Ոսկանը բոլորովին արդար է: Բայց,  
էֆէնդի, աղաչում եմ, աղերսում եմ, միջոց գտէք և  
թո՛ղ տւէք, որ երբեմն երբեմն տեսնեմ և պէտքերը  
հոգամ, մինչև բանտից դուրս գալը:

— Գնացէք, զնացէք տուն և երեք օր սպասե-  
ցէք, շաբաթ կամ երկուշաբթի ես ձեզ կանչել կտամ

և կյայտնեմ, թէ երբ կարող էք նրան տեսնել:

— Գոնէ իրաւունք տւէք, որ հարկաւոր ուտելիք և խմելիք տանեմ և դռնից պահապաններին յանձնեմ, թող իրան տան:

— Անկարելի է, մինչև երկուշաբթի համբերիր, նա էլ կհամբերէ: Մի կասկածիր, նրա ամէն պէտքերը օրինաւոր կերպով հոգացուած է, դրսից առաջութան տալ անկարելի է:

— Չգիտեմ, էֆէնդի, ինչ ասեմ, մարդասպաններին, աւագակներին կարելի է գնալ տեսնել, Ոսկանը որ մեղք գործած չունի, կեանքումը մի մարդու հաւին— «քըշհա» ասած չէ, ինչի նրա մօտ գնալու և կերակրելու իրաւունք չէք տալիս:

— Քննութիւնը պրծնի, խանում, այն ժամանակ կարելի է: Համբերեցէք երեք օր էլ, երկար ժամանակ չեմ որոշում:

— Ի՞նչ պիտի ասեմ, որ չհամբերեմ, բայց համբերելով կեանքս պիտի մաշեմ, ամէն օր մի շապիկ պիտի հալւի մարմնիցս:

— Վնաս չունի, տար այդ տանջանքը, որ ժամանակին լաւ խրատես Ոսկանին, որպէսզի հեռու փախչի չիմար մտքերից և քեզ չթողնէ լացի ու սրգի մէջ: Համբերիր, խանում, Աստուած ողորմած է, եթէ արդար ու անմեղ է, մի մազին էլ վնաս չի հասնիլ: Ես խօսք եմ տալիս քեզ, որ եթէ համոզեմ նրա անմեղ լինելու մասին անմիջպէս կարձակեմ և կաշխատեմ հոգւով նրան բոլորովին պատասխանատուութիւննից դուրս հանել:

— Աստուած ձեզ երկար կեանք տա, էֆէնդի:

— Գնա՛, խանում, գնա՛ և համբերիր:

— Շաբաթ օրը գամ իրաւունք ստանալու:

— Այսօր հինգշաբթի է, ուբաթ, շաբաթ, ո՛չ չեմ հասցնիլ, երկուշաբթի արի և պատասխանդ ստացիր:

— Երկուշաբթի անպատճառ կգամ: Մինչև երկուշաբթի պիտի մթնի ինձ համար լույս աշխարհը:

Ալմաստը հեռացաւ կոտրւած սրտով: Մի դռնից նա դուրս գնալիս, միւսովը ներս էր մտնում բարեսիրտ բանտապետը: Նա ուղղակի գնաց իւր սենեակը, սրբէջն առաւ, քրտինքը սրբեց և նստաւ հանգստանալու:

— Մի ջուր տուր, Մէհմէդ ասաց ծերուկը Հունգարացուն:

— Լաւ կաթ ունիմ, չէք խմել, Աշրաֆ աղա:

— Այդ ինչ կաթ է, բեր տեսնեմ:

— Խմիր, բանտարկեալի համար բերեց մի չիմար շատախօս հայ կին:

— Յիմար, տար տիրոջը, թող զովացնէ բերանը:

— Այնպէս մարդ չէ, անհոգ կաց, տտամնաբուժի համար էր բերել: Քննիչը պատւիրած է՝ ոչինչ չըտալ:

— Քննիչը շատ բան է ասել, նա ի՞նչ է իմանում, կաթը դու խմեցիր, թէ տւիր բանտարկեալին. դու ամէն բան կարող ես ուտել, խեղճը երէկ էլ չկարողացաւ չոր հացն ուտել: Մեղք է, մեղք, խիղճ բռնաւ չունիս, տար, տար:

— Խմիր, շատ կա մէջը, մնացածն էլ տամ բաւական է:

— Ուրիշ ինչ էր բերել:

— Շաքար, չալ, երևի Ռուսիացի է, առանց չալի չի ապրել:

— Ել ուրիշ:

— Կաթ ու սերուցք:

— Սերուցքը սրտեղ է:

— Այն քեզ համար եմ պահել, որ իրիկունը ընթրես:

— Շուտ, շուտ այս կաթը տար և ասան, որ եթէ ցանկանում է, իրիկան չալը մենք եփենք և մէկ-երկու բաժակ իրեն ուղարկենք: Իրան մօտ թողնել անկարելի է: Քովը մի քիչ սոյասիր, կաթն որ խմէ, ամանը ան, վերադարձիր, այնտեղ չէ կարելի թողնել, խացար:

— Եթէ քննիչը դն:

— Լավ, ես պատասխան կտամ, դու դնան, ինչ որ ասում եմ կատարիր:

— Վախենում եմ:

— Գնան, որ ասում են, էլ պատասխան մի տար:

Մէհմէդը ակամա կատարեց իւր զլխաւորի կամքը և շատ տհաճութեամբ մօտեցաւ Ռսկանի խցիկին: Ռսկանը պառկած մտածում էր դառն վիճակի մասին: Ազմուկը չխանգարեց նրա մտածմունքը, նա շարունակում էր անզգայաբար իւր երևակայութիւնները: Գուռը բաց անելով, ասաց Մէհմէդը.

— Ե՛հ, ինչ ես պառկել, վեր կանց:

Ռսկանը գլուխը շուռ տուեց:

— Քեզ համար մի կին կաթ է բերել, ան խը-միր և ամանը տուր տանեմ:

— Այդ ինչ կին էր, հարցրեց Ռսկանը:

— Մի հայ կին:

Ռսկանը ոտքի ելաւ և ամանից տէրը ճանաչեց: Մի ուժգուր մինչև տակը խմեց և մի համբուր դրօշմելով չայնիկի կոթին՝ վերադարձրեց Մէհմէդին:

— Պառաւ կին խն չէր:

— Չէ, չէ, աւելի աղջկա էր նմանում, քան թէ կնոջ:

— Որտեղ է ինքը:

— Գնաց, նա էլ հարցրեց, թէ որտեղ ես դու, բայց ո՛վ գիտէ՝ թէ որտեղ ես դու:

— Ուրիշ բան չասաց:

— Չուաձեղ էր բերել, քննիչին ուղարկեցինք, թէ ետ դա, կբերեմ, որ ուտես: Չայ, շաքար էր բերել: Աշրաֆ ադան իւր մօտ պահեց և եթէ ուզում ես, գաղտնի մի-մի բաժակ թէլ անուօտները և իրիկունները կբերեմ, որ խմես:

— Շնորհակալ եմ:

— Խելօք կաց, չեղգես, քննիչը սաստիկ արգելել է երգը: Գու գիտես, ետե էլ գէշ տեղ կուղարկեն:

Մէհմէդը դուրս ելաւ և գուռը կողպեց:

— Ամէն տեղ մի մխիթարիչ գտնելու եմ, եթէ այս կինը չլինէր, որքան պիտի գառնանար կեանքս այս երկրում: Ալմաստ, դու միայն մխիթարիչ չես ինձ համար, դու պահապան հրեշտակն էլ ես:

ԻԴ

Ք Ն Ն Ի Չ Ը Ե Ի Ք Ա Ր Տ Ո Ի Ղ Ա Ր Ը

Միևսիւ Անտուանը մի կճուռ նամակ ստացաւ Պէր-ժիւզակից, որի բարկութիւնը զգալով՝ մոլորեցաւ և չէր իմանում, թէ ի՞նչ միջոցով պիտի կարողանար նրա սիրտը հանդարտեցնել: Նամակը ստացաւ բորբոքման գիշերը, երբ ինքը նստած գրում էր անցքերի նկարագրութիւնը: Նամակը անչափ վատ տպաւորութիւն թողեց, որ գրիչը ձեռքից վար ընկաւ և խորասուզեցաւ մտքերի մէջ: Նամակը յայտնում էր, որ միւսնոյն առիթով գրած էր և՛ Մէքթուրշիին, որը արդէն քաջ առքաջ հետևում էր Միևսիւ Անտուանի խորհրդին: Պէտք էր օգնականը՝ Էրզնկացին փոխել տալ, որպէսզի Վալին բոլորովին ընկնէր նրանց ճանկը, իսկ այդ մասին գեռ կարգադրութիւն չկար:

Հետևեալ օրը զանազան գործեր արգելք դարձան. Միևսիւ Անտուանը Մէքթուրշի Էֆէնդիի հետ չկարողացաւ առանձնանալ: Այժմաստի քննութիւնից լետո երկու բարեկամ՝ կոյր գործակատարները թեթեւի տալով հեռացան Գիւանի Հարբից և ուղղեցին դէպի քարտուղարի բնակարանը: Ծուռ ու մուռ, մութ փողոցներից անցնելիս, նրանց առաջնորդում էր քարտուղարի չիբուղշին իւր լապտերով, որը չէր հասկանում

իւր տիրոջ ֆրանսերէն խօսակցութիւնը:

— Զարմացա, բոլորովին ապշեցի ես այդ կնոջ վրա, ասում էր քարտուղարը Միևսիւ Անտուանին, մի գիւղացի աղջիկ, անկիրթ, առանց որևէ դաստիարակութեան, այն ատեանի առաջ զսպեց իրան և համարձակ խօսեցաւ մինչև վերջը: Կարծես թէ բոլորովին ինքն իրան հետ էր խօսում, կամ իւր դրացի մի պառաւ կնոջ պատասխան էր տալիս, այդքան էլ սրտի անգործութիւն: Դա հասարակ կին չէ, դա մի ուրիշ արարած է:

— Ես շատ եմ կասկածում, դա ո՛չ Կանցիի է նման և ո՛չ էլ անգարգացած կնոջ, չլինի՞ թէ խաբում են, վրաներս ծիծաղում:

— Ի՞նչ էլ որ լինի, վերջապէս մի բնականից դուրս բնաւորութիւն ունենալու է: Նա այսօր տանը այնպէս էր շարժել, որ շարեցրել էր քննիչին, իսկ գիշերը մեզ բոլորիս: Արձանների և պատկերների առաջ խօսելիս անգամ մարդ զգուշանում է, նա մեզ անբան նիւթերի տեղ էլ չգրեց:

— Տէր Կոմիտասը պատմում էր, որ դա նրանց ժողովներին միշտ ներկա գտնւելիս է եղել և իւր ձեռքով պատրաստելիս թէյ, զայֆա ու մեծարելիս իւր մեծահոգի հիւրերին: Շատ անգամ նրանց մէջը նրստած վիճելիս էլ տեսել էր ծերուկը, բայց մենք թշուաին չէինք լսում:

— Դատարի բաներ են, Միևսիւ Անտուան, երեւակալիր, որ ես ունիմ զայֆաչի և հէնց այս չիբուղշին, տասը տարի է քովս է, մի մեծ մարդու մօտ չեմ կարող ուղարկել, եթէ գնա էլ, խօսք չի կարող հասկացնել

կամ լիակատար պատասխան բերել: — Ճշմարիտ է, նախ մարդուն ընդունակութիւն պէտք է, ապա լաւ դաստիարակութիւն: Եթէ դուք էլ դաստիարակէք մի այդպիսի ընդունակ կենջ, կարող էք ձեր ուզած ուղղութիւնը տալ: Նամանաւանդ որ Ոսկանը, ասում են, վարժապետ և դաստիարակ է եղել շատ տեղ.

— Չգիտեմ, միայն այդ կի՛նը, այդ կի՛նը աներեւակայելի անձնաւորութիւն է:

— Հետեւապէս վտանգաւոր...

— Ե՛հ, ամէն բանից վախենում ես, ի՛նչ ունի վտանգաւորութեան, ես զարմանում եմ նորա ձևերի վրա, նորա անտարբերութեան վրա, ի՛նչպէս կարող է մի կին վտանգաւոր լինել, այն էլ մի աղքատ, այրի և տգէտ: Սորա ճարպիկութիւնը և ազատ խօսակցութիւնը զբաւիչ և հետաքրքրական է: Եթէ հայ լինէի, հետը կպսակէի: Որքան էլ գեղանի էր, հրեշտակ, կարծես երկնքից իջած մահկանացուների մէջ ընկած:

— Ծատ գեղեցիկ է, բայց ինչպէս երևում է, Ոսկանին է տւել սիրտը, էլ մարդ չէ կարող գորան գըրաւել:

— Հրաշալի էր, երբէք չեմ մոռանալու այդ կրնոջը: Այս խօսակցութիւններով հասան քարտուղարի դռան առաջ:

— Ի՞նչ ես մտածում, ի՛նչի ներս չես մտնում, ասաց քարտուղարը:

— Ուշ է, դուք էլ հանգստանալու էք, առաւօտը վաղ կգամ: Վաղը միասին էլ կգնանք քննիչի մօտ և ճանապարհին կխորհրդակցենք:

— Լաւ լիշեցրիր, այս իրիկուն Մազթաղը մի նոր բան էր խօսել պատեր Փրանցիսկօյին:

— Ի՞նչ բան, ի՛նչ է խօսել:

— Ասել է, որ ինքը գնացած է եղել գերեզմանոց իւր տղայի գերեզմանի վրա լալու: Կարապետեայ Նշանը ու մի օտար քաղաքացի վարժապետ, բորբոքման օրը երկու թւանք ձեռքերը մօտեցել են նրան և առանց իրան նկատելու պահել են քարերի մէջ թւանքներն ու հեռացել:

— Մազթաղը գիտէ պահած տեղը:

— Ինչպէս չէ, արդէն իմացրել են ստիկանութեան և սկզբնական քննութիւնը լիտարւել է:

— Գործը ինչի՛ չեն ուղարկել քննիչին:

— Միտանն էր պատահել և ուշ տարել էին գըրտած հրացանները: Բայց կարելի է, քննիչը ստացած լինի:

— Կարապետեանը փախել է, նա չկա, երեւի Ռուսների սահմանն անցաւ: Գրա համար գլուխն առաւ կորաւ, բայց ընկերը, վարժապետը մեր ճանկն է, ազատելիք չունի:

— Բարեբաղդութիւն է. եթէ Մազթաղը չտեսնէր, ո՞ւմ վրա չէր կարելի կարծիք տանել: Չարագործ մարդը, եթէ իւր ճարպիկութիւններով մէկ-երկու գործից ազատւի, երրորդում և վերջապէս գոյգ ստքերով փոսը կգլորւի:

— Բռնեցինք ու լաւ բռնեց, էլ ազատելու լոյս չկա:

— Մազթաղը ամէն բան կպարզէ քննիչի առաջ և օրէնքը իւր արդար վճիռքը կյայտնէ:

— Խնդրում եմ, առաւօտ տեսէք Մազթաղին, իմա-

ցէք բոլոր մանրամասնութիւնները և պատկերեցէք, որ չվախենա և օրինաւոր կերպով խօսի քննիչի մօտ:

— Շատ բարի:

— Գիշեր բարի:

— Ձեզ լոյս բարի:

Միւսիւ Աստուանը ուղղւեցաւ իւր բնակարանը:

Առաւօտը ճաշից մի ժամ առաջ, բերդի մէջ Գիւանի Հարբում ժողով էր նշանակել, տասներկուս- ների առաջ քննիչը իւր քննութիւնը շարունակել էր և Ոսկանը առանց վրդովմունքի տւել էր բոլոր հարցերի պատասխանները այնպէս, ինչպէս որ Ալմաս- տը խօսել էր: Այնքան համեստ, այնքան հանդարտ և այնքան պարզութեամբ էր խօսել Ոսկանը, որ քննիչը համոզւել էր զրանց ճշմարիտ լինելը. նամանա- ւանդ, որ մազաչափ տարբերութիւն չէր նկատուում եր- կուսի ցուցմունքների մէջ, կարծես մէկ սրտից երկու լեզուների միջոցով արտայայտուած էին միևնոյն մտքե- րըն ու բառերը: Քննիչը իւր գործը վերջացրած հա- մարելով՝ բանտարկեալին ետ էր ճամբել խցիկը:

— Միւզէի էֆէնդի, ասում էր քննիչը, ես մի- այն ճշմարտութիւն եմ տեսնում Ոսկանի և Ալմաստի խօսքերի մէջ, կարծիք չունիմ զրանց մէջ կեղծիք և ստութիւն լինելուն:

— Չգիտեմ, այդ ձեր գործն է, միայն ես կաս- կածում եմ, որ այդ բոլորը շատ լաւ սովորած դաս է, որ երկու կողմն էլ կրկնում են մեքենաբար:

— Իբանց դէմքի գծագրութիւնից և սրտի ան- դորրութիւնից կարելի է միայն պարզութիւն նկատել: Եթէ ձեր կարծիքին հետևեմ, պէտք է այն ժամանակ

ուրիշ հայեացք գցել սրանց մտքի զարգացման և հո- գու կրթութեան աստիճանի վրա: Այդ էլ չէ կարելի երևակայել մի խեղճ գիւղացի կնոջ մասին, կամ մի թե- րուս թափառաշրջիկի վերաբերմամբ:

— Ես այդ հայեացքն ունիմ, տա Աստուած, որ խաբուած լինիմ, բայց ենթագրութիւններս հաստատ- ւում են:

Տեսնենք, վերջն է հարկաւոր:

— Էֆէնդի, խօսակցութեան մէջ մտաւ Ասիի Մէքթուբչին, երէկա հրացանների քննութիւնը երբ էք սկսելու:

— Անմիջապէս:

— Ուրեմն բերելու են այստեղ այն կիներ, որը սիրում է անդադար զերեզմաննոց դնալ, կորցրած որ- դու զերեզմանը թրջելու:

— Չարմանալի է այդ կիներ, զրա պատմութիւնը շատ երկար է, բայց թէև ասում են ցնդած է, դա- տարկ խօսք է, շատ ազատ և համարձակ խօսում է ու սրան նրան իրանց պակասութիւնների համար ան- պատուում ու վիրաւորում, որպէսզի նրա խօսքը բա- նի տեղ չանցնի, ասում են, ցնորած է: Երկու ժամ խօսեցի, ինչ պատասխան տւեց շատ խելացի կերպով, աւելի ուշքով, քան մեր ծառայող էֆէնդիները:

— Տեսնելու բան է. զրա ցուցումներից շատ բան կախումն ունի, տեսնենք ո՞ւմ է կախադան հանե- լու և ո՞ւմ երկինք:

— Տեղերդ, պարոններ, եկաւ մեր վկայուհին:

Ամէնը հանդարտեցին, զանգը հնչեց և դու- ուր բացելով ներս մտաւ մի քառասուն տարւան մօտ

կին: Շագանակագոյն ջիւրբա էր հագած և գլխին սև շալ գցած: Առաջ եկաւ, նստեց քննիչի դէմի բազկաթոռի վրա:

— Խանութ, ասաց քնիչը, Մագթաղ Ղուկասեանը դուք էք:

— Ո՛չ, էֆէնդի, ներեցէք, ես Մագթաղ չեմ. այլ Մագթաղինէ Ղուկասեան:

— Ներողութիւն եմ խնդրում սխալմունքիս համար. ինձ այնպէս էին հաղորդել:

— Ոչինչ, ուղղեցէք ձեր սխալը:

— Մագթաղինէ խանութ, դուք քանի տարեկան էք:

— Լաւ չգիտեմ, միայն մայրս ասում էր. (Աստուած սղորմի հոգուն) որ չաքուրկի (մորեխ) տարին ինձնով լղի է եղել:

— Այրի՛ էք, այնպէս չէ:

— Չգիտեմ, մարդս մեծ ժածին գնաց Սթամբուլ, էլ չեկաւ:

— Գիտէք, ձեզ ինչի ենք կանչել:

— Ասացին, որ դամ խօսեմ, ի՛նչ որ գերեզմաննոցում տեսել եմ:

— Այո, դուք պիտի վկայութիւն տաք և ձեր վկայութիւնից կախումն ունի գործը, դրա համար առաջուց ձեզ ուղում եմ ասել, որ հոգեդ միտդ բերէք, Աստուած ասեղ դատաստանը լիշէք և ինչ որ տեսել էք, ճշմարտութիւնը խօսէք:

— Մի վախենաք, այս սրտիս վրա նստած է բարի հրեշտակս սուրը ձեռքին, և երբ մի չարութիւն, ստուութիւն, նախանձ, ատելութիւն կամ սխալալութիւն

գարթնում է մէջս, սրի ծայրով սկսում է վիրաւորել սիրտս և չէ թողնում, որ չար ճանապարհով մոլորեմ: Եթէ կտրտէք, անկարող եմ ձեր կամքը կատարելու, պարտուոր եմ բարիին և ճշմարտին հետևելու, որ հանգիստ ունենամ և անվրդով քնեմ: Ասացէք, ի՛նչ էք ցանկանում և կլսէք միայն ճշմարիտ պատասխան:

— Այն հրացաններն, որ ցոյց տւիք ոստիկաններին և բերին այստեղ, պատմեցէք այդ անցքը: Մենք ձեզ առանց երդում տալու հաւատում ենք, բայց մի մոռնաք, որ մի օր երդումով էլ հարցնելու են ձեզ այդ բանը:

— Այս երեքշաբթի ժամից լետո տուն գնացի, բայց սիրտս չհանդարտեց: Այդ օրը (ամէն երեքշաբթի այդպէս է լինում) Արշակիս մահաւան օրն էր, առանց նրա գերեզմանին այցի գնալու սիրտս հանգստանալու չէր: Հիւանդ էի, չէի ուզում, բայց օտքերս սովորել են, անզգայաբար վազում են դէպի գերեզմանները: (Սխ, Արշակ ջան, ես քու գերեզմանիդ հողին մատաղ:) Գրնացի, այցս և աղօթքս կատարելու: Նստած էի չոքած գերեզմանի կշտովն ու լաց լինում: Ասացի, հիւանդ էի, ուշքս գնացել էր, շատ էի մնացել, քիչ էի մնացել՝ չգիտեմ, միայն երբ աչքս բացի, տեսնեմ երկու հոգի իմ կողմս են գալիս ձեռքին խշտիկով թւանք: Կարծեմ, դրանց օտքի ձայնից զարթեցի: Վախիցս կըռացա և երկու գերեզմանների մէջ բերնքուաղ պառկեցի: Գալողները բերին թւանքները և պօլիցիային ցոյց տւածս տեղը պահեցին ու հեռացան: Այս է տեսածս էլ, գիտացածս էլ:

— Բերողներն ովքեր էին:

— Մէկն էն Մշեցի Կարօ էն ասու՛մ, ինչ է, նրանց Նշանն էր, ժամանակով Արշակիս հետ դասընկեր էր, միւսը օտարական էր. խօսքն ու զրոյցը ցոյց էր տալիս, որ Կարնեցի չէր.

— Երիտասարդ էր, թէ հասակաւոր:

— Քսանըհինգ տարեկան կլինէր:

— Ի՞նչ էր հագած:

— Սպիտակ, մոխրագոյն սերտուկ ունէր հագին:

— Երեսը տես՞ր.

— Շատ լաւ տեսա, հին գոյնի կարճ միրուք ունէր:

— Հաստ մա՛րդ էր, գէ՛ր էր:

— Չէ, բարակ, միջակ հասակ ունէր:

— Միջակ էր հասակը. թէ՛ բարձր:

— Միջակ էր, Նշանից կարճ էր քով քովի գընալիս լաւ տեսա:

— Տեսնես կճանչնաս:

— Շատ լաւ կճանչնամ, նրան ուրիշ գէպքում մի քանի անգամ էլ տեսել եմ քաղաքում: Մի վախենաք չեմ սխալիլ:

Տասներկուսներէից մի քանիսը ուրախութիւնից տեղն ու տեղն հրճել էին, նամանաւանդ Միւսիւ Անտւանը, մի քանիսին էլ պատել էր տխրութեան քօղը: Քննիչի կարգադրութեան համաձայն հինգ բանտարկեալները և տասն էլ ուրիշ անձնաւորութիւններ բերին, վարագոյրի ետեւը խառը շարեցին: Յանկարճ բացւեցաւ վարագոյրը, և քննիչը տասց.

— Մագիթաղինէ խանում, սրանց մէջ խո՛ չէ՛ այն ասածդ մարդը, որ Կարապետեան Նշանի հետ էր այն

օրը, երբ բերին զաղեցին հրացանները:

Մագիթաղը միառմի աչքից անցուց: Ամէնքը սրտատրոփ, շնչերը բռնած, աչքերը դարձրած դէպի նորա կողմը սպասում էին պատասխանին: Եւ ըստական լուսթիւնից լետտ ասաց Մագիթաղը.

— Ո՛չ, այն մարդը չկա սրանց մէջ:

— Մի սառը քրտինք պատեց արաբներին և ուրախութեան ժպիտն երևաց Վալիի օգնականի երեսին:

— Լաւ նայեցէք, մի սխալէք, խանում ասաց քննիչը:

— Աչքերու բաց են, խելքս էլ գլուխս է, ասում եմ չկա այն մարդը:

— Հաստնտ, այստեղ չէ՛ այն մարդը:

Վարագոյրը իջաւ և բանտարկեալներին ու օտարականներին հեռացրին ժողովից: Չորս զինւորներով Ոսկանը բերին ատեան և աթոռ տւին նստելու: Նստանխօով նստեց և մտիկ էր տալիս քննիչին, որ գրիչը ձեռքին՝ անդադար գրում էր իւր հարցերը, ստացած պատասխանները և տպաւորութիւնները:

— Ոսկան էֆէնդի, տասց քննիչը, ճանաչո՞ւմ էք այս խանումին:

— Ո՛չ, չեմ տեսել զորան կեանքումս:

— Մագիթաղինէ խանում, տեսել էք Ոսկան էֆէնդիին, ճանաչո՞ւմ էք սրան:

— Չեմ ճանաչում, անունն էլ չգիտեմ, բայց ետեւից ինձ ցոյց էին տւել, որ տիրացու Վազարի խանը «ԱՒԼՄԸ» խաղացնողների գլխաւորն է:

— Ինչ էք ասում, խանում, ինչի՞ էք անպատ-

ուում, գատարանի առաջ նյդպիսի յանցանք . . .

— Սուտ խո՞ չեմ խօսում, հարցրէք իրեն և պիտի ասէ, որ ինքը Տիրացու Ղազարի խանը . . .

— Թատրոն է, ներկայացումներ են տալիս:

— Ելի՛, խաղացնում են:

— Բայց թատրոնը ուրիշ, քո ասածդ ուրիշ:

— Տէր Կոմիտասը (Սուտած ողորմի հոգուն) սուում էր, որ նրանք այնտեղ խաղացնում են . . .

— Լա՛ւ, լա՛ւ, խօսքը կտրեց քննիչը: Ոսկան էֆէնդի, ասացէք, որևէ հարց ունէ՞ք անելու ինձ կամ խանումին:

— Ոչինչ, միայն խնդրում եմ, եթէ կարելի է, վերջին կցկուռը խօսքերն էլ արձանագրէք, որ ցոյց է տալիս թէ՛ Տէր Կոմիտասը իւր խրատներով մեր դէմ էր զրգուում ժողովրդին:

— Շատ բարի, այստեղ արտասանած ամէն բառ արձանագրուում է: Ուրի՛շ:

— Ոչինչ:

Ժողովը վերջացած եմ համարում, էֆէնդիներ, կարող էք գնալ:

Ժողովականները սկսեցին ցրւել և Ոսկանը իւր հրացանակիրներով, յաղթանակի նման վեհ քայլերով, գնաց մտաւ իւր որջը:

— Քննիչ էֆէնդի, ասաց քարտուղարը, խնդրում եմ կարգադրութիւն անէք պտրելու Մագթաղինէ խանումի ակնարկած անձնաւորութիւնը:

— Սյդ մեր զործն է, խնդրում եմ, ամէն գործի մի միջամտէք և մի խանգարէք մարդու ծրագիրը: Այստեղ ձեզ միայն ականատես լինելու համար են կանչում,

ոչ թէ կարգադրութիւններ անելու: Բաւական է, որքան լուեցի, լաւ կլինի, որ չափերդ ճանաչէք և չըստիպէք մարդու ձեզ այս խօսքերով դիմելու: Աթէ միևնոյն բանը կրկնւի, լաւ գիտցէք, որ բոլորովին կհեռանաք ժողովից:

— Ո՞ւմ հետ էք, ի՞նչ էք բորբոքում:

— Մի մարդու, իւր դիրքն ու գլուխը պահպանել չգիտէ, որ իւր պաշտօնը ստորացնում է անարժան ընթացքով:

ԻՆՏ

ԳՍՏԱԽԱԶՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

Քարտուղարը կապուտկեցաւ, սևցաւ, բայց քննիչի սրից աւելի՛ լեզւի շանթերից վախենալով, թողեց հեռացաւ: Միայն չկարողացաւ մոռանալ կրած նւաստութիւնն ու յանդիմանութիւնը. նա սկսեց իւր գաղտնի և թագուն ճանապարհովն ընթանալ և մթումը կատարել իւր դերը, որի խաւարածին ժառանգն էր: Նա այնպէս դէմք ցոյց տուեց քննիչին, թէ միայն նրան արհամարում էր և դրանով վերջացնում իւր վիրաւորանքը, բայց քննիչը այն խորագէտ դիմագէտներիցն էր, թափանցում էր մարդկային սրտի խորքերը իւր հալեացքներով, նա պարզ կերպով դէպի քարտուղարը թըշնամական դիրք բռնեց և ամէն տեղ կծու նկատողու-

թիւններով ծախում էր նրա սիրտը: Քարտուղարը աշխատում էր ճարպիկ պատասխաններով և արտակարգ պատմութիւններով ծածկել մութ քողերով քննիչի խօսքերը և թույլ չտալ, որ ուրիշները վրահասու լինին իրանց մէջ տեղի ունեցած գոտութեան: Մէքթուբը չհամբերութիւնով տանում էր ամէն ստորութիւն և լռում բորբոքած բոպէներում, իսկ քննիչը բարկութիւնից չէր իմանում, ինչ միջոց բռնի, որ բոլորովին գաղարեցնի յարաբերութիւնը այդ աներեսի հետ և յաճախ համբերութիւնը հատնելով՝ ճարահատեալ թքում էր և անցնում:

Միւսիւ Անտուանը նկատել էր այդ բոլորը և ժամանակ կամ պատեհ առիթ գտնելուն պէս մօտենում էր Մէքթուբի էֆէնդիին ու զրգոնում: Բայց քարտուղարը ճակատ առ ճակատ կուէլու բոլորովին սիրտ չուներնալով, Միւսիւ Անտուանի խորհուրդին և աջակցութեանը կարօտ էր: Գլուխ գլխի տւած մի ընդաճակ թուղթ գրեցին, պարագաներով նկարագրեցին մի թեթև գրագէտի արտագրել տւին, սրը գրւածքի բովանդակութիւնը չհասկացաւ անգամ, կեղծ ստորագրութիւն գրին և ուղարկեցին Կ. Պոլիս պատերազմական նախարարութեան ատեանը:

Միւսիւ Անտուանը Պէր ժիւղալին գրեց ամէն բան իւր պարագաններով և խնդրեց, որ Վալիի օգնականի և մանաւանդ պատերազմական քննիչի մասին մի կարգադրութիւն անել տա: «Քննիչը, ասում էր իւր թղթի մէջ, մեր բոլոր ծրագիրները ու գործերը տակն ու վրա արաւ: Եթէ այս ընթացքը շարունակէ, Ձէթիւնը կարելի է շուտով ազատել բանտից, այն ժա-

մանակ աւելի կատաղի կերպով պիտի սոսաջ վարէ իւր հաշիւը: Ծտապելու է քննիչին թուցնելու հնարքը գտնել:

Բայց այդ թղթերով չբաւականացաւ քարտուղարը: Մի հանրագիր գրեց, եռապետ ընկերների միջոցաւ ստորագրել ու կնքել տւեց ժողովրդին և ուղարկեց Կ. Պոլիս՝ Սաղբագամին: Սակայն գրանց դեռ ժամանակ էր պէտք գլուխ գալու, պէտք էր վրէժ լուծել, մի բան անել, մի կերպ զովացնել սիրտը: Այդ պատճառով ամէն զիշեր խորհուրդ ունէր Միւսիւ Անտուանի հետ և մի լաւ բան չէին կարողանում մտածել: Մի օր առաւօտ վաղ Միւսիւ Անտուանը եկաւ Մէքթուբի տունը: Վերջինս կանանցից դեռ չէր ելած, ուստի ճարահատեալ մի ժամանակ պարտաւորեցաւ առանձին նստել դահլիճը և իրիկւա մտածածները դասաւորել մտքումը և այնպէս ներկայացնել ընկերակցին:

— Այո, ասում էր նա ինքն իրան, այս միջոցը մեր բուռը պիտի հաւաքէ բոլորի սանձերը, բոլորի, իմ բաւումս պիտի լինին վիլայէթի բոլոր պաշտօնեաները: Գործիր, Անտուան: գործերդ կարգին դիր, ապա թէ ոչ՝ տեղդ նորն է գալու և դու, իբր անպէտք արարած, ո՞վ է իմանում, որ վանքի՝ որ քուեջն ես ընկնելու և լաւիտեան մնաս բարև ասելու աշխարհի զարճալի կեանքին: Զգուշացիր, որ քսան տարւան աշխատանքիդ արդիւնքը օտարը չվայելէ: Ոչինչ, քցիր ոտքիդ տակ, արորիր ամէն բան, կաշիդ քեզ ամէնից մօտ է: Զիդ առաջ քշէ, Անտուան . . . քշէ առաջ, քշէ . . .

Այս մտածութիւնները ժամերով կուէր, եթէ

քարտուղարը խալաթը հագնելով չչտապէր դալու բարեկամին մօտ:

— Հնչ, ինչ կայ, ինչ նորութիւն ունիս, մի բան խո՛ չես իմացել:

— Ոչինչ, մի ցաւալի բան իմացա, որ իմ ուրբն թագրութիւնը հաստատելու է և քննիչին ստիպելու են, որ իւր կարծիքները փոխելու պարտաւորւի:

— Ի՞նչ կա, ասա՛, ինչ գործ է. համբերութիւնս հատաւ: Գիշերս երազներ շատ եմ տեսել, բարին կատարւի:

— Մենք չենք կարող այդ գործը կատարել, այդ գործը կարող է գլուխ բերել միայն դատախազը:

— Պատմիր, ինչ բան է, իմանանք, ես ինքս կարող եմ ստիպել Միւզէիին այդ գործը կատարելու:

— Գուցէ քննիչի թելագրութիւնով մերժէ դատախազը քո խնդիրքը:

— Ես քեզ ասում եմ, թէ չեմ թող տա, որ առաջարկս մնա առանց հետևանքի:

— Թատրոնի գործակատարի մօտ կան զանազան գրքեր և թղթեր, որոնք շատ բան են պարզելու:

— Լա՛ւ գիտես:

— Գործին տեղեակ մի մարդ ինձ պատմեց:

— Ո՞վ է այդ գործակատարը:

— Մի բոլորովին անյայտ, աղքատ, բայց բանիբուն տղա:

— Ո՞րտեղացի է:

— Կարնեցի:

— Մի՞թէ:

— Որ ասում եմ, էլ «միթէն» ինչ է:

— Ուրեմն համոզւած ես, որ նրա տանը զանազան թղթեր կան, որոնք պիտի գործի գոյնը բոլորովին փոխեն:

— Այ՛ո, մարդու պարզել աւելորդ է, ես ինքս դատախազի հետ առանձնապէս կիսուեմ, որ խուզարկութիւն անէ: Եթէ մեր անունը գործի մէջ լինի, գուցէ քննիչը և օգնականը հակառակորդութիւններ հանեն մեր դէմ: Աւելի լաւ կլինի, որ գործեն և պարծենան, թէ իրանք են գտել զաղտնիքը:

— Ե՞րբ սկսելու էք:

— Այս իրիկուն կիսօրիմ, առաւօտը կամ գիշերս կատարել կտամ: Կու՛ ոչինչից տեղեակ մի ցոյց տալ քեզ, ես էլ կասեմ, որ մի տեղից իմացա, թո՛ղ խուզարկեն, կորուստ խո՛ չեն ունենալ:

— Շատ բարի:

— Բայց մարդը, գործակատարի անունը չյայտնեցիր:

— Թատրոնի ծառայ Մարուքը:

— Ծառայ Մարուքը, մի՞թէ նրանից կարելի է յուսալ այդպէս բան:

— Նա անմեղ է, ռոճիկ ստանալու և տուն պահելու համար, առանց այդ թղթերի և գրքերի բովանդակութեան ծանօթ լինելու պահում է:

— Հասկացա: Ուրեմն ասա՛, որ հարկաւոր է թատրոնի գույքերի մնացորդը քննել:

— ձիշդ այդպէս:

— Ուրեմն աւելի հեշտ է դատախազին համոզելը:

— Ես կարծում եմ:

— Բայց կասկած խո՛ չունիս, լաւ գիտես, որ կան

այդ պիտի բաներ խաբւած խո չես . . .

— Շատ բան էք գտնելու, ես երաշխաւոր եմ:

— Տեսնենք:

— Այսօր մի գործ ունինք ժողովում:

— Կա, բայց լիմար բան է:

— Նրանց մօտ:

— Քննիչը պիտի հարցաքննէ Ոսկանի վկաներին, այն մոլլաներին:

— Ժամը քանիտի՛ն:

— Կարծեմ կէս օրից մի ժամ առաջ:

— Լաւ, այնտեղ կտեսնուենք. ցտեսութիւն:

— Գնաս բարով:

— Միւսիւ Անտաւանը դուրս եկաւ:

— Այս մարդը այս քաղաքը և բնակիչները իւր անձի պէս ուսուցնասիրել է, որտեղ ինչ կայ, ո՞վ ինչ ունի, ում ինչն է պակաս, ով ինչ ստացաւ, բոլորը: Մէկ իւր մեռնելու օրը չէ իմանում, ապա թէ ոչ, ամէն բան կատարում է: Այսպէս գործունեա մարդը հոգի է Քանի՛ քանի՛ նեղութիւններում ինձ օգնութեան է հասել, քանի՛ անել անցքերը ընդարձակել իմ առաջ: Ե՞րբ կկարողանալի ամէն մի վրէժս լուծել, եթէ սա իւրաքանչիւր դէպքու միջոցներ չգտնէր: Պէտք ստիպել Վալիին, որ սրա համար անպատճառ Մէջիդիէ առաջին կարգի պատանշան առաջարկէ և բերել տա սրան վստճատրելու է: Մենք պաշտօնեաներս առանց սրանց օգնութեան ոչինչ չենք կարող կատարել: Գալիս ենք երկու, երեք և վերջապէս չորս տարի մնում, հազիւ ծանօթանում ենք գործին և մարդկանց, մէկ էլ փոխւում նոր գործի կամ բարձր պաշտօնի: Սո-

րանք պիտի մեզ դեկավարեն, բնիկները . . .

Ժողովի ժամանակ հանդիսականները իրանց տասներկու ամիսների վրա նստած էին, քննիչը իւր քննութիւնների թղթակալը թեի տակ հանգարտ մտաւ դիւան: Ամէնքը ընդունեցան իրանց պաշտօնական ձեւերը և կարգապահ հերս հրաւիրեց առաջին վկային, որը առանց հրաւիրելու նստաւ իրան համար որոշւած անուի վրա:

— Ինչպէս է ձեր անունը, խօջա էֆէնդի, տասց քննիչը:

— Սօլլա Մէադէադ Սօլլա Մուսթաֆա օլլի:

— Քանի՛ տարեկան էք:

— Աստուած որքան որ շնորհել է:

— Ինչի՛ էք հրաւիրւած, գիտէք:

— Աշխարհքում փորձուելու և գտելու, յաւիտենական դատարանի առաջ մաքուր դուրս գալու համար:

— Խօջա էֆէնդի, մենք շէրիաթի վերաբերեալ հարցեր չենք տալու ձեզ, այդ բանը դատարանում Վազին կհարցնէ, դուք պարզաբար պատասխանեցէք մեր հարցերին:

— Եթէ դուք շէրիաթին չէք հպատակուում և չէք խոնարհուում Աստուածատուր օրէնքներին, ես ձեզ երբէք չեմ հնազանդւիլ:

— Մենք հպատակուում ենք շէրիաթին և նրա որդիքն ենք, բայց զինուորական դատարանի մօտ կարիք չկա նրան կէտ առ կէտ հետևելու:

— Աշխարհի բոլոր օրէնքներն ու կարգերը շէրիաթից են բղխած, ես ձեր դատարանը շէրիաթի

մասն համարելով՝ ներկայանում եմ և խոնարհուում ձեր առաջ: Առանց Առաքեալի կարգերը խանգարելու հարցրէք և ես պատրաստ եմ ձեզ պատասխանելու:

— Շատ լաւ, շատ բարի, ես կհարցնեմ և դուք ճշմարտութեամբ պատասխանեցէք:

— Մարգարէի հարազատ հետևողին աւելորդ է այդ նախազգուշութիւնը:

— Ասացէք, խնդրեմ, իրտեղից էք գալիս:

— Աշխարհից եմ գալիս, յաւիտենականութիւն եմ գնալու:

— Բորբոքման օրը քաղաքումն էիք:

— Այո, «Նազիկի չարսին» իմ խանութս նստած ծախում էի դեղ ու դեղրուներ:

— Ի՞նչպէս տեսաք, ի՞նչ պատահեց, ո՞ւմ հետ ժամանակ անց կացրիք, միառմի պատմեցէք:

— Գիւղացուն ճիճւի դեղ ծախեցի, ես լաւ եմ պատրաստում այդ դեղը, սորվեցնում էի, թէ ինչպէս պէտք էր բանացնել: Մէկ էլ վերեւից «տւէք տւէք» ձայն եկաւ, դուրս նայեցի՝ տեսնեմ, որ ամէն կողմից փայտ, ուրագ, կացին, ձող երկաթ, շիշ, քար ձեռքերը բռնած վազում են փողոցներում հայերը: Ահա կողպում են խանութները: Պարսիկների մէկ-երկու բախկալի խանութների ապրանքները շուռ տւին, ցրւեցին ու թալանեցին, սրա վրա ամէնը վախերիցը խանութների փեղկերը ծածկեցին և կողպանքները քցեցին ախերի վրա: Ես էլ կողպեցի, ինչ պահեմ մեղքս, շատ վախեցա: Վախսուն տարեկան մարդ եմ, այդպիսի բան առաջին անգամն եմ տեսնում: Ուզեցի վեր գնալ և տեսնել, թէ ի՞նչ կար «Գէօլի-գլուխը», բայց ճանապարհը

կտրեց անմիջապէս զօրքը, էլ ոչ առաջ կարողացա գրնալ և ոչ ետ: Սանդուխը դրի խանութիս ճակատին՝ վեր ելա երթիք: Մէկ էլ տեսնեմ թատրոնի մեծաւորը, այն որ միջալայ Աքիֆ-բէգի տեղն եղաւ Ագիզիէի Թաբիէի վրա (մարտկոց), ետեւիցս վեր ելաւ երթիք: Նրա ետեւից Մօլլա Չոշխունն եկաւ, դրանից յետո մեր խանութի դրկիցները՝ Գասպար աղպարն ու Շէխօն: Մէկ էլ տեսնեմ, մի բարկացոտ իւզբաշի (հարիւրապետ) կատաղած ու բորբոքւած մատը թափ տւեց մեր վրա և հրամայեց ասքէրներին (գինւոր), սանդուխը վար առին և կտորտեցին: Մենք մնացինք երթիքի վրա, էլ ոչ կարողացանք առաջ գնալ, ոչ ետ, ոչ մի տեղից էլ օգնութեան հասնող չկար: Ինչ որ է, մնացինք այնտեղ մինչև յետինքին: Երբ խռովութիւնը դադարեց և ժողովուրդը ցրւեց: Բայց լաւ տեղ էինք, ամէն բան տեսանք, քաղաքը հայելու պէս մեր առաջին էր, ինչ որ անցաւ, լաւ տեսանք: Ողորմի էն իւզբաշու ծնողին, եթէ նա չլինէր, շատ մարդ պիտի բարձրանար երթիք, այն ժամանակ ոչ մի բան էլ չպիտի տեսնէինք և կարելի է խանութս էլ փլէր, (շատ հին է, լիսխում է): Բայց սանդուխիս գինը ես այն իւզբաշուց պահանջելու եմ:

— Այդ իւզբաշին ճանաչում ես:

— Անունը չգիտեմ, եթէ տեսնեմ կճանաչեմ:

— Ուրեմն միջալայ Աքիֆ-բէգի գերը կատարողը ձեր մօտն էլ:

— Այո, մին Աստուածի անունով, նա մեզ մօտ էր, մինչև վերջը մնաց և չէր էլ կարող գնալ, ուր երթար: Թէ վար գցեր իրան, ջարդ ու փշուր կլինէր:

— Խո լաւ ճանաչում ես այդ դերասան ատամ- նաբուժին:

— Ինչպէս չճանչնամ Ա. քիՖ բէգի դերը խաղ- ցողին, Արզուրուծի հայ-թիւրք նրան ո՞վ չգիտէ:

— Լաւ, խօջա՛, ուրիշ բան չ'ուսինք հարցնելու, կարող էք գնալ և այն սենեակը մի քիչ նստել, մին- չև մի մարդ եմ կանչել տւել, նրա դալը:

— Շատ լաւ. միայն շտապեցէք, խանութս բաց է. մի փոքր երեխայի յոյսով թողել եմ կարողութիւնս եկել: Նամանաւանդ յաճախորդներս կգան, դեղ կու- ղեն, կարող է սխալ բան տալ և խանութիս անունը կտարել:

— Լաւ, լաւ:

Միևնոյն բանը ցոյց տւին Մօլլա Ջոշխունը, Գասպար աղբարն ու Շէխօն: Կանչեցին սանդուխը կտորոզ իւզբաշուն, որ խոստովանեց ճշմարտութիւնը և ճանաչեց վկաներին, վկաներն էլ փոխադարձաբար նրան: Ել կարծիք չմնաց, ամէնքը համոզւեցին, թէ Ռսկանը նոյն օրը բորբոքման սկզբից մինչև վերջը գտնւել է Մօլլա Մէադաթի խանթի երթիքը:

Ժողովականները սկսեցին ցրւել: Քարտուղարը գաւաթում մօտեցաւ դատախազին և ժպտալի դէմքով բարևեց: Վերջինս քաղաքավարութեամբ ընդունեց նը- րա լարգանը: Մի քանի առօրեա բան խօսելով՝ շարու- նակեցին իրանց ընթացքը Սարայի կողմը:

— Գործը փոխուում է, ասաց դատախազը, Ռս- կանը շուտով ազատւելու է, նրա վրա ոչինչ չէ կարելի հաստատել: Մնացեալներն էլ կարող են փրկ- ւել նրա շնորհիւ: Գործի իսկական հերոսը, Նշան Կա-

րապետանը փախաւ, նրա ընկերը կորաւ շփոթութեան մէջ: Չարագործները ազատւեցին, պատասխանատու- թիւնը տեսնենք Վալիի վրա կմնա, թէ զինւորական վար- չութեան:

— Վալին ի՞նչ անէ, երբ դատուելու նրա վզից են կախել, ջոճախ/սը ուրիշին լանձնել: Այսօր նոր բան լսեցինք, իսկ հետեւելու իրաւունք չուսինք, ձեր զին- ւորական վարչութիւնը պիտի կատարէ այդ գործը:

— Ի՞նչ բան լսեցիք:

— Թատերասերների խումբի թղթերի, դրքերի, նամակների և ուրիշ գօյքերի մեծ մասը թողցրած են մի տան մէջ, որտեղ կարծիք բոլորովին չէր կարելի տա- նել, գուշակել...

— Ո՞վ է իմանում, էլի ի՞նչ չիմար թղթեր պիտի ժողովէք և մեզ ստիպէք, խելառներին նման այժի մօր- թի մագերն համբել տալ:

Անհոգ կայէք, այդ թղթերը պիտի պարզեն ձեր առաջ նրանց գործունէութիւնը և պիտի համարէք իմ կարծիքիս իսկութեանը:

Ես համոզւած եմ, որ նրանք աշխատութիւն- ներ և մտազրութիւններ շատ են ունեցել, բայց փաստ չկա ձեռքբերումս, մի բռնելու կոթ չունինք:

— Քննեցէք և այս թղթերը, աչն ժամանակ պիտի գտնէք ձեր պահանջած փաստերը:

— Ախար ինչ որ անում ես, որ կողմն որ դար- ձնում ես, մի ապացոյց չկա այդ Ռսկանի վրա, նա աջատուում է ամէն պատասխանատուութիւնից, նրա վրա արատ չես գտնում:

— Նրա համար, որ միևնույնը գողտնալիս, նախ

պատեանը շինում, պատրաստում և ապա են տանում:

— Զգիտեմ, դրանք ինչ անյայտ էն, բայց բանը այնտեղ է, որ ձեր բերած բոլոր փաստերը և ապացույցները ջրւելու վրա են:

— Նրա համար, որ գործին ուրիշ հայեացքով և սրտով են նայում:

— Ար կողմն որ դարձնես, լաւ գիտեցիր, որ տարւած ես, Մէքթուբջի էֆէնդի: Աչքի առաջ բեր իրական հանգամանքները և կտեսնես, որ էլ առաջ գնալն անկարելի է: Օր առաջ բաց թողնել, դադարեցնել գործը և խողացնել ամէնի սիրտը՝ ահա մեր գործը:

— Մի վերջին փորձ և կտեսնէք.....

— Պարտաւոր եմ կատարելու: Մի փոքր յայտարարութիւն ուղարկեցէք և ես կկարգադրեմ, որ քննիչը կատարէ և այդ ցանկութիւնդ:

— Բայց առանց ձեր ներկայութեան ես չեմ համաձայնի, որ կատարի այդ խուզարկութիւնը:

— Ես էլ այնտեղ կլինեմ:

— Շնորհակալ եմ, շնորհապարտ եմ:

ԻՉ

Խ Ա Ի Ա Ր Ա Ծ Ի Ն

Մէքթուբջին դատախազից բաժանւելուց յետո, պատահեց Միւսիւ Անուանին: Վերջինս ժպիտն երեսին մի այնպիսի հայեացք ուղղեց քարտուղարի վրա, որ կար-

ծես հարցնում էր.— Ի՞նչ եղաւ:

— Անհոգ կնոջ, առաւօտ եթէ չկատարւի, իրիկունը պատրաստ կաց ներկա գտնւելու:

— Խօսք տւեց, բաւական է. երբ որ ուզում է, թող կատարէ: Ցտեսութիւն, գործ ունիմ, շտապում եմ. իրիկուն կարելի է գամ տուն:

— Կսպասեմ, արի քիչ խօսենք:

— Շտապում եմ, ուշացա... ստելով հեռացաւ Միւսիւ Անուանը: Գնում էր դէպի «Չայդարա» — Կարնի ետ ընկած մի թաղ: Ինչի՞ էր գնում, ինչի՞ էր այնքան աճապարում՝ հետաքրքիր է իմանալ: Միւսիւ Անուանը պարապ մարդ չէր, նա ժամանակը վտանել չգիտէր, նրա ամէն քալը ծախւած էր և ամէն ժամն ու ընթացքն փարձւած: Ելի ի՞նչ գործ ունէր, ո՞վ է իմանում, էլի ո՞ւմ տունն էր քանդելու:

Ահա մօտեցաւ մի հաստ ու պինդ շինութեան, որը դրսից երկու յարկանի էր երևում, բայց մի յարկ էլ գետնի տակ՝ հողի մէջ էր գտնւում, որը չէր նկատւում: Առջոր երկաթապատ դռներ, երկաթի վանդակներով լուսամուտներ ունէր այդ տունը և տաներեպի ծեփերը թափւած, ծակծկւած և սարսափելի կեղտոտ ու ապականւած էին: Տարիներով անձրևի կաթիլների հետքերը, խողովակից վազած հողոտ ջրի տիղմը պատերի վրա չորացել և մի տխուր կերպարանք էր թողել շինութեան վրա: Լուսամուտները այնքան կեղտոտ սևացած էին, որ ապակին չէր կարելի շրջանակի փայտերից և պատի աղբերից զանազանել, որոնցից եթէ մեծագոյն մասը կտորած չլինէր, չէր կարելի կարծել, որ դրանք լուսամուտներ էին: Մօտից անց կենալիս

մարդ ահամտ հարցնում է, մեթէ այս ահագին տան տէրը այնքան ընկած է, որ միջոց չունի մի չնչին գումար ծախսելով, այս բաւականին կարգին տան երեսը մտքերէ ծեփել տար: Տունը անկիւնի վրա էր և ճիշդ միանման երես ունէր և միւս կողմը, որի երկաթապատ դուռը բաց էր: Դռան առաջ կանգնած էր մի պահապան զինուոր հրացանով, պատառոտած համազգեստով: Միւսիւ Անուանը ուղղակի զինուորի բարեւը ընդունելով ներս մտաւ, բաց արեց մի դուռ և տան ծակ ու ճեղին սովոր անձնաւորութեան նման՝ փտաճ քայլերով առաջ գնաց: Անմիջապէս տեղից թռաւ և ամենայն յարգանքով խոնարհեց Միւսիւ Անուանին մի միջահասակ թուրք, որը, ինչպէս շորերը և սրայգուն կոճակները ցոյց էին տալիս, պաշտօնական անձն էր այդ տան մէջ:

— Նուրի աղա, ո՞վ է այսօր զինուորական օրապահը:

— Միւսիւ Օսման էֆէնդին:

— Խաչօյի համար ուտելիք ստացել է:

Ո՛չ, դեռ ւոված է խեղճը, բայց քանի մտաբովը, բերան չբացեց ու հետո երկու խօսք չխօսեցաւ. անզաղար գրում է:

— Լաւ է, թո՛ղ գրէ, կարելի է խելօքանայ:

— Բայց այդպէս բնաւ չէր պատահել, Խաչօն երեք օր չհարբի... մաստիկայի ու ոսմի թարգը տա... եղած բան չէր:

— Այս բանաջ Խաչօն պէս քանի քանի հազարներին ուղղել է, նա էլ կշտկի:

— Պատարկ բան է, էֆէնդի, խումն այնպէս բան է, որ սովոր մարդը միայն մահով կարող է նրանից

աղաւել. նա մարդուն անասնացնում է:

— Ո՞վ է ասում, չիմէ, բայց չափով խմէ, մարդավորի արբենա, ոչ թէ տինտօն դառնա ու փողոցները ընկնի խայտառակ:

— Այդ էլ ուղիղ է, բայց զժւար է սովորի համար. նրա կեանքը առանց խմիչքի տանջանք է:

— Հարկը սովորութիւնն էլ կլուծէ: Չկա, ինչ պիտի անէ:

— Կհամբերէ և ձեռքն անցնելիս՝ էլ գէշ օրը կգլորւի:

— Թէ անցնի...

— Թէ... բայց նա այնպէս կապ կտրածն է, որ մի ժամ ազատ թողնես, մի շաբաթեա խմիչքի փող կճարէ:

— Այդ էլ իրաւ է, բայց նրան ո՞վ է թողնում, որ իւր քէլֆին քողաքի մի ծայրից մինչև միւսը չափէ. էլ պիտի սրանից լետո նրան գործ տամ ամէն օր և ստիպեմ, որ կատարէ առանց ետաձգելու: Այդ միջոցով լույս ունիմ, որ մի տարւա ընթացքում նրան կատարեալ մարդ շինեմ:

— Այդ խելքի բան է, եթէ համբերէ:

— Վաստակածն էլ ձեռքը չեմ լանձնելու, ետ կգցեմ և մի գումար շինելով, եթէ խելօքացաւ, իրան կտամ, եթէ ոչ մի կալք, մի տարակ, մի բան կառնեմ, որ չկարողանա փչացնել:

— Շատ բարի էք, էֆէնդի, ձեր արածը նրա համար ո՞վ կանէր: Հայրը իւր սրգուն այնքան խնամք չի անիլ, որքան դուք արել էք նրա համար:

— Ինչ անեմ, մեղքս է, մի անգամ տիրու-

թիւն եմ արել, տունս մտել ելել է:

— Յալտնի բան է, ամէն տեղ նրան կանչում են — Անտուան էֆէնդիի Խաչին:

— Խաչին էլ իմ խաչս է, Նուրի աղա, խո գիտես հայերէն և հանկանում ես մեր ոճերը:

— Ինչպէս չէ, ասել կուզէք, թէ ձեր կամաւոր կրելու պատիժն է Խաչին:

— Այո՛, այո՛, մարդ երբեմն ինքն իրան պատժում է:

— Ուզում էք գնալ մօտը, երթանք:

— Երթանք: Տեսնեմ, խելքի եկել է:

— Չէ, խօսք չի ուզիլ, երկու երեք օր է գիշեր ցերեկ այնպէս է աշխատում, կարծես մեքենա լինի, գրում է ու գրում:

Այս խօսակցութիւնը շարունակելով հասան Խաչօյի խցի դուռը, երբ բաց արաւ Նուրի աղան փականքը և ասաց.

— Հրամեցէք, էֆէնդի, կարող էք, որքան որ ուզում էք՝ նստել մօտը, ես գնամ գործ ունիմ: Ներեցէք, որ դուռը դրօնք փակելու եմ պարտաւորւած և դուք ակամայ, որքան որ կամենաք ներսը նստել, իմ կալանաւորս էք համարւելու.

— Նուրի աղա՛, հանաքներ շատ ես սիրում, գնա՛ և աշխատիր, որ ոչ ոք մեզ չխանդարէ: Դուներն ամուր կողպիր և լաւ հսկիր մինչև դուրս գալս:

— Ծառա եմ, էֆէնդի:

Խաչօն անշարժ նստած տեղը շարունակում էր իւր գրութիւնը:

Սենեակը մի մեծ լուսամուտ ունէր, բայց ամսն,

որ խիտ երկաթեա հաստ ձողերով ճաղերը մթնեցրել էին: Մի մահճակալ կար հասարակ փայտից, որի վրա դրած էր խոտից մինդար և հաստ բրդէ վերմակ ծաղկաւոր չիթ երեսով:

Լուսամուտի քով մի պահարան էր դրած, որի վրա գիր էր գրում բանտարկեալ գրագէտը: Մի շամ փայտ կոճղ կար Սաչօյի տակը, ամբողջ փոխարէն, որի վրա բանտարկեալը գցել էր իւր վերարկուն, նստարանը փափկացնելու համար: Պատում խրած էր և ամբացրած մի երկաթի մոմկալ, որի միջի ճարպէ մոմի կէտը ճենճըրթած քթովը աչքի էր ընկնում: Հողջատակ էր սենեակը:

Հանդարտ քայլերով մօտեցաւ Միւսիւ Անտուանը կալանաւորին, ասելով.

— Ինչպէս է, Սաչօ, վերջացրի՞ր:

Խաչօն գրում էր՝ Անտուանն երկնցաւ, դիտեց գրւածքը, ապա գոհ սրտով կրկնեց:

— Վերջանալու մօտ ես, շատ մի շտապիր, ժամանակ շատ ունիս, մի քիչ հանգստացիր.

— Հան, դու ես, ես կարծում էի, լիմար Նուրին է, էլի իրան շինճու ձայնով և կոպիտ նմանողութիւններով եկել է մօտս կատակներ անելու: Օֆ... կըռնակիս մէջ տեղը ծակւեցաւ...

Ասելով Խաչօն գրիչը ձեռքից վար գցեց և երկու թեւերը ետ բարձրացնելով, մի լաւ ձգւեցաւ, մէջքը ետ ծռելով ձգրտացնելով:

— Կարծես ծակում են մէջքս, էֆէնդի, այսօր շատ զգալի է:

— Տարին տասներկու ամիս, որ օրերդ պարտապանցնես, չայտնի բան է, մէկ երկու օր գործ ունենա-

լիս կյոգնիս: Ինչ արած, աշխարհի բանն ալդպէս է, որ կայ, մի ամիս կպահէ, որ կայ, որ միայն մի օր կարող է պահէլ: Քուկդ որ տեսակիցն է, Խաչօ:

— Եֆէնդի, դու ողջ կեցիր, իմս էֆէնդիի տեսակիցն է, տարին տասներկու ամիս ազավարի կգամ շաբաթէ-շաբաթ ոռճիկս կստանամ և հանգիստ, փառաւոր կերպով կհարբեմ... ք՛մ... կնայրեմ... Գու որ կաս, էլ ինձ ի՛նչ պիտի պակսի: Եթէ երկու անգամ աւելի անցրած լինիմ շաբաթւա մէջ, մէկ երկու անգամ աւելի կգամ թռչակիս համար: Ինչ էլ որ հասնի ձեռքս, շնորհակալ եմ, Ասուած կեանք տա Միւսիւ Անուանին: Տարին մի հետ այսպէս մի գործ պատահելիս էլ, որ չյոգնինք, էլ ինչի՛ ենք սպրուս:

— Խելօք ես, շատ խելօք, Խաչօ, որ չափդ անցնում ես, լաւ չէ: Այսօր այստեղ դու ի՛նչ բան ունիս, ինչի՛ այս գործդ տանս՝ ինձ մօտ չպիտի կատարես: Այդ խմելուդ համար որքան նեղութիւն քաշեցիր, էլի չխելօքացար և ես էլ պարտաւորւած եմ տանջել քեզ հետ: Ի՛նչ գործ ունիմ բանտում:

— Բան չկա, երևելի մարդկանց հետ շատ ես տեսնուում, երևակայիր, որ, եթէ լաւ քննես, նրանցից շատերի տեղն այստեղ է, դու էլ իբրև նրանց աստիճանակիցը՝ գտնուում ես նրանց շարքում:

— Ելի սկսեցիր գիտնել, էլի խելքից դուրս գէլին ես տալիս, քեզ հազար անգամ ասել եմ, որ չափդ ճանաչես և գործիդ հետեիս:

— Ես իմ գործս շինեցի և վերջացրի, լուսով եմ, որ դու էլ խոստումդ չես մոռանալ, անմիջապէս կգրնաս Վալիի մօտ և կխնդրես, որ ներում շնորհէ և

ուրթ ամիսւա բանտարկութեան վճիռս, ուր շաբաթւան իջեցնէ:

— Յիմար, լիմար Խաչին: Ծօ, որքան քեզ խրատեն, էլի դու էն Խաչին ես, չես փոխուում: Գու այս տասը կամ տասնը հինգ տարի է, ինձ ճանաչում ես, մէկ օր քո գէշդ ուզած չեմ, խօսքս փոխած չեմ, մէկ օր ցանկութիւնդ փորսումդ մեռցրած չէ. էլ ինչի՛ միւնոյնը կրկնում ես. ասել եմ, կկատարեմ:

— Գիտեմ, էֆէնդի, գիտեմ ու ճանաչում եմ ձեզ: Բայց արի մէկ-երկու օր նստիր և տես որքան անտանելի է, որքան ճաթեցնում է մարդու սիրտը, ահա երկու ամիսը մօտեցաւ: Գիտե՞ս որքան դժւարութիւնով եմ մի՞նացնում օրելս, դրա պաճառով նեղւած եմ և կրկնում եմ խոստումդ, որը չի՛նի՛ թէ բանի տեղ չդնես և մէկ-երկու օր ուշացնես:

— Ոչ, ո՛չ, անհոգ կնոց, շուտով կգաս էլի տուն: Վերջացրի՛ր բոլոր գործերը, ի՛նչ որ պատուիրել էի գրել, կարգի բերելիս:

— Այն, ամէն բան, կարգադրածիդ համաձայն:

— Գրեցի՛ր շրջաբերական նամակն էլ:

— Այն:

— Կարգն տեսեմ:

— Իսկոյն,— ասաց և թղթերի միջից հանելով մի թերթ թուղթ, սկսեց բարձր կարգալ.

«Ամենակարևօր գաղտնի շրջաբերական «Նայոց միութեան» անդամներին: Կենտրոնական վարչութիւնը սոյն օրերս նկատելով յափշտակիչների վատ հայեացքը դէպի իւր անդամները և կատարւած զգւելի խուզարկութիւնները, այս շրջաբերականով յայտարարում է և

հրամայագրում բոլոր այն անդամներին, որոնք կենտրոնում չեն գտնուում, անմիջապէս ձեռք բերել ամէն տեսակ միջոցներ պաշտպանելու «Սուրբ Միութիւնը», այլեւ մոխիր գարձնել ամէն տեսակ կասկածելի թըղթերն ու գրքերը, նամանաւանդ վարչական բոլոր թըղթակցութիւնները: Պատւիրում է կարգալուց յետո անմիջապէս ոչնչացնել սոյն շրջաբերականը, չկարգացողներին բերանացի հաղորդել և ամէնին զգուշութեան հրահրել:

Կենտրոնական փայտութեան աստեղապետ՝  
Ոսկան:

Ուղիղ է. Քարտոռոյսը Վարչութեան՝ Սարգիս Տեր-Մելքիսեդեկեանի»:

- Այս սեպտեմբերին է:
- Այս ճիշդ Սարգսի գիրն է:
- Բայց հարկաւոր է, տեղ տեղ Ոսկանի գրով ուղղել, այնպէս որ աչքի ընկնի, թէ նա սրբագրել է: Գրիւր քովը Ոսկանի գրերով «զգուշութիւնով»:
- Է՞լ:
- Աւերացբու «կենտրոնում չեն գտնուում» -ից լետով «կամ որոշեալ կէտերից հեռացած են»:
- Գրեցի:
- Բաւական է: Փրանսերէն նամակները ընդօրինակեցիր:
- Պատրաստ է բոլորը:
- Անգլիերէնները բերի, շուտ պէտք է արտագրել: Ես գործ ունիմ, գու գրիւր մի նամակ էլ Տրապիզոն Էֆէմեան Բարսեղ Էֆէնդիի կողմից Ոսկանին գրեած, որը խնդրում է շապել Ալաշկերտում պատրաստել

երկու հակ ամերիկան կտաւ և Պարսկաստանի տրանսպորտի կարուանին յանձնել, այնտեղ ստացելիք սնդուկների փոխարէն, որպէսզի գործը չծակւի և կառավարութիւնը չկարողանա կասկած տանել:

- Հասկանում եմ:
- Աշխատիր, միտն գոյն տալ գործին:
- Վերահասու եմ:
- Մի նամակ էլ գրիր Կարսից Գ. Ա. -ից գըրեած Ոսկանին, սրտեղ լիշիր, որ Գ. Ա. -ն ստացել է անգորրագիրը և յուսով է, որ իւր ուղարկած երեք հազար ըուբլին չեն խնայիլ գործածելու «Սուրբ գործի» համար և խոստանում է շուտով հաւաքել և ուղարկել մի այնքան գումար էլ:
- Իմացա, բայց ստորագրութիւնը, նրա գրի ձև՞ը:
- Ահա նրա մի նամակը, որ կօգնէ քեզ ամէն կերպ: Մինն էլ գրիր Ալէքսանդրապօլից Պօղոս Վեցմատեանից նոյնպէս Ոսկանին, որը խոստանում է ուղարկել չորս հարիւր Վինչեստը և երկու հարիւր Մարտինի հրացան, Բարթող լեռների գաղաթով՝ «Շահեօլի» ճանապարհից՝ ըստ առաջին պահանջման:
- Լաւ, մինչև իրիկուն պատրաստ կլինի:
- Լաւ չի ուզում, այդտեղ մատիտով գրիր, որ չմոռանաս կամ սխալես:
- Խաչօն ակամա հնազանդեցաւ:
- Թիֆլիզի, Երևանի, Շուշիի, Ախալցխայի նամակները պատրաստ են:
- Այդտեղ է բոլորն էլ:
- Ես գնում եմ և սրանք հետս տանում, ի-

ընկաւն կգամ և մնացեալներն էլ կտանիմ: Մնաս բարով:

— Գնաս բարով, ասել է, դեռ շատ եմ մընալու, է:

— Է՛հ, լիմարութիւններ մի կրկնիր, խօսքս խօսք է, վերջացաւ:

— Այսօր ինձ բան չբերին, ծարաւ եմ, քաղցած եմ:

— Կերակուրդ կգա:

Կերակուրն սվ կարող է ուտել, ծարաւս առաջ կտրեմ, բուկս թրջեմ, որ ախորժակս բացւի, ուտեմ:

— Այսօր էլ համբերիր շուտով, շատ շուտով ամէն բան կվերջանա:

— Միայն այսօր հեշտ է, մինչև իրիկուն վեց ժամ ունինք, կհամբերեմ:

— Այ, ոչ, քսան և չորս ժամ պէտք է համբերել, էգուց կէսօրից լետո, այս ժամանակ ես կգամ և միասին կգնանք:

— Ի՞նչ ասեմ, պիտի հնազանդիմ,

— Մնաս բարով:

— Բարի ճանապարհ:

Միւսիւ Անտուանր դուրս եկաւ:

— Ախմախ, անխելք... Աշխատիր դուրս հանելու: Գուրս որ գամ, բաւական է, էլ վերջ եմ տալու քեզ ծառայելուց: Տասնըհինգ տարի է, որ ես գերիդ եմ, սրանից լետո էլ դու իմ հաճոյքներիս կսհւիր: Երկու օրը մի անգամ կգա, «— Խաչին, այս թուղթը գրիր», «այս ստորագրութիւնը կեղծիր», «այս նամակը արտադրիր»: Առաջին էլ ի՞նչ անէ, ճանկդ ընկել է, պիտի անէ, ու-

նեցածդ, չունեցածդ իմս է: Հերիք է, ինչ որ քէյֆ արիր, թո՛ղ քիչ էլ Խաչին ապրի: Տղերք, քէյֆ արէք, Խաչօն գալիս է, Միւսիւ Անտուանի եղած-չեղած դրսանումն է: Ոսկի, որքան որ կուզէք, ուտենք, խմենք, ինչքան որ կարող ենք: Շատ պէտքս է, թէ մեռնելու եմ: Մեռնել ի՞նչ մեռնել: Քէյֆ արա՛, լաւ խմիր, մի տկճօր լցրու ու անկանկացրու, էլի գնա՛ հանգիր: Մի վախենաք, էլ ինձ չեն կալանաւորելու, աղաների և էֆէնդիների շարքն եմ անցնելու: Յիմարներ, փող ունեցողին էլ բռնեն: Մի ոսկի ասա՛, պառչներդ կճոթաւա. Էօմէրին էլ տո՛ւր, Օսմանին էլ տո՛ւր, դարբիթին էլ տուր. քեթիթիին էլ տո՛ւր, շանն էլ տո՛ւր, գէլին էլ տո՛ւր, ամէնի հետ աղբերացիր, ընկերացիր ու լէն լէն ապրիր: Ինչպէս որ դու, Անտուան, Քէյալ-Սահանին ճանբեցիր էն աշխարհը, տանն ու տեղին, կնկանը ու աղջկանը տիրացար, այս քսան տարի է վայելում ես, թո՛ղ քիչ էլ այդ տան մէջ որդիդ քէյֆ անէ: Կու ուրիշի ինչքը յափշտակեցիր անիրաւի, իսկ ես, քո ծառանդ, քո արիւնից սնւած և քո մէջքից իջած ժառանգդ, իրաւունք ունիմ լաջորդաբար տիրանալու բոլոր բարիքներիդ: Բաւական է, էլ ինձ չես կարող խաբել, ես առաջ կարող էի կասկածել, բայց վերջապէս համոզւած եմ... որ, այն... դու ես այն վանական վարդապետը, որ խաբեցիր մօրս և նորա կուսութիւնը պղծելուց լետո, կեանք տւիր թշուառիս և մատնեցիր այսքան տարւան տանջանքների, թէ ինձ, թէ այն թշուառ մօրս, որը քո ճանապարհդ աշելով, աչերը մազ բուսաւ, աշխարհքի մէջ խաղք ու խայտառակ լինելուց լետո, սովամահ մեռաւ: Այդ բոլորը, այդ ամէնը դու կատար-

րեցիր, Միւսիւ Անուան, հերիք չէր մօրս այնքան տար-  
 ւան տանջանքները, ինչ էլ քո մեծ մեծ խոստումնե-  
 ներովդ և զանազան թղթերովդ մինչև այսօր խաբ-  
 խբեցիր, դեռ աշխատում ես էլի խաբելու: Տասն հինգ  
 տարի է ... այնքան գործերդ եմ հոգացել, այնքան  
 նեղ դրութիւններից եմ ազատել, այնքան կուրուժեամբ  
 հրամաններդ եմ կատարել, որ յափշտակութիւններիդ  
 արդար կէտը իմ... իմ սեփականութիւնս է: Ի՞նչ արած,  
 որ իմ վիճակից օգտւելով՝ աշխատանքիս պտուղը դու  
 ես վայելել: Ինչ ասում են,— «Խաչօ. հարբում ես, ամօթ  
 է, թարգը տուր»: Խաչօն ի՞նչ սպուր ուտէ, չհարբի.  
 ինչո՞վ մխիթարւի ու մոռանա ցաւերը: Մօրս քաշածները  
 մոռանամ, նա լացեց, լացից կուրացաւ և գլորւեցաւ.  
 ակ, քալա ջան: Բայց ինչպէս չիչեմ այն տանջանք-  
 ները, որ քաշում են այն մոլորած մարդիկը հիւնար-  
 ներիս պաճառով: Օրական հարիւր անգամ պատահում  
 եմ ձեռքովս քանդած փլատակ տներին և այդքան  
 անգամ հառաչանքների ու անէծքների ձայնը ական-  
 ջումս բզզում են: Բաւական է, ինչքան ես դատեցի,  
 դու կերար, էլ իմ դատածս ես եմ ուտելու: Քեզ ճըմ-  
 րելու համար բոլորովին չպիտի խղճահարւիմ, մի վա-  
 խենայ, անվրգով հոյ պիտի իջեցնեմ և գերեզմանիդ  
 շուրջը պղպեղ ու տաքդեղ պիտի ցանեմ, որ տարոցտարի  
 կանաչի ու կարմրի: Սեպենք թէ մայրս մի օր գերեզ-  
 մանից դուրս ելաւ և եկաւ քեզ խեղդեց, նորա համար  
 որ դու նորան անչւան կապել ու կախել էիր: Եթէ  
 հաւատարմական պաշտօնական թուղթ չունիմ, միթէ  
 չես ընդունելու իմ նորա կողմից ունեցածս արիւնի  
 իրաւունքը, որը ժառանգարար վայելում եմ և պար-

տաւոր եմ հատուցանելու նրա պարտքերը և ստանա-  
 լու պահանջները: Քեզանից սովրած դասերս քո գլ-  
 խիդ որ փորձեմ, միթէ չես ուրախանալու, որ քո ա-  
 շակերտը՝ իսկական յաջորդը, առաջադիմել է և կա-  
 րող է տեղդ բռնել յաջողութեամբ: Անպատճառ...  
 կասկածդ փարատիր... գնալդ վճռւած է, բարի ճանա-  
 պարհ, մօրս շատ բարև կտանես...

Այս ցնորքներում գլորւած՝ ընկաւ Խաչօն ան-  
 կողին ու պառկեց և աչքերը դէպի մրոտ առաստաղը  
 լառելով, շարունակեց իւր անելիքների յատակագծերը  
 կազմել: Աճեց դարտկեց մտքովը, բայց «անտակ քու-  
 ղա, չորցած աղբիւր. ո՛չ ջուր վազեց, ո՛չ էլ լցւեց»,  
 միայն շատ բորբոքւել էր Խաչօն:

Մութ, աստեղաշատ, պարզ և հրաշալի գիշեր  
 էր: Հորիզօնի հեռաւոր ծայրերը թունդ կապոյտը պա-  
 տել էր, արևը շատ վաղ հեռացել և նրա հետքն ան-  
 գամ անյայտացել էր: Գիշերները Կարինի փողոցները  
 լուսաւորելու կապալառուն՝ լուսինն էր, որը պարբե-  
 րաբար իւր շրջանը կատարում էր և շատ անգամ խա-  
 ւարում թողնում գիշերային անցորդներին: Ինչպէս ե-  
 րևում էր, դեռ շատ ուշ էր ցոյց տալու իւր երեսը,  
 իբր թէ սաստիկ վշտացած լինէր Կարնեցիներից և կէս  
 գիշերից լետո պիտի գար և շտապով անցնէր:

Չեփիւռը հանդարտ փչում էր Ագիգիէի բար-  
 ձունքից և բարձրագագաթ բարտիները մեղմ ճօճում  
 էին քաղցրաշունչ շուրջով, տների դռները ամուր ա-  
 մուր փակած էր, լուսամուտների և երթիքների փեղ-  
 կերն ու կափարիչները պնդացրած ամէն մարդ ընկած  
 էր խոր քնի մէջ հանգստանալու: Չկար մի լուսամուտ

կամ մի ծակ, որտեղից մի աղօտ լոյս էլ է ցոլար: Նա-  
հապետական պարզութեամբ, արևի հետ միասին վեր-  
ջացրել էր ամէն մարդ իւր գործն ու հոգսը և մրա-  
փում էր՝ առանց զգալու ցերեկաւ հոգեկան և ֆիզի-  
քական ցաւերը: Այս մեռելալին հանգստութիւնը ո՞վ  
կարող էր վրդովել:

Կարինի գանազան փողոցները անգորրութեան  
մէջ թողնելով և նրանց պարզութեան վրա հրճե-  
լով՝ գանք «Միւսէալահը»: Սա այն փողոցն է, որտեղ  
Կարինի կրեստներն էին բնակուում: Այստեղ են գանը-  
ւում և Եւրոպացիները, կօնսիւլները, բժիշկները, դո-  
մինիկեան կուսակրօնները և Կաթօլիկ մալրապետները:  
Սրանք, եթէ կարելի է ասել, Կարինի մօզնի մարդիկն  
են կամ արիստոկրատները: Լուսամուտները մեծ-մեծ,  
ճրագները վառ, աղմուկն ու ձայները տարածւած: Մի  
տանը խմբով երգում են, մի ուրիշ տեղ նարգի և  
թուղթ են խաղում, մի երրորդում օրիորդի մէկը մաս-  
նաւորի բաց է արել լուսամուտներն, որ հով օդը ի-  
րան գովացնէ և քամին դաշնամուրի ձայներն առնէ,  
տանէ, հասցնէ մի ահանջի, որը նորան լսում է: Տեղ  
տեղ լուսամուտների մէջ կամ պատշգամբներում երե-  
ւում են մարդիկ, որոնք դիտում են երկինքը, բնու-  
թիւնը իր զարգարանքներով, ծծում քաղցր օդը և խնդա-  
լի իրօտակութիւններով ժամանակները անց կացնում:  
Բայց սաստիկ խաւարը և հիւսիսի ցուրտ քամին վախե-  
ցնում ու ստիպում էր նրանց շուտով հեռանալ ներս  
ու հանգստանալ:

— Քան, մութ գիշերը զաբրիստանների դէմ կանգ-  
նելը ինչ է, ասում էր մի կին իւր մարդուն, ներս,

արի, չէս վախենում:

— Յիմար, իմար, հազար անգամ ասել եմ, որ  
աւելորդապաշտութիւնները մոռացիր, մեռածն էլ ինչ  
գործ ունի կենդանանալու: Սնապաշտներ . . .

— Ուրեմն Գաբրիէլի փոզն էլ որ հնչէ, չպիտի  
բոլոր մեռելները ստք ելնեն:

— Այդ ուրիշ բան է, բայց դեռ Գաբրիէլի փողին  
շատ կա, դու մի վախիլ, խանում:

— Ե՛հ, դուք հիմի փոխել էք, բանի չէք հա-  
ւատար: Աստուած սրորմի հոգուն, արլաս ասում էր,  
որ տասն անգամ գիշերները ճերմակ-ճերմակ պատանք-  
ներում փաթաթուած խորթլաղներ է տեսել այս տեղ:  
Հազար անգամ ասի, թէ տուներ փոխենք, ես վախե-  
նում եմ, դու որ չէս լսում:

— Լաւ, լաւ, Վալին խօսք է տւել, որ Ղաբ-  
րիստանը քանգել տա և հասարակութեան պարտէզ  
շինւի, էն ժամանակ վախենամ աղաչես, թէ էլ այս  
անից չելնենք:

— Անւլ, ֆողը գլխուս, գերեզմաններն էլ քան-  
դեն, մեռածների սկորներն էլ խղիւղացնեն: Թուրքե-  
րը ոտք կելնեն ու Սէրայը փաշաի գլուխը կփլցնեն:

— Անցան էն բարբարոս տարիները, էլ բան  
չեն կարող անել:

— Լաւ, լաւ, ներս գնանք ես, ոհմաւում եմ, մի  
կանգնիք:

— Մի վախենա, մի: Ի՛նչ կա աղտեղ, հան-  
գստացած մարդիկ, քար ու հող: Այս Զուբբ, այս ծա-  
ռերը, ինչքան լաւ կլինի, եթէ օր առաջ պարտէզ  
դցեն ալտեղ:

—Քան, բան մէկ աշէ, հոգիդ սիրես, մի էն կողմը նայէ, էն ինչ ճերմակ բան է խլալտալիս: Աչքիս երևում . . . ասեմ . . . չէ, չէ, նայեցէք, որքան տեղ ման եկաւ:

—Կատու է, ինչ է, ինչ ես գողում, ուզում ես իջնեմ մէջը ման գամ:

—Չէ, չէ, խելքից դուրս բաներ մի խօսիր, երթանք ներս:

Եւ ուղիղ մի ճերմակ բան ման գալով՝ անցաւ գիշերով միջանր Ատրիստանի միջով և գնաց «Բօշաների թաղի» կողմը: Պարսպապատից թուաւ, շարունակեց իւր գնացքը մի նեղ փողոցով:

Գիշերաշրջիկը մեղմ և արագ քայլերով գնում էր. վերջապէս մօտեցաւ մի խրճիթի և առանց դուռը գարկելու, մի ծակից թևը ներս կոխեց, բացեց ձեռքով դռան ներսի նիզը, մտաւ նեղ ու երկայն բազը: Զգուշութիւնով վառեց շաման և առաջ գնաց: Տանը ամէն մարդ քնած էր. պստի օթախում, տան ու քիլարի դուռը բաց էր թողած: Անձանօթը մտաւ քիլարը, բաց արեց մեծ բղուղների բերանը, մէկի մէջ պանիր կար, միւսի մէջ թան, երրորդի մէջ բազուկի թթու, չորրորդում աղջուր, բայց հինգերորդը, վեցերորդը, եօթներորդը, տասներորդը դատարկ էին:

—Ի՞նչ էր պտուղում այս մարդը: Ոչինչ: Սա մի զարմանալի գող էր, փոխանակ կարասներն ու բղուղները դարտկելու, սկսեց մէջը բան լցնել: Երեւի շատ բարեհոգի մարդ էր, գիտէր, որ տան տէրը խեղճ էր, ամսական հարկեր քսան դուրուշով չէր կարողանում պահել իւր մեծ ընտանիքը, դրա համար գաղտնի բերել

նիւթեր էր լցնում նրա ձմեռուա տմանները: Ի՞նչ էր լցրածը: Կապոցներ, գոյնզգոյն թղթի ծրարներ, մեծ ու փոքր: Բայց բաւական չէր, որ լցնում էր այդ ծրարները, նրանց վրա գնում էր տախտակներ և վրան լցնում հող, որ կորչին, անհետանան, որ տէրը շուտով չնկատէ ու փչացնէ դրանք: Հին դիրքով ու դրութիւնով շարեց ամէն բան բարի աւազակը, դռները փակեց. ինչպէս որ եկել էր, այնպէս էլ հեռացաւ: Տունը թատրոնի ծառա Մարուքինն էր:

Այս անգամ եկած ճանապարհով չվերադարձաւ տուն, վախեցաւ, միգուցէ որ հանգոտացած Մահմէդի հաւատացեալները նրա քղանցքից բռնեն ու իրան քաշեն գետնի տակը: Գնաց բանջարանոցների կողմը, այնտեղից մտաւ եկեղեցու հայաթը և դուրս եկաւ բազարի մեծ փողոցը: «Նազիկի չարսուն» գիշերապահների գոռոցների միջով անցաւ, «Գէօլի» գլխից պտտեցաւ, եկաւ, մտաւ Միւսիւ Անտուանի տունը:

ԻԷ

Ե Ր Կ Ո Ւ Շ Ա Ֆ Թ Ի

Կիրակի իրիկուն ամէն պատրաստութիւն տեսել էր Ալմաստը և անհամբեր սպասում էր միաշաբա-

թի վերջանալուն: Ասկանի շապիկն հարթուեալ, ճերմակեղէնները պատրաստած, ամառուա շորերը սարքած, բմբուլ բարձն ու թեթե շալ վերմակը բողի մէջ էր դրած: Երկու օրու կաթի սերն հաւաքել էլ մի ամանում և զով տեղ գրել, շաքարը մանրել թղթում փաթաթել, հաւը մաքուր իտակել, սառցատանը կախել, կանաչեղէնները մաքրել սէալով գրել մուսլուղի տակ. թարմ մրգերն էլ հետը: Մտածում էր անընդհատ, թէ արդեօք ուրիշ բան խո՞ չէ մոռացել: Ողջ գիշերը հանգիստ չէր քնել, միշտ երագել էր Ասկանին, նրա հետ խօսել, նրան լսել և հրճել: Քանի՜ քանի՜ անգամ զարթնել էր, թէ դեռ լսյալ ինչի՞ չէր շտապում դալ: Լոյսը վաղ բարձրացել, եփելու կերակուրները պատրաստել և եղբօր ձեռքը տաւ, դիմել էր Միջնաբերդը:

Միջնաբերդում դեռ մարդ չէին ընդունում, Ալմաստը պարտաւորւած սպասում էր փոզոցում: Վերջապէս հրաման եկաւ և Ալմաստին ուղղակի իրանքներս հրաւիրեցին: Ասկանին հասնելիքներն էլ Ալմաստի հետ մտան Միջնաբերդը, յանձնեցան բանտապետին, որը դրեց սլահարանում և փակեց, սրպէսզի Հունդարացի օղնականի ճանկը չանցնի: Այրիին առաջնորդեցին քննիչի սենեակը, որտեղ գտնուում էին տասներկուսները, քննիչն ու դատախազը: Ամենքը սառը կերպով նստած՝ անշշուկ դիտում էին տեսարանը: Ալմաստը ազատ և համարձակ առաջ եկաւ և էհրամի ծալրը բաց անելով՝ կանգնեց քննիչի դէմ ու ասաց.

— Եֆէնդի, ահա եկա, այսօր երկուշաբթի է, խնդրեմ, որ իրաւունք տաք զնամ տեսնեմ Ասկանին:

— Յաւու՛մ եմ, խանձ՛ւմ, որ չպիտի կարողանամ խոստումս կատարել. այսօր չէք կարող տեսնել Ասկանին. գուցէ բոլորովին էլ չտեսնէք, քանի որ ճշմարտութիւնը չէք խոստովանում:

— Եֆէնդի, ես ձեզ ճշմարտութիւնը խօսեցի, մի կէտ անգամ ո՛չ սխալ և ո՛չ էլ ծուռ եմ ցոյց տւել: Եթէ ասածներիս մի կէտի վրա կասկած ունէք, քննեցէք, ես պատրաստ եմ ամէն բոլի: Լաւ գիտցէք, որ եթէ սուտ, սխալ, պահած կամ այլալից զտնէք ցուցմունքներիս մէջ, ես խոստանում և յալանում եմ ձեզ այժմւանից, որ անմիջապէս իրաւունք ունէք ինձ կախ տալ, բանտարկել, ինչ որ կամենաք և ես յանձն կառնեմ, առանց բողոքի ու հակառակելու:

— Առանց յանձն առնելուդ մենք, եթէ զիտեանք, որ դու էլ մեղաւոր ես գործի մէջ, քեզ անմիջապէս կարող ենք պատժել: Բայց ես համոզւած եմ, որ դու արդար ես, միայն շատ ես յարգում Ասկան էֆէնդիին. այդ պատճառով ճշմարտութիւնը ծածկում ես: Խանձւմ, խոստովանիր, բոլորը ասա՛, ինչ գաղտնիք որ ունիս, այն ժամանակ Ասկանին քեզ կրտանք, ա՛ն ու տար:

— Եֆէնդի, գուր տեղը ինձ ինչի՞ էք խօսեցրնում, ինչի՞ էք ասնջում, երբ չպէտք է հաւատաք խօսքերիս: Հաւատացէք ասածներիս, բոլորը գուտ ճշմարտութիւն է, ոչինչ, ոչինչ չեմ թագգրել և ոչ մի բան խիղճս չէ տանջում: Ասկանը անմեղ է, նրա վրա տրատ չկալ:

— Խանձւմ, քանի՞ տարեկան էք:

— Լաւ չգիտեմ, միայն քսան տարիս անցկացը:

րել եմ, երկու տարի է, սր այրի եմ մնացել:

— Հարուստ էք:

— Ինչպէս չէ, խաներ, խանութներ, ագարակներ, ամէն բան ունիմ և որբիս հետ սովամահ կորչելու եմ, եթէ չազատէք Ոսկանին, որը խնամում է մեզ:

— Ինչպէս թէ: «խաներ խանութներ»:

— Էֆէնդի, ոչինչ, ոչինչ չունիմ, ձեռքիս գործով, կար կարելով եմ ճարում օրական հացս, էն էլ միշտ չեմ գտնում: Տւէք, օր առաջ տւէք տանս հսկողին, ապա թէ ոչ կորչելու եմ:

— Երևի շատ աղքատ էք:

— Այո, կարօտ օրական ապրուստի:

— Որ այդպէս է, ինչի՞ չէր մտածում այս օրերը Ոսկան էֆէնդին, չգիտէք, որ չարագործներին կարգելէն գործելուց և անգործութիւնից իրանք և իրանց վրա ծանրաբեռնած ընտանիքները սովամահ կմեռնին:

— Նա բացի բարեգործութիւնից, կեանքի մէջ չարիք գործած չէ: Բարին ընդունակ չէ մինչև անգամ չարութիւն մտածելու, ո՛չ թէ գործելու:

— Գու այնքան բարեսիրտ ես, այնքան անմեղ ես, որ չես նկատում: Նա հասարակ ոճրագործ չէ, բայց մեծ չարագործ է: Գողութիւն կամ մարդասպանութիւն չէ արել, բայց մեծ արիւնահեղութեան պատճառ է դարձել և մտադրել է անթիւ, անհամար մայրեր քոյրեր և կիներ լացացնել, ինչպէս որ այժմ դու լալիս ես:

Զրպարտութիւն է, էֆէնդի, մի հաւատար: Նա

միշտ թշուառի արտասունքը սրբելու համար է մտածել և նրան օգնելու ջանացել, ոչ թէ նրա լացը սաստկացրել:

— Հէնց շատ լաւ չորցրին բարեգութ ծնողերի և սիրասուն կիների արտասունքները: Այս օրւանից թող թաշկինակներ ձեռքերն առնեն աչքները սրբելով լան մայրերն ու կիները իրանց անխելք որդիների և ամուսինների վրա, որոնք նրանց վրա բոլորովին չեն ցաւում: Գու, խեղճ կնիկ, այս րոպէիս էհրամը գլուխդ գցել, ման ես գալիս այն մարդուն, որը մոռացել է քեզ, աչքի առաջ երբէք չէ բերել դրութիւնդ, իրան չար կամքի համար արդար պատիժ գտնելուց յետո: Նա կարծում էր, որ ազատ համարձակ միշտ պիտի խոյս տար օրէնքի ձեռքից և աչքակապ փաստերով յաւիտեան մեզ խաբէր: Բայց «սատանի մորթն էլ մաշում է» և մարդուս իսկական պատկերը երևում: Նա չէր իմանում, որ մի օր արդար դատաստանը նրան դատելու էր: Ես քեզ խորհուրդ եմ տալիս, խանում, մեղք ես, մեղք է խեղճ կաթնակեր աղջիկդ, գնա, նստիր տանդ և մոռացիր յաւիտեան Ոսկանի անունը: Նա չարագործ է և չարժէ սիրոյդ ու յարգանքիդ: Նա եթէ մարդ լինէր, եթէ նրա սրտում կարեկցութեան նշոյլն անգամ լինէր, կցաւեր քեզ վրա և չէր մասնակցիլ այն աղետալի գործերին:

— Էֆէնդի, ոչինչ չեմ կարող խօսել, ինչպէս տեսնում եմ, դուք վճռել էք չհաւատալ խօսքերիս: Ես միայն այս կասեմ, որ դուք սխալուում էք, Ոսկանը ո՛չ անգութ է, ո՛չ չարագործ, ոչ էլ ձեր կարծած ու կասկածած գործերից տեղեակ: Ես համարձակ ձեռքս կը-

դնեմ սրտիս և Ս. գրքի վրա, կերգւեմ Ս. Տաճարի առաջ իմ խոստովանահօր առաջնորդութեամբ, որ Ոսկանը չէ ունեցել այդպիսի չար մտքեր կամ խորհուրդներ և ձեզ յայնանաճներս զուտ ճշմարտութիւններ են, պակաս բան չեմ թողել և ամէն բան ձեզ պատմել եմ: Խնդրեմ չվրդովէք սիրոս և չառաջարկէք այնպիսի անկարելի խորհուրդներ, որոնք ընդունելու անկարող եմ: Ոսկանը բարի է, Ոսկանը... այդպիսի մտքերի երբէք չէ ծառայել:

— Մենք այժմ գրաւոր փաստերով համոզուած ենք, որ նա ոչ թէ խառնուել է չարընթաց մարդերի հետ, այլ ինքը նրանց խրախուսել, համոզել, դէպի այդ ճանապարհը առաջնորդել է:

— Անկարելի է, սուտ է, զրգարտութիւն է... կեղծ է, ես չեմ կարող հաւատալ և հաստատ գիտեմ, որ չէ, նա չէ խառնուել այդպիսի խոստովարանների խորհրդների մէջ:

— Գուտ ասածեզ, խոստովանիր, ո՞վ էր այն Ռուսաստանցին, որ ձեր տունը եկաւ և մի գիշեր մնաց:

— Եթէ տեսնեմ, կճանաչեմ նրան, բայց անունը չգիտեմ:

— Գիտես, բայց չես ուզում ասել:

— Յիսուս Քրիստոս... ո՞վ Ս. Աստուածածին, օգնիր ինձ... Հաւատացէք, որ չգիտեմ:

— Մի օր կխոստովանելիս, որ գիտես, լաւ է այսօր ասես և այն օրը չպատժւես ուրացութեանդ համար:

— Եֆէնդի, էլ սրանից մեծ պատիժ, ասում եմ չգիտեմ, բայց դուք ստիպում էք, որ գիտենամ կամ

մի սուտ անուն ասեմ, որպէս զի խաբեբայ դառնամ և անմեղին տանջանքի մատնեմ:

— Կարելի է... բայց սնդուկների մէջ եղած գաճերի մէջ ինչ կար, որ հանեցիք ու պահեցիք:

— Երգւում եմ մէկի, էն Ամենակարողի անունով, որ ինչպէս որ եկել է, բացւած չէ, զնացէք, քրննեցէք և պիտի տեսնէք, որ դեռ վրան են գտնուած ծովի ու ցամաքի մաքսաւորների կնիքներն ու կապերն:

— Այդ մենք գիտենք:

— Ուրեմն համոզեցէք, որ անմեղ է Ոսկանը և թողէք. որ դուրս գա բանտից, կամ գոնէ թողէք, որ նրան տեսնեմ:

— Նա դժւար թէ էլ դուրս գա, իսկ դու մոռացիր նրան, էլ տեսնելու ինչ կարիք ունիս:

— Հապա ո՞վ պիտի կառավարէ տունս:

— Մենք կվարձատրենք քեզ, եթէ խոստանաս բոլորը ճշմարտապէս խոստովանել և ամէն բան պարզել:

— Ես գիտցածս հաղորդել եմ և ոչինչ պահելու չեմ, ինչ որ ունիք հարցնելու, ասացէք, լսեցէք պատասխաններս և համոզեցէք, որ իսկութիւններ են արտայայտում շրթունքներս: Զեր վարձատրութիւններով չպիտի խոտորիմ սեղութեան ճանապարհից:

— Ես համոզուած եմ, այնքան խելացի կին ես, որ քո չարդ ու բարիդ ճանաչում ես: Պիտի զգուշանաս, որ չլինի, թէ երեսի վրա թողնես ազջիկդ ու ինքդ տանջանքների մատնուես:

Այս ասելով քաշեց զգրոցը և միջից քսան հատ չինգ լիբանոց հանեց և իրար վրա դարսած դրեց սեղա-

նի վրա և դառնալով դէպի նա՝ ասաց.

— Խանձում, խօսիր ճշմարտութիւնը, աստ ինչ որ ձեր տանը գաղտնի կերպով պատահել է, մի հոգար, քեզ երեսի վրա չենք թողնիլ: Այս ոսկիները քոնը են, վեր առ, տար, տոկոսով տուր, կամ կայք գնէ ու ապրիր: Ճշմարտութիւնը, միայն ճշմարտութիւնն ենք պահանջում քեզանից, աստ, ուղիղ է, որ ձեր տանը հրացաններ, բէլօլէրներ և պատրոններ բերել են: Ոսկանը Ռուսաստանից փող ստանում էր:

— Բաւական չէին այսքան տանջանքները, էֆէնդի, այժմ կաշառելով ուզում էք ինձ մոլորեցնել և սուտ ու մուտ խօսքեր առնել բերանիցս: Մի՞թէ ես այնքան ստոր եմ, այնքան ցած եմ, որ կաշառքով, ոսկով ձեզ ծախեմ գիտցածներս, չգիտէք, որ լեզուս սովոր չի գրպարտել կամ գրախօսել: Առանց այդ ոսկիներին խօսեցի գուտ ճշմարտութիւնը և եթէ Կարին քաղաքը ինձ տաք, չգիտցածս խօսելու, լաւ է ստելու կամ յօրինելու՝ անկարող եմ: Ասածս ասի սրանից չորս օր առաջ և միւսնոյն բանը կրկնելու եմ մինչև վերջին շունչս: Աւղիղ է, ես աղքատ եմ, ես օրական ապրուստի կարօտ եմ, առանց Ոսկանի օգնութեան գուցէ սովից կորչեմ ալջկանս հետ, բայց լաւ գիտցէք, որ լաւ եմ համարում անօթի մեռնել, քան թէ զրպարտել և ծանրաբեռնած խղճով ապրել: Ասացէք, խընդրում եմ, եթէ մի արդար մարդու կորստեան պատճառ լինեմ հանդարտ և ճօխ ապրելու համար, մի՞թէ կկարողանամ հանգստութիւն գտնել: Մի՞թէ այդ անմեղի ուրախանը մինչև գերեզմանիս դուռը ինձ չըպիտի հալածէ այս աշխարհում, մի՞թէ լախտենակա-

նութեան մէջ ահեղ դատաւորի առաջ աւելի սարսափելի չէ պատասխանելը քան թէ ձեզ: Լաւ գիտցէք, էֆէնդիներ, որ խիղճս հանգիստ է, խօսում եմ միայն ազատ դատողութունովս և խնդրում, որ էլ սրանից լետո չտաք այնպիսի հարցեր, որոնք խռովեցնում են հոգիս:

— Խանձում, մենք քեզ չենք ասում, որ ստես կամ ճշմարտութեան դէմ խօսիս: Խօսիր ճշմարտութիւնը, քեզանից է կախած շատ հարցերի լուծումը: Մենք առանց քեզ կարող ենք խուզարկելով, բննելով ամէն բան պարզել, այն ժամանակ վնջ քեզ, եթէ խաբել ես օրէնքին և դատաւորներին: Քեզանից պահանջում ենք արդար . . . վկայութիւն, ուրիշ ոչինչ:

— Ասածներս, կրկնում եմ, որ ուղղութիւն է, ասելիքներս էլ արդարութեամբ պիտի շարունակեմ:

— Վեր առէք, վեր առէք այդ փողերը ձերն են, գնացէք, և խաղաղութեամբ ապրեցէք, խոստացէք միայն ճշմարտութիւնը յայտնել:

— Էֆէնդի, էֆէնդի, մի ծանրացնէք, մի բեռնաւորէք խիղճս, ես չեմ կարող ձեռք տալ ձեր ոսկիներին, գրանց կարօտութիւն չունիմ: Ինձ մի լոկ ապրուստի համար հարկաւոր չեն այդ մետաղներն և ես ոսկով չպիտի խօսեմ, այնպէս որ ձեզ դուր գամ. . . Սիրտս տակն ու վրա մի անէք. . . էլ կարողութիւն չըմնաց ինձ մօտ. . . Թող տւէք, թող տւէք գնամ տեսնեմ Ոսկանին. . . Ա՛խ, Աստուած, արդէօք ինչ օրումն է անմեղ Ոսկանը:

— Կարող էք գնալ, խանձում, ձեր տունը և լալ ձեր Ոսկանի վրա, որքան որ կամենաք: Ազատ էք,

գնացէք:

— Մի՛թէ այսօր էլ չպէտք է տեսնեմ նրան:

— Ոչ, օրէնքը արգելում է, նրա երեսն էլ չէք տեսնելու:

— Բայց դուք այն օրն ասացիք, որ շուտով կարձակէք նրան, և անպատճառ երկուշաբթի ես նրան կը տեսնեմ:

— Այն օրը կարելի էր, բայց այս օր անկարելի: Այնպիսի փաստեր կան, որ ստիպում են ինձ նրան բռնաբերելն մեղաւոր ճանաչելու և զրկել քեզ Ոսկանիդայլ ևս տեսնելուց:

— Ուրեմն էլ նրան տեսնելու չեմ:

— Տարաբաղդաբար ո՛չ:

— Ոսկան, Ոսկան. . . թշուա մարդ. . .

Ալմաստը տարածւեց գետնի վրա: Բծիշկը և զինւորները նրան բարձրացրին և դուրս տարան:

ԻԸ

Վ Ի Լ Ա Յ Է Թ Ի Ժ Ո Ղ Ո Վ Ո Ի Մ

Մի ժամ լեռն Ալմաստը ուշքի եկած, խորհուն գէմքով և հաստատ քայլերով, դուրս եկաւ միջնաբեր-

դից և դիմեց դէպի Սարայ: Նրա աչքերը լացից և տաքութիւնից բորբոքւել, ուռել էին, այտերը, ճակատը կարմրել, ունքերը կիտւել և բարկութեան ու սըրամտութեան նշանները դրօշմւել նրա երեսի վրա: Հագար ու մի խորհուրդներ անցան նրա սրտից, բայց գրական սէինչ չէր կարողանում վճուել: Երբեմն կանգնում էր, մտածում, խորհում, երբեմն առաջ գնում, երբեմն էլ լեռ դառնում: Երևում էր որ խեղճ կինը մտքով տանջւում էր և չէր իմանում ինչ անել:

— Ո՛ւր գնամ, ասում էր ինքն իրան, որ ջուրըն ընկնիմ, էս ինչ կրակ է, էս ինչ անտանելի ցաւ է: Մեծ քաղաքում, մի բարեկամ չունիմ և չունի խեղճ Ոսկանը, որ նրա համար հոգ տանի: Էլ բանտարկեալ չէին տեսել, մարդասպաններին, սարերի գըլխին թափառած աւազակապետներին գնում, տեսնում են, կարիքները հոգում, բայց անմեղ մարդուն, որը կեանքում աշխատել է միայն բարիք անել, ինձ արգելեցին նրան տեսնելուց: Առաջնորդը կրկին վռնտելու է ինձ, նա հոգս տանելու չէ անտէր-անտիրական Ոսկանի համար, էփէնդիները . . . խաբելու են ինձ . . . միայն ծիծաղում ու ծաղրում են խնդիրներս . . . Պաշտօնեաները . . . ո՛հ, անկարելի է այդ կրքամուկների երեսները տեսնել . . . Բայց ինչպէս գնամ տուն, ինչպէս հանգստանամ, ընկնիմ մի կողքիս և քնեմ, թողնելով նրան այն տանջանքների մէջ: Մի՛թէ մի սիրտ այս պանդխտին քաջալերելու և զօրացնելու չէ այս օրին: Ո՛չ, Ալմաստ, գնա արձակ համարձակ մտիւր Վալի փաշայի մօտ, ընկիր ոտքերը, խնդրիւր նրանից, որ թող տա քեզ տեսնելու ու մխիթարելու սիրածդ ա-

րարածին և մխիթարելու... Մի վախիլ, առաջ, առաջ անցիր... Քեզ ինչ պիտի անեն, ո՞վ կարող է քեզ արգելել կամ քայլերդ կաշկանդել... Կարելի է քեզ էլ բանտարկեն նրա մօտ... աւելի լաւ... Բայց քանի որ ազատ եմ, պատրաստ եմ նրան էլ ազատելու աշխատել, իսկ այն ժամանակ գուցէ գտնւի մի ուրիշ արարած, որ աշխատի ինձ և նրա համար... Մի զարհուրիր, Ալմաստ, մի դողաք, ծնկներ, մի բարբախիր, սիրտ, գնահ մտիր Վալիի Մէջլիսը. նա հայր է ժողովրդի, ծնող է զաւակների, գուլթ ունի և թշուառ կնկա վրա քաղցր աչքով և բարի սրտով պիտի նայի: Այնտեղ են մեր էֆէնդիներն ու առաջնորդները, նրանք կօգնեն մի քանի խօսքով և կգլխացնեն դատաւորին... Գնահ և երեսդ պնդացրու...

Ալմաստը էհրամը փաթաթած, սև քողով ծածկած երեսը մտաւ Սարայը: Մեծ բազմութիւն կար ներքին յարկում, գաւիթում: Այստեղ էին գտնուում բոլոր դատարանները, այստեղ էր և կենտրոնական ոստիկանութիւնը: Աներկիւղ Ալմաստը աջակողմեան սանդուխքներից բարձրացաւ վերին յարկի գաւիթը, բայց անթիւ ու անհամար դռներ, չէր իմանում, որ կողմը գնար և ո՞ւմ հարցնէր, թէ որն է Վալիի ժողովարանը: Մի քիչ առաջ գնաց և պատահեց ոստիկանական պաշտօնետան՝ Արամին:

— Պարոն, ասացէք, խնդրեմ, որն է Վալիի Մէջլիսի մուտքը:

— Տես, մատով ցոյց տւեց երիտասարդ պաշտօնետան, այն դուռը, որտեղ երկու ոստիկաններ պահպանում են մուտքը:

— Շնորհակալ եմ, ասաց և առաջ գնաց:

Արամը խնդրէն ճանաչեց Ալմաստին, բայց հեռու գնաց, կարծիքների և կասկածների տեղիք չտալու համար: Ալմաստը մօտեցաւ դռանը: Ոստիկանները խեղճ կնոջը չթողին ներս մտնելու: Արամը հեռուից դիտում էր անցքը: Այլին թախանձեց, խնդրեց, բայց զուր, մուտքն արգելւած էր:

— Անհում, ասաց մի ոստիկան, նստիր այն բազմոցի վրա և սպասիր, կէս ժամ յետո կարելի է ներկայանալ և խնդիրքդ յայտնել Վալիին:

Ալմաստն անճարացած նստաւ, բայց կէս ժամը շատ ուշ անցաւ և կէս ժամ էլ աւելի անցաւ: Անհամբեր, անդադար հարցնում էր, «ժամանակը դեռ չեկա՞ւ, այժմ չէ՞ կարելի մտնել», բայց զուր, նորան լսող չկար: Վերջապէս հասաւ ժամանակը, ամէնից առաջ թոյլ տւին Ալմաստին մտնելու Վալիի օտեանը: Նա մօտեցաւ ժողովականներին և կանգնած մնաց: Ամէնը լուռ, սպասում էին լսելու նորա խնդիրքը: Ալմաստը համր կանգնած էր:

— Աղջիկս, ասաց Վալին, ինչ խնդիր ունիս, ինչ աղերսագիր:

— Աղերսագիր չունիմ, ասաց Ալմաստը, քաղաքում մարդ չգտա, որ կարողանար գրել խնդիրս: Ես լեզուովս հազիւ կարողանամ ձեզ, մեր աշխարհի տիրոջն ու Սուլթանի հաւատարմատարին յայտնել աղաչանքս: Գիտեմ, որ բնականաբար բարի էք, մեր բոլորիս խնամող-ողորմած հայրն էք, խղճացէք անօգնականիս վրա, դարձրէք ինձ տանս տիրոջը և մի թոյլ տաք, որ սովամահ ու դառն աղի արտասուենքով մարի թշուա-

ուիս կեանքը կաթնակեր որբիկիս հետ և փակել ամէնաողորմած Խալիֆի մի ուայալի տանը դուռը:

— Ո՞վ ես դու, խաննում, ինչ ես խնդրում, պարզ խօսիր:

— Նա է, ասացին ամէն կողմից:

— Ես մի անտէր այրի եմ: Ոսկանը որբիս խնամակալն է և պոհպանում է մեր տունը, բայց զրպարտիչների չարախօսութիւնների պաճառով, զինս որականները նրան արգելել են և հանգցրել տանս ճրագը: Ընկնում եմ ձեր բաքերը, փաշա էֆէնդի, աղաչում, պաղատում եմ, ձեր սիրելիների. ձեր հարագատների արևի համար, խղճացէք թշուառիս և վերագարձրէք ինձ տանս հսկողին:

— Գնա՛, աղջիկս, գնա՛ տունդ, հանգստացիր: Մենք իրաւունք չունինք այդ մասին կարգադրութիւն անելու, եթէ անմեղ է Ոսկանը, շուտով կարձակեն և եթէ մեղաւոր է, աւելի լաւ է, որ անմիջապէս մոռանաս նրան և գտնես մի սւրիշ բարեկամ. որը իրան հետու պահէ չար ճանապարհներից, չխռովէ հոգիդ, չվշտացնէ սիրտդ:

— Ներեցէք, փաշա էֆէնդի, նա անմեղ է, նա սի մի յանցանք չունի: Գուք լաւը գիտէք և բարեխիղճ էք, գթացէք վրաս և թող տւէք, որ գնամ նրան տեսնեմ:

— Այդ մեր գործը չէ, զինւորական վարչութեան մէջ մենք իրաւունք չունինք միջամտելու: Գու ինձ յսիր, աղջիկս, մոռացիր դրան և գնա՛ տուն, գործիդ նայիր: Լաւ է, որ լոյսդ կարես Ոսկանից: Նա եթէ քեզ սրտով սիրէր, այդ օրին չէր ընկնիլ և քեզ չէր թող-

նիլ անտէր, անօգնական ժողովների դռները թափառելու:

— Սխալ են ձեզ հասկացրել, փաշա էֆէնդի, նա երբէք չէ մտնել կել ձեր կարծած ճանապարհներով, անկեղծութեամբ ինձ յարգել է և միշտ աշխատել բարիքիս համար: Աղաչում եմ, օգնեցէք և թող տւէք, հրամայեցէք, որ թող տան տեսնելու Ոսկանին:

— Զնըր ես թախանձում, զուր բան է այդ խընդիրդ. գնա՛, գնա՛ տունդ, Ոսկանին տեսնել անկարելի է: Զինւորական վարչութիւնը չի թողնում:

— Եթէ դուք ցանկաք, նրանք չեն կարող ձեզ դիմագրել:

— Գնա՛, գնա՛ գործիդ, աղջիկս, չգիտես, թէ ինչ բան է օրէնքը կամ կարգը: Այն բանը, որ յանձնւած է զինւորականներին, ես միջամտելու անկարող եմ:

— Ինչպէս թէ անկարող էք, միթէ դուք չէք այս վիլայէթի տէրը, ձեզ չէ յանձնւած բոլոր ժողովուրդը:

— Այդ այդպէս է, բայց ես իրաւունք չունիմ միջամտելու զինւորականների գործում:

— Զեմ հասկանում, միթէ դուք չէք հրամայում նայնպէս զօրքի բանակին:

Այդ ձեական բան է, բայց նրանց քննութիւնները ինձ չի վերաբերում:

— Ուրեմն չէք պաշտպանում թշուառներին:

Ո՛հ, քեզ հետ խօսել չէ կարելի, խաննում, դու մարդու անել զբութեան մէջ ես գնում: Գնա՛, գնա՛, հանգստացիր տանդ, ինձանից ոչինչ մի յուսալ:

— Ինչպէս այս անտէր գրութիւնովս գնամ

տուն և հանգստանում, միթէ էլ աչքերիս քուն կը մօտեննամ կամ ուտելիքը բկիցս վար կիջնի: Խնայեցէք, փաշա էֆէնդի, ողորմեցէք ինձ վրա և խղճացէք անմեղ Ոսկանին: Հրամայեցէք կամ միջոց գտէք, որ կարողանամ տեսնել նրան և մխիթարել, կարիքները հոգալ, լւացքը փոխել տալ և ուտելիք հասցնել: Գոնէ այս բանը կատարեցէք:

— Կրկնում եմ, որ մենք իրաւունք չունինք, գնահատեցիր Մէջլիսից և հանգիստ թող:

— Սրբազաններ, էֆէնդիներ, խնդրում եմ, պաղատում եմ, օգնեցէք ինձ, ողորմեցէք ինձ, միջնորդեցէք Վալիին, որ ազատէ Ոսկանին:

— Գնահ, դուրս գնահ, ասաց Վալին:

— Հեռացիր, կորէր, լիրբ, ասաց Արաբ-օղլի Յարութիւն էֆէնդին, չէս ամաչում, ինչ ես դունէ դուռնկել:

— Էֆէնդի, էֆէնդի, այդ բերնիդ վայել խօսք չէ: Վայ մեզ, որ ձեզ պէս տէր ունինք: Ազգը ձեզ ընտրել, այստեղ նստեցրել է, որ անօգնականի, որբի և այլի դատերին արդար դատաստան անէք, իսկ դուք սաքերիդ տակ գցում տրորում էք հասարակութիւնը: Լրբութիւնս ինչո՞վ էք հաստատում, ինչ իրաւունքով էք ինձ այս ժողովում խայտառակում, ձեզ ո՞վ իրաւունք տւեց այդքան, որ այդ բռնութիւն Օգոստափառ Սուլթանի ժողովրդական վարչական ատեանում անպատէք նրա հպատակին: Աղաչում եմ ձեզ, ո՞վ հանդիսականներ, եղէք միանգամայն վկա և դատաւոր իմ այս արդար բողոքիս: Ես չեմ հակառակելու ձեր վճիռքին. դուք դատեցէք ձեր այն աթոռակիցը, որ ստորաց-

նում է ժողովիդ մինչև իւր ցած աստիճանը՝ այդպիսի կոպիտ բռնութիւն:

— Տեսէք, տեսէք, դեռ յանդգնում է խօսելու և անպատէլու ինձ ու ժողովին:

— Ես ձեզ եմ անպատուում, որ չգիտէք աթոռիդ արժանիքը, ձեզ, Յարութիւն էֆէնդի: Դուք, որ պիտի այստեղ կանգնէք ու պաշտպանէք ինձ նման թշուառներին, դուք, որ պիտի սրբէք մորմոքով լացողների աչքերը, դուք, որ անձամբ պիտի ժուռ գաք այս դռները մեր դատերն արդար վճուել տալու, ինքներդ դարձել էք հասարակութեան թշնամի և ես պարտաւորւած եմ ձեր պաշտօնը կատարել, պաշտպանել մի անտիրական մարդ, որը անչափ բարիքներ է արել նեղեալիս ու տառապեալիս: Եւ այս արարմունքս դուք լըրբութիւն էք համարում:

— Բաւական է, բաւական է, խանձում, այստեղ ճւճւալու տեղ չէ, հեռացէք, շուտ դուրս գնացէք, ասաց Մէթուլիին:

— Ո՞ր պիտի գնամ, էֆէնդի: Ձեր ոտքն եմ եկել, ձեր դուռը դիմել, որ արդար դատաստան անէք և թող տաք գոնէ բանտում տեսնելու Ոսկանին: Աւելի լաւ է ինձ կախաղան հանէք, քան թէ թողնէք, որ տանը լուսահատ չլան քցեմ վիզս և ինքս ինձ խեղդեմ: Ոտքերդ ընկած խնդրում եմ, էֆէնդի, միջնորդեցէք Վալիին, միջնորդեցէք ում որ պէտք է, որ կարողանամ տեսնել Ոսկանին:

— Միջոց չկա, ասացին, հեռացիր, շուտ արա:

— Փաշա էֆէնդի, ձեզ եմ ապաւինում, դուք ինձ պաշտպանեցէք, դուք էք իմ իսկական տէրս, ես

ձեր գերին եմ, ազատեցէք ինձ: Ասած է. «Լաւ է մի-  
միայն մէկ Ասածուն ապաւինել, քան քառասուն մար-  
գարէներին»: Գուք լիազօր տէր էք այս երկրի, կարող  
էք ամէն բան հրամայել, կտտարել տալ: Երկու տող  
մի գիր տէք ձեռքս և ահա կբանան առաջս բոլոր  
դռները:

— Գուրս, դուրս գնա՛, մենք այդ մասին կխոր-  
հենք և քեզ պատասխան կտանք: Հեռացիր անմիջա-  
պէս:

— Գթացէք, ողորմեցէք և խիղճ ունեցէք այլիի  
վրա, որը պիտի խաղաւ թշւառանա, եթէ...

— Գնա՛, դնա՛:

Ալմաստը ետ ետ դնաց, հազիւ կարողացաւ  
ինքն իրան բռնել, որ չգլորւի: Կրկին գաւթում, սս-  
տիկանների զէմ բազմոցի վրա նստեց, փաթաթւած  
էհրամում ու սպասում էր Մէջլիսի տալիք պատգա-  
մին:

Ժողովակոմները երկար բարակ խորհրդակցելուց  
լետո, խնդրեցին օգնական Վալիից, որ բանակցի զին-  
ւորական քննիչի և դատախազի հետ և եթէ հնարք  
լինի, թույլատրեն գոնէ շաբաթը մի անդամ տեսնելու:  
Ուղղեցի անպատճառ ընդունի իրանց առաջարկու-  
թիւնը, պէտք է գաղտնի լրտեսներ նստացնել տալին  
Ռսիանի և Ալմաստի նստելիք սենեակներում, խօսւած-  
ներից բան իմանալու նպատակով, բայց այդ բանը զեռ-  
ջաջողակց, դատախազը մինչև նոր գանձած թղթերի  
քննութեան աւարտումը չէր ցանկանում, որ սկսէին այդ  
տեսակցութիւնները: Զանազան լուսերով տուն ճամբե-  
ցին Ալմաստին և այսօր էգուց ասելով՝ մի շաբաթ էլ

սպասել տւին: Իսկ օրերը դանդաղ էին սահում:

Ալմաստի տարած կերակուրներն ու պտուղները  
անուշ էին անում բանտապետները, բայց ծերուկը եր-  
բեմն երբեմն հունգարացուց զազանի մի-մի բաժակ  
կաթ կամ սեր խմացնում էր Ռսիանին:

ԻԹ.

Ն Ո Ր Բ Ա Ն Տ Ա Ր Կ Ե Ա Լ

Մէքթուբջիին տւած խոսամունքի համաձայն  
դատախազը կիւրակի օրը խուզարկել էր տւել նոյնպէս  
քննիչի ներկայութեամբ Մարուքի տունը: Միւսիւ Ան-  
տուանը մեծ ուրախութեամբ սկանառես վկա էր այդ խու-  
զարկութեան: Այդ տեղ էին և միւս Արաբ-օղլիները,  
որոնք պապանձւել էին: Կնթերցողին լայանի բղուղների  
թղթերը, ինչպէս որ բերել էր Միւսիւ Անտուանը լցրել  
այդտեղ, այնպէս էլ այդ տեղից նոյն էֆէնդին տարել  
էր քննիչի տունը, առանց ծալքերն ու կապերն անգամ  
բանալու: Թէ ինչ թղթեր էին, Խաչօն լաւ գիտէր բու-  
փանդակութիւնները, բայց տարաբողբաբար բանտից  
չէր գուրս եկել, որ լայանէր աշխարհին, թէ ինքն էր  
շաբաղրել Միւսիւ Անտուանի խորհրդով ու թելադրու-  
թիւնով:

Խեղճ Խաչօ, նրան էլ ցանկութիւնը փորումը  
մնաց, Միւսիւ Անտուանը զեռ պիտի զնա, որ նրան էլ

Հանէ բանտից: Նոյն իրիկունը բարեխնամ Հայրը պատ-  
ւիրած մնացեալ թղթերն ստանալուց լետո՛ էլ սաստկա-  
ցրեց Խաչօյի բանտարկութիւնը և ութն օրից տեղա-  
փոխել տւեց Միջերկրական ծովի Ռոդոս կղզու բերդի  
բանտը:

Մարուքը ձերբակալեցաւ, գլուխը կախած գնաց  
բանտը և հետևեալ իրիկունը միջնաբերդում իւր մեծա-  
ւորների մօտ տեղափոխւեցաւ: Մարուքին դրին Տօնակա-  
նի մօտի խցիկում, այնպէս որ լուսամուտներից սկսեցին  
խօսել իրար հետ: Յերեկը իրար տեսան, բայց չնկատ-  
ւելու համար միայն նշաններով իրար միտք հաղոր-  
դեցին. սպասում էին գիշերւան: Երկար թւաց այդ  
օրը Մարուքին և շատ ժամանակը դեռ հառաչանքներ  
քաշելով անցուց: Քանի որ աչքի առաջ էր բերում ման-  
կահասակ կնոջը, երկու մանր երեխաներին, պառաւ մօ-  
րը և զառամեալ հօրը, այրած սրտի ծուխը պնչերից  
դուրս էր գալիս, աչքերը մթնում էին, խելքը կորցը-  
նում և բոլորովին անգգայանում էր: Յաճախ լոյսը կը  
տրուում էր և ուզում մի կերպ վերջ տալ իւր տանջանք-  
ներին, բայց մխիթարւում էր, երբ նկատում էր, որ  
գտնւում էր այն մարդկանց շրջանում, որոնք իրան այն-  
քան օգնել էին, նրա այնքան կարիքները հոգացել և  
նրան կատարեալ բանի գործի դեւելու խոստացել. այդ  
հանգամանքում մխիթարւում և կրկին լուսադրուում  
էր: Այս դառն մտածութիւններով մթնացրեց օրը և  
միշտ զաւրմացած իրան հարց էր տալիս, թէ ո՞վ բերեց  
իւր տունը և բոլորները թղթերի կապոցներով լցրեց:

Մութը պատեց, ամէն մարդ քաշւեցաւ իւր բը-  
կարանը, և պարսպի տակի պահապաններն էլ փոխւե-

ցին ու շատացան: Բարեբաղդաբար մի թեթև քամի  
կար. պարիսպն էլ բարձր էր, այնպէս որ լուսամուտնե-  
րից խօսողների ձայները չէին հասնում գինւորների ա-  
կանջներին: Մարուքը երկինք նայելով հառաչում էր և  
աղի արտասուենքները հոսեցնելով թրջում ապառաժ պա-  
րիսպը: Որքան աշխատում էր կրքերը զսպել, բայց քա-  
նի մանչը լիշում էր, քանի մօր ողբն ու մորմոքը  
միտքն էր ընկնում, քանի կնկանը ծռած վիզն ու աչ-  
քից թափած գնդիկ գնդիկ արտասուենքները աչքի ա-  
ռաջ էին գալիս, քանի հօր հեկեկոցի ձայնը զժղժում  
էր ականջում, չէր կարողանում լաղթել ջրերին ու ըզ-  
գացմունքներին:

— Մարո՛ւք, Մարո՛ւք, աւաց Տօնականը:

— Հրամեցէք, պարո՛ն, ըՖը՛, ասաց ծառան սիրտը  
քաշելով:

— Ի՞նչ եղաւ, ինչի՞ ես լալիս, կնիկ մարդ ես,  
ինչ է, ինչի՞ ես սիրտդ քաշում, ուրիշներն ինչ անեն.  
Թէ մենք քարից սիրտ ունենք:

— Աղբէր ջան, բան չկա. հոգուդ մատաղ, մի նե-  
ղանա, սիրտս տխուր է, չեմ դիմանալ ցաւի:

— Յիմարութիւն պէտք չէ, ասա՛, տեսնեմ, քեզ  
ինչի՞ բռնեցին... սո՛ւս... սո՛ւս...

Այս միջոցին պահապանների գլխաւորը ման էր  
գալիս գինւորների հետ, նրանց հսկում ու սովորեց-  
նում կարգերը: Եկաւ հասաւ Տօնականի լուսամուտի  
տակը և կանգնեց:

— Այս իրիկա «պարօլ», ինչ է, հարցրեց պա-  
հապանից:

— «Մաշա», էՖէնդի:

- Լաւ, քանի տարեկան ես:
- Քառասուն երկու, էֆէնդի:
- Որտեղացի ես:
- Իրարբէքիրցի, էֆէնդի:
- Ո՞ր բանակումն ես:
- Չորրորդ, էֆէնդի:
- Ո՞ր գնդումն ես:
- Վեցերորդ գնդի երրորդ զօրաբաժնի առաջին բաժնում:
- Այս իրիկուն ընթրե՛լ ես.
- Նոր կերա և եկա, էֆէնդի:
- Պաշտօնդ ինչ է:
- Այդ բուրգից մինչև այս բուրգի լուամուտների վրա հսկել, ոչ ներսից մարդ դուրս թողնել և ոչ դրսից ներս: Մօտից անցնողներին էլ հեռացնել:
- Ուրի՛շ:
- Հսկել և չթողնել, որ իբար հետ խօսեն բանտարկեալները:
- Է՛ր:
- Չքնել, չկանգնել, միշտ հրացանը ուսիս ման գալ:
- Ապրիս, զոչնղ կաց, եթէ մէկն աշխատի դուրս գալ, ինչ պիտի անես:
- Մի քար վեր կառնեմ և գլխին խփելով ջարդ ու փշուր կանեմ:
- Ել հրացանը ինչի համար է, գգ՛ում:
- Հրացանը կարճ է, չի հասնիլ, որ կոթովը գլխներին առն ու շանսատակ անեմ:
- Ե՛ր, քեզ ո՞վ է ասում, որ կոթովը տաս:

- Ապա ինչ անեմ, գնդակ չէ տալիս իւզբաշին:
- Փամփուշտ չունիս:
- Միայն մի հատ, էն էլ հազար ու մի փորձանք կարող է պատահել:
- Ո՞վ է ձեր իւզբաշին:
- Ահմէդ աղան՝ Խամլար գադէն, էֆէնդի:
- Լաւ, սոք քեզ երեք փամփուշտ, թէ պէտք չեկաւ գիշերս, առաւօտ ետ եմ պահանջելու:
- Շատ բարի, էֆէնդի:
- Հեռացաւ վերահսկողը: Պահապանը հետևեց մինչև բնակարան մտնելը, ապա ետ եկաւ, հրացանը դետին դրեց ու նստեցաւ քարի վրա: Հանեց ծխախօտի տուփը, շինեց սիգարան, անց կացրեց մուշտուկ և ազահ ազահ ծծեց:
- Է՛օֆ... լեազանի... ծուխը բարձրացնում էր պահապան զինւորն և դառն «ճիս» քաշում: Սա էլ իւր դարդն ունէր: Ժամանակին զինւորագրութիւնից փախել էր, լեռներն էր ընկել ու սիրականից չէր բաժանւել: Այժմ, երբ մի քանի որդու տէր էր, համարեա ալևորւած, առամները թափւած, ձեռք էր ընկել և հինգի փոխարէն տասը տարի էր ծառայելու, էն էլ այդ հասակում: Կերակուրը կերած, ծխիչը ծխած, առաջի իրիկանից քնի սովոր, գլուխը դէմ աւեց պարսպին ու քնեցաւ:
- Մարմւ.ք, Մարմւ.ք, ձայն տւեց Տօնականը:
- Ի՞նչ կայ, պատասխանեց ծառան:
- Քեզ ինչի բռնեցին:
- Չգիտեմ, այսօր եկան տունս տեղս քննեցին, բղուղների միջից մի քանի թղթի կապոցներ գտան ու

տարան, ինձ էլ այստեղ բերին գցեցին.

— Ի՞նչ թղթեր էին.

— Չգիտեմ.

— Ինչպէս թէ չգիտեմ.

— Ես չէի գրել, որ գիտենամ.

— Ո՞վ էր գրել.

— Աստուած գիտէ, տեղեկութիւն չունիմ.

— Ի՞նչ տեսակ թղթեր էին.

— Չտեսա, կապոցներ էին, ծալծլած, թելերով

կապկապած ու...

— Ե՞տա էր.

— Մի հինգ-վեց կապոց.

— Կապոցներն ինչքան կար.

— Ամէն մէկը ձեռքի չափ.

Ինչու տեղեկութիւն չունիս, ո՞վ է պահել,

թագցրել այնտեղ այդ թղթերը.

— Չգիտեմ.

— Կնիկդ ո՞ւմ աղջիկն է.

— Մահտեսի Մինասի.

— Մայրդ ո՞ւմ տանիցն է.

— Մայրս Մուսուրկանցի է.

— Ձեր տունը գնացող գալող ինչ կասկածելի բարեկամ ունիս.

— Մարդ չունիմ, պարոն, դու գիտես, որ աղքատ

մարդուն բարեկամն ու երթ ու գալը ձեռք չի տալ.

— Այս օրերս տունդ մարդ չեկաւ,

— Ոչ ոք.

— Լու՛ւ մտածէ,

— Մարդ չէ եկել.

— Հապա ո՞վ բերեց ու լցրեց բղուղները այդ թղթերը:

— Սատանաները:

— Յիմար-յիմար դուրս մի տալ:

— Մեր տունը լսյս ցերեկով մարդ չէ եկել:

— Գիշերն ո՞վ է եկել.

— Գոռներից խոսթլաղներ կարելի է եկած լինին:

— Էլի, էլի հաւատում ես, սնապնջա:

— Մինչև հիմի կասկածում էի, թէ սուտ էին մօրս հեքեաթները այդ ջիների ու դևերի մասին, բայց այժմ հաւատում եմ, որ կան և իրիկունը բերին, լըք-ցրին մեր բղուղները այդ թղթերը, որ ինձ պատժել տան և ես պարտաւորւիմ հաւատալու, որ դրանք գոյութիւն ունին աշխարհի երեսին:

— Հաւատում ես, յիմար, հա՛:

— Ի՛նչ մի հաւատաք, պարոն. ձեզ ո՞վ ինչ է ասում, բայց ես սրանից ետև պիտի հաւատամ և երկուշաբթի իրիկունները սև ձութ ու աթար պիտի ծխացնեմ դրանց համար, որ էլ ինձ գիշութիւն չանեն:

— Ախար այդ յիմարութիւնները թո՞ղ ու լա՛ւ մտածիր, ո՞վ է եկել այս մօտիկ օրերս ձեր տունը.

— Ոչ ոք, մարդու երես չեմ տեսել:

— Կարելի է ցերեկը, դու ուրիշ տեղ եղածդ ժամանակը եկած լինին, դու չես իմանում:

— Տանը ինչ որ պատահի, ինձ կասեն:

— Մարդ չէ եկել.

— Ո՛չ, ո՛չ չէ եկել:

— Է՛հ, լուր, տրաքում եմ բարկութիւնից:

— Հաւատացէ՛ք, որ հաստատ գիտեմ, մարդ չէ եկել:

Մեր տունը ոչ մի կտակածելի մարդ չէ մտել:

— Կարելի է կնիկ մարդ:

— Անցած օրը Ալմաստը եկել էր, ինձ խնդրեց, որ հոյքերեմ Ոսկան էֆէնդին, մեզքս ինչ պահեմ, վախեցա ու յանձն չառի, մայրս էլ չթողեց, ուրիշ կնիկ մարդ չեմ տեսել:

— Թղթերի մէջ ինչ կար, ոչինչ չխօսեցին:

— Զբացին, տեղն ու տեղը կնքեցին ու առին գնացին:

— Ծօ, հետերը խո չբերին:

— Զէ, պարոն, չէ, վրան հող էր լցւած, բղուղների տէ՛լ տակից գտան, սուտը սատանա է:

— Ուրեմն դու տարել, պահել էիր:

— Վա՛յ, այդ ինչ ես խօսում, երեք տարի է ձեռքիդ տակը ծառայում եմ, դեռ ինձ չէս ճանաչում:

— Քովդ մատիտ ունիս:

— Ծոցիս գրպանումը մի կտոր կա:

— Թեզ դուրս հանէ լուսամուտից և այս գցածս թելը բռնէ:

Տօնականը մետաքսէ թելի ծայրը կապած բարը գցեց Մարուքին, վերջինս էլ բռնեց: — Գէհ, մատիտը այդ տեղ կապէ և տուր:

Կատարեց ծառան տիրոջ հրամանը: Քրիստափոր Կոլումբը Ամերիկան գտնելիս այնքան չուրախացաւ, որքան ուրախութիւն սրճառեց այդ մատիտի կտորը Տօնականին: Նա նստեց և միտնումը սխեց գրել Մարուքի պատմութիւնը, ձեռքում եղած «Մշակի» համարների լուսանցքներում: Ամէն բան մանրամասն նկարա-

գրեց և լուսամուտին մօտենալով՝ մեղմիկ ձայնով երգեց.

«Պատկեր սիրտ, դու բոլորակ...»

Զարթի՛ր, Ասգեւի՛ դ իմ, գարթի՛ր...»

Վերջին «Զարթիր»-ները շեշտեց այնպէս, որ Ոսկանը լսեց և նայեց մեղմիկ երգով պատասխանեց.

«Աւետակեց գոցե լիկիս...»

Զարթի՛ր, Ասգեւի՛ դ իմ, գարթի՛ր...»

— Բհբբ՛մ, Ըհբբ՛մ, հազայ Տօնականը:

— Ախր՛, պատասխանեց Ոսկանը, թե՛ր լուսամուտից դուրս գցելով:

Տօնականը գցեց գէպի Ոսկանը թելի ծայրը, որը այնքան վարժել էր, որ իսկույն բռնեց: Քաշեց և լրագիրներն ստացաւ, բայց մութը տեղը գրելը հեշտ է, կարգալը անհնարին, Ոսկանը գեռ շատ տանջելու էր մինչև յուսնի բարձրանալը, կամ աւելի լաւ կարգալու համար՝ մինչև առաւօտ:

Այդ հաղորդակցութիւնը երկու-երեք օր առաջ հաստատել էր երկու ընկերների մէջ և ուզածները հողից ցեխ շինելով և փայտի ծեղերը նորա մէջ թաթխելով՝ գրում էին: «Մշակը» բերել էր Ոսկանի համար Ալմաստը ձեռքի փաթաթած և բարեսիրտ ծերուկը Հունգարացու աչքից փախցնելու նպատակով շտապել և ծրարը «Մշակով» հասցրել էր բանտարկեալին:

Բայց Մարուքի բանտարկութիւնը, նկարագրած անցքերը, թղթի ծրարները սաստիկ մտատանջութիւն պատճառեցին Տօնականին, այնպէս որ վերջինս սկսեց խիստ անհանգիստ լինել: Զգաց Տօնականը, որ մի ցարհուրելի չարագործութիւն էր կատարւած, բայց չգիտէր, ո՞վ էր դրանց հեղինակը: Նրան յայտնի էին ճիգ-

ւիտ Տէր Կոմիտասի այդպիսի գաւաճանական արարքները, բայց նոյնպէս զիտէր, որ Տէր Կոմիտասը կաթսայի պայթած իրիկունը գնացել էր յաւիտենական անդունդը մեղքերը քաւելու: Ո՞վ կարող էր լինել, մի յայտնի յաջորդ չկար Կարինում, իսկ թուրքերին անընդունակ էր համարում այդքան մեծ եղեռնագործութիւն կատարելու:

Անպատճառ այստեղ նրանց մատը խառն է, բայց տեսնես հոտը որտեղից պիտի դուրս գա: Եթէ երեք օր քաղաքում լինէի, ամէն բան կարելի էր տեղեկանալ, բայց այդ բանը, որ այսօր է պէտք, ո՞վ է իմանում որչափ պիտի ուշացնեն: Յիմար, լիմար ընկերներ, քսան անգամ ասացի, որ մի կոխէք այդ օձերի պոչին, կխաճնեն և թոււնդ կթոււնաւորեն: Անպատճառ նրանց գործն է, անհնարին բան է. ուրիշ կարծիք երբէք ունենալու չեմ: Քաղաքիս բոլոր ծառայողները, պաշտօնեաներն, ամէնքն էլ ինձ յայտնի են: Այս բանը նրանց ձեռքովն է, տեսնենք ո՞վ է Կարինի նոր գործակալը Լօյօլայական ուխտի:

— Օ՞Ք, ասաց զնաց տարածւեցաւ խոտէ անկողնի վերայ, ձգեց ստքերն ու թևերը և կրկնեց, օ՞Քր. թիկունքի վրա պարկած, աչքերը մթնում շողացնում էր դէպի կամարակապ քարէ առաստաղը և ոչինչ չկարողալով եզրակացնել, միայն սրտի խորքերից վշտալի հառաչանքներ էր արձակում:

Կէս գիշերին մօտ յուսինն էլ իւր շողը գցեց բերդի պարիսպի վրա և չարագուշակ լուրը կարդաց Ոսկանը, կարդաց ու քստմնեցաւ: Թէև չէր ուզում հաւատալ աչքերին, սուտ յոյսերով խաբում էր իրան,

բայց սիրտս տակն ու վրա եղաւ: Այն օրը նա արտաբացել էր խմելով, ուտելով Ալմաստի բերած սերուցքը, փոխելով ճերմակեղէնները և ամառնային թեթև շորերը, բայց այդ դատը լուրը, այդ անսպասելի փոքձանքը նրան յուսահատեցնում էր: Նա կարծում էր, որ վերջացան քննութիւնները, խանութպան վկաներն ու գօրական իւզբաշին արգարացրին իրան ու բոլորովին ցրեցին դատաւորների կարծիքները, բայց այս դէպքը կրկին յուզեց նրան, նարոզեցին գորգերը:

Այս գտնն քաղէներին խտից անկողնի վրա տարածւած մամանակը, բարձրացրեց աչքերը և տեսաւ, որ լուսնի լոյսը լուսամուտից ներս է ընկել շալչսգում է: Անմիջապէս նոր-նոր մտքեր, նոր տեսարաններ և կսկծալի պատկերներ անցան Ոսկանի մտքից և նա ընկաւ անեղը մտքի սփկանում, ծփալով-ծփալով հասաւ Բասթորի ջրերը և արիքների միջից գլուխը բարձրացրեց: Աստիճանի աստիճանքը, պարտիզակների միջից իւր սիրելի ծաստառանքը սրտեկաւ, գրաւ բարձր պատշգամբում պաշտելի էակի գէմքն ու տեսքը պլաւրեկաւ: Աւ այս բոցէում, թէ ինչ գիրք էր բռնած Կոստանցան Ոսկանի երևակայութեան արարելի մէջ, գրքով ու խօսքով չէ կարելի արտայայտել. միայն պէտք է ունենալ եօթը տարի ետև մի սիրասուն սիրական, նորա կարօտովը եօթը տարի այլուել, այդ ամսանելի վիճակն ընկնել և ապա կարելի է միայն դգալ: Այնքան սուսակի ազգեց նրան այդ տեսարանը, որ նա մի ստատիկ ճիչ արձակեց և նւագեցաւ: Այդ անզգայութեան մէջ քնեց մինչի լոյս:

Գեռ ընկած էր մի և նոյն անզգայութեան մէջ,

երբ առաւօտը զուռը բացեց Հունգարացի բանապետը և սասց.

— Ատամնարոյժ էֆէնդի, կանչւած ես, վեր կաց և պատրասուիր:

Ոսկանը մինչև լոյս տխուր երագներով խոսկել ու բոլորովին այլայլուել էր, այդ կոչուենքը նրան բոլորովին յուսահատեցրեց:

Լրագիրը քովը ընկած էր, բարերազգարար մըթնումը ոչ ոք չնկատեց: Ոսկանը ուղղելու ձև արաւ և խոտերի տակը շարժեց իւր լրարերին:

L

Ն Շ Խ Ո Ի Ն Շ Է Ա Ք Ե Ա Ր Բ

Մէքթուրջի էֆէնդիի սիրաը կպել էր, նրա կիրքը օրից օր սաստկանում էր և ցանկութիւնը բորբոքւում Ալմաստի համար: Ամէն ժամանակ նրա աչքի առաջ պտակերացած էր Ալմաստի խրոխտ գէմքը, խոշոր ու հրացայտ աչքերով, կիտած ունքերով, լայն ճակատով, նուրբ ու սրածայր քթով, կարմրած և սղորկ կրգակը թխլիկ բուխազով: Այնքան կուրացած էր վաճառող կրքերով, որ գիւաններում նրան լսելիս խելքը միաքր ոչ թէ նորա խօսքերի հետ էր, այլ նորա շարժումների, ձայնի գեղգեղանքի, աչքերի շողշողումի

և գէմքի փայլի հետ էր: Ամէն օր գէպքը պատահելիս նա ցնորւածի նման գնում էր գիւանատուն, միայն նրան տեսնելու ու գիտելու: Չոր կիրքն ու կամքը լագեցնելու համար՝ ամէն տեսակ գոհար: թիւններ անելու պատրաստ էր: Այնքան էր միաքր պարտաւած Ալմաստով, որ գիշերները մայն նրա հետ երագելով էր լուսացնում: Այն աստիճան բորբոքուեցաւ, որ էլ համբերելու ճարր կարուեց: Այդ օրերը Մէքթուրջիի կինը պտակել և մի աղջիկ էր բերել:

Տաճկաստանում մանկարայձ մասնագէտ միայն Կ. Պօլսում հատ հատ նմուշի համար գտնուում են, իսկ գուտաններում կան նահապետական գայիկներ, որոնք շատ հեշտութեամբ տանում են երեխաները, թէև պահու չեն տանջում եբրեմն երբեմն դժուարածին երկուրներին: Նշխուներ Պարիսի անւանի գայիկներից էր, նա հաշուով երեսուն տարւած մէջ հագար երեսունուերկու տղա էր ընդունել, որոնց բոլորի մայրերն էլ գոհ էին մնացել: Սորան կանչում էին «Նըշխուն Շէաքեար», որովհետև շատ քաղցրօտիս էր և միշտ ծիծաղեցնող ու ուրախացնող: Պէտք է ասած, որ Նշխուն Շէաքեարը աւելի հարուստ ու բարձր գասակարգի գայիկ էր, միջակ տներ քիչ էր մտնում: Նա միշտ գործ ունէր և տարւած մէջ տասը գիշեր իւր տանը չէր կարող բնել: Ամէն մի ընդունած աղալի տունը պարտաւորեալ եօթն օր կենալու էր և եօթն օր էլ օրական մի մի ժամ հանդիպելու, հիւանդը քննելու և մանուկը լողացնելու: Լու էլ վարձատրւում էր, ամէն մի երեխի համար ձեռքը մօտ կէս սակի փող էր անց-

նում, հարուստները ու մեծ մարդիկը, որը ջուրացու էին առնում, որը խրխացու, որը գլխին շալ, որն էլ կօշիկ: Արճ խօսքով ժիր կնիկ էր և մարգուց շատ լաւ տուն էր պահում:

Ամէնի հետ ծանօթ էր Նխշուն Շէաքեարը և ամէն դուռ բաց էր նորա առաջ: Ենքը վախճանին մօտ կնիկ էր, բայց ժիր էր, երեսին նայողը քառասուն տարեկանից աւելի չէր կարծիլ, մորթը ցորենի գոյն ունէր, բայց այտերը դեռ պահպանում էին իրանց վարդի գոյնը: Լեզւանի էր և մարգուց քաշւել չգիտէր:

Շատ անգամ նորան աղաների ու պաշտօնականների հետ նստած գրից անելիս էին տեսնում և համարձակ մուշտուկում անց կացրած սիկարը ծխացնում էր նրանցից թանձր ու շատ ծուխով: Ատակներ էլ շատ էր անում և նորա կատակները բոլորովին էլ դուրեկան էին:

Մէքթուրջի էֆէնդիին կնոջ մանկարարն էլ դաշեկ Նշխուն Շէաքեարն էր: Քարտուղար էֆէնդին շատ շնորհակալ էր գալեկից և մի արծաթ ծխախոտի տուփ բաշխեց, որ միշտ բանացնէ ու իրեն յիշէ: Այս տուփի միջոցով աւելի սերտ բարեկամացան դաշեկն ու մեծ պաշտօնեան և Նշխունը գոռոզացած նստում էր վիլալիթի քարտուղարի գահլիճում, գլարճանում սղջ նահանգի աւագ օրինապահի հետ: Էֆէնդին շատ ուրախ էր և յարմար առիթ համարելով սկսեց նպատակն իրականացնելու ձգտել:

— Նէնէ, ասաց Կ. Պօլսեցիների կոկիկ թիւրք բարբառով, արի քեզ Ատամբօլ տանեմ, քաղաք անս, այն տեղից էլ Երուսաղէմ գնան, ուխտ արա, հաջի գարձիր, այնպէս վերադարձիր տունդ:

— Միտք ունեմ, էֆէնդի, գնամ մի լուսը տեսնեմ: Ատաւած էֆէնդիին երկար կեանք տա, ինչի չէ, խանութին որ ճանպելու լինիք միասին կերթամ:

— Լաւ, լաւ, աշունքս միտք ունի մեր Անշա խանութը գնալ Կ. Պօլիս, հօրը տեսնելու, հետը գնան Երուսաղէմ ուխտիդ: Նա գալիս էլի մեր տունը իջիր և մերոնց հետ արի:

— Շատ լաւ կլինի, էֆէնդի ջան, դրանից էլ մեծ փառք, մարգու իրան ստիր տղերքն էլ էղքան պատիւ չեն տալ, երկայն արև ունենաք, զուգ ապրիք և փառք ու պաշտօնդ օրից օր բարձրանա:

— Շատ լաւ կլինի, ես Անշա խանութի հետ էլ կխօսեմ, մէկ անգ կերթաք:

— Ի՞նչ պիտի ասեմ, որ չերթամ, ուրիշի ինկով մամով փնտրածը եկել, դուռս է հասել, Ատաւած տղերքը գորացնէ:

— Այս որտեղ էիր, երկու օր է չես երևում:

— Ամէն օր գալիս եմ, աչիկիս լողացնում, փաթաթում, բալուլը գնում՝ գնում: Դանէլ էֆէնդիին կընկան մօտն եմ գնում, նա էլ բարխուղար լինի, պառկեց, էլի աղջիկ բերեց: Արա վեցերորդն է՝ ամէնքն էլ աղջիկ:

— Չասես, մեծ ծախսերի դռներ են բացւել:

— Ծախսի համար չէ, մեծ օճախ է, մանչ տղա չկա, աղջիկները իս չեն կարող տունը մնալ ու կուռավարել:

— Դարդ թնոյ չանեն, կուենան: Ասրդ լաւ սիր, միտքս դցեցիր, նրանց տան մօտքերն էր մնում ատամնաբայժ Ասկանը, լաւ թէ Դանէլ էֆէնդին նրան,

կամ էն խեղճ այրի կնկան չի օգնում:

— Վտխենում են, այդ խեճ կնոջ երեսին մարդ չի նայում:

— Ճանաչում ես Ալմաւաին:

— Ինչպէս չէ, շատ բարեսիրտ է:

— Ա՛հ, ո՛հ, ո՛հ, այդպիսի կնիկ կեանքումս չէի տեսել, այդ ինչ խելացի է:

— Հապա ինչ հիւնարով է: Առաւօտը, մինչև ուրիշի տեղից վեր կենալը, նա մի շապիկ կկարէ ու երկու գուրուշը զրդանը գնելով, ուրիշ գործերին կը նայէ: Ավ ինչ կար ու ձե ունենա, նորս մօտ պիտի գնա, օրտկան մի ճերմակ մէջիգին փոզ չէ ստում: Արմանաս ու զարմանաս, մեքենան առաջը դրած չըխկը չըխկը բանում ու կարում է:

— Ասել է, լաւ փոզ է դատում:

— Բանի պէտք չունի, խանութի պէս ապրում է: Գեռ երկու էլ աշակերտ է վերցրել, նորանց դատեցնում է, ինքը փողերը վերցնում:

— Տեսնես խելքով կնոջը, ես շատ հաւանեցի դորան: Բայց ափսոս խելքը միտքը աւել է այն տառանարայժին, օրտկան երկու անգամ Սարալն է գալիս ու բերգը գնում, թէ ինչ է, ազատէ, բայց երբ կթողնեն, հնարքը մինչև որ չգտնեն, էլը կալելի է բաց թողնել:

— Եֆէնգի, որ դուք ուզեցեաք, չէք կարող ազատել և ուրախացնել այս կնկան: Գիշեր ցերեկ այլում, վաւում է:

— Շատ դժւար է, բայց եթէ ես աշխատեմ, կարելի է թեթեւացնեմ:

— Արիք, լանձն առէք ու ազատէք դրան...

— Յանձն կառնէի, եթէ...

— Ձեմ կարծում, հո՛, հո՛ շատ թունդն է, ամանը տրաքացնում է, բայց Ոսկանի սիրու համար... կարելի է... գուցէ...

— Փորձիր, աշխատիր համոզել, եթէ գլուխ բերես, նա կազատւի տանջանքներից, Ոսկանը տուն կը դառնայ և դու էլ ֆէրաջէդ կնորոգես:

— Գու ողջ կեցիր, բայց խելքս չէ կարում, դժւար թէ...

— Գժւար չկա, թէ չէ այնպէս բան կանեմ, սոս իրան, որ էլ Ոսկանի երեսը չի տեսնիլ:

— Ես մէկ փորձեմ, տեսնեմ, բերանը թո՛ւլ է, էն ժամանակ խօսք կբանամ: Յայս ունիմ, որ գործը գլուխ կբերեմ:

— Քեզ տեսնեմ:

— Հասկացա, հասկացա, մնաք բարով:

— Նէնէ, չմոռանաս, պատրաստութիւնդ քիչ քիչ տես, մէկ երկու ամսից խանութին ճանապարհ եմ գցելու, պատրաստելի հետը գնալու:

— Գլխիս վրա, աչքիս վրա:

Նշխունը հեռացաւ: Խելքը միտքը Երուսաղէմի ու Կ. Պօլսի վրա էր, — Ա՛խ, մէկ գնամ, լուսը տեսնեմ, ետև դամ մեռնեմ, էլ պէտքս չէ: Պատրաստի հաց, կարաւան և ընկեր, ձրի հասիր մինչև Կ. Պօլիս, մի քանի ամիս խանութի ու խաթունի պէս ման արի, յետո գնա լուսը տեսնելու: Ետ արի էլի աղաներիդ հաշւովը:

Այս մտքերով տողորւած դնաց Գանէլ էֆէն-

դիենց տունը, բայց համբերութիւնը հասաւ շտապեց  
զնալ ու տեսնել Ալմատին, սրից կախում ունէր դոր-  
ծի լաջու ելքը, սրը կարող էր և իւր յամառութեամբ  
ամէն ճրագիր տակն ու վրա անել: Խորհուն գէճքով  
և մեղմիկ բալլերով մօտեցաւ զրանը և բազխեց: Գու-  
ռը բացին և դաշեկը ներս մտաւ:

— Գարն իրիկուն, Ալմատա ջան, ինչպէս ես,  
լու ես:

— Լաւ, Նշխուն Եկաքեար, ինչ անեմ, դու ու  
զրամ, աչքերս երթիքը շուռ աւած, մէկ երկինք եմ  
աշում, մէկ էլ չորս բոլորս հաւի պէս: Թէ դու ուզիկից  
կզան, ընկեր կունենամ խօսելու, թէ չէ, ես ինձ կան-  
չում եմ ու լալիս:

— Ինչի ես լալիս, ազջիկս, լացի ինչ անեո,  
Աստուած սորմամ է, անճարի «մէանին» ասո ու մը-  
խիթալիք:

«Մի, լար, աննա՛ր, մի լար, Աստուած կողորմի,

Անշուշտ լայն է կրգայ էս մեր նեղ օրի.

«Մղճալու ատաջ դոները փակողի

«Փականը կը ջարդէ Գաշապանն անմեղի»:

— Գրանցով մենք մեզի խաբում ենք ու օրերս  
միմայնում:

— Ասանց ցաւի աշխարհի երեսին մարդ տեսել  
ես, ամէն մարդ ինչ վիճակում որ լինի, էլի ունի իւր  
գարդը: Ապրող մարդու համար, թագաւորի պալա-  
տից սկսիր, մինչև ամենափոքին մշակի խրճիթը, վիշտ  
կա և մեծ մեծ աներում, բարձր-բարձր գիրքի մարդե-

րի մօտ աւելի շատ կա, քան թէ մեզ նմանների մօտ:

— Նշխուն Եկաքեար, զիտեմ, զիտեմ, որ ան-  
դարդ մարդ չկա, բայց ցաւի ու վշտի մէջ զանազա-  
նութիւն կա: Մէկ էլ, որ մարդ կա, անհող է, բանի  
տեղ չի գնիլ, մարդ էլ կա՝ ամենափոքր բանը գօր զի-  
շեր իրան մտքից դուրս չի գալ:

— Լաւն էն է, մարդս համբերէ, բանի տեղ չը  
զնէ ու միմեցնէ օրերը:

— Եթէ կարողանա, մե՛ծ բան է:

— Ե՛հ, ասո տեսեմ, ինչ արիր, ճարը գտար,  
տեսար Ոսկան էֆէնդիիդ: Ասում են, զնացել գտել ես:

— Չէ, Նշխուն Եկաքեար, չեն թողնում, հետք  
չկա, որ դուռը զնացի առաջս կողպեցին, չէ, չէ  
ու չէ կարելի, ասին:

— Ետե՛ւ.

— Վալի փաշան ասաց, որ շարժի կամ կիրակի  
անպատճառ իրաւունք կտան տեսնելու, մինչև այդ  
օրն էլ համբերի՛ր:

— Գու էլ համբերիր:

— Վախենում եմ: Ասում են, հաց չեն տալիս,  
բաղցած են թողնում, կողինք չունի: Ա՛խ — վա՛յ բու-  
տէր ու տիրականիդ:

— Աղջի, մէկ զնայիր Վալիի խանումի քով, կա-  
րելի է օգնէր:

— Չէ, Նշխուն Եկաքեար, եղ տեղից էլ զօտարի  
եմ դարձեր:

— Ե՛լի զնա:

— Ինացի, դունից փոնդեցին:

— Ասկեարի մեծաւորին երթալիք, նա լա-

մարդ է, ստու՞մ են:

— Է՛հ, գլուխը թապեմ, դրսի դռնից ճամբու գրեց:

— Որ այդպէս է, ի՞նչ ես մտածում:

— Ի՞նչ պիտի մտածեմ, թուր ու դանակ չունիմ: Այնքան հայր ու մայր, կին ու քույր ինչպէս, ես էլ այնպէս: Տեսնենք Աստուած ի՞նչ լոյս պիտի ծագեցնէ:

— Ա՛խ, որտեղ ես, թրիգ ու սրիգ զուրբան, ճերմակ ձիաւոր Ս. Սարգիս, քեզ են սպասում այսքան մարդիկ, հասի՛ր, է...:

— Թէ բանը այտեղ մնա, լնւ շուտ կհասնի:

— Ի՞նչ ես լոյսդ կտրել:

— Ի՞նչ անեմ, որ ճանապարհով գնացի՝ առաջն պատ շարեցին, որ փողոցով ուղեցի անցնել՝ ելքը կըտրեցին, որ այլբիւրին մօտեցա՝ ջուրը ցամաքեցրին, որ դեռից ուղեցի ծարաւս կշտացնել՝ չորացաւ, լեռ ապառաժ կտրեց, ծովն ընկա՝ ջուրն ինձ չընդունեց. ես էլ մնացել եմ մարտուած, ի՞նչ ձիւն գլխիս տամ, չգիտեմ:

— Քեզ մի կարցնիր, արևիգ մատաղ, աշխարհքը համբերանքով են կերել: Էս օր չորեքշաբթի է, մինչևի կիրակի երեք օր է մնացել, կիրակի խո՛ էլ տակլիք չունին:

— Ասելիքներն ու խօսելիքները խոով մնա իրանց գլխին, արևս խաւարեցրին, օրերս սևացրին, սեւանան էս գործը, էս գուռը զցողները:

— Ա՛յ ու փուչ դառնան դռնից դուրս ման եկող, սրանրա մըտ թաւի կոթը լզողները:

— Հապա, Նշխուն Եէաքեար, էս դառը ցաւեր

տանելը հեշտ է, զիմանալ կարելի՞ է:

— Չէ, աղջիկս, չէ, դժւար է, բայց գործից ետ մնալու չէ, գնա՛ առաջնորդի մօտ, նա կտրելի է, մի խելք սովորեցնէ:

— Ա՛հ, դու էլ, մեր առաջնորդը սօկի է ուզում, եկամուտ օր չունենա, դռնից ներս մարդ էլ չի ընդունիլ: Տեսնես Փրանդների մեծաւորը, ամէն աղքատի, որբւայրիի գործը իրան ձեռքով է տեսնում, սարալն ու մէջլիսը քանդում է, եթէ իրան ժողովրդին վնաս են հասցնում: Տէր ու տիրականը էնպէս է պէտք:

— Մեր էլ առաջն առաջնորդները այդպէս էին, գիտես ի՞նչ գորբա մարդ էր Պրիգորիս սրբազանը: Կ'սկ հայր էր, սպորմած, գթած և ամէն թշուառի նեղութեան հասնող: Էս մըտու էինք որ եկել է, սվ է բարիք տեսել:

— Թո՛ղ տուր, Նշխուն Եէաքեար, ճար ու ճամբա չունինք, մեր ձեռքով էլ բան տեսնել դժւար է:

— Զինս որտեղ քննիչի մօտ գնացիր:

— Քանի՛ անգամ... Առաջ էնպէս քաղցր բերան էր, որ զիտես, թէ մարդու ջանն ու ջիգարն էր, հիմի փոխել է, էն էլ ժայռ քար է դարձել:

— Աղջի, մի տսիր, ես նրան ճանաչում եմ, նա շատ բարեհոգի մարդ է: Սրեք ամիս առաջ կնիկը սրտկեց, մանչ բերեց, գայեկը ես էի: Ամէն օր տուն դալիս էնքան խելօք, էնքան մարդավարի նստում, կանդնում և շահում էր գնացող զարդին, որ խելքս գընաց: Մի՛թէ մեծ-մեծ մարդիկ այնքան հանդարտ են լինում: Բայց գիտես ի՞նչ կա, մեր քաղաքի տղան է. մեծ տարբերութիւն կա տեղացու ու գրացու մէջ:

— Ասածիդ պէս էր, ինչ անեմ, իմ բաղդիցն էր, վախեց: Նշխուն Եփեսոս, մօտ օրերս սրտեղ էիք, չէիք երևում:

— Մէքթուրջի էֆէնդիի տանն եմ, տանից դուրս չէ թողնում, մի աղջիկ աշխարհք եկաւ, խելքը գլխիցը գնում է, կարծես աշխարհը իրան են բաշխել: Դանել էֆէնդիի տնից նորա մօտ, էնտեղից էստեղ, օրէնը չորս անգամ ման արի: Նոր Դանել էֆէնդիի տանն էի, շատ խօսեցի գործից համար, ինչ ասես, որ տնգուլթ մարդ է, աշխարհքը որ դնեն կրակի վրա խանձեն, պէտքը չէ, չոր գլուխն ու սկիւնքը: Ասաւած էլ լաւ դատաստան է անում, վեց աղջիկ է աւել իրար ետեւից, մինչև ամէնին կարգէ, տեղաւորէ՝ ծերութիւնն էլ վրա կհասնի: Մանչ տղա էլ չունի, ուրիշի աղերքը պիտի խնդան կարողութիւնով:

— Այսօր գնացել ես Մէքթուրջիի տունը:

— Ինչպէս չէ, ամէն օր Անշա խանումը մարդ է ուղարկում, կանչում:

— Էս գործի մասին խօսք չեն բաց անում:

— Խանումը չէ խօսում, բայց էն օրը ես ականջ արի, Մէքթուրջին մի ուրիշ էֆէնդիի հետ խօսելիս շատ էր գոփում քեզ: Ասում էր, դա հասարակ կնիկ մարդ չէ, դա փէրի է կամ հիւրի է, այդ ինչ լեզու էր նա թփփեց մէջլիսում, այդ ինչ քաղցր ձայն էր, էն ինչ զարմանալի գեղեցկութիւն էր: Մէկ ժամ քեզ վըրա խօսեց զարմացած ու հիացած: Այժմտա, էդ ինչ պէս ես խօսել, որ վառել ու թողել ես զրան:

— Է՛հ, դուն էլ Նշխուն Եփեսոս, չգիտես գըրանց կեղատս բնութիւնը:

— Շատ վառւած էր խօսում քեզ վրա ու շատ մեղքանում: Մէկ ժամ աւել խօսեցին, ես մանուկին էի լողացնում, բայց ականջս նրա խօսակցութեան էր, զովեց, զովեց ու խելառեցաւ: Շատ ուրախ էի, որ Անշա խանումը քնած էր, թէ չէ կուիւ կծագէր էրիկ կնկա մէջ:

— Հողեմ երկուսի էլ գլուխը, դուն բան սօս, մի ճար, մի իրատ տուր, օր առաջ էս գործից ազատենք Ասկանին:

— Ինչ պիտի խօսեմ. քանի որ խելքս բան չէ կարում: Արի, գնանք, Մէքթուրջիի սաքերն ընկիր, խնդրիր, կարելի է ճար անէ: Նս էլ կազաչեմ:

— Մէքթուրջիի պապերն ինչ կարողացան անել, որ նա ինչ անէ:

— Նս խօսք բաց անեմ, տեսնեմ, բերանը ինչ պէս է. թէ ձեռքից բան կղա, վնաս չունի, գնանք խնդրելիք: Թող Ասկան էֆէնդիից ազատեն և դու էլ նրա խաթեր համար խնդրւած ու քարտուղարի ստքերն ընկած եղիր:

— Գիտենամ թէ կազատեն, գլուխս էլ մատաղ կանեմ, բայց լոյս չունիմ, գործը գինւորականին է անցել, էլ Վալին անգամ խամուելու իրաւունք չունի:

— Ինչէր ես տսում, որ ուզեմա, տակն ու վրա կարող է անել, բայց հարկաւոր է գամարը գտնել: Կեցիր, ես հասկանամ, քեզ տեղեկութիւն կբերեմ: Մնաս բարով, շատ ուշացա, պէտք է գնալ Վարապետ էֆէնդիի աղջիկը լողացնել:

— Նրթաս բարով, Նշխուն Եփեսոս, մէկ հասկացիր, տես կարող ես օգնել ու ազատել Ասկան էֆէնդիին:

ԼԱ

ԱՆՄԱՍՏՐ ԳՅՈՒՄԻ ԿՐԱԿՆԵՐՈՒՄ

Ինչոր Ասկանը գուրս էր եկել սենեակներէից, Ալմաստը վերնալարիկը շէր բարձրացել: Բակը շրջելիս՝ երեսը շուռ էր տալիս, որ այն սանդուխներն անգամ չտեսնէ, սրտեղից արագութեամբ թուշխտելով բարձրանում ու իջնում էր իւր հոգու հատար Ասկանը: Փոքրից անցնելիս՝ աչքերը շէր բարձրացնում տեսնելու այն լուսամուտները, սրտեղից լաճախ Ասկանը դիտում էր բնութիւնն ու բարձունքը: Տան մէջ ման գալիս՝ միշտ աչքին էին ընկնում այն ամանները, այն կարասիները, որոնք բանացրել էր Ասկանը, այն բարձն ու մինգարը, որտեղ միշտ նստել էր իւր լարգած անձնաւորութիւնը և ամէն անգամին հառաչանք էր արձակում և աչքերից թափում դառնապի արատասունքի խոշոր կաթիլները: Քանի որ ձեռքն էր առնում կարերը, քանի որ մօտենում էր մեքենային, կտոր կտոր էր լինում սիրտը, աչքերը մթնում և ձեռքերը գողգողում էին: Յերեկը լիշատակներով, գիշերը երազներով անգագար պատում էր Ասկանը Ալմաստի աչքերում:

Նշխուն Եէաքարին ճանապարհ դնելուց լետո՛լցեցաւ Ալմաստի սիրտը, նստեց ու մի լաւ լացեց: Տունը մութ, դռները փակ, տեսնող աչքեր չէին նալում և սուր ականջներ չէին լսում, ինքն իրան շարադրած *մ'կաւիկներն* ու խաղերը երգեց, երգեց ու հեղեղի պէս արտասունքները հոսեցրեց: Խեղճ մանկիկը նլա անգուսպ լացի ձայնիցը վախեց ու զարթեց և իւր ձայնովը մօրը սղբերին վերջ տւեց: Թշուառ կինը բարձրացաւ և աչքերը չորցնելով՝ մօտեցաւ Քոհարիկին ու գիրկն առնելով՝ կարեց աղջկա ձայնը: Բուպտական կերպով մոռացաւ վշտերը, ջերմ համբույրներ դրոշմեց նրա ճակատին, գգուեց, փաշփաշեց ու թոցրեց: Քոհարիկի թոթով լեզուից թռած — «մայրիկ ջան, ջուր սուր» բառերը այնքան թեթեւացրին մօր ծանրացած սիրտը, որ Ալմաստը ուրախութիւնից պաղեց ու ծծեց աղջկա պոօշները և սառը ջրի պղնձի *մնշորոյսն* մօտեցրեց նրա բերանին գգուշութեամբ: Ջուրը խմելուց լետո, — օխնշ — ասաց Քոհարիկը: — Օխնշ — արձագանք տւեց մայրը և շարունակեց մայրական գուրգուրանքը: Պատից կախած հալելի մէջ աղջկանը իրա պատկերի հետ խաղացնելիս, Ալմաստը նկատեց, թէ ինչպէս աչքերը կարծրել և ուռել էին արտասունքից. դարձեալ նորոգւեցին տխուր լիշատակները. բաց բոլոր ոյժը հաւաքած՝ զբուպեց ջղերն և թաց թաշկինակով սրբեց աչքերը, հովացրուց գովացրուց և Քոհարին գիրկն առած՝ ելաւ գուռը, բաց օդի տակ շնչելու և մի դրացու հետ երկու խօսք փոխելու:

Իրիկւա գանգերը զարգում էին, արևը թեքւել էր, սաստիկ աօթը անհետացել, գով քամին փչում էր

մեզմիկ, հաւերը ներս էին քաշուել, թատերը բարձրացել, հօրթի նախիրն եկել և արհարամ ցրել: Մասաղահաս կիներն ու օրհորդները ներս էին քաշուել զրուներից, տուն տեղ աւելում, խառնում, թնդրին ու կերակուրին նայում, ամաններն ու չամանները սրբում, մաքրում, մամերը սարքում աշտանակներում, կեցտոտած դանակները մոխրով սրում ու շփելով փայլեցնում, պատրաստում էին աստուծայ մինչև իրիկուն, տապ արևի, փոշու ու կեղտի մէջ թրե եկած, լոգնած և ջարդած իրանց մեծերի տուն վերադառնալուն: Իսկ սպառաւներն ու հասկաւարները դեռ դաներում նստած թէշիկներն ու իլիկները ձեռքերում մտնում էին կամ երկար ճողերով գուլպով գործում ու իրար հետ զրոյց անելով ժամանակներն անց կացնում:

— Աղջի Ալմանտ, սոսայ մի հասակաւոր պատկանեի կին, ինչ ես քաշուել ներսն ու ճգնում, էս օր ողջ օրը դուրս չելար, հիւանդ էիր, ինչ էիր շինում:

— Բան ունէի, խանում արլա, կարերս էի կարգի բերում: Ինչ անեմ, տես թիւն է, ես մեռակ, մինչև զլուխ եմ բերում գործերս, օրն էլ միժնում է:

— Գիտեմ, գիտեմ, աչքերդ խօսքերդ հաստատում են: Աղջիկս, մեղք ես, էդ ինչ է արածդ, սիրարդ կպատուեմ մէկ օր: Էլ ով ով ցաւ չէր սունցելը մաւր համբերանքով կտանեն, որ արարես, հալ ու մաշ լինես, քեզ ով սիտի շահի: Առաջ աշխատիր քո ստոզու թիւնդ պահպանել, որ ջլիբումդ սլո լինի ու կարողանաս քեզ վրա լոյս դնողներին էլ օգնութեան հասնել: Մեղք ես, մեղք, խելքի արի:

— Խանում արլա ջան, բան չկա, դու էլ գիտես,

թէ ամէն օր քո տեսածիդ պէս եմ: Քիչ քնել էի, աչքերս ուսել են:

Լաւ չեղաւ, ուրմիշ չեկաւ հնարածդ:

Ալմաստը չպատասխանեց. իւր լուսթիւնը լստատվանութեան նշան էր:

Այդ միջոցին Նշխուն Շէաքետը եկաւ և Ալմաստին հարեանների մէջ տեսնելով միայն բարեկեց և անցաւ գէաց Գանէլ էֆէնդիենց տունը: Ալմաստը նկատեց, որ գայեկը մի խորհրդաւ որ հալեացք քցեց իւր կողմը: Այդ պատճառով մի քիչ զրացիների հետ խօսակցութիւնը շարունակելուց յետո, տուն մտաւ, նախրից եկած կովը կիծեց, կաթը տարաւ քիւրը, բարձրացաւ սէաքիւն ու քուն դրեց Գահարիկը, ինքն էլ քովը տարածուեց ու մտածմունքներում խորասուզեցաւ:

Արգետք ինչի է գալիս Նշխունը, բարի թէ չար լուր է բերում: Գնաց, տեսաւ Մէքթուրջիին, թէ տանը չէր: Գուցէ մարդիկ հալին և լաւ համարեց գաղանի տեսնելու ու խնդրելու: Բայց չէ... լաւալ չէ կարելի... Վալին որ տաւ է, չէ կարող միջամտել... ուր մնաց քարտուղարը: Գատարի բաներ է, ուրիշ հրնարք մտածելու է, դրանցից լոյս չկա: Գնամ արգետք Փրանգների կօնսիւլի մօտ... — Ա՛յ, չէ կարելի, Ոսկանը ասում էր, որ նրանք իրան հակառակ են... Ինկիզի կօնսիւլը... — խելքս չէ կարում: Ինչ որ կուզի լինի, ես կերթամ Ռուսների կօնսիւլի մօտ, մեր պաշտպանը նա է, դրանից լաւը չունինք: Պէտք է գնալ ու ոտքերը ընկիւել: Նա կարելի է ճար անէ... Բայց չէ, խելքս չէ կարում, այնպէս անիրաւները չեն մեզ քերթողները, նրանց էլ խորելու հնարքը գիտեն... Մի սուտ... մի

կեղծ քաղաքավարութիւն, մի խոստմունք և ճանապարհ կգնեն նրան էլ... Նա էլ կրկին նրանց խօսքին հաւատացած, այսօր, էգուց, ուրբաթ, շաբաթ պիտի անց կացնել տալ ժամանակը... Մարդ պէտք է, գործին բանին տեղեակ մարդ է պէտք, ուրիշ հնարք գտնելու է, թէ ոչ... թէ ոչ էն մարդուն էնտեղ կեցողի, ապահանութեան ու խոնաւութեան մէջ փտեցնելու են: Այլ մաստը մեռնէր, Ասկան ջան, ու քեզ այդ օրը չտեսնէր:

— Այժմատ, ինչ ես մութ տեղը նստել, մոմ վառես, — ներս մտնելով առաջ դայեկը:

— Նշխուն Ետաքեար, այդ գու էս:

— Ես եմ, ինչ, խո չվախեցար:

— Զէ, հրամեցէք, վեր հրամեցէք, ասելով բարձրացաւ Այժմատը ու լուցկին թարաքից առնելով՝ վառեց: Լոյսը տարածւեց և աչքերը սկսեցին իրար տեսնել:

— Բան ունիմ, շտապում եմ: Եկա վաղեվազ քեզ իմացնեմ, որ գործդ լաջող է: Մէքթուրջի էֆէնդին խոստացաւ էգուց խաթերս համար երթալ քննիչի մօտ, խնդրել, որ էգուց կամ միւս օր անպատճառ քեզ թողնեն, որ գնաս ու տեսնես Ասկան էֆէնդիի հետ:

— Էգուց:

— Ինձ պատւիրեց, որ էգուց ճաշից յետո իրան քով երթամ ու պատասխան ստանամ:

— Ասաւսձ մի հատիկդ բաշխէ, Նշխուն Ետաքեար: Ինչպէս ինձ ուրախացրիր, Երկնաւոր Թագաւորը Զարուհինիդ ուրախացնէ:

— Միամտիր և պատրասուիր: Էգուց թէ կլինի, կգնաս ու կտեսնես:

— Նշխուն Ետաքեար, ես քո հոգուդ մատաղ բեր, բեր, մըկ ձեռքդ պագեմ, արլա ջան:

— Գէհ, գիշեր բարի, գործ ունիմ. երթամ: Էգուց կգամ, քեզ ասելիքներ շատ ունիմ. երկան երկան կխօսենք:

— Ի՞նչ ունիս, էլի ինչ կիսատ թողիր, բան ունիս, ասա. թէ չէ գիշերս քունս չի տանիր:

— Աչինչ, սչինչ: Պիտի ասէի, որ թուրք են, փառք ու պատիւ սիրող են, բրգին տուր, ել գլխին նստիր: Հորիտուր է երթալ ու Անշա խանուսին շնորհակալ լինել, մարդու սանձը ձեռքն է. որ ասէ, — «էֆէնդի, զնա ջուրն ընկնիր ու այս կնկանը փրկէ». — պրծու, բարտուղարը ճար ճար պիտի անէ ու կնկանը խօսքը կատարէ: Պէտք է, պէտք է երթալ, մէկ տեղ կերթանք, գործիդ համար, ինչ պիտի անես, պիտի խոնարհիս, ինչ կորուստ կ'ունենաս: Մնաս բարով:

— Գնաս բարով: Նշխուն Ետաքեարը գուրս եկաւ:

— Այժմատը երթաւ. էն կատուի կրծած Անշաի սաքն ընկնի, խնդրի, աղաչէ, արտասուէ, ստքերը պագէ. թէ ինչ է, գլխին իւր Ասկանին: Գլուխդ մեռնի, Այժմատ: Անիկն էլ կնիկ լինի, վրան խանուսի շնորհք լինի, էլի ասես, սչինչ ու գործիդ համար գնաս գլուխը ծուես: Քարտուղար էֆէնդին Ա. Պօլխը տակն ու վրա է արել, լաւ պաշտօն ձեռք գցելու համար գնացել է ճմրտած, մի մեծ փաշայի լղճարտած աղջկա հետ է կարգուել: Ի՞նչ անես... Ասկան ջան, քու սիրուդ, քու հանգստիդ համար սչ թէ ձեռքերն ու ստքերը, կուխած հողն էլ եմ համբուրելու: Գիտեմ, թէ և պիտի բարկանաս այդ ստոր արարմունքիս վրա, բայց ես ան-

ճարտացած, բու արձակմանդ համար պիտի խոնարհիմ Կ.Պօլսից «Հէդիէ» (նւէր) եկած խանուժի սրունքների տակ:

Այս դասն մտածմունքները ժամերով զբաղեցրին Ալմաստին և նա նստած տեղը, աչքերը լսոած թարաքի զարգարանքներին, անշարժ և անմխիթար էր: Նորա աչքի առաջ այդ բոպէին կային դարուած սպիտակ կլայէկած ու փայլալուն սինիններ, լանգարիներ, սահաններ իրանց սարփուշներով, թասեր, լական, իբրուդ, բազնէց լական մեծը— փոքրը, աշտանակներ, սրբւած լականիբրուդ և ուրիշ անօթներ, որոնց վրա երևում էին մաքրատէր կնոջ ձեռքի շնորհները: Ազօտ ճարպէ մոմի շողքը անդրադառնում էր այդ մեծաղների վրայից փոքրիկ ճառագայթներով: Յատակը փռւած էր մաքուր կապերաներ և վերևը սէադրի վրա բնտիր խալի: Չորս բոյորը շարած էին բբգէ բարձեր, սրոնց «դիւմա» մետաքսի երեսները և ասեղանկար սպիտակ ծածկոցները ճաշակի և արևետի արտադրութիւններ էին: Էն կողմը պատից կախած էր Ասկանի սուբը, դաշույնը և ատրճանակը, (ուէվօլն ու հրացանը տարած էին կառավարչատուն): Պրանց մէջն էր և Ասկանի սիրելի ձմեռւա պալտօն, Վանի արայից կարւած: Այս բոլորը անորոշ և ազօտ էին երևում Ալմաստի աչքին, նա անզգայացած ու թմրած՝ բոյորովին ուրիշ բան էր տեսնում, Իա երագում էր:

Ալմաստի ետևից ընկած հալածում էին, նա գրտնւում էր ընդարձակ դաշտում: Օրը մթնելու վրա էր, արևը մայր մտնում և դաշտում բացի իւր հալածիչներից ոչ ոք չէր երևում: Վազում էր շնչասպառ, թռչում, թռչկոտում, բայց թշնամիները անդադար

հետևում էին: Հեռացաւ, հորիզոնի ծայրը հասաւ, բարձր գոտիվայրից անընդհատ դնում էր, դնում ետեա նայելով և սոսկումից աչքերը խփում ու շունչը բռնած՝ գլորտկելով առաջանում, բայց ուր... ցածրում անեզրը ամենհի ծոյլը...: Հէնց այն է հալածողները փեշից բռնելու և ետ էին տանելու, կարծես թե առաւ Ալմաստը, թռաւ ու իջաւ անդաւնդը, ծոյլի լատակը: Այդտեղ նորան զիմաւորեց մի սալորդ և իւր վիշապներով լծւած կառքը նստեցնելով՝ տարաւ մութ անցքերով գետնի խորքերը, կեղտօտ ու հստած կուպրի ու ձիւթի լճակները: Մի ազօտ լոյսով լուսուարւած էր այդ ամէնը և սրոշ սչինչ չէր տեսնում: Տեղտեղ սլոպում էին կարծես գիւտական աչքեր, որոնք մանչելով, թէև ուզում էին մօտենալ ու լափշտակել խեղճ կնոջը, բայց վիշապների սրաբշաւ քայլերը և սոսկալի ֆշշոցը զարհուրեցնում էին բոլորին, նամանաւանդ սալորդի կախարդական ձոզիկը իւրաքանչիւր ծածանմունքով խշրտում ու փշրտում էր ճիւղների գլուխներն ու ողնաշարներն: որոնց հագարաւորներին մի ոտիւնով էր գլորում: Ալմաստը գոզգոզալով, կուչ եկած կառքի մի անկիւնում, հագիւ աչքերը բարձրացնում էր չորս կողմը և սարսափից գլուխը կոխել էր կուրծքի մէջ: ժամերով գնացին այդ սոսկալի ուղիով, որ սչ վերջ ունէր, սչ կատար և ամէն քայլափոխին սաստիկանում էր մարտը սալորդի և ճիւղների մէջ: Սգը հետզհետէ տաքանում էր, մինչև այրելու սաստիճան, զարշահոտը խեղդում, այնպէս որ շնչելն էլ դժւարանում էր: Այդ միջոցին սալորդի գէմն ելաւ գետնի պարագլուխը զինւորւած

կորմիր շանթերով, բոցարձակ գէնքերով, սղջ մարմինը պատած գեհնի հրով և կայծերով: Ահա ելի դէմքը սարսափ էր ազդում. խոշոր ժանիքները, հաստ շրթունքները, երկար ու հաստ բեխերը և կրակով ծածանւած մօրուքը, որ գոռում զոչիւնով և խրոխտ ձայնով կանչէր:

— Ե՛հ, դու հայրսմի՛, քանի գլուխ ունիս, որ դիմադրեցիր իմ անթիւ դեերի անհամար զնգերին: Խնչպէս համարձակեցար անցնելու այն սահմանը, որտեղ մարդու հտոն անգամ արգելւած է: Եղբի այդ կռաքից, ընկիր ոտքերիս տակ և զոհիր ինձ համար այդ կայք, որի այրւածի ծուխը հտտտել էմ ուզում:

— Քեզ չեմ վնասելու, ս՛վ սպանդարապետ, քեզ հետ վէճ չունիմ, ս՛չ էլ քու զնդի հետ. թո՛ղ որ զնամ լոյս աշխարհ, այս խզճալուն իւր ազատ վայրը, բաց հօրիզանի տակ, հայրենի սրջը և մօր գիրկը հասցնելու: Ծանապարհը մի խափանիր, ուղին հասարակութեանն է. ամէն մարդ իրաւունք ունի անցնելու, իւր կածանը շարունակելու և հասնելու իւր օթևանը: Թողէք, բաց արէք այդ ուղեփակը դրնամ, հտանեմ կայտրանս:

— Ա՛յ տւեց քեզ այդ համարձակութիւնը, պատասխանելու սպանդարապետին իրան սահմանում: Զգիտե՛ս, որ ես երկնքի փռաքերը թողել եմ, դժխոքը տիրելու և իմ ցանկութեան համաձայն փարելու: Զգիտե՛ս, որ իմ պետութեան մէջ ինքն Արարիչն անգամ կարգադրելու և իշխելու իրատւնք չունի: Պապանձւիք և կործանւիր վիշապի կոտորովդ. ընկիր դեհենը, կուպրի ծովում պատրույգ դառնալու անշէջ բոցերին:

դեռ կանգնել ես, դեռ իմ մոնչիւնի հոգերը քեզ չըխտաբաղեցին, փշուր-փշուր շարին:

Այս խօսքերի վրա, անթիւ ճիւղաներ իրանց առաջնորդի նշանի համաձայն, ամէն կողմից թափւեցան և գոռում զոչումներով շրջապատեցին վիշապնիմաց կռաքը: Բայց ճարպիկ սալորդի կախարդական ձողիկը ամէն մի ճօճմուկով հագարներ էր գլխում և բիւրերը ցլում: Կատաղութիւնից գտաց մեծ զոչումով սպանդարապետը:

— Հասէք օգնութեան, զնգեր, զնգապետներ: Թողէք ամէն գործ, թողէք ողջ աշխարհը, եկէք փրկելու և պաշտպանելու ձեր ժառանգութիւնը:

Պառնդ-գունդ ամէն կողմից թափւեցին դեերը և չորս բսրից կառքին մօտեցրին անշէջ ջահերը: Երկրնքից թոթափւած սպանդարապետական ողջ գունդը իւր արբանեակներով շանթերը և կայծակները ձեռքերին՝ վրա էին ապիս կառքին: Պառն քրտինք էր պատել սալորդին և աչքերը միմեյ, մեքենարար միայն ձողիկն էր շարժում, ձողիկն սլորում, աջ ու ձախ դառնում: Բայց Ալմաստի առաջնորդի անկումը անխուսափելի էր:

Յանկարծ դեերը շան կատաղածի նման ոռնացին և նրանցից մէկը վազէվազ հասաւ սպանդարապետի առաջ՝ կանչելով:

— Օգնութիւն, օգնութիւն, լեռնորդին կոտրատեց շղթան, փախչում է, գնում աշխարհքը կործանելու:

Սարսափեց սպանդարապետը, իւր սղջ զնւովը դարձաւ դէպի լեռնորդին, խկ սալորդը ազատ անցաւ:

և մի զառն հասաչանք քաշելով՝ մօտեցրեց իւր կառ-  
յը մի կանաչագորգ ափի, որտեղ մի թշուառ կին մըթ-  
նու մը նստած, ձեռքի մետաքսէ թեղի կաժն ու կծիկը  
մճճել էր և չէր կարողանում թնջուկը իստակել:

—Քնյր իմ, աիկին, խնդրեմ, բարի եղէք և  
օգնեցէք թշուառիս: Նստալում եմ գնալու, բայց թընջ-  
կած թեղիս կամը չկարողացա իստակել, որ կծիկս կըծ-  
կեմ ու մեկնեմ: Խնդրեմ, ձեռք կարկառեցէք, օգնե-  
ցէք ինձ վերջացնելու գործս:

Ալմաստը նորան օգնութեան հասաւ, բայց կա-  
ժը շատ մեծ էր, թեղիըը սև ու բարակ, ժամանա-  
կը գիշեր ու մութ. որքան տանջեցին, հնարք չգտան  
իստակելու: Աշխատութիւնից այնքան նեղացաւ Ալ-  
մաստը, որ զարթեց:

Գիշեր էր անցել, ճարպէ մամը պարպել ու մա-  
րել էր, մութը աիբապետել: Ալմաստը գանուում էր իւր  
անկողնի մօտ, Գոհարիկի հետ չնչեղիս, առանց հալաւն  
հանելու:

ԼԲ

ԱՇԽԱՐՀԻ ԿՐԱԿՆԵՐՈՒՄ

—Այս ինչ երազ էր, Աստուած իմ, ինչ սարսա-  
փելի տեսիլք էր. . . Ա՛հ. . . միթէ մարդ, դեռ կենդանի,  
կարողանում է իջնել գժոխք, նրա ահաւորութիւնը տես-  
նելու: Ա՛խ, մի «Եֆէմէրգի» սենեակի, տեսնէի թէ

ինչ էր այս երազի միտքը: Ուզիղ է, լիմօր բան է,  
ես զիտեմ... Ասկանն էլ հազար անգամ ստել է, որ  
ուելորգապաշտութիւն է, նախապաշարմունք է, բայց  
ինչ որ է, մարդ մեկնել տալիս մի քիչ հանգըս-  
տանում է, կարծես պարզում է իրան ամէն բան և  
միամտում: Ես շատ ու քիչ երազ տեսել էի, իմա-  
ցել էի, բայց էս աննման է: Էն ինչ սոսկալի բան էր,  
վախիցս աչքերս չէի կարողանում բարձրացնել տեսնե-  
լու և ախանջներս սարսափելի սրտամուկից ղժժում  
էին: Մէկ լուսանար, մի առաւօտ բարձրանալի, գնալի  
Տէր Խաչատուրեանց «Եֆէմէրգին» բերէի ու քրքրէի:  
Բայց ո՞ր մէկը նայես, ո՞ր մէկը կարգաս, շատերը  
սրանցից մէջը չես կարող տեսնել:

Այս մտածութիւններով ընկաւ և խորը քնով  
քնեց մինչև առաւօտ: Բարի լուսին, արևի հետ վեր  
կացաւ, գիմեց դէպի տաճարը, անկեղծ սրտով խնդրը-  
ւածքներ անելու Բարձրեալից և Աղորմած Տիրոջ գը-  
թութիւնը հայցելու: Ժամից լետո տուն դարձաւ, պատ-  
րաստութիւն տեսաւ Ոսկանի մօտ գալու, լուսալով, որ  
գուցէ նոյն օրն յաջուլի Աալիի յարաբեղարին իրաւունք  
ստանալու Ալմաստի համար: Կէս օրից մի ժամ առաջ գի-  
մեց դէպի զինւորական քննիչի բնակարանը միջնաբերդը:

Քննիչն ընդունեց Ալմաստին և բարկութեամբ  
մերժեց խնդիրքը՝ ասելով.

—Գու ու քս Ոսկանդ ազառած քար էք, ձե-  
զանից բան իմանալ անկարելի է, հազար ձեի հարցեր  
ուի և բարբի պատասխանն էլ մի և նոյնը: Կարճես  
անգիր սովորած երգ էք երգում: Յետո կսուփը պա-  
տին գարկելով՝ շարունակեց. —Անշունչ, անգգա, եթէ

սրտոյց ու փայտից բան կարելի է հասկանալ, ձեր մեքենական բառերից էլ բան կլինի գուշակել: Քանի որ այդ գրութիւնը շարունակոււմ է, լուխեան իրար երես տեսնելու չէք: Ս.հա իմ վերջին պատասխանս. խանձմ, գնացէք, մտածեցէք և ապա ձեր գիտցածի նման շարժեցէք:

— Աւրեմն էլ չէք թողնելու, որ նրա դէմքն անգամ տեսնեմ:

— Այ:

— Աւտելիք տալու, ճերմակեղէնները փոխելու էլ իրաւունք չիտ:

— Ա՛յ, ո՛չ, ո՛չ, ո՛չ...

— Ինձ էլ չէք բանտարկել:

— Եթէ կամենու՞մ ես:

— Տեսնու՞մ եմ, որ հնարք չունի՞մ օգնելու և խնամելու այն արարածին, որը կեանքը չէ խնայել ինձ ու որբիկիս համար: Հետևապէս, խիղճս շտանջելու համար, նախապատիւ եմ համարում բանտարկել, որպէսզի խիղճս հանգստանա՝ համոզւելով, որ էլ միջոց չեմ կարող գտնել նրան օգնելու:

— Այդ պատճառի համար, եթէ բանտարկւած էլ լինէիր, դուրս կ'անէի, որ աւելի տանջւէիր և վերջապէս խելքի գալով գալիր ինձ մօտ և խոստովանէիր ամէն բան ճշմարտութեամբ, Ոսկանիդ էլ ազատէիր, դու էլ հանգստանալիր:

— Տեսնու՞մ եմ, որ բոլոր խօսածներս դուր են, նեղութիւն եմ պատճառում ձեզ, գնամ խրճիթս, ողբալու վիճակս: Իսկ դուք էլ ինչ որ կանէք, երբէք մի մոռանաք, որ հաշիւ էք տալու նախ ձեր

խղճին, և ապա Երկնաւոր Թագաւորին:

Այժմաստը դուրս եկաւ և գաւթի սանդուխներից ցածրանալիս ուժը սպառւեց և գլորւելով իջումինչև լատակը: Այդ գորգիւնի վրա դուրս եկան ծառայողները, քննիչը և սաստիկ խղճահարւեցին: Թըշւառ կինը հագիւ ուշքի եկաւ, շարունակեց քայլերը դէպի ընդհանուր զօրքի հրամանատարի ապարանքը:

Քննիչը սանդուխի գլխից մինչև տակ տարածութիւնը աչքից անցնելով, երևակայեց, թէ ինչ սարսափելի ցաւ գգացած պիտի լինէր տառապեալ կինը: Մի քանի րոպէ շարունակ աչքերը պղլած մնացին այն քարերի վրա, որտեղից բարձրացրին անգգայացած կընտը: Նրա սիրտը ծանրացաւ, նրա տեսանելիքը մըթնեց, նրա արտառուքները ժողովեցին, նրա հոգին խոռովեց և նա շատ երկար կմնար այդ գրութեան մէջ, եթէ իւր շուրջը չլինէին ուրիշ զխաղներ: Իսկողալով մտաւ իւր գրասենեակը, տարածւեց բազմոցի վրա և աչքերը սոստաղի կողմը չէր կարող բարձրացնել, վախենալով, թէ մի գուցէ ծակւած լինի և կապուտակ երկինքը նրան երևի: Նա էլ իւր վիճակից անբաւական էր... աշխարհի վրա վիճակից գո՛հ:

Այժմաստը քօղը երեսին, էհրամում փաթաթւած, որտեղ չէր գնում: Յաւալի կինը մի սիւտ էլ փոխ առած, քաջախրւած դիմում էր ամէն դուռ: Աներկիւղ առաջ գնաց, մտաւ այն գահլիճը, որտեղ պարտպում էին կոմիտար փաշան օգնականներով:

Զինւորական հրամանատարի ապարանքի մի մասում լատկացրած էր գրասենեակ և տեան Ա. Պօլից եկած քննիչների համար: Առ. ու մուսը երեք գլուխ

ներ իրար գէմ նստած՝ կարգում էին զանազան խնդիրներ, զանազան տեղեկագրեր, վճիռներ, գործեր, կարգադրութիւններ, հրամանագրեր և հրովարտակներ: Փամերով նրանցից և ոչ մէկը երկու խօսքով չէր դիմիլ ընկերակցին, եթէ արտաքին եկւորներից պաճառ չլինէր: Աղջ երկու ամիս առաւօտից մինչև երեկո, զիշերը նստած այդ երեք անձնաւորութիւնները կարգում էին և լիշատակարաններում ու ցանկերում արձանագրում: Երեքն էլ հասակաւոր մարդիկ էին, երեքն էլ քաղաքացիի պարզ շորերով, երեքն էլ սև աչքերով, կարճ ու սև մօրսքով, կարճ հասակով, գիրուկ ու փափուկ անձնաւորութիւններ: Նրանցից երկուսը հայ էին և եղբայրներ, մինը թուրք (մահմեդական, գուցէ և հայի արիւնից և սերնդից):

Ալմաստն ընդհատեց քննիչների զրազմունքը, երեքն էլ անմիջապէս իրանց ընթերցմունքներին նշան դրին մատիտով և նայեցին եկւորին: Խեղճ կինը շարած, երբեմն մէկին էր դիտում, երբեմն միւսին և չէր իմանում, ո՞ր մէկին ուղղի իւր հարցը: Մահմեդական պաշտօնականը, որ նախագահն էր քննիչների, համաձայն իրաւունքների՝ հարցրեց քաղաքավարութեամբ Ալմաստից.

— Խնչ էք կամենում, խանում:

— Արտեղ է մեծաւորը, հարցրեց Ալմաստը, խընդիրք ունիմ չալտներու:

— Ասացէք, խանում, ասացէք, ձեզ լուծ եմ, ինչ դանդաւտ որ ունիք:

Ալմաստը զարմանում էր, որ զինուորական հրամանատարի սպարանքում քաղաքացիական շորերով

այնքան համեստ և մարգավարի մեծաւորի էր պատահել:

— Մեծաւորի մօտ գործ ունիմ, կրկնեց խեղճ կինը, նրա տեղն ինձ ասացէք:

Օգնականներից կրտսերը կնոջ արտասանութիւնից հասկացաւ, որ հայ է և ասաց հայերէն մեղմութեամբ:

— Տիկին, մեծաւորը նա է, մի վախենաք, ինչ որ ունիք ասացէք համարձակ. մենք ձեր ցաւին օգնութիւն հասցնելու համար ենք եկել:

— Խնդրեմ, հրամայեցէք քննիչին, որ իրաւունք տա, զնամ բանտ տեսնելու տանս պահապանին: Ես զրկած եմ տեսնելու այն մարդու երեսը, որի լանցանքը լաշտի չէ, որը բարիք անելով է անց կացրել օրերը, իւր կեանքում մէկին նրա չարիքը չէ հասել: Այսօր անմեղը բանտարկւած է՝ բաւական չէ, զրկւած է մօտաւորների երեսը տեսնելուց և կենսական պիտոյքները վայելելուց: Խնդրեմ, բարի եղէք, լսէք թշուառի խնդիրքը և ողորմեցէք այն կալանաւորին, եթէ շուտով դատաստան անելու կամ արձակելու չէք, զոնէ թող տւէք նրան տեսնել և պէտքերը հոգալ:

— Ա՛՛՛վ է, ինչ բան է, այդ բանտարկւածի անունը ինչ է:

— Ատամնաբույժ Ասկան էֆէնդին, որին ձեր կարգադրութեամբ են ձերբակալել և Վալին ասում է, որ չի կարող միջամտել ձեր գործերին: Աւստի ազաչում եմ, ազերսում եմ, բարի եղէք, շուտով դատաստան արէք և զարձրէք ինձ տէրս:

— Ասկան. . . գո՛ւ ես այն կինը. . . ասաց և մնացեալը կուլ տւեց փաշան: Մի քիչ լռելուց յետո, —

սխալուել էք, խանութ, մենք չենք բռնատրկել ուել Ոսկան էֆէնդիին, զօրքի հրամանատարն է արել այդ բանը, նրան հարկաւոր է դիմել: Բայց միթէ քեզ չեն թողնում բանտում տեսնելու խնամակալիդ:

— Ա՛յ, էֆէնդի, այս տասներորդ օրն է, որ տարել են նրան և երեսն անգամ ինձ չեն ցոյց տւել:

— Ինչքան լիմարութիւն է, ասաց փաշան օգնականներին, մեր տղէտ պաշտօնեաների սրարքը: Ինչպէս կարելի է բանտարկեալների այցելողներին արգելել, չի՞ոյլ տալ անսակցութիւններ անելու ողբականների հետ: Սրինազըքի ո՞ր կողքին է զրւած այդ բանը:

— Միթէ այդպիսի բան աքել են: Գուցէ դեռ սկզբնական քննութիւնները չեն վերջացրել, զգուշութեան համար ժամանակաւորապէս արգելում են այցելութիւնները:

— Ինչ էլ որ պատահի, իրաւունք չունինք. նամանաւանդ որ կարող են հսկել և այդ բանը աւելի կ'օգնէ գործերի պարզելուն:

— Խնդրում եմ, էֆէնդի, բարեհաճեցէք այս օրինակ անձամբ տանել զօրքերի հրամանատարի զբասնեակը և իմ կողմից խնդրել, որ բարեհաճի կարգադրելու, թոյլ տալ խանութին տեսնելու խնամակալի հետ անմիջապէս, համաձայն ընդանուր պետական կարգերի: Ասացէք նրան խօսքերս և խնդրեցէք, եթէ կարելի է, բերանացի ընդունի, իսկ թէ ցանկանում է, միևնայն առաջարկութիւնը կարող եմ և զրաւոր անել: Յոյս ունիմ, որ նա առանց այլևայլի չի մերժիլ խնդիրքս և չի թոյլ տալ, որ թուղթը խմբագրելու

նեղութիւնը ձեզ պատճառեմ:

— Շնորհակալ եմ, անմիջապէս:

Այս խօսքերն ասելով՝ սաք ելաւ օգնական կամիսար էֆէնդիին և առաջնորդեց Ալմաստին հրամանատարի սենեակը: Լուս ու մունջ հետեւեց խեղճ կինը, անհամարձակ աչքերը բարձրացնելու ու տեսնելու այն հայ էֆէնդիին, որ այնքան բարեխիղճ էր երևում: Մի ժամից աւել վէճ ունեցաւ քննիչի օգնականը զօրքերի հրամանատարի հետ, սրը բացարձակապէս մերժում էր լիազօր քննիչի խնդիրը և մինչև անգամ ասում էր, որ չհամարձակւի գրաւոր թղթակցութիւն սկսել մեզ հետ այդ գործի մասին:

— Մենք, ասում էր, ո՛չ մի խնդիրք կամ բացատրութիւն չենք ընդունել քաղաքական իշխանութիւնից: Պատերազմական դործերում կարիք էլ չկա ուշք դարձնելու քաղաքացիականների վրա: Մեր գործը ինքներս կարող ենք վարել, իսկ օրէնքներն էլ կարգում ենք: Զեզ ոչ պարզելու, ո՛չ բացատրութիւն տալու և ո՛չ խօսելու կամ լսելու ցանկութիւն ունիմ: Ասացէք ձեր նախագահին, որ լաւ կարգա իր ձեռքում եղած թղթերն, իր իրաւունքների, արտօնութիւնների և վարելիք գործերի մասին իրան արւած ծրագիրն ու հրահանգը և լուէ, քանի որ ո՛չ սքի լայտնի չէ եղելութիւնը:

Գառնալով դէպի Ալմաստը, շարունակեց:

— Խանութ, շատ էք կարօտել ձեր բարեկամին, երևի չէք կարողանում ապրել առանց նրան: Եթէ լաւ մարդ էր, ժամանակին ինչի՞ չէր մտածում, որ երեսի վրա չէ կարելի թողնել ընտանիք ու զգուշանում այդ

ճանապարհից, որոնք կարող էին իրան բաժանել աշխարհից: Ինչի՞ ինձ մօտ չէք գալիս խնդիրքի ու գնում էք ուրիշների մօտ: Առաջ իմ պատասխանս ստանալիք, չետո գնալիք ինձ վրա գանգատի: Ափսոս, հազար փոսոս ձեզ, որ այնպիսի մի անխելքի ձեռն էք ընկել. իւր անգիտութիւնից ձեզ էլ կրակն է գցել ու տանջում: Գուք չէք կարող Ասկանին տեսնել ալսօր էլ, այս իրիկուն վերջնական քննութիւն է: Առաջ սուսուտ եկէք ինձ մօտ և ես քննիչի ու գատախազի հետ խորհրդակցելուց չետո կ'սրուչեմ, թէ երբ պիտի տեսնէք նրան: Գնացէք, հանգստացէք, անպատճառ կատենէք ալս շաբաթ:

Առայ և հետոյաւ հրամանատարն իր առանձնարանը, առանց պատասխանի և բացատրութիւնների սպասելու: Ալմաստն ու լիազօր քննիչի օգնականը դուրս եկան, առանց որոշ պատասխանի: Խեղճ կինը՝ վշտացած և լուսահատ՝ դիմեց տուն: Գուտնը նորան սպասում էր Նշխուն Շէաքեարն, որ Ալմաստին տեսնելուն պէս ասաց:

— Ալմաստ, էս սրտեղ ես, երեք անգամ էսօր եկել եմ և դու տանը չես: Եդ դեզնել ու կապուտկել ես, չլինի՞ թէ էլի քննիչի մօտ էիր գնացել:

— Ի՞նչ անեմ, անուանները պատիւ: Կերան, կըրծեցին հոգիս: Էս ի՞նչ անօրէն, անխղճմտանքների ձեռն ընկանք: Չմեռանք էլ, որ ազատէինք:

— Էլի ինչ ես լոյսդ կարել. խելքդ թոյցրել, հապա ինչ անէին մեր ծնողները. որոնց մարդին կամ տղին դուռը կանչելն ու կախողան հանելը մէկ էր լինում:

— Հազար անգամ լաւ չէ, որ մարդուն մի ան-

գամ կախեն ու մեռցնեն, քան թէ ամեն օր մի քանի անգամ մահուան դուռը տանեն տանջին ու ետ բերեն:

— Ատաւած սղորմի մօրս հօգուն, ասում էր, որ լուսահատի պապիդ Միւթթի փաշան կանչել էր Սարալը և այն օրը կախել: Փառք Ատածու, հիմի ո՛չ կախել կա, ո՛չ կարտել. քանի օր բանտ են գնում. էլի ազատում: Ի՞նչ անենք, պիտի քաշենք, քանի որ էս անօրէնների ձեռքի տակն ենք:

— Մեղաւորին լաւ է, որ էն լուպէին կախ տան, բայց անմեղին անմեղների հետ տանջել մի՞թէ Ատաւած չէ տեսնում ու չէ պատժելու անիրտունքին:

— Չորս օր չկա հոգեանի ետ գնալը, մի վախեցնալ, էլի կգա ու կազատենք ամէնքս էլ: Թո՛ղ զբանք, թո՛ղ էդ բաները, շապիր, գնանք:

— Ո՛ւր գնանք, Նշխուն Շէաքեար, ինչ ես ասում:

— Գնանք Մէքթուրջիի տունը, գնանք, գուցէ ցաւերիդ դեղ անէ: Աս այժմ նեղ օրերից ազատենք, մէկ էն տղին երթաս հանեո, պակասները հոգաս, միթի՞մարես ու սիրա տաս, վերջը Ատաւած սղորմած է, հէլրաթ սղորմութեան դուռը կբացի:

— Գնանք, ինչ անենք. հերիք չէ մի դանից դուռ ընկնելս, տանջուելս, եկել ես, ասում ես, գընանք էն Կ. Պօլսեցու լղարի ստքն ըննելու:

— Ալմաստ, ինչ պիտի անես, «էն ձեռքը, որ չեն կարողանում կարել, պագում՝ ճակատին են գնում»: Գնանք, զործդ տես, էլի արի ու գուսոցաիր: Ուզում ես, տուր ես քո ձեռքը ու սաքդ պագեմ նորա փո

խարէն: Թոյ էն խղճալի բանտալիեալին հնարք գրա-  
նւի օգնելու, ես քո տեղակ օրական քառասուն ձեռք  
ու սաք պագեմ, գնանք, ուշ է ժամանակը:

— Գնանք, սաքերու մօ հալ շմեաց, գնալու բո-  
լորովին սիրա չկա վրաս, ճրներու մօ կարողութիւն  
շմեաց, բայց հոգիս էլ սը դուրս գա, խնայելու չեմ:

— Առաջ անցիր և հերիք խօսես:

Անշա խանութը մի փոքրահասակ, նիհար,  
գեղնած, սև գէմքով և սև աչք-ունքով ու մազերով  
կին էր: Ծննդականութիւնից լեռս, բոլորովին ուժա-  
սպառ, միշտ նստած էր գարգարուն մահճակալի  
վրա՝ փափուկ բնբուլներից պատրաստուած մետաքսով  
ու քաթանով պատած անկողնու մ: Առքի կանգնելու  
կարողութիւն չունէր: Առաւօտից մինչև իրիկուն խո-  
հարարները և ազատիները պատրաստուած էին գանա-  
զան քաղցրեղէն սեւեղիքներ, սրոնց պարբերապէս  
ներկայացնում էին ազոցկանին իրան նստած տեղը՝  
արծաթէ ընդունարաններով: Նրա ննջարանը գարգա-  
րած էր փառահեղ: Սմէն բան, ամէն սաք արեւել-  
եան էր, բացի ազոցկանի երկաթ մահճակալից: Աղջ  
ննջարանի լատակի վրա փռած էր Խորասանի մի  
մեծ դորդ, սեւ վրա զործւած զոյնգոյն ծաղիկներով:  
Չորս բոլորի բազմոցների վրա փռած էին ծածկոցներ  
սեղուսից, սրոնց վրա Կ. Պօլսում բանւած էր  
զոյնգոյն մետաքսի թելերով խիտ ծաղիկներ և բազ-  
մոցի բոլորի բարձերի երեսները Շամի գիպակներից էին:  
Լաւամսուաններից կախած էին սպիտակ բարակ բուրգի  
թելերից կարինում գործւած վարագույրներ, սրոնց վրա  
մանած թելից դուրս բերւած կիարսն ու նուշ ծաղիկները

ցոյց էին տալիս ձեռարհետի արած առաջադիմութիւնը:  
Պատերից կախւած էր Բուրասի սպիտակ երեսորբիչներ,  
գեղին ու կարմիր ապրշումի «հաշեաներով»: Մահճա-  
կալի քով կախած էր մի մետաքսի փայլուն զորդ:  
Անկիւններում գրւած էին Մակարեա, Ռուստոտանից բեր-  
ւած ծաղկուն թիթեղ երեսով սեղուկներ, Կ. Պօլսում  
ընկուզից շինւած պահարաններ և սեղաններ: Սեռնա-  
կի մէջտեղից կախւած էր կարմիր ու կանաչ ապակի-  
ներով լապտեր, սեղանների վրա գրած էին խոշոր լամ-  
պեր, աշտանակներ՝ բոլորն էլ լարմարեցւած արեւելքի  
ճաշակին: Մի խոշոր հայելի սկեզոծ շրջանակով կա-  
խած էր պատից, մի ուրիշ ծաղիկների շրջանակով զը-  
րած սեղանի վրա ու պատին կրթնած: Պատեր ու  
նկար Սիւննիի կրօնին ու ճաշակին հակառակ գարդ  
է, նամանուանդ Անշա խանութը, որ կրօնի ջերմեանդ  
պաշտպան էր, չէր ցանկանալ, որ իւր ննջարանում  
ամուսինը իրանից գեղեցիկ գէմք տեսներ:

Բալուլի երեխալի ձայնը անհանգստացնում էր  
հիւանդոտ մօրը. ծծմալերն ու ազատիները նորան  
խնամում էին մօտակա ուրիշ սենեակում:

Ճաշից լեռս ներս մտաւ աղախինն ու լալանեց  
ախրուհուն, որ գալեկը եկել է մէկ կնոջ հետ, ուզում  
է խանութին տեսներ:

— Լաւ կնիկ է դա, բայց ափսոս «գեամուր» է,  
թէ «հախգինը» ընդունէր, տանիցս չէի հետացնիլ:  
Բայց ինչ արած, ծառայութիւն շատ է արել, չեմ կա-  
րող մերժել, սասցէք, թող դա մենակ, կնոջը գե-  
ներս չրերէ, իմանամ ով է, ինչ է:

Նշխունը ներս մտաւ, մօտեցաւ, խոնարհեցաւ

ու խանութի փեշը վերցրեց, զրեց ճակատին:

— Ի՞նչ ես անում, մեղքի առկա մի քցիլ ինձ: Հազար անգամ խո չե՞ն տարի, մեծ կնիկ ես, ինձ վրա էլ աշխատութիւն շատ ունիս, ուրիշ անգամ չտեսնեմ, որ փեշերս վերցնես:

— Ի՞նչ կա, ի՞նչ է եղել. դու իմ խանութն ես, դու իմ «Սուլթանէն» ես: Քեզ շատ սիրելուց ու լորդերուց եմ անում. խո ինձ վնաս չի՞ տալ իմ խոնարհութիւնը:

— Ո՛չ, հարկաւոր չէ, աստ ի՞նչ ունիս, այդ ի՞նչ կնիկ է եկել հետդ, ի՞նչ ես բերել:

— Պերիներիցդ մէկն է, խնդիրք ունի, սաքերդ ընկած ազբսում է, որ ողորմէք, իրան դարձնել տաք իւր ամուսինը:

— Հայ է:

— Այո՛, բանտարկւած ունի, որ անմեղ է, լանցանք չունի: Եֆէնդին լաւ գիտէ գործը. եթէ զթաք վրան, այս օրից ազատել կտաք: Թշաւոր անտէր է և անօգնական:

— Կանչիր ներս, տեսնեմ:

Ալմաստը ներս եկաւ էհրամբում փաթաթուած, միայն երեսի սե քողը բաց արած, մօտեցաւ խանութին և խոնարհելով՝ լացակամած վեր առաւ փեշը ու քսեց ճակատին: Ետ քաշւեցաւ, աչքերը գետին խոնարհած՝ տիտուր ու թախծալի սպասում էր խանութի հրամանին:

— Ի՞նչ ունիս, կնիկ, ինչի՞ ես այդքան տխրալի գէմքով:

— Սուլթանէ, ասաց Ալմաստը տխրազին ձայնով,

տարել են տանս տէրը, մարել են օջախիս կրակը, լոյս արևս խաւարել է, լաց ու կոծը տունս բռնել, ողորմեցէք ձեր գերու վրա, ազատեցէք ինձ տանջանքներից: Նոր կեանք տւէք ինձ և ձեր դուան սարուկը շինեցէք, մինչև մահս պատրաստ եմ ձեզ ծառայելու:

— Ա՛յ, կնիկ, լա՛ւ: Ես այսօր էֆէնդիի հետ կիսուեմ, թնղ արձակել տայ, եթէ կարելի է:

— Ձեր արևին մատաղ, աղաչում եմ, ձեր դուռը դիմածին փրկեցէք մահից:

— Եթէ կարելի է, էֆէնդին կ'անէ, ինչքան որ հնարաւոր է: Մի լար, մի վշտանար, զնա՛ հանդրտացիր: Յաւում եմ մատաղ հասակիդ վրա, աշխատելու է քեզ փրկելու և կեանք տալու: Ետպիւր հեռացիր տունդ և սրբիշ անգամ մինչև չկանչեմ, չհամարձակւես այս տան շէմքից մտնելու:

Ալմաստը ուզեց երկու խօսք էլ տսել, բայց Անշաի աչքերն արգելեցին և նա ստիպւած քողն երեսով գցեց ու դուրս եկաւ:

— Տա՛ր տուն այդ կնոջը, ուրիշ անգամ էլ չհամարձակւես այգպիւի ներկերով զարդարւած կիներ բերել իմ տունս, որոնք մի բանի բոպէում չորս հինգ անգամ փոխում են իրանց գէմքը:

Նշխունը սարսափահար դուրս եկաւ դռնից և գոաց, թէ նախանձը ինչպէս բարբոքեց Անշաի բարկութիւնը: Գաւթիթում դայեկին սպասում էր Ալմաստն, երկուսը միասին կանանցից դուրս գալով, ընդունարանի մօտով անց կացան՝ վերագառնալու տուն: Հէնց այդ բոպէին նորանց պատահեց Մէքթուրջի էֆէնդին մի նեղ անցքում, որը Նշխունի նշաններից բանն հասկացաւ և

նորանց մօտեցաւ:

— Նանէ, ուր ես գնում, ինչի տանը չսպասեցիր մինչև իմ գալստ:

— Մի ուրիշ անգամ, էֆէնդի, ալսօր գործ ունէի, այս կնոջը տուն տանեմ, կգամ քեզ մօտ:

— Սա Ասկանի նշանածը չէ:

— Սյո, նա է:

— Արտեղից էիք գալիս, ինչ ունէիք մեր տանը:

— Անշտ խանութի մօտ խնդիրքի էինք եկել:

— Երևի, Ասկանին տեսնելու համար:

— Մենք էլ ձեր սօքն էինք եկել ընկնելու, խանութը խոստացաւ մեզ, որ արձակել տա Ասկանին:

— Եթէ խոստացաւ, թո՛ղ խոստումները կատարել տա:

— Պուք գիտէք, ձեզ ենք յանձնած, ազատեցէք մեզ գերութիւնից:

— Պործը շատ ծանր է, տեսնենք, եթէ կարելի է, այս իրիկուն խօսեմ ու համոզեմ քննիչին:

Այս միջոցին լուսամուտը բացեց և Անշտի գէմքը երևեցաւ:

Վալիի քարտուղարը էլ չկարողացաւ կանգնել ու վազեց գէպի տուն: Նշխունն ու Ալմաստն էլ շատպեցին տուն: Երբ որ հալերի թաղը մտան, ասաց Ալմաստը Նշխունին:

— Հողեմ ես գրանց դու ինչ, թէ գրանցից բան կարելի է լուսալ:

— Բան չունես, թո՛ղ աշխատեն, գործը դու ի բերեն: Բայց ինքն որ խոստացաւ, կկատարէ: Կնիկն

էլ կօտիպէ, որ կատարել տա:

— Կնիկը... կնիկը կարելի է ասէ, որ չիկնի թէ ազատել տա Ասկանին... Էգ սրբան նախանձատ ու կեղտոտ էր էդ «Ջիւջան» (գաճաճ):

— Ձէմի կարծիլ, թէև նախանձատ է, բայց բարեսիրտ է. շատ ցաւեց վրագ և ինձ ասաց, որ անպատճառ այս իրիկուն կաշխատի էֆէնդիին ու զարկել քննիչի մօտ ու գործը մեր ցանկացածի նման վերջացնել տալ:

— Պու էլ հաւատացիր, ես էլ քեզ հաւատամ: Պատարկ բան է, զատարի:

Նշխունի այդ օրու ծրագիրը ասաջ չգնաց, լաջողութեան նշաններ դես չկաշին: Բայց «լոյս տեսնելու» փոփոզով առչարած՝ լոյսը չկարեց և ասաց.

— Ալմաստ, մի լուսահաւիր: Ես այս իրիկուն մինչև որ քարտուղարին չուզարկեմ և պատասխանը բերել չտամ, անկողին չեմ մանելու: Ալսօր, ալսօր պիտի մի լաջող լուր բերեմ քեզ և ուրախացնեմ:

— Տեսնենք, գիշերս երազումս շատ մեծ փորձանքից ազատեցի ու թնջուկներում ընկա: Տեսնենք, էլ ինչ փորձանք կա գլխիս գալիլ:

— Երթո՛ս բարով, դու գնա տուն, սպասիր ինձ:

— Արաեղ ես գնում, շատ արի, թէ բան իմանաս:

— Ազամ լիքը և բարի լո բերով:

Բայց բարբը սնտի լուեր էին, գալիկը նոր ծրագիր էր կազմում:

Կամիսար փաշայի օգնականը տեղեկացրել էր

Հանգամանքները մեծաօրին, որը սաստիկ կատաղած՝  
 Հեռագրեց անմիջապէս ներքին գործոց և պատերազ-  
 մական նախարարներին իրերի գրութիւնը և անմիջա-  
 պէս պահանջեց կամ բաւարարութիւն և կամ իւր հրաժա-  
 րականք: Եւ ըստ պահանջի պատմութիւններէ միջնորդութեամբ  
 և նրանց լիազօրներէ հաւանութեամբ ու գիտութեամբ էին  
 ուղարկուած այս քննիչները և այն ժամանակ տաճկական  
 քաղաքագէտները չէին կարող անմիջապէս, սոսանց  
 գեկուցում պատրաստել տալու, ետ կանչել կամ պաշ-  
 տօնանկ անել քննիչին:

Նոյն օրը մինիստրներէ ժողովում կարգացին  
 երկար Հեռագիրը և անմիջապէս նոյն օրը Հեռագրեցին  
 գորքերի հրամանատարին բաւարարութիւն տալ քննիչնե-  
 րի պահանջին: Կատակեց զօրպետը և հրաւիրեց  
 զինուորական զիւանը (Վիւանի Հարբ), որտեղ քննիչի  
 և գատախազի տուած գեկուցման համաձայն, որոշեց  
 թող տալ Ալմաստին տեսնել Քսկանին գաղանի պահ-  
 ւած լրտեսների հսկողութեան և զինուորական պահա-  
 պանների վերահսկողութեան տակ:

Անմիջապէս քննիչը սրտեց լեզուագէտ լրտես-  
 ներ բանտի մի սենեակի պահարաններում պահել և  
 ուղարկեց երկու զինուոր՝ հրաւիրելու Ալմաստին: Իրիկ-  
 տալ զանգերը գործում էին, երկու զօրականները բաղ-  
 խեցին Ալմաստի դուռը: Կուռ գրացի հաւաքեցին  
 իմանալու հանգամանքը և շատերը տուած էին մաքե-  
 բում.—Մորան էլ են զցելու բանտ, Ոսկանի մօտ: Ել  
 էն ժամանակ սեսնենք ով պիտի հասնի սորանց օղ-  
 նութեան: Ալմաստը գուրս եկաւ և երբ զօրականներին  
 տեսաւ, զողջօղաց ու վախենալով հարցրեց.

—Կուք ինչ էք ուզում:

—Ալմաստն ո՞վ է, հարցրեց զինուորը:

—Ես եմ, սոսաց թշուառ կինը:

—Գնանք, քեզ քննիչը կանչում է:

—Էս ժամանակ քննիչի հետ ես ինչ գործ ու-

նիմ:

—Կու չունիս, նա գործ ունի, շուտ գնանք:

—Ես սոսաւօտ կգամ, դուք գնացէք:

—Սոսաւօտ իրիկուն չկայ: Ուզուած ես, անմիջա-

պէս պէտք է գնալ: Խելքդ զլուխդ առաջ անցիր, թէ  
 չես ուզում, որ քաշքշելով տանենք: Բան չկա, քեզ  
 ո՞վ ինչ պիտի տօէ, արի էլ, ետ դարձիր էլ: Մենք սո-  
 սանց քեզ չենք կարող գնալ, պէտք է անպատճառ  
 մեզ հետ գաս:

—Գնանք, որ էդպէս է: Սպասեցէք վրաս փո-  
 խեմ, երեսիս դրացիներին լանձնեմ:

—Մենք այստեղ էլ կօպասենք, դու շտապիր:

—Եկա, այս ըստէիս:

—Ալմաստը արագութեամբ վրան փոխեց, մաք-  
 րեցաւ, դռները կողպեց, ամբարցրեց, Գոհարիկին դրացի  
 Մարջան արլաին պահ տուեց, ապսպրեց, որ կովը կթեն,  
 կաթը փօսեն, տաքացնեն, երեսին ուտացնեն, մինչև  
 իւր ետ դառնալը: Տան գօան բանալիները նորոնց մօտ  
 թողեց և վերջին համբուրը դրոշմելով երեսալին, սո-  
 սաջ ընկաւ զօրականների հետ գէպի միջնաբերդը:

—Վա՛յ օրիդ, կնիկ, էդ ինչ օրն ընկար, ասում  
 էին շատերը ետեւից:

—Վա՛յ մեզի, Փողը մեր զլխին, ինչպէս պիտի  
 մենք ապրենք սրանից ետեւ:

— Ասկեարը գա ու քաշքշելով տանից մատաղ Տարս առաջ խոտնէ, Սարալն ու բերդը տանէ, էդ ով էր իմացել: Ատուած անից, դոնից հեռու պահէ:

— Տէր ու աիրական սր շունենանք, մէր աղաներն ու էֆէնդիներն սր սրբին ու անօգնականին տէրութիւն չանեն, գեռ շատ զէշ օրի ենք մնալու:

— Աղաներն ու էֆէնդիներն ինչ անեն, ահա հարուստ. հօրով ու մօրով, եղբայրներով ու բարեկամներով աղերքն, սր ընկել են էն դուռը, ով է գնում նրանց տեսնում, կամ ով նրանց համար աշխատում, երեսի վրա թողած են: Ավ սր նրանց համար խնդիրքի է գնում, նրան էլ բռնում՝ նրանց մօտ են գցում. ամեն մարդ իւր գլխից է վախենում ու չէ մօտենում դրանց:

— Կա որ էդքան գնաց, եկաւ լաւ արաւ, ահա իրան էլ գրին նրանց մօտ. տեսնենք է՛ն անմեղ երեսխային ով պիտի խնամէ:

Այժմատը աներկիւզ մտաւ քննիչի սենեակը, որը նորան սպասում էր:— Գիտես, քեզ ինչի եմ կանչել, ասաց պաշտօնակալը. մինչև հիմի դու գալիս էիր խնդրում, որ քեզ իրաւունք տամ տեսնելու Ասկանին. ես չէի թողլ տալիս նրա համար, որ ժամանակը չէր հասած, իսկ այժմ էլ շուշայրի, երբ գործը վերջացաւ, անմիջապէս մարդ ա գալ կեցի քեզ կանչելու ի. որ իմացնեմ, թէ երբ որ կամենաս, կարող ես տեսնել Ասկանին, ուղած ու տեղիքն ու հաղնելիքը տալ մեր բանտապետի ներկայութեամբ:

ԼԳ

Ա. Թ. Ա. Ջ. Ի. Ն. Հ. Ա. Մ. Բ. Ո. Յ. Բ.

— Աւրեմն այս իրիկուն կարող եմ տեսնել Ասկանին:

— Կարող էք, ահա ձեզ տալիս եմ այս ամսակը, բանտապետը կրանա ձեր առաջ, խանում, բանտի դուռը. տասն և հինգ ընդէից աւել չէք մնալ:

— Շատ բարի, շատ ու շատ շնորհակալ եմ:

— Զգուշացէք, չլինի թէ արգելւած բաներ տաք, նամակ, լրագիր, գանակ կամ գէնք: Թէեւ միշտ ձեզ քննելու են, բայց եթէ խաբէք կամ կաշտէք ու բռնելք, ձեր վիճակը շատ դժուար կլինի: Այն ժամանակ ոչ թէ միայն էլ չէք տեսնիլ Ասկանի երեսը, այլ ձեզ էլ կարող են գցել մի բանա ու չարաչար պատժել:

— Անհոգ լսցէք, սլոպիի սնօեղութիւն չի պատահիլ: Սրէնքը և կարգը լարգել ու պաշտպանել զիտեմ:

— Գնացէք, գնացէք, տեսնուեցէք, մտ թ է պէտք է շտապել:

— Շատ շնորհակալ եմ, էֆէնդի:

— Ես իմ պարտքս միայն կատարեցի:

Տոմսակը վեր առաւ Ալմաստը և վագեց զէպի բանաբ: Հունգարացին դռանը սպասոււմ էր նորան:

— Ազն, ասաց Ալմաստը, խնդրեմ ինձ տարէք Ոսկան էֆէնդիի մօտ:

— Այտեղ ալդպէս մարդ չկա:

— Բաւական է: Ել չէք կարող հաւատացնել ինձ, ահա քննիչի թուղթը, շուտ առաջնորդեցէք ինձ նրա մօտ:

— Հան, սպասիր, ոչ հիմակ կգտնեմ: Ես ինչ եմ ճանաչոււմ Ոսկան էֆէնդիին, ասո՞ւ № 7, այս բոպէին: Խնդրեմ, դուք մտէք այս սենեակը, գնամ, կանչեմ:

— Նրա սենեակը տար ինձ:

— Ա՛յ, այդ բանը չէ կարելի, ինձ իրաւունք չէ տրուած, որ քեզ տանեմ նրա մօտ: Կու սպասիր, այս բոպէիս ես նրան կրերեմ:

Ալմաստը մտաւ սենեակը, որտեղ ոչ բազմոց կար, ոչ աթոս, ոչ նստարան, այնտեղ միայն կանգնել և խօսել կարելի էր: Սենեակը այնքան մութ չէր, բայց լուսամուտների վրա կար հաստ երկաթից վանդակներ ու ձողեր: Չարգարանք ասած բանը չէր երեւում, պատերի դռնը կեղտոտած, առաստաղը սևացած ծիւց ու միւսից, յատակի վրա մատի հաստութեամբ ցէխը չորացած, կրակարան էլ չուներ: Երբ սենեակը մտաւ և ուղղեցաւ զէպի լուսամուտը, Հունգարացին դուռը փակեց և փականքում բանտին դարձրեց: Սարսափելի վատ կերպով ազգեց Ալմաստին այդ փականքի ձայնը, որի գնդոցը երկար ժամանակ ականջից չհեռացաւ: Այդ ձայնը մի վատ կասկած գարթե-

ցրեց Ալմաստի սրտում և ցաւակիր կինը քիչ մնաց, որ ճիչ ու աղաղակ բարձրացնէր ու անելանելի դրութեան մէջ թողնէր բանտապետի օգնականին: Ժամանակը գեւարութեամբ էր անցնում և ամէն մի վայրկեան սլանալիս, հագարուոր քրտինքի կաթիլներ հոսում էին Ալմաստի վրայից: Նորա սիրտը սաստիկ տրոփում էր և իրար լաջորդող այս բազմաթիւ տեսարաններից նա բուրսովին ապշած ու դարմացած, չգիտէր ինչ էր լաջորդելու շուտափոյթ ապագայում: Ոսկանը ուշանում էր, դեռ զինուորները պատրաստ չէին, որ նրան առաջնորդէին, լիսնապետի քէֆը տեղը չէր, որ հրամայէր նրանց շտապելու, փանփուշտներ չէին բաժանուած և հարկաւոր հրահանգներ չէին տրուած: Ոսկանին էլ իմաց տւին, որ իրան սպասոււմ է մի կին, պատրաստի գնալ նորան տեսնելու: Տարաբաղդ պանդուխտի սիրտութեանը չափ չկար: Զգաց, թէ որքան աշխատած պիտի լինէր թշուառ այլին, որ կարողացել էր ամէնից առաջ այցի գալ բանտարկեալին: Կեռ բնկերներից ոչ մէկը բանտում չէին բնգունել իրանց արիւնակիցների կամ կողակիցների այցելութիւնները: Նա արդէն պատրաստ էր և ինչ ունէր պատրաստելու, սեփական շորերը հագին, ֆէսը գլխին: Միայն աշխատեց մատով մազերը սանրել, պիտիքը մաքրեց, ետ ոլորեց և ձեռքովը մաքրեց շորերի վրաի փոշին ու խօտը: Սկսեց սաստիկ կերպով տրորել ձեռքերի աղտերը մաքրելու համար, շփեց աչքերը, ճակատն, ականջները և վիզը, կեղան ու փոշին պատել էին ամէն կողմը: Բանտում ջուր չէին տալիս լուսեւելու, կարինի պէս մի քաղաքում, որտեղ համարեա ամէն տան մէջ անուշ ջրերի վազող

ազբէւրներ կան, անթիւ-անհամար ամէն փոքրոցներում գաստակի հաստութեամբ ջրեր են վազում, բայց բան-տարկեալներին օրական այդ կենսական պիտուքից մի քարադրոն էին տալիս, միայն ծորաւը լազեցնելու:

Վերջապէս լիսնապետը վեր բարձրացաւ, առաջը խոռոնեց հրացանակիր զինւորներին, եկաւ Ոսկանի խցիկի դռան առաջը: Անհամբեր սպասում էր Ոսկանը դռան բացելուն: Հունգարացին բանալիները զրեց փականքումը, շուր տւեց առաջին անգամ, երկրորդ անգամ և ետ հրեց ու բացեց դռան փեղկը, և տեսց.

— Գնանք:

Գուրս եկաւ Ոսկանը. երեք զինւորներն ու լիսնապետը նրան շրջապատեցին: Գուռը կրկին փակելով՝ առաջ անցաւ Հունգարացին և Ոսկանը հրացանակիրներով եկաւ Ալմաստի եզած սենեակի դռան առաջ: Ատամնաբոյժը սովորական շորերն էր հագած, սաքերն ու թևերը շղթաներից ազատ էին և կալանաւորի կերպարանք բոլորովին չուներ, միայն զինւորներն անբաժան էին նրանից, որոնց կանչում էր Ոսկանը իւր «թիկնապահները»: Ծերուկին մօտեցաւ դռանը, բանալին շուր տւեց:

Մինչև Ոսկանի գալը ամէն տեսակ կասկած անցաւ Ալմաստի մտքով և նա բաղդին լանձնած իրան, համբերեց սարսափահար: Ամէն մի աղմուկից, ամէն մի ձայնից գողգողում էր և մահաւան գուռը հասնում: Նա իրան համարում էր բանտարկւած: Վերջին սաքի ձայներն ու աղմուկները նորան բոլորովին անհանգրտացրին, նա մօտեցաւ դռանը ու պատրաստեց ընդունելու գալորներին: Սաստիկ բարախում էր սիրտը,

չունչը կարում, երբ կրկին գնդաց փականքը և բացեց գուռը:

Անհամբեր զիմաւորեց նրան, գրկեց, գրկեց, իրար սեղմեցին կուրծքերին ու Ալմաստի ճակատը միացաւ Ոսկանի շրթունքներին, որտեղ Ոսկանը առաջին անգամ զրեց անտրատ սրտով պարզ և բարեկամական առաջին համբույրը:

Տեսարանը սրտաճմլիկ էր: Սրտատրոփ երկուսն էլ գողգողում էին, լեզուները չէին դառնում խօսելու, շրթունքները չէին բացում և ձայնը կսկսողներից չէր բարձրանում: Սրտասուքները հոսում էին երկուսի էլ այտերից, կարմրել, բորբոքել էին երկուսն էլ, աչքերը մթնել, ականջները ծանրացել. միայն սրտից սիրտ անկեղծ զգացմութեան էին լայտնում: Ալմաստի թիւնը կարճ շտեկեց, գուցէ էլ շատ տւէր, եթէ չլիշէին, որ միայն տասն և հինգ սուղ բապէներ ունէին տեսնելու: Սրանց տաղնապէ: այնքան սաստիկ էր, որ իրանք չէին նկատում դռան փեղկից զիտող զինւորներին, իսկ զինւորների էլ սրտերը շարժւեցին, գուցէ լիշեցին իրանց արիւնակիցներին. նրանք էլ սկսեցին արտասուել սրանց հետ միասին:

Բայց թէ ինչ զգաց Ալմաստը այդ առաջին համբույրի տակ, այդ առաջին գրակախառնութեան մէջ, առաջին անգամ իրար ալդպէս մօտից շուրջուց ու շօշափելուց, երակները իրար մօտեցած բապէում շարժւած արիւնների բախումից, աննկարագրելի է: Այնքան սաստիկ տզգեց խեղճ կնոջ վրա, որ քիչ մնաց ուշաթափ բնկնէր լատակի վրա, բայց բոլոր ուժը հաւաքած՝ իրան գսպեց: Նա էլ չէր կարողանում դա-

տել, նորա կրքերն էլ չէին հնազանդում իւր կամքին, նա հրճուել էր հոգով, գերիացել ջղալին գգացմունքներին:

— Ալմաստ, Ալմաստ ջան, դու մտապնել տւիր իմ բոլոր տանջանքներս, ասաց Ոսկանը, սրանից չես բանտը ինձ էլ այնքան չպիտի տիրեցնէ: Առջի արի, սիրտ առ և հանգստացիր: Ես էլ յաւ չունիմ:

— Ա՛խ, ես քու հոգուդ մատաղ, քեզ ես էգ օրը պիտի տեսնէի: Ո՞րտեղ է ճերմակեղէններդ, ինչի՞ չես փոխեր:

— Վնաս չունի, պէտք է համարել, թէ տանը-հինգ օրւա ճանապարհորդութիւն եմ կատարում լեռների մէջ, շորերս փոշուց և անձրևից ամէն բոլոր աղտոտում են և ես չեմ կտրուցանում փոխել:

— Մէհմէդ աղա, գլուխը դռան կտրած քից դուրս հանելով ասաց Ալմաստը Հունգարացուն, ինչ արիր քեզ տւածս ճերմակեղէնները:

— Տւի № 7 ին, փոխեց և կեղտոտները ինձ մօտ են:

— Երեք օրւա մէջ, այդ ինչ օրն է ընկել: Կուրացաւ միտքս, ես ինչ գիտենայի, որ ինձ կանչել են քեզ մօտ գալու: Համար իրաւունք տալու: Ես գիտէի, թէ էլի քննութիւններ են անելու, ոչինչ չառի հետս:

— Բանի պէտք չունեմ, Ալմաստ, քեզ որ տեսա, դու որ եկար մօտս, ամէն կարիքներս լցւեցին:

— Ա՛յ, ես առաւօտը կգամ և ամէն բան կրբերեմ:

— Ոչինչի պէտք չունիմ, դուր տեղը քեզ մի

չարչրիլ, քեզ տեսնելով՝ ամէն վշտերս մոռանում եմ:

— Չարչրել, էգ խօսքերը դու ինձ մի ասիլ, արևիգ մատաղ: Ես չեմ չարչարում:

— Խն չես վախենում, գիշերները անհանգիստ խո՞ չես:

— Առանց քեզ, դու գիտես, որ օր չունիմ: Կարծում եմ, որ էլի վերնաշորկու՞մն ես, պաշտպանում ու հսկում ես անտէր այրիիս: Քեզանից չեստո եղբայրս ամէն իրիկուն տուն է գալիս, տղամարդ է, բաւական է, էլ չեմ վախենում:

— Մայրիկդ տուն եկել է իմ այստեղ գալուց լետս:

— Ո՛չ, հայրս ստոտիկ բարկացել է վրաս: Մեծ եղբայրս գողտնի երկու անգամ եկաւ առաջարկեց, որ գնամ գիւղ ու հօրս սիրտն առնեմ, ես էլ չլսեցի: Ել ո՛չ հայրս եկաւ մօտս, ոչ էլ մօրս թողեց:

— Ինչի՞ չգնացիր, ինչի՞ չես կատարում ծնողներիդ ցանկութիւնները:

— Ինչպէս գնամ, ինձ ասում են, ալի տանը կաց, թրիք թափիր, ամար շինիր, կովերն ու ոչխարները կթիր ու գերի դարձիր հարսներին: Ա՛յ, երթում, անեմ, եթէ նորանք ինձ ծուռ էլ տան, ոչինչ, համբերեմ, իսկ եթէ աղջկանս չոտ ասեն, էլ ես ինչպէս դիմանամ: Հարս ու տալի գործ է չգիտես որքան դժւար է: Աւելի լաւ է քաղաքում իմ տանս նստեմ և չոր հաց կրծեմ, քան թէ գնամ նորանց քիթն ու մոռութը տեսնեմ:

— Ես չեմ ասում, որ գնաս, մնաս, ինչի՞ ես մնում, քաղաքում վախենաս աղբուրւա չճարես: Գնա՛,

տես և կրկին վերադարձիր:

— Ա՛յ, հայրս միաքը փոխել է, ասում է, էլ իմ շւաքից դուրս մի գնալ:

— Եթէ քս ապրուօտը տա, ինչի՞ չես լսում:

— Տա էլ, չեմ ուզում: Ինքը ծերացել է, եղբայրների դատումից պիտի օգնէ, որոնց կիները իմ պատճառով խեղճերի քթիցն են բերելու կերած հացը օրական տասն անգամ:

— Գոհարիկս լու է, խօսում է, ծիծաղեցնում է, ասաց խօսքը փոխելով Ասկանը:

— Քեզանից չետո նա է միտիթարութիւնս: Քանի որ գրկում եմ, քանի որ համբուրում ու գուրգուրում, ամէն փշտ մտանում եմ ու ցաւերս մեղմանում են: Երբեմն երբեմն այնպիսի ձայներ է հանում, այնպիսի խօսքեր է ասում, որ ծիծաղից թուլանում եմ: Ես մայր եմ, Ասկան, ու մօր աչքով եմ նայում նորա վրա:

— Ա՛հ, նա լու աղջիկ է գառնալու, քանի որ քեզ նման մայր ունի:

— Ինչպէ՞ս ես դու անց կացնում օրերդ, էս երկայն օրերը ինչպէ՞ս ես մի՞նեցնում, մենակ ես թէ՛ ընկերներ ունիս, արգեօք ինչ արիւնարբու գազանների մօտ են գրել քեզ:

— Ա՛յ, Ալմաստ, ս՛չ, մի վատ բաներ անց կացնիլ մօքիցդ: Գու գիտես, որ ես սիրում էի երբեմն երբեմն առանձնութիւնը: Անկերների մէջ լինելիս մտածել, խորհել և գատել գժւար էր ինձ համար: Այժմ բոլորովին առանձնացած եմ, խորհում եմ այն բաների մասին, որոնք շատ քաղցր են հոգուս համար: Գուցէ բազըր այնպէս էր տնօրինել, որ կա-

րողանամ լու քննել իմ անցեալս և սրոշել ապագաս: Անհոգ կոնց, համբերութեամբ տանում եմ...

— Բայց էդքան մտածելով, ի՞նչ պիտի գառնա վերջդ, չէ որ բոլորովին կմաշես: Այդ լու չէ, մի մտածիլ, էդքան մի խորհիլ:

— Գու բոլորովին անհոգ կոնց, Ալմաստ ջան, ես անվրդով շարունակում եմ իմ օրերս, որտիս վրա ծանրացած բեռ չունիմ, մեղքեր չեն պատել հոգիս, արատ չեմ տեսնում վրաս: Գիտեմ որ լոկ կրքերի և ատելութիւնների եմ մասնւած և կուրաբար են ինձ տանջում: Եթէ նրանք խարւած չլինէին թշնամիներիս խօսքերից, ինձ ձերբակալած օրը կ'սրճակէին, բայց դժսխականները նրանց մօտ ինձ ուրիշ գոյներով են ներկայացրել: Ա՛յինչ, համբերելու եմ, համբերութեամբ ապացուցանելու եմ, որ ես անմեղ եմ: Ազա ժամանակ, որ ամէնն էլ կզգան անմեղութիւնս:

— Ես գիտեմ, Ասկան, գիտեմ, բայց մի այդքան մտածիլ, ուժդ մի սպառիլ, կոնց անվրդով և ես լոյս ունիմ, որ էլ մի շարաթից աւել չէ տեսելու այս փճակդ:

— Մի շարաթ... եօթն ամբողջ օր... երանի՛ թէ այդքան շուտ վերջացնէին և ես կարողանայի տեսնել բարեկամներիս հետ ու միտիթարել նրանց: Ո՞վ է իմանում, որքան ցաւում են և ինչքան տանջւում են ինձ համար այս ու այն դռներում: Աստ, Ալմաստ, պատմիր, որքան չարչարեցիր, մինչև իրաւունք ըստացար ինձ մօտ գալու: Արքան աղերսեցիր, այս ու այն ազգասէր էֆէնդիների դռները բաղխեցիր, մինչև հնարք գտար ինձ մօտ գալու:

—Ո՛հ, երբէք չեմ չարչրել, ոչ մի հայ էֆէնդիի դուռ չեմ բաղխել, գնում էի քննիչի մօտ, խնդրում: Նա էլ ասում էր, «Ալմաստ, սպասիր, Ալմաստ, էս օր էլ կաց»: Ես էլ ճարահատեալ սպասում էի:

—Ալմաստ, ստում ես, Ալմաստ, դու շատ նեղ-ւեցիր, շատ աղերսեցիր սրան նրան, մինչև իրաւունք ստացար, մի ծածկիլ ինձանից տանջանքներդ:

—Ինչէր ես խօսում, Ոսկան, ինչի ես ինձ վրդու-վում: Տանջեցի, ինչ հարկաւոր էր, արի, հաստ ցանկութեանս և ահա մօտդ եմ: Գու ինչի ես հետա-քրքրում արածերովս. միթէ ես քեզ հարցնում էի, թէ ինչ մեջոցներով ինձ օգնում էիր:

—Բայց ես զիտեմ, զգում եմ, որ դու շատ լուռեցիր, շատ կարմրեցիր ու կապուտկեցիր, մինչև այդ իրաւունքը ձեռք բերիր: Ալմաստ, դու անկեղծ սրտով և հոգով աշխատեցիր ինձ համար, գլուխդ վր-տանգի գնելով, առանց մտածելու, որ կարող են իմ պատճառովս քեզ էլ տանջել: Գու ո՛չ թէ միայն զլիսիդ հետ խաղ էիր անում, այլ աղջկանդ էլ մոռացել էիր, որը առանց շուքիդ, տապ արեւի տակ կարող էր խան-ձելի, չորանալ ու փշրւել: Գու, միայն դու ես աշխար-հի երեսին ամենահաւատարիմ և հաստատ ընկերս, դու մենակ այս պանդխտութեանս մէջ ինձ թիկունք կանգ-նեցար, քեզ շատ եմ պարտական, ան... Ալմաստ ջան... Երանի թէ հինգ տաս տարի առաջ սկսած լինէինք մեր ծանօթութիւնը և իրար հետ անբակտելի... կապե-րով... հիւս...:

Արտասուքները հեղեղի նման հոսեցին Ոսկանի աչքերից, ձայնը կորեց, կոկորդը չորացաւ, սիրտը ու-

նեց, հեկեկոցը սաստկացաւ և տաքութիւնից այլոււմ էր:

—Ոսկան, Ոսկան, ես այդ խօսքերը բոլորովին լսելու չէի եկել քեզ մօտ: Ոսկան, դու ինչ որ կարո-ղացի ես, արել ես ինձ համար, առանց խնդրելուս, կամ ասելուս, պէտքերս հոգացել ես: Ես օր էլ հերթն իմս է, միթէ դու պիտի էդ խօսքերով դիմես ինձ ու... Հանգստացիր և զիտցիր, որ Ալմաստի կեանքը քեզ համար զոհւելու պատրաստ է: Ել չլսեմ էդ խօսքերը, էլ մտքիցդ չանցնես էդ կարծիքներդ: Համազիր, որ ես ընկերական պարտականութիւնս եմ կատարում, ուրիշ ոչինչ: Իսկ ես համոզւած եմ, որ եթէ դու իմ տեղս լինէիր, տասն անգամ աւելի պիտի աշխատէիր:

—Գու արիր այն, ինչ ես ասաց տարում չէի կարող կա... տա... բել:

—Արի, չարի, վերջ տուր և էլ կրկնութիւններ չլինի: Չեմ ուզում, որ երեսիս տան էն բանը, որ ես անելու պարտաւոր էի և եմ:

—Գու հրեշտակ ես, Ալմաստ, դու երկնային ոգի ես, այս աշխարհի հասարակ կնիկներից չես:

—Հրեշտակ եմ թէ դե, քո ազգիցդ եմ, քո ընկերդ եմ, քո մտերիմդ եմ և դու էլ իմ ցեղիցն ես:

—Երկինքը զթաց վրաս, պատրաստեց այս վշտալի օրերիս միսիթարիչ, որը տարիներ առաջ սկսեց իր սիրովանքը:

—Գու պատրաստեցիր, Սուրբ Հոգիի շնորհքը դու փչեցիր ու արծարծեցիր հոգուս մէջ:

—Նուտ արէք, ժամանակ է բաժանւելու, տասն ու հինգ քայլէն լրացաւ, ասաց բանտապետը:

— Մնաս բարով, Ասկան ջան, մնաս բարով, ես առաւօտ վաղ կգամ և պէտքերդ կբերեմ: Համբերիր, Աստուած ողորմած է, իւր արդարութեան դռները կբանա, կլուսաւորէ դատաւորների խաւարած աչքերը, շուտով նրանք կտեսնեն անմեղութիւնդ և կրկին կվերագառնաս էն տունը, որը քո խնամքիդ կարօտ է:

— Գնա՛, Ալմաստ ջան, գնա՛ հանգիստ: Ես էլ վիշտ չունիմ... բացի... Կոստ... մոռացա, ամէն ցաւերս թեթեացաւ, ոչնչի էլ պէտք չունիմ: Գու լրացնում ես ամէն պէտքերս, դու ինքդ սպեղանի ես խոցերիս և քեզ տեսնելով՝ առողջացան վերքերս: Գնա՛ ու գգուշ կեցիր, հեռու սա՛հէ անձդ վտանգներից, ամէն պէտքերս հոգացւած է... գնաս բարով... համբուրիր Գոհարիկիս, լաւ պահպանիր քեզ էլ, նորան էլ:

— Խանձմ, բաժանուեցէք, ժամանակը անցաւ:

Գրկեցին, իրար կուրծքին սեղմեցին և բաժանուեցին: Ասկանը իւր հրացանակիրներով գնաց, չհամարձակւելով ետ դարձնելու աչքերը: Արտասուքի խոշոր կաթիլները գլորւեցին Ալմաստի ալտերի վրայից: Տարբաղդ կինը հեկեկալով փաթաթւեց էհրամում և քօղը երեսը գցելով՝ դուրս եկաւ:

Աերջալուսի ժամանակ էր: Արեգակը «Օվալի» դաշտի հեռաւոր ծայրում սարերի ետևից մալր էր մըտնում, մութ կարմիր մանուշակի գույներով պոպոզուն էին լեռներն ու ամպերը և ոսկեշող ճառագայթները կիսաճաճանչ սփռւել էին դէպի բարձունքը: Ողբ խաղաղ էր, տօթը նւագել և բաց կապուտ երկնակամարը աստիճան առ աստիճան մթնանում էր: Միայն քաղաքի բարձր շինութիւնների վրա կային ու փայլում էին

արեգակի շողուն ճառագայթները, սաւերը ամէն կողմ տարածւած էր և խաւարը սաստկանում էր հետզհետէ:

ԼԳ

Ա.ԼՄԱՍՏԸ ԿՕՐԾՈՒՄ Է

Մութը կոխած և ճրագները վառած պահին տուն դարձաւ Ալմաստը և վագեց նախ Մարջան արլանց՝ գրկելու Գոհարիկին և ուրախացնելու բարեսիրտ գրացուն: Չորս հինգ հասակաւոր կանալք մթնումը նստած էին Մարջանենց պատի տակը, քարէ նստարանների վրա ու վշտակցում իրար հետ, իրանց մատաղահաս գրացու գծբաղդ վիճակի մասին:

Գար կտրեցա, Մարջան, երբ տեսա էն անօրէն ասկեաղները, փախիցս գլուխս պտտեցաւ, աչքերս մթնեցին, ձեռքերս ու սուքերս դողացին: Մտքիցս անցաւ, որ էլ էս կնոջ վերջն հասաւ, ետ գալու չէ: Կնօրը Համագաստ էֆէնդին աղբօրդ տակ էր որ ինձ ասէ, թէ երթամ Ալմաստին ասեմ, որ սուր կտրէ հիւքիւմաթի գոներից, գլխին մեծ փորձանք են բերելու, թէ որ էլի ամէն օր երթա, գլուխս ցաւացնի: Ես մեղքի տակից դուրս եկա, ասի, որ չհամոզուեց...

— Արլա ջան, ինչ ես ասում, հեշտ բան չէ, խեղճ կինն ինչ անէ: Գիտես, ինչ նեղութիւններ քա-

չեց մինչև Ոսկանի գալը, էն օրէն տից հանեց էդ կնկան, նա որ չլինէր, Ալմաստը կորած էր: Առանց նրան էլի սև օրն է ընկնելու: Մէկ էլ որ մարդ ապառաժ լինի, չի գիմանալ. տանիցդ մարդ բերդուժը պառկած լինի, տէր ու տիրական չունենա, լուսովդ մնացած լինի, ինչպէս երեսի վրա թողնես: Չորդ է Ալմաստի արածը ամէն կնոջ 'գործ չէ. մեզանից ոչ մէկը, երկայն մագուր՝ էդ բաները չէր կարող անել, բայց նեղութիւնը ամէն բան անել կա:

— Խեղճ կնիկ, էս ինչ օրը մնացինք: Մեր մէջ, թուրքի մէջ, ով էր իմացել, որ կնիկ մարդուն բերդ տանեն, գիշերս ինչ օրի մէջ է մնալու անտէր կնիկը էն անօրէն չնչհաւատների մէջ:

— Ե՛հ, դուք էլ խէր խօսեցէք, ինչի՞ պիտի պահեն, քննութիւն կունենան, կպրծնին, կգա:

— Ասուած, Ասուած, որտեղ էս, լսիր ու կատարիր մեր խնդրածքը, Ոգորմած Տէր:

— Այս միջոցին Ալմաստի քայլերի ձայներն իմացան և ամէնը միմուռը աչքերը սրեցին ու նայեցին զարդին:

— Քա՛, Ալմաստն է, աղջիկ, դու ես:

— Հա, Մարջան արբա ջան, էս եմ: Գոհարս ինչպէս է, խո՛ չէ՛ քնել:

— Արտերումս մեր արիւնները ջուր կտրեց, աչքներս ճանապարհդ աշելով մարեցին, մենք քո ցաւովդ տապկոտեցինք մինչև հիմի, մի մատ աղջիկ ունի՛ս՝ նորա դարդն էս անում: Մի վախենա, կմեծանա ու այնքան պատից պատ կգարնուի, մինչև հոգին դուրս գալն, որ...

— Աբլա ջան, ինչ էս ասում, էս զարնուեցի հերիք չէր:

— Թէ մենք չենք հարուում ամէն օր խնոցութանի նման, նա էլ չի պչպչա թթւած մածնի պէս:

— Էս օր, երևում է, արբա ջան, քու սիրտդ շատ է ելել:

— Ամէն օր, ամէն օր դու որ ոլորում ես, գալարում ու տրտնջում, էս օր էլ ես լեզու եմ ելել: Որտեղ գնացիր, ինչի՞ էօքան ուշացար, որտեղ մնացիր մինչև հիմի:

— Մի սպասիր, գնամ Գոհարիս գրկեմ, ետև կպատմեմ, պէտք է առաջ նորա աչքերը պագեմ... Գնացի, տեսա Ոսկան էֆէնդիին, հետը կէս ժամ խօսեցի, լաւ է, առաւօտ էլի կգնամ տեսնելու...

Շտապելով ներս մտաւ՝ խօսքերը կիսատ թողնելով:

— Ա՛յ, դու բէմուրադ չլինէս, հա՛, խօսքը կիսատ ներս վազեց մատղաշին տեսնելու: Գարիս մատաղահասներն էլ փոխել են... Մենք երբ կարող էինք մեր աղոցը նայել, ծիծ տալ, հոգալ մեր մեծերի և մեծ կնիկների մէջ: «Գոհարս, Գոհարս» ասում է, ու վազում «գրողին ջուր տանելու»-ի ետևից:

— Փոռք Ատեղծողին, եկաւ, էս շատ ուրախ եմ, բայց աւելի ուրախացա, որ էն դուրբաթ աղին էլ տեսել է: Քա, մի տեսնենք, ինչ է պատմելու:

Ալմաստը վերագարձաւ երեսէն գրկումը, անգագար համբուրելով ու զգւելով:

— Ա՛խ, էս էն քո արեւիգ մատաղ, էդ քո թաթիկներդ ուտեմ, աչքերիդ ու թերթի իջքներիդ նայե-

լով զմալլեմ:

— Ալմաստ, դէ, ասան, տեսնենք, էս օր ինչ ան-  
րիբ, էգ ինչպէս եղաւ, որ քեզ իրաւունք տւին տես-  
նելու Ասկանին:

— Քալա ջան, ես խաբար չեմ, մի լոյս ելաւ,  
չգիտեմ որ տեղից: Ինձ կանչող քննիչը տեղն ու տեղը  
զրկեց Ասկանի մօտ, տեսա, խօսեցի, լաւ է, կարելի է  
շուտով էլ թողնեն:

— Ախար, մէկ սրտմէ, ինչպէս էլաւ:

— Ալմաստը նկարագրեց մի քիչ ընդարձակ:

— Լաւ նշան է որ էգպէս է, շուտով, շուտով  
լոյս կա, որ բոլորովին աղատեն, ասացին պառաւներն  
ու գիշեր բարի ասելով՝ բաժանւեցին,

Ալմաստը իւր տանը, սեքիւն, իրան սովորական  
տեղն էր նստած: Կարում, կարկատում էր Ասկանի  
ճերմակեղէնների կոճակներն ու քանդած քները: Նա  
երգում էր ցած և անուշ ձայնով ու շարունակում իւր  
գործը: Երգը իրան յօրինածն էր, եղանակը ծանր,  
մալրեցի, աւանդական, ձայնը սերովբէական, մեղմ և  
բազըր:

«Էն ի՛նչ օր էր, երբ ես ո՞ր դռնէ իւրար մե-  
տին նստած էիւր.  
Սրտերումս ի՛նչ կար չկար, իրար սուս՝  
պատմում էիւր.  
Այնպիսի մե՛ջ, սե՛ն ցաւերից, մենք փայտեւր  
ուխտում էիւր.  
Անկեղծ սրտով, ազատ կամքով իրար ընկեր  
ընտրում էիւր:

«Էն ի՛նչ օր էր, երբ բացուել էր պարտիզի  
մեջ կարմիր փարդը,  
Հայերու պէս իրար սրտում տեսնում էիւր  
իրար դարդը,  
Փոխանակում ոսկի մատնիք փայտում էին  
մեր մատներին,  
Ե՛ն ձեռագրով մետաքս աղբուխ կուպէլ էի ես  
քո վզին:

«Էն ի՛նչ օր էր, երբ ջան ասում ես ջան  
սում հրձուում էիւր,  
Ժողովիներում թողկոտելով ծակի պէս ակ-  
նոց էիւր,  
Պաղ աղբիւրի ջրով ակնուայ մենք իրարու  
թմջում էիւր,  
Վարդապետի փայտի թերթեր չորս բոլորը  
փոտում էիւր:

«Էն ի՛նչ օր էր, երբ . . . . .

— Ափսոս, «էն օրերը» ուշ եկան ու շուտ ան-  
ցան, և ես լիմար գտնեցի և նրանց յարգը չիմացա...  
Ախ... Ալմաստ... էս ինչ ամպ օրեր տեսնելու գառա-  
պարտած էիր, էս ինչ օրեր գրւած էին ճակատիգ:  
Անցան բոլորը... կանցնին և սրանք... կգա գարունը,  
նոր գարունը, և ես կփթըլեմ նոր կոկոններով...  
Հը՛մ... աշխարհք. երէկ ինչ էի մտածում էս ժամում,  
էսօր ինչ է անցնում իմ մտքից: Քիչ է մնում, որ  
բոլորովին մոռանամ անցեալը... և ներկան... ապա-  
գան: Գիտես թէ արդէն ազատւած է Ասկանը... փուչ

բաներ... առանց ջուրը տեսնելու, բորլիկցել եմ... Ինչ էլ որ լինի, ես կարծում եմ թէ սաստիկ թեթևացել եմ... սրտիցս վերացել են ծանրութիւնները և ես ուրախ եմ... առանց իմանալու, թէ երբ պիտի ազատեն Ոսկանին, կամ աւելի լաւ ստա՞ծ, թէ արդեօք ազատելու են նրան... Բայց բնագղումս ինձ չէ խաբում, իմ զգացումները միշտ իրականանում են: Գիշերը երազս... ետեւիցս բնկնողները և վիշապաւոր կառքն իւր կառապանով ինձ ազատեց, ինքն էլ ազատեց, պիտի կատարւի...: Ա՛խ, ես որքան երջանիկ և որքան բաղբաւոր կլինէի, եթէ զլուխ զալին ցանկութիւններս... Բայց կասկածի տեղիք չկայ, ես ինչի՞ եմ լիմարանում, նա ասաց, ամէն բան պարզեց: «Երանի՛ թէ տասը տարի առաջ, ասաց, իրար պատահած լինէինք ու...» Որ դուրս եկաւ, կարծիք չկայ, որ վերջանալու է...: Բայց ես որքան ցնորա՞ծ և կուրացա՞ծ եմ կրքերովս. ինչն է ինձ ստիպում վազելու, հասնելու, օգնելու, կրքերս թէ ընկերական սէրը... Ալմաստ, Ալմաստ, հոգով շատ ստոր ես Ոսկանից, դու նրա լծկանը չես, չես էլ կարող լինել, արժան էլ չես նրա ստքի եղունգի կարած, դէն զցած կտորն անգամ... Դու էս բոլորը կատարում ես միայն ցանկութեանդ, կրքիդ ու շահիդ համար, իսկ էդ ցածութիւնով բարձրանալու չես նրա անկեղծ և ամենապարզ ընկերութեան բարձր ստաիճանին: Մի՞թէ նա, որ առանց որ և է ակնկալութեան կատարում էր ինձ համար էնքան բարիք, իմ կողմից փոխարինարար ստանալու իրաւունք չունի և ես այս բոլորը ապագա օգտիս համար եմ կատարելու: Մի՞թէ ես, մինչև վերջը, լոկ կրքիս անձնատուր եղած՝ վազելու եմ նրա ետեւից...

Բայց չէ, ես կատարում եմ լոկ ընկերական պարտականութիւնս, իսկ այդ բանը միայն անըջական ցնորքս է, որը պտույտ է գալիս ուղեղիս մէջ, սրտեղից հանելու և վանելու անկարող եմ... Բայց ս՛չ. ես ինձ էլ խաբում եմ, իսկական ցանկութիւնս է, որը ձեռք բերելու, որին հասնելու համար է, որ կեանքս զոհում եմ, իմ մեղքս է, ես ինձ եմ խոստովանում և արդարն ու ճշմարիտն էս է:

«Ոսկան, Ոսկան, դու սովորական մահկանացուներից չես, դու երկնային էլ չես, որովհետև աշխարհի երեսին մեր մէջ ես ապրում, դու մի անլուծանելի հանելուկ ես, արարքդ միայն հրեշտակեերին լատուկ է:

«Քեզ ճանաչելուց չետո՞, հոգուդ մօտենալուց չետո՞, քեզ չսիրել, այդ անկարելի է ու բոլորովին անհնարին:

«Բայց էնքան բարի ես, էնքան ազնիւ հոգի ունիս, էնքան պարզ սիրտ ունիս, որ պիտի գիջանիս և հասցնես ինձ մուրազիս...:

«Ա՛հ, մէկ ինձ տեսե՛մ հրեղէն վիշապներով լծւած կառքիդ վրա, օթեւանդ մտնելու էս աշխարհում, էլ էն ժամանակ, էն օրից ու ժամից չետո ուրախ, անխուով սրտով պիտի փակե՞մ աչքերս մահւան հրեշտակին պատահելիս և փափագներիս հասած պիտի մեկնիմ աշխարհից: Գիտե՞մ և համոզւած եմ, որ իղձերս փորումս միայն ցանկութիւն չսպիտի թողնես... Ոսկան, դու ինձ տւիր ամէն բան, ամէն բարիք, բարձրացրիր, լուսաւորեցիր և մարդատեսացիս մէջ սէր ու համակրանք լարուցիր դէպի ընկերն ու ընկերականութիւնը. էս բաղձանքիս էլ հասցրու, որ կատարեալ լինիմ: Բայց որ-

քան անգութեմ, միթէ էդքան պահանջ կարելի է ունենալ, միթէ պարտաւոր է նա դովացնելու իմ տապահած ու չորացած տապս: Ա՛չ, նա պարտաւոր չէ, միայն թէ նա էլ զգում է փոխադարձարար, ինչ որ պտույտ է գալիս սրտիս ու ուղեղիս մէջ, նա էլ ինձ սիրում է... Հետևապէս մենք իրար ենք պատկանում, մէկ մէկի ենք բազդաւորելու: Ել էն օրից լետո, էս օրից էլ սկսած, աշխարհի երեսին քեզանից լսի սըրտումս ու հոգումս տեղ չէ մնացել և չէ էլ լինելու ուրիշի համար: Դուն, գուն ես սէրս, սրտիս տէրը:

«Բարէ... էլ... ինչ է լինելու իմ վիճակը, եթէ դու փոխադարձաբար սէր չզգաս, չխղճաս ոգորմելուս վրա... կամ թէ... ան, Աստուած իմ... տոս ուրիշին սէրդ և ես... դուն երեսիս փակւած, աշխարհի երեսին խալտաւակւած, սիրտս ու հոգիս կեղեքւած, թոքերս ու աղիքս կտրուած, որ ջուրն եմ ընկնելու այրած ու բորբոքած սիրտս գովացնելու համար... ինչ ձուն է գալու գլխիս, որ քարովն ու ապաստժովն եմ տալու գլուխս... Էս աչքերս մթնելու են, ականջներս խլանալու, սիրտս պատուելու և սղջ սղջ գնալու ու դերեզմանս մանելու եմ...: Բայց ինչ չար մտքեր անցան... ինչի տակն ու վրա է լինում սիրտս, ս՛հ, շատ, չափազանց շատ լիմար եմ: Բարին չար չէ կարող լինել, բարութիւնից չարիք ինչի չուտալ: Ոսկանը ծնւած է միայն բարիք գործելու համար և ես ալդ բանը լու հասկանալով, էնքան փորձեր աչքովս տեսնելուց լետո, շօշափելուց լետո, էլ ինչի եմ կասկածում, ինչ տարակուսանքների տեղիք կալ: Նամանաւանդ որ նրա ձեռքից, բացի փոխադարձ սիրո զգացումներից, ուրիշ

ոչինչ չեմ նկատել: Երեկան համբոյրը... ս՛հ, դեռ դողում են ջլերս, դեռ սաստկութիւնով գարկում է արիւնս ճակատիս երակներում՝ նրա շրթունքների տեղը... նա առաջին նշանն էր, նա առաջին քայլն էր մեր փոխադարձ սիրո արտայայտութիւնների... Ելի կասկած... Նրա խօսքերը, արտասուքները, ձայնը, բոլորն էն նշաններն էին, որոնք արտայայտելու անկարող էր... Ես կարծում եմ, որ նա չէ կարողանում պարզ խօսել և պէտք է աշխատել, որ օր առաջ նա էլ ես էլ իրար պարզենք ամէն բան:

«Նրանից լետո՛ւ...»

Աննկարագրելի կերպով ուրախ և պայծառ ապագա էր երազում Ալմաստը, հոգևով և երևակալութիւններով մտնում էր գալիք կեանքի տեսարանները, ողբգմայլ նայում էր նրա վրա և հրճուում: Երբեմն նստում էր, աչքերը լառում դէպի երկինք, երբեմն անշարժ կանգնում, դիտում մի առարկա, երբեմն արագ արագ շարժում, ձեռքերն ու ոտքերը, գլուխն ու ուսերը շարժում, երբում էր և լափշտակում մտկաբերութիւններով:

— Բայց, սոսայ լանկարձ, անհոգ նստել եմ, ցնորքներով ժամանակս անց կացնում, առաւօտը պէտք է գնալ և ես դեռ ոչինչ չեմ պատրաստել:

Ներմակեղէնների կարն ու կարկատանը կիսատ է, շորերը հարթուկել չեմ, բազարից գալիք նիւթերը չեմ բերել տւել և չեմ խորհում ոչինչ առաւօտեան անելիքներիս վրա:

ԼԵ

ՈՐՈՇԵՍԼ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաւօտն Ալմաստը ամէն բան պատրաստած, տւեց ժամկոչ Յարօլի ձեռքը, առաջը խառնած դիմեց միջնաբերդը: Քննիչը անմիջապէս նոր տոմսակ տւեց և բանախ դռները անարգել բացւեցին նրա առաջ: Հունգարացին հրացանակիր զինւորի հետ Ոսկանին բերեց մի և նոյն սենեակը: Այս անգամ Ոսկանը կրճքին սեղմեց Ալմաստին և քաշեց ձեռքը, պագեց, ասելով.

— Այս ձեռքին, այս ձեռքին ես շատ եմ պարտական:

— Ես էլ քո ձեռքերից ժամանակին շատ եմ փոխ առել և վերադարձնում եմ, այժմ հերթն իմս է, ինչ ես ցանկանում:

— Ալմաստ ջան, ոչինչ, ոչինչ. դու որ ինձ հետ ես, ամէն ցանկութիւններս լրացած են և ես ինձ զգում եմ մարդկանցից ամենաերջանիկը:

— Ահա, էս ճերմակեղէններդ, փոխւիր, սիրելիս, ես դուրս գնամ դռանը կսպասեմ և էս էլ ամառնալին միւս շորերդ, տուր տանեմ դորանք էլ լուանամ:

— Աչինչ, երբ խցիկս դնամ, այն ժամանակ

կփոխեմ և Ահմէդ աղայի հետ կուզարկեմ, ժամանակներս շատ քիչ է, այս բալէները չխրցնենք:

— Թանկ է, շատ թանկ է, բայց աչքերս խաւարէր ու շտեանէի քեզ էդ կեղտուած շորերում:

— Աչինչ, հոգիս, ոչինչ, սրտերս մաքուր լինին, հոգիներս խտակ: Սրանք բոլորը կանցնեն և ամէն բան կմտնան:

— Չալ, շաքար բերի, բայց այստեղ հեշտաւա չկա, եռացած ջուր դուր է ճարելը. ինչպէս ես անում, ջուրն ինչպէս ես տաքացնում:

— Այդ մասին հոգ մի անէք, խանում, ասաց դրսից բանասպետի օգնականը, մեր պղնձէ չալնիկը միշտ օճախի վրա եփում է, չալի ժամանակ պատրաստում եմ ձեռքովս և ասում ասիս:

-- Շատ շնորհակալ եմ, Ահմէդ աղա, քեզ նման բարի մարդիկ թեթեացնում են թշուառների տանջանքները:

— Ի՞նչ անեմ, մեղք եմ, օգնելու է, ինչպէս չէ, ասում էր մտքումը: Հունգարացին, թեթեացնում եմ ձեզ նման տխմարների քսակները:

— Ամբողջ օրը ինչպէս ես մթնացնում, Ոսկան, ինչով ես պարապում, միշտ մտածում ես: Կդքան էլ մտածել, նիհարացել ես, համբերութիւնդ ուր է, հատու: Դու որ աշխարհին համբերութիւն էիր քարոզում, չէս կարող դիմանալ մի քանի օր: Կսօր քննիչն ասաց, որ շուտով կվերջացնեն իրանց վճիռքը և էն ժամանակ կորսուի, թէ երբ եմ արձակելու քեզ: Եօթն ութը օր, այդքան էլ չի տևիլ. համբերիր, համբերիր, ինչի՞ ես այդքան մտմտում:

— Աչինչ մտածութիւններով բան չունիմ... Ես լաւ համուզած եմ, որ նրանք շուտով տեսնելու են անմեղութիւնս և գղջալու իրանց արածի վրա:

— Կրան կարծիք չկա, հոգիս, օխ, Ասաւած, ես էն Քս զօրութիւնիդ մեռնեմ, որտեղ ես, հասիր ու լուսուորէ սրանց մտքերը ու ազատէ ինձ...

— Անհոգ կաց, Ալմաստ, ես ինձ լաւ եմ զգում, պահպանում եմ շատ լաւ, մի վախիլ:

— Էս օր մի բնութիւն բարձ և թեթեւ, խտակ վերմակդ բերի, Ահմէդ աղայի մօտ է, բերել աուր սենեակդ:

— Խանում, քեզ ասացի, կրկնում եմ, ես կողինք չեմ կարող տալ, ինձ հրամայւած է, անկարելի բան է, չեմ թող տալ, մինչև որ իրաւունք չբերես:

— Ա՛չինչ, Ահմէդ աղա, ո՛չինչ:

— Ա՛չ, ո՛չ, ո՛չ, էդ բանը անհարկն է, ես չեմ կարող գիջում անել և պատժուել: Օրէնքի մի խազն անգամ ծուելու իրաւունք չունիմ, թո՛ղ մեծուորս հրամայէ, ես պատրաստ եմ կատարելու:

— Լա՛ւ, լա՛ւ, Ահմէդ աղա, ես կգնամ քննիչի մօտ և կխնդրեմ: Իրաւունք բերելուց լետո ինչ ես ասելու:

— Աչինչ, ես մեծուորներին հնազանդելու միշտ պարտաւոր եմ:

— Ալմաստ, ինչ կարիք կա բարձի ու վերմակի, միթէ ես ճանապարհորդութիւններ չեմ արել և վարձուած չեմ առանց զբանց ապրելու: Ա՛չ գնա, ո՛չ խընդրիր, բոլորովին աւելորդ է, տար տուն, մի շաքաթու համար ինչ կարիք նեղութիւնների:

— Նեղութեան բան չկա, կմտնեմ քննիչի սեն-

եակը, երկու խօսք է, կասեմ և կվերջացնեմ:

— Ինչո՞ւ ես գնում անդադար նեղութիւն: տալիս. գնա՛ տուն, քիչ հանդստացիր: Ինչ էլ որ պատահի, դու միշտ աշխատիր գլուխդ ու պատիւդ պաշտպանել: Կարիք չունիմ գրանց, ետ տար:

— Ի՞նչ անհոգ կաց:

— Քեզ ասում եմ, որ շուտ շուտ մի գնալ դըրանց մօտ, Ալմաստ, յսիր խօսքերս:

— Ես միշտ լուծ եմ քեզ, խօսքդ չբանելու անկարող եմ, մի վախիլ, գիտեմ և լաւ սովորած եմ գլուխս պաշտպանելու յարգը: Բայց անկարող եմ համբերել և քեզ թողնել միշտ խօտի բարձի վրա գլուխդ դնելու ու քնելու: Կինդրեմ, կաշխատեմ, որ իրաւունք չլինի, իսկ գլուխները չեմ կարող կտորել:

— Զգուշացիր, Ալմաստ, զգուշացիր, այնպէս բան բռնիր, որ չգառնացնես իմ կեանքս:

— Անհոգ կաց, ես գժւարութիւններ չեմ կրում գնալիս ու խնդրելիս: Սերուցք եմ բերել, գաթա, կաթն ու հաւկիթ: Փող ունե՞ս մօտդ, որ ուզածդ բերել տաս:

— Կեռ կա, պէտք չունիմ...

— Ա՛. ու այս հինգ հատ ճերմակ մէջիդի էի քաւորդները, ինչ որ պէտք գա, բերել տուր: Ծխում ես, բերածս Բաֆրայի ծխախոտից էլ ունե՞ս թէ վերջացաւ:

— Խանում, շատ շատ է ծխում: Ես էլ թէև ծխում եմ, իսկ դա չափն անց կացրել է: Լա՛ւն է, շատ լաւ ծխախոտ է, սրտեղից էք ճարել, գովական բան է:

— Ես էլի կրեբեմ, անհոգ կացէք: տեղը զիտեմ:  
Բայց, Ասկան ջան, շատ մի ծիխի, գիտես, որ վնասա-  
կար է:

— Աչի՛նչ, վախենում ես քիչ ապրեմ աշխարհի  
երեսին լեզիութիւններ ծծելու:

— Կեանքդ, կեանքդ խնայէ, առողջութիւնդ  
հարկաւոր է...

— Ժամանակ է, ժամանակ է, իմանում, շտապե-  
ցէք:

— Մինչև առաւօտ մնան բարով, ցտեսութիւն:

— Առաւօտ կսպասեմ, Ալմաստ, մի ուշանալ,  
բոլորէները համարելու համ մինչև գալը:

— Ձեռքիցս գա, քովիցդ չեմ հեռանալ, բայց  
ինչ արած, էզպէս էր գրեւծ ճակատիս: Համբերիր,  
սիրտդ լայնացրու, ինչ արած, պէտք է տանել, մինչև  
պարզի ամէն գործ: Էն ժամանակ դու տես, թէ ինչ  
ուրախութիւն է կատարելու Ալմաստը:

Հունգարացին առաջ բնկաւ, Ասկանը հետեւեց  
նրան և զինուորը հրացանը ուսին մեկնեցաւ նրանց հետ:  
Մի ախուր հալեացք զցեց Ասկանն իր շուրջը, աչքերով  
հրաժեշտի բարե հասցրեց Ալմաստին ու հեռացաւ:  
Ասկանին ետեւից նայելիս՝ արտասուքով աչքերը լցւեց,  
մի «ճՖ» քաշեց երկար ու վշտալի, և զանգաղ քայլերով  
հեռացաւ այրին:

Ալմաստը որ շարունակ գնում էր Ալմաստը Ասկանի  
մօտ, ամէն օր միևնույն բաները կրկնում էին և թշուա-  
րալի բերանից ու վրայից կտրում հասցնում էր բան-  
տարկեալին: Ինչ որ Ասկանի մտքովը չէր անցնիլ ուտե-  
լու, հագնելու կամ զրօնելու, Ալմաստը նրա համար

գտնում, տանում էր:

— Ալմաստ, ասում էր Ասկանը մի օր, ախոր էս  
ինչէր ես անում, շուտըացել ես, փոխել ես: Քեզ ո՞վ  
ասաց, որ այս ճակատերը անես, թանկ ու կրակի զին  
այս ժամանակին խաղաղ առնես ու բերես ինձ բան-  
տում:

— Ի՞նչ թանկ, ի՞նչ բան, հոխան երեսուն փարա  
է: Մի հոխա բան եմ բերել, շատ բան է:

— Ալմաստ, սե՛մ ես խաբում, այժմ կարծում 0-  
գոտտութի կիտից առաջ խաղաղ, այն էլ երեսուն փարա:

— Ե՛հ, երեսուն չլինի, լիսուն լինի, մե՛ծ բան է.  
երկու հոխան հարիւր փարա, օխո՛ւ, երեք հոխան...

— Ձէ, մէկ լիար...

— Լա՛ւ, լիար չկա, բայց կէս լիար, երեք հո-  
խա — աւելի է ու պակաս չէ:

— Ի՛նչ որ է, դու խո մենակ չես, Ահմէդ ա-  
ղան էլ կուտէ, յալանի բան է, ուրիշ բանտարկեալներ  
էլ կան, նրանց էլ բաժին կհասցնէ: Սր է, երբեմն  
խմելով, երբեմն էլ խօսելով ու գլարճանալով կգա,  
կանցնի, կերթա...

Բայց քննութիւնները երկարում էին, Կ. Պօլսից  
նոր նոր հրահանգներ էին ստացւում և այդ ճրագիւ-  
րների, շրջաբերականների համաձայն քննութիւնները  
նորոգւում և լուրջաճանաչելով ճոխանում էին, այնպէս  
որ արդէն մի մեծ կոպոյց էր գարձել միայն Ասկանի  
զործը:

Այդ թղթակցութիւնները նւազ չծանրացրին  
քննիչի, գառախաղի և ժողովականների բեռը, բայց ոչ  
մի օգուտ չբերին զործի իրական քննութեան: Քննիչը,

Ոսկանի և սրիշնների ցուցման համաձայն, Մարութի տանից դուրս եկած թղթերը շինծու էր համարում և գրերի կեղծութիւնը էքսպերտների քննութիւնից և գեկուցումից համոզուել էր, որ նրանք վարպետ ձեռքով յարմարեցրած էին:

Այժմատը ամէն օր հարցնում էր քննիչին, թէ երբ էր արձակելու բանտարկեալին: Աերջինս այս երկու օրս կվերջացնեմ ասելով՝ ճանապարհ էր գցում թշուառ այրիին: Երկու օրերը շատ երկարեցին, որովհետեւ տաճկական ամէնակարճ մի ժամը, իսկապէս տեւում էր եօթմ օր: Քննիչը ամէն օր հաշիւ էր պահանջում լրտեսներից սրանց խօսակցութիւնների, ձեռքերի և նշանների մասին, բայց ոչ մի նշանաւոր բան չէր ձեռք բերում այդ միջոցով էլ: Ութ տասն օրւա փորձը ցայց տւեց, որ նրանք ամենայն պարզութեամբ իրար հետ խօսում, ցուակցում, դանդաւում վիճակներից և հեռանում էին: Գաղտնիք կամ խորհուրդ նրանց մէջ չկար և չնկատեց մինչև վերջը: Քննիչը խորամանկութեան դիմեց և մի քանի օր էլ հրամայեց, որ քննեն նախ Այժմատի վրա, որ ծածուկ գէնք կամ թոյն չտա Ոսկանին ու թող տան, որ բոլորովին առանձին տեսնւին: Այդ փորձն էլ նախորդի նման անյաջող անցաւ: Աերջնապէս ազատ և բացարձակ հրաման տւեց Այժմատին, որ երբ ցանկանա, ուղղակի գրնա, մտնի Ոսկանի խցիկը, որքան որ ուզում է մնա և վերադառնա: Անցաւ մի ամիս և կէս, դեռ բանտումն էր Ոսկանը և Կ. Պօլսից քննութիւնները շարունակելու հրամաններ էին գալիս գինւորական և քաղաքական վարչութիւններին:

Սեպտեմբերի սկզբներումն էր, առաւօտ ժամի ութին Այժմատը Սարաչի դռնից անցնելով՝ դնում էր միջնաբերդը: Ճանապարհին պատահեց Աշխուն Եփաթեարը և զանալով գէպի այրին՝ ասաց.

— Աղջիկ, էլի սրտեզ ես գնում, չրեղրեցիլ, չգողրեցի, առաւօտ վաղ դնում ես:

— Ի՞նչ անեմ, Աշխուն արլա, տանջում է, պէտք է երթալ, որ մի քիչ հանգստանա: Գիշեր ցերեկ աչքը դռանը՝ ինձ է սպասում:

— Մեղք ես, աղջիկս, մեղք ես, էգբան էլ չար չլուխ: Այն բերդիդ ղլխին, քեզ տապկուելու համար էր ծնել:

— Ի՞նչ անենք, մեծերն ասել են. «ամէն մարդ իր խաչն ունի», էս էլ իմ քաշելիքս է:

— Աւրիշ հնարք գտնելու է, թէ չէ ամէն օր գնալ գալով՝ ծալրը ուր կ'երթա:

— Ձեռքիցս ինչ կգա, էս է իմ էլ նրա էլ միխթարանքը:

— Ես մի լաւ մտածեմ, կգամ մօտք:

— Արի, տուն արի, մի քիչ խօսենք:

— Բարի ճանապարհ, Աստուած յաջողէ:

Այժմատը բամբակեց և շարունակելով իւր ճանապարհը, հասաւ միջնաբերդի դուռը: Գոհան պահապան նորեկ գինւորը կարգերի համաձայն չէր թողնում Այժմատին ներս մտնելու. վերջինս երբ չլսեց նրան ու ներս էր մտնում համարձակ, պահապանը երկիւղից սուլիչը փչեց: Չավուշը ծիծաղելով մօտեցաւ պահապանին և ասաց, — այս կնոջ համար չեն կարգերը. նա երբ ուզենա, գիշեր ցերեկ կարող է մտնել բերդը և

դուրս գալ: Մի վախենալ, գործդ շարունակէ և ուրիշի մի թող տալ ներս գալու: Խանութին լաւ նալիր, չխաբւես, ուրիշ անգամ էլ նեղութիւն չտատճառես նորան:

— Շատ բարի, աղա, էլ չեմ մոռանալ նորան:

Բերդի հրամանատարը այնքան համարձակ չէր մտնում արտեղ, որքան այդ կինը, ոչ սք չէ համարձակել անգամ նորան ծուռ նալելու: Նորան ամէնը ճանաչում են բերդում և լարգում իւր ժրագլխութեան համար:

Ալմաստը անուշադիր շարունակում էր իւր ճանապարհը և մտնելով բանասպետի խցիկը՝ խնդրեց, որ բաց անեն Սոհանի դուռը: Հունգարացին չկար, ծերու կին էլ ծուլութիւնը տիրել էր, ասաց Ալմաստին.

— Աեր առ պատից բանալին, գնա՛, բաց և մտիր №7, բայց քեզ եմ յանձնում, չլինի թէ թողնես, որ փախչի:

— Միամիտ կաց, փախչողը չէ: Ինքդ խնդրես, ազաչես, թէ գնա, նա չի գնալ, մինչև վերելից հրաման չդա:

— Ես գիտեմ, խանում, ես զիտեմ, հանար եմ անում, գնա բանդ, գնա՛, ինչքան որ ուզում ես, խօսիր ու գլարճացրու բարեբարիդ:

Ալմաստը գալթի պահապանի ներկայութեամբ բաց արեց դուռը, մտաւ Սոհանի խցիկը և պահապանը մի հալեացք անգամ չգործրեց, թէ ինչ էր կատարում այնտեղ, նա էլ հագնել էր իւր պաշտօնից և հրացանը քիչ էր մնում, որ գլորւի ձեռքիցը: Ալմաստը հանդարտ քայլերով սուղ գնաց և միմումը աչքերն էր

չփում: Սոհանը թիկունքի վրա սլառկած էր, աչքերը խրփած և մտքովը հեռացած մի ուրիշ երկիր: Հետզհետէ լուսաւորւեց, Ալմաստի աչքերը եանագանցեցին բանտի իրեղէնները, որոնք անձանօթ չէին նորան: Ալմաստի տեսանելիքները կեդրոնացան Սոհանի երէտի վրա, որը միմումը ցոլում էր երկնայինների լուսով և շնչառութեամբ ամենամեղմ շարժումով, թոքերի հետ միասին բարձրանում ու իջնում էր: Իրտում էր անընդհատ և զմայում, քիչ էր մնում, որ գլորէր, ընկնէր Սոհանի կուրծքի վրա և ջերմ համբույրներ գնէր նրա արեգակնափայլ ճակատին, բայց... չէր ուզում նրա հանգիստը վրդովել: Կանգնեց և գեռ շատ երկար կիանդնէր նրա գլխին անշարժ ու արամամ, եթէ Հունգարացին ներս չմտնէր ազմուկով և չգտար:

— Խանում, ով բացեց այս դուռը:

— Ես, Ահմէդ աղան, ինչի՞ նեղացել ես:

— Էլ ուրիշ անգամ այդպէս բան չանես, ապա թէ ոչ քննիչին զանգատ կգնամ քեզ վրա:

— Ներիր, Ահմէդ աղան, էլ սրանից լետս միշտ քեզ հետ կդամ և կաշխատեմ էլ քեզ չբարկացնել:

— Ի՞նչ կա, այդ ի՞նչ է պատահել, ասաց տեղից վեր բարձրանալով Սոհանը:

— Աչինչ, ոչինչ, ասաց Ալմաստը:

— Աչինչ չէ, շատ լիքն է, բայց ես ներում եմ այս անգամ, ասաց բանասպետի փոխանորդը:

— Շնորհակալ եմ, Ահմէդ աղան, շնորհակալ եմ:

— Ալմաստ ջան, այդ ինչի՞ ուշացար, այսօր ինչի՞ հտացար:

— Մի քիչ լուացք կար, առաւօտ վաղ վեր կացա,

վերջացրի ու եկա. ի՞նչ անեմ, Ոսկան ջան, խո ուրիշ մարդ չի գալ իմ գործը կատարել:

— Լաւ, շատ լաւ արիր, որ եկար, ցնորում էի: Երկու ժամ աւել զոան ծակից նայում էի. ամէն մի գալողին, ամէն մի անցնողին հարցնում, ամէն ձայնի, ամէն ծպտունի ու խօսքի լսում, բայց չերևեցար: Քանի անգամ բարձրացա ու լուսամուտից նայեցի չորս կողմը, փողոցները, թաղերը, չկաս, չգտա հետք: Այսօր շատ եմ վրդոված, չափազանց շատ: Չգիտեմ, ի՞նչ նոր գալիք կամ փորձանք կա իմ գլխին, միայն ես ինձ վատ եմ գգում:

— Ի՞նչ ունես, Ոսկան, ինչի էլի լուսահատուել էս: Երևի, երազ ես տեսել... հա՛: Մի ժամանակ երագի համար ինձ ծաղրում էիր, հիմի դու էլ սկսեցիր հաւատար...:

— Ե՛, ո՞վ է այդպիսի լիմար բաներին ուշք դարձնում, երագն ի՞նչ բան է, միայն ես անհանգիստ եմ, մի գէշ բան եմ գգում և չգիտեմ, թէ պատճառն ի՞նչ է: Ո՞վ ունիմ այս քաղաքում, ո՞վ է ինձ սփոփելու, քեզ որ չչայտնեմ գգացումներս, սիրտս կտուաքի, Այժաատ ջան, համբերիր, լսիր և ուրիշ ոչինչ: Ես որ չայտնում եմ ցաւեր, կարծում եմ, մի քիչ հստանում է սիրտս, գրա համար վստահ քեզ վրա, գիտեմ, որ տանում ես քեզ տաճս նեղութիւնները. անտրտունջ ասում եմ: Այժաատ, շատ նեղացրի քեզ, չգիտեմ, երբ պիտի կարողանամ փոխարէն գտնէ մի հազարերորդը քեզ վերագարձներ:

— Ես ստացել եմ շատ վաղ, փոխադարձաբար հատուցանում եմ, և ուրիշ ոչինչ... Ոսկան, մի այդ-

պիսի մտքերով վրդովիր քեզ և ինձ:

— Ե՛հ, ասա տեսնենք, ի՞նչ նոր բան կա, ի՞նչ գիտես. ի՞նչ տեղեկութիւններ ես բերել:

— Ոչինչ, խեղճ Մարութի կիներ քանի ուզում է գնալ ընկնել քննիչի սաքը, որ իրաւունք տա տեսնելու իւր մարդին, կեսուրն ու կեսրարը չեն թողնում, եղբայրները կրակ են մաղում: Երէկ ինձ տեսաւ, էնքան լացեց, էնքան լացեց, որ սիրան ուռեց: Ատխնում են, բոլորը վախենում են: Գրեգորի ու Միսակի բարեկամներից չորս հագի էլի բանտ են գրել: Պատճառն էգ է, որ նրանք էս ու էն կողմը նստելիս ու աւել պակաս խօսելիս են եղել սլաշտօնետների վրա: Ո՞վ որ գնում է, աշխատում է, որ իրաւունք ստանա բե՛ր գալու, քննութեան տակ է ընկնում և քննութիւնից շատ քչերն են ազատում: Ատխերիցը չգիտեն ի՞նչ խօսեն, մի քիչ որ ստում են, կասկած է բարձրանում դատաւորների մտքում և ուղարկում են այստեղ հանգստանալու...:

— Կամոց խօսիր, զգուշացիր:

— Ի՛նչ չունես, ես ես որ մեղք չունիմ, իմ սիրտս որ պարզ է ապակու պէս, ի՞նչից եմ վախենալու:

— Միսակի կնոջից ի՞նչ տեղեկութիւն ունիս:

— Թաղեմ ես նրա սկեսրարի գլուխը: Խեղճ հարսին օրական քսանչորս անգամ գառնազի արտասունքներով լացացնում են, էն խելաուսունչ տէգրն էլ ամէն օր ծեծում է: Ո՞չ հէրանց է կարողանում մնալ, ո՞չ կեսրանց, հալւել ու մաշւել, կաշին ոսկրին է կպել: Էն օրը ժամը սկեսրոջից ծածուկ երկու խօսք մինչև խօսեց, մարեցաւ ու մղկտեցաւ: Ի՞նչ ասեմ, որ

մէկն ասեմ. . .

— Կեա շնա են քննելու:

— Ա՛չ, ո՛չ, քննիչը ասաց, որ Ա. Պօլսից պապահանջած բոլոր թղթերը պատրաստել և պատան են զցել, պատասխանին են սպասում:

— Ուրեմն դեռ մի ամիս էլ սպասելու ենք:

— Ի՞նչ ես ասում, ութ օրից պատասխանը կգա:

— Կիտեմ, գիտեմ, բայց հարկաւոր է. . . շտապելու է, սպասել էլ անկարելի է. . . պէտք է անպատճառ տեղեկացներ:

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ տեղեկութիւն:

— Մօտիկ արի, բան եմ ասելու, ասաց խեղդւած ձայնով Ասկանը: — Սյո իրիկուն տան դուռն ու երգիքը լաւ փակիր կէս զեշերին. . . այնպէս արա, որ մարդ չտեսնի, չկարծի. . . չկասկածի, չիմանա, նստիր, մի նամակ գրիր Ա. Պօլիս: Իմացար:

— Հասկանում եմ:

— Իժիշկ, գրէ, նամակդ ստացած օրը բանտարկեց, պատասխանը ինքն անձամբ գրելու անկարող է: Ել մի շարունակիր թղթակցութիւնը: Եթէ անհրաժեշտ բան լինի, գրիր Ռուսիա, Ասիաս, Աարս՝ Բախալ Պարգիս Ալաշկերայեանին: Նա կհաղորդէ ինձ: Բանտարկութեանս պատմութիւնը և պատճառները կարճ նկարագրէ և քաշածներս: Այցելութիւններդ և արածներդ բոլորը, բոլորը չմտանաս. . . Ասո՛, որ ճարը զանի Ա. Պօլսից մի բարձրագոյն հրաման ուղարկելու, եթէ կարելի է: Տակը ստորագրիր քո անունդ՝ «Ալմաստ». նա քեզ ճանաչում է, ես ժամանակին գրել եմ քո մասին: Ղմտանաս, այս իրիկուն գրելու ես:

— Ես իրիկուն կպատրաստեմ:

— Պասալ չես տանիլ, քեզ ճանաչում են, չէ կարելի. . . քեզ պատուիրեցին, որ գրածդ նամակները իրանց ցոյց տաս. . .

— Ի՞նչ անենք, որ պատուիրեցին, էգբան բանի համար ոչինչ էլ չեն իմանալ. . .

— Ա՛չ, ո՛չ գրելդ են իմանալու, ո՛չ էլ բժշկէ անունը գիտնալու են, իմացար:

— Այո՛:

— Նամակը գրէր, պատրաստիր, երեսը տակը հայերէն գրիր. Ա. Պօլիս, Թէրէ-Բաշի №1627, բժիշկ Տիգրան Խորասանճեանցին: Յետո կանչիր տուն Պօլիցիական Արամին և գրել տուր «պաշտօնաւոր» Ռուսերէն և Փրոնսերէն. նա միայն գիտէ Ռուսերէն և ամենահաւատարիմ ու անկեղծ բարեկամս է: Բայց էլի աշխատիր, որ անունը ու թիւը մաքուր չպահէ, լաց, ցուիր, խօսիր, ժամանակը այնպէս անցկացրու, որ նա մտքով ուրիշ բանով պարտալի և մտանա: Աչինչ մի փոխենալ, նրանից կտակած չեմ կարող ունենալ: Յետո տուր մեր Թոտաւին, ասո՛, որ անմիջապէս գնա Ալաշկերա, անցնի Բարթոլ սարերից, մտնի Աարգիշեր ուխտի և կազման սրտաին տա ու ստացականը ետ բերէ քեզ: Մի ուշացնիլ, ժամանակը շատ ենք կորցրել:

L2

Ո Ս Կ Ի Ն

—Թոսուեն, գիտես. քեզ ինչի եմ կանչել:

—Ձէ, խանում ջան, չգիտեմ:

—Ոսկան էֆէնդին ասաց, գնաս Վարդիհեր, Վարս Թաթոսին զոյգ կերոն վառես, որ օգնութեան հասնեն նրան, ու մի օր առաջ ազատւի բանտից:

—Մեռնեմ նրանց զօրութեանը, չգիտեմ, էլ որ օրւա համար են, թէ էս նեղ օրին էլ չհասնեն էֆէնդիին հաւարին: Լուսուեն հետ կմտնեմ Ալաշկերտ, գիշերը կանցնեմ սինօրն (սահմանը), էլ օր էս պահիս կվառեմ կերոնները ու ետ կգամ: Չորս օրից էլի աչս տեղ եմ, խանում, ինչիդ է հարկաւոր: Ուրիշ բան ունիս, այն ասա:

—Էս նամակը փոշտը պիտի գցես ու ստացականը, էսպէս մի կտոր թուղթ կտան, ետ կբերես: Էնտեղից պիտի երթաս Վարս՝ Մարգիս ամօնց տունը և սպասես պատասխանին:

—Հասկացա, խանում ջան, թէ Ասուած կեանք տւեց, կբերեմ քեզ մօտ այն թղթի կտորը և պատասխանը:

—Փող ունե՞ս:

—Փողն ինչ կանեմ, աղքատ-մուրացկան ճանապարհորդ մարդուն ո՞վ մի կտոր հաց կարող է խնայել: Բայց թէ ունես, տուր. տէրտէրն առանց փողի մոմ չի տալ, էն կողմը աներուժը հիւր չեն ընդունում, պէտք է մկիտանխանները պառկել ելնել և նազդ համրել:

—Պոստի համար էլ է պէտք, սպասիր էս րօպէիս:

Ալմաստը բարձրացաւ սէքուն, բացեց սնդուկը և ոսկի բողմախի վրա գտնւած վերջին Իսլամբօլ ոսկին էլ կտրեց, վեր առաւ:

—Թոսուեն, ասաց, էս ոսկին տար, մանրիւր բազարում:

—Ձէ, խանում, չէ, այդ իմ բանը չէ, ես գրանից վախենում եմ: Կեանքումս ոսկի բռնած չեմ ձեռքումս. ձեռքիցս կամ կկտրուի կամ կզարնեն կիւլեն: Ինձի մեթալիք ու արծաթ, մանր փողեր տուր, քիչ, շատ քիչ:

—Ե՛ս երթամ, էլ ինչ անեմ, դու կնիկ մարդ, ես տղամարդ: Չարսի-բազար գնալն ինձ մնաց:

—Ա՛խ, ինչ անեմ, չեմ թող տալ, որ դու գնաս, բայց ես ոսկին տեսնելիս, որ դուրս եմ, ձեռքս առնելիս ինչ պիտի անեմ, Տէր Ասուած:

Ալմաստը դուրս եկաւ և մտաւ Մարջան արլանից տունը: Մարջան արլան տանը մածուն էր մակարիթում:

—Արլա ջան, արլա՛. փող ունե՞ս, ասաց Ալմաստը, էս ոսկին պիտի խուրդեմ:

—Էդքան փող ինձ ո՞վ է տալիս, կնիկ, էդ ինչ

է, մարդ վզեց ու ճակատից սակի կտրէ ու մտնի:

— Ի՞նչ անեմ, որ պէտք է, ետև կտանեմ, տեղը կզնեմ:

— Եդ էլ նոր տեսանք, դարձն ու զարգարանքը, բանեցնելիք բանը ծախու չեն հանիլ: Եդ սակին որ ծախում ես, հատարակ փող չէ, հարստութիւն չէ, էդ լիշատակ է, նւիրական է, սվ է իմանում սկեսրանցդ տանը քանի կնկա ձեռք է անցիլ, քանի հարս է ուրախացրել և քանիսի կուրծքը զարգարել: Մի հարիւր անգամ տէրատէրները էդ սակին օրհնած կլինին նշան ու պսակի շորերի հետ: Լաւ բան չէ, տանը լեշելիքը չեն կորցնիլ: Տնը էդ տուն, ամուր պահիք, ես կաթի ու մածնի փողից ես զցած ունիմ քոտասուն դուրուշ (եղեք չորս բուրլիի չափ) տնը ծախիր, ետև կտաս, մարդու բան մի առիլ, թնց մերոնք էլ չիմանան:

Պատուը դնաց Սհան ամու քիլահ զգակի, քէաչի ու ֆէտի միջից հանեց երկու արծաթ մէջիդ ու տւեց Ալմաստին տակով:

— Չլինիմ, չիմանամ, որ դու էդ սակին ծախած լինես, երբ որ կունենաս, էն մամանակ բեր ասուր փուղերս, քեզ մարդ բան ասող չի լինիլ:

— Լաւ կլինի, արլա ջան, ես քս խօսքդ երբ եմ կտորել: Երբ որ ունենամ, կբերեմ:

Ալմաստը տուն վերադարձաւ:

— Թոսու՛ն, ահա քեզ մէկ արծաթ մէջիդի, հերիք է:

— Շատ շատ է, խանութ ջան, ինչ պիտի անեմ, կէսը ետ կբերեմ:

— Ի՛հ հ, գնա, լուսին մութին եմ սպասելու:

— Աստուած յաջողէ, յոսով եմ, որ շատ չսպասես, կրակ էլ մաղէ ելկնքից՝ ճանապարհին կանգ առնողը չեմ:

— Տեսնեմ քեզի:

— Էֆլնդին ինձ լաւ գիտ':

Թոսու՛նը սրացաւ, թուաւ արծաթ նման, անցաւ Բարլուղ լեռները, մտաւ Սպիտակ - արծւի հողը: Ալմաստը վեր կացաւ, յանձնեց Գոհարին Մարջան աբլալին, վազեց գէտի միջնարկերը Ոսկանին տեղեկութիւն տալու: Այդ օրը շատ էր ուշացել Ալմաստը, այնպէս որ զինուորնեւ ու բանտապետները զարմանում էին, թէ ինչի բերդի թագուհին սրոշեալ ժամանակին չէր գալիս քնելու իւր սրոշածեաներին: Եկաւ Ալմաստն էլ յոգնած, զաղարած ու քրտնած: Ո՛հ, որքան նեղութիւն էր նորա համար մօտ երկու վերստ ճանապարհ գնալ և վերադառնալ: Հապա այն բնորը աչքերը, որ զիտում էին նորան:

— Ազջիկ, էլի ճամբա ընկաւ, տես ինչպէս վազում է, տաւում էր մի կին իւր հարկանին:

— Եդ ի՞նչ ծնկներ են, երկաթ են, ճալիկ են, էսքան էլ զիմանալ: Ամէն օր, ամէն օր, բերդի շեմքերը մաշւեցան, դարս սաքերը չմաշւեցան:

— Երնէկ քեզ, քս աչքերիդ, ասում էր մի ուրիշը, ամէն օր գնում ու տեսնում ես բարեկամիդ, իսկ ես կուրանամ, ապիդ եղբայրս էլ էնտեղ է, ամիսս ու կէս է, ո՛չ ես ճար ունիմ տեսնելու, ո՛չ անիրաւ հէրս է գնում տեսութեան, ո՛չ էլ մօրս է թողնում: Փետեդ էլ կրակ է կտրուում, թէ չլինի մտքիցդ էդ բանը անցնես ու տունս, տեղս, ազերքս կրակը գցես: Ի՛նչ

ձիւնը տամ գլխիս, չգիտեմ: Իբր թէ մենք ժայռ քար ենք, ապառաժ ենք, ո՛չ սէր ունենք, ո՛չ գուժ ունենք, տանը մի անկիւն նստենք, գլխներս պատին տանք ու լանք: Թէ սկեսուրներս ազատ թողնեն լալու, էն էլ լաւ բան է, սրտերս կհոգանա, էդ էլ խնայում են:

— Աւտա Գրիգոր, ուտա Գրիգոր, ասում էր գերձիկը իւր կօշկակար հարեանին, ան է, եկաւ... ֆոն կերթա: Մեռնիմ ադ քո ոտացդ տակի ֆուկերուն, գնա... գնա... սիրտ տուր. թո՛ղ դիմանա: Ստաւած ու զորմած է, մի քանի օրից հէալբաթ մի կողմից մի խէր խաբար կուգա:

Ամէն տանից ու խանթից զգուշութեամբ դուրս էին գալիս, ուրիշ բանի նայելու ձեռով և քննում ու աչքով հետևում էին Ալմաստի քայլերուն:

Մէնք մարդ չենք, մեր մէջ մարդկութեան շնորհք ալ չէ մնացել: Այդ մարդը մեզ հետ այնքան աղբերութիւն ունէր, այնքան կեր ու խում է ունեցել, մեր ամէն ցաւին ու հոգսին հասել է, մէկս չէ գնացինք ադոր տեսնելու, մէկս ադոր աս նեղ օրին չհասանք: Սս կնկա բարուջը մեր գլխներից հազար անգամ բարձր է:

Շատ անգամ քամին այս բարձր խօսածները հասցնում էր Ալմաստի ականջին, սրբ բոլորովին անուշադիբ վազում էր, առաջ գնում գէպի իւր նպատակը: Նորա մուտքը բերդեցիների համար ուրախութիւն էր, բոլոր զօրքերն ու զօրականները կանգնում, ճանապարհ էին բաց անում և հիանում թշուառ կնոջ քայլքի և ուղղութեան վրա: Նա համարձակ, ազանց շեղւելու իւր նշանակեցողից, դիմում էր ճիշտ բանտապե-

տի դռան կողմը, կամ քննիչի գրասենեակը: Բոլոր զինւորներն հրճուում էին, մի տեսակ յիշատակ էր զարթնում նրանց սրտերում և մտքերով նորանցից ամէն մինը գնալով իւր հայրենիքը, իւր սիրելիների մօտ, սկսում էր երգերով թափել ու սփռել առատօրէն իւր զգացմունքը: Մուգիկանա գինւորները նրան տեսնելուն պէս սկսում էին իրանց խմբերգում սովորած ամենասրտառու շեղանակներն ածել:

Առաջանում էր սրանց հերոսուհին առանց դէմքը ալլալելու, քայլերը փոփոխելու և հայեացքը այս ու այն կողմը գցելու: Նա զգում էր երգերի քաղցրութիւնը, նորա սիրտը տրոփում էր եղանակների անսւշութիւնից և երեակայութիւնների բարձրանում էին ու նորոգում, բայց ամօթխածութիւնը, համեստութիւնը, երկրի սովորութիւններն ու կարգերը նորան շտապեցնում էին դէպի Ոսկանի օրջը: Նա երեւելիս՝ ուրախութիւն էր փայլում բերգում, նորա մեկնելուց յետո՛ սուգ ու տխրութիւն:

— Ա՛յ, դ՛ն բարով, դու հազար բարի, հոգիս, դռան ծակից ճանապարհդ մտիկ տալով՝ լոյսս մաշեց, կռնակս ծակեց, ոտքերս ջուր իջան, ախար այսքան էլ հտանալ: Երէկ տասցի, թէ մի ուշանալ, էսօր միւսնայն բանը կրկնեցիր:

Հունգարացին դուռը բացեց Ալմաստը ներս մըտաւ և դուռը կրկին փակեցաւ:

— Ի՛նչ անեմ գործ ունէի, մարդ ճամբեցի, գործս չէի պրծել, ահա քովդ եմ, օրքան օր ուզես, կմնամ: Յետո ետ դասնալով բանտապետի կողմը՝ ծակիցն ասաց:

— Ահա՛նք աղան, Ահա՛նք սղան, քո բաժին սե-  
րուցքը վերցրու ու էֆէնդիի բաժինը շուտ բեր, ձու-  
տղեղն էլ բեր: Փախուտու եմ պատրաստել իրիկունը ըն-  
կուզով ու մեղրով, բեր սինով քանի տաք է, տաք-տաք  
ուտենք: Ես էլ համը տեսել չեմ:

— Լու, լու, Մէհմէդ սղախ բաժինն էլ վեր-  
ցնեմ, նա այստեղ չէ:

— Աերցրու, վերցրու ու շուտ բեր:

— Ալմաստ, ոչինչ չեմ ուզում, ոչինչ, ինձ դու  
ես պէտք, քո ընկերութիւնը, խօսքերդ և խորհուրդ-  
ներդ: Աւելորդ բաներ մի տնիլ, ինչ է այդ արածնե-  
րդ, խնայիր, խնայիր, կարող են էլի վատ օրեր գալ  
մեզ համար, կորիքներս էլ կշատանան, այն ժամանակ  
ես էլ դուրսը չեմ, որ կարողանամ աշխատել և յա-  
ցնել:

— Հոգ մի տնիլ, հոգիս, մի էդ մասին մտածել:  
Քանի որ թեւերումս ոչի կա, քանի ու աչքիս լոյսը  
տեսնում է, մեզ ոչինչ չի սակասիլ...

— Բոլորովին թողել ես առաջւա ընտելիւնդ,  
ո՞վ էր տեսել քեզ այդքան առատ: Մի շուտիլ, մի  
լետս կգոջանք: Պահիր նեղ օրու համար:

— Սրանից էլ նեղ օր...

— Ալմաստ, ինչ ուզում ես արան, միայն մտա-  
ծիր, որ վերջը նեղութիւն կբաշենք: Թէ ինձ սիրում ես,  
մի կրկնել տալ այս խօսքը, խնայիր, խնայիր, խնայիր...

— Լու, լու, լու, լու... Ես էլ եմ ուզում  
խնայել, որ չեմ կարող...

— Բանն այն է, որ հաստատ կամք ունենաս  
ու միտքդ բերես, թէ որքան չարչարանքով են ձեռք

բերում փողը մեր շրջանի մարդիկը:

— Ինչ աշխատութիւն... չորս տեղ գործում  
եմ՝ երկու զուրուշ, մի գէլրա ձեռում եմ՝ հինգ զուրուշ,  
մի պալտո եմ կարում, մի վերարկու եմ կարում՝ քան  
զուրուշ, էլ ինչ դժւարութիւն: Փոռք Աստուծո, էնքան  
յաճախորդ ունիմ, որ չափ չկա...

Ալմաստը Աստուծոյն յոյս տալու նպատակով մե-  
ծացնում էր, վերջին ժամանակները նորա յաճախորդ-  
ները հեռահեռ նւագում էին: Նա յաճախ կարիք  
էր զգում փողի, բայց դեռ փողը չէր հատել, դեռ ետ  
ձգած արծաթ ունէր ու օրու համար:

Կերան խմեցին և երկար խօսեցին մինչև յե-  
տինք: Ձանդերի ժամանակը ճանապարհ ընկաւ Ալմաս-  
տը դէպի տուն, մալրական պարտականութիւնները կա-  
տարելու: Խեղճ կինը, թէև աղջկան աչքի լուսին էլ  
չէր հաւատար, բայց ճարահատեալ ստիպած էր թող-  
նելու Մարջան արլայեանց տանը, սրտեղ նորան նայում  
էին իրանց հարազատ գուակի նման:

Ասկանը Ալմաստին ճանապարհ զցելուց յետո, ընկաւ  
անկողին թիկունքի վրա պառկեցաւ թեւերով ճակատն  
ու աչքերը ծածկելով: Նա ինչ էր մտածում, ինչ բանն  
էր նրա միտքը զբաղեցնում, ինչ ծրագիր ունէր և ինչ  
մտազրութիւններ: Նա անշարժ պառկած էր, մտքով  
անընդհատ թափառում էր գանազան երկիրներ և ոչինչ  
միտքարական բան չէր գտնում:

— Նշանը շատ լու արեց, գնաց և ազատեց:  
Է՛լ չէ մտածելու, որ իրան մտածմունքները խանգարելու  
են, զիտէ, իրան հետքից հետևողներ չկան, խօսքը  
ընդմիջող չի լինիլ և եթէ լող չունենա էլ, բերանը

փակող էլ չի լինիլ... բայց ոչ, ինչ եմ ասում, լիմարութիւն է, սրտեղ է զնացել, սր ազգի մէջն է... Ամերիկա... ինչ գործ ունեն հայերը այդ տակի աշխարհը, ոչ, մարդ մեռնի էլ, գոնէ իւրայիններով շրջապատւի... Ամերիկայում ում պէտքն է թէ, մի սրեւիցէ Նշան է ապրում...

Շատ հարկաւոր է ... Եւ ինչ շրջան կարող է ունենալ այնտեղ... սասն Անգլիացիները և բիրտ Գերմանացիները, ոչ, կմեռնեմ, իմ շրջանից, իմ լեզուս հասկացողներից, իմ բնաւորութիւններս և սովորութիւններս ունեցողներից և համակրողներից չեմ դուրս գալ: Խո՛ւ ամէն անգամ չեն տիրապետելու մեր երկիրը կաշառակեր, կեղտոտ և տգէտ պաշտօնականները, որ ճիզւիտների ժանգոտ սոկիների շնորհիւ զցեն և տանջեն Ասկանի նմանները այս անգունդի մէջ: Կգա և եկած էլ է ժամանակը, մարդիկ զիտեն և զգում են, որ զիզւած սոկիները և մեծ մեծ գանձերը նշանակութիւն չունեն, հալում և կորչում են մի անխոհեմ գործից,.... Գործ է պէտք մարդու համար, մշտական, քանի որ ոյժ ունի թեւերում. գործ և գործից՝ հաց:

Այդ բանը կլուծէ ամէն կեղտոտութիւններ, և կթաղաւորէ ամենակատարեալ կենցաղավարութիւն: Ո՛հ, ձեր անուրը ջնջի մարդկութեան ազգի պատմութեան միջից, ինչպէս ձեր հեաքը ջնջւել է Փիւնիկներ: Այս քանի՛ դար է, որ ձեր մետաղը կըրծում ու կրկնում է մարդկութեան ոյժը, որքան միլիոնաւոր, միլիարդաւոր, չգիտեմ ինչաւոր մարդիկ, համբանքով ծովի աւազից շատ, զոհւել են ձեր զիւտի պատճառով, տանջւել են ձեր հնարքի պատ-

ճառով և զե՛ր տանջւում ու տանջւելու են: Ոսկի, ոսկի, քու մոգանողից ինչ ասեմ, որ սիրտս հովանա, գոյութեամբդ ինչքան բանաւոր մարդիկ անբաններից ու հանքերից ստորացրել ես: Այդ փայլուն ու շողողողան տիպարովդ ինչքան սիրտ ես գրաւել և ինչքան տներ աւերել: Բայց է՛հ, ինչի՛ վրա եմ վրդովւում, ինչ մեղք ունեն փիւնիկները, նրանք մարդկային կարիքները դիւրացնելու համար են հնարել, մի՛թէ առանց այդ հեշտութիւնների կեանքը, ապրուստը աւելի չէին ծանրանալ: Մարդ որ վրդովւում է, ինչէ՛ր չեն գալիս՝ մըտքիցը անցնում, ինչ բաներ նրան չեն վրդովում. նրանք գտել են միջոց մեր պէտքերը հոգալու, իսկ չար մարդիկ այդ հեշտութեան միջոցը իրանց գործիք են շինել, ժողովել են գանձեր, որ զերեն համեստ, խեղճ մարդկանց իրանց ծառայեցնելու լուխտեան ու իրանք նրանց քրտինքով ընդ միշտ ճոխ և շոալլ պատուաւելու: Բայց աւելի հեռուն են գնում իրանց հեռատեսութեան ու խորամանկութեան մէջ ճիզւիտները, նրանք ոսկի են ցանում մարդ որսալու, իրանց ճանկը գցելու, իրանց այգին տնկելու, իրանց սերնդներին, լաջորդներին ոսկու աղբիւրներ ժառանգութիւն թողնելու: Գիտեն և լաւ են ըմբռնում ցորենի առակը, որ մինչև չփթի, լաւ բերք չի տալ իսկ փթելուց լետու, երբեմն մէկին տասը, քսան, լիսուն, ութսուն և հարիւր: Ո՞վ իրան դրամագլուխը կարող է այնպիսի թանկ շահով գնել: Այնքան որ տնկեն իրանց սերմերը, դարեր են պէտք, մարդիկ են պէտք, դիւցազներ, որ կարողանան վերջապէս պաշգել նրանց զադտնիքները ու ազատել տաժանակիր սարկութիւնից: Այո՛, մարդու սերմը ոսկի է,

անկի են ցանում Լոյսլայի աշակերաները, որ մարդ  
 բուսցնեն իրանց ազարակներում, մարդ, ժողովուրդ,  
 սամիկ, որը կարողանա տանել իրանց անտանելի լուծը:  
 Ա. խ. Ն. բուսան, ինչեք չծնար դու մարդկու թեան տան-  
 ջանքների համար: Հերիք չէր, որ տասնեակ դարով  
 սրգիբդ տանջեցին, այժմ էլ մեզ ես լեզուսմ տանջել:  
 Թող ցեցերդ մեզ կրծեն. որ գոյթականութիւններիդ  
 համար տեղ բացուեն: Մենք գելւենք քո հալածածների  
 լծի տակ, որ սրգիներդ աւելի սգաս գնան, տիրեն ու իշ-  
 խեն մեր երկիրը: Ա՛յս է ամենամեծ փիլիսոփայութիւնը,  
 այս է քարոզած լուսաւորութիւնը — նախ սարկացնել  
 աշխարհները, ապա գալ տիրել ու վայելել... Այն դիւա-  
 կանները, որանց ծնել ու սնուցել ես ծոցումդ, մի գի-  
 շեր պահելու անգամ չես համաձայնում, ինչի՞ գրոշա-  
 կիդ տակ արեւելքում պաշտպանում ես զբանց, մինչև  
 անգամ նիւթապէս և բարսլապէս օգնում. — մարդասի-  
 բութիւնից թէ շահասիրութիւնից ստիպում: Եւրոպան,  
 Եւրոպացիք, մարդկութեան սանջղիմութեան համար  
 շատ ու շատ մեծ գործեր կատարելիք և շարունակում  
 էք, բայց չէք գողարում նոյնպէս ձեր կենսական օգտի  
 համար մարդիկ և ազգեր հալածելով: Աշխարհ մէջ գը-  
 բած տեսնում եմ ձեր արարքները, բայց չարիքը աւելի  
 ծանր է թւում ինձ. քան թէ բարիքը: Գուցէ այս միջին  
 խցիկը և այս տանջանքները կարացնում են ինձ և  
 ես չեմ տեսնում, ինչպէս որ պէտք է, բայց լուս տե-  
 նում եմ, որ նիւթական գերութիւնը վերջացրիք, բա-  
 րոյական թեթեւ գերութիւն ստեղծեցիք, որի անտանելի  
 լծի տակ աւելի սգեկան տանջանքներով թշուառացնում  
 ու մեռցնում էք մարդու, քան թէ իրական գերու-

թեան մէջ, սրտեղ մարդը իւր սրտը վիճակը տեսնելով  
 էր տանջւում:

Շատ ու շատ լուս սփռեցիր աշխարհի վրա, ան-  
 նման, աներևակայելի զիւտերով և արհեստներով աշ-  
 խարհքը շրջրիբ, բայց ճիգեիտների ձեռքով մութն ու  
 խաւարը տարածում ես մեր երկրում. ցրելիք, տարա-  
 ճիք ամէն կողմը, օգնելիք և պաշտպան կանգնիր նրանց,  
 դարերով հալածւած ու ճնշւած ժողովրդի մէջ, սոկուզ ու  
 սրժամիդ շնորհիւ գցիք այդ թշուառացած ժողովուրդը  
 սրգիներիդ գերիշխանութեան տակ. թող դարերով տա-  
 նեն ճիգեիտների լուծը, որ չկարողանան գլուխ բարձ-  
 ճրացնել սերնդիդ ստաջ...

Եւրոպան, այդ քո նշանաբանն է, դու միայն  
 պատերազմ ես մղում և այդ պատերազմում են ամ-  
 փոփւած քո բոլոր ջանքերը: Բայց դու... Եւրոպան,  
 ինչ մ դուստր ես, ինչ կլինէր Լոյսլայի աշակերաների  
 գրութիւնը, եթէ մենք մեր երկրում մեզ կարողանա-  
 լինք պաշտպանել. եթէ մեր ժողովուրդը ուրիշ թշուա-  
 ռութիւնների մտանւած չլինէր, ո՞վ էր հետեւելու ճիգ-  
 ւիտներիդ քարոզին, եթէ մենք օրինաւոր տէր ունե-  
 նալինք, ինչպէս պիտի համարձակէին նրանք մեզ հա-  
 մար ժամտաներ և վարժառներ բաց անել, կամ եթէ  
 մեր մանուկների ծնողներն զգային ու տեսնէին նրանց  
 չարանենդ նպատակները, ո՞վ էր զուակը կտար օձին  
 թռչնաւորելու... Այսօր ես այնտեղ ինչի՞ բանտարկւած  
 կլինէի, ինչի՞ երկրից երկիր կթափառէի, եթէ զրանց  
 գէմ չքարոզէի:

Յիմար պաշտօնակալներ, երկիրը կործանող ծա-  
 ւաներ: Գուք կարծում էք, թէ գանձում էք, բայց

չգիտէք: որ այդ գանձերը թեթե քամիները տանելու են և ձեր որդիքը անիծելու են յաւիտեան ձեր կուրութիւնը: Մի բուռը սակիի համար միլիոնաւոր ժողովրդի մէջ բաց էք թողնում դալլերին... և կարծում էք, թէ միայն հայերին են նրանք բաժանելու ու գերելու, սխալում էք, նրանք ձեր Մէհէմէդին էլ շուտով ուրանալ տալու են ձեր որդիներին և մի քանի տարիներից՝ շատերը անցնելու են ճիզուխների ճիւղաները: Բայց... բայց... թէև կոյր պաշտօնեաները աւերում են մեր երկիրը, մեծ պատճառը էլի դու ես, Եւրոպա, որ սուրը ձեռքիդ սպառնալով ասում ես, — ընդունիր այս ճիզուխներին, որ որդիներիդ շղթայեն և ես ազատ գամ, տիրեմ քեզ ապագայում, ապա թէ ոչ, այսօր կմտնեմ սրովս: Իսկ մեր թույլ ու անվստահ իշխանաւորները սրից փախչում են և թույլ տալիս մեր թշնամիներին մեր երկիրը մանելու, մեր արմատները երկրից կտրատելու համար:

ԼԵ

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ

Այս դառն մտածմունքներում խորասուզված Ասկանը թմրեց և մինչև արշալոյս մնաց անշարժ ու

տարածւած անկողնի վրա — ոչ քուն, ոչ զարթուն: Արևագալից առաջ փչած սառը քամին և նրա սլոցները ազդեցին բաց ընկած բանտարկեալի վրա, նա ըստափուեց և չէր իմանում, թէ ինչ ժամանակ էր, առաւօտ, թէ վերջալոյս: Տրորեց ճպոտած աչքերը, մօտեցաւ փոքրիկ լուսամուտին և սկսեց նայել դէպի կապուտակ հորիզոնը:

— Օրհնէ՛, ստաց Ոսկանը, այս որքան քաղցր և անուշ ես փչում, հիւսիս, որքան զովացնում ես իմ այրըւած և տապկած սիրտս: Այս ասելով, բաց արեց կուրծքը դէպի քամին և շարունակեց, — Փչիր, փչիր, իմ զեփիւռ, փչիր, հովացրու կուրծքս, առ ու հեռու տար տաքութիւնս:

Երկինքը դեռ չէր լուսաւորւած, իսկաւրը բոլորովին չէր հեռացել, հորիզոնը դեռ նոր արծաթափայլ լուսով էր շողշողում. հեռուն ամպերն ու մառախուղները կիտել էին և սպառնում իրանց ցրտաբեր անձրևներով: Մինչ այդ տեսարանն էր դիտում Ոսկանը, Տօնականի մեղմիկ ձայնով երգի դալլայիկը հասաւ նորա ականջին, որը բողբոջում էր ընկերոջը մոռացութեան և անհոգութեան դէմ:

Դոռ էլ ուրացա՛ր, դոռ է՛ր, ո՛վ եղբայր,  
 Որ մի մօր ծծից ինձ հետ սնեցար,  
 Դոռ էլ մոռացա՛ր, դոռ է՛ր, ո՛վ քոյրի՛կ,  
 Որ տեսած էիր այնքա՛ն թիր քալիք:

Դոռ էլ փախաւ տըրի՛ր, դո՛ռ սնցի՛ն ընկեր,  
 Բն՛գ որ կեսնրո՞ւսն հողիս չեմ խնայել,

Ե՛ր, սևագո՛ւթ սուտիւ, միթե՛ աշորան շատ  
Շուն տարու էիր Վշտաշուս թիկունք:

Բարե՛. Լս օրն ել գրասմ է՛ր անկոխս...  
Էծակի՛ց, վե՛ր կաց, ներիք է՛ր քնիս,  
Ունի՛ն, թմբուլ ևս, և՛ րբ պիտի գա, թիս,  
Վե՛ր կաց, շուսացո՛ւն, ընի՛ր խղճուկիս:

— Ը՛ՏՐ, Ը՛ՏՐ, Ը՛ՏՐ, երեք անգամ հազոց:  
— Փոօք քեզ, Աստուծ, լսեց վերջապէս սասն  
ու չորս ժամ տանջւելուց լեռս, վերջապէս զարթե-  
ցրինք:

— Ը՛ՏՐ, Ը՛ՏՐ:

Տօնականը թեւը դուրս հանեց: Ոսկանը թելը  
քցեց. Տօնականը քիչ քիչ քաշելով ստացաւ նոր լրա-  
գրում փաթաթած քաղցրեղէնները: Աւրախութեամբ  
բաց արեց և ուզում էր լրագիրը կարգալ: Բայց դեռ  
մութն էր, այդ պատճառով մնացեալ թղթերն էլ բա-  
ցեց և սկսեց ուտել կարկանդակը: Կերու ու գլուխը  
շարժեց, նայեցաւ խմորեղէնի վրա, համբուրներ դուռ-  
մեց և ազատ-ազատ շտեփ նման՝ սկսեց կուլ տալ:

— Վ՛ահ, ես եփողիդ մատներին մտազ, հերիք  
չէ, որ անքան տանջում է, անքան չարչրում է,  
մեզի կարկանդակով է պահում: Ես քեզ այէս ժրագլուխ  
կնոջ արինն մեռնեմ: Ա՛խ... Ոսկան, Ոսկան, սա կին  
չէ, սա հրեշտակ է, սա երկրաին չէ, սա դիցուհի է:  
Ալմաստ, դու հաստատ աղամանդ շողակն ես, այդ քա-  
րերին են պաշտում Ներոպացիք, բայց ես, ես ծուներ  
եմ դնում, երկրպագում եմ քո առաջ: Քու սիրտը մար-

դու սիրտ չէ, մի մատակ սուիւծ է ննջում քու սրտում,  
տուեծից էլ աներկիւղ է քու հոգիդ: Ի՛նչքան տարբե-  
րութիւն կա ել կու քայրերիս և սրա մէջ: Վերգին ջան,  
նիս, իմ Վերան, մի՛ ցաւիք, ես ձեզ, իմ Գլխի աղջիկ,  
անգրագէտ և անգաստիարակ. մի երկու տարում ճար-  
տար ձեռքի և բարձր հանճարի ազդեցութեան տակ  
ինչ դարձաւ, իսկ դուք, որ մանկութիւնից ստացել  
էք ազնիւ դաստիարակութիւն, զիր ու կարգալ, ձեռա-  
գործ և երաժշտութիւն էք սովորել, դեռ չէք ըծքածել  
ձեր պարտականութիւնները: Մի՛ ցաւիք, ես չեմ ցա-  
ւում ձեզանից, դուք այնչափ ազնիւ և բարեհոգի էք:  
Ես գիտեմ, որ այս ժամիս էլ պատրաստ էք կախաղան  
բարձրանալու իմ ազատութեան համար, բայց դուք  
կատարելու անկարող էք: Մօտ տասը տարի է, ո՛չ մի  
կերպ չկարողացա հանել ձեր ուղեղից և սրտից այն  
երեակալութիւններն ու նախապաշարմունքները, ո-  
րոնք առատապէս ցանել են ձեր տիմար դաստիարակն  
ու ուսուցիչները ձեր մատաղ սրտերում: Միթէ՛ դուք  
էլ չէիք կարող անել այն բոլորը, ինչ որ անում է  
Ալմաստը, միթէ՛ դուք էլ պատրաստ չէիք գոհւելու  
ձեր եղբօր հետ, միթէ՛ աշխարհի երեսին ուրիշ տե-  
ղից լոյս ու ապաւէն ունիք... Ո՛չ, գիտեմ, ճանա-  
չում եմ ձեզ, դուք բարի էք և ընդունակ ամէն տե-  
սակ աւաքինութիւններ անելու, եթէ թողլ տան: Ձեր  
մեղքն այն է, որ ճիզւիտ հայր Ամիտասների խոր-  
հուրդներն ու հրամանները հազար անգամ, քիւր հա-  
զար անգամ նախադատիւ էք համարում ձեր եղբօր  
խօսքից ու խնդիրքից: Դուք ձեր որտի սանձը, զեկը  
ուտել էք նրանց, նրանք հին կառավարում և այդ պատ-

ճառով չէք կորոզ պատուել այն քօղը, որով ծածկում են ձեր աչքերը և դեռ շատ ուշ էք տեսելու, գուցէ և երբէք արևի ճառագայթները: Միայն արտասուքը ոչ ոքի չի փրկում, միայն սուգն ու շիւտնը չի մեղմացնում տանջանքը, միայն Կոմիտասների խրատները ձեզ չեն կշտացնելու: Թողէք, թողէք այդ հալածողներին... վազեցէք դռնից դուռ, խնդիրքներ թափեցէք Կարինից մինչև Կ. Պօլիս, հեռագիր տւէք, խօսեցէք, խնդրեցէք, գոռացէք, որ ձեր ձայնը հասնի դէպի Նւրուպա: Գնացէք, մտէք կոնսիւլների տները, խօսեցէք, որ ձեր վիճակը յայտնեն աշխարհին և անմեղներիս լոյս աշխարհ հանեն ձեզ համար ապրելու, ձեզ կերակրելու և սրբելու արիւնախառն հոսած ձեր արտասուքները: Ախ, Վերոն ջան, հոգուդ մտտադ, ո՞վ է իմանում քանի ժամ դառն արտասուքով և ողբալի ձայներով ես անց կացնում օրերդ: Վերգի՛ն... Վերոն... Հարցնող ու փնտռող ունէ՛ք... դուռը բացող և լաւերդ ու վատերդ քննող կա՛... Զլինի՛ թէ չարահոգի մարդիկ ձեր վրա ժանտ հայեացք են գցում ու չորս ընդունեցող պտոյտ գալի ձեզ սոսկացնելու...

Արևը բարձրացաւ, լոյսը շողշողաց և չարաչար մտքերը տիրեցին բանտարկեալին, նա կիսամեռ, բերքնքսիվար քնկաւ իւր խոտի անկողնի վրա:

Մարուքի ձայնը չէր դուրս գալիս, իրան համար ցամաք ու պարզ ջուրը, որ տալիս էին բանտում, շատ բաւական էր, խեղճի տանն էլ ուտելիքը այդ էր, բայց զաւակներն ու կնիկը քանի՛ լիջում էր, ծուխը պնչիցը դուրս էր գալիս: — Ախ, քոթստներ, ինչ էք շինում, ասում էր ու մղկտում:

Գրիգորն ու Միսակը բանտի խորքումն էին, երկու իրար հարևան որջերում: Անտանեյի էր սրանց վիճակը: Լոյսը ստանում էին վեց արշին բարձուրեթիւնից մի քառակուսի քառորդ արշին տարածութիւնից, էն էլ ինչ լոյս հիւսիսից: Տեղերը ծմակ էր, պատերիցը խոնաւութեան ջուրը անդադար մղում էր: Սրանց մօտ ոչ ոքի չէին թողնում և իրանք էլ շաբաթը մի անգամ հազիւ կարողանում էին իրար երես մի ընդէ տեսնել, երբ քննիչները մի առ մի քննում էին իրանց ծակ ու ճեղքերը: Սրանց բնակարանների դռները միայն այդ օրերն էին բացուում, իսկ ուտելիքը և ջուրը տալիս էին իւրաքանչուր օր դռան լուսամուտից: Հրացանակիր զինուորը հսկում էր սրանց գաւիթում և իւրաքանչիւր ժամում փոխում էին: Սրանք ազատ էին երգում, գոռում ու գոչում և ոչ ոք չէր խանգարում նրանց այդ բաւականութիւնը:

— Սիսակ, Սիսակ, ձայն էր տալիս դռան լուսամուտից Գրիգորը, զարթուն ես:

— Ե՛յ, էլի ինչ իմացար, քնած որ լինէի, ինչ մեծ վնաս կուեննայի:

— Սիսակ, այսօր մեզ պիտի կրկին կանչեն, տեսնենք ինչ կանեն:

— Երանի՛ թէ ո՛չ կանչեն, ո՛չ էլ երեսները տեսնեմ: Էլ ում համար ապրեմ: Եուշանս այնտեղ է, ինձ է սպասում, նորա վրէժը լուծել եմ, տասն ու երեքին շանսատակ եմ արել, կգնամ հանգիստ սրտով նորան կգտնեմ, այն աշխարհում, կվայելեմ նորա հետ իմ երևակայած կեանքս:

— Յետո՞, թող մարդ լացից ու կոծից կուրանա և

գասն ողբերով վերջ տա կեանքին:

— Ի՞նչ անեմ, ձեռքումս միջոց չունիմ, եթէ կարողանայի, մի վայրկեան անգամ չէի թույլ տալ տխրելու, բայց որ անկարող եմ...

— Համբերիր և համբերութեամբ քաշիր վշտերը, կգա ժամանակ, որ կանցնեն վատ օրերը և մենք կձուռնանք այս տանջանքները:

— Սպասիր, սպասիր, քեզ համար նոր Սեսիա է գալու:

— Թէ չէ եկել, էլ չի գալ:

— Եկել է, բայց էլ գալու չէ մինչև աշխարհի վերջը...

— Որ եկել է, պիտի գա, պիտի երևի և կտեսնենք: Ի՞նչ ես խոսնում, թէ աշխարհի վերջը չէ:

— Գրեգոր, ի՞նչ ես խօսում. չեմ հասկանում:

— Որ մտածես, կհասկանաս, գուցէ աշխարհի վերջն է...

— Հըմ... մի կործեր...

— Հէլ, հերիք զգուտք, ասաց պահապան զինւորը, ձայներդ, ձայներդ, մարդ է գալիս:

— Սիտակ, էլի եկան, մեզ են տանելու:

— Շատ հարկաւոր է:

— Տո՛, գոնէ լոյս աշխարհ կտեսնենք, բան չունես, պատրաստիր դուրս գալու:

— Ես կազմ ու պատրաստ եմ, ինչ ունիմ ետանալու:

— Զայներդ, ասում եմ, «գեաւուրներ», չէք լսում:

— «Գեաւուրը՝ դո՛ւ ես, խնդ, ինչ ես բերանդ շան

պէս բաց անում ու խածխածում սրունքներու...

— Տեսնում եմ այս «քեաֆիրին», ի՞նչպէս պատասխանում է:

— Էլի ի՞նչ է պատահել, Էօմար, ի՞նչ է խօսում բանտարկեալը, ասաց Հունգարացի օգնականը բանտապետին:

— Հայհոյում է, աղա՛, էս № 50 - ը շատ կատաղածն է:

— Կատաղածը դո՛ւ ես, քեզ ո՛վ ասաց, որ ինձ «գեաւուր» ասես:

— Որ ասի, ի՞նչ մեծ մեղք գործեցի. դրա համար էլ հայհոյեմ:

— Ես էլ խօսքդ երկու վրագիրով ետ դարձրի, որ ուրիշ անգամ չլինի, թէ համարձակւիս այդ բառը բանեցնելու:

— Զայներդ, ձայներդ, ասաց բանտապետը, քննիչն ու դատախազը գալիս են:

Սանդուխներից երկու լապտերաւոր զինւորների և չորս հրացանակիրների ընկերակցութեամբ իջան պաշտօնեաները, մօտեցան Սիտակի դռանը: Դռան կշիռները և փականքները քննելուց յետո՛ւ ասացին.

— Ահմէդ աղա՛, բաց № 50 - ի դուռը:

Դուռը բացւեց:

— Է՛լ, Սիտակ տղա՛, դո՛ւրս արի:

— Սիտակը ոտքերի շղթայի ձայնը բարձրացնելով դուրս եկաւ:

— Ի՞նչպէս ես, հարցրեց դատախազը, վիճակիցըդ գո՛հ ես:

— Շնորհակալ եմ, իշխանական քէլֆ ունիմ,

օրական կէս օխա մքլած, չորացած հաց և մի քար-  
ղան շուր, զբանից աւել ինչ պիտի լինի:

— Այդ էլ շատ է ստախօսների և չարութիւն-  
ները ծածկողների համար: Եթէ ճշմարիտը խոստովա-  
նէիր, եթէ ասէիր, ո՞վ էր ձեր խմբի կառավարիչը և  
հրամանատարը, քեզ վաղուց ազատած էինք:

— Մենք խուճբ չունինք, բան մի մոգոնէք,  
իսկ պարսիկների կոտորածի պատճառը, հրամանատարը,  
կառավարիչը, Աջամներին ջարդողը, այդ բոլորը ես էի,  
ես եմ: Մարդու մի քննէք, մարդու նեղութիւն մի  
տաք, ես ինքս եմ լուծել Շուշանիս վրէժը: Թէ հար-  
կաւոր է, ինձ էք պատժելու և ոչ ուրիշին: Իմ գո-  
ուում գոչումիս, իմ սուգիս ու շիւանիս չդիմացաւ  
էասնաֆս (արհեստակիցներս), ոտքի ելաւ ինձ հետ,  
ժողովուրդն էլ մեզ հետ: Կախելու էք, կախ տէք, ես  
այս բոպէիս էլ պատրաստ եմ, շուտով կգնամ Շուշա-  
նիս մօտ... Ա՛խ, ես հոգուդ մատաղ...

— Այդ խաղերը շատ կանչեցիր, մի քիչ էլ  
տաղ երգէ, այն ժամանակ գուցէ խելօքանաս և խոս-  
տովանես...

— Որ լիսուն տարի էլ այստեղ կեանք ունենամ  
և օրական լիսուն անգամ ինձ հարց տաք, ճշմարտու-  
թիւնն այս է, ուրիշ խօսք չէք լսելու իմ բերանից:

— Ոչինչ, ոչինչ, դեռ որտեղ ես, ամիս ու կէս  
ծանր չէ համբերելը, մի տարի ու կէս դառնա, այն  
ժամանակ կխօսանք:

— Տարի ու կէս ապրող ու տեղը մնացողը թո՞ղ  
պարծենա:

— Քննիչ էֆէնդի, մտնենք սրա խցիկը քըն-

նելու: Մի բոպէ կանգնեցին դռանը մտազբաղ:

Ճրագները ձեռքերը մտան ներս, մանրամասն  
ամէն կողմը, պատերը, քարերը, յատակը անկողնի տակը  
ամէն կողմը քննեցին: Քննիչը մեկուսի ասաց.

— Չուր բան է, միւզդէյի (գատախաղ) էֆէնդի,  
այս տղային մենք աւելորդ ենք չարչարում: Պէտք  
է սրա գործը լանձնել քրէական դատարան և դուրս  
հանել այստեղից:

— Դեռ ժամանակ կա, մի ամսի չափ էլ սպա-  
սենք, յետո կտեսնենք:

— Գուցէ, ես ոչինչ չեմ գտնում քրէական, դա-  
տարանը երեք ամսից մինչև տարի ու կէս նրան կա-  
րող է բանտարկել, ուրիշ ոչինչ չէ կարելի անել:

Թե թեև տաւած, քթի տակ խօսելով՝ դուրս ե-  
կան պաշտօնակալներ և մտան Գրիգորի խցիկը:

— Սա շատ խեղճն է, ասաց քննիչը, ինչ որ  
հարցնես, հանդարտութեամբ պատասխանը կտանաս:

— Խեղճերի տակը աւելի շատ բան կարելի է  
կասկածել, քան թէ այս տուտանները:

— Բնց № 51-ը, ասաց քննիչը բանտապետին:

— Իսկոյն, պատասխանեց և կատարեց մեծաւորի  
հրամանը:

— Է՛յ, 51, դուրս արի, ասաց դատախաղը:

— Հրամայեցէք, էֆէնդի, պատասխանեց Գրի-  
գորը:

— Ինչպէս ես, լա՛ւ ես, էլի ճճիներն ու միջատ-  
ները նեղութիւն տալիս են:

— Ո՛չ, էֆէնդի, Աստուած ձեզ կեանք տու, այն  
դեղերը քսելուց յետո՛ ջարդուցին բոլորը, էլ չեն

երևում: Երանի ամէն ցաւիս ալդպիսի դեղ տաք:

— Տես, տես, թէ գարձեալ կնեղացնեն, հէքիմ բաշիին ասեմ, թո՛ղ էլի ուղարկէ:

— Էֆէնդի, ձեր որդիների արևի խաթեր համար, ողորմեցէք մեզ և դուրս հանեցէք: Գոնէ մի ժամ օրական թողէք վերևը հալաթում ման գալու: Մեռա, փթեցին սոկորներս, ջուրն այս ծմակ (խոնաւ) պատերից գալիս է անգողար:

— Աչինչ, մինչև խոնաւութիւնը իրկներիդ (ոսկորամէջ, սոկորածուծ) մէջ չմանի, խելքի չէք գալու:

— Ի՛նչ էք հրամայում, էֆէնդի, ո՞վ կարող է հակառակել: Միթէ ձեր հրամանները չենք կատարում ճշմարտութիւնով և իսկութիւնով:

— Ի՛եռ չէք իմանում, ի՛նչ է ձեր մեղքը, ծաղրում էլ էք մեզ և մեր կարգերը: Կգա ժամանակ, շատ հեռու էլ չէ, կտեսնէք ձեր գլխին գալիքները,

— Էֆէնդի, կասկածներով ու կարծիքներով էք վերաբերում դէպի ամէն գործ և վախենում էք ամէն բանից: Այն լուսաւոր երկինքը վկա, որ կեղծիք ու ծաղրանք չկա իմ խօսքերում. ինչ որ ճշմարտութիւն է, ձեզ յայտնուած է:

— Լսիր, քննիչ էֆէնդի, լսիր սրա խօսքերին, բանտի մութ կամարի վրա է երդւում:

— Ո՞վ ինչ անէ, որ դուք ամէն բան ալդպէս էք մեկնում:

ԼԸ

ՄՍՀԱՅՈՒ ՀԱՐԻԱԾ

Բարգոյ և Սուկաւէտ սարերի վրայից վերագտնում էր դէպի Ալաշկերտ Թոսուն աղբարը: Նա ուղիղ ճանապարհով չէր կարող ման գալ, նրան ո՞վ պիտի տար կէս ոսկի (հինգ բուրլի), որ պասպորտ ստանար և մաքսապետները վրա գլուխը քննէին տեսնելու, թէ տպրանք խո՞ չէ փախցնում: Նա գիտէ սարի ճանապարհը և ճանապարհը ճանաչում է իւր կտրիճ անցորդին: Երբեմն գոռոգանում էր Թոսունը և ստում.

— Ամէն մարդու գործ չէ «Շահ-Նօլի» ճանապարհով ման գալ. կամ Շահերն են անցնում այնտեղից, կամ շահի քաջերը:

Արևը բարձրացել է և «Բէօսա-Գաղ» թագուհու նման խրոխտ, սպիտակ, սաւանապատ բարձր գագաթովը շողշողում է ճառագայթների ցոլմունքի տակ: Նրան շրջապատում են անթիւ անհամար ուրիշ քիչ ցած գագաթներ, որոնք կարծես նրա թև ու թիկունքներն են: Տեղ տեղ երևում են մութը անտառներ լեռների փեշերի վրա և տեղ տեղ ժայռերը այնպէս կուտակւած են իրար, կարծես սպառնում են ձորի բընակիչներին: Սուր սուր կողերով լեռներէ բարձունքը

կարում են ժողովրդի շարքերու թիւնները և գոռոզա-  
 ցած ահարկու կողերով չեն թողնում, որ մահկանացու-  
 ների ոտքերը իրանց վրայից բարձրանան, անցնին մէկ  
 կողմից՝ միւսը: Միայն երկնայինները, քաջազունները  
 և զիւցազները ազատ կարող են շղթայի գագաթի վը-  
 րայից ման գալ արևելքից արևմուտ՝ Նահի ճանապարհ-  
 Տից: Ուղիղ որ միայն Նահերի արժանի ճանապարհ է:  
 Այդ տեղից մարդ ցած նայելիս, Արաքսի ձորը ահագին  
 տարածութիւնով իւր տափերով և այգեստաններով  
 մարդու աչքի առաջ է գայլիս և այդ բարձունքից ցած-  
 րում ման գալող մարդիկ մտեղների նման են երևում ան-  
 ցորդի աչքին: Այդ բոլոր տեսարանը մի հպարտութիւն է  
 ծնեցնում մարդու սրտում, մահկանացուն իրան երկրն-  
 քի մօտ է զգում և աշխարհի երեսին գտնւած մարդիկ  
 ու կենդանիները մըջիւնների նման են երևում: Եր-  
 բեմն այնքան է յափշտակում մարդ, որ կարծում է, թէ  
 իւրն է այդ բոլորը և ինքն է ստեղծել այդ հսկա սա-  
 րերը: Ախթարի Արագի մունչիւնների ձայնը չէ հաս-  
 նում անցորդի ականջին, կատաղի ալիքները չեն որոշ-  
 ւում և սրընթած հոսանքը չի նկատում. միայն  
 կապուտ, ոլոր մոլոր, գերանի հաստութեամբ մի գիծ  
 է երևում, որի վրա արևի ճառագայթները տեղ տեղ  
 փայլովում են և փրփրած ջրերը արծաթի գոյնով են  
 երևում: Այդտեղ անպակաս է քամին և յաճախ մը-  
 շուշը այնպէս փաթաթում է մարդուն, որ կարծում է,  
 թէ իրան էլ երկինք է բարձրացնելու ջրերի շոգիներ-  
 րի հետ:

Այդ հսկաների ուղիից գնում էր Թոսունը,  
 գնում և երգում: Սմէն քայլափոխին նոր լիջատակներ

էին զարթնում նախկին հովւի սրտում, լիշում էր իւր  
 ոչխարները, լիշում հօտերը, լիշում արօտները և ա-  
 րօտատեղիները, լիշում լեռների բաժակներում լցւած  
 անուշ ջրի փոքրիկ արծաթապատ լճակները, լիշում  
 ու տխրում:

«Զրարաշիր փոթորկել է, անց չի տա,  
 Ծանի ձամբան կորցրել է, հետք չը կա,  
 Ու կողմն երթամ մասախոտոտ, աչք չը կա,  
 Ժայռի մեջ եմ քարքարոտոտ, ձար չը կա:

«Զիւնն ու բոքը կատաղել են միասին,  
 Թե բրդոտ են, թե շրջնոտ միասին,  
 Մոնչոտ են, սարսափ սրփոտ միասին,  
 Ասրտաժոտ սարսառանի ծակ չը կա:

«Ստամ միւնի կտորուսները անդադար,  
 Բամիս բերոտ իփոտ դեմքիս անգթարար,  
 Բարից քարի զարկոտ եմ կոռարար .  
 Ետ կամ ստաջ շարժոտի հնարք չը կա»:

Թոսունի ձայնը արձագանք գտաւ ձորերում և  
 սարազաշտերում, հեռւից մշակները նոյն եղանակով  
 պատասխանեցին նրան՝ արտայայտելով իրանց կրած դառն  
 վշտերն ու տառապանքները հալածողների ու հարստա-  
 հարողների ձեռքից:

«Կրակն անել սյուլոտոտ է սիրտս բոլոր,  
 Լճակը մօտ, անուշ ջոռն է կարեոտ:

Բայց ասիե՞րու՞մ օձ է պատկասծ թռունառոր,  
Տապկասծ շեզուս չորսացնէրս անս չը կս» :

Թոսուների սիրտը բարձրացաւ, աչքերը լցւեցին,  
տխրութիւնը սաստկացաւ, մի դառն հառաչանք քաշեց  
ու անցաւ. գնում էր. ոտով կտրում էր սար, ձոր, ան-  
ցնում էր դաշտերով և մօտենում Կարինին: Նիշտ չորս  
շաբաթ էր անցել Թոսուների Կարինից մեկնելու օրից:  
Չորեքշաբթի էր դուրս եկել, չորեքշաբթի իրիկունն էլ  
մտաւ Կարին:

Նրազը նոր էր վառել Ալմաստը, դուռը զարկին:  
Գնաց, բացեց և սւրախութեամբ ներս ընդունեց իւր  
լրաբերին:

— Վայ, դու բարով, դու հազար բարի, քեզ  
շատ շարշրեցի, շատ շատ ման եկար: Որտեղ մնացիր,  
ինչի՞ ուշացար:

— Ղարս էի, տեղս տաք էր, սեղանս դրած:  
Մի պատիւ տւին, մի շահեցին Սարգիս ամսնք, որ էլ  
խօսք չի ուզիլ: Սրերս ինչպէս էր անցնում, չգիտեմ,  
միայն մի հոգս ունէի, որ պոստը մեզ խտրար չէր բե-  
րում:

— Է՛հ, փոռք Աստուծո՛ւ, լաւ ես, ողջ ետ եկար,  
շատ ուրախ եմ, կերօնները վառեցիր Ղարգեհներ:

— Մեռնիմ զօրութեանը Ս. Ս. Ղարոս, Թաթո-  
սիս, օգնութեան հասան ճանապարհին էլ, սարի գլխին  
էլ, քաղաքումն էլ, ամէն տեղ էլ: Թուղթս գնաց հա-  
սաւ, պատասխանն էլ ետ եկաւ, սա դու կարգա, ես  
էլ երթամ հանգստանամ:

— Որտեղ պիտի երթաս, էս ժամանակ ի՞նչ գործ

ուներս, որ այդպէս շտապում ես, աղբւր...

— Երթամ Պոչհատի Ղայֆան, ջուր բերեմ, աւ-  
լեմ, մաքրեմ, մի կտոր բան էլ կտան, որ ուտեմ և  
քնեմ:

— Գու էստեղ մնա էս գիշեր, գործ ունիմ, կա-  
րելի է հարկաւոր գաս: Տրեխներդ հանէ, վեր կաց  
սէաքիւն նիստ, լաւ մտով կորկոտ ապուր ունեմ, կու-  
տես ու կքնես:

— Երթալս լաւ է, նրանք էլ ինձ են սպասում.  
Թո՛ղ մարդ չիմանա, որ Թոսուներ մի ամիս տեղ էր գը-  
նացել և վերադարձին այս տունը գիշերել:

— Բան չկա, Թոսուն աղբւր, լուսուն վաղ կեր-  
թաս:

— Ոչ, ես էլի կգամ, թէ բան ունես աւելու՛  
իմ գլխիս, իմ աչքիս վրա: Գնամ տղոցն ուրախացնեմ:

— Կեցիր, ապուրից կեր և ապա գնա:

— Գրան բան չեմ ասիլ, փորս էլ ա՛օթի է, բեր  
ուտենք:

Խօնչէն դրեց, միասին նստան տափակ գետնի  
վրա, գղաշներն առան և ախորժակով կերան: Երկունս  
էլ դադրած էին, երկունս էլ սոված: Հացից յետո Թո-  
սունը մահակը վեր առաւ և դուրս եկաւ: Ալմաստը  
սեղանը ժողովեց, դռներն ու երթերը փակեց, գնաց  
իւր սիրելի սովորական տեղը՝ Գոհարիկի կուշտը. ճըրա-  
գը մօտեցրեց և ծալած թղթերի միջից հանեց իսկա-  
կան նամակները և սկսեց կարգալ հասցէները: Երկու  
նամակ էին, երկունս էլ իւր հասցէով — մինը Ղար-  
սից միւսը՝ Կ. Պօլսից: Մէկի վրա պոստի մարկաներ  
էին երևում, միւսը այդ հարկը չէր վճարած:

Նախ բաց արաւ Ղարսի նամակը, որը բովանդակում էր այն, ինչ որ երկու խօսքով պատմեց Քոստեն աղբարը: Յետո ձեռքն առաւ Կ. Պոլսից գրած նամակի ծրարը: Նամակը ծանր էր երևում Ալմաստի ձեռքում, անդադար պտոյտ էր տալիս, կարգում հասցէն, նայում էր օտար լեզուներով գրածքների վրա, կարծես ուզում էր կարգաւ:

« Կարս.

Համեստուհի տիկին Ալմաստ Գարբինեանին»

Տրորում էր նամակը և չէր համարձակուում բանալու: Վրան մտածութիւն եկաւ, զանազան խորհուրդներ անցան մտքիցը, ուզեց նամակը տանել Ոսկականին, որ նա բաց անէ ու կարդա, բայց վախեցաւ, որ կարող էին բռնել նրա մօտ այդ թուղթը և այն ժամանակ կճանրանար նրա գործը: Երկար մտատանջութիւնից յետո՛, բաց արաւ նամակը: Մի երկրորդ ծրար դուրս եկաւ նամակի ծոցից, որի հասցէն աչքից անց կացրեց Ալմաստը, Ոսկանի անունը կարդալով վրան, զրեց ծոցը, ամուր պահեց:

Ահա բժիշկի նամակը, որը լացակամաց, արտասուքն աչքերը, սիրտը բարախելով կարգաց Ալմաստը.

«Սիրելի աղջիկս.

«Մի գորմանալ, թէ ես, անծանօթս քեզ աղջիկս եմ անւանում: Գուցէ շատ ուրախանալիր, եթէ Ոսկանի ծերունի խնամակալի հետ անձամբ ծանօթ լինէիր: Բայց աւա՛ղ, ես լիտուն տարւան մօտ եմ, ոյժ չունեմ այդ երկիրը գալու, իսկ դու չես կարող թողնել հայրենիքդ և միայն խնամքիդ յանձնւած սանիս: Մի քանի անգամ Ոսկանը քո մասին ինձ գրել է, ծանօթացրել է, ես

յոյս ունեմ, որ տասնապատիկ և հարիւրապատիկ աւել արժանաւորութիւն կա աղնիւ և բարի բնաւորութեանդ և հոգուդ մէջ, քան թէ այն, ինչ որ նա կարողացել է նկատել: Ուրիշ կերպ էլ չեմ կարող երեւակայել, հայրենի ու մեր նահապետների աշխարհը բնականորթար սնուցանում է և հասցնում է կարեկից և համեստ կիներ, որոնք թշուառին օգնելու, նրա արտասուքը սրբելու համար պատրաստ են զոհելու իրանց վերջին կաթիլ արիւնը: Աղջիկս, չլինի թէ վիրաւորւես այս տողերս կարգալիս, լաւ իմացիր, որ մէկ անկեղծ ծերուկի սրտից բղխած ճշմարտութիւն է այս տողերը:

«Հաւատացած եմ, որ սանիկս խնամքիդ տակ ոչինչի կորիք չունի և դու չես թող տալիս նրան, որ ողբով մթնացնի սև օրերը: Ալմաստ, երանի՛ թէ հրնարք ունենայի, ուխտ գալի ու ձեռքդ համբուրէի, այն ձեռքը, որ երկնցնում էս անկեալին պաշտպանելու, մխիթարում՝ վշտացեալին, քաջալերում՝ յուսահատւածին: Երանի՛ թէ բազդ ունենայի հայրենի երկրիս օդը ծծելու, ջուրը խմելու, որ անարատ և անկեղծ բարի սրտերի հանդիպէի: Ալմաստ, աղջիկս, զիտեմ, անմեղ սիրտ ունիս, Ոսկանը իւր նամակներով միայն գաղափար է կազմել տւել ինձ քո մասին, բայց քեզ իրականապէս ճանաչողը ձեռք է վերցնելու այս կեղծաւոր, շահամուլ, սնոտիապաշտ քաղաքի բնակիչներէց ու բընակելու այն սուրբ երկրում, որտեղ սնունդ են առնում քեզ նման բարեսիրտները:

«Շարունակիր համբերութեամբ ու առատ սիրով խնամիր Ոսկանին. խղճս նրա երիտասարդ հասակի վրա, մի թող տա, որ ոյժից ընկնի, կամ հիւանդութիւն-

ներ ստանա, կամ խելքին վնաս հասնի: Երանի՛ թէ գիտենայիր, որքան թանկ է ծերուկիս համար նրա կեանքը... Հօրը մահանից չետո տան և եօթը տարի է խնամքիս տակն է, թշւաս հայրը գրկիս մէջ հոգին աւանդեց, մանկիկը խնամքիս յանձնելով... Լաւ պաշտպանեցի... գերեզմանի դռան մօտ ընկերակցիս խնդիրքը, կտակը լաւ գործադրեցի.. Ես մեղաւոր չեմ, Ոսկանի բողոքիցն էր, ինչ էր, վերջապէս տխրալի անցքեր անցան և դառնացրին սիրտս: Ի՞նչ կուզես արա, Ալմաստ, պաշտպանիր նրան, այդ հեռաւոր երկրում խնամքիդ է ապաստանած:

«Ես աշխատելու եմ, այստեղ յոյս ունիմ, որ մեծ մարդիկների ազդեցութեամբ և զանազան միջոցներով կարողանում հրամաններ ուղարկել տայ, որ շուտով վերջ տան այդ եղկելի արարմունքներին: Բայց թիւրքիայի գործերը գիտես, որքան դանդաղ են շարժուում, մինչև գործ գլուխ բերելը, թղթեր ուղարկել տայը օրեր և շաբաթներ են պէտք: Ես գիտեմ, Ոսկանը չի կարող տանել այն տանջանքները, ինչ որ նկարագրել ես, աշխատիր դու ասանձնապէս մեղմելու, սփոփելու նրա ցաւերը, ես շուտով, որքան որ հնարաւոր է, կաշխատեմ ամէն բան կարգի դնել այստեղ:

«Ներփակեալ նամակը խոստացել էի նրա բերողին հասցնելու պատկանեալ տեղը: Ի՞նչեմ, որ անհետրին է այժմ այդ բանը, բայց զուցէ շուտով փոխւի իրերի դըրութիւնը, պահիր և երբ պատեհ առիթ գտնես, տուր Ոսկանին: Անզոգուշութիւն չանես և տանես յանձնես բանտում նրան այդ նամակը: Հարցրու Ոսկանին, եթէ համաձայնի, ընց, կարգս և բովանդակութիւնը լայտնիր,

զուցէ ուրախալի բովանդակութիւն գտնի նրա մէջ և սիրտ առնէ, մինչև օգնութիւն հասնելը:

«Աղջիկս, չպիտեմ, ինչպէս վերջացնեմ նամակս, որքան որ տխուր եմ, կսկծում սանիս սարսափելի դըրութեան վրա, այնքան ուրախ եմ, որ քեզ պէս բարեկամուհի կարողացել է գտնել, որը ոչինչ չէ խնայում նրա բարօրութեան համար: Ես մինչև գերեզմանս քեզ երախտապարտ եմ մնալու:

«Սրտնից չետո մի բան եմ մտածում, Ոսկանս ազատել և փափագում եմ տեսնել այն կինը, որն այնքան մեծարտութեամբ երկնցնում է իւր ձեռքը խորխորտից դուրս քաշելու գլորւածներին: Մի կարծիք, որ մենք Կ. Պոլսում նստած, չենք իմանում, թէ ինչեր ես դու զործում, կամ ինչ անցքեր են անցնում ձեր քաղաքում: Այն լուրերը, որոնց մամուլը տպելու իրաւունք չունի, նրանց արտագրութիւնները տարածելուն ո՛չ մի մարդկային ոյժ չի կարող դիմադրել: Յանկացողը ստանում է այդպիսի լուրերով նամակներ:

«Լոչաղ կանց, շատը գնաց, քիչը մնաց, մի ամիս էլ դիմացիր, «Իրադէի—Շահանէն» շուտով կհասնէ:

Նամակը ես ամուր պահեցի, որ լինի, որ հրատարակւի, իսկ նամակս լաւ է, որ վառես, զուցէ քեզ վրա կասկածները շատանան և անակնկալ խուզարկութիւնը վնաս բերէ:

Քո Տիգրան»:

1879 թ, Սեպտեմբերի 16-ին.

Կ. Պոլիս, Պէրա:

Նամակի ընթերցանութիւնէն յետո, Ալմաստի արտասուքները հոսում էին, մի քիչ էլ սիրտը քաշելուց յետո, ծոցիցը հանեց միւս նամակը, որ սրտումը կրակ էր զցել: Շատ քննեց հասցէի գիրը, բայց չէր կարողանում իմանալ, թէ ո՞վ գրած լինելու էր այդ նամակը: «Նա գուցէ ուրախալի բովանդակութիւն գտնի նրա մէջ», հայրը վաղուց մեռած է, մօրը սուգը հեռու քաշեց, եղբայր կամ քույր չունի, մօր միակ զաւակըն է, մի այնպիսի ընկեր... գուցէ անունը տւած կը լինէր: Ո՞վ է, ի՞նչ մարդ է: Գուցէ այստեղից կամ Կովկասից գնացած բարեկամ է... ծանօթ է, ի՞նչ եմ կասկածում... Բայց ո՞չ, բժիշկի անունը և հասցէն կեանքումը մարդու յայտնած չէր, առաջին անգամ ինչ յայտնեց և այն էլ այս դրութեան մէջ: 'Իա Կ. Պոլսից է, դա մի ուրիշ... հին ծանօթի է նմանում: Ոսկան, եթէ դու ինքդ այստեղ լինէիր, էլ չեմ կարծում, որ պահէիր ինձանից, թէ սա ո՞վ է: Ես լաւ կպահեմ այս նամակը... որ դուրս գա, կյանձնեմ քեզ և կկարդաս... Բայց գուցէ մէջը այնպէս բան կա, այնպէս սերախալի բան է գրւած, որը կթեթեացնի Ոսկանի վշտերը, ի՞նչի ետաձգել... կարդալու է... Ի՞նչպէս կարդամ ուրիշի նամակը, մի՞թէ կարելի է առանց իրաւունքի բանալ... Ո՞չ, առաւօտ իրան յայտնեմ, երբ իրաւունք ստանամ, այն ժամանակ կբանամ, կկարդամ և կյայտնեմ իրան բովանդակութիւնը:

Ալմաստը ծալեց և կրկին ծոցը դրեց նամակը: Բայց ուրիշ ազդեցութիւն էր ներգործում նամակը Ալմաստի սրտի վրա, այրում էր նրա կուրծքը, կարծես թալիսիմած լինէին գրերը: Ալմաստը անկողինը պատրաս-

տեց, որ քնի, իսկ քունը չէր գալիս, սրտումը մի ինչ որ միտք եռ էր գալիս, մի բան ունէր, չէր հանդարտւում: Վերջապէս կրկին ծոցից հանեց նամակը, դիտեց գրերը և ճրագի դէմ բռնեց, յուսալով, որ գուցէ կարողանա առանց բաց անելու մի բան կարգալ նամակի բովանդակութիւնից: Տարաբաղդաբար նամակը թոյլ էր ծեփած, կնիք էլ չունէր: Ալմաստը մատներով մի քիչ աշխատեց և բաւական տեղ բացեց: Կիսատ մնաց. էլ չէր բացւում, պատուում էր, բայց այլին թքոտեց, թրջեց և դրեց դարակի վրա: Համբերութիւնը կտրւել էր, ուզում էր կարգալ, կըքերը բարձրացել էին և մտքից հազար ու մի բան էր անցնում:

Բաց արաւ և դողդողալով միջիցը հանեց գիրը:

Սառը քրտինք պատեց Ալմաստի ճակատը, գնդիկ գնդիկ կաթիլները շարւեցին նորա ունքերի վրա և քունքերից սկսեցին ցած հոսել, աչքերը խաւարեցին և դողիցը կզակներն սկսեցին իրար բաղխել: 'Կողդողալով բացեց ծալքը և բոլոր ուժն ու ուշքը հաւաքած կարգաց հետևեալ բառերը.

«Աննման սէր իմ»

Չհաւատաց աչքերին, շուռ տւեց նամակը իրան խաբելու, բայց ներքեւը գրած ստորագրութիւնն ընկաւ նորա աչքով:

«Կեանքը քեզ զոհած՝ Կոստանցա»:

— Վնչ իմ անբաղգ արեւիս, վնչ իմ սև գլխիս,  
վնչ ինչ. էս էր իմ վերջի օրս, ստաց և նամակը ձեռ-  
քից վար գցելով՝ երկու ձեռքերով ծնկներին խփեց և  
երեսը բռի մէջ առնելով՝ դառն աղի արտասուքներով  
լացեց, անդադար մազերը քաշքշելով կուրծքը ծեծե-  
լով և մատները շփելով:

Վ Ե Ր Ջ Ա Ռ Ա Ջ Ի Ն Հ Ա Տ Ո Ր Ի

6697

2013

«Ազգային գրադարան»



NL0332317

